

-- էջ 1 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՓԱՐԻՉՈՒՄ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ

ՊԱԼԱՏՈՒՄ

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ`

ԳՐԻԳՈՐ ԶԱՆԻԿՅԱՆԻ

ԵՐԵՎԱՆ «ՎՄՎ-ՊՐԻՆՏ»

2010

-- էջ 2 --

ՀՏԴ 941(479.25):32.001

ԳՄԴ 63.3(2Հ)+66

Հ 249

Հ 249

Հայերի դատը Փարիզում` Արդարադատության պալատում/
Հրատարակումը` Գ. Զանիկյանի.- Եր.:

ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2010.- 320էջ:

Ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում Սողոմոն Թեխլերյանի
դատավարությունից հետո Հայոց ցեղասպանության երկրորդ դատաքննության

(Փարիզ, 24-31 հունվարի, 1984 թ.) սեղմագրությունը, դատաքննություն, որի ընթացքում մեղադրյալները մեղադրողներ են դառնում, դատապարտում Օսմանյան կայսրության անժամկետանց ոճիրը, վկայություններով հանդես են գալիս նրանց մայրերը, հայ և թուրք պատմաբաններ, միջազգայնագետներ, քաղաքագետներ, ցեղասպանության վերապրողներ: Չնայած ստացած պատժաչափերին՝ չորս հայ արդարամարտիկները երկու մատներով խորհրդանշական հաղթանշանը վեր պարզած, հաղթանակած են դուրս գալիս դատարանի դահլիճից:

ՀՏԴ 941(479.25):32.001

ԳՄԴ 63.3(2Հ)+66

ISBN 978-9939-60-037-6

© Գրիգոր Ջանիկյան, 2010 թ.

© «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» հրատ., 2010 թ.

-- էջ 3 --

ԽՄԲԱԳՐԻ ԽՈՍՔԸ

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Հայ ժողովուրդն աշխարհին հայտնի է ոչ միայն իր գիտական-մշակութային պատկառելի ժառանգությամբ, այլև, ցավոք, ցեղասպանության ենթարկված լինելու հանգամանքով: Այս վերջինն, անշուշտ, անչափ ցավալի է, սակայն պակաս ցավալի չէ և այն, որ որպես այդպիսին համաշխարհային հանրությանը հայտնի դարձավ տակավին վերջին երկու-երեք տասնամյակներին. այն դեպքում, երբ մարդկության դեմ երբևէ սանձազերծված ամենազարհուրելի և մասսայական ոճրագործություններից մեկը՝ Հայոց եղեռնը շուտով կբոլորի 100-րդ տարելիցը: Իսկ հայտնի դարձավ շնորհիվ...

Պերճ Չեյթունցյանի «Ոտքի՛, դատարանն է գալիս» պիեսի բեմականացման 20-րդ տարեդարձի առթիվ Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, ՀՀ մշակույթի նախարարության անունից ողջունելիս, խոսքս սկսեցի, թե ավարտեցի հետևյալ մտքով. «Մեզ՝ հայերիս համար մեծագույն բարեբախտություն էր, որ Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը տեղի ունեցավ ոչ թե Հայաստանում կամ այլուր,

այլ Եվրոպայի կենտրոնում՝ Բեռլինում: Այլապես աշխարհը չէր իմանա ոգեցունց պատմության մասին»: Այս միտքը իմ մեջ վերստին նորոգվեց, երբ հնարավորություն ունեցա ձեռք բերելու և մի շնչով ընթերցելու Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ԱՍԱԼԱ) չորս քաջորդիների կողմից 1981 թ. սեպտեմբերին Փարիզի թուրքական հյուպատոսարանում իրականացված «Վան» գործողության դատավարության արձանագրությունները, որոնք թարգմանել, մշակել և հրատարակության է պատրաստել Հայ դատի պաշտպանության անխոնջ նվիրյալ Գրիգոր Ջանիկյանը:

-- էջ 4 --

Սողոմոն Թեխլերյանի և նրա սերնդակից մյուս վրիժառուների (Արամ Երկանյան, Արշավիր Շիրակյան, Միսաք Թռուլաքյան, Պետրոս Տեր-Պետրոսյան, Արտաշես Գևորգյան, Ստեփան Ծաղիկյան և այլն) 1920-22 թթ. Իրականացրած պատժիչ գործողություններից մինչև 1970-ական թվականների սկիզբը Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման առումով կարելի է բնորոշել որպես լռության ու անտարբերության ժամանակաշրջան: Զգրանցվեց որևէ լուրջ ձեռքբերում, որքան էլ որ աշխարհի տարբեր երկրներում բնավորվող հայության բեկորները կենցաղավարման նոր պայմանների դժվարությունները հաղթահարելուն և համայնքներ ձևավորելուն զուգահեռ իրենց դատը պաշտպանելու համար դիմում էին հնարավոր բոլոր խաղաղ միջոցներին. կազմակերպում էին բողոքի երթեր ու ցույցեր, խնդրագրերով հեղեղում Ազգերի լիգայի (հետագայում՝ Միացյալ ազգերի կազմակերպության) գրոհները, դիմում խոշոր տերությունների դեկավարներին, հրապարակում թուրքական վայրագությունները փաստող գրքեր, հոդվածներ, լուսանկարներ և այլն: Աշխարհն այս ամենին նայում էր սառն անտարբերությամբ: Օտարազգի հատուկեևտ անվանի մտավորականների, գրականության և արվեստի գործիչների բարոյական աջակցությունը ևս չէր կարող եղանակ ստեղծել: Իսկ Խորհրդային Հայաստանում նման թեմայի արձարծումը, հասկանալի պատճառներով, օրակարգից դուրս էր, ավելին՝ հղի էր կանխատեսելի վտանգներով:

Այս ամենի արդյունքում մեր ժողովրդի երբեմնի հպարտ հոգեկերտվածքում պատվաստվեց մի նոր, արհեստածին որակ՝ զոհի հոգեբանությունը: Ընդ որում, հայ ժողովուրդը, որ ցեղասպանության զոհ էր, հիմա էլ դառնում էր անտարբերության զոհ, որի հետևանքները նվազ սարսափելի չեն: Հայությունը ներփակվեց իր համայնքային հոգսերի մեջ, դարձավ ինքնամփոփ՝ շարունակ վերապրելով և իր զավակներին ու թոռներին փոխանցելով ազգային ողբերգության մորմոքը:

Ահա՛, պայքարի քաղաքակիրթ մեթոդների այս անարդյունավետության պատճառով էլ 1975 թվականին կազմավորվեց Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակը՝ նպատակ ունենալով Թուրքիայի դիվանագետների նկատմամբ իրականացվելիք հրապարակային զինված գործողությունների միջոցով միջազգային հանրության և պատկան ատյանների ուշադրությունը

այլևս ոչ թե հրավիրել, այլ սևեռել Հայ դատի հիմնախնդիրների վրա: Իսկ ԱՍԱԼԱ-ի ստեղծման ազդակը նորագույն ժամանակ -

-- էջ 5 --

Ների հայ առաջին վրիժառուի՝ Գուրգեն Յանիկյանի իրականացրած գործողությունն էր (1973թ. հունվարի 27):

Ցավոք, այս բացառիկ անհատականության մասին գրեթե ոչինչ հայտնի է հայաստանաբնակ հայրությանը: Գուրգեն Յանիկյանը մեզ ներկայացվել է որպես սոսկ կույր վրիժառուությամբ առաջնորդված մի ծերունի, ինչն անարդարացիորեն ստվերում է նրա բովանդակալից կենսագրության արտասովոր ողիսականը, որի ամեն օրն ու ժամը նվիրված է եղել իր ժողովրդի ողբերգության արդար հատուցման գործին: Կորովի այս հայի մեջ մեկտեղված էին իր ժողովրդին բնորոշ գրեթե բոլոր շնորհները՝ ցանկացած երկրում ու ցանկացած իրավիճակում արագ հարստանալու հնարամտություն, կազմակերպելու, ղեկավարելու, ծրագրեր կազմելու և մեծագույն արդյունավետությամբ դրանք իրականացնելու ձիրքեր, գրականության, պատմության և արվեստի մի շարք ասպարեզներում ստեղծագործելու և մնայուն արժեքներ ստեղծելու տաղանդ, նաև գիտնական-գյուտարարի օժտվածություն: Թվարկված ասպարեզներում նրա ունեցած նշանակալի ձեռք բերումները ընդամենը միջոց էին, որոնք բոլորն էլ հեղինակը անխոնջ ջանադրությամբ փորձում էր ծառայեցնել Հայոց ցեղասպանության դատապարտման գործին: Այստեղ հարկ եմ համարում երկու խոսքով անդրադառնալ Յանիկյանի կենսագրության մի քանի հատկանշական կողմերին, մանավանդ որ այն թույլ կտա առավել հավաստի պատճառաբանել ԱՍԱԼԱ-ի ստեղծման նախադրյալները:

Ծնվել է 1895-ին, Կարինում: Ութ-ինը տարեկան էր, երբ իր աչքի առաջ թուրքերը կտրում են ավագ եղբոր գլուխը: Հետագայում, Առաջին աշխարհամարտի սկզբին, Դրոյի գնդի կազմում մասնակցելով մարտական գործողություններին՝ ականատես է լինում ցեղասպանության բազմաթիվ ահազարհուր հետևանքների, մանուկ տարիներին ապրած հոգեկան ցնցումը նորոգվում է հազարավոր նոր տեսարաններով և այդ օրերից հոգին լցվում է վրեժխնդրության հաստատակամությամբ, ինչը և դարձնում է իր կյանքի իմաստն ու նպատակը՝ մինչև խորը ծերություն:

Սովորել է Նոր Նախիջևանի հայկական վարժարանում, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, Ժնևի ֆրանսիական վարժարանում, Մոսկվայի և Շվեյցարիայի համալսարաններում: Մտերիմ ընկերն է եղել Վահրամ Փափազյանի, խաղացել նրա թատերախմբում, դերասանական վարպետության շնորհիվ արժանացել Աբեյյանի, Արմենյանի, Չարիֆյանի, Հասմիկի, Գուլակյանի

-- էջ 6 --

և հայ բեմի այլ վարպետների բարձր գնահատականին, որոնք համոզում էին նրան մնալ թատրոնում՝ գուշակելով փայլուն ապագա: Սակայն Արևմտյան Հայաստանից ստացվող տխուր լուրերը նրան տանում են ռազմաճակատ:

Մարտական գործողությունների ժամանակ աչքի է ընկնում խիզախությամբ: Հայտնաբերում և պայթեցնում է թուրքական բանակի խոշոր զինապահեստներից մեկը, ինչի համար արժանանում է Ս. Գեորգիի շքանշանի:

Մինչ կոլեկտիվացման տարիները Խորհրդային Միությունում էր և պատասխանատու դիրքեր էր զբաղեցնում տնտեսության բնագավառում: Անձամբ ճանաչել է Ստալինին, Տրոցկուն, Միկոյանին, Կալինին և խորհրդային այլ ղեկավարների: Երբ երկրի բազմամիլիոն բնակչությունը կանգնած էր սովահարության անխուսափելի վտանգի առաջ՝ նրան է վստահվում Կովկասից մինչև Դոն ձգվող տարածքների 40 մլն բնակչությանը ժամանակին սերմացուով ապահովելու գործը, ինչը իրականացնում է մեծագույն պատասխանատվությամբ՝ վտանգելով առողջությունը: Այս անգնահատելի ծառայության շնորհիվ առավել է ամրապնդվում նրա նկատմամբ վստահությունը: Սակայն Յանիկյանն արդեն համոզվել էր, որ բոլշևիկյան ղեկավարներից Հայոց դատի համար նպաստավոր ոչինչ չի կարող ակնկալել, ուստի իր ծառայությունների դիմաց խնդրում է կնոջ հետ Պարսկաստան անցնելու թույլտվություն, ինչը, որքան էլ անհավատալի է, բավարարվում է՝ վավերացվելով Ստալինի և Կալինինի կողմից:

Շահական Պարսկաստանում մի քանի տարի անց, շնորհիվ իր ձեռնարկատիրական տաղանդի, արդեն միլիոնատեր էր: Կառուցում է երկրի առաջին խոշոր ստորերկրյա զինագործարանը, ինչպես նաև երկաթուղագծեր, կամուրջներ, ճանապարհներ, մայրաքաղաք Թեհրանն ապահովում է էլեկտրական լուսավորությամբ: Երկրորդ համաշխարհային տարիներին իր տնօրինած տարածքներից մեկը անվճար տրամադրում է ԱՄՆ-ի նախագահ Թրումենի ներկայացուցիչներին՝ ամերիկյան բանակատեղի կառուցելու համար, ինչպես նաև անհավատալիորեն սեղմ ժամկետում կառուցում է մինչև ԽՍՀՄ-ի սահմանը ձգվող ճանապարհը: Սա անգնահատելի աջակցություն էր դաշնակից տերությունների համար, քանզի ծովային ճանապարհով ԽՍՀՄ ուղարկվող ռազմամթերքը գրեթե ամբողջովին ոչնչացվում էր գերմանական սուզանավերի կողմից: Այս ամենը Յանիկյանն անում էր՝ առաջին իսկ նպաստավոր պահին իր ցեղասպանության ենթարկված ու

-- էջ 7 --

հայրենագրված ժողովրդի համար հատուցում պահանջելու հեռահար նպատակով: Ամերիկյան կառավարությունը Յանիկյանին արժանացնում է շքանշանի, առաջարկում հաստատվել ԱՄՆ -ում:

Հեղինակ է յոթ գրքի, բազմաթիվ լրագրային ուսումնասիրությունների՝ գրեթե բոլորն էլ նվիրված իր ժողովրդի ողբերգության լուսաբանմանը և միջազգային ճանաչմանը: Գրքերը թարգմանվել են եվրոպական մի քանի լեզուներով,

արժանացել գրական հեղինակավոր մրցանակների: Ընտրվել է շվեյցարական գրական միջազգային ինստիտուտի պատվավոր անդամ (երկրորդ հայրը՝ Վիլյամ Սարոյանի կողքին):

Հայտնագործել է մի գարմանահրաշ սարք, որով հնարավոր էր որոշակի խորության ու լայնության վրա պեղել երկրի ընդերքը: Իր նվիրական նպատակին սևեռված՝ ցանկանում էր սարքն օգտագործել Դեյր Էզ-Չորի անապատներում ցրված ազգակիցների ոսկորները հավաքելու և դրանցով մարդկության խիղճը խարազանող տպավորիչ հուշարձան կանգնեցնելու համար, սակայն ԱՄՆ-ի իշխանությունները խոչընդոտում են՝ զգուշանալով Թուրքիայի հետ տարեց տարի ամրապնդվող «բարեկամությունը» վտանգելուց: Յանիկյանը չէր հուսահատվում, դեռ հավատում էր, որ գիտության, արվեստի, քարոզչության, ձեռներեցության ու այլ խաղաղ միջոցներով հնարավոր է հասնել իր ժողովրդի դատի արդար լուծմանը: Գրական տաղանդը, հզոր ինտելեկտը, պատմական-քաղաքական հիմնավոր գիտելիքները, կյանքի հարուստ փորձը մեկտեղելով՝ երկար տարիներ ծածուկ աշխատում էր մի կարևորագույն ծրագրի վրա: Իր սցենարով, իր ծախսով ֆիլմ էր նկարահանելու, որտեղ պիտի արվեստի ամենագոր ուժով ներկայացվեին թե՛ եղեռնի սարսափները, թե՛ այն ծնող պատճառները և թե՛ աշխարհի հզորների լիրբ անտարբերությունն ու հանցավոր համաձայնությունը ջարդարարների հետ: Նույնիսկ մի ամբողջ գյուղ էր գնել՝ ֆիլմի հիմնական տեսարանների նկարահանմանը ծառայեցնելու համար: Ծրագրել էր, թե ինչպես պիտի այդ ֆիլմը ցուցադրվեր աշխարհի խոշոր քաղաքներում, բորբոքեր մարդկության ցասումը և առիթ դառնար մի նոր նյութներգյան դատավարության, որտեղ պիտի լուծվեր հայության դատը: «Ես ուզում էի այն պիսիաղմուկ բարձրացնել, որ ոչ միայն Ամերիկան, այլև ամբողջ մարդկությունը չկարողանար անուշադիր թողնել մեր ցեղի արդար պահանջները: Ուզում էի ստեղծել մի իրավիճակ, որի

-- էջ 8 --

արդյունքը լինելու էր հայկական Նյուրնբերգը: Ես ուզում էի այս անել՝ որպես իմ կյանքի վերջնական նպատակը, և կատարել պարտականությունս դեպի իմ ընտանիքի զոհերը, դեպի իմ ցեղի զոհերը և սթափեցնել Ամերիկան... Համոզված եմ, որ եթե հայկական ցեղասպանության հարցը չստանա իր արժանի լուծումը, մարդկությունը պիտի անհետանա այս երկրագնդի երեսից: Հայ ցեղը անօգնական, անտեր ժողովուրդ չէ այսօր, ինչպես էր այդ ցեղասպանության ժամանակ: Հայը կարող է սպասել և հավատալ: Բայց ներել այն կազմակերպված ջարդը, որ տեղի է ունեցել Տաճկաստանում, երբ 2 միլիոն (60%-ը ամբողջ ցեղի և 80%-ը Տաճկաստանում ապրողների) հայ ոչնչացվեց, երբե՛ք, երբե՛ք հնարավոր չէ», - գրում էր Յանիկյանը Սան Լուիս Օբիսպոյի բանտում:

Այդ նպատակով տարիների ընթացքում նկարել էր մոտ 20 ժամ տևողությամբ կադրեր՝ ներգրավելով նաև մի շարք օտարազգիների, որոնց նախնիները ևս զոհ էին գնացել թուրքական գազանություններին: Ֆիլմի համար սյուժե էր հյուսում՝ այդ ժամանակ թերևս չգիտակցելով, որ ամենաազդեցիկ ու պերճախոս սյուժեն իր

իսկ կենսագրությունն է, որի հուսահատ վերջաբանով նոր արշալույսների հեռանկարներ պիտի ուրվագծվեին հայության համար:

Ցավոք, ֆիլմի ծրագիրը ևս փշրվեց՝ բախվելով թուրք-ամերիկյան հաստաբեստ տանդեմին: ԱՄՆ-ի իշխանությունները ճիշտ այս կերպ ժամանակին սաստել էին իրենց խոշոր կինոընկերություններից մեկին, որը ձեռք էր բերել Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի հեղինակային իրավունքները և պատրաստվում էր եկրանավորել: Անդադրում հայը գիտեր դրա մասին, բայց հույս ուներ, որ իր ֆիլմը չի արժանանա նույն ճակատագրին...

Գուրգեն Յանիկյանն արդեն 78 տարեկան էր, իր որդեգրած պայքարի միջոցների արդյունավետությունը կասկածի տակ առնող մտքերը ավելի ու ավելի հաճախ էին այցելում իրեն: Իսկ մանուկ օրերից անբաժան մի լուսանկարից սիրելի եղբոր պատկերը մեծանում, հատուցում էր պահանջում՝ մղձավանջով լցնելով իր գիշերները: Եվ այդպիսի մի գիշեր էլ որոշում կայացրեց...

... Լուս Անջելեսում Թուրքիայի հյուպատոսի և փոխհյուպատոսի հետ հանդիպման պայմանավորվածություն ձեռք բերելն ամենևին էլ հեշտ գործ չէր: Մանավանդ՝ Յանիկյանն ուզում էր, որ այդ հանդիպումը տեղի ունենար ոչ թե հյուպատոսարանում,

-- էջ 9 --

այլ դրսում՝ առանձին մի վայրում, որպեսզի կարողանա լիարժեք իրագործել իր ծրագիրը և, որ ամենակարևորն է, ոչ մի չնախատեսված հանգամանք վտանգ չսպառնա իր կյանքին: Նրա համար կարևոր էր ոչ այնքան բուն վրիժառուական գործողությունը, որքան հետևանքը: Իսկ ողջ մնալ պետք էր, որպեսզի դատարանում ի լուր աշխարհի բարձրաձայներ ցեղասպանության և Հայոց պահանջատիրության մասին. «Եվ ամեն միջոց պիտի ձեռք առնեմ, որ ձերբակալվեմ և ողջ մնամ, որ կարողանամ դատարանի առաջ գոռալ մարդկության երեսին սրտիս տենչանքը ու պահանջել արդարություն թե՛ իմ ազգի և թե՛ մեզ պես ազգերի համար» (Գ. Յանիկյան, «Նպատակ և ճշմարտություն»):

Լուս Անջելեսում նա թուրք հյուպատոսներին ներկայանում է որպես պարսիկ մեծահարուստ՝ Յանի խան անունով և շահագրգռելով նրանց Թուրքիայի կառավարության համար մեծ արժեք ներկայացնող նվերներով (ժամանակին սուլթան Աբդուլ Համիդի ննջարանը զարդարած իտալացի վարպետի մի կտավ և հին թուրքական մի թղթադրամ, որի վրա տասնամյակներ առաջ հավաքել էր արևելյան երկրների տարբեր ղեկավարների շուրջ 25 ստորագրություն)՝ ձեռք է բերում պայմանավորվածություն հանդիպման ժամկետի և վայրի մասին:

... 1973 թ. հունվարի 27, Սանտա Բարբարայի «Բալթիմոր» հյուրանոց: Բայց մինչ այդ էլի պարտք ուներ կատարելու: Հասցնում է այցելել Երևան և իր անձնական հավաքածուից Հայրենիքին նվիրաբերել մի քանի բացառիկ մշակութային արժեքներ, այդ թվում՝ Հայոց արքաներից մեկի մատանին և Մարտիրոս Սարյանի «Արևելյան սենյակ» հայտնի կտավը, որը ժամանակին Գալուստ Գյուլբենկյանը

ցանկանում էր գնել իր լիսաբոնյան թանգարանի համար, սակայն Յանիկյանը ոչ մի գնով չբաժանվեց նրանից:

Անչափ տպավորիչ է հանդիպման ընթացքը: Հյուրանոցի սենյակում հյուպատոսները ազահաբար տնտղում են խոստացված թղթադրամը, իսկ Յանիկյանը հանգիստ հայտնում է, որ ինքը հայ է՝ ծնված Երզրումում: Թուրքերը փորձում են թաքցնել իրենց շփոթմունքը՝ ինչ-որ բաներ բարբաջելով բարեկամության և ներողամտության մասին: Յանիկյանն ավելի է առաջ գնում՝ հայտնելով, որ ինքը այն հայտնի ՆԵԳՐՈՒԳ-ն է, («Գուրգեն» անվանը հակառակ ընթերցանությունը), որի ծանրակշիռ հրապարակումները ցեղասպանության մասին երկար տարիներ գլխացավանք էին պատճառում թուրքական իշխանություններին: Խոսում է

-- էջ 10 --

Նաև այն մասին, որ Թուրքիան որքան էլ կոծկի ու խեղաթյուրի ճշմարտությունը՝ վաղ թե ուշ հատուցելու է կատարվածի համար: Եվ մինչ մոլեգնած հյուպատոսները փորձում են աթոռով հաշվեհարդար տեսնել ծերունու հետ՝ նա գրքի մեջ թաքցրած ատրճանակով սառնասրտորեն գնդակահարում է երկուսին: Դեռևս նախորդ երեկոյան փոստով հարյուրավոր գրություններ էր ուղարկել տարբեր լրատվամիջոցներին՝ հայ երիտասարդությանը կոչ անելով տեր կանգնել համաժողովրդական դատին:

Գուրգեն Յանիկյանի բռնարարքի լուրը կայծակի արագությամբ տարածվեց աշխարհով մեկ: Սփյուռքի ամբողջ հայությունը կամենում էր ամեն կերպ սատար կանգնել իր անվեհեր հայրենակցին. ստեղծվեց Յանիկյանի պաշտպանության կոմիտե, վարձվեցին փաստաբաններ, բացվեց հիմնադրամ, որի հաշվին մուտքեր էին արվում աշխարհասփյուռ հայության կողմից: Սակայն ծերունի վրիժառուին դեռ սպասում էր ամենամեծ դառնությունը, որը մատուցեցին որոշ վայ հայրենակիցներ: Շուտով նա պարզեց, որ իր շուրջը վիստացող կոմիտեականներից շատերը նորոյա խաչագողեր են ընդամենը, որոնք հավաքվել են դրամի և իր բռնարարքի շնորհիվ համբավ ձեռք բերելու համար: Հիասթափված ծերունին հրաժարվեց բոլորից՝ դատարանում մեն-մենակ ներկայացնելով հայության դատը: Իսկ ամերիկյան դատարանը, տեղի տալով Թուրքիայի ճնշումներին, ամեն ինչ արեց ծերունի վրիժառուին խելահեղ ոճրագործ ներկայացնելու համար և կայացրեց ցմահ ազատազրկման դատավճիռ:

Ազգային խայտառակության նման մանրամասներին հարկադրաբար եմ անդրադառնում, քանի որ այն ուսանելի նախադեպ հանդիսացավ ֆրանսահայ համայնքի համար՝ «Վան» գործողությունն իրականացրած տղաների դատավարությանը Փարիզում պատշաճ և ըստ ամենայնի պատրաստվելու գործում: Եվ որքան զայրույթ ու հիասթափություն է հարուցում Գուրգեն Յանիկյանին խարխուլ մակույկով թուրք-ամերիկյան դաշինքի հորձանուտին հանձնելու հանգամանքը, այնքան հպարտություն ես ապրում՝ թերթելով «Վան»

գործողության դատավարության արձանագրությունները, որոնք այս գրքով ներկայացվում են ընթերցողին:

Գուրգեն Յանիկյանի գործողությունն ու հղած կոչերը թունդ հանեցին հայ երիտասարդության հոգիները և մեծագույն խթան հանդիսացան Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի ստեղծման համար: Պատահական չէ, որ կազմակերպու -

-- էջ 11 --

թյունը սկզբնական շրջանում կոչվում էր «Գերի Գուրգեն Յանիկյանի խումբ»:

Տարբեր երկրների հայկական համայնքներից տասնյակ երիտասարդներ շտապեցին համալրել ԱՍԱԼԱ-ի շարքերը: Ձևավորվեցին մի շարք մարտախմբեր, որոնց պարբերական գործողությունները և դրանց հաջորդած հայտարարությունները վերարթնացրեցին կորուսյալ Հայրենիքը երբևէ ետ ստանալու հայության հույսերը, սրբեցին մոռացության ու անտարբերության փոշին Հայոց ցեղասպանության վրայից, մարդկությանը մտորելու առիթ տվեցին: Աշխարհի բոլոր ծագերում միլիոնավոր մարդիկ առաջին անգամ իրենց համար բացահայտեցին, որ եղել է Հայոց ցեղասպանություն, իսկ շատերը սկսեցին լրջորեն ուսումնասիրել այդ ողբերգությունը, ծնող պատճառներն ու հետևանքները: Ցեղասպանության թեման դարձավ լրատվամիջոցների ամենօրյա քննարկման նյութ, մուտք գործեց միջազգային պատկան ատյանների և տասնյակ պետությունների օրենսդիր մարմինների օրակարգը: Իսկ ԱՍԱԼԱ-ի ազատամարտիկների անընդմեջ գործողությունները մշտապես խնդիրը պահում էին առաջին պլանում: Հայկական հարցի տարածմանը մեծապես նպաստեց նաև Թուրքիայում ծայր առած խուճապը: Ցեղասպանության փաստը կոծկելու և խեղաթյուրելու հիստերիկ ջանքերը, միլիոնավոր դուլարների գնով կազմակերպված կեղծ ու պատիր քարոզչությունը, Թուրքիայում ապրող հայության հասցեին հնչող սպառնալիքները, այլ պետություններում հակահայկական տրամադրություններ ստեղծելուն միտված համառ ու լկտի սադրանքները տվեցին հակառակ արդյունքը՝ առավել բորբոքելով ցեղասպանության ճանաչմանը հետամուտ միջազգային շրջանակների վրդովմունքը:

«Վան» գործողությունը ԱՍԱԼԱ-ի իրականացրած մարտական ձեռնարկների շարքում առավել արդյունավետներից է: 1981 թ. սեպտեմբերի 24-ին, «Եղիա Թեշիշյան» անվանումը կրող չորս հոգանոց մարտախումբը (Վազգեն Սիսյան, Գևորգ Գյուլգեյյան, Արամ Բասմաջյան, Հակոբ Ջուլֆայան) գրավում է Փարիզի թուրքական հյուպատոսարանը: Գրոհի սկզբում Վազգեն Սիսյանն ու Հակոբ Ջուլֆայանը ծանր վիրավորվում են, սակայն մարտախումբը համախմբվում, կարողանում է իրադրությունն իր ձեռքը պահել այնքան ժամանակ, մինչև հյուպատոսարանը պաշարած ֆրանսիական ոստիկանությունը կառավարության անունից խոստանում է կատարել նրանց պահանջը: Իսկ տղաները ֆրան -

սիական իշխանություններից պահանջում էին քաղաքական ապաստան և, որ ամենակարևորն է, իրենց հանդեպ քաղաքական դատավարություն: Սակայն երբ նրանք հանձնվեցին՝ Ֆրանսիայի ներքին գործոց նախարարը հայտարարեց, որ իրավիճակից հարկադրված է այդ կեղծ խոստումը տվել: Ավելին, անձնատուր եղած մարտիկները որակվեցին քրեական հանցագործներ և ենթարկվեցին բանտային մեկուսացման: Այստեղ հարկ է նշել, որ հյուլպատոսարանում եղած ողջ ժամանակամիջոցում մարտախմբի անդամներն իրենց պահել էին ասպետավայել, պատանդներին բացատրել իրենց գործողության նպատակը, հոգացել, որ նրանց դրսից սնունդ և դեղորայք հասցվի:

Ֆրանսիական իշխանությունների նման կեցվածքը բողոքի ցույցերի մղեց ֆրանսահայությանը, ԱՍԱԼԼ-ն սկսեց սաստկացնել իր գործողությունները: Ֆրանսիան չէր ցանկանում թուրքերի հետ գլխացավանք ունենալ, այդ պատճառով ԱՍԱԼԼ-ի ղեկավարությունից պահանջում էր շրջանցել իր երկրի տարածքը՝ փոխարենը խոստանալով «Վան» գործողության չորս մասնակիցներին էլ առանց դատի ազատ արձակել: Սակայն ԱՍԱԼԼ-ն անդրդվելի էր. գործողության նպատակը քաղաքական դատավարությունն էր, որը և կայացավ:

Ֆրանսահայ համայնքը ապացուցեց, որ հաստատակամ ու հետևողական է Հայոց դատը մինչև վերջ պաշտպանելու գործում: Վարձվեցին երկրի լավագույն փաստաբանները, դատավարության ընթացքում ապահովվեց ցեղասպանությունից մազապուրծ մի քանի հայերի՝ դատարանում վկայությամբ հանդես գալու հնարավորությունը, որոնք իրենց սրտաճմլիկ հիշողություններով կարողացան ի լուր աշխարհի հնչեցնել հայության ցավն ու բողոքը: Դատավարության նպատակային ընթացքին իրենց նպաստը բերեցին Շառլ Ազնավուրը, Անրի Վեռնոյը, Միսաք Մանուշյանի այրին՝ Մելինե Մանուշյանը, այլ անվանի ֆրանսահայեր: Ակնհայտ էր նաև դատարանի նախագահի բարեհաճ վերաբերմունքը, ով դատավարության ողջ ընթացքում ներկաներին կոչ էր անում ձեռնպահ մնալ գործողությունը «ահաբեկչություն», իսկ մեղադրյալներին «ահաբեկիչ» անվանելուց:

Թուրքիան ևս հանգամանորեն նախապատրաստվել էր այս դատավարությանը: Երոփյալների ատյանին հղած պաշտոնական կոշտ դիմումներից բացի դատարան էր գործուղել իր «պատմաբանին», որի կեղծ ու երկարաշունչ ճամարտակությունն արժանացավ ներկաների անթաքույց ծաղրին:

Երիտասարդ մահապարտները (գործողությունն իրականացնելիս նրանցից ամենաավագը 24 տարեկան էր) ցուցաբերեցին գաղափարական-քաղաքական

ապշեցուցիչ հասունություն, ապացուցեցին, որ մարտական պատրաստվածությունն իրենց կազմակերպության համար ընդամենը միջոց է, ԱՍԱԼԱ-ի յուրաքանչյուր անդամ ի վիճակի է իր ժողովրդի դատը պատվով ու մեծագույն հաջողությամբ պաշտպանել նաև դատական ատյանում: Դատավարության ամենատպալորիչ ակորդը թերևս Գևորգ Գյուլգեյանի պաշտպան Լըքլերի ճառն էր, որի հիմնավորվածությունն ու փաստարկվածությունը ներդաշնակված են հուզականությամբ ու պաթոսով, հպարտություն են ներշնչում յուրաքանչյուր հայի:

«Եղիա Քեչիշյան» մարտախմբի անդամները դատապարտվեցին 7-ական տարվա ազատազրկության, ինչը նշանակում է, որ դատարանն ամենևին էլ նրանց չդիտարկեց որպես ահաբեկիչների:

ԱՍԱԼԱ-ի մարտախմբերի հանդուգն գործողությունների լուրերը հասնում էին Կալիֆոռնիայի բանտում մեկուսացված Գուրգեն Յանիկյանին, հպարտությամբ լցնում նրա վիրավորված հոգին: Ծերունի վրիժառուն ընտրյալ մարտիկների մեջ տեսնում էր իրեն, իր ցանած սերմերի արոյունքը և մարգարեանում. «Ոչինչ չի կարող ազատել ձեզ, տաճիկներ, վայրենի արյունարբու ժողովուրդ, ստանալու այն պատիժը, որին դուք արժանի եք ձեր արարքների համար: Դա դեռ միայն սկիզբն է: Շատ բաներ դեռ տեսնելու եք: Դուք դեռ զգալու եք, թե ի՞նչ է նշանակում հայ անհատի՝ ձեր դեմ հայտարարած պատերազմը: Ամերիկյան գեներով զինված ձեր բանակներն անգամ չեն կարող ձեզ պաշտպանել հայ անհատից, որ արդեն հրապարակ է եկել իր կամքով ու ցանկությամբ՝ վերջապես ստանալու համար ձեզանից ձեր պարտքը հայ ժողովրդին:

Ձեր վայրենի միջոցները, որ կրկին սկսել եք գործածել ձեր երկրում իմ ցեղակիցների հանդեպ, ձեզ, բացի վնասից, ոչինչ չեն տալու. 1-ի դեմ 10-ը կստանաք:

...Ֆիզիկապես ես դատապարտված եմ բանտի, բայց իմ հոգին սավառնում է ամենուրեք...» (Գ. Յանիկյան, «Նպատակ և ճշմարտություն»):

Յանիկյանի հոգին ցնծում էր նորօրյա ազատամարտիկներով այնպես, ինչպես 1973-ին նրա արձակած պատմական կրակոցներից հուսավառվել ու ոգևորվել էր այն ժամանակ արդեն 90-

-- էջ 14 --

ամյա Շահան Նաթալին՝ 1920-ականների հայ վրիժառուների (այդ թվում՝ Սողոմոն Թեխլերյանի) կնքահայրը, ով իր «Նեմեսիս» ծրագրով պատուհասել էր ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից ու իրականացնողների շատերին:

Ահաբեկչությունը մարդկության առաջ ծառայած խոշորագույն չարիքներից է, իսկ մեր օրերում՝ թերևս թիվ մեկ չարիքը: Աշխարհը լի է տարբեր նպատակներ հետապնդող ահաբեկչական խմբավորումներով, որոնք ամեն տարի

մարդկությանը կանգնեցնում են մեծամեծ արհավիրքների առաջ: Եվ թուրքական քարոզչամեքենան կաշվից դուրս է եկել ԱՍԱԼԱ-ն աշխարհին որպես դրանցից մեկը ներկայացնելու համար: Թուրքիայի իշխանությունները շատ լավ էին հիշում անցյալ դարասկզբի ֆիդայական խմբերը, որոնք աներևակայելի մարտունակությամբ ահուսարսափի մեջ էին պահում ցեղասպան զորաբանակներին: Նրանք շատ լավ հասկանում էին, որ սահմանափակ թիվ կազմող ասալայականները՝ վերածնված Անդրանիկները, Սերոբներն ու Գևորգներն են, սակայն չէին ուզում հավատալ ու խոստովանել, որ այդ մի բուռ քաջորդիները ցնցեցին աշխարհը, ստիպեցին հաշվի նստել իրենց հետ, իրենց ժողովրդի դատի հետ: Իր անասնական խուճապի մեջ թուրքական քարոզչությունն այն աստիճանի լրբացավ, որ ԱՍԱԼԱ-ի համար մոզոնեց ամենաանհավանական հովանավորների՝ Է՛լ ԱՄՆ ու ԽՍՀՄ, Է՛լ Պաղեստին ու Իսրայել, չգիտեմ ինչ գահրումար... Երանի Անդոկի փեշերին ժողովի հավաքվող մեր ֆիդայիներն այս երևակայությունն ունենային... Նման հովանավորներ էին վերագրվում այն կազմակերպությանը, որին նույնիսկ մեր ավանդական կուսակցությունները խուսափեցին աջակցել:

Իր մարտախմբերի յուրաքանչյուր գործողությունից հետո ԱՍԱԼԱ-ն, որպես կանոն, ստանձնում էր պատասխանատվությունը և հանդես գալիս հերթական հայտարարությամբ՝ համաշխարհային հանրությանը հիշեցնելով ու վերհիշեցնելով իր նպատակը, այն է՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում, Թուրքիայի կողմից զավթված տարածքների վերադարձ իրենց իրավական տերերին: ԱՍԱԼԱ-ն իր մարտիկներին ընտրում էր ամենայն բծախնդրությամբ: Նրանք ոչ միայն ֆիզիկական, մարտական, այլ նաև գաղափարական հիմնավոր պատրաստություն էին անցնում, որպեսզի գործողությունից հետո ողջ մնալու և դատարանի առաջ կանգնելու պարագայում կարողանային ըստ ամենայնի ներկայացնել Հայ դատը: Ահա մի հատված Գևորգ

-- էջ 15 --

Գյուզեյանի ինքնապաշտպանական խոսքից. «Ինչ դատավճիռ էլ որ դուք կայացնեք, մեր գործողությունն ինքնին հաղթանակ է հայ ժողովրդի համար: Առաջին անգամ գաղափարական տարբեր հակումներ ունեցող հայերը միավորվել են, որպեսզի իրենց դատը պաշտպանեն: Հենց այդ պատճառով մենք նախընտրեցինք ավարտել մեր գործողության մարտական փուլը և գիտակցելով հանդերձ, թե ինչ փորձության ենք ենթարկվում, որոշեցինք հանձնվել ֆրանսիական իշխանություններին, պայքարը շարունակել քաղաքական միջոցներով, որը մեզ համար ավելի կարևոր է:

Այս դատավարությամբ մենք երկրորդ անգամ պայքարի ելանք այնպիսի մի ատյանում, որտեղ զենքերը ո՛չ մի ուժ չունեն, և ստիպեցինք Թուրքիային արտահայտվել ցեղասպանության մասին, իր պատմաբանի միջոցով ձեր առջև ստել:

Հայտարարում ենք ձեզ, որ մեր կյանքը ո՛չ մի կարևորություն չունի, մեր պայքարը չի՛ ավարտվել: Մեր բանտարգելությունը կամ ազատ արձակումը հայերին չի

խանգարի պայքարելու իրենց օրինական իրավունքների համար: Մենք ուզում ենք, նախ և առաջ, որ մեր ժողովրդին վերադարձվի արդարությունը: Ձեր դատավճռով դուք կարող եք նպաստել դրան»:

Գաղափարական այսօրինակ հասունությունը հատուկ էր բոլոր ասալայականներին, ովքեր իրենց գործով ու խոսքով ապացուցեցին, որ ԱՍԱԼԱ-ն կապ չունի որևէ ահաբեկչական կազմակերպության հետ, որ այն զուտ հայկական-ազգային երևույթ է, նրա ստեղծման նախադրյալները պետք է որոնել միայն ու միայն հայ իրականության հոլովույթներում: ԱՍԱԼԱ-ն անհատների շարժում էր, հար և նման ֆիդայական շարժմանը, որն այդպես էլ մնաց որպես ընտրյալների պայքար և չվերաճեց համընդհանուր ընդվզման:

ԱՍԱԼԱ-ի և մասնավորապես «Վան» գործողության պատմական նախադեպը, իմ խորին համոզմամբ, Առաքելոց վանքի հռչակավոր կռիվն է (1901թ., Նոյեմբեր), երբ Անդրանիկն իր չորս տասնյակից էլ պակաս քաջերով կամովին մտավ Առաքելոց վանք և պաշարվեց թուրքական վեցհազարանոց կանոնավոր բանակով: Շատերը ֆիդայապետի այդ քայլը խելահեղ արկածախնդրություն համարեցին և Նույնիսկ մեղադրեցին նրան՝ հայության վերջին հույսը հանդիսացող ընտրյալ ֆիդայիներին անխուսափելի մահվան տանելու համար: Սակայն Անդրանիկը գիտեր ի՞նչ է անում և ինչո՞ւ:

-- էջ 16 --

Տիգրանակերտից մինչև պարսից սահմանը ձգվող հայկական տարածքներում վխտացող շուրջ 150.000 ասկյարներ և քրդական զինված ցեղախմբեր անարգել ասպատակում էին Հայոց շեները և ամենօրյա վայրագություններով հուսահատության մատնում հայ բնակչությանը: Անդրանիկը գիտակցում էր, որ ֆիդայական սակավամարդ խմբերով անհնար է դիմակայել թշնամու ահագնացող զազանություններին և երկար ժամանակ ծրագրում էր այնպիսի մի ցնցող ու աղմկահարույց գործողություն իրականացնել, որը կոզևորեր հուսալքված ժողովրդին, Պոլսում եվրոպական դեսպանների ուշադրությունը կիրավիրեր հայության վիճակի վրա: Անհրաժեշտ էր կազմակերպել մի նշանակալի ռազմական գործողություն և հնարավորինս երկարաձգել այն՝ ապահովելու համար լայն արձագանքներ: Սակայն լսենք իրեն՝ անպարտելի ֆիդայապետին. «Պետք էր գործի սկսիլ, պետք էր ուժեղ գործ մը կատարել, ցնցելու համար թուրք բարձրագոյն մարմինները եւ օտար դեսպանները, բարենորոգում մը եւ դարման մը ձեռք բերելու այս տառապած ու հարստահարուած խաղաղիկ ժողովուրդին համար: Պետք էր ցոյց տալ Թուրք եւ Զիւրտ ժողովուրդին թէ Հայ բազուկը գիտէ հրացան բռնել, Հայ սիրտը գիտէ կռուիլ եւ պաշտպան կանգնիլ իր իրավունքներուն: Այս ամենն պետք է ի յայտ բերելին «ափ մը ճան ֆետայիներ» որոնք ուխտած էին զոհուիլ Ազգին ազատութեան սիրոյն, արդարացնելով այն մեծ հաւատքն ու յոյսը որ ժողովուրդը կեդրոնացուցած էր իրենց վրայ» (Անդրանիկ, «Առաքելոց վանքին կռիվը»):

Եթե անդրադառնանք ԱՍԱԼԱ-ի հրապարակած հռչակագիր-հայտարարություններին, կտեսնենք, որ բոլորն էլ համահունչ են Չորավարի այս տողերին և բխում են դրանցից:

... Եվ սկսվեց ռազմագիտության պատմության մեջ նմանը չունեցող մի խելահեղորեն անհավասար ճակատամարտ՝ 38-ը ընդդեմ վեց հազարի, որը տևեց 21 օր. այնքան, որքան բավականացրեցին ֆիդայիների ռազմամթերքի և սննդի պաշարները: Անդրանիկը չտվեց և ոչ մի գոհ, այնինչ թուրքերը ամեն գիշեր տասնյակ դիակներ էին հավաքում ու պարտակում՝ իրենց խայտառակությունը կոծկելու համար: Հաշվարկը հանճարեղ էր: Հայությունը սկսեց հավատալ, որ իր Էպոսի հերոսները վերադարձել են դարավոր թշնամուն պատուհասելու, Պոլսի եվրոպական դեսպանները մեղադրեցին օսմանյան կառավարությանը՝ քրիստոնեական մշակութային ժառանգության նշանակալի արժեքը՝ Առաքելոց վանքը անխնա գնդակոծելու համար, ճակատամարտին անդրադարձավ եվրոպական և ռուսական մամուլը:

-- էջ 17 --

Երբ ռազմամթերքը հատնելու վրա էր՝ Անդրանիկը հղացավ երկրորդ հանդուգն ծրագիրը: Անհրաժեշտ էր ինչ-որ հրաշքով ճեղքել վանքի շրջակայքի ամեն սանտիմետրը հսկող ասկյարների շարքերը և հեռանալ՝ թշնամուն վերջնական խայտառակության մատնելու համար: Դարձյալ լսենք Չորավարին. «Պետք էր զգոյշ ըլլալ, պետք էր զգաստ եւ արթուն ըլլալ մեր ծրագիրը յաջողութեամբ յառաջ տանելու եւ թշնամին ամօթի, զարմացումի եւ անակնկալի մատնելու համար: Պետք էր հայ հանճարը, հայ միտքը, իր ճարտար մտայնութեանք եւ հզօր սրտով ծիծաղեր եւ արհամարհեր յանդգնօրէն թուրք կառավարութիւնը, իր պաշտոնեաները եւ զինուորը, վերջը ուժեղ հարուած մըն ալ տալով: Պետք էր մեր յաղթանակով ցեխէ ցեխ թաղուէր թուրք գահը եւ թուրք զինուորականը աշխարհի առջև ծաղր ու ծանակ ըլլար: Պետք էր ափ մը ճան ֆետայիներու կորովը եւ յանդուգն սիրտը կտրեր անցներ վեց հազար թուրք կանոնաւոր զինուորներու շղթան, յոյս, հաւատք եւ կորով ներշնչելու հայ սրտերուն, որոնք տառապած էին, անիրաւուած եւ զրկուած էին» (Լույս տեղում):

21-րդ օրը Անդրանիկը սպիտակ սավաններից կարված շապիկներ հագցրեց իր մարտիկներին, բացատրեց ծրագրի մանրամասները, տվեց կարգապահական անհրաժեշտ հրահանգներ և ուշ գիշերը, սաստկացող ձյունամրրիկից օգտվելով՝ դուրս բերեց շրջափակումից: Հաջորդ օրը, երբ խայտառակված թշնամին կատաղությունից ատամներն էր կրճտացնում՝ Անդրանիկը Սասնա սարերում իր հաղթանակն էր տոնում:

Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի մարտիկները 7-8 տասնամյակ անց զինվորագրվեցին Անդրանիկի խմբին, և քանի որ ժամանակներն այլ էին, իսկ գործողությունների վայրը աշխարհի խոշոր քաղաքները՝ արդյունքը եղավ հազարապատիկ ավելի:

Որ ասալայականները Անդրանիկի հոգեգավակներն էին՝ վկայվում է նաև Օռլիի գործողության պատասխանատվությունը ստանձնած Վարուժան Կարապետյանի օրինակով, ով բանտարգելության երկար ու ծիգ տարիները մաշելիս փորձում էր ինքնուրույն յուրացնել կերպարվեստի գաղտնիքները և Չորավար Անդրանիկին էր պատկերում՝ իր սպիտակ ձիով թշնամու դեմ խոյանալիս:

Երբ վերանկախացած Հայաստանի Հանրապետությունը 1990-ական թվականներին պետականորեն սկսեց տեր կանգնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդրին՝ աշ-

-- էջ 18 --

խարհն արդեն հոգեբանորեն պատրաստ էր դրան, ստեղծված էին պայքարը դիվանագիտական ճանապարհով վերջնական հաղթանակի հասցնելու բոլոր նախադրյալները: Այդ գործում, հավատանք, թե չհավատանք, վճռորոշ ու անուրանալի է ԱՍԱԼԱ-ի մի քանի տասնյակ մահապարտ-քաջորդիների դերը:

Որպես այս առաջաբանի վերջաբան հարկ է նշել, որ «Եղիա Քեչիշյան» մարտախմբի անդամներին քիչ փորձություններ չէին վիճակված ֆրանսիական բանտում: Իրենց պատժաժամկետը կրող քրեական հանցագործների խառնամբոխը արտաքին ազդակների ուղղորդությամբ բազմիցս փորձեց ընկճել տղաների ոգին, կոտրել նրանց հաստատակամությունը, սակայն հայորդիների քառյակը մի այնպիսի փառահեղ ծեծուջար դի ենթարկեց բազմազույն քրեականներին, որ դրանից հետո դեռ երկար ժամանակ թե՛ բանտապահները և թե կալանավորները միայն հարգանքով էին արտասանում «հայ» բառը:

Անչափ ցավալի է, որ պատժաժամկետի վերջին տարում տղաներից Արամ Բասմաջյանը ինքնասպանությամբ վերջ տվեց կյանքին: Մյուս երեքը այսօր էլ շարունակում են իրենց պայքարը՝ գաղափարական-քաղաքական ճակատում:

Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի մարտիկների սխրանքներն ու հայրենաշունչ պատգամները պիտի ոգեշնչեն մեր սերունդներին այնքան ժամանակ, քանի դեռ հայի ճակատին ու հոգում չի հարթվել այնպիսի մի կնճիռ, որի անունն է Հայոց ցեղասպանություն:

ԿԱՐՈ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Գրականագետ

-- էջ 19 --

ՕՐ ԱՌԱՋԻՆ

Երեքշաբթի, 24-ը հունվարի, 1984 թ.

-- էջ 20 --

«Վան» գործողության մարտիկները Փարիզի
Արդարադատության պալատում

-- էջ 21 --

ՕՐ ԱՌԱՋԻՆ

ԱՌԱՋԻՆ ՆԻՍ

ՆԱԽԱԳԱՀ - Մեղադրյալներ, ոտքի՛:

Ամբողջ սրահը ոտքի է կանգնում: Նախագահը խնդրում է, որ ժողովուրդը նստի,
բայց դահլիճում ներկա հայերը բղավում են, որ իրենք ազգովի մեղադրյալ են:

Գյուզեյան Գևորգ, դուք ծնվել եք 1960 թվականի հունիսի 6-ին, դեպքի ժամանակ
եղել եք 21 տարեկան, այժմ 23 եք:

Բասմաջյան Արամ, դուք ծնվել եք 1960 թվականի մարտի 25-ին, դեպքի ժամանակ
նույն պես եղել եք 21 տարեկան, այժմ 23 եք:

Սիսյան Վազգեն, դուք ծնվել եք 1956 թվականի հոկտեմբերի 20-ին, դեպքի
ժամանակ եղել եք 24 տարեկան, այժմ 27 եք:

Ջուլֆայան Հակոբ, դուք ծնվել եք 1960 թվականի ապրիլի 24-ին: Դեպքի ժամանակ
եղել եք 21 տարեկան, այժմ 23 եք... Եթե արագ եմ խոսում, կարող եք կանխել...

Ձեզնից ոչ մեկը նախկինում դատապարտված չի եղել, այս գործի կապակցությամբ ձերբակալվել էք 1981 թվականի սեպտեմբերի 28-ին, այսինքն այսօր լրանում է ձեր նախնական կալանքի 2-րդ տարվա 3-րդ ամսվա 25-րդ օրը: Չորսդ էլ կալանավորված եք մոտ հիսուն հոգու պատանդ վերցնելու հանցանքի համար, որը, այս հանգամանքը առանձնահատուկ է նշվում նախնական եզրակացությունում, ուղեկցվել է մահվան սպառնալիքով: Բացի դրանից, չորսդ էլ մեղադրվում եք անօրինական զենք, առաջին կարգի ռազմամթերք, պայթուցիկներ, ռումբեր կրելու համար:

Գյուզեյյան, դուք մեղադրվում եք նաև հսկիչ-պահապան Էոզենի կանխամտածված սպանության և բռնությամբ, զենքի գործադրումով այնպիսի գործողություններ կատարելու համար,

-- էջ 22 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

որոնք ավելի քան ութը օրվա անկարողության են հասցրել պարոն Բալթասողլուհին:

Բացի դրանից դուք՝ Սիսյան, մեղադրվում եք պարոն Բլոնդե Բեռնարի, իսկ դո՛ւք՝ Ջուլֆայան, պարոն Ինալ Կայայի նկատմամբ կանխամտածված սպանության փորձ կատարելու համար:

Ձեր մեղադրանքները հաստատվելու դեպքում չորսդ էլ ցմահ բանտարգելության կդատապարտվեք, եթե, իհարկե, ի հայտ չգան հանցանքը մեղմացնող հանգամանքներ: Ինչպես երևի հասկացաք, այսօրվա նիստում մենք անդրադառնալու ենք ձեր կենսագրության մանրամասներին, վաղը լսելու ենք Նրանց, ովքեր առնչվում են դեպքին:

Նախքան խոսքը պարոն Գյուզեյյանին տալը, ես չորսիդ էլ ուզում եմ երկու հարց ուղղել: Գործին ծանոթանալիս զգացվում է, որ մասնավորապես այն ամենի կապակցությամբ, ինչ առնչվում է ձեր անձնականին, անցած կյանքին, երիտասարդությանը, մանկությանն ու պատանեկությանը, վերջիվերջո շատ քիչ բան եք պատմել: Գործն ընթերցելիս այն տպավորությունն է ստեղծվում, որ չեք ուզել պատասխանել քննիչի հարցերին:

Ես նախ ցանկանում եմ պարզել, թե ինչո՞ւ եք նման դիրք գրավել, և հետո՝ այսօր տրամադրվա՞ծ եք դատական ատյանում փոքր-ինչ հանգամանորեն խոսելու ձեր անցյալի, մանկության, հետագա գործունեության և այլնի մասին:

Պարոն Գյուզեյյան, համաձա՞յն եք այն դիտարկման հետ, որ դուք խուսափել եք շատ բան ասել:

ԳՅՈՒԶԵՆԻԱՆ - Այո՛, համաձայն եմ:

ՆԱԽԱԳԱՀ - Այժմ մտադի՞ր եք ավելի հանգամանալից լինել, մանրամասները փոքր-ինչ լուսաբանել:

Չորս մեղադրյալները համաձայնվում են:

ՆԱԽԱԳԱՀ - Երկրորդ նախնական հարցը՝ մենք կուզեինք իմանալ նաև, թե ինչպե՞ս եք ծանոթացել իրար հետ, երկա՞ր ժամանակ եք միմյանց ճանաչում: Բոլորդ էլ Լիբանանո՞ւմ եք ապրում: Ի՞նչ պարագաներում եք մտերմացել: Թե՞ ձեզ միմյանց ներկայացրել են Փարիզ գալուց քիչ առաջ:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Մենք ծանոթացել ենք գործողությունից քիչ, շատ քիչ առաջ:

-- էջ 23 --

ՕՐ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԱԳԱՀ - Լիբանանում ընկերություն չե՞ք արել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ո՛չ:

ՆԱԽԱԳԱՀ - Չորսդ էլ նույնը հաստատո՞ւմ եք:

Հաստատում են:

ՆԱԽԱԳԱՀ - Սկսենք Գյուլգեյանից: Մյուս երեքը նստեք: Պարոն Գյուլգեյա՛ն, կանգնած մնացեք:

Եթե ես ճիշտ հասկացա, դուք հիմա եք ցանկանում ձեր ու ձեր ընկերների անունից ընդհանուր հայտարարությամբ հանդես գալ: Կարող եք սկսել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Սույն հայտարարությամբ ուզում եմ մի անգամ ևս լիովին ստանձնել 1981 թվականի սեպտեմբերի 24-ին թուրքական հյուպատոսարանը պատանդ վերցնելու պատասխանատվությունը և բացատրել պատճառները, որոնք դուք, պարոն նախագահ, հենց նոր ցանկացաք իմանալ:

Մենք համաձայնեցինք կատարել այդ գործողությունը, քանի որ համընկնում է Հայաստանի ազատագրության նպատակի, Հայկական հարցի լուծման մեր հայեցակարգին, մանավանդ որ վաթսուն տարվա անարդյունք, խաղաղ ջանքերից հետո մենք գտնում ենք, որ զինված պայքարը խնդիրը արժարժելու, այն շրջափակող լուռության պատը փշրելու գլխավոր միջոցն է:

Հայկական հարցը միջազգային ասպարեզում հայտնվել է 19-րդ դարի վերջից: 1894-96 թվականների ջարդերից հետո միայն, որոնց 300.000 հայ զոհ գնաց, գերտերությունները հանդես եկան, եթե կարելի է այդպես ասել, ի նպաստ հայերի: Ես չեմ ուզում հայկական ջարդերի պատմական անցյալին անդրադառնալ, ցանկանում եմ կանգ առնել միայն 20-րդ դարի առաջին ցեղասպանության վրա, որի զոհերն ենք եղել մենք: 1915 թվականի սկզբից օսմանյան կառավարությունը

Նախաձեռնեց և իրագործեց հայ ժողովրդին բնաջնջելու ծրագիրը: Երկու տարվա ընթացքում ավելի քան երկու միլիոն հայեր բռնությամբ հեռացվեցին իրենց տներից, քաղաքներից ու գյուղերից, որտեղ ապրում էին ավելի քան երեք հազար տարի: Այս բռնագաղթի ընթացքում օսմանյան իշխանությունների՝ հատուկ կազմավորած զինված ոճրախմբերը հարձակվում էին արքայազանների քարավանների վրա, որպեսզի կոտորեն, թալանեն նրանց վերջին պաշարները:

Այդպիսով հարյուր հազարավոր հայեր ջարդվեցին, կանայք

-- էջ 24 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

առևանգվեցին ու բռնի մահմեղականացվեցին, երեխաներ և ծերունիներ մորթվեցին: Հարյուր հազարավոր հայեր էլ երկար ուղու ընթացքում հոգնության, ուտելիքի և ջրի պակասի պատճառով, - քանի որ նրանց հաճախ մերժում էին որևէ բան տալ, - մահացան: Եվս հարյուր հազարավոր հայեր, որոնք դիմացան ահավոր բռնագաղթին ու զինված ոճրախմբերի գրոհներին, սիրիական Դեյր Էզ-Չոր անապատում մատնվեցին քաղցի, ցրտի ու վարակիչ հիվանդությունների:

1915 թվականից մինչև 1917-ը, երկու տարվա ընթացքում, ավելի քան մեկ ու կես միլիոն հայ կա՛մ սպանվեց, կա՛մ դեպի մահ քշվեց: Հայ ժողովուրդը վերացավ ու վտարվեց Հայրենիքից: Արևմտահայաստանը բուն բնակիչներից պարավեց, և միայն մի քանի հարյուր հազար հայեր կարողացան խույս տալ սպանողից, ապաստանել Արևելահայաստանում կամ Անդրկովկասում: Հայերի մնացած մասը ցրիվ եկավ աշխարհով մեկ՝ ստեղծելով այն, ինչը մենք այսօր կոչում ենք հայկական Սփյուռք:

Քսաներորդ դարի առաջին ցեղասպանությունը, որի զոհերն ենք, կրկնում են, նաև մենք, ո՛չ Թուրքիան և ոչ էլ միջազգային կազմակերպությունները մինչև հիմա չեն ընդունել: Աշխարհը այս խնդրի շուրջը շարունակում է լռություն պահպանել: Ոճրագործները երբեք չեն դատապարտվել, զոհերին չեն լսել, որովհետև մեր ձայնը մեղմ է հնչել, տնտեսական ու ռազմավարական ճիչերը ավելի են արժեքավորվել, քան տառապանքի տնքոցները:

Բայց Հայկական հարցը միայն ցեղասպանության ընդունումը չէ: Այն գլխավորապես տարածքային իրավունքների հարց է, այսինքն հայ ժողովրդի՝ թուրքերի կողմից բռնագավթված Հայաստանը վերադառնալու, ինչպես նաև ինքնորոշվելու, հայկական անկախ պետություն հիմնելու հարց:

Տարածքային իրավունքները մեր պատմական իրավունքներն են, որովհետև հայ ժողովուրդը այդ հողի վրա ապրել է երեք հազար տարի: Աշխարհի՝ թուրքերի գրաված այդ անկյունը ամբողջ հայ ժողովրդի բնօրրանն է, Սփյուռքի երեք միլիոն, Խորհրդային Հայաստանի այն հայերի Հայրենիքը, որոնք ծագումով Արևմտահայաստանից են:

ՕՐ ԱՌԱՋԻՆ

Հայկական հարցը մի ուրիշ՝ շատ կարևոր բնույթ էլ ունի, որն ամռնչվում է Սփյուռքի երեք միլիոն հայությանը: Այս հայերը այժմ այնպիսի ճակատագրական խնդիրների առջև են կանգնած, որոնք անհապաղ լուծում են պահանջում: Սփյուռքում, հայ համայնքներին ամենուր, որտեղ ապրում են, սպառնում է ծուլումը: Հայերն իրենց հաստատված երկրներում պետք է դիմագրավեն նաև քաղաքական, տնտեսական, ընկերային դժվարություններ, առանց անտեսելու այն կարևոր իրողությունը, որ հայ են: Նսեմացումը, հալածանքը, ծուլումը, ճնշումները շարունակվում են:

Սրանք են մեր ներկա, դժվարին խնդիրները, որոնք շուտափույթ լուծում են պահանջում:

Ուրեմն Հայկական հարցը նախ և առաջ հայ ժողովրդի տարածքային օրինական իրավունքի, ինչպես նաև թուրքերի բռնագրաված Հայաստանը վերադառնալու իրավասության հարցն է: Դա անհետաձգելի անհրաժեշտություն է Սփյուռքի հայերի համար:

Երկրորդը՝ ցեղասպանության ընդունումն ու հատուցումն է:

Ահա՛ Հայկական հարցի խիստ թռուցիկ բացատրությունը: Այժմ փոքր-ինչ անդրադառնանք այն ամենին, ինչ արվել է խնդիրը լուծելու կամ գոնե արձարծելու համար:

1915-ից ի վեր մենք հավատացել ենք արդարությանն ու մեծ տերությունների խոստումներին: Վաթսուն տարի շարունակ գործադրել ենք հնարավոր բոլոր խաղաղ միջոցները, և չնայած մեր դատը պաշտպանելու հավաստիացումներին, համոզվել ենք, որ Հայաստանը ոչ ոքի չի հետաքրքրում:

Հայկական ցեղասպանության հիսնամյակի ոգեկոչմանը մենք զգացինք, որ ոչ միայն մի ճկույթաչափ անգամ չենք առաջացել արդարության ճանապարհին, այլ ընդհակառակը՝ հետքայլ ենք կատարել: Բայց հայ ժողովուրդը հեշտությամբ հուսահատվողներից չէ: Ահա՛ թե ինչու հաջորդ տասնամյակի ընթացքում, 1965-ից մինչև 1975-ը մենք բազմապատկել ենք մեր խաղաղ ջանքերը, նորից դիմել ենք պատասխանատու գլխավոր կողմին՝ Թուրքիային, մեծ տերություններին, ՄԱԿ-ին, դարձյալ հուշագրեր ենք հղել, փաստաթղթեր պատրաստել: Միջազգային իրավունքի մասնագետները հարցը հարուցել են իրավական առումով, աշխարհի բոլոր անկյուններում ցույցեր են կազմակերպվել, որոնց մասնակցել են տասնյակ հազարավոր հայեր:

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Պաշտոնական պատվիրակությունները խնդիրը հասցրել են միջազգային կազմակերպություններին, հանրային կարծիքը լուսաբանելու համար տասնյակ գրքեր են գրվել: Մի խոսքով՝ հնարավոր խաղաղ միջոցները սպառվել են:

1975-ը ինչ որ տեղ հանրագումարային տարի եղավ, սակայն դարձյալ անարդյունք՝ բոլոր ջանքերն իզուր անցան, Թուրքիան շարունակեց Հայկական հարցի գոյությունը անտեսել, իսկ մնացած երկրները չէին ուզում լսել ո՛չ Հայաստանի, ո՛չ էլ հայերի մասին:

Աշխարհի վերաբերմունքը մեր ճակատագրի նկատմամբ խիստ հստակ էր՝ մասնավորապես Միացյալ ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հանձնաժողովի 30-րդ հոդվածը կրճատվելուց հետո, որը մի քանի տողով հայկական ջարդերը հիշատակում էր որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն: Բոլոր միջոցները գործադրելուց հետո մենք հանգեցինք այն եզրակացության, որ զինված պայքարը մեր օրինական իրավունքներին տիրանալու գլխավոր միջոցն է, և ընտրեցինք այդ ուղին:

Այսօր, մոռանալով թուրքական ֆաշիստական պետության ահաբեկչությունը, մե՛զ են մեղադրում ահաբեկչության մեջ: Բայց ես ուզում եմ ձեզ հիշեցնել, որ երեկ ահաբեկիչներ համարվողներից ոմանք այժմ կուռքեր են, նախարարներ և նույնիսկ պետությունների ղեկավարներ: Տվյալ անձինք ահաբեկի՞չ են, թե պայքարող մարտիկ՝ որոշվում է նրանց հաղթանակով կամ պարտությամբ:

Մինչև հիմա թուրքերը վստահ են եղել, որ ոչ ոք իրենցից հաշիվ չի պահանջի: Ահա՛ թե ինչու առանց վարանելու կոտորեցին հայերին, վերապրողներին վտարեցին դարավոր Հայրենիքից: Եթե դա տեղի է ունեցել վաթսուհինը տարի առաջ, ապա ոչ այնքան վաղուց թուրքերը բռնագրավել են Կիպրոսը, ջարդել են Իրաքի քրդերին: Այսօր, ճիշտ է, հայերը տառապում են, բայց այդ նույն ֆաշիստական պետության պատճառով տառապում են նաև կիպրացիները, քրդերը, նույնիսկ ինքը՝ թուրք ժողովուրդը, և ցավալին այն է, որ ժողովրդավարական, մարդու իրավունքների պաշտպան հանդիսացող երկրները ամեն տարի Թուրքիային միլիարդավոր դոլարների հասնող տնտեսական, ռազմական օգնություն են ցույց տալիս:

ՕՐ ԱՌԱՋԻՆ

Ես ուզում եմ վերադառնալ մեր գործողությանը: Գրոհելով ու գրավելով հյուպատոսարանը, մենք ուղղակի հարձակվել ենք Թուրքիայի ֆաշիստական կառավարության վրա՝ իր իսկ տարածքում: Ավելին, հյուպատոսարանը թուրքական գաղտնի ծառայության կենտրոն էր, որը գործում էր այն հայերի, քրդերի և նույնիսկ Եվրոպա տարագրված ձախակողմյան թուրքերի դեմ, որոնք Թուրքիայի ֆաշիստական կառավարությունը բացահայտ չէր կարող վնասել:

Մի այլ պատճառ, մեր պայքարի սկզբնավորումից ի վեր մենք երբեք չէինք կարողացել թուրքական կառավարությանը որևէ չեզոք երկրի դատարան քարշ տալ, որովհետև Թուրքիան անընդհատ քողարկվում էր քաղաքացիական հայցապնդմամբ, այլ կերպ ասած պաշտպանում էր այս կամ այն դիվանագետին, մանավանդ որ գործողությունները կատարվում էին տարբեր երկրներում: Բայց այժմ թուրքերը ստիպված են մեզ պատասխանել, որովհետև ամեն ինչ տեղի է ունեցել իրենց տարածքում: Ճիշտ է, այն վայելում է Ֆրանսիայի հովանավորությունը, բայց անկախ է, քանի որ բացի ֆրանսիականից, սեփական պաշտպանությունն էլ ունի: Ու չնայած մենք գրոհել ենք հյուպատոսարանի վրա, շենքը պաշտպանող ֆրանսիական ուժերին չենք դիպել: Մենք մեր գեներն ուղղել ենք թուրք ոստիկանների դեմ, որոնք նույնպես զինված են եղել:

Ահա՛ այն ամենը, ինչի համար դիմել ենք այդ քայլին: Մենք սպանելու չէինք եկել, մեր ոչ մի արածի համար չենք զոջում: Մենք կատարել ենք մեր պարտականության մի մասը միայն, մենք դեռ շատ անելիքներ ունենք, որովհետև մեր Հայրենիքը դեռևս ազատագրված չէ թուրքական լծից, հայերը դեռևս չեն վերագտել իրենց բուն ինքնությունը, արդարությունը վերադարձված չէ այն ժողովրդին, որը երկար տառապել է:

Ամբողջ մարդկության առջև մենք՝ հայ մարտիկներս երդվել ենք զինվորագրվել մեր ազգային դատին, արդարության վերականգնմանը, և այժմ հավաստում ենք երդմանը հավատարիմ մնալու մեր վճռականությունը: Ահա՛ բոլորը:

ՆԱԽԱԳԱՀ - Մի կարևոր հանգամանք: Բժիշկ Ֆոլինը շատ է շտապում, քանի որ պիտի մասնակցի միջազգային ինչ-որ գագաթնաժողովի: Հանրային նախարարությունը, քաղաքացիական հայցվորները, պաշտպանությունը անպատե՞հ կհամարեն,

-- էջ 28 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Եթե մենք նրան հիմա լսենք:

ՊԱՏԱՍԽԱՆ - Ոչ մի անպատեհություն:

ՆԱԽԱԳԱՀ - Այդ դեպքում ներս հրավիրեք բժիշկ Ֆոլինին:

Բժիշկ Ֆոլիևի դատախոսումը: Երդման արարողակարգ:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք կատարել եք չորս մեղադրյալներից յուրաքանչյուրի դատաբժշկական ու դատահոգեբանական քննությունը: Ի՞նչ կցանկանայիք իրազեկել ատյանին:

ՖՈԼԻՆ - Գյուզեյանը, ում ես քննել եմ, դեպքի պահին մոտավորապես քսանմեկ տարեկան էր: Մենք նրա հետ առնչվել ենք թարգմանի միջոցով, քանի որ ֆրանսերեն քիչ է խոսում: Նա սթափ, զգոն, աչալուրջ անձնավորություն է, և չնայած ձայնը երբեմն մեղամաղձոտ է հնչում, որպես կանոն խիստ վերապահ է իր կենսագրության հանդեպ, որի շուրջը չի ուզում խոսել: Նա ուղղափառ հայ է, մեծացել է Լիբանանում, արտաքուստ գոնե՝ առանց այնպիսի հանգամանքների, որոնք կարող էին խաթարել հոգեկան զարգացումը: Մինչև տասնհինգ տարեկանը դպրոց հաճախելուց հետո, հանուն գաղափարի, մտել է քաղաքական ասպարեզ: Նա լիովին ստանձնում է այն գործողության ամբողջ պատասխանատվությունը, որին մասնակցել է, այդ մասին խոսում է խիստ որոշակի, ամեն ինչ բացատրում է, վկայակոչում միմիայն քաղաքական դրդապատճառներ: Մի խոսքով, կատարելապես խելամիտ անձնավորություն է, հասկանում է իր գործողությունների հետևանքները, որևէ ախտանշան չունի, քննությունը չի բացահայտել այնպիսի հայտանիշ, որը այս կամ այն մտավոր հիվանդության նախանշան համար վեր: Ենթական իմացական առումով շատ լավ տպավորություն է թողնում՝ տպավորություն, որն ամենայն հավանականությամբ խաբուսիկ չէ: Նա ուսումնառության տարիներին, որն ընդհատել է տասնհինգ տարեկանում, զարգացման որոշակի մակարդակի հասել է:

ՆԱԽԱԳԱՀ - Պարոնայք երդվյալներ, հարցեր ունե՞ք: Իսկ քաղաքացիական հայցվորներ՞ը: Պաշտպանություն՞: Ընդհանուր դատապաշտպա՞նը:

Հարցեր չկան:

ՖՈԼԻՆ - Բասմաջյանը նույնպես ծնվել է 1960-ին: Մենք նրա հետ էլ ենք թարգմանի օգնությամբ շփվել: Ենթական

-- էջ 29 --

ՕՐ ԱՌԱՋԻՆ

Խիստ սթափ, ուշադիր է, ձայնը բավական խուլ է, երբեմն փոքր ինչ արհամարհական: Նրա մեծ հայրն ու մեծ մայրը գոհ են գնացել ցեղասպանությանը, բայց ենթական, իր հավաստմամբ, անձնական դրդապատճառներով չի մասնակցել գործողությանը, որի պատասխանատվությունն ստանձնում է:

ՆԱԽԱԳԱՀ - Հարցեր չկան: Պարոնայք երդվյալներ, պաշտպանություն, հանրային նախարարություն...

Հարցեր չկան:

ՖՈԼԻՆ - Սիսյանը ծնվել է 1956-ին, գործողության ժամանակ քսանչորս տարեկան է եղել: Մենք նրա հետ զրուցել ենք թարգմանի օգնությամբ, չնայած անգլերեն բավական լավ է խոսում: Մեզ տեղեկացրեց, որ ցեղասպանության գոհի թոռ է, կոշկակարի զավակ, ունի երեք եղբայր և մի քույր, այսինքն՝ կանոնավոր ընտանիք:

Ենթական դպրոց հաճախել է մինչև տասներկու տարեկանը, որից հետո աչքերի հիվանդության պատճառով երեք ամիս կորցրել է տեսողությունը, այնուհետև տարի ու կես ոչնչով չի կարողացել զբաղվել: Ի վերջո մեքենագետ է աշխատել, իսկ վերջին հինգ տարիների ընթացքում հիմնականում մարտական գործունեություն է ծավալել: Նա իր արտահայտություններում խիստ հավասարակշիռ է:

Գալով գործողությանը, որի պատճառով այժմ հայտնվել է ատյանում, լիովին ընդունում է պատասխանատվությունը: Պատմածից թվում է, թե դեկավարն ինքն է: Նույնիսկ հայտնեց, թե գործողությունը անձնասպանական է եղել, ընդ որում մտածվել է հստակ, կազմակերպվել հանգամանորեն, որն ինքը հաստատում է: Հայտնի է, որ նա վիրավորվել է, հիվանդանոց փոխադրվել, վիրահատվել... Երբ մենք հանդիպեցինք, վիճակը բավարար էր:

Խոսքն ուրեմն այնպիսի ենթակայի մասին է, որն առաջնորդվում է քաղաքական գաղափարներով, որպես հայ՝ նրա պայքարի շարժառիթները որոշակի են, ցնորային բնույթ չունեն:

ՆԱԽԱԳԱՀ - Հարցեր կան: Պարոնայք երդվյալներ, քաղաքացիական հայցվորներ, հանրային նախարարություն, պաշտպանություն:

Հարցեր չկան:

ՖՈԼԻՆ - Ջուլիայանը մեզ ներկայացել է Հակոբյան ազ -

-- էջ 30 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

գանվամբ, ասել է, որ ճշգրիտ տեղեկություններ չունի, բայց ամենայն հավանականությամբ ծնվել է 1959-ին: Մենք նրա հետ զրուցել ենք թարգմանի միջոցով:

Ենթական սթափ, ուշադիր, աչալուրջ է, խիստ վերապահ նախնիների ու ընտանիքի նկատմամբ: Ամեն դեպքում հայտնել է, որ երբ հայրը մահացել է, ինքը երեք տարեկան է եղել: 1970-ին կորցրել է մորը: Նա ծնողների վերջին զավակն է,

երեք եղբայր ու մի քույր ունի: Նրա ընտանիքում հոգեկան հիվանդության նախադեպեր չկան, անձնական կյանքը խիստ սովորական է: Ըստ իր հայտարարության, մինչև 1967-ը ապրել է Թեհրանում, այնուհետև՝ Լիբանանում: Ընդհուպ 1977 թվականը գիշերօթիկ դպրոց է հաճախել: Այա տարբեր, երկրորդական աշխատանքներ է կատարել, հիմնականում մենակ, երբեմն ընտանիքի հետ է ապրել, վերջապես ստացել է ռազմական կրթություն: Ասում է, որ դեպքից երկու ամիս առաջ է Ֆրանսիա եկել:

Գործողության վայրում վիրավորվել է: Փաստերը վկայում են, որ գրոհը զուտ քաղաքական բնույթ ունի: Պատճառների մասին խոսում է բռնաբռված, անդրադառնում է ցեղասպանությանը, Հայաստանի բռնազավթված լինելուն, ազատագրելու համար հեղափոխական գործունեություն ծավալելու անհրաժեշտությանը:

ՆԱԽԱԳԱՀ - Տիկնայք և պարոնայք երդվյալներ, հարցեր ունե՞ք: Քաղաքացիական հայցվորնե՞րը: Հանրային նախարարությունը: Պաշտպանությունը:

Հարցեր չկան:

Ատյանը շնորհակալություն է հայտնում ձեզ, բժիշկ, կարող եք մեկնել:

Պաշտպան Լըքլերի առաջարկով՝ դատաքննությունը հետաձգվում է:

-- էջ 31 --

ՕՐ ԱՌԱՋԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

Դատաքննությունը վերսկսում է 15-ն անց 40-ին:

ՆԱԽԱԳԱՀ - Դատաքննությունը շարունակվում է: Պարոն Գյուզեյյան, նախ անդրադառնանք ձեր անձնական կյանքին: Մեզ հայտնի է, որ ծնվել եք 1960 թվականի հունիսի 6-ին, Բեյրութում, Աբրահամ և Ովսաննա Գույումջյանների ընտանիքում: Միակ տղան եք, երկու քույր ունեք: Ինչո՞վ են նրանք զբաղվում:

ԳՅՈՒԶԵԼՅԱՆ (Թարգմանի միջոցով) - Ծնողներին հետ ապրում են Բեյրուտ թում:

ՆԱԽԱԳԱՀ - Աշխատո՞ւմ են:

ԳՅՈՒԶԵԼՅԱՆ - Մեկը դպրոց է հաճախում, մյուսը տանն է:

ՆԱԽԱԳԱՀ - Ձեր հայրը շինարար բանվոր է, մայրը՝ մասնագիտություն չունի, առտնին գործերով է զբաղվում: Ես ձեզ մի հարց եմ այժմ տալու, որը հետագայում

ուղղելու եմ երեքից դուրաքանչյուրին: Ձեր մայրը քննիչին ասել է հետևյալը. «Մեր ընտանիքը արդեն քառասուններկու տարի բնակվում է Լիբանանում, բայց դեռևս գաղթական է համարվում»:

Ես կուզեի, որ դուք ատյանին պատմեիք ձեր ընտանիքի անցյալի մասին, անդրադառնալիք մասնավորապես ազգային ակունքներին, տեղեկացնելիք՝ ձեր նախնիները այս կամ այն չափով ժամանակի իրադարձություններին զոհ դարձե՞լ են, այդ պատճառո՞վ, ստիպվա՞ծ են եղել գաղթել: Ինչո՞ւ են հաստատվել Լիբանանում:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Մեր ընտանիքը Լիբանան է հասել Կիլիկիայի դեպքերից հետո, փախել է բոլոր հայերի հետ: Նրանք թողել են իրենց բնօրրանը, ապաստանել Լիբանանում: Արդեն մոտ քառասուն տարի է, որ մերոնք Լիբանանում են և չնայած քաղաքացիություն էլ են ստացել, ոչ միայն մեր ընտանիքը, Լիբանանում ապրող բոլոր հայերը օտար են համարվում:

-- էջ 32 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՆԱԽԱԳԱՀ - Ձեր ընտանիքի անդամներից ոմանք այդ ժամանակ Թուրքիայում ծավալվող գործողություններին զոհ գնացե՞լ են:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛: Ես կուզեի, որ այդ մասին մայրս հանգամանորեն խոսեր:

ՆԱԽԱԳԱՀ - Լիբանանահայերը հաստատվել են որոշակի բնակավայրո՞ւմ, թե՞ ցրվել են երկրով մեկ:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Հայերի կարելի է հանդիպել Լիբանանի ամբողջ տարածքում: Բեյրութում կա նաև հայկական թաղ, որը կոչվում է Բուրջ Համուդ, որտեղ մենք ունենք դպրոցներ, եկեղեցիներ, ամեն ինչ, որ մեզ պետք է:

ՆԱԽԱԳԱՀ - Դա Բեյրութի արվարձանային թաղամա՞սն է: Այդտե՞ղ եք դուք մինչև տասնչորս տարեկանը դպրոց հաճախել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Չուտ հայկական դպրոցներ կա՞ն, գոյություն ունե՞ն:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Լիբանանում մոտ քսան հայկական դպրոց կա:

ՆԱԽԱԳԱՀ - Բոլոր հայ երեխաները հաճախո՞ւմ են ազգային վարժարան, թե՞ կան այնպիսիները, որոնք լիբանանյանն են նախընտրում:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Հայերը կրթվում են հայկական դպրոցներում, որպեսզի կարողանան պահպանել իրենց ինքնությունը:

ՆԱԽԱԳԱՀ - Այնտեղ դուք զուտ ազգային դաստիարակություն եք ստանում: Ձեզ պատմում են ձեր արմատների, ինքնատիպ նկարագրի մասին, թե՞ ինչպես ամեն երկրում ընդհանուր գիտելիքներ էլ են հաղորդում:

Թարգմանին:

Մեղադրյալը կուզի՞ մեզ պատմել իր քաղաքական գործունեության, ընդհուպ ԱՍԱԼԱ-ի մարտիկ դառնալու՝ այն ամենի մասին, որ կատարել է այդ կազմակերպության ներսում: Դպրոցական դասընթացից բացի լրացուցիչ ուսում ստացել է: Քիչ առաջ ասում էր՝ «Ձևավորում էին մեր հայկական ինքնությունը»: Հնարա վո՞ր է, որ նա ԱՍԱԼԱ-ի շարքերում հատուկ դաստիարակություն է ստացել: Կարո՞ղ է այս բոլորի կապակցությամբ մեզ որոշ մանրամասներ հաղորդել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես քաղաքական ու ռազմական հիանալի

-- էջ 33 --

ՕՐ ԱՌԱՋԻՆ

դաստիարակություն եմ ստացել ԱՍԱԼԱ-ի շարքերում: Այս կապակցությամբ ավելի ոչինչ չեմ կարող ասել:

ՆԱԽԱԳԱՀ - Լավ եմ հասկանում, որ դժվար կլինի արտահայտվելը, որ կազմակերպությունն իր գաղտնիքներն ունի, բայց խոսքը դրանց բացահայտմանը չի վերաբերվում: Ի վերջո դա մեր ատյանի խնդիրն էլ չէ: Ուղղակի ձեզ ավելի լավ հասկանալու, ճանաչելու համար, անկախ ամեն ինչից, մեզ հետաքրքրում է, մենք կցանկանայինք, որ փոքր-ինչ ծանոթացնեիք ձեր քաղաքական, ռազմական ձևավորմանը:

Ինչպե՞ս են հավաքագրվում ԱՍԱԼԱ-ի նման կազմակերպության շարքերը: Ինչպիսի՞ դաստիարակություն են այնտեղ ստանում:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես սկսել եմ Հայկական հարցով, զինված պայքարով հետաքրքրվել մարտախմբերի կազմավորումից՝ 1975-ից հետո, երբ դեռ պատանի էի: Լիբանանի պայմանները մեզ ստիպում էին ուղղակի առնչվել այն ամենին, ինչը մեր ժողովրդին էր վերաբերում: Քանի որ տասնհինգ տարեկանից զբաղվել եմ մեր թաղի պաշտպանությամբ, հետաքրքրվել եմ նաև քաղաքականությամբ:

ՆԱԽԱԳԱՀ - Եթե ես ճիշտ եմ հասկանում, խոսքը դաշնակցության՝ հայկական այսպես կոչված ընկերվարական կուսակցության մասին է: Դուք նախ զինվորագրվել եք դաշնակցությանը: Հետո՞ է ձեզ թվացել, որ դաշնակցականների գործելակերպը, եթե, իհարկե, եղել է որոշակի գործելակերպ, բավարար չի եղել ձեր նպատակներին հասնելու համար, և այդ պատճառով դուք ձեզ պարտավորված եք զգացել անդամակցել այնպիսի կազմակերպության, որն ուղղակի հենվում է, ինչ պես ինքներդ եք ասում, զինված պայքարի վրա:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես հնչակյան, այսինքն սոցիալ-դեմոկրատ եմ եղել: Ազգային կուսակցություններ շատ կան՝ հնչակյանությունը, դաշնակցությունը, ռամկավարությունը: Ինքս հնչակյան եմ եղել ու հա մոզվել, որ վաթսուն տարի շարունակ կուսակցությունները Հայոց դատի համար ոչինչ չեն արել: Իմ գաղափարները համընկնում էին ԱՍԱԼԱ- ին, Ես ուզում էի պայքարել միայն մեր դատի համար, այդ պատճառով էլ որոշեցի այդ կազմակերպության մարտիկը դառնալ:

ՆԱԽԱԳԱՀ - ԱՍԱԼԱ- ի մասին ավելի ոչինչ չե՞ք կարող ասել:

-- էջ 34 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ո՛չ:

ՆԱԽԱԳԱՀ - Պարոն Բասմաջյան, հիշեցնեմ, որ դուք ծնվել եք 1960 թվականի մարտի 25-ին, Բեյրութում, Ավետիս և Գյուլեն Բասմաջյանների ընտանիքում: Լիբանանում ունեք ձեզնից մեծ երկու քույր և մի եղբայր, որը բնակվում է Ավստրալիայում: Ի՞նչ է անում նա այնտեղ:

ԲԱՍ ՄԱՋ ՅԱՆ (Թարգմանի միջոցով) - Թող մայրս խոսի իմ եղբոր մասին, քանի որ երբ մեկնել է, Ես երեք տարեկան եմ եղել:

ՆԱԽԱԳԱՀ - Դա նշանակում է, որ ըստ Էության նրան չեք ճանաչում: Ձեր քույրե՞րն ինչ մասնագիտություն ունեն:

ԲԱՍ ՄԱՋ ՅԱՆ - Մեկն ամուսնացած է, մյուսն ասեղնագործությամբ է զբաղվում:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք միշտ ձեր ծնողների հետ եք ապրել: Ձեր հայրը շենքի պահակ է: Լսեցիք, անշուշտ, հարցը, որ տվեցի Գյուլգեյանին՝ ի՞նչ կարող եք ասել ձեր ընտանիքի անցյալի մասին՝ սկսելով դեռևս Հայաստանից: Ձեր նախնիները հայտնի դեպքերից տուժե՞լ են: Այդ հանգամանքով է մասամբ պայմանավորվում կամ բացատրվում ձեր զինվորագրվելը ԱՍԱԼԱ- ին: Ինչպե՞ս է ձեր ընտանիքն իրեն զգում Բեյրութում:

ԲԱՍ ՄԱՋ ՅԱՆ - Ես իմ ընտանիքում ապրել եմ մինչեւ տասնյոթը տարեկան դառնալս: Դեպքերը մեզ՝ ինձ ու քրոջս ստիպել են փոխադրվել Բուրջ Համուդ՝ հայկական թաղ...

Ես կարող եմ այսպես ներկայացնել իմ ընտանիքը՝ մեծ հայրս, ինչպես իր բոլոր եղբայրները, զոհ են գնացել ցեղասպանությանը, հայրս, որ երեք ամսական է եղել, պատահաբար կարողացել է փրկվել, բայց այնպիսի զրկանքներ է կրել (անգամ ուտելու հաց չի գտել), որ յոթը տարի անդամալուծվել, անշարժության է դատապարտվել: Մեծ մայրս իր հերթին, աքսորի ճանապարհին, ջարդերի ժամանակ մի քված երեխա է գտել, որդեգրել:

ՆԱԽԱԳԱՀ (Թարգմանին) - Ինչո՞ւ նա այդ քան քիչ է խոսում իր մասնագիտության մասին: Մանրամասնություններ չի ուզում հաղորդել, որովհետև ԱՍԱԼԱ-ի՞ն են առնչվում: Արդյո՞ք նա, եթե կարե լի է այդպես ասել, վարձատրվել է այն կազմակերպության կողմից, որին պատկանել է:

ԲԱՍՄԱԶՅԱՆ - Ես Բանակից գումար չեմ ստացել:

-- էջ 35 --

ՕՐ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԱԳԱՀ - Դժվար է պատկերացնել, որ հայրը՝ շենքի պահակն է ծախսերը հոգացել: Նա կարո՞ղ է մեզ պատմել իր անցյալի մասին:

ԲԱՍՄԱԶՅԱՆ - Իհարկե, ԱՍԱ ԼԱ-ի շարքերն անցնելուց առաջ ես քաղաքական կուսակցության անդամ՝ դաշնակցական եմ եղել, սակայն, երբ տեսել եմ, թե ինչպես են հայ երիտասարդները զոհվում ազգային դատի համար, ինքս էլ եմ ցանկացել ռազմական կազմակերպության անդամակցել:

ՆԱԽԱԳԱՀ - Հարցս այսպիսին է: Նա ի՞նչ է կարծում, եթե իրենք բնակվեին Միացյալ Նահանգներում, հենց թեկուզ ասենք՝ Ֆրանսիայում, հնարավոր՞ էր, որ զինվորագրվեին նման՝ ինչ-որ տեղ ռազմական (իրենք են այդ բառն օգտագործում) միավորման: Ամենօրյա իրականությունն է նպաստել նրանց ԱՍԱԼԱ-ի շարքերն անցնելուն: Եթե նրանք Լիբանանում՝ պատերազմող երկրում չլինեին, իր կարծիքով, ամեն ինչ այլ կերպ չէ՞ր ընթանա:

ԲԱՍՄԱԶՅԱՆ - Կարծում եմ, որ ես կանդամակցեի նման կազմակերպության, քանի որ ինդիորը հայ ժողովրդին է վերաբերում:

ՆԱԽԱԳԱՀ – Լավ, դիցուք ԱՍԱԼԱ-ն, ինչպես իրենք են ասում, իր քաղաքական ու ռազմական կառույցներով տեղակայված չլինել հատկապես Լիբանանում կամ բոլորովին այլ բնույթ ունենար: Մի՞թե նրանք հանուն պայքարի կթողնեին իրենց ապրած երկիրը և կգնային կիսանեին այնտեղ, որտեղ կլինել համապատասխան սկզբունքներով գործող կազմակերպություն:

ԲԱՍՄԱԶՅԱՆ - Քանի որ Հայկական հարցը դեռևս լուծված չէ, իհարկե, ես ռազմական կազմակերպության շարքերն անցնելու որոշում կկայացնեի:

ՆԱԽԱԳԱՀ - Նույնիսկ մի անգամ ևս բնակավայրը թողնելու և այնտեղ տեղափոխվելու պայմանո՞վ, որտեղ կգտներ իր ցանկացած կազմակերպությունը:

ԲԱՍՄԱԶՅԱՆ - Իհարկե՛:

ՆԱԽԱԳԱՀ - Տիկնայք եւ պարոնայք երդվյալներ, Բասմաշյանին հարցեր ունե՞ք տալու:

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԴՎՅԱԼ - Պարոն Բասմաջյանը մեզ ավելի որոշակի կարո՞ղ է ընդհանուր գծերով ներկայացնել ԱՍԱԼԱ-ի գործունեությունն ու պահանջատիրությունը:

-- էջ 36 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՆԱԽԱԳԱՀ - Որոշ բաներ արդեն ասվեցին: ԱՍԱԼԱ-ն, եթե չեմ սխալվում, հայոց ցեղասպանության ընդունումն է, ԱՍԱԼԱ-ն, միաժամանակ, տարածքային պահանջ է, հայկական հողերի վերստացում, ԱՍԱԼԱ-ն, դասական կուսակցությունների՝ դաշնակցության, հնչակյանության, թերևս կարելի է ավելացնել՝ նաև համայնավարության անարդյունավետության պատասխանն է:

Ընդհանուր առմամբ այդպես չէ՞:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Ճիշտ այդպես է:

ՆԱԽԱԳԱՀ - Պարոն Գյուլգեյյանը մոտավորապես դա էր ասում:

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԴՎՅԱԼ - Ուրեմն՝ ԱՍԱԼԱ-ն իր ծրագրերն իրագործում է միմիայն ահաբեկչակա՞ն միջոցներով:

ՆԱԽԱԳԱՀ - Մի փոքրիկ դիտողություն՝ երևի նկատեցիք, որ ես խուսափել եմ և պետք է խուսափել «ահաբեկիչ» բառն օգտագործելուց, որը չեմ սիրում: Ամեն ոք էլ մեկ ուրիշի նկատմամբ որոշակի պահի այս կամ այն չափով ահաբեկիչ է: Այժմ կան պետության դեկա վարներ, որոնք իրենց գործունեության որևէ փուլում «ահաբեկիչ» են կոչվել:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Շնորհակալ եմ Ձեզնից:

ՆԱԽԱԳԱՀ - Սահմանափակվենք, ուրեմն, «բռնարարք» անվանելով:

ԲԱՍՄԱԶՅԱՆ - Իհարկե՛, մենք ահաբեկիչներ չենք: Աշխարհի ամեն ժողովուրդ իր տարածքներում իրավունք ունի ազատ ապրելու: Մենք՝ հայերս, կարծում ենք, որ վայելում ենք այդ տարրական իրավունքը: Հենց այս համոզումով էլ մարտնչում ենք:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Տիկնայք և պարոնայք երդվյալներին կարելի է տեղեկացնել հետևյալը՝ բոլորը գիտեն, որ գոյություն ունեն հայկական երկու խոշոր, ընդհատակյա կազմակերպություններ, որոնք գաղտնի գործողություններ են ձեռնարկում, ուստի և հետապնդվում են, առանձին անդամներ՝ ձերբակալվում: Մեկը «Հայկական ցեղասպանության արդարության մարտիկներն» է, մյուսը՝ ԱՍԱԼԱ-ն: Ճիշտ է, նրանք ներքին որոշ խնդիրներ ունեն, բայց ներկայացնում են հայկական ընդհատակյա զինված պայքարի երկու հիմնական թևերը:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Ծանոթության կարգով կուզեի տիկին երդվյալին տեղյակ պահել նաև, որ դեռևս նախագահ Վիլ-

-- էջ 37 --

ՕՐ ԱՌԱՋԻՆ

տոնն է հայկական տարածքային պահանջատիրությամբ զբաղվելու ցանկությունն ի հայտ բերել: ԱՍԱԼԱ-ի մասին խոսելիս, մի կողմ թողնելով աստվածային ու սատանայական բոլոր գաղտնիքները, որոնց մասին ես ոչինչ չգիտեմ, պետք է նկատի ունենալ, որ այդ խմբավորումը միակն է, որ ակնհայտորեն բուռն գործունեություն է ծավալում: Իմ կարծիքով հայկական ավանդական բոլոր կուսակցություններն էլ են պահանջատիրության ձգտել, բայց ջանքերը եղել են ավել կամ պակաս արդյունավետ, ավել կամ պակաս տեսական ու գործնական: Ինչ վերաբերում է այս տղաներին, նրանք երդվյալ հավատավորներ են, այդ սկզբունքով էլ գործում են:

ՆԱԽԱԳԱՀ - Պարոն Սիսյանը ծնվել է 1956 թվականի հոկտեմբերի 20-ին, Բուրջ Համուդում՝ հայկական այն թաղամասում, որի մասին քիչ առաջ խոսվեց, Սարգիս և Մարի Կարապյոզյանների ընտանիքում:

Դուք մեկ ավագ քույր, երեք կրտսեր եղբա՞յր ունեք:

ՍԻՍԼՅԱՆ (Թարգմանի միջոցով) – Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Նրանք դպրոց չե՞ն հաճախում:

ՍԻՍԼՅԱՆ - Երկուսն այժմ աշխատում են, մի եղբայրս է դպրոց գնում:

ՆԱԽԱԳԱՀ - Ձեր հայրը կոշկակա՞ր է:

ԹԱՐԳՄԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Հարցեր, որ տվել եմ արդեն ձեր ընկեր ներին՝ կարո՞ղ եք ընդհանուր գծերով ներկայացնել ձեր ընտանիքի պատմությունը, ծագումը, կյանքը դեպքերից առաջ: Ի՞նչ է պատահել հետո, ինչպե՞ս եք Լիբանանում հաստատվել: Հնարավո՞ր է, որ ձեր հարազատներից ոմանք գրկանքներ են կրել հայտնի իրադարձությունների ժամանակ, և այդ հանգամանքը մասամբ գոնե կանխորոշե՞լ է ձեր դիրքորոշումը:

ՍԻՍԼՅԱՆ - Ես միայն մի բան գիտեմ: Իմ նախնիները միշտ Հայաստանում են ապրել, 1915 թվականի դեպքերից հետո՝ մասնատվել: Այժմ մենք ազգականներ ունենք Լիբանանում, Սիրիայում, Իրանում, Ամերիկայում, ամեն տեղ:

Գիտեմ նաև, որ իմ մեծ հայրը Ֆիդայի է եղել, եթե կարելի է այդպես թարգմանել՝ ազատամարտիկ, հայտնի իրադարձությունների ընթացքում կռվել է

հայրենակիցների համար: Հետո մերոնք Լիբանանում են հաստատվել, որովհետև պայմանները

-- էջ 38 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

տանելի են համարել: Ծնողներս մինչև հիմա ապրում են այնտեղ և ինձ միշտ պատմում են մեր պատմությունը: Ավելին, ես բնակվել եմ Բուրջ Համուդում, ինչպես ընդունված է համարել՝ զուտ հայկական թաղամասում, որի պատճառով էլ վաղ մանկությունից, մանավանդ որ նախ սկսուտ, հետո հնչակյան եմ եղել, ընկերներիս հետ միշտ խոսել եմ ազգային հարցերի մասին: Հետո քաղաքական գործունեության մեջ եմ ներգրավվել, մասնակցել եմ հայ երիտասարդական շարժմանը, բազմաթիվ ցույցերի՝ հանուն 1915 թվականին զոհված հայերի, հանուն ապրիլի 24-ի ոգեկոչման:

ՆԱԽԱԳԱՀ - Բեյրութի հայ համայնքը ազգային պատմության նշանակալից իրադարձություններին հաճախ է անդրադառնում:

ՄԻՍԼՅԱՆ - Ամեն ապրիլի 24-ը նշվում է ցույցերով, հանրահավաքներով, այլ միջոցառումներով, ոչ թե միայն ցեղասպանությունը հիշատակելու, այլև թուրքերի բռնազավթած հողերը պահանջելու համար, որոնք մինչև այժմ չեն վերադարձվել: Մենք հենց մեր տարածքներն ազատագրելու համար ենք զենք վերցրել:

ՆԱԽԱԳԱՀ - Մի՞թե բոլոր հայ երիտասարդները ձեր չափ զբաղվում են ազգային խնդրով: Ուզում եմ ասել՝ այժմ կա՞ն հայ պատանիներ, որոնք անտարբեր են իրենց, ինչպես դուք եք արտահայտվում, «հայկականության» նկատմամբ: Նրանք, ասենք, դպրոցում խոսում են այդ մասին, բայց իրենց պարտավորված չեն համարում ինչ-որ բան անել: Կարելի՞ է ենթադրել, որ ամբողջ հայ երիտասարդությունը Լիբանանում նույն նվիրումով մարտական գործողություններ է ծավալում:

ՄԻՍԼՅԱՆ - Կարող եմ ասել՝ բոլորը...

ՆԱԽԱԳԱՀ - Այնպիսիները չկա՞ն, որ անտարբեր են մնում, ինչպես ասում են՝ դրանով չեն ապրում:

ՄԻՍԼՅԱՆ - Հայտնի է, որ Լիբանանը իններորդ տարին է պատերազմում է, ու ինը տարվա ընթացքում նույնիսկ փոքրիկ երեխաները տեսել են, գիտեն, թե ինչ է զենքը: Մեր պահանջը տարածքային է, քանի որ ինը տարվա ընթացքում մենք զգացել ենք, որ մեր երկրում չենք, դրսևորվելու ազատություն չունենք:

ՆԱԽԱԳԱՀ - Ջուլֆայա՛ն, ծնվել է 1960 թվականի ապրիլի 24-ին, Զուվեյթում: Երեք եղբայր ունի՝ մեկը Բեյրութում, երկու -

ՕՐ ԱՌԱՋԻՆ

սը՝ Փարիզում: Որքա՞ն ժամանակ է, որ նրանք Փարիզում են և ի՞նչ են անում:

ՋՈՒԼՖԱՅԱՆ (Թարգմանի միջոցով) - Երկուսն էլ 1977-ին են եկել:

ՆԱԽԱԳԱՀ - Ի՞նչ մասնագիտություն ունեն:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Կոշիկ են արտադրում:

ՆԱԽԱԳԱՀ - Քանի՞ տարեկան են:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Համապատասխանաբար քսանյոթը և քսանհինգ:

ՆԱԽԱԳԱՀ - Ըստ իրեն, երկու եղբայրները ճիշտ իր նման նվիրված են, ինչպես ընդունված է հիմա ասել՝ «Հայոց դատին»: Թե՞ նրանք չափազանց հեռու են իրենց համարում ինդրից:

Ես չեմ ստիպում, որ գաղտնիքներ հայտնի, հարցնում եմ, թե արդյո՞ք նրա երկու եղբայրներն, իր կարծիքով, Հայ դատի գործուն մարտիկներ կդառնային: Դա նրանց համա՞ր էլ է նպատակ, թե՞ եղբայրներն ավելի վերապահ են:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Երկուսն էլ կապված են զգում իրենց հայկականությանը: Մեկը այստեղ՝ սրահում է, մյուսը հայ լինելու պատճառով բանտարկված է*:

ՆԱԽԱԳԱՀ - Ֆրանսիայո՞ւմ:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Այո՛, Ֆլետրի-Մերոժիսում:

ՆԱԽԱԳԱՀ - Այդ հանգամանքը որոշ ճշգրտում է պահանջում: Նա Ֆլետրի-Մերոժիսում չէ այն բանի համար, որ հայ է (փսփ սում է):

Ես ուզում էի ասել, որ Ջուլֆայանը ծնվել է 1960-ին, Քուվեյթում, որտեղ մնացել է մինչև 1963 թվականը՝ հոր մահը: Կարո՞ղ է մեզ տեղեկացնել, թե ինչո՞վ է զբաղվել հայրը և ինչի՞ց է մահացել, երբ ինքն ընդամենը երեք տարեկան է եղել:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Ես ծնվել եմ ապրիլի 24-ին, Քուվեյթում, և երբ երեք տարեկան եմ եղել, հայրս մահացել է ավտովթարից, որից հետո մենք վերջնականապես հաստատվել ենք Բեյրութում:

ՆԱԽԱԳԱՀ - Թեհրանով չե՞ք անցել:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Ո՛չ:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն արձանագրության մեջ սխալ կա... Ընտանիքը տեղափոխվում է Բեյրութ, որտեղ և մայրը մահանում է 1970-ին:

* Հակոբի եղբայրը՝ Վահե Ջուլֆայանը 1983 թվականի հուլիսից Ֆրանսիայում բանտարկված էր մոտ վաթսուն հայերի հետ, որոնք ձերբակալվել էին Օռլիի օդանավակայանում թուրքական ավիաուղիների գրասենյակի դեմ կատարված ռմբահարման պատճառով: Իր անմեղ հայրենակիցներին ազատելու համար Վարուժան Կարապետյանն ստանձնեց բռնարարքի պատասխանատվությունը և ցմահ բանտարկության դատապարտվեց: Շուրջ 18 տարի բանտում մնալուց հետո նա ազատվել է, հաստատվել Հայրենի -

-- էջ 40 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՋՈՒԼՖԱ ՅԱՆ - ճիշտ է:

ՆԱԽԱԳԱՀ - 1970-ին նա տասը տարեկան է եղել: Որբանալուց հետո ի՞նչ է արել, ընտանիքում ուրիշ այնպիսի անդամներ եղե՞լ են, որ զբաղվեն իրենով, թե՞ գիշերօթիկ է գնացել: Ինչպիսի՞ գիշերօթիկ, ի՞նչ կրթություն է ստացել:

ՋՈՒԼՖԱ ՅԱՆ - 1968 թվականին ինձ տեղավորել են մի դպրոց-որբանոցում, որը գտնվում է Այնճարում՝ Բեյրութից դեպի արևելք ընկած գյուղում, որտեղ և մնացել եմ մինչև 1979 թվականը: Ես այնտեղ եմ ստացել իմ տարրական և միջնակարգ, ավելի ճիշտ՝ միջնակարգ կրթության մի մասը: Այդ տարիներին էլ հետաքրքրվել եմ հայ ժողովրդի պատմությամբ:

ՆԱԽԱԳԱՀ - Գիշերօթիկը հայկական էր:

ՋՈՒԼՖԱ ՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն այնտեղ նա այնպիսի դաստիարակություն է ստացել, որն առնչվել է ազգային պատմությանը:

ՋՈՒԼՖԱ ՅԱՆ - Իհարկե՛: Իմ ուսումնառության ամբողջ ընթացքում ես զուգահեռաբար ուսումնասիրել եմ մեր ժողովրդի պատմությունը, և ամռանը, դպրոցական արձակուրդներին, երբ Բեյրութ եմ գնացել, իմ բարեկամների կամ ծանոթների տներում ծերունիներն ինձ պատմել են, թե ինչո՞ւ ենք հայտնվել Լիբանանում, ի՞նչն է մեզ ստիպել արտագաղթել:

ՆԱԽԱԳԱՀ - Արդյո՞ք իր ընտանիքի անդամները՝ նախորդ սերունդը, բացի արտագաղթից, դեպքերի ժամանակ, մասնավորապես 1915-ին կամ 1917-ին, ֆիզիկապես տառապել են:

ՋՈՒԼՖԱ ՅԱՆ - Այդ կապակցությամբ կարող եմ ասել միայն, որ ես շատ քիչ եմ տեսել պապիս, բայց նա ինձ պատմել է, թե ինչ պայմաններում են կոտորվել մեր գերդաստանի մյուս անդամները: Մեծ հայրս ամենայն մանրամասնությամբ հիշում էր, թե ինչպես են թուրքերը մերոնց քշել տներից, սպանել նրանց, ու՞րեք դեռևս ողջ են եղել, ու հափշտակել մեր հողերը:

ՕՐ ԱՌԱՋԻՆ

ՆԱԽԱԳԱՀ - Արդյոք նա՞ էլ է մյուսների ուղիով ընթացել՝ սկզբում անդամակցել է ավելի ավանդական կուսակցությունների, որպեսզի, ասենք, հետագայում կողմնորոշումը փոխի և նախընտրի զինվորագրվել ԱՍԱԼԱ-ին: Ամեն ինչ նույն ձևով է եղել:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Ես ոչ մի ավանդական կուսակցության չեմ անդամակցել: Ինքս, սեփական նախաձեռնությամբ, ընտրել եմ ԱՍԱԼԱ-ն:

ՆԱԽԱԳԱՀ - Գտնո՞ւմ է, որ տիկնայք և պարոնայք երդվյալներին հետաքրքրող այլ հաղորդումներ կարող է անել:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Ես ուզում եմ հայտարարել հետևյալը. ինչպես Լիբանանի մյուս համայնքները, լիբանանահայությունը նույնպես, քանի որ երկիրը պատերազմական իրավիճակում էր գտնվում, ստիպված էր ինքնապաշտպանության դիմել: Համայնքի հալածանքների ազդանշանը Բիկֆայայի Եղեռնի զոհերի հուշարձանի ռմբահարումը դարձավ, որը կատարվեց 1978 թվականին: Այդ հուշարձանը հայ ճարտարապետները կառուցել էին ի հիշատակ 1915-ին նահատակված մեկ ու կես միլիոն հայերի: Բացի դրանից, լիբանանյան պատերազմի ընթացքում բազմաթիվ հայ երիտասարդների առևանգում, դիակներն էին հարազատներին վերադարձնում:

ՆԱԽԱԳԱՀ - Ովքե՞ր էին առևանգում:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Նախընտրում եմ ասել՝ «օտար ու ժե րը»:

ՆԱԽԱԳԱՀ - Տիկնայք և պարոնայք երդվյալներ, պարոն Ջուլֆայանին տալու ուրիշ հարցեր ունե՞ք:

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԴՎՅԱԼ - Պարոն նախագահ, այն, որ պարոն Ջուլֆայանն ընկերների հետ ցանկացել և որոշել է զինված գործողություն ձեռնարկել թուրքական հյուպատոսարանի դեմ, այս կամ այն կերպ հնարավոր է ընկալել, բայց ինքը կարո՞ղ է մեզ բացատրել, թե ինչո՞ւ է հատկապես այդ վայրում նման քայլի դիմել:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Իր հայտարարության մեջ, անկախ այն բանից, իրավացի՞ է, թե՞ ոչ, Գյուլգեյանը շեշտել է, որ Թուրքիայի հյուպատոսարանը համարում է թուրքական տարածք, իրավասություն:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք կանխում եք այն հարցերը, որոնց ես վաղն եմ անդրադառնալու:

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Մտքով նրանք իրենց թուրքիայում են համարել: Ես չեմ ասում, որ ճիշտ են եղել:

ԻՆՆԵՐՈՐԴ ԵՐԴՎՅԱԼ - Ֆրանսիայում միայն մի թուրքական հյուպատոսարան չկա:

ՆԱԽԱԳԱՀ - Սկսում ենք տիկին Գյուլգեյանի, տիկին Սիսյանի և տիկին Բասմաջյանի ունկնդրումը:

ՏԻԿԻՆ ԳՅՈՒՉԵԼՅԱՆ (Թարգմանի միջոցով) - Իմ անունը Ովսաննա Գուլումջյան է, ամուսնական ազգանունս՝ Գյուլգեյան:

Ես դատարանից ներողություն եմ խնդրում դանդաղ արտահայտվելու համար, առաջին անգամ եմ հանդես գալիս ատյանում, այնպես որ, եթե կարելի է, թույլ տվեք մտքերս ի մի բերել:

ՆԱԽԱԳԱՀ - Իհարկե, կարելի է:

ՊԱՇՏՊԱՆ ՄԻՆՅԱՐ - Տիկին Գյուլգեյանը կարո՞ղ է մեզ նկարագրել, թե Բեյրութի հայ համայնքն ինչպե՞ս արձագանգեց հյուպատոսարանում ձեռնարկված գործողությանը:

ՏԻԿԻՆ ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես կարող եմ ասել միայն, որ գործողությունը նպաստավոր է համարվել Հայ դատի համար:

ՊԱՇՏՊԱՆ ՄԻՆՅԱՐ - Այդքանը բավական է, պարոն նախագահ:

ՆԱԽԱԳԱՀ - Տիկնայք և պարոնայք երդվյալներ, հարցեր կա՞ն: Ասացեք, որ դատարանը շնորհակալություն է հայտնում նրան, կարող է տեղ գրավել սրահում:

ՏԻԿԻՆ ՄԻՍԼՅԱՆ (Թարգմանի միջոցով) - Իմ անունը Մարի Սիսյան է, ես հիսուն տարեկան եմ, ապրում եմ Բեյրութում՝ Բուրջ Համուդում:

ՊԱՇՏՊԱՆ ԹԵԴԺԵՆ - Միայն մի հարց՝ տիկին Սիսյան, անկասկած դուք «Վան» գործողության մասին իմացել էիք Բեյրութի հեռատեսիլից, լրագրերից: Կարո՞ղ եք մեզ ասել, թե ի՞նչ մտածեցիք դուք և մարդիկ, որոնք շրջապատել էին ձեզ, երբ հայտնի դարձավ, որ ձեր որդին մասնակցել է սեպտեմբերի 24-ի դեպքին:

ՏԻԿԻՆ ՄԻՍԼՅԱՆ (Թարգմանի միջոցով) - Հասկանալի է, ես, որպես մայր, իմ յուրայինները, որպես հարազատներ, նախ և առաջ մտահոգված էինք, բայց երբ անդրադարձանք, որ դա արվել է հանուն Հայ դատի, չկարողացանք հպարտությամբ չհամակվել:

ՊԱՇՏՊԱՆ ԹԵԴԺԵՆ - Ուրիշ հարց չունեմ:

ՆԱԽԱԳԱՀ - Իսկ պարոն ընդհանուր դատապաշտպա՞նը: Ուրեմն հարցեր չկան: Մենք շնորհակալություն ենք հայտնում

ՕՐ ԱՌԱՋԻՆ

տիկին Սիսյանին, նա կարող է տեղ գրավել սրահում:

ՏԻԿԻՆ ԲԱՍՄԱԶՅԱՆ (Թարգմանի միջոցով) – Իմ անունը Գյուլեն Բասմաջյան է, ես ծնվել եմ 1929-ին, ապրում եմ Բեյրութ քաղաքում...

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Կուզեի, որ դատարանը հարցներ տիկին Բասմաջյանին, թե արդյո՞ք իրենց ընտանիքում սովորություն ունեն խոսել ցեղասպանության մասին, հաճա՞խ են խոսում և ինչպե՞ս:

ՏԻԿԻՆ ԲԱՍՄԱԶՅԱՆ - Իհարկե խոսում են, քանի որ մեր մեծ հայրիկն ապրեց հարյուր մեկ տարի, իսկ ամուսինս փրկվածներից մեկն է:

ՆԱԽԱԳԱՀ - Ամուսի՞նը: Քա նի՞ տա րե կան է:

ՏԻԿԻՆ ԲԱՍՄԱԶՅԱՆ - Ջարդերի ժամանակ եղել է երեք ամսական և կրած զրկանքների պատճառով յոթը տարի անդամալույծ է մնացել: Քանի որ իմ ամուսնու բոլոր հարազատները կոտորածի զոհ էին դարձել, կարող եմ վկայել, որ Րաֆֆին բավական հաճախ էր մեծ հորը խնդրում նկարագրել, թե ինչպե՞ս է տեղի ունեցել ցեղասպանությունը:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Հենց նոր Սիսյանի մայրը պատմում էր, որ երբ իմացել է Փարիզի դեպքի մասին, որոշ հպարտություն է զգացել որդու կատարածի համար: Կուզեի իմանալ, թե ի՞նչ ապրումներ է ունեցել տիկին Բասմաջյանը և, իր կարծիքով, ինչպիսի՞ զգացումներ են համակել Բուրջ Համուդի հայ համայնքին, որտեղ ինքն ապրում է:

ՏԻԿԻՆ ԲԱՍՄԱԶՅԱՆ - Քանի որ հայ ենք, չենք կարող չհպարտանալ այն ամենով, ինչ տեղի է ունեցել: Այս ասելով հանդերձ, ուզում եմ ճշտել, որ կատարվածը վայրագությունն չէ, դրա համար էլ ամենևին ամոթալի չէ: Քանի որ այն իրագործվել է մեր դատի համար, մենք պարզապես պիտի ծափողջունենք:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ (Թարգմանին) - Մի հատվածը բաց թողեցիք: Տիկինը խոսեց տարագիր ժողովրդի մասին, որը միշտ դեպի իր Հայրենիքն է ձգտում... «Մենք մեր Հայրենիքն ենք տենչում, մենք թափառական կյանք ենք վարում»...

ԹԱՐԳՄԱՆ - Նա ասաց, որ թափառական, Հայրենիքից զրկված հայեր լինելու պատճառով, մենք միմիայն պիտի հպարտանանք նման գործողությամբ:

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Այդ ամենն իր անձնական զգացումներն են: Ես կուզեի, որ նա մեզ փոխանցեր Բուրջ Համուդի հայկական համայնքի ապրումները:

ՏԻԿԻՆ ԲԱՍՄԱԶՅԱՆ - Այն, ինչ հենց նոր ասացի, առնչվում է մասնավորապես մեր ընտանիքին, անմիջական շրջապատին, բայց կարծում եմ, որ բոլոր հայերն էլ, քանի որ նույնպես թափառական ու հայրենագուրկ են, պիտի մեր նման մտածեն:

ՄԻ ԵՐԴՎՅԱԼ - Գործողությունը, որ կատարվել է այստեղ, ըստ տիկնայք Բասմաջյանի կամ Սիսյանի հայտարարության, որքան հասկացանք, հարուցել է հայ համայնքի հպարտությունը, համարվել է նպաստավոր ազգային դատի համար:

Մենք ցանկանում ենք ձեզ ուղղել հետևյալ հարցը.

- Ամենայն հավանականությամբ սա առաջին, չգիտեմ ինչպես արտահայտվեմ, զինված կամ բռնի գործողությունը չէ, որ կատարվել է ի նպաստ Հայ դատի: 1975-ից ի վեր, անցած տարիներին, ուրիշ նման բռնարարքներ հայտնի⁶ են Լիբանանի հայերին: Պարտադիր չէ, որ Ֆրանսիայում կատարված լինեն: Սրա պես ուրիշ գործողություններ եղե՞լ են, որոնք կարելի էր հիշատակել, որոնք հարուցել են հայ համայնքի հպարտությունը, ծառայել ազգային դատին:

ՆԱԽԱԳԱՀ - Խոսքը մինչև 1981 թվականի սեպտեմբերին է վերաբերում, որովհետև տղաներն այդ ժամանակ են ձերբակալվել:

ՏԻԿԻՆ ԲԱՍՄԱԶՅԱՆ (Թարգմանի միջոցով) - Ես կարող եմ պատասխանել միայն իմ որդու, մեր զավակների կատարած գործողության համար: Այլ դեպքերի մասին ի վիճակի չեմ որևէ բան ասել:

ՆԱԽԱԳԱՀ - Քաղաքացիական հայցվորները հարցեր ունե՞ն... Ընդհանուր դատապաշտպա՞նը:

Հարցեր չկան:

Ասացեք տիկնոջը, որ ատյանը շնորհակալություն է հայտնում նրան, կարող է տեղ գրավել սրահում:

Ուրեմն, մենք ավարտում ենք դատաքննությունը, որպեսզի վերսկսենք վաղը՝ ժամը 13 անց 30 րոպեին:

Դատաքննությունն ավարտում է 17 անց 15-ին:

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

Չորեքշաբթի, 25-ը հունվարի, 1984 թ.

-- էջ 46 --

«Վան» գործողության

հրամանատար Վազգեն Սիսյանը

Վազգեն Սիսյանը վիրավոր,

հաղթանշանը պարգած ելևում է

թուրքական հյուպատոսարանից

-- էջ 47 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

Դատաքննությունը վերսկսվում է:

ՆԱԽԱԳԱՀ - Մենք սկսում ենք քննարկել այն իրադարձությունները, որոնց համար դուք մեղադրվում եք, և ուշադրություն դարձրեք, ես երդվյալներից յուրաքանչյուրի, հանրային նախարարության ներկայացուցիչների, պաշտպանության, քաղաքացիական հայցվորների առջև դնել եմ տվել հետքաբանական մի գծագիր, որը, ինքս գոնե դա եմ ցանկանում, պիտի օգնի ավելի լավ հասկանալու այն ամենը, ինչ տեղի է ունեցել:

Հիշեցնեմ, որ գործողությունները սկսվել են 1981 թվականի սեպտեմբերի 24-ին՝ հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ից քիչ անց և ավարտվել են սեպտեմբերի 25-ին, ուրբաթ օրը, գիշերվա մոտ ժամը 2-ին: Ամեն ինչ տեղի է ունեցել Թուրքիայի ընդհանուր հյուպատոսարանի տարածքում, որը գտնվում է Փարիզի Հոսման պողոտայի թիվ 170-ում:

Ինչպես կարելի է նկատել գծագրին նայելիս՝ հաստատությունը զբաղեցնում է ութը հիմնական աշխատասենյակներ, որոնց պատուհանները հիմնականում նայում են Հոսման պողոտային, մի ուրիշը, դարձյալ ըստ գծագրի, Գուրսել փողոցին: Վերջինիս պատուհանը՝ նույնպես: Հյուպատոսարանի մուտքը Հոսման պողոտայի թիվ 170-ից է, ծառայողականը՝ Գուրսել փողոցի թիվ 35-ից:

Եթե համաձայն եք, նախ քննենք այն ամենը, ինչ դիտարկվել է դրսում, և հետո հարցաքննության, ինչպես նաև վաղվա վկաների դատախոսների միջոցով կպարզենք, թե ինչեր են ներսում տեղի ունեցել:

Մտավորապես ժամը 11-ն անց 15-ին Հոսման պողոտայի թիվ 170 շենքի առջև մի ոստիկան է եղել, որը կատարել է իր

-- էջ 48 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏՐ

պարտականությունները: Նրա ուշադրությունը արտակարգ ոչինչ չի գրավել, մինչև ինչ-որ անձնավորություն մոտեցել և նրան ասել է մտավորապես հետևյալը. «Մի խումբ զինված անձինք սպառնում են հյուպատոսարանում գտնվողներին», որից հետո, առանց ուրիշ մանրամասնություններ հայտնելու, անհետացել է:

Իհարկե, իսկույն ևեթ, ինչել է տագնապի ազդանշանն ու շատ շուտ համազգեստավոր ու ծպտված ոստիկաններ տեղ են հասել: Միաժամանակ կրակոցներ են լսվել, որոնց ձայնը թվացել է, թե գալիս է երկրորդ հարկից, որտեղ գտնվում են հյուպատոսարանի գրասենյակները: Ոստիկանության ամենատարբեր ծառայություններ հայտնվում են հյուպատոսարանի մուտքի շեմին և փորձում փոխկապ հաստատել ներսում գտնվողների հետ: Մի ոստիկան նույնիսկ աշխատում է խորտակել հյուպատոսարանի նախադուռը, բայց այդ նույն պահին ներսից կրակոցներ են լսվում, և գնդակներ են թռչում դռան ուղղությամբ: Մի ուրիշ ոստիկանի՝ պարոն Բլոնդեին, այնուամենայնիվ, հաջողվում է անցնել բակով և միակն է լինում, որ կարողանում է թափանցել ներս, հայտնվել անձնագրային բաժանմունքում, ներքև ի աջ կողմի այն սենյակում, որը դուք տեսնում եք գծագրում: Սկսվում է փոխհրաձգություն, որին մենք քիչ անց հանգամանորեն կանդրադառնանք, և պարոն Բլոնդեն ստիպված է լինում դուրս գալ, բակով հետ վերադառնալ:

Գործողությունները սկսվելուց քիչ անց, մի քանի հոգի նույնպես, մշակութային կցորդ պարոն Բալթասոլլուի ուղեկցությամբ, կարողանում են Գուրսել փողոցի 35

տան ուղղությամբ նայող պատուհանից դուրս գալ, դեպքի վայրից հեռանալ:
Միաժամանակ ոստիկանական ծառայությունները տարհանում են վերին հարկերի բնակիչներին:

Համենայն դեպս հյուպատոսարանում զգալի թվով մարդիկ են մնում, որովհետև հայերի հանձնվելու պահին, այնտեղից հիսունչորս պատանդ է ելնում:

Դեպքի վայր հասնելով, ոստիկանությունը համապատասխան տեղադրումներ է կատարում, և երկու հիմնական ծառայությունները՝ կոմիսար Լըքլերի հրամանատարությամբ գործող քրեական բրիգադը, կոմիսար Բրուսարի հրամանատարությամբ գործող հայտնաբերման ու հարձակման բրիգադը անցնում են

-- էջ 49 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

իրենց պարտականություններին:

Կապի ծառայությունը հատուկ հեռախոսագիծ է անցկացնում շենքի առաջին հարկի և հյուպատոսարանի սենյակների միջև:

Ժամը 12-ն անց 37-ից հյուպատոսարան մտած հայերը ներկայացնում են իրենց պահանջները, ընդ որում հետևյալ ձևով: Նրանք պատուհանից, մի միջոց, որն օգտագործում են քիչ ավելի ուշ՝ ժամը 14-ին, նետում են երկու մեքենագրված թերթիկներ, որոնք հարկ չեմ համարում ընթերցել: Առաջինը խտացումն է այն ամենի, ինչ երեկ այստեղ հայտարարեցին մեղադրյալները, մասնավորապես՝ պարոն Գյուզեյանը: Տիկնայք և պարոնայք երդվյալներին ամբողջական պատկերացում տալու համար ուզում են ընթերցել միայն այն մասը, որն ուղղա կի առնչվում է պահանջներին: Հայտարարագիրը խորագրված է. «Հայաստանի ազատագրության հայկական գաղտնի բանակ՝ «Վան» գործողությունն ի կատար ածող անձնասպանական խումբ»:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Մարտախմբի անունը նշանակում է, որ...

ՆԱԽԱԳԱՀ - Ես այդ հանգամանքը նկատի ունեցել եմ, քիչ անց կանդրադառնանք:

Մի խոսքով, ահա՛ հայտարարագրի ավարտը. «Այս իրավիճակում անձնասպանական խումբը (մանրամասն նշված է անվանումը), որը գրավել է Փարիզի թուրքական հյուպատոսարանը, Թուրքիայի կառավարությունից պահանջում է.

1. ա) Անհապաղ ազատ արձակել և փարիզյան օդանավակայաններից մեկնումեկն ուղարկել հայր Ռաֆայել Անտոնյանին և վերապատվելի Գյուզեյանին, որոնք ընկերային, մշակութային ծառայություններ են մատուցել Թուրքիայի հայերին,

բ) Անհապաղ ազատ արձակել և փարիզյան շրջանի օդանավակայաններից մեկն ուղարկել քաղաքական դրդապատճառներով Թուրքիայում ձերբակալված ու բանտարկված բոլոր հայերին,

2. Բռնազավթված հայկական տարածքներում և թուրքական մեծ քաղաքներում բնակվող բոլոր հայերին արտահայտման, առանց որևէ արգելքի՝ ավանդույթների, ազգային, մշակութային, կրոնական իրավունքների գործադրումն ապահովող պաշտոնական երաշխիք տալ,

3. Պաշտոնական երաշխիք տալ, որ միջազգային մշակութա-

-- էջ 50 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

յին կազմակերպություններին հնարավորություն կընձեռվի Թուրքիայում հսկողություն սահմանել... (թվարկվում են ոլորտները),

4. Անհապաղ ազատ արձակել հինգ քուրդ հեղափոխական մարտիկների, որոնք Թուրքիայում ձերբակալված ու բանտարկված են քաղաքական դրդապատճառներով (թվարկվում են դրդապատճառները)»:

Ահա, ուրեմն, հայերի ողջ հայտարարագիրը:

Ամբողջ հետկեսօրին (այս ժամանակահատվածը, ցավոք, փոքր ինչ համառոտ է ներկայացված, ես ձեզ մի քանի լուսանկարներ կփոխանցեմ, որոնք նկարահանված են այդ ընթացքում), երեկոյի և գիշերվա մի մասի ընթացքում հյուպատոսարանի ներսի ու դրսի միջև մոտ երեսուն անգամ հեռախոսային կապ է հաստատվում: Երբեմն էլ կապը ստեղծվում է բացահայտ, այսինքն ինչ-որ մեկը մոտենում է պատուհանին և ուղղակի կամ թարգմանի, կամ էլ որևէ միջնորդ պատանդի՝ մասնավորապես պարոն Հուբարի միջոցով, որին վաղը կլսեք, խոսում:

Ամեն մի պատանդի, որը մոտենում էր պատուհանին, լուսանկարներում երևում է, եթե կարելի է, իհարկե, այդ պես արտահայտվել, հարգանքով ուղեկցում էր որևէ գրոհային, կանգնում էր կողքին և գլխից ոչ հեռու, որպես կանոն, հրազեն պահում: Ես ուղղակի խտացնում եմ փաստե՛րը:

Ինչի՞ մասին էին բանակցում փոխկապի ժամանակ: Քննարկվում էր, օրինակ, հյուպատոսարանում արգելափակված որոշ անձանց առողջական վիճակը, և հայերը, սովորաբար, թույլ էին տալիս, որ այս կամ այն պատանդի համար դեղորայք նետեն ներքևից: Արժարժվում էին նույնիսկ առտնին խնդիրներ, պատանդ մի կին, օրինակ, խնդրել է, որ գլան-վերցնեն դպրոցում մնացած երեխաներին: Խոսակցություն է եղել նաև մի ուրիշ մոր մասին, որը հյուպատոսարանում արգելափակվել էր երկու տարեկան դստեր հետ, և գրոհայինները համաձայնվել են, որ ուշ երեկոյան, ժամը մոտ 20-ին, հայրը վերցնի

զավակին: Նույնիսկ սևնդի հարց է առաջացել՝ երեկոյան ներկրվել են սենդվիչներ, գինի ու պանիր, որոնք հիմնականում պատանդներին են բաժանվել:

Փոխկապերի ժամանակ հայերը ցանկացել են նաև հարաբերության մեջ մտնել լրագրողների, որոնց թվում «Փարիզիեն լի-

-- էջ 51 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

բերե»-ի թղթակցի հետ, որն ամենայն հավանականությամբ ծագումով հայ է: Մարտախումբը մինչև անգամ հայտնել է, որ կուզեր բանակցել, ըստ իրենց անվանման՝ «Հայ բանտարկյալների պաշտպանության հանձնաժողովի» կամ էլ անմիջականորեն հյուպատոսարանի պատուհանների տակ տեղի ունեցող ցույցի պատասխանատուների հետ: Այսինքն ցույցերն ուղղակի պատուհանների տակ տեղի չեն ունեցել, այդտարածքը ամբողջովին զբաղեցրել են ոստիկանա կան ծառայողները:

Ժամը 16-ն անց 15-ից, այլ փոխկապերի շնորհիվ հայտնի է դառնում, որ գործողության ընթացքում երեք հոգի վիրավորվել է, իսկ հյուպատոսարանի հսկիչ-պահապանը՝ սպանվել: Ահա՛ այդ պահից սկսած ոստիկանական ծառայության ու հայ մարտիկների միջև, պետք է խոստովանել, հաճախ դժվարին բանակցություններ են սկսվում, և ի վերջո վիրավորներին ու թուրք հսկիչ-պահապանի մարմինը դուրս բերելու համաձայնություն է կայանում: Վիրավորներին և հսկիչ-պահապանի մարմինը հայ մարտիկները հասցնում են մինչև հյուպատոսարանի շեմը, որտեղ և հանձնվում է ոստիկանական ուժերին:

Դա տեղի է ունենում մոտավորապես այսպես.

Ժամը 18-ն անց 26 րոպեին առաջինը պարոն Սիսյանն է ելնում հյուպատոսարանից: Նա վիրավորվել էր՝ քիչ անց կտեսնենք, թե ինչ պայմաններում: Նրան տեղափոխում են Օթել-դիոյի հիվանդանոց, ու ոստիկանական ծառայությունները թույլ են տալիս, որ հեռաձայնի հյուպատոսարանում մնացած ընկերներին, հայտնի, որ վիճակը լավ է:

Անմիջապես հետո, ժամը 18-ն անց 31 րոպեին պարոն Ինալ Կայան՝ ընդհանուր փոխհյուպատոսը, ծանր վիրավոր դուրս է գալիս բռնագրավված շենքից, փոխադրվում Փիթիե հիվանդանոցը:

Ժամը 18-ն անց 48 րոպեին շեմ են հանում սպանված թուրք հսկիչ-պահապանի՝ Էոզեն Ջեմալի մարմինը, ավելի ուշ՝ 19-ն անց, նշված չէ, թե որ րոպեին, Ջուլֆայանն է փոխհրաձգությունից վիրավոր հայտնվում: Նրան էլ են տեղափոխում Օթել-դիո և դարձյալ հևարավորություն են տալիս զանգահարել հյուպատոսարանում մնացած արդեն երկու մարտընկերներին:

Ժամը 0 անց 25-ից մինչև գիշերվա 2-ը նոր բանակցություններ են ծավալվում, որոնք նախորդներից հեշտ չեն լինում, քանի որ խնդիր է դրվում, որ վերջ ի վերջո հայերը հանձնվեն, պա-

-- էջ 52 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

տանդներին ազատ արձակեն: Այս փուլում նույնպես պարոն Հուբարդը, նրան մենք վաղը կունկնդրենք, կարևոր դեր է խաղում: Ամբողջ ընթացքում, հեռախոսով լինի, թե բաց պատուհանի միջոցով հայերը հատկապես պահանջում են իրենց քաղաքական ապաստան տալ: Ես այդ մասին հիմա եմ ասում, բայց հանգամանորեն կխոսենք վաղը: Ձայնաժապավենի վրա արձանագրված է հեռախոսային խոսակցությունների բովանդակությունը: Հնարավոր չի եղել ձայնագրել միայն այն, ինչ իրար ասել են պարոն Բրուսարն ու պատուհանի մոտ կանգնած գործակալը: Քաղաքական ապաստան տալու վերաբերյալ խոսակցության վերձանումից հայտնի է դառնում հետևյալը (ես կկարդամ կարևոր հատվածները): Մի պահ խոսում է կոմիսար Լըքլերը, բայց հայտնի չէ, թե ո՞վ է պատասխանում նրան, կարծես թե պարոն Գյուզեյանն է հեռախոսով բանակցություններ վարել: Քիչ հետո կպարզենք: Նախ քննարկվում է նրանց վիճակը, ում հիվանդանոց են հասցրել... Ըստ երևույթին՝ պահի լարվածության պատճառով արտահայտությունները կցկտուր են, հստակ ձևակերպված չեն: Ահա, պարոն Լըքլերը ասում է. «...Լավ, լավ, դու գիտես, թե Ֆրանսիայում դա ինչպես է կատարվում, մենք, որպես օրենք, ուրիշ պետության չենք հանձնում... Եթե դուք հիմա դուրս գաք, ոչ մի խնդիր չի ծագի... Ձեզ թուրքիա կամ որևէ այլ երկիր չենք ուղարկի»: Խոսակցի պատասխանից հետո Լըքլերն ավելացնում է. «Դու շատ լավ գիտես ֆրանսիական քաղաքականությունը»: «Ի՞նչ» (միշտ կա այդ հարցը՝ «Ի՞նչ»): Փոքր-ինչ ավելի ուշ, հեռախոսով բանակցող անձնավորությունը հետաքրքրվում է. «Եթե դուրս գանք, քաղաքական ապաստանի իրավունք կունենան՞ք»: Լըքլերը հավաստիացնում է. «Իհարկե՛»: Չրուցակիցը. «Երաշխիք տալի՞ս ես»: Լըքլերը պատասխանում է. «Անշո՛ւշտ, դու կմնաս Ֆրանսիայում, հարց չկա», մյուսը հարցնում է. «Ի՞նչ...»: Լըքլերը՝ «Դու կմնաս Ֆրանսիայում... «Ֆրանսիայում՝ ո՞ւր», «Փարիզում»...

Քիչ անց նույն անձնավորությունը՝ «Քաղաքական ապաստան կստանան՞ք»: Լըքլերը՝ «Ինչպես քո ընկերը, ոչ մի խնդիր չի ծագի»: Խոսակիցը շարունակում է. «Բայց խանգարող հանգամանքներ կան» (իմաստը լավ չի հասկացվում), Լըքլերը՝ «Ինքդ տեսար, ընկերդ քեզ զանգահարեց, ասաց, որ երաշխիքները գործադրվում են»... Տղամարդը հարցնում է. «Դու՞ էլ ես երաշխիք

-- էջ 53 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

Տալիս», Լըքլերը ապահովեցնում է. «Ինչ խոսք, չե՞ս գգում, որ հենց սկզբից ձեր նկատմամբ բարեհաճ ենք», որից հետո, քիչ անց լրացնում է. «Դու արդեն ունես մեր խոստումը, որ ոչինչ տեղի չի ունենա, ես քեզ իմն ել եմ տալիս՝ խնդիր չի ծագի»:

Մենք այս ամենի մասին կոմիսար Լըքլերի հետ հանգամանորեն կգրուցենք վաղը:

Ի վերջո, բանակցությունները, որոնց մասին խոսում էի, ավարտվում են և ըստ համատեղ որոշման, որ մի կողմից կայացրել են պարոնայք Լըքլերն ու Բրուսարը, մյուս կողմից՝ երկու գրոհայիները, որոնք դեռևս հյուպատոսարանում են եղել, ուղիղ ժամը 2-ն անց 7 թոպեին, պարոն Հուբարը, ում անունն արդեն հիշատակել եմ, դուրս է գալիս հյուպատոսարանի դռնից և պարոն Բրուսարին է հանձնում զենքերով ու պայթուցիկներով լեցուն մի ուսապայուսակ: Այս փաստին նույնպես քիչ անց կանդրադառնանք:

Ժամը 2-ն անց 9 թոպեին կոմիսար Բրուսարը զբաղվում է հյուպատոսարանում մնացած երկու հայերով՝ Գյուզեյանով ու Բասմաջյանով, իսկ 2-ն անց 10-ին սկսվում է հիսունչորս պատանդների տարհանումը, որոնց առաջնորդում են ոստիկանատուն՝ «... այն բանից հետո, - ճշգրտում է արձանագրությունը, - երբ նրանք անհրաժեշտ բժշկական օգնություն ստացան»:

Խնդրում եմ տիկնայք և պարոնայք երդվյալներին փոխանցել լուսանկարները, որոնք նկարահանվել են գիշերը, հյուպատոսարանի պարպումից հետո: Դրանք կօգնեն պատկերացում կազմելու, թե ինչ վիճակում է եղել հաստատությունը հայերի և պատանդների տարհանումից հետո: Ոստիկաններն, ահա՛, այդ պահին են մտնում ներս և սկսում են տեղազննումը: Առաջին տպավորությունը տիրող խառնակությունն է՝ հատակը լեցուն է մասնավորապես պարանով, որով, ինչպես հետո հայտնի կդառնա, կապել են որոշ պատանդների: Թիվ մեկ միջանցքում, միջանցքներին հանգամանորեն կանդրադառնանք, արյան բազմաթիվ հետքեր են նկատվում... Նայեցեք գծագրին, աջ կողմում ու մեջտեղում... Արյան բծեր կան նաև այն աշխատասենյակում, որի դռանը փակցված է «Փոխհյուպատոս» ցուցանակը, և փոքր-ինչ վեր, ձախ կողմում՝ զուգարանների անկյունում, ինչպես նաև ընդհանուր հյուպատոսի առանձնասենյակում:

Ոստիկանները հայտնաբերում են կրակոցի քսանչորս հետք,

-- էջ 54 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ինչպես երկրորդ հարկի հարթակում, այնպես էլ դռան վրա, թիվ մեկ միջանցքում, անձնագրային բաժանմունքում, փոխհյուպատոսի, գլխավոր հյուպատոսի տեղակալի, մշակութային կցորդի առանձնասենյակներում, զուգարաններում: Ուրեմն այդ քսանչորս փամփուշտները արձակվել են տարբեր ուղղություններով:

Գտնվում են նաև զանազան տրամաչափի քսանհինգ պարկուճ, ինչպես նաև որոշ քանակությամբ փամփուշտ և գնդակ, որոնք օգտագործված չեն:

Ուրեմն, հիմնականում հայտնաբերվել են քսանչորս կրակոցի հետք և քսանհինգ պատիճ, որը նշանակում է, որ պատիճներից մեկը չի գտնվել:

Մինչև այս պահը, գծագրերից ելնելով, որոշակի կարող ենք ասել միայն, որ գործողությունների մեծ մասը տեղի է ունեցել հյուպատոսարանի աջ մասում, անձնագրային բաժանմունքում, թիվ մեկ միջանցքում, վարչական նիստերի սրահում, հյուպատոսների գրասենյակում և այլն:

Չենքերը՝ հիմա տեսնենք, թե ինչ զենքեր են կիրառվել գործողությունների ժամանակ: Ես նախ ուզում եմ թվարկել նրանք, որ եղել են հենց սկզբից, բայց միմիայն հիշատակելու համար, որովհետև չեն գործադրվել, և գրոհը սկսվելուն պես թուրք տերերը, ովքեր դուրս են փախել հյուպատոսարանից, հետները տարել են... Ես ձեզ արդեն հայտնել եմ, որ ոմանք կարողացել են Գուրսել փողոցի թիվ 35 տան կողմը նայող պատուհանից ճողպարել, որ պարոն Կանտենկենը՝ մշակութային կցորդը հեռացել է՝ հետը տանելով զենքը, իսկ մշակութային խորհրդականը՝ պարոն Բալթաօղլուն գործողության սկզբում է իր ատրճանակով անհետացել: Ուստի՝ դրանց չարժե անդրադառնալ...

Մի ուրիշ զենք, որը նույնպես պատկանում է հյուպատոսարանին, քննիչներին է հանձնվել: Այսինքն, սկզբում քննիչները չեն էլ նկատել: Այն փոխհյուպատոսը՝ պարոն Էրոլն է անձամբ տվել, որը սովորաբար, ամենայն հավանականությամբ պահվել է պահարանում, բայց ակնհայտորեն ոչ ոք, մասնավորապես հայերը, չեն տեսել դեպքերի ընթացքում: Խոսքն իրեղեն ապացույցների ցուցափեղկի աջ կողմում գտնվող արագաձիգ ատրճանակի մասին է, որն ունի 16 միլիմետր տրամագիծ և մի պահունակ, ուր տեղավորվում է քսանչորս փամփուշտ: Հենց ինքը պարոն Էրոլն է ոստիկաններին հայտնում՝ «Պահարանում,

-- էջ 55 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

ահա՛, այս զենքն է մնացել»:

Առկա է նաև, և դուք այն տեսնում եք, մի ինքնաձիգ Բրաունինգ-Հերստալ մակնիշի ատրճանակ, որը եղել է պարոն Ինալ Կայայի տրամադրության տակ և գործողությունից հետո գտնվել է նրա գրասենյակի վրա: Հարկ եմ համարում նշել, որ այս ատրճանակը թուրքական կառավարության պատվերով գործարանից

դուրս է գրվել 1976 (կամ 1966) թվականի հունիսի 27-ին: Ուրեմն Թուրքիայի կառավարությունն է այն պահանջել ու գնել, հետագայում տրամադրել Փարիզում Թուրքիայի գլխավոր հյուպատոսարանին:

Դատաձգաբանական փորձաքննությունը պարզել է, որ այս ատրճանակը արտանետել է երկու պարկուճ, որոնք հայտնաբերվել են զուգարանում, նայեցեք գծագրին, և կրակել մի փամփուշտ, որը գտնվել է գլխավոր հյուպատոսի աշխատասենյակում: Անշուշտ, նկատի ունենալով տիրող իրարանցումը, մարդկանց անցուդարձը, կարծում եմ հարկ չկա բացառիկ կարևորություն ընծայել այն հանգամանքին, թե ճշգրիտ որտեղ են գտնվել պարկուճները կամ փամփուշտները: Փաստը, որ պարկուճը ի հայտ է եկել որևէ որոշակի վայրում, չի նշանակում անպայման, որ հենց այդ նույն տեղում է արտանետվել: Իհարկե, այս ամենին մենք կանդադարձնանք, երբ կքննենք պարոն Ինալի և պարոն Ջուլֆայանի դիմադարձության ընթացքը:

Հերստալ մակնիշի մի ուրիշ ատրճանակ գտնվել է երկրորդ հսկիչ- պահապանի տրամադրության տակ: Հյուպատոսարանի անվտանգությունն ապահովող երկու հսկիչ պահապաններ են եղել՝ Էոզեն Ջեմալը, որը մահացել է, և Գալի Ֆահրին, որին կլսենք վաղը: Գալի Ֆահրին, ուրեմն, իրադարձությունների ժամանակ ունեցել է այն ատրճանակը, որը դուք նույնպես տեսնում եք իրեղեն ապացույցների պահարանի աջ կողմում: Խոսքը, ինչպես արդեն նշվեց, 9 միլիմետրանոց Հերստալի մասին է, սակայն պարոն Գալիի հայտարարություններից բխում է, որ դեպքի ընթացքում այն չի գործածել:

Այժմ անցնենք զենքերին, որ իրենց տրամադրության տակ ունեցել են հայերը: Այդ զենքերը նույնպես, ինչպես պարոն Գալի Ֆահրիի ատրճանակը, դուք կարող եք տեսնել: Ես քիչ առաջ ձեզ արդեն ասացի, որ երբ պարոն Հուբարն առաջինը դուրս է եկել հյուպատոսարանից, ունեցել է մի ուսապայուսակ,

-- էջ 56 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

որի մեջ եղել են Գալի Ֆահրիի ատրճանակն ու երեք այլ զենքեր, որոնք ներկայացված են իրեղեն ապացույցների ցուցափեղկի ձախ մասում:

Ուրեմն ուսապարկի առաջին զենքը ատրճանակն է, երկրորդը, որը միաժամանակ հայերի տրամադրության տակ եղած առաջին հրագենն է, Կալաշնիկովի արագածիզն է, որը դուք տեսնում եք ահա՛ այնտեղ՝ ձախ կողմում, որը հանձնման ժամանակ պարունակել է 7/62 տրամաչափի քսանվեց փամփուշտ:

Դատաձգաբանական փորձաքննությունը պարզել է, որ ինքնաձիգը կրակել է տասնհինգ անգամ, արտանետել տասնհինգ պարկուճներ, որոնք գտնվել են գլխավոր հյուպատոսի առանձնասենյակում: Միաժամանակ նրա արձակած վեց

փամփուշտներն ի հայտ են եկել միևնույն վայրում՝ գլխավոր հյուպատոսի աշխատասենյակում և զուգարանի մուտքի մոտ:

Սա հենց այն զենքն է, դրան կանդրադառնանք վաղը, որը պարոն Ինալ Կայայի և պարոն Ջուլֆայանի դիմադարձության պատճառն է դարձել, որի մետաղական փողը խցանված, շնիկն արգելակված է եղել: Դրան նույնպես կանդրադառնանք:

Մեղադրյալներն ընդունում են, որ ինքնաձիգը իրադարձությունների ժամանակ իրենց տրամադրության տակ է եղել:

ՊԱՐՈՆ ԳՅՈՒԼ (Թարգման) - Այո՛, ընդունում են, պարոն նախագահ:

ՆԱԽԱԳԱՀ - Պարոն Հուբարի պայուսակում գտնվել է նաև, ցույց տվեք, ինդրում եմ, այս Բրաունինգ-Հերստալ ատրճանակը, որը գործարանից դուրս է եկել 1967-ին, բայց արդեն ոչ թե Թուրքիայի, այլ Իրաքի կառավարության պահանջով, և որը, փորձաքննությունը պարզել է, արտանետել է յոթը պարկուճ, կրակել երեք փամփուշտ, որ գտնվել են հյուպատոսարանի տարբեր մասերում:

Տիկին լ'Հուլիսիե, երկուսը միաժամանակ, ինդրում եմ մոտեցրեք մեղադրյալներին:

ԳՅՈՒԶԵԼՅԱՆ - Այս մեկը մերը չէ (տիկին լ'Հուլիսիեն երկրորդն է ցույց տա լիս):

ՆԱԽԱԳԱՀ - Գտնվել է նաև նույն մակնիշի, նույն տրամաչափի 9 միլիմետրանոց մի երկրորդ ատրճանակ, որը դարձյալ Իրաքի կառավարության պատվերն է և եղել է հայե ընդ որ տրամադրության տակ: Դատաձգաբանական փորձաքննությունը պար-

-- էջ 57 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

զել է, որ այն արտանետել է մեկ պարկուճ, կրակել երկու փամփուշտ, որոնք գտնվել են հյուպատոսարանի տարածքում (տիկին լ'Հուլիսիեն երկու զենքը միաժամանակ է ցույց տալիս): Նրանք ընդունում են, որ այս երկու ատրճանակները գործողության ժամանակ իրենց տրամադրության տակ են եղել: («Այո»): Առարկություն չունեն: («Ոչ»):

Հենց նոր ասում էի, որ դեպքի վայրում գտնվել են քսանհինգ պարկուճներ, որոնց միջոցով հնարավոր է եղել պարզել տարբեր զենքերի կրակոցները, ընդ որում դատաձգաբանական փորձաքննությունը ճշտել է, թե ո՞ր պարկուճները և քանի՞ պարկուճ է արտանետել յուրաքանչյուրը: Երբ ընդհանուր հաշվարկ ենք անում, պարզվում է, որ գտնված բոլոր պարկուճները անառարկելիորեն պատկանում են այս կամ այն հրազենին: Հայտնի է դառնում, թե ո՞ր պարկուճներն են արտանետվել պարոն Կայայի, մյուս երկու ատրճանակներից, ինքնաձիգից, ու արդյունքում ստացվում է քսանհինգ պարկուճ:

Պետք է նշել նաև, որ դեպքի վայրում ընդհանուր առմամբ գտնվել է հարյուր քառասուն փամփուշտ, մի մասը՝ պահուկակներում, մյուսը՝ ցիրուցան վիճակում:

Շարունակենք քննել պարոն Հուբարի փոխադրած պայուսակի պարունակությունը:

Ուսապարկում եղել են նաև, անվտանգության նկատառումներով դատարան չեն բերվել, վնասագերծվել են փորձակայանում, երկու՝ արևելյան երկրներում արտադրված պաշտպանական նռնակ, ինչպես նաև երկու էլեկտրական պայթուցիչ, որոնցից յուրաքանչյուրին կցված է եղել է երկու լար: Ընդհանուր առմամբ գտնվել է քսանհինգ մետր մետաղալար, որոնց ծայրերը պատած են եղել կաչուն նյութով: Ի հայտ է եկել նաև երեք կակուղ պայթուցիչ՝ հաջորդաբար երեք հարյուր, երկու հարյուր քսաներեք և հարյուր ութսունութե գրամ քաշով, որոնք Սետեքսի հիմնանյութով չեխական արտադրության են:

Հարկ է նշել, որ հարյուր ութսունութե գրամանոց Սետեքսը փաթաթված է եղել այնպիսի մեկուսիչ ժապավենով, ինչպիսին, ըստ փորձաքննիչների, ունեցել է Փարիզի հայկական եկեղեցում չգիտեմ երբ դրված պայթուցիկը, որը վնասագերծվել է: Փորձաքննիչները, ուրեմն, բացահայտել են այս ընդհանրությունը, բայց ավելի չեն խորացել: Պայուսակում եղել են նաև

-- էջ 58 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Երեք գրպանի լապտերներ, որոնք ունեցել են չորս՝ հինգ վոլտանոց և վեց՝ ինըվոլտանոց մարտկոցներ, որոնցից երկուսը միմյանց կապված են եղել կաչան մեկուսիչով:

Անկեղծ ասած՝ այս տարբեր պայթասարքավորումները չեն փորձաքննվել, մետաղագիտական փորձակայանըներկայացրել է միայն նկարագրությունը, բայց հարցաքննության արձանագրությունում բոլոր քննիչները նշում են, որ այդ պայթասարքավորումները գործարկման համար պատրաստ են եղել: Քննիչների այս տեսակետը հիմնված է մասնագիտական եզրահանգման վրա:

Շարունակենք, նախքան փաստերին անցնելը, վերլուծել դատական գործը: Այժմ անդրադառնանք դատաբժշկական բնույթի հետևություններին:

Նախ և առաջ, թուրք հսկիչ-պահապանը՝ պարոն Էոզեն Ջեմալը, որը մահացել է, հերձման է ենթարկվել, և փորձագետները պարզել են, որ մահը վրա է հասել ներգանգային վերքի պատճառով, որը հարուցել է մխրճվող փամփուշտը: Այն ներթափանցել է ձախ քունքի շրջանից, սահել առաջ և դուրս է եկել ճակատի աջմասից: Չենքի հեռավորության մասին կիսոսենք ավելի ուշ...

Ո՞վ է եղել պարոն Էոզեն Ջեմալը: Պետք է ասեմ, որ ելևելով գործից, մենք նրա մասին բացարձակապես ոչինչ չգիտենք, թերևս միայն այն, որ ապահովել է հյուպատոսարանի անվտանգությունը: Հայտնի է նաև, որ նա ծնվել է 1949 թվականի փետրվարի 3-ին, Թուրքիայում, մահանալիս երեսուներեք տարեկան է եղել: Կարծում եմ՝ քաղաքացիական հայցվորներն ավելի հանգամանալից կներկայացնեն պարոն Ջեմալ Էոզենի կենսագրությունը:

Հաջորդ դատաբժշկական գեկուցագիրը վերաբերում է պարոն Ինալ Կայայի վերքերին: Պարոն Կայան վիրավորվել է հրազենի փամփուշտով, որը մխրճվել է դիմա ցից՝ ձախ կրծքավանդակից, անրակի տակից (ինքը մեզ այդ մասին կպատմի վաղը) և դուրս է եկել ձախ գոտկա տեղի ու նստա տեղի շրջանից: Փամփուշտի ուղղությունը ակնհայտորեն առաջից դեպի հետ է, որը հիմք է տալիս մտածելու, որ վիրավորվողն ու կրակողը դեմ-դիմաց չեն եղել, որ վիրավորվելու պահին պարոն Կայան իրանով առաջ է թեքված եղել: Դրան նույնպես կանդրա դառ նանք:

Ավելացնենք իսկույն ևեթ, որ վերքերը ծանր են եղել: Մե կը

-- էջ 59 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

փաստորեն ստոծանիի շրջանի լուրջ պատռվածք է, փամփուշտը հարուցել է ստամոքսափայծաղային վնասվածք, որն առաջացրել է սպելենկտոմիայի, այսինքն փայծաղի հեռացման անհրաժեշտություն: Վի ռավորը, գոնե ըստ գործի տվյալների (թերևս

ինքը մեզ մանրամասներ հաղորդի), բացարձակ անշարժ վիճակում է եղել տասը օր:

Այժմ անցնենք մյուս երկու վիրավորներին, որոնք մեղադրյալներն են:

Պարոն Սիսյանը վիրավորվել է փամփուշտով, որը խրվել է կրծքավանդակի շրջանը, անրակի տակի աջկողմից, ըստ փորձագետների՝ գնդակը սահել է դեպի ներքև, առջևից փոքր-ինչ դեպի ետ: Հետագիծը կրծքա-որովայնային է, և ըստ գործի տվյալների՝ գնդակը մխրճվել է աջ զիստային խոռոչը:

Պարոն Սիսյան, կարո՞ղ եք ասել, փամփուշտը հեռացրե՞լ են, թե՞ դեռևս ձեր մարմնի մեջ է:

ՍԻՍԼՅԱՆ - Մարմնիս մեջ է:

ՆԱԽԱԳԱՀ - Հեռացնելու համար չե՞ն վիրա հատելու: Դա հնարավոր չե՞:

ՍԻՍԼՅԱՆ - Բժիշկներն ասացին, որ ոչ:

ՆԱԽԱԳԱՀ - Առօրյա կյանքում այն ձեզ խանգարո՞ւմ է:

ՄԻՍԼՅԱՆ - Առայժմ՝ ո՛չ:

ՆԱԽԱԳԱՀ - Քանի որ չեն հեռացրել, շողանկարել են պարոն Սիսյանին, հետազոտել են փամփուշտի դիրքը: Ելնելով շողանկարից, փորձագետները ենթադրել են, որ գնդա կը պիտի լինի ութը կամ ինը միլիմետր տրամաչափի: Քննության ժամանակ նրանք եզրակացրել են նաև, որ վիրավորին հինգ-վեց շաբաթվա բացարձակ անգործունեություն է սպառնալու:

Վերջապես, քննվող գործի վերջին վիրավորը: Պարոն Ջուլֆայանն իր հերթին ունի կրծքավանդակային և որովայնային վերքեր, չնայած կրծքավանդակի ու որովայնի խոռոչները չեն վնասվել:

Փորձագետները գտնում են, որ այս վերքերի մեծ մասը մետաղական բեկորների հետևանք է և ոչ թե ամբողջական փամփուշտների: Իրոք, հետաքրքիր կլինի քիչ անց դարձյալ զննել ինքնաձիգը, որը, ինչպես ինքներդ զգացիք, խոցումների բուն պատճառն է: Փորձագետները, միաժամանակ, նշել են, որ պարոն Ջուլֆայանը ունի մկանային պատռվածքներ, ինչպես նաև

-- էջ 60 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

մակերեսային վերք աջ ձեռքի բթամատի շրջանում ու փամփուշտի շամփրահարում աջ թևի շրջանում: Այս ամենն, ըստ մասնագետների, կարող էր հասցնել քառասունհինգ օրվա անկարողության:

Մնում է վերջինը՝ պարոն Բալթասողլուն, պատանդներից մեկը, որին փամփուշտը վիրավորել է աջ ոտքի բթամատի շրջանում՝ մխրճվելով հետևի կողմից դեպի առաջ: Հնարավոր անգործունեությունը քսան օր պիտի տևեր:

Ահա՛ և բոլորը: Ես ձեզ հաղորդեցի այն տվյալները, որոնք տեղ են գտել դատական գործում: Այժմ մենք ուղղակի հարցաքննություններին պիտի անցնենք: Չորսդ էլ հաճեցեք ոտքի կանգնել:

Առաջին հարցը, որ ուզում եմ ուղղել ձեզ, հետևյալն է. նախաքննությունից ի վեր և գործնականում ամբողջ հետաքննության ընթացքում, նույնիսկ այն բանից հետո, երբ ձեր ինքնությունը պարզվել է, որն ի միջի այլոց շատ արագ է արվել, դուք շարունակել եք միտումնավոր հետևողականությամբ, այլ կերպ չեմ կարող բնորոշել, անգամ քննիչի մոտ ձեզ կոչել այն անուններով, որոնցով ներկայացել եք նախաքննության: Գյուզեյան, դուք ձեզ կոչել եք Ալեք Ալեքյան, Բասմաջյանն իրեն անվանել է Բաֆֆի Բայան, Սիսյանը՝ Չավեն Հակոբյան, Ջուլֆայանը՝ պարզապես Հակոբյան:

Կարո՞ղ եք մեզ ասել, թե նախ՝ ինչո՞ւ եք փոխառել այդ անունները, երկրորդ՝ ի՞նչ իմաստ են արտահայտում, կապ ունե՞ն իրական անձանց հետ: Մի մասը մեզ նման

Ենթադրության հիմք տա լիս է: Եվ վերջապես երրորդ հարցը՝ ձեր բուն ինքնությունը պարզվելուց հետո էլ ինչո՞ւ եք դուք քննիչին շարունակել փոխառնված անուններով ներկայանալ:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Նախ՝ մենք այստեղ ենք եկել որպես մարտիկներ, զինվորներ և ոչ որպես Գյուլգեյան, Սիսյան կամ Ջուլֆայան... Եվ ապա՝ դա արվել է մեր ընտանիքների անվտանգության համար: Մեր հարազատները ապրում են Լիբանանում, նրանց հետ ամեն ինչ կարող էր պատահել...

ՆԱԽԱԳԱՀ - Բայց հենց հաջորդ օրը հայտնի է դարձել, թե դուք ո՞վ եք:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Համենայն դեպս, կարծում եմ, ոչ հաջորդ օրը:

-- էջ 61 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱԽԱԳԱՀ - Ձեր ընտանիքները Լիբանանում ապահով չե՞ն:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես այստեղ Գյուլգեյան ընտանիքը չեի ներկայացնում:

ՆԱԽԱԳԱՀ - Հասկանալի է: Բայց անգամ այն բանից հետո, երբ ձեր ինքնությունը ճշտվել է, ինչո՞ւ եք ցանկացել, որ ձեզ նախկին անվանումով դիմեն:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես թուրքիայում բանտարկված մի զարմիկ ունեմ, որը Արամ Գյուլգեյան է կոչվում: Հասկանալի է՝ նաև ապահովության նկատառումով:

ՆԱԽԱԳԱՀ - Ալեքյանն ո՞վ է, երևակայական անձնավորություն է, թե՞ համընկնում է ինչ-որ մեկի ազգանվանը:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես ինձ այդպես եմ կոչել ի պատիվ մի ընկերոջ, որը կորցրել է երկու աչքն ու ձախ թևը:

ՆԱԽԱԳԱՀ - Լավ, իսկ Բասմաջյա՞նը:

ԲԱ ԱՄԱԶՅԱՆ - Իմը մեկի անունն է, ով զոհվել է Հայ դատի համար:

ՆԱԽԱԳԱՀ - Իսկ դո՞ւք, պարոն Սիսյան:

ՍԻՍԼՅԱՆ - Ես նախ կոչվում էի Չավեն Աբեթյան, բայց քննիչները գրել են Հակոբյան: Չավեն Աբեթյանը մի ընկեր է, որը մեր դատի համար մահապատժի է ենթարկվել Իրանում:

ՆԱԽԱԳԱՀ - Մենք ուրիշ բան ենք հասկացել... Այդ դեպքում, երբ քննիչը ձեզ հարցաքննել է, ինչո՞ւ դուք չեք ուղղել, չեք ասել, որ ձեր ազգանունը Հակոբյան չէ, այլ այն, ինչ արտաբերեցիք քիչ առաջ:

ՍԻՍԼՅԱՆ - Նրանք հենց սկզբից Հակոբյան գրեցին, ես էլ չհակառակվեցի:

ՆԱԽԱԳԱՀ - Գտաք, որ ուղղելու հարկ չկա՞:

ՍԻՍԼՅԱՆ - Ի՞նչ միտք ունեք անընդհատ փոխելը:

ՆԱԽԱԳԱՀ - Ձուլֆայան, դուք ձեզ կոչել եք Հակոբյան, նման անձնավորություն գոյություն ունի՞:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Ես այդ անունն ընտրեցի, որովհետև ԱՍԱԼԱ-ի ղեկավարն է այդպես կոչվում:

ՆԱԽԱԳԱՀ - ԱՍԱԼԱ-ի գործո՞ղ ղեկավարը: Այդ դեպքում, երբ ձեր ինքնությունը պարզվել է, ինչո՞ւ եք ցանկացել, որ քննիչը ձեզ շարունակի Հակոբյան կոչել:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Ես նախ փոխեցի, բայց տասը օր հետո ըն-

-- էջ 62 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

դունեցի իմը, ահա՛ բոլորը:

ՆԱԽԱԳԱՀ - Լավ, հաջորդ հարցը: Դուք հակվա՞ծ եք փոքր-ինչ պատմելու ձեր գործողության նախապատրաստության մասին: Պարզ է, ամեն ինչ ինքնաբերաբար չի կատարվել, ինչ-որ մեկը ձեզ հավաքագրել է, համապատասխան փորձարկումներ են անցկացվել, ձեզ բացատրել են ձեր խնդիրները, գործողության փուլերը, իմ կարծիքով՝ դեռևս Լիբանանում, այնպես չէ՞:

Ես չեմ ուզում, որ դուք ձեր կազմակերպության գաղտնիքները բացահայտեք, բայց հետաքրքիր կլիներ իմանալ, թե ինչպե՞ս եք Լիբանանում պատրաստվել այս ձեռնարկմանը:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Մենք կարող ենք պատասխանել միայն ձեր այն հարցերին, որոնք անչվում են հյուպատոսարանի մուտքից սկսվող մեր գործողություններին: Այլ կերպ ասած՝ նախապատրաստական փուլի մասին ոչինչ հնարավոր չէ ասել: Ասելիք չունենք:

ՆԱԽԱԳԱՀ - Այսինքն՝ չե՞ք ցանկանում խոսել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Դրանք մեր կազմակերպության գաղտնիքներն են, չենք կարող բացահայտել:

ՆԱԽԱԳԱՀ - Մյուս երե՞քդ էլ նույն դիրքորոշումն ունեք:

Հաստատական պատասխան են տալիս:

Նույնիսկ իմ այն դիտողությամբ համաձայն չեք, որ ձեր իսկ հայտարարություններից կատարված հետևությունները, գրողը ոչ թե հյուպատոսարանի դռան մոտից, դեռևս Լիբանանի տարածքից է սկսվել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես չեմ ուզում այս պահին մինչև Լիբանան վերադառնալ: Իհարկե, ամեն ինչ սկսվել է հյուպատոսարանի հասնելուց առաջ: Բայց մենք միայն դռան մոտ և հետո տեղի ունեցած իրադարձությունների մասին կարող ենք խոսել:

ՆԱԽԱԳԱՀ - Լավ, ինչպես ուզում եք: Այժմ անդրադառնանք կոչմանը, անվանմանը, որ ինքներդ ձեզ տվել եք՝ «Եղիա Քեշիշյան անձնասպանական մարտախումբ»: Ձեզ համար ի՞նչ էր նշանակում «Անձնասպանական մարտախումբ»: Նախ՝ առնչվում էր հետևանքներին և ապա՝ ո՞վ էր Եղիա Քեշիշյանը: Ինչո՞ւ եք նրա անունով կոչել ձեր խումբը:

ՄԻՍԼՅԱՆ - Մենք մեզ կոչել ենք «Անձնասպանական մարտախումբ», որովհետև բոլորիս հայտնի էր, թե պահակախմբերը

-- էջ 63 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

որքան աչալրջորեն էին հսկում թուրքական հյուպատոսարանը, իսկ նրանց օգտագործած զենքերը ինքներդ եք տեսնում:

ՆԱԽԱԳԱՀ - Ձեզ բնական չի՞ թվում, որ արտասահմանում գտնվող դիվանագիտական հաստատությունը ինքնապաշտպանության միջոցներ է ունենում:

ՄԻՍԼՅԱՆ - Ատրճանակը հասկանալի է, բայց ինքնաձի՞գը...

ՆԱԽԱԳԱՀ - Իսկ հակառակ կո՞ղմը... այսինքն դուք զինված եք եղել ոչ թե ինքնաձիգ, այլ գնդացրային զենքով...

ՄԻՍԼՅԱՆ - «Անձնասպանական մարտախումբը» զինված եղել է, բայց պատրաստ է եղել նաև զոհաբերելու կյանքը:

ՆԱԽԱԳԱՀ - Մի՞թե դուք կանխատեսում էիք ավելի ծանր հետևանքներ:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Մենք չենք ուզում այդ հարցին պատասխանել:

ՆԱԽԱԳԱՀ - Եթե չցանկանաք խոսել, դատաքննությունը նախատեսվածից արագ կվերջանա: Ո՞վ է Եղիա Քեշիշյանը:

ՄԻՍԼՅԱՆ - Մի ընկեր է, որը Հայ դատի համար մահապատժի է ենթարկվել Իրանում՝ Չավեն Հակոբյանի հետ:

ՆԱԽԱԳԱՀ - Նա 1981 թվականի մարտի 20-ին, Թեհրանում է ձերբակալվել:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛, մահապատժի է ենթարկվել սեպտեմբերի 17-ին:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն Թեհրանում Թուրքիայի դեսպանության դեմ գործողություն է կատարել, ձերբակալվել, մահապատժի է ենթարկվել 1981 թվականի սեպտեմբերի 17-ին, այսինքն Փարիզում ձեր՝ հյուպատոսարանի գրոհից շատ քիչ՝ մեկ շաբաթ առաջ:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Եթե որոշել եք ձեր խումբը Եղիա Զեշիշյանի անունով կոչել, նշանակում է վաղուց եք սկսել նախապատրաստվել: Դուք չէիք կարող նրա՝ մահապատժի ենթարկվելու կապակցությամբ անվանակոչվել, քանի որ այդ ժամանակ մահապատիժը դեռևս ի կատար ածված չի եղել: Թե՞ դրանով ցանկացել եք արժևորել ձեր ընկերոջը, որը Թեհրանում թուրքական դեսպանատան դեմ գործողություն կատարելու համար ձերբակալվել է:

ՄԻՍԼՅԱՆ - Գործողությունը ոչ թե մենք, կազմակերպու-

-- էջ 64 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

թյունն է նախապատրաստում: Նա էլ ընտրում է խմբի անունը:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն անվանադրմամբ դուք չե՞ք զբաղվել:

ՄԻՍԼՅԱՆ - Ո՛չ, կազմակերպությունը: Մենք սոսկ զինվորներ ենք, հրամաններ ենք կատարում:

ՆԱԽԱԳԱՀ - Իսկ ձեր գործողության անվանումը «Վա՞ն» է եղել:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Կարո՞ղ եք բացատրել, թե ինչո՞ւ: Հայաստանի քաղաքներից մեկն այդպե՞ս է կոչվում: Ի՞նչ է այնտեղ տեղի ունեցել: Ինչո՞ւ է կազմակերպությունը ձեր ձեռնարկը կոչել «Վան» կամ ուղղակի «Վան գործողություն»:

ՄԻՍԼՅԱՆ - Վանը մեզ համար քաղաք-նահատակ է, որ երկար տարիներ պայքարել է թուրքերի դեմ, այժմ բռնազավթված է: Այն հայկական դիմադրության խորհրդանիշն է:

ՆԱԽԱԳԱՀ - Ձեր հայտարարագրում, հենց սկզբում, հիշատակվում է հայր Ռաֆայել Անտոնյանի և վերապատվելի Գյուզեյյանի ազատ արձակումը: Կարո՞ղ եք ասել, թե ովքե՞ր են նրանք և, մասնավորապես, արդյո՞ք վերապատվելին ազգակցական կապ ունի այստեղ ներկա պարոն Գյուզեյյա նի հետ:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Վերապատվելի Գյուզեյանը, պարոն Նախագահ, նշված է որպես վկա: Նա արդեն ազատ է արձակված և այստեղ վկայություն է տալու:

ՆԱԽԱԳԱՀ - Ձեր բարեկամն է:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Չարմիկ է, բայց շատ հեռավոր...

ՆԱԽԱԳԱՀ - Վերապատվելին բանտարկված է եղել Թուրքիայում և ձեր գործողությունից հետո՞ է ազատ արձակվել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ճիշտ այդպես:

ՆԱԽԱԳԱՀ - Քանի՞ տարի է անցկացրել թուրքական բանտում:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Նա արդեն ազատ է և կարող է հանդես գալ այս սրահում:

ՍԻՍԼՅԱՆ - Վերապատվելին կալանավորվել է 1980-ի փետրվարին:

ՆԱԽԱԳԱՀ - Հայր Անտոնյանն ո՞վ է:

ՍԻՍԼՅԱՆ - Քահանա է, որն ինքնաթիռից իջնելուն պես, մինչև այժմ անհայտ պատճառներով, ձերբակալվել է Ստամբուլի օդանավակայանում: Ու քանի որ հայ է, տասնչորս տարվա

-- էջ 65 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

տաժանակրության ու չորս տարվա աքսորի է դատապարտվել:

ՆԱԽԱԳԱՀ - Միմիայն հայ լինելը՞ համար, թե՞ թուրքական իշխանությունները Նրան որոշ գործողությունների համար մեղադրանք են ներկայացնում:

ՍԻՍԼՅԱՆ - Նախ, որ քահանա է, և ապա՝ մի քարտեզ է ունեցել, որի վրա նշված է եղել «Հայաստան» անվանումը:

ՆԱԽԱԳԱՀ - Ինձ թվում է, այդպես չէ...

Դատական գործում, ինքներդ կասեք ճի՞շտ է, թե՞ ոչ, Բեյրութում հրատա րակվող «Արմենիեն մագազին» հանդեսից մի մեջբերում կա, որը Վաշինգտոնի միջկառավարական ոստիկանական ուժերն են ուղարկել Փարիզի միջկառավարական ոստիկանական ուժերին: Այդ հանդեսի թղթակցին դուք ասել եք Նույնը, ինչ երեկ ասացիք: Այն, որ Լիբանանի մայրաքաղաքը ձեր գործունեության կենտրոնն է: Ես չե՞մ սխալվում: Այդ հայտարարությունը դուք Բեյրութում, Ֆրանսիա ուղևորվելուց առաջ՞ եք արել:

ՍԻՍԼՅԱՆ - Ես չգիտեմ, թե պարբերականը որտե՞ղ է լույս տեսել, մենք փոստով ենք ստացել:

ՆԱԽԱԳԱՀ - Հայտարարությամբ յուրաքանչյուրդ եք հանդես եկել, ընդ որում օգտագործված է անցյալ ժամանակը: Ելնելով բովանդակությունից, ակնհայտ է դառնում, որ հայտարարություններն արել եք դեպքից առաջ, քանի որ... Ես կարդում եմ. «Իմ ընկերներն ու ես գիտակցում ենք, որ մեր պարտականությունը կատարելիս կարող ենք զոհվել, բայց դա ավելի է ամրապնդում մեր համոզումը: Արդարամարտիկները բնական մահով չեն մեռնում...» և այլն: Որոշա կիրորեն զգացվում է, որ հայտարարությունը Փարիզ՝ ձեր գործողությունը կատարելու համար ժամանելուց առաջ եք արել, և «Արմենիեն մագազին»-ի լրագրողը թերևս գրառել է:

ՄԻՍԼՅԱՆ - Հրապարակումը գործողությունից առաջ ինքներս ենք պատրաստել:

ՆԱԽԱԳԱՀ - Երբ դեռևս Բեյրութում եք եղել:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Հասկանալի է: Դատական գործից պարզ է դառնում նաև, որ ԱՍԱԼԱ-ի մամուլի ծառայությունը ձեզ՝ Փարիզ հասնելուց, գործողությունը կատարելուց առաջ նկարահանել է և, զարմանալիորեն, չգիտեմ՝ ուրիշ ինչ արտահայտու-

-- էջ 66 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

թյուն է հնարավոր օգտագործել, մինչ հյուպատոսարանի ներսում շարունակվել են իրադարձությունները, պարոն Թորանյանը, մենք կանդրադառնանք այդ անձնավորությանը, նա, հասկանալի է, գտնվել է դրսում, ասել է. «Մի անձանոթ, որին ամենևին չէի ճանաչում, հյուպատոսարանի դեպքերի սկզբում մոտեցավ և ինձ մի տեսահոլովակ տվեց»: Այնուհետև Թորանյանն այդ տեսահոլովակը հանձնում է ֆրանսիական հեռուստատեսության առաջին ծրագրի աշխատակից Միշել Հոնորեին, որը հատվածներ է օգտագործում իր ծավալուն հաղորդման մեջ: Այնտեղ նույնպես դուք ներկայացնում եք ձեր գործողության դրդապատճառները: ԱՍԱԼԱ-ի մամուլի գործակալությունում ձեզ նկարահանել, ձեր խոսքերը ձայնագրել են դեռևս Բեյրութում եղած ժամանակ, այնպես չէ՞:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛, այդպես է:

ՆԱԽԱԳԱՀ - Ինչո՞ւ եք նկարահանվել, ո՞րն է եղել ձեր նպատակը:

ՄԻՍԼՅԱՆ - Ես բացատրել եմ մեր ազգային դատը և այն, թե ինչո՞ւ եմ զինված պայքարի դիմում:

ՆԱԽԱԳԱՀ - Լա՛վ, նախնական փուլի մասին պարզ դարձավ, որ չեք ցանկանում խոսել: Տեղափոխվենք Փարիզ: Ես ուզում եմ պարոնայք երդվյալներին հիշեցնել փաստերը:

Ջուլիայան, դուք Բեյրութի ֆրանսիական գլխավոր հյուպատոսարանից 1981 թվականի օգոստոսի 19-ին մուտքի ուղեթուղթ եք պահանջել և դեպքերից շատ քիչ առաջ՝ 1981-ի սեպտեմբերի 22-ին ժամանել եք Փարիզ:

ՋՈՒԼՅԱՅԱՆ - Ճիշտ է:

ՆԱԽԱԳԱՀ - Սիսյան, դուք ուղեթուղթ պահանջել եք սեպտեմբերի 8-ին և դարձյալ իրադարձություններից շատ քիչ առաջ՝ սեպտեմբերի 17-ին եք տեղ հասել:

ՍԻՍԼՅԱՆ - Շատ ճիշտ է:

ՆԱԽԱԳԱՀ - Բասմաջյան, դուք ձեր ուղեթուղթը պահանջել եք սեպտեմբերի 2-ին, բայց գործից պարզ չի դառնում, թե ե՞րբ եք Ֆրանսիա մուտք գործել:

ԲԱՍՄԱՋՅԱՆ - Սեպտեմբերի 22-ին:

ՆԱԽԱԳԱՀ - Գյուլգեյյան, ձեր մասին ոչ մի տվյալ չկա:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես Ֆրանսիա եմ հասել սեպտեմբերի 23-ին:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն, չորսդ էլ գործողությունից շատ քիչ

-- էջ 67 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

առաջ եք եկել: Բասմաջյան և Սիսյան, դուք սեպտեմբերի 22-ին եք ժամանել:

ՍԻՍԼՅԱՆ - Սեպտեմբերի 19-ին:

ՆԱԽԱԳԱՀ - Ո՞վ է եկել 22-ին:

ՋՈՒԼՅԱՅԱՆ - Ե՛ս:

ՆԱԽԱԳԱՀ - Միասին, թե՞ առանձին-առանձին եք տեղ հասել:

ՍԻՍԼՅԱՆ - Առանձին-առանձին:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք պատասխանեցիք տարբեր հարցերի, բայց, համենայն դեպս, ես մեկն էլ եմ ուզում տալ: Խոսքը ձեր փարիզյան նախապատրաստության մասին է: Դուք հասել եք երեք օր առաջ, մինչև դեպքը չորսով երբևէ հանդիպե՞լ եք: Եթե հարցնեմ, թե որտե՞ղ եք հաստատվել, չեք պատասխանի, բայց, համենայն դեպս, հարցնում եմ:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այդ հարցին մենք չենք կարող պատասխանել:

ՆԱԽԱԳԱՀ - Չե՞ք ուզում որոշ անձանց վտանգի ենթարկել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Չենք կարող պատասխանել, որովհետև դրանք մեր կազմակերպության գաղտնիքներն են: Եւրոպական երկուս ու կես տարի հետո իրավունք չենք ունենա պատասխանելու:

ՆԱԽԱԳԱՀ - Իսկ եթե հարցնեմ, թե արդյո՞ք տեղանքին ծանոթացել եք: Չէ՞ որ ավելի հեշտ ոչինչ չէր կարող լինել, քան երկու-երեք օր առաջ վարչական որևէ պատրվակով հյուպատոսարան մտնելը, միջավայրն ուսումնասիրելը:

ՍԻՍԼՅԱՆ - Ես երկու կամ երեք անգամ անցել եմ հյուպատոսարանի առջևից:

ՆԱԽԱԳԱՀ - Ինչ-որ մեկը ձեզ ուղեկցե՞լ է, ցույց տվե՞լ, ասե՞լ է. «Նայի՛ր, ահա՛, այն է»: Ինքնաշար ժողով եք անցել:

ՍԻՍԼՅԱՆ - Ավտոբուսով: Ձեռքս քարտեզ, պլան է եղել:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրիշ հարց տվողներ չկա՞ն... Դուք հյուպատոսարանի ներքին գծագիրն ունեի՞ք, դեպքից առաջ ժողովներ գումարե՞լ եք:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Ես կնախընտրեի, որ բարի գտնվեիք, հանդես չգայիք որպես միջևորդ դատավոր: Շնորհակալություն:

ՍԻՍԼՅԱՆ - Հյուպատոսարանի հատակագիծը չենք ունեցել:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն, երբ մտել եք ներս, չե՞ք իմացել ո՞ր կողմ գնալ, ո՞ր մասում ո՞վ է գտնվում:

ՍԻՍԼՅԱՆ - Ո՛չ, մեզ հայտնի է եղել միայն, որ բոլորն էլ լավ

-- էջ 68 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

զինված են:

ՆԱԽԱԳԱՀ - Ի միջի այլոց՝ զենքի մասին: Դուք Բեյրութից հրազենով ու պայթասարքերով եք եկել: Կարո՞ղ եք այդ հարցին պատասխանել:

ՍԻՍԼՅԱՆ - Ո՛չ:

ՆԱԽԱԳԱՀ - Իսկ այս մեկի՞ն: Չենքերը ձեզ հյուպատոսարան մտնելուց առաջ են տվել, թե՞ Փարիզ հասնելուն պես եք ստացել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Հյուպատոսարան ես եմ հասցրել, բայց չեմ կարող ասել, թե...

ՆԱԽԱԳԱՀ - Կարծես փոքր-ինչ առաջացանք: Դուք դրանք փոխադրել եք ուսապայուսակով:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Ինքնաձիգը, Բրաունինգ-Հերստալը, նռնակները, կակուղ պայթուցիկը, բոլորն իրար հե՞տ:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Լա՛վ: Արդեն հասնում ենք բուն իրադարձություններին, գրեթե հյուպատոսարանի դռան մոտ ենք: Դուք ե՞րբ, որտե՞ղ իրար հանդիպեցիք: Ինչպե՞ս տեղի ունեցավ զենքի բաշխու մը: Ընդունե՛ք՝ այս ամենը պատկերացնելը հեշտ չէ:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Մենք ժամադրվել էինք հյուպատոսարանի մոտ: Հենց տեղ հասանք, դռան առջև, աստիճանների վրա, առանց ընտրության բաժանեցինք զենքը, այսինքն յուրաքանչյուրն իրը վերցրեց...

ՆԱԽԱԳԱՀ - Լավ չհասկացա...

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ամեն ինչ տեղի ունեցավ բակի և հյուպատոսարանի դռների միջև:

ՆԱԽԱԳԱՀ - Այլ կերպ ասած, աստիճանների, հենց աստիճանների վրա եք բաժանել զենքը: Բայց դա վտանգավոր էր, որևէ մեկը կարող էր բարձրանալ կամ իջնել: Այդ պահին ոչ ոք ձեր կողքով չանցա՞վ:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Մենք չէինք մտածում՝ վտանգավո՞ր է, թե՞ ոչ:

ՆԱԽԱԳԱՀ - Ի՞նչ էիք նախատեսել: Յուրաքանչյուրը որոշակի՞ զենք պիտի ստանար, թե՞ ամեն ինչ պատահական եղավ: Դո՞ւք էիք պայուսակը բացում:

ՍԻՍԼՅԱՆ - Յուրաքանչյուրն իր զենքն ուներ:

ՆԱԽԱԳԱՀ - Ամեն մեկը գիտե՞ր, թե պայուսակից ինչ զենք

-- էջ 69 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

պիտի վերցնի: Որոշվա՞ծ էր, օրինակ, թե ձեզնից ով պիտի ստանա Կալաշնիկովն ու մտնի հյուպատոսարան:

ՍԻՍԼՅԱՆ - Կալաշնիկովը Հակոբ Ջուլֆայանը վերցրեց: Հյուպատոսարան մտնելուց առաջ, աստիճանների վրա:

ՆԱԽԱԳԱՀ - Իսկ երկու ատրճանակներ՞ը, ձեր տրամադրության տակ երկու ատրճանակ էլ ունեիք:

ՍԻՍԼՅԱՆ - Այո՛, այդպես էր:

ՆԱԽԱԳԱՀ - Ո՞վ պիտի հետը ներս տաներ:

ՄԻՍԼՅԱՆ - Ես ու Գյուզեյանը:

ՆԱԽԱԳԱՀ - Իսկ Բասմաջյանը: Նա զենք չունե՞ր:

ԲԱ ԱՄԱԶՅԱՆ - Ես նռնակներն էի վերցրել:

ՆԱԽԱԳԱՀ - Լա՛վ, նստեցե՛ք:

Ուրեմն, դուք մոտենում եք հյուպատոսարանի դռանը, և եթե ճիշտ եմ հիշում, կարելի է ասել՝ ամենադաժան, բիրտ գործողությունը տեղի է ունենում ներս մտնելու պահին: Որքա՞ն է տևում՝ դժվար է ասել: Համենայն դեպս քիչ, թերևս տասը, տասնհինգ րոպե, արդեն անհնար է որոշակի լինելը: Բայց դրանից հետո այլևս կրակոց չի լսվում, եթե նկատի չունենանք ժամը 23-ն անց 15-ի՝ հրազենի վերջին պայթյունը: Պատանդների համար այս անակնկալը, եթե կարելի է այդպես կոչել՝ դավը, հիմնականում նյութում է Գյուզեյանը: Ուստի, իսկույն և եթե եկեք կետ առ կետ անդրադառնանք մեղադրանքին, որ ձեզնից յուրաքանչյուրին ներկայացրել է նախաքննությունը: Մինչ այդ, սակայն, չի կարելի չպարզաբանել այն, որոշ իմաստով ընդհանուր գործողությունը, որ դուք միասին կատարել եք առաջին տասը, տասնհինգ րոպեների ընթացքում, թերևս կես ժամում:

Մի հարց, այս առումով, ինձ շատ հետաքրքրում է: Հայտնի է, որ հյուպատոսարանի ներսում եղել է հսկիչ-պահապան՝ պարոն Էոզենը, իսկ մյուսը՝ պարոն Գալի Ֆահրին սովորաբար կանգնել է մուտքի մոտ կամ շեմին և իր հայտարարության համաձայն, ինչպես այս օրերին դատարանում է արվում, պարտականություն է ունեցել ներս մտնողներին ստուգել, պայուսակները բացել տալ և այլն:

Ինչո՞վ եք դուք բացատրում այն հանգամանքը, որ կարողացել եք առանց խոչընդոտի, հեշտ ու հանգիստ, նռնակներով, երկու ատրճանակով, ինքնաձիգով հյուպատոսարան մտնել: Հսկիչը տեղում չէ՞ր:

ՄԻՍԼՅԱՆ - Տեղում էր:

-- էջ 70 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՆԱԽԱԳԱՀ - Ձեզ ոչինչ չասա՞ց:

ՄԻՍԼՅԱՆ - Մենք զենքով սպառնացինք:

ՆԱԽԱԳԱՀ - Չեզոքացնելու համար սպառնացի՞ք անմիջապես:

ՄԻՍԼՅԱՆ - Հյուպատոսարանի դուռը բացել տալու համար:

ՆԱԽԱԳԱՀ - Հասկացա, դուք ուզում էիք, որ նա դուռը բացի: Դատական գործում նշված է, որ նույնիսկ խփել եք նրան: Ձեր կամքը թելադրելու համար այդպիսի քայլ կատարե՞լ եք:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ո՛չ, մենք նրան չենք խփել: Անգամ հարգանքով ենք վերաբերվել, ուղղակի, քանի որ դուռը մարմնով փակել էր, պահանջել ենք, որ մի կողմ քաշվի:

ՆԱԽԱԳԱՀ - Երբ դուք արդեն ներսում էիք, նրա հետ բախում չունեցա՞ք: Ասենք՝ դրան ավելի ուշ կանդրադառնանք... Ձեր ներս մտնելու մանրամասները հայտնի են: Սիսյա՛ն, դուք կոնկրետ ի՞նչ էիք անում: Ես չեմ ուզում, որ պարոն Բլոնդեի հետ տեղի ունեցած փոխհրաձգության մասին պատմեք, այդ ամենը քիչ անց կքննարկենք: Վիրավորվելուց առաջ, սկզբնական շրջանում ինչպիսի՞ գործողություններ էիք կատարում: Հարցս ավելի որոշակիացնեմ՝ այդ պահին ատրճանակը ձեր մո՞տ էր:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Տարբեր վկաների ցուցմունքներից այն տպավորությունն է ստացվում, որ թերևս պատանդներին ահաբեկելու կամ որևէ այլ պատճառով, նախ և առաջ անկանոն կրակոց է սկսվել, այս ու այն ուղղությամբ գնդակներ են սուրացել: Պարոն Բլոնդեի հետ փոխհրաձգության մեջ մտնելուց առաջ դուք կրակե՞լ եք:

ՄԻՍԼՅԱՆ - Ես կրակել եմ միայն վիրավորվելուց հետո:

ՆԱԽԱԳԱՀ - Մինչ այդ զենք չե՞ք գործածել:

ՄԻՍԼՅԱՆ - Մի անգամ կրակել եմ մուտքի դռան վրա:

ՆԱԽԱԳԱՀ - Համենայն դեպս՝ մի անգամ գոնե զենքի դիմել եք:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛, դռնից երկու մետր հեռավորության վրա:

ՆԱԽԱԳԱՀ - Այն պահի՞ն, երբ զգացել եք, որ դրսից ուժով ուզում են բացել: Չե՞ որ ֆրանսիացի ոստիկաններ են վրա հասել:

ՄԻՍԼՅԱՆ - Չիմացա, թե ովքեր էին, ոչ մի բառ չասացին:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն, դուք զգացել եք, որ դուռը ծեծում են, դրա համար ե՞ք հայտարարել՝ «Ես կրակեցի դռան վրա»:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛, դռան բարձրության վրա:

-- էջ 71 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱԽԱԳԱՀ - Դուք այդ բառերը արտաբերել եք ներսում գտնվողներին հանգստացնելով՝ համար: Դուք խուճապի չէի՞ք մատնվել: Չէ՞ որ ձեր շուրջը շատ մարդ կար:

ՍԻՍԼՅԱՆ - Այո՛, կային:

ՆԱԽԱԳԱՀ - Երբ հյուպատոսարանի ներսում այդքան մարդ տեսաք, անակնկալի չեկա՞ք: Թե՞ դուք դա կանխատեսել էիք:

ՍԻՍԼՅԱՆ - Մարդ շատ կար:

ՆԱԽԱԳԱՀ - Նման բազմությունը անսովոր չթվա՞ց:

ԹԱՐԳՄԱՆ ԳՅՈՒԼ - Այո՛, ամբոխը նրան անակնկալի է բերել:

ՆԱԽԱԳԱՀ - Լա՛վ, անցնենք նռնակներին: Դուք ձեր տրամադրության տակ եղած մեկ կամ մի քանի նռնակներն օգտագործելու փորձ կատարե՞լ եք:

ՍԻՍԼՅԱՆ - Ո՛չ:

ՆԱԽԱԳԱՀ - Պայթուցիկներ՞ը:

ՍԻՍԼՅԱՆ - Ո՛չ:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք տեսե՞լ եք այն լարերը, որոնք կարող էին կցված լինել ականների կամ պայթուցիկների:

ՍԻՍԼՅԱՆ - Այո՛, երբ արդեն վիրավորվել էի, բացեցի:

ՆԱԽԱԳԱՀ - Վիրավորվելուց հետո բացեցիք լարերը, որոնք ինչի՞ էին կցված՝ ականի՞, թե՞ պայթուցիկի:

ՍԻՍԼՅԱՆ - Պայթուցիկի:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք համամի՞տ եք այն կարծիքին, որ պայթուցիկները գործադրվելու վիճակում էին:

ՍԻՍԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Մուտքի մոտ ռումբեր կային, և վիրավորվելուց հետո դուք ձեռքով բռնել էիք այն լարերը, որոնք դրանց էին կցված:

ՍԻՍԼՅԱՆ - Ես բավարարվել էի ձեռքիս նռնակով, պայթուցիկ չունեի:

ՆԱԽԱԳԱՀ - Նա հենց նոր ասում էր, որ լարերն էր բռնել:

ՍԻՍԼՅԱՆ - Ո՛չ, լարերը չէի բռնել:

ՆԱԽԱԳԱՀ - Վիրավորվելուց հետո ձեռքին նռնա՞կ է ունեցել:

ՍԻՍԼՅԱՆ - Որոշ պահերի:

ՆԱԽԱԳԱՀ - Պահունակը քաշվա՞ծ էր:

ՍԻՍԼՅԱՆ - Ո՛չ:

ՆԱԽԱԳԱՀ - Ջուլֆայան, նույն հարցը ձեզ եմ ուղղում՝ ներս մտնելիս դուք կրակե՞լ, որևէ բան ասե՞լ եք:

-- էջ 72 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Ես եղել եմ հյուպատոսարանի նախասրահում: Բավարարվել եմ շուրջս գտնվող մարդկանց զննելով:

ՆԱԽԱԳԱՀ - Խոսքը թիվ մեկ միջանցքի մասին է:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Այո՛, այն, որ մուտքի դիմաց է գտնվում, ճիշտ է, թիվ մեկ միջանցք է կոչվում:

ՆԱԽԱԳԱՀ - Եվս մի հարց, որ կուզեի ուղղել նաև պարոն Սիսյանին: Դուք ո՞ր գործողություններին եք մասնակցել: Չե՞ր որ պատանդների որոշ մասը կապկաված է եղել: Մեղադրյալները նրանց ձեռքերն իրար են հանգուցել կա՛մ այն պարաններով, որ իրենց հետ բերել են, կա՛մ այնպիսի կապիչներով, որ հենց տեղում եղած տարբեր նյութերից իսկույն պատրաստել են:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Ես վիրավորված էի, մարդկանց ձեռքերը չեմ կապել:

ՆԱԽԱԳԱՀ - Բացի պարոն Կայայի հետ ունեցած փոխհրաձգությունից, պատերին, հայելիներին, առաստաղին կրակե՞լ եք: Դեպքի վայրում քսանչորս պարկուճ է գտնվել, անտարակույս ձեզնից մեկը կամ մյուսը, թերևս մի քանիսը կրակել են պատերին:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Իհարկե, ես կրակել եմ, բայց գլխավոր հյուպատոսի աշխատասենյակում, թիվ հինգ հատվածում: Միայն վիրավորվելուց հետո:

ՆԱԽԱԳԱՀ - Քանի՞ անգամ եք կրակել:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Գլխավոր հյուպատոսի աշխատասենյակում...

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Հարցը լավ չի ձևակերպված, պարոն նախագահ, դուք հարցնում եք հյուպատոսի հետ տեղի ունեցած փոխհրաձգության մասին, նա պատմում է..

ՆԱԽԱԳԱՀ – Խոսքը բնավ էլ պարոն Ինալ Կայայի ուղղությամբ արձակված գնդակներին չի վերաբերում: Բացի դրանից, նա պատերին կամ դռանը կրակե՞լ է:

ԹԱՐԳՄԱՆ ԳՅՈՒԼ (Ջուլֆայանի փոխարեն) - Ամենևին:

ՆԱԽԱԳԱՀ - Եթե այսպես շարունակվի, հասնելու ենք Գյուլգեյանին և պարզվելու է, որ քսանչորս փամփուշտն էլ նա է կրակել:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Ես միմիայն կարող եմ ասել, որ կրակել եմ հյուպատոսի աշխատասենյակում, այն էլ վիրավորվելուց հետո:

ՆԱԽԱԳԱՀ - Ինչո՞ւ եք հյուպատոսի աշխատասենյակում կրակ բացել:

-- էջ 73 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Երբ ես հյուպատոսի առանձնասենյակում էի, ծախ կողմի դռնից, որը տանում էր մուֆ, անլույս սենյակը, ինձ թվաց, թե ստվեր ներս սահեց, դրա համար էլ ձևացրի, թե...

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Դա հյուպատոսի պատմությունն է: Մենք այդ մասին չենք խոսում, պարոն նախագահ:

ՆԱԽԱԳԱՀ - Բացատրեք նրան, պարոն թարգման, որ քիչ անց կանդրադառնանք պարոն Կայային: Հարցրեք, թե այդ պահից առաջ՝ առաջ կամ հետո կրակե՞լ է պատերին, առաստաղին:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Ո՛չ, մինչ այդ չեմ կրակել:

ԲԱՍՄԱՉՅԱՆ - Իմ ձեռքին նռնակներ են եղել:

ՆԱԽԱԳԱՀ - Նա նռնակներն է պահել, չի կրակել: Բացի Էոզենի դեպքից, դուք քսանչորս անգամ կրակել եք պատերին, հայելիներին, առաստաղին...

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Հյուպատոսն ու Ջուլֆայանը կրակել են իրար վրա... Ուրիշներ էլ...

ՆԱԽԱԳԱՀ - Դուք գոնե ընդունո՞ւմ եք, որ վախեցնելու համար կրակ եք բացել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ո՛չ, վախեցնելու համար չի եղել, բացի, թերևս, մեկից:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Ես կարծում եմ, պարոն նախագահ, ակնհայտորեն անհասկացողություն է առաջացել:

Փամփուշտի հետքերի մասին չի կարող վեճ լինել, անշուշտ, որոշակի թվով հետքեր առկա են, եթե նկատի ունենանք մանավանդ, թե ինչ է կատարվել հյուպատոսի աշխատասենյակում: Բնական է, փոխհրաձգություն է տեղի ունեցել, մեծ թվով փամփուշտներ են կրակվել, բայց ո՞վ գիտե, թե քանի հետք է մնացել՝ տասնհինգ, տասնյոթը... Քիչ առաջ ես փոր ձում էի հաշվել:

Հարկավոր է խոսել այն երեք դեպքերի մասին, որոնք առանձնահատուկ են նշվել, որոնք առնչվում են հյուպատոսին, պարոն Բլոնդեին և պարոն Էոզենին, որից հետո միայն միտք կունենա կրակված մյուս գնդակներին անդրադառնալը: Հետքեր հայտնաբերվել են շեմին և դռան վրա: Ո՞վ է կրակել դռանը:

ՆԱԽԱԳԱՀ - Իսկապես, դռանն ո՞վ է կրակել: Պարոն Գյուզեյյան, դռան ուղղությամբ ինքնե՞րդ եք կրակել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛, դռան վրա կրակել եմ ես:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք այդ ընդունել եք հարցաքննության ժա -

-- էջ 74 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

մանակ: Վերջին փամփոօշտն էլ եք դուք կրակել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛, ես եմ կրակել ժամը 23-ին:

ՆԱԽԱԳԱՀ - Ինչո՞ւ եք այդպիսի ցանկություն ունեցել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - 23-ն անց 15-ին ժամկետն ավարտվում էր:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք կրակել եք, որովհետև մտածել եք, որ ձեր պահանջը բավարարված չէ՞:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես կրակել եմ միջանցքում, որտեղ ոչ ոք չի եղել, չեմ ուզել պատանդներին վախեցնել:

ՆԱԽԱԳԱՀ - Պատանդները նշում են, որ «ակնհայտորեն նա չէր ուզում որևէ մեկի վրա կրակել»: Հենց դրա համար եմ հարցնում, ինչո՞ւ եք ատրճանակով կրակել: Դա հուսահատությա՞ն հետևանք էր, քանի որ ձեր պահանջներին գոհացում չէր տրվել, թե՞ նախազգուշացում այն բանի, որ ժամկետն ավարտվում է:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Լավ չեմ հիշում:

ՆԱԽԱԳԱՀ - Ձեզ հայտնի է, որ չորսդ էլ, նախքան ձեր կոնկրետ գործողությունների վերլուծումը, մեղադրվում եք մոտ հիսուն հոգու արգելակալանքի ենթարկելու համար, ընդ որում՝ մահվան սպառնալիքով:

Նախ և առաջ դուք ընդունո՞ւմ եք արգելակալանքի մեղադրանքը: Նման քայլի դիմած լինելու զգացողությունն ունե՞ք: «Արգելակալանքի ենթարկել» նշանակում է որևէ մեկին փակ տեղ, հսկողության ներքո պահել և արգելել տեղաշարժը: Դուք համաձայն եք այս հանգամանքին:

Չորս մեղադրյալները համաձայնվում են:

Լա՛վ: Սրան ավելանում է կապկպելը: Ո՞ւմ ձեռքերն էիք կապում և ինչո՞ւ: Որոշ պատանդների հետ այդպես վարվելու պատճառը ո՞րն էր:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Նրանք ակնկալվածից անհամեմատ շատ էին:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք չէի՞ք կարծում, որ ներսում այդքան շատ մարդ կլինի:
Պատանդների բազմությունը տեսնելով դուք վախեցաք, որ ոմանք կընդվզեն և
նրանց անգործունեության դատապարտելու համա՞ր այդպես վարվեցիք:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Բացի դրանից, մենք երկու վիրավոր ունեինք:

ՆԱԽԱԳԱՀ - Ո՞վ է կապկպել պատանդներին:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ե՛ս:

-- էջ 75 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱԽԱԳԱՀ - Մենա՞կ: Քանի՞ հոգու:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛, ես եմ կապել, բայց չեմ հաշվել:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք նրանց և մյուսների՝ ասենք թուրքերի միջև տարբերություն դրե՞լ
եք: Հարցրե՞լ եք, թե ո՞վ է հայ, ո՞վ՝ ֆրանսիացի: Պարզ է, որ երկու ազգերի
ներկայացուցիչներ էլ եղել են:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես տարբերություն դրել եմ կանանց ու տղամարդկանց միջև:

ՆԱԽԱԳԱՀ - Իսկ ձեր խմբում աստիճանակարգում գոյություն ունեցե՞լ է: Մյուս
երկուսը «շարքայիններ» են համարվել:

ՄԻՍԼՅԱՆ - Դեկավարը ես եմ եղել:

ՆԱԽԱԳԱՀ - Դո՞ւք՝ Սիսյա՛ն:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛, բայց մեզնից յուրաքանչյուրը գիտեր, թե ինչ պիտի աներ
հյուպատոսարանում:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն նախօրոք ծրագրված էր, որ դեկավարը դուք եք լինելու, ձեր
վիրավորվելուց հե տո՞՞ է «ջահը փոխանցվել» Գյուլգեյանին:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛, այդպես է եղել:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք հենց սկզբից լավ մտածե՞լ էիք, թե ինչպես եք
փոխհարաբերության մեջ մտնելու ուստիկանության հետ: Որոշե՞լ էիք, որ
բանակցությունները ընդհանուր առմամբ Գյուլգեյանն է վարելու: Նա է, ասենք,
կապ հաստատելու ֆրանսիացի ուստիկանների հետ: Թե՞ դրա պատճառն այն է,
որ ինքը ձեր չորսից ամենալավն է ֆրանսերեն խոսում:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛, դա ճիշտ է, մեզնից միայն Գյուլգեյանը ֆրանսերեն գիտեր:

ՆԱԽԱԳԱՀ - Արգելակալանքի փաստն ապացուցվեց, բայց նախաքննությունը նշում է՝ «մահվան սպառնալիքով արգելակալանք»: Դուք այս մեղադրանքն ընդունո՞ւմ եք, կարո՞ղ եք ասել, որ՝ այո՛, սպառնացել ենք մարդկանց:

ՄԻՍԼՅԱՆ - Նախ՝ ես ուզում եմ նշել, որ մենք թուրք ժողովրդի հանդեպ ոչինչ չունենք: Մեր պայքարը թուրքական կառավարության դեմ է:

ՆԱԽԱԳԱՀ - Համաձայն եմ, բայց հյուպատոսարանում գտնվող թուրքերը միայն արգելափակվե՞լ են, թե՞ մահվան սպառնալիքի էլ են ենթարկվել:

-- էջ 76 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՄԻՍԼՅԱՆ - Մենք ոչ ոքի չենք սպառնացել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ոչ մի պատանդ ուղղակի ահաբեկման չի ենթարկվել: Պարզապես մենք նրանց բացատրել ենք, որ պետք է հանգիստ մնան: Ահա՛ բոլորը:

ՆԱԽԱԳԱՀ - Իսկ եթե հանգիստ չմնային, իրենց կյանքը վտանգի կենթարկվե՞ր:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես նրանց, նույնիսկ ֆրանսիացի ոստիկաններին ասել եմ, որ հյուպատոսարանը կպայթեցնենք, բայց միմիայն այն բանի համար, որ տեղներում մնան: Որովհետև եթե թողնեի, կհեռանային, ոչ ոք չէր սպասի:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք ընդունո՞ւմ եք, որ նույնիսկ ձեր հայտարարագրի արտահայտություններում մահվան սպառնալիք կա: Ձեր՝ «Եթե մեր պահանջները տասներկու ժամվա ընթացքում չկատարվեն, հյուպատոսարանում գտնվող բոլոր պատանդները կոչնչացվեն, իսկ զինված հակահարձակման դեպքում մենք անհապաղ, անվարան ներսի բոլոր մարդկանց հետ շենքը կպայթեցնենք» ձևակերպումը մահվան սպառնալիք չէ՞:

Դուք չե՞ք ընդունում, որ մուտքի դռան տակ կամ որևէ այլ վայրում պայթուցիկ տեղադրելն ինքնին մահվան սպառնալիք է: Չե՞ք ընդունում, որ եթե ձեր պատանդին մոտեցնում եք պատուհանին, գլխին լիցքավորված զենք եք պահում, մահվան սպառնալիքի եք ենթարկում: Հենց դատական գործում, ես անունները չեմ նշել, բայց հաշվել եմ, տասնչորս վկա, տասնչորս պատանդներ հայտարարել են, որ մահվան սպառնալիք են լսել: «Եթե մեր պահանջները չբավարարեն, ամեն ինչ կպայթեցնենք, շենքը օդը կհանենք, այնպես որ ձեզ հանգիստ պահեք»՝ մի՞թե սա մահվան սպառնալիք չէ:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Մենք զինված գործողություն ենք կատարել, այսինքն՝ անձամբ ես միանշանակ ընդունում եմ, որ մահվան ահ եղել է:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն դուք մեղադրանքն ընդունում եք:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛:

ԲԱ ԱՄԱՁՅԱՆ - Ես էլ:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Ես չէի ուզում միջամտել, պարոն նախագահ, բայց քանի որ դուք խոսում եք մահվան սպառնալիքի մասին, ելնելով իրենց հայտարարագրի բովանդակությունից, ինձ թույլ եմ տալիս ճշտելու, որ, իմ կարծիքով, սպառնա -

-- էջ 77 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

լիքն ուղղված է եղել դրսում գտնվողներին, որպեսզի իրավագործություն հաղորդվի գրավման գործողությանը:

ՆԱԽԱԳԱՀ - Համենայն դեպս ես ձեզ հիշեցնում եմ, որ վկայություն տված տասնչորս հոգին, գործնականում եթե ոչ բոլորը, ապա պատանդների մեծ մասը հայտարարել է, որ, ինչպես և սովորաբար լինում է նման դեպքերում, մթնոլորտը հետզհետե նկատելիորեն հանդարտվել է: Որոշ արգելափակվածներ նշում են Նույնիսկ, որ երբ ամեն ինչ վերջացել է, Գյուլգեյանը և Բասմաջյանը սեղմել են պատանդների ձեռքերը, ներողություն խնդրել լարվածության համար... Իսկ սա նշանակում է, որ սկզբում իրավիճակն անհամեմատ գրգռված է եղել, քան վերջում:

Մտում է ավելացնել, որ դատական գործում ոմանք ասում են այն, ինչ որ դուք, մյուսներն էլ՝ ճիշտ հակառակը:

Այժմ, եթե դեմ չեք, կետ առ կետ անդրադառնանք յուրաքանչյուրի գործողություններին, բայց մինչ այդ տասնհինգ-քսան րոպե ընդմիջում տանք:

Հայտարարվում է ընդմիջում:

Նիստը վերսկսվում է:

ՆԱԽԱԳԱՀ - Մենք անդրադառնալու ենք չորս մեղադրյալների կոնկրետ մեղադրանքներին, որոնք հետևյալներն են.

1. Հսկիչ-պահապան Էոզենի մահը, որի համար մեղադրվում է պարոն Գյուլգեյանը:
2. Պարոն Բալթաօղլուի վիրավորվելը, որը վերագրվում է պարոն Գյուլգեյանին:
3. Պարոն Բլոնդեի հրագենային վերքը, որը վերագրվում է պարոն Սիսյանին:

4. Վերջապես՝ պարոն Ինալ Կայայի վերքերը, որոնց պատասխանատվությունն ընկնում է պարոն Ջուլֆայանի վրա:

Ինձ թվում է՝ ճշգրիտ անհնար է ասել, թե ժամանակագրական ինչ հաջորդականությամբ է այս ամենը տեղի ունեցել: Նախ նման իրադարձություններն անխուսափելիորեն ուղեկցող մեծ խառնաշփոթի, ինչպես նաև վկաների հայտարարությունների տարբերության հետևանքով, որը, ինչ խոսք, բացատրվում է թարգմանության դժվարություններով:

-- էջ 78 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Նախ անդրադառնանք ձեզ, պարոն Սիսյան:

Դուք մեղադրվում եք պարոն Բլոնդե կոչվող անձնավորությանը կանխամտածված սպանության փորձ կատարելու մեջ:

Սկզբում տիկնայք և պարոնայք երդվալներին իրազեկելու համար (պարոն Բլոնդեին կլսենք վաղը), ուզում եմ հրապարակել տուժողի ներկայացրած տարբերակը: Նա հայտարարել է հետևյալը. ինքը եղել է երկու գործընկերների հետ, որոնք կոչվում են Շըվի և Կարիե: Շըվին նա է, ով փորձել է բացել դուռը և, որպես պատասխան, դռան միջով դիմահար կրակոցներ է ստացել, որից հետո երկու ոստիկանները բարձրացել են գլխավոր սանդուղքով: Ինքը՝ Բլոնդեն ոչ թե համազգեստով է եղել, այլ քաղաքացիական հագուստներով, միայն ոստիկանական թևկապ է ունեցել և, ինչպես արդեն ասվեց, ծաղկամարզի միջով անցել, պատուհանով (գծագրին նայեցեք, աչ կողմի ներքև ում է) թափանցել է անձնագրային բաժանմունք...

Վաղը կաշխատենք այս ամենը պարզաբանել, որովհետև գործի մեջ որոշակիորեն պարզ չէ՝ նա հայտնվում է անձնագրային բաժանմունքի^օ, թե կողքի՝ մյուս անցուղում, որն առաջնորդում է թիվ մեկ միջանցքը:

Պարոն Բլոնդեն հայտարարել է, որ անցուղում, ինչպես նաև անձնագրային բաժանմունքում տեսել է հատակին ընկած երկու մարմին: Ոստիկանը չի ճշգրտում՝ խոսքը ոճրագործությամ^ն, պաշտպանվելու համար պարզապես մեկնված^օ, թե^օ այնպիսի երկու անձանց մասին է, որոնց ստիպել են պառկել:

Ըստ իր խոստովանության՝ հենց այդ պահին էլ բղավել է. «Ոստիկանությունն է, ձեռքներդ վե՛ր», և մի մարդ, այդ հրահանգից անմիջապես հետո, գենքը ձեռքին հայտնվում է դռան շրջանակի մեջ և երեք անգամ կրակում իր ուղղությամբ: Պարոն Բլոնդեն ասել է. «Ես պնդում եմ, որ առաջինը այդ մարդը կրակեց իմ վրա կամ իմ ուղղությամբ»:

Ինքն էլ զինված է եղել: Պարոն Բլոնդեն ոստիկան է, իր տրամադրության տակ ունի 9 միլիմետրանոց Մանհուրին ատրճանակ: Նա դիմադարձել է անսպասելի հայտնված մարդու կրակոցներին՝ ինքն էլ է երկու անգամ կրակել: Այնուհետև մի կողմ է թեքվել և, ըստ իր խոստովանության, լսել է, թե ինչպես մարդը ցավից ճիչ է արձակել, ընկել կամ դիրքավորվել է հատակին: Վկայությունն այսքանով ավարտվում է: Դրանից ան -

-- էջ 79 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

միջապես հետո ոստիկանը պատուհանից դուրս է գալիս, ծաղկամարգով հասնում գործընկերներին:

Նախ լուսանկարին նայելով, ապա նաև առերեսման ժամանակ, ոստիկանը հայտարարել է. «Ես վս տահ եմ՝ իմ հակառակորդը այստեղ ներկա պարոն Սիսյանն է»:

Տեղագնումից նույնպես որոշակի է դառնում, որ կրակոցներն արձակվել են մինչև թիվ մեկ միջանցքը կամ առնվազն անձնագրային բաժանմունք տանող անցուղում: Այո, կրակոցներ եղել են, բայց առայժմ չենք կարող ասել, որոշակիորեն չգիտենք՝ կրակողը պարոն Սիսյանն է եղել: Կրակոցների հետքեր կան պատերին, մետաղե պահարանին, պատուհանին, դրանից բացի՝ անձնագրային բաժանմունքում երկու գնդակ է գտնվել:

Հարկ եմ համարում հիշեցնել, որ պարոն Բլոնդեն զինված է եղել 9 միլիմետրանոց Մանհուրինով և, ըստ պարոն Սիսյանի մարմնի շողանկարման, փորձագետները եզրակացրել են. «Գնդակները բավական խոշոր տրամաչափի են եղել, ութ կամ ինը միլիմետրանոց»: Մի հանգամանք, որը ևս հաստատում է, որ Սիսյանին ամենայն հավանականությամբ վիրավորել է պարոն Բլոնդեն:

Պարոն Սիսյան, գործից երևում է՝ դուք միշտ ընդունել եք, որ պարոն Բլոնդեի և ձեր միջև փոխհրաձգություն է եղել, առաջինը ինքն է կրակել ձեր ուղղությամբ, դուք պաշտպանվել եք:

Հիշենք, որ Բլոնդեն, իհարկե, հակառակ վարկածն է ներկայացնում: Նա ասում է. «Դռների մեջ հայտնված անձնավորությունն առաջինը երեք անգամ կրակեց իմ ուղղությամբ, ես միմիայն պաշտպանվել եմ»:

Երեկ մենք նկատեցինք, որ մեղադրյալները մեծ մասամբ բավական ազատ են արտահայտվում ֆրանսերեն: Ես կուզեի, որ նրանք ջանք թափեին ու հնարավորին չափ փորձեին ֆրանսերեն խոսել: Թարգմանը թող միջամտի միայն այն դեպքում, երբ օգնության կարիք լինի:

ՊԱՇՏՊԱՆ ԹԵԴԺԵՆ - Ընդմիջման ժամանակ պարոն Սիսյանն ինձ ասաց, որ թյուրիմացություններից խուսափելու համար կնախընտրեմ, որ հարցերն իրեն ուղղվեն հայերեն, որոնց ինքը կջանա ֆրանսերեն պատասխանել:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն աշխատեք ճշգրիտ թարգմանել: Նա ընդունում է, որ փոխհրաձգություն է տեղի ունեցել իր և ուս -

-- էջ 80 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

տիկան Բլոնդեի միջև ինքը կրակել է նրա ուղղությամբ:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛, պարոն նախագահ:

ՆԱԽԱԳԱՀ - Այդ պահին ի՞նչ զենք է եղել ձեր ձեռքին:

ՄԻՍԼՅԱՆ - 9 միլիմետրանոց Հերստալ:

ՆԱԽԱԳԱՀ - Բլոնդեն հայտարարում է, որ ինքը բղավել է. «Ոստիկանությունն է, ձեռքների վե՛ր»:

ՄԻՍԼՅԱՆ - Ես երբեք «ոստիկանություն» բառը չեմ լսել:

ՆԱԽԱԳԱՀ - Այդ դեպքում ինչո՞ւ է հայտնվել դռան մեջ կամ անցուղու սկզբում:

ԹԱՐԳՄԱՆ (Սիսյանի կողմից) - Նա պնդում է, որ ինքը չի եղել թիվ մեկ միջանցքը և անցուղին միացնող դռան մեջ:

ՆԱԽԱԳԱՀ - Հապա որտե՞ղ է եղել:

ՄԻՍԼՅԱՆ - Երբ վիրավորվեցի, հաղորդակցական սրահի դռան առաջ էի:

ՆԱԽԱԳԱՀ - Վարչական նիստերի սրահի՞:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Գծագրում երկու դուռ ենք տեսնում, որոնցից մեկը աջ, մյուսը ձախ կողմում է: Խոսքը ձախի՞ մասին է:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Այդ պահին նա նկատե՞լ է ոստիկան Բլոնդեին: Տեսե՞լ է մի մարդու, որի ձեռքին զենք է եղել:

ՄԻՍԼՅԱՆ - Ես նրան տեսա իմ վրա կրակելուց հետո:

ՆԱԽԱԳԱՀ - Անմիջապե՞ս է վիրավորվել:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛, պարոն նախագահ:

ՆԱԽԱԳԱՀ - Եթե ես ճիշտ եմ հասկանում, դրանից հետո է նկատել իր վրա կրակող անձնավորությանը:

ՄԻՍԼՅԱՆ - Ճիշտ այդպես:

ՆԱԽԱԳԱՀ - Երբ դուք նրան տեսաք, նկատեցի՞ք, որ թևին ոստիկանական տարբերանշան կա:

ԹԱՐԳՄԱՆ - Ասում է՝ տարբերանշան չի տեսել, որովհետև փախել է միջանցքի ուղղությամբ... Ոստիկանն է փախել:

ՆԱԽԱԳԱՀ - Ընդունո՞ւմ է, որ ինքն էլ է կրակել:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛, կրակել եմ, բայց ոչ նրա վրա:

ՆԱԽԱԳԱՀ - Նրա ուղղությամբ:

ՄԻՍԼՅԱՆ - Նրա ուղղությամբ, բայց ավելի բարձր, չափազանց բարձր:

ՆԱԽԱԳԱՀ - Որից հետո ոստիկանը շրջվել ու ուղղվել է դե -

-- էջ 81 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

պի պատուհանը:

ՄԻՍԼՅԱՆ - Պատուհանը ես չեմ էլ նկատել: Գիտեմ միայն, որ կրակել եմ ինչ-որ մեկի ուղղությամբ, անհամեմատ բարձր, որից հետո նկատել եմ, որ փախչում է:

ՆԱԽԱԳԱՀ - Քանի՞ անգամ եք կրակել:

ՄԻՍԼՅԱՆ - Կարծում եմ՝ երեք:

ՆԱԽԱԳԱՀ - Նա լսե՞ց, թե քիչ առաջ ես ինչ ասացի: Իր տարբերակը հետևյալն է. «Ես եղել եմ վարչական նիստերի սրահի թիվ մեկ դռան առաջ, լսել եմ կրակոցներ, զգացել եմ, որ վիրավոր եմ, որից հետո միայն անձնագրային բաժանմունքում ինչ-որ մեկին եմ նկատել, որը թվում էր, թե փախչում է բաժանմունքի խորքը, դեպի պատուհանը: Ես չեմ տեսել նրա թևի ոստիկանական տարբերանշանը, կրակել եմ երեք անգամ, բայց օդում, դեպի առաստաղ»: Սա նշանակո՞ւմ է, որ նա ոստիկան Բլոնդեի վրա կրակելու միտում չի ունեցել:

ՄԻՍԼՅԱՆ - Այո՛, այդպես է:

ՆԱԽԱԳԱՀ - Այդ հարցին կանդրադառնանք վաղը, երբ ոստիկան Բլոնդեն այստեղ լինի, տեսնենք կկարողանա՞նք լուծել հակասությունը:

Գործի մեջ այնպիսի տվյալներ չկան, որոնցով հնարավոր լինի պարզաբանել այս կամ այն վարկածը: Փաստերը շատ քիչ են: Հյուպատոսարանի երկրորդ հսկիչ-պահապանի հայտարարությունները, խոստովանենք, պետք է ընդունել մեծագույն վերապահությամբ, որովհետև կան մանրամասներ, որոնք չէին կարող տեղի ունենալ այնպես, ինչպես ներկայացնում է, մանավանդ որ հենց իր՝ պարոն Գալի Ֆահրիի ենթադրությամբ, ինքն է վիրավորել Սիսյանին: Նա պատմում է, որ հայերից մեկն իբր գենքը ցած է նետել, ինքը վերցրել և մի քանի անգամ կրակել է նրանց ուղղությամբ: Գալի Ֆահրիի ասելով, այդ կրակոցներից հետո Սիսյանը ճոճվել է, ուստի կարծում է, որ ինքն է նրան վիրավորել... Այս ամենը բացառվում է: Կարծում եմ որոշակի դարձավ, որ Սիսյանին վիրավորել է Բլոնդեն: Բացի դրանից, դժվար է պատկերացնել, թե ինչպե՞ս է հսկիչ-պահապանը վերցրել հայերի՝ գետին նետած ատրճանակը, կրակել նրանց ուղղությամբ և այլն, և այլն, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ ինքն էլ է անձնական զենք ունեցել, այնպես որ, եթե ուզեր, ինչո՞ւ պիտի իրենը չօգտագործեր...

-- էջ 82 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Ուրեմն, հսկիչ-պահապան Գալի Ֆահրիի վկայություններին պետք է մեծագույն ողջամտությամբ վերաբերվել: Մյուս վկան՝ պարոն Դիդիե Ֆլեորին ազգությամբ ֆրանսիացի է, մենք նրան վաղը կլսենք: Նա վկայում է, թե տեսել է անցուղու և թիվ մեկ միջանցքի միջև գտնվող դռան բացվելը, ինչպես նաև ինչ-որ մեկին, որը մոտավորապես այդ նույն տեղից կրակել է մարտախմբի անդամներից մեկի ուղղությամբ, ընդ որում Ֆլեորիի նկարագրած մարտախմբի անդամի գտնված տեղը լիովին համընկնում է այն տեղին, որտեղ եղել է Սիսյանը: Նա այդ պես էլ ասել է. «Մարտախմբի այդ անդամը կանգնած էր թիվ մեկ միջանցքը վարչական նիստերի սրահից բաժանող դռան մեջ»:

Վկա Ֆլեորիի հայտարարությունից կարելի է հետևցնել, որ անձնագրային բաժանմունքից ոչ հեռու գտնվող անձն է առաջինը կրակել մարտախմբի անդամի, այսինքն Սիսյանի ուղղությամբ: Փաստը միայն այս վկայի խոսքերն են, որոնց վրա հենվելով ոստիկան Բլոնդեն, եթե իհարկե ներկայանա, թերևս վերականգնի ճշմարտությունը, ընդունի, որ նախ կրակել է ինքը, իսկ Սիսյանը հակադարձել է:

Քանի որ մենք քննարկում ենք մասնավոր դեպքեր, տիկնայք և պարոնայք երդվյալներ, կվարվենք հետևյալ կերպ: Ամեն գործողության անդրադառնալուց հետո ես կդիմեմ ձեզ, իմանալու համար, թե արդյոք տալու հարցեր ունե՞ք:

Այս առաջին գործողության վերաբերյալ պարոն Սիսյանին ի՞նչ եք ուզում հարցնել:

ԵՐԴՎՅԱԼ - Եթե դուք իմանայիք, որ ձեր դիմաց ոստիկան է կանգնած, անկախ ամեն ինչից, կկրակեի՞ք:

ՍԻՍԼՅԱՆ - Երբ նրա ուղղությամբ կրակ էի բացում, չգիտեի, թե նա ո՞վ է: Ես գործում էի պահի ազդեցության տակ, չեմ կարող այժմ որոշակի ասել՝ կկրակեի՞, թե՞ ոչ:

ՆԱԽԱԳԱՀ - Քաղաքացիական հայցվորները հարցեր ունեն:

ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱՐԴԱ - Ո՛չ:

ՆԱԽԱԳԱՀ - Պարոն ընդհանուր դատապաշտպանը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՇՏՊԱՆ - Հարցեր տալու համար կսպասեմ առերեսմանը: Համենայն դեպս՝ մի ճշտում փորձեմ կատարել: Ես ուզում եմ վերհիշել այն հայտարարությունը, որ մեղադրյալը

-- էջ 83 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

կատարել է նախաքննության օրը: Նա մեզ կարո՞ղ է ասել՝ ինքն իրեն հաշիվ տվե՞լ է, թե որտեղից է գալիս կրակոցը:

ՍԻՍԼՅԱՆ - Այո՛, գիտեի, որովհետև իր դիմաց էի, տեսնում էի նրան՝ գենքը ձեռքին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՇՏՊԱՆ - Երբ վիրավորվեցիք, դուք հրազենի վերք էիք ստացել, անդրադարձա՞ք, թե ո՞ր կողմից կրակեցին ձեր վրա:

ՍԻՍԼՅԱՆ - Այո՛:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՇՏՊԱՆ - 1983 թվականի մարտի 25-ին քննիչին ասել եք «ո՛չ», այսօր «այո՛» եք ասում:

ՊԱՇՏՊԱՆ ԹԵԴԺԵՆ - Դա Սիսյանի և Բլոնդեի՝ այս գործի կապակցությամբ արձանագրության մեջ եղած միակ հակասությունը չէ:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՇՏՊԱՆ - Իհարկե, ուրիշ շատ-շատերը կան... Այժմ եթե դուք թույլ չեք տալիս հարցեր տալ, ձեռնպահ կմնամ...

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Քանի որ վկա Ֆլետորին վաղը չի ներկայանալու, պարոն ընդհանուր դատապաշտպանի դիտողությանը պատասխանելու համար Ֆլետորիի ասածներից երեք տող կարդամ...

ՆԱԽԱԳԱՀ - Ես հայտարարեցի, որ վաղը բարձրաձայն կընթերցվի:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Իրադրությունում, ուր տեղի է ունեցել այդ ամենը, Սիսյանը չէր կարող իմանալ, թե գնդակը ո՞ր կողմից է գալու, նա կրակել է այն ուղղությամբ, որտեղից որ եկել է...

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՇՏՊԱՆ - Չեմ ուզում դա քննարկման նյութ դարձնել, վկայակոչում եմ նրա պատասխանը: Ես ընդամենը հարց տվեցի, չեմ հասկանում, թե ինչո՞ւ նման ընդվզում առաջացրեց:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Կարո՞ղ է նա մեզ ճշգրիտ ցույց տալ, թե մարմնի ո՞ր մասն է խոցել գնդակը:

ՍԻՍԼՅԱՆ - Այստեղ (ցույց է տալիս կրծքի աջ կողմը):

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Որտե՞ղ է այժմ գնդակը:

ՍԻՍԼՅԱՆ - Այստեղ (ցույց է տալիս աջ կողմը):

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Ես հարցնում եմ, որ հիշենք այդ մանրամասնը, սա՛ է իմ նպատակը:

ՆԱԽԱԳԱՀ - Լա՛վ: Դառնանք Ջուլֆայանին: Կանխամտած -

-- էջ 84 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

վաճ սպանության փորձ՝ պարոն Ինալ Կայայի անձի նկատմամբ:

Դեպքերը տեղի են ունենում գլխավոր հյուպատոսի գրասենյակում եւ զուգարանների առջեւ: Հարկ է նշել, որ դատաձգաբանական փորձաքննությամբ անհնար է ճշտել, թե ի՞նչ զենքով է վիրավորվել Ինալ Կայան, անգամ հենց ինքը՝ Ջուլֆայանը: Դա իրենցից ենք մենք իմանում, քանի որ Ջուլֆայանը նախաքննության ժամանակ ընդունում է, որ ինքը Կալաշնիկով արագաձիգ է ունեցել, ինչպես Ինալ Կայան է ընդունում, որ զինված է եղել հյուպատոսարանին պատկանող ատրճանակով:

Եթե ցանկություն ունենաք, վաղը մենք կունկնդրենք Ինալ Կայային, իսկ այսօր կվարվենք այնպես, ինչպես քիչ առաջ վարվեցինք: Դատաձգաբանական փորձաքննությունից մենք գիտենք, որ Ինալ Կայայի ատրճանակն արտանետել է երկու պարկուճ, որոնք գտնվել են զուգարանում, կրակել է մի փամփուշտ, որը գտնվել է գրասենյակում: Հետագա ասելիքս չի նշանակում, որ Ջուլֆայանն իր ինքնաձիգով տասնհինգ գնդակ է ուղղել Ինալ Կայային: Ուղղակի ես ուզում եմ հիշեցնել հայտնի այն տվյալը, որ հյուպատոսի առանձնասենյակում գտնվել է Կալաշնիկովի 7.62 միլիմետրանոց տասնհինգ պարկուճ, և այն, որ ինքնաձիգը կրակել է վեց փամփուշտ, որոնք նույնպես գտնվել են նույն տեղում:

Մեզ հայտնի է նաև, որ այդ ինքնաձիգի պատիճը ծակել-անցել է պատերից մեկը, քանի որ կրակոցի հետքեր կան գլխավոր հյուպատոսի աշխատասենյակի, զուգարանի, քիչ հեռու գտնվող մշակութային կցորդի գրասենյակի միջև գտնվող տարածքում:

Վերջապես մենք գիտենք, քիչ առաջ տեսանք, որ այդ նույն Կալաշնիկովին փամփուշտ է դիպել, մետաղական մասի վրայի հետքը շատ լավ երևում է:

Վաղը մենք կլսենք քաղաքացիական հայցվորներին, այժմ նշենք, որ Նախաքննության ժամանակ, սկզբնական շրջանում, պարոն Ինալ Կայան չի ասում, որ ինքը կրակել է Ջուլֆայանի վրա: Ընդունում է, որ ձեռքին ատրճանակ է եղել, որով կարող էր կրակել, բայց օգտագործել է միմիայն Ջուլֆայանին զինաթափելու փորձ անելու համար:

Ի վերջո, սակայն, պարոն Ինալ Կայան ընդունում է, որ ինք -

-- էջ 85 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

Նաձիգով անձնավորությունը, այսինքն՝ Ջուլֆայանը, զուգարանից շարժվել է գլխավոր հյուպատոսի աշխատասենյակի ուղղությամբ: Առաջինը ինքն է կրակում Ջուլֆայանի կամ նրա ձեռքին գտնվող զենքի ուղղությամբ, որին իր ինքնաձիգի կրակոցով հակազդում է Ջուլֆայանը: Այնուհետև Ինալ Կայան ինքնաբերաբար երկրորդ անգամ է կրակ բացում:

Ահա՛ իրավիճակը՝ ըստ գործի:

Պարոն Ջուլֆայան, այժմ դուք պիտի պատմեք, թե այդ ամենն ինչպե՞ս է տեղի ունեցել:

Ձեր ձեռքին զենք եղել է հենց սկզբի՞ց, թե՞ Ինալ Կայայի դիմադարձությունից քիչ առաջ:

ՋՈՒԼՖԱՅԱՆ (Թարգմանի միջոցով) – Դիմադարձությունից քիչ առաջ:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրիշ հարց: Կալաշնիկով արագաձիգը դրվա՞ծ էր որևէ տեղ, թե՞ Նա վերցրել է իր ընկերոջից:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Երբ ես հյուպատոսարան մտա, իմ ձեռքին ուսապայուսակ կար, Կալաշնիկովը մեջն էր: Հենց նկատեցի, որ իմ բարեկամը՝ Ալեքը...

ՆԱԽԱԳԱՀ - Խոսքը Գևորգ Գյուզեյանի մասին է:

ՋՈՒԼՖԱՅԱՆ ... հակամարտության մեջ է ոստիկանի հետ, պայուսակից հանեցի Կալաշնիկովը: Դռների մեջ ես նկատեցի մեկին, որն ինձ էր Նայում ու անմիջապես սրահի խորքը փախավ:

ՆԱԽԱԳԱՀ (Թարգմանին) - Ուրեմն ի՞նքն էլ է գտնվել թիվ մեկ միջանցքում:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Իհարկե, թիվ մեկ միջանցքում էի: Ես, ուրեմն, պայուսակս ցած դրի ու հետապնդեցի այն մարդուն, որը վարչական նիստերի սրահի խորքը մտավ:

ՆԱԽԱԳԱՀ - Ինքը նրան հետապնդել է վարչական նիստերի սրահում:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Այո՛, ես վարչական նիստերի սրահի դռնից նայում էի փոխհյուպատոսի աշխատասենյակի կողմը, աշխատասենյակի ներսը և այդ պահին դուռը, որը գտնվում էր սենյակի հակառակ ծայրին, պատուհանների ուղղությամբ, փակվեց:

ՆԱԽԱԳԱՀ - Փոխհյուպատոսի և ընդհանուր հյուպատոսի աշխատասենյակների միջև գտնվող դուռը:

-- էջ 86 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Այո՛: Ես մոտեցա փակված դռանը, բացեցի, շրջվեցի դեպի պատուհանները և նրան, ով գտնվում էր գլխավոր հյուպատոսի աշխատասենյակի ներսում, հրամայեցի դուրս գալ:

ՆԱԽԱԳԱՀ - Առանց տեսնելու՞: Դուք նրան չէիք տեսնում, չէ՞:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Իհարկե չէի տեսնում, բայց հրամայեցի... Նա չպատասխանեց: Ես կրկնեցի հրամանը և ուղղվեցի դեպի հաղորդակցության դուռը, որն ամենայն հավանականությամբ տանում էր դեպի զուգարան: Հաղորդակցության այդ դուռը կիսաբաց էր: Մինչ կրկնեի հրամանը, զուգարանի միջանցքում, այդ փոքրիկ սենյակում գտնվող ինչ-որ մեկը կրակեց իմ վրա:

ՆԱԽԱԳԱՀ - Նա տեսե՞լ է ձեռքը, որն իր վրա գեսք է ուղղել:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Ես հենց դա էի ուզում ասել: Այդ պահին ձեռքը, որ իմ վրա էր ուղղել գեսքը, մի քանի անգամ կրակեց, որից հետո անհայտ անձնավորությունը փախավ դեպի միջանցք, պատուհանների ուղղությամբ:

ՆԱԽԱԳԱՀ - Նա վստահ է, որ մի քանի անգամ են կրակել: Մինչև այդ պահը թվում է, թե միայն մեկ կրակոց պիտի եղած լինի:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Վստահ եմ, որ մի քանի անգամ են կրակ բացել:

ՆԱԽԱԳԱՀ - Հետո՞:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Հետո ես էլ փորձեցի կրակել:

ՆԱԽԱԳԱՀ - Փորձե՞լ է, թե՞ կրակել:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Գնդակը չթռավ, որովհետև փակադակը չէի բացել:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն, նա ուզել է կրակել իր արագածիգով, բայց չի հաջողվել, որովհետև փակադակը հանած չի՞ եղել:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Հենց այդ պահին էլ դեպի սենյակի խորքը նահանջելով, հանեցի:

ՆԱԽԱԳԱՀ - Քանի՞ անգամ է կրակում, կրակահերթ բաց թողնում:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Միայն մեկ անգամ, մեկ կրակահերթ: Ես շատ լավ հասկանում էի, թե ինչ եմ անում:

ՆԱԽԱԳԱՀ - Նա զգացե՞լ է, որ վիրավոր է:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Անշուշտ, գիտեի, որ վիրավորված եմ:

ՆԱԽԱԳԱՀ - Ո՞ր պահին է զգացել, որ վիրավոր է: Ինքը մեզ

-- էջ 87 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

ասում է. «Ես տեսա մի ձեռք, որ զենք էր բռնել, որը դուրս ելավ դռնից և բազմաթիվ անգամներ կրակեց»: Մինչդեռ նախաքննության ժամանակ Ինալ Կայան ցուցմունք է տվել, որ միայն մեկ անգամ է կրակ բացել: Ջուլֆայանը այդ պահի՞ն է զգացել, որ գնդակ է դիպել իր արագածիզին:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Ինչ խոսք, զենքն ուղղված էր իմ վրա:

ՆԱԽԱԳԱՀ - Նրա ձեռքին արագածիզ է եղել: Ինալ Կայայի կրակոցը դիպել է արագածիզին: Սա կարևոր հանգամանք է: Ջուլֆայանի զենքի փողը պետք է թեքված լիներ մի կողմի վրա կամ օդ ուղղված լիներ: Ինքն զգացե՞լ է, որ ձեռքի արագածիզին գնդակ է դիպել: Նման հարցերը հանգամանալից պատասխաններ են ակնկալում:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Իմ զենքի վրա գնդակի հարված չեմ զգացել: Կարող եմ միայն ասել, որ կրակել են իմ ուղղությամբ, և ես վիրավորվել եմ:

ՆԱԽԱԳԱՀ - Այդ նույն պահի՞ն է ինքը համազարկով հակադարձել:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Այո՛, այդպես է եղել:

ՆԱԽԱԳԱՀ - Քանի որ հրացանազարկը Ինալ Կայային էր ուղղված, հսկիչ-պահապանը կրակե՞լ է երկրորդ անգամ:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Այո՛, իհարկե, նա երկրորդ անգամ էլ կրակեց:

ՆԱԽԱԳԱՀ - Մեղադրյալն ասում է, որ նկատել է դռնից ուղղված զենքը: Իր դիմաց Ինալ Կայա՞ն է եղել: Ի՞նչ դիրքով: Չպետք է մոռանալ, որ հսկիչ-պահապանն էլ ծանր վիրավոր է եղել: Նա Ինալ Կայային որևէ դիրքով տեսե՞լ է, երբ կրակել է իր վրա:

ՋՈՒԼՖԱՅԱՆ - Ո՛չ, ես նրան չեմ տեսել:

ՆԱԽԱԳԱՀ - Եթե Ինալ Կայային ոչ մի ակնթարթ չի տեսել, ինչպե՞ս է բացատրում իր վիրավորվելը: Պետք է, որ իրենք դեմ-դիմաց լինեին, ընդ որում՝ ոչ նույն դիրքով: Պարոն Ինալ Կայան անկասկած առաջ է հակված եղել: Եթե նրանք դեմ-դիմաց էլ չեն եղել, իրար տեսել են: Ջուլֆայանը որևէ ակնթարթ անպայման պետք է տեսած լինի Կայային:

ՋՈՒԼՖԱ ՅԱՆ - Այդ սենյակում, զուգարանում մուժ էր, լույս չկար...

ՆԱԽԱԳԱՀ - Քանի որ ինքը նրա վրա կրակել, վիրավորել է, ուրեմն որևէ ակնթարթի դեմ-դիմաց եղել են: Պարոն փորձա -

-- էջ 88 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

գետ, պարզաբանե՛ք իրավիճակը...

ՋՈՒԼՖԱ ՅԱՆ - Նա կրակահերթ բաց թողեց, ահա, այս ուղղությամբ ու նահանջեց սենյակի խորքը, դեպի գլխավոր հյուպատոսի աշխատասենյակը:

ՆԱԽԱԳԱՀ - Այդ կրակահերթը տասնհինգ գնդակի՞ց է եղել: Չե՞ որ դեպքի վայրում տասնհինգ պարկուճ է գտնվել, թե՞ նույն զենքով այլ կրակոցներ էլ են եղել:

ՋՈՒԼՖԱ ՅԱՆ - Կարծում եմ, եղել են:

ՆԱԽԱԳԱՀ - Ինքը կարծում է, որ տասնհինգ փամփուշտներն էլ այդ պահի՞ն են կրակվել:

ՋՈՒԼՖԱ ՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Ապա երկուսն էլ վիրավորվել են: Հետո՞ ինչ է տեղի ունեցել: Խնդրում եմ չծավալվել... Ջուլֆայանը վիրավորված է եղել, չէր կարող գործուն դեր ստանձնել: Նրա վիրավորվելուց հետո Գյուլգեյլա՞նն է այդ նույն սենյակը մտել:

ՋՈՒԼՖԱ ՅԱՆ - Որպեսզի իրավիճակը լավ պատկերացնեք, ես ինձ թույլ եմ տալիս մանրամասնությունների մեջ մտնել:

ՆԱԽԱԳԱՀ - Ի՞նչ մանրամասներ:

ՋՈՒԼՖԱ ՅԱՆ - Իմ հետ քաշվելուց հետո տեղի ունեցած մանրամասների: Երբ նահանջեցի գլխավոր հյուպատոսի աշխատասենյակը, զգացի, որ իմ ետևում վիրավոր մի ուրիշն էլ կա, ու մենք երկուսով դուրս եկանք այդ սենյակից, մտանք փոխհյուպատոսի աշխատասենյակը:

ՆԱԽԱԳԱՀ - Նա այլևս ոչինչ չունի՞ ասելու արածների և պարոն Ինալ Կայայի հետ ունեցած փոխիրաձգության մասին:

Գյուլգեյյան, այդ կապակցությամբ ձեզ հարցաքննել են: Դուք նկատել եք, որ Ջուլֆայանը վիրավորված է եղել: Օգնել եք, որ նստի կամ պառկի:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Կրակոցից մի քանի րոպե անց, նախքան սենյակից դուրս գալը, ես նրա ետևում էի:

ՆԱԽԱԳԱՀ - Ըստ որոշ վկաների և հենց իրեն՝ Ինալ Կայայի, դուք ձեր ընկերոջ վերքերը նկատի ունենալով, նման նախադասություն եք արտաբերել. «Թշնամին ստացավ իր պատիժը, բոլոր նրանք, ովքեր կոխմադրեն, իրենց պատիժը կստանան»: Ճիշտ է, որ նման բան եք ասել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ո՛չ, ճիշտ չէ:

ՆԱԽԱԳԱՀ - Ընդհանուր դատապաշտպան, հարցեր ու -

-- էջ 89 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

Նե՞ք:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՇՏՊԱՆ - Ո՛չ:

ՆԱԽԱԳԱՀ (Ջուլֆայանին) - Դուք նստեցեք: Պարոն Գյուլգեյյան, անդրադառնում եմք Ձեմալ Էոզենի նկատմամբ կանխամտածված սպանության խնդրին:

Սկզբում, երբ ձեզ այդ կապակցությամբ հարց են տվել, դուք չեք ցանկացել պատասխանել, բայց հետո քննիչներին խոստովանել եք, որ ձեր կրակոցն է եղել պարոն Էոզեն Ջեմալի մահվան պատճառը: Այսօր էլ նույնը հաստատում եք:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Մյուս երեք մասնակիցները, գործից ելնելով, պնդում են, թե իրենք չեն տեսել՝ ինչպես է դա տեղի ունեցել: Նրանց ծանրաբեռվածությունը թույլ չի տվել ականատես լինել թուրք պահապանի սպանությանը: Այդպե՞ս է:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛, պարոն նախագահ:

ՆԱԽԱԳԱՀ - Այդ դիպվածի մասին մյուս վկաների հայտարարությունները տարբեր են, այնպես որ շատ դժվար է հիմնավոր, որոշակի կարծիք կազմել: Հիշեցնում եմ, որ դրա պատճառը իրադրության խառնաշփոթությունն է, ինչպես նաև այն խառնաշփոթությունը, որն առկա է վկաների ցուցմունքներում:

Ամեն դեպքում՝ ես ուզում եմ վկայակոչել մանրամասները: Իհարկե, որոշակի հայտնի չէ, թե որտե՞ղ է կատարվել միջադեպը՝ վարչական նիստերի սրահի ներսում, թե՞ մուտքի մոտ: Պարզված է միայն, որ գնդակի հարվածն ստանալուց

հետո պարոն Էոզենը ընկել է կամ նրան պառկեցրել են թիվ մեկ միջանցքի մեջտեղում, տեսնում եք գծագրի վրա նշանը, «արյուն և այլն» մակագրությունը:

Հարկ եմ համարում հիշեցնել նաև, որ դատաձգաբանական փորձաքննությունը այնպիսի տվյալ չի հաղորդում, որով հնարավոր լիներ պարզել, թե ո՞ր պարկուճով, ինչպիսի՞ զենքով է սպանվել պարոն Էոզենը:

Վերջապես նշեմ, որ փամփուշտը մտել է քունքի ձախ, ելել ճակատի աջ մասից: Կրակոցի հետագիծը ձախից աջ, հետևից առաջ է:

Դարձյալ տիկնայք և պարոնայք երդվյալներին իրազեկելու համար ուզում եմ, Գյուզեյյան, հաղորդել ձեր հայտարարությունների բուն էությունը, որոնք դեպքի կապակցությամբ

-- էջ 90 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏՐ

արել եք: Սկզբում դուք ասում եք. «Ես ուղղվեցի դեպի թիվ մեկ միջանցքը»:

Դա նշանակում է, որ, ըստ ձեզ, թուրք հսկիչ-պահապանի մահը տեղի է ունեցել Ինալ Կայայի և Ջուլֆայանի հակամարտությունից հետո:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Լա՛վ, այդ մասին հետո: Ուրեմն, «Ես ուղղվեցի դեպի թիվ մեկ միջանցքը, դեմ առ դեմ հանդիպեցի հյուպատոսարանի հսկիչ-պահապանին: Նա ձեռքին ատրճանակ ուներ: Իմ մի ձեռքին ատրճանակ կար, մյուսին՝ նռնակ: Հսկիչ-պահապանը չկրակեց, որովհետև մեր միջև պատանդ էր գտնվում: Ես կտրուկ մի կողմ թեքվեցի, մոտեցա հսկիչ-պահապանին ու զենքս քունքին սեղմեցի: Ասացի, որ ատրճանակը ցած գցի, չհնազանդվեց, նկատեցի, որ ուզում է կրակել, ես կրակեցի: Մենք քաշքշում էինք իրար, հսկիչ-պահապանը շարժում արեց, գնդակը նրան դիպավ»:

Սա ձեր երեք հայտարարություններից մեկն է: Երկրորդում դուք ասում եք. «Ես հաստատում եմ, որ սպանված հսկիչ-պահապանը զենք ուներ և դիպվածի ժամանակ ձեռքում էր»:

Հիշեցնեմ երրորդ հայտարարությունը. «Ես ու պահապանը քաշքշում էինք իրար: Նա ձեռքին զենք ուներ: Ես էլ: Այդ քաշքշոցի ժամանակ էլ իմ ատրճանակից գնդակը թռավ: Ես միայն մեկ անգամ եմ կրակել, երբ զենքը սեղմել եմ քունքին»:

Համաձայն եք, որ դուք արել եք այս հայտարարությունները:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք ասում եք, որ այդ ամենը տեղի է ունեցել Ջուլֆայան-Ինալ Կայա միջադեպից հետո: Ինքներդ որտեղի՞ց էիք գալիս, որ ուղղվեցիք թիվ մեկ միջանցքը:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Հյուպատոսի և Ջուլֆայանի փոխհրաձգությունից հետո ես հայտնվեցի Ջուլֆայանի ետևում, մենք դուրս եկանք գլխավոր հյուպատոսի աշխատասենյակից, ուղղվեցինք դեպի փոխհյուպատոսի աշխատասենյակը: Այնտեղ, աշխատասենյակի ետևում, որտեղ գծագրում նշված է «գենք», երկու հոգի կար:

Մի քանի վայրկյան հետո կրակոց լսվեց, որը գծագրի, ահա՛, այս մասում ծակեց-անցավ դուռը: Այդ ժամանակ ես քաշեցի նռնակի ձգանակը, որ գլխավոր հյուպատոսի աշխատասենյակը մտնեմ:

-- էջ 91 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

ՆԱԽԱԳԱՀ - Դուք նռնակի ձգանակը քաշեցի՞ք:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛, սենյակում մուտք էր: Բայց հենց դռան մոտ հասա, հենց որ կարողացա դուռը տեսնել, միմարդու նկատեցի, որը գլխավոր հյուպատոսի աշխատասենյակից ելնում, շարժվում էր դեպի թիվ երկու միջանցքը: Նա վազում էր: Ես հետ դարձա, մտա փոխհյուպատոսի աշխատասենյակը, կտրեցի-անցա, հասա վարչական նիստերի սրահը և սրահի ու թիվ մեկ միջանցքի անկյունում հանդիպեցինք իրար:

ՆԱԽԱԳԱՀ - Այդ պահին ձեր ձեռքին ի՞նչ գենք կար: Ձգանակը քաշված նռնակով ի՞նչ էիք ուզում անել: Բաց նռնակը վտանգավոր է:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես այդ դեպքից հետո քաշեցի ձգանակը: Ամեն ինչ շատ արագ կատարվեց:

ՆԱԽԱԳԱՀ - Թուրք պահապանի հետ բախվելու պահին նռնակը դեռևս ձեր ձեռքի՞ն էր:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Սարսափելի է:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես չհասցրի նռնակի ձգանակը հետ սեղմել:

ՆԱԽԱԳԱՀ - Եթե ձեզ ճիշտ հասկացա, հսկիչ-պահապանի հետ հակամարտության ամբողջ ընթացքում բաց նռնակը ձեր ձեռքին է եղել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ստիպված էի, եթե թողնեի, կայայթեր:

ՆԱԽԱԳԱՀ - Այնուամենայնիվ, դա չափազանց վտանգավոր է: Դուք զբաղված էիք հսկիչ-պահապանով և ձեր ձեռքին առանց ձգանակի նռնակ ունեիք: Բավական էր մի պահ միայն մատները թուլացնել, և բոլորը կայաթեին:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Իմ պատկերացումով՝ նռնակը ձեր ձախ ձեռքում էր, չէ՞:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛, այդպես էր:

ՆԱԽԱԳԱՀ - Աջ ձեռքում ի՞նչ զենք ունեիք:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Չենքերից մեկն էր, բայց չգիտեմ, թե որը:

ՆԱԽԱԳԱՀ - Ամենայն հավանականությամբ՝ ձեր զենքերը ձեռքից-ձեռք էին անցնում:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Իրավացի եք:

ՆԱԽԱԳԱՀ - Պահապանի ձեռքին էլ զենք կա՞ր:

-- էջ 92 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛, նա զենք ուներ:

ՆԱԽԱԳԱՀ - Կրակե՞ց:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ո՛չ: Ես չեմ տեսել:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք միշտ կրկնել եք, որ հսկիչ-պահապանը չի կրակել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո պահին, քաշքշոցի ժամանակ, չկրակեց:

ՆԱԽԱԳԱՀ - Այնուհետև պայքարի մեջ եք մտնում նրա հետ: Բացատրեցե՛ք, թե ի՞նչ պայմաններում կրակեցիք հսկիչ-պահապանի գլխին: Ի՞նչ դիրքում էիք գտնվում, որքա՞ն հեռու էիք իրարից: Ֆիզիկական ուժ գործադրեցի՞ք միմյանց նկատմամբ, և ինչպե՞ս եղավ, որ սեղմեցիք ձգանակ ու փամփուշտը հսկիչ-պահապանի գլուխը մխրճվեց:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Մենք քաշքշում էինք իրար: Մի պահ ես թևիս տակ առա նրա ատրճանակը, բայց հենց հետ քաշեց, տեսա, որ պահել է ուղիղ իմ վրա: Ես արդեն ասել եմ, որ մենք իրար չափազանց մոտ էինք, իմ ատրճանակը սեղմել էի նրա քունքին: Ու քանի որ իրենը չափազանց մոտ էր ինձ, ստիպված եղա կրակել:

ՆԱԽԱԳԱՀ - Այս ամենը նորություն է:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ո՛չ, ես առաջ էլ եմ նույնը ասել:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք որոշակիորեն չեիք ասել, որ նրա ատրճանակը քսան ասնտիմետր էր հեռու ձեր դեմքից:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես արդեն հայտարարել ու բացատրել եմ, թե ինչպես է ամեն ինչ տեղի ունեցել:

ՆԱԽԱԳԱՀ - Մի խոսքով, շարունակեք...

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես մի անգամ կրակեցի ու ամեն բան վերջացավ: Նա ընկավ:

ՆԱԽԱԳԱՀ - Ինչո՞ւ սեղմեցիք ձգանը: Դուք ասում էիք, որ ատրճանակը նրա գլխին էիք պահել: Ինչո՞ւ կրակեցիք, ինչո՞ւ սպանեցիք:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Նախ, ես հսկիչ-պահապանին սպանելու միտք չունեի: Ես ամեն ինչ արեցի դրանից խուսափելու համար, բայց նրա զենքն արդեն դիպչում էր ինձ, իմ ձեռքին նռնակ կար, իսկ միջանցքում երեսուն հոգուց ավելի էր հավաքվել:

ՆԱԽԱԳԱՀ - Լա՛վ, ընդունեցինք... Երկու հիմնական հարց է առաջանում: Առաջին՝ այդ դիպվածում հսկիչ-պահապանը կրա -

-- էջ 93 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

Կե՞լ է, և երկրորդ՝ նա զենք ունեցե՞լ է:

Ես կարծում եմ, որ առաջին հարցի կապակցությամբ խնդիր չի առաջանա, հենց նոր դուք ասացիք՝ հսկիչ-պահապանը չի կրակել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Չի կրակել, պարոն նախագահ:

ՆԱԽԱԳԱՀ - Քանի որ ինքներդ եք ընդունում, որ չի կրակել, դրա վրա կանգ առնելու հարկ չկա: Երկրորդ հարցը՝ դուք հայտարարել եք, որ հսկիչ-պահապանը ձեռքին զենք ուներ, որը ձեր դեմքին շատ մոտ էր պահել: Նա իսկապե՞ս զինված է եղել, թե՞ ոչ: Այս հանգամանքը փոխում է իրավիճակի բնույթը:

Իմ կողմից ի՞նչ կարող եմ ավելացնել: Այն, որ հսկիչ-պահապանի գործերում գտնվել է զենք ունենալու և գործածելու իրավունք, որը, հասկանալի է, բացատրվում է իր աշխատանքի բնույթով: Այդ իրավասությունը 1980-ի հոկտեմբերի 8-ին նրան շնորհել է ոստիկանական վարչությունը:

Կա մի վկա՝ Յագիջի Սելիմը, որին մենք վաղը կլսենք, բայց որի խոսքերը ես ուզում եմ մեջբերել: «Մեր հսկիչ-պահապանը,- Էոզենի մասին ասել է նա,- ձեռքին զենք չունեի, թերևս մարմնի որևէ մասում կրում էր, բայց ես չեմ տեսել»: Քիչ ուշ, հակադարձությանն անդրադառնալով, նա ավելացնում է. «Հսկիչ-պահապանը գոտու մեջ խրած զենք ուներ, բայց ես հանելը չեմ տեսել»:

Ըստ գործի, իրականում նա միակն է, որ մի պահ ընդունում է՝ հսկիչ-պահապան
Էոզենը կարող է զենք ունեցած լինել:

Կան ևս երեք վկաներ, որոնց հայտարարությունը պետք է մեծագույն
վերապահությամբ ընդունել, որովհետև իրականում նրանք շատ ավելի խոսում են
Ֆահրի Գալիի միջադեպի, քան այն ամենի մասին, ինչը իրար դեմ է լարել պարոն
Էոզենին և պարոն Գյուզեյանին:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Այդ նույն պարոն Յազիջին (նայեցեք գործի 534-րդ էջը)
հայտարարում է, որ հսկիչ-պահապանի հետ փոխհրաձգություն է տեղի ունեցել:
Հասկանալի է, այդպիսի բան չէր կարող լինել, քանի որ վկան թուրք է,
միտումնավոր խառնում է փաստերը:

ՆԱԽԱԳԱՀ - Այդ տողերը կարելի է կարդալ, քանի որ ձեր հիշատակած պարոնը
վկա չի կանչված: Նա հետևյալն է ասում. «Մորուքավորը,- խոսքը ձեր մասին է,
Գյուզեյան՝,- կարգադ -

-- էջ 94 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

րեց տեղից չշարժվել, անմիջապես մի քանի անգամ կրակեց: Մենք իսկույն և եթե
պառկեցինք հատա կին... Դրանից հետո ոչինչ չտեսա: Մորուքավորի ու
հյուպատոսարանի հսկիչ-պահապանի միջև փոխհրաձգություն սկսվեց:
Առաջինը մորուքավորը կրակեց, գնդակը դիպավ հսկիչ-պահապանի գլխին:
Հսկիչ-պահապանը մեկ անգամ կրակեց, բայց կարծում եմ՝ ոչ ոքի չվիրավորեց»:

Ուրեմն՝ ահա՛ մի վկայություն, ըստ որի հսկիչ-պահապանը զենք է ունեցել:

Մի այլ վկա նախ ասում է, որ նրա զենքը չի տեսել, այնուհետև հայտարարում է, որ
գոտիկի արանքն է եղել, բայց չի հանել:

Ուրեմն, վստահությամբ կարելի է պնդել, որ ոստիկանը զինված է եղել: Պետք է
ճշտել նաև երկու հանգամանք: Առաջին՝ խոսքը ինչպիսի՞ զենքի մասին է, և
երկրորդ՝ ի՞նչ է եղել այդ զենքը: Այն չէր կարող գոլորշիանալ, պետք է որ որևէ տեղ
լինի:

Այս առումով, Գյուզեյան, դուք գործի մեջ որոշ շփոթ եք ստեղծել: Ուզում եմ ձեզ
հիշեցնել ձեր իսկ հայտարարությունները: Մի պահ դուք ասում եք. «Ես խլեցի
հսկիչ-պահապանի ատրճանակը, որը հետո նետեցի փոքր սենյակը»: Այդ դեպքում
պիտի գտնեին, բայց չեն գտել: Այժմ անդրադառնանք ձեր երկրորդ
հայտարարությանը: Քննիչը ձեզ ցույց է տվել դեպքի վայրում գտնված տարբեր
զենքերի և զինամթերքի լուսանկարները (մի լուսանկարում երեք ատրճանակ է
եղել), և դուք ասել եք. «Լուսանկարի թիվ երկու զենքը Հերստալ ատրճանակ է, որը
պատկանում էր մահացած հսկիչ-պահապանին»: Դա ճիշտ չէ, հայտնի է, որ

Հերստալ ատրճանակը պատկանել է երկրորդ հսկիչ-պահապանին՝ Գալի Ֆահրիին, և ձեզնից մեկնումեկն է խլել նրանից:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Խոսքը ինը միլիմետրանոց Հերստալի մասին է.

ՆԱԽԱԳԱՀ - Դուք չէիք կարող այդ Հերստալը Էոզենից վերցրած լինել այն պարզ պատճառով, որ ատրճանակը պատկանել է Գալի Ֆահրիին, որը և հետագայում կորցրել է:

Այնուհետև դուք հայտարարել եք. «Երբ ես գնացի հյուպատոսին ընդառաջ, գրպանումս Բրաունինգ ունեի, որը հսկիչ-պահապանից էի վերցրել և հետո գցեցի»:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ճիշտ է, այդպես եմ ասել:

ՆԱԽԱԳԱՀ - Բայց ըստ այդ հայտարարության՝ դուք Էոզենից ոչ թե Հերստալ եք վերցրել, այլ՝ Բրաունինգ:

-- էջ 95 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

Այժմ հարց, որը շարունակությունն է այն ամենի, ինչ հենց նոր ասում էի: Եթե պահապան Էոզենն իրոք ատրճանակ է ունեցել, որը, ըստ ձեր տարբերակի, Բրաունինգ է եղել, հարկ էր այն գտնել: Մինչդեռ, երբ հյուպատոսարանի իրադարձություններն ավարտվում են, և պարոն Հուբարդ դուրս է բերում այն պայուսակը, որի մեջ զենքերն ու այլ զինամթերքներ են լինում, ի՞նչ է պարզվում: Որ պայուսակում չորս տարբեր բնույթի զենք կա՝ երկու Բրաունինգ-Հերստալ, որ ձերն են, ինքներդ եք ներս տարել, Ինալ Կայայի Բրաունինգ-Հերստալը, որը վերցրել էր իր գրասենյակից, որով կրակել էր Ջուլֆայանի վրա, ինչպես նա և մի ուրիշ Հերստալ, որը պատկանել է հսկիչ-պահապան Գալի Ֆահրիին: Ուրիշ ոչ մի, մասնավորապես Բրաունինգ մակնիշի ատրճանակ չի հայտնաբերվել, որ կարող էր պատկանել Էոզենին:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Մեր պայուսակում կար Կալաշնիկով, երկու Բրաունինգ ատրճանակ, Հերստալ, երկու նռնակ և պայթուցիկ: Ահա՛ բոլորը:

ՆԱԽԱԳԱՀ - Նույնն էլ ես եմ ասում: Եթե հսկիչ-պահապան Էոզենն ատրճանակ ուներ, ո՞ւր կորավ...

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես պարոն հյուպատոսի ատրճանակը չեմ տեսել:

ՆԱԽԱԳԱՀ - Ատրճանակը դրված է եղել գրասենյանին, այն օգտագործել է Ինալ Կայան: Բացի դրանից, առկա է ևս երեք ատրճանակ՝ երկու Բրաունինգներ, որոնք ձերն են, ինչպես նաև հսկիչ-պահապան Գալի Ֆահրիի Հերստալը: Ուրեմն՝ եթե Էոզենը, ինչպես դուք եք հայտարարում, զինված էր, ատրճանակն ի՞նչ եղավ:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես գիտեմ միայն, որ մահացած թուրք հսկիչ-պահապանի Բրաունինգը զուգարանն եմ նետել:

ՆԱԽԱԳԱՀ - Եթե նման զենք գոյություն ունենար, և դուք զուգարանը նետած լինեիք, կգտնվեր, անպայման կգտնվեր:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես պնդում եմ, որ ատրճանակը զուգարանն եմ նետել:
Սեպտեմբերի 25-ին, գիշերվա 2-ն անց 25-ին դուրս եմ եկել հյուպատոսարանից, տեղյակ չեմ, թե հետո ինչ է եղել:

ՆԱԽԱԳԱՀ - Բոլոր դեպքերում խնդիրն այն է, որ եթե պարոն Էոզենը իսկապես Բրաունինգով զինված լիներ, կգտնվեր: Մինչդեռ շատ ականատեսներ վկայում են, որ հակամարտության ժամանակ հսկիչ-պահապանի ձեռքին ոչինչ չի եղել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Եթե նա զինված չլիներ, այդպիսի բան չէի

-- էջ 96 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ասի, որովհետև մենք առանձին չէինք, մեր շուրջը շատերը կային, որ տեսնում էին Նրա ատրճանակը: Ես բազմիցս հայտարարել եմ, որ նա զինված է եղել և այժմ էլ պնդում եմ:

ՆԱԽԱԳԱՀ - Լա՛վ, համաձայն եմ, բայց վկաների մեծ մասը հաստատում է, որ նրա ձեռքին ոչինչ չի եղել, գլխով է հարվածել ձեզ, որ զինաթափի:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ուզում եմ որոշակիացնել, հյուպատոսարանում երկու կռիվ է եղել...

ՆԱԽԱԳԱՀ - Բայց ցուցմունքներում դուք մի անգամ ասում եք, որ նրա ձեռքին Հերստալ է եղել, հետո պնդում եք, որ Հերստալը Գալի Ֆահրիինն է եղել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Հերստալը զինաթափված թուրք ոստիկանինն է և ոչ թե մահացածինը:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք մի անգամ նման բան ասել եք...

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Եվ այժմ կրկնում եմ...

ՆԱԽԱԳԱՀ - Մի պահ դուք պնդում եք, որ Հերստալը, որը խլել եք, Էոզենինն է եղել, հետո փոխում եք ձեր ցուցմունքը, այն վերագրում եք Գալի Ֆահրիին, վերջում էլ ասում եք, որ նրա զենքը Բրաունինգ է եղել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես լավ եմ հիշում, Հերստալն եմ խլել:

ՆԱԽԱԳԱՀ - Տեսե՛ք, միայն մի վկա կա, որը հավաստում է, որ Էոզենը զինված է եղել: Այդ վկան Նույնիսկ ցուցմունք է տվել, որ նա կրակել է, մինչդեռ դուք ասում եք, որ չի կրակել: Ուստի Նույնպիսի վերապահությամբ պիտի վերաբերվել այդ վկայի

հայտարարություններին: Ուրեմն առկա է ձեր հայտարարությունը, որ նա չի կրակել, և բազմաթիվ վկաներինը, որոնք նրա ձեռքին գենը չեն տեսել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Երկու կռիվ է ախր եղել, մեկը գործողության սկզբում՝ պարոն հյուպատոսի, ինչպես նաև իմ ընկերոջ վիրավորվելուց առաջ:

ՆԱԽԱԳԱՀ - Լավ, հսկիչ-պահապանի մահվան հետ կապված միջադեպն ավարտելուց առաջ նշենք, որ բազմաթիվ վկաների հավաստմամբ, պարոն Էոզենը իսկույն չի մահացել, հոգեվարքը երկար է տևել: Ոմանց կարծիքով՝ մի քանի ժամ: Ես ընդունում եմ՝ գործում նշված է, որ նրա մարմինը հյուպատոսարանի շեմից վերցրել են 19-ն անց 48 րոպեին՝ այդ ժամանակ փայտացած է եղել, որը հիմք է տալիս ենթադրելու, որ մահը մի

-- էջ 97 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

քանի ժամ առաջ է վրա հասել: Սակայն որոշ վկաներ այնուամենայնիվ պնդում են, որ «նրան երկար ժամանակ հոգեվարքի մեջ եք թողել»: Ես չեմ հաշվել, բայց բազմաթիվ վկաներ են կրկնում այս նույն բանը, չնայած նման պայմաններում դժվար է ժամանակը որոշակիացնելը:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես չեմ կարծում, որ հոգեվարքը երկար է տևել: Ճշգրտելը, իրոք, հնարավոր չէ, բայց հազիվ թե երեսուն կամ քառասուն հինգ րոպեից ավելի լինի:

ՆԱԽԱԳԱՀ - Վաղը, եթե ես մոռանամ, հիշեցրե՛ք, որ դիահերձման փորձագետին հարցնենք, թե ստացած վերքերից Էոզենը որքա՞ն ժամանակ կարող էր ապրել: Վաղը կանդրադառնանք այդ միջադեպին:

Տիկնայք և պարոնայք երդվյալներ, հսկիչ-պահապանի մահվանն առնչվող հարց ունե՞ք: Իսկ քաղաքացիական հայցվորներ՞ը:

ՊԱՇՏՊԱՆ ՍԱՐԴԱ - Ես շատ հարցեր չունեմ, քանի որ գրեթե բոլորն էլ դուք տվեցիք, սակայն ձեր միջոցով ուզում եմ պարզել հետևյալը. պարոն Էոզենը մեղադրյալի գնդակի դիպչելու պահին ճչացե՞լ է, և եթե այո՛, ապա որոշակի ի՞նչ: Այս հանգամանքը շատ կարևոր կարող է լինել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Չեմ հիշում:

ՊԱՇՏՊԱՆ ՍԱՐԴԱ - Պարոն Ինալը, երբ հոկտեմբերի 14-ին հարցաքննել են հիվանդանոցում, ցուցմունք է տվել, որ դեպքի պահին ոչ միայն կրակոց, այլև թուրքերեն ճիչ է լսել. «Այրվում եմ՝ մամա՛, մամա՛», որից հետո էլ ըստ երևույթին սկսվել է պարոն Էոզենի հոգեվարքը: Այս ամենը լսելուն պես, ինքը, ինչպես բացատրել է ոստիկաններին, փախել, թաքնվել է զուգարանում, որտեղ և գտել են նրան: Հարցս հետևյալն է, մեղադրյալը ճի՞շտ է վերհիշում դեպքերի հաջորդականությունը:

ԳՅՈՒԶԵԼՅԱՆ - Նախ չմոռանանք, որ խոսքը այնպիսի մեկի մասին է, որի գլխին գնդակ է դիպել: Ձեմալ Էոզենը ոչինչ էլ չի բղավել, դուք կարող եք փորձագետներին հարցնել՝ նա, ում քունքի մեջ փամփուշտ կա, ի վիճակի՞ է որևէ բան ասել:

ՊԱՇՏՊԱՆ ՍԱՐԴԱ - Ընդամենը երկու բառ է առաջ դուք պնդում էիք, որ ոչինչ չեք հիշում, իսկ հիմա հավաստում եք, որ նա չի ճչացել:

ԳՅՈՒԶԵԼՅԱՆ - Թող փորձագետներն իրենց վերջնական

-- էջ 98 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

խոսքն ասեն:

ՊԱՇՏՊԱՆ ՍԱՐԴԱ - Հարցը ես ձեզ եմ ուղղում: Այո՛, ընդունում եմ, որ տարբերակներ կարող են լինել, բայց վկաների մեծ մասը հաստատում է, որ հսկիչ-պահապան Էոզենը նետվել է ձեր վրա, որ կապկապի: Մի ոմն Կեյսեր, որը հյուպատոսարան է եկել, որպեսզի ֆրանսերեն թարգմանել տա ընտանեկան ինչ-որ վկայական, այսինքն անկողմնակալ վկա է, պատմել է, որ ոստիկանը զրուցելիս է եղել իր հետ, բայց նկատելով զինված մորուքավորին, նետվել է, որ զինաթափի, և մորուքավորը կրակել է նրա գլխին:

Ասացե՛ք, մի՞թե իսկապես նրա ձեռքին զենք է եղել:

ԳՅՈՒԶԵԼՅԱՆ - Այո օրերից ի վեր ես շատ ապրումներ եմ ունեցել... Ինչ վերաբերում է վկաներին, չեմ ուզում, չեմ կարող բոլորի հետ վիճել:

ՊԱՇՏՊԱՆ ՍԱՐԴԱ - Երեսուն վկաներ հաստատում են, որ...

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Ճշմարտությունը մեծամասնությամբ չի որոշվում:

ՊԱՇՏՊԱՆ ՍԱՐԴԱ - Բայց այն փնտրում են:

ՆԱԽԱԳԱՀ - Մնաց մեղադրական ատյանի՝ ձեր դեմ ուղղված վերջին ամբաստանությունը՝ բռնությունը, որ գործադրվել է պարոն Բալթասոլլուի նկատմամբ: Նա հրազենի հարված է ստացել, որի հետևանքով վիրավորվել է ոտքի բթամատը:

Ի՞նչ է հայտարարում պարոն Բալթասոլլուն: Հակասական վարկածներ: Որ նա շրջագայել է հյուպատոսարանում, հայերը ներս են խուժել, պարոն Էոզենը բռնել է մորուքավորի՝ այսինքն պարոն Գյուլգեյանի ձեռքը և կարճ քաշքշոցից հետո պարոն Գյուլգեյանն իր իսկ զենքով կրակել է հսկիչ-պահապանի գլխին: Մի այլ տեղ էլ նա պնդում է, որ ոստիկանը զենք չի ունեցել, որ հսկիչ-պահապան Էոզենի վրա կրակ բացելուց հետո թիվ մեկ անհատը (խոսքը ձեր մասին է, Գյուլգեյան) նորից է կրակել ընկած ոստիկանի վրա և (իր վկայությունն եմ ընթերցում) «քանի որ ես

տասնհինգ-քսան սանտիմետր էի հեռու, Գյուլգեյյանի կրակած գնդակը կպավ ոտքիս»:

Ահա՛, ընդհանուր առմամբ, պարոն Բալթասոլուկի դիրքորոշումը: Ակնհայտորեն՝ այս պարագայում նույնպես ոչինչ հստակ չէ, քանի որ գործում եղած ոչ մի փաստաթղթով չի հիմնավոր -

-- էջ 99 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

վում: Ուրեմն, ըստ նրա, Գյուլգեյյա՛ն, դուք գլխին հասցված կրակոցով գետին եք տապալում չզինված հսկիչ-պահապանին, վերջինս ընկնում է, ու քանի որ դուք շարունակում եք կրակել, իսկ ինքը շատ մոտ է լինում, վիրավորում եք նաև իրեն: Մինչդեռ, ըստ գործի, դուք հայտարարել եք, որ դա անհնար է, քանի որ՝ կարդում եմ. «Ես միայն մի անգամ եմ կրակել, երբ զենքս սեղմել եմ հսկիչ-պահապանի գլխին»:

Կարո՞ղ եք այժմ ավելի որոշակի բացատրել, թե ի՞նչ է տեղի ունեցել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես արդեն ասել եմ, որ ինքս եմ վիրավորել պարոն Բալթասոլուկին: Նրա վիրավորված լինելու մասին կես ժամ հետո իմացա, ու քանի-որ պնդեց, թե պատճառը ես եմ եղել, ընդունեցի: Ինքս անձամբ չգիտեմ, թե ինչպես է նա վիրավորվել:

ՆԱԽԱԳԱՀ - Իր հայտարարություններից հնարավոր չէ շատ բան պարզել, որովհետև գործողությունների բուն ընթացքը չի համընկնում իր վկայություններին: Լա՛վ, վերջացնենք: Ինչպես արդեն ասել էի, ես երեք կարճ հարց ունեմ, որոնք թերևս ձեզ դրդեն ասելու այն, ինչ ասել եք երեկ: Խոսքը ավելի ընդհանուր երևույթների մասին է: Մեզ՝ դատավորներիս և տասներկու երդվյալներիս, որոնք ներկայացնում են ֆրանսիացի ժողովրդին, չնայած արդեն բացատրել եք ձեր գործողության դրդապատճառները, ամենից առաջ հետաքրքրում է, թե ինչո՞ւ նախ՝ 19-րդ դարի վերջին և ապա 20-րդ դարի սկզբին, 1915-ից 1917 թվականը, Առաջին աշխարհամարտի տարիներին պատահած համեմատաբար հին դեպքերի համար դուք 1981-ին պայքարում եք Թուրքիայի, ժամանակակից թուրք ժողովրդի դեմ:

Այս կապակցությամբ, մինչև ձեր պատասխանը լսելը, ես ուզում եմ երկու մեջբերում անել: Մի մտավորական, որը, կարելի է ասել, մտայնությամբ ձեզ շատ մոտ է, վերջերս, հանրահավաքի ժամանակ հայտարարել է. «Թուրքերին՝ միայն այն բանի համար, որ թուրք են, սպանելով չէ, որ մենք պիտի պաշտպանենք մեր դատը»: Իսկ մի պատմաբան, որն այստեղ հանդես է գալու պաշտպանականով, չնայած չեմ ուզում կանխել նրան, բայց հիշատակեմ, թե ինչ է գրում իր մի աշխատությունում. «Աչքի փոխարեն աչք, արյան փոխարեն արյուն պահանջելը կարող է ող -

ՀԱՅԵՐԻ ԴԱՏՈՒ

բերգությամբ ավարտվել: Ավելի կարևոր է բացատրելը, քան պատժելը: Եվ հետո՝ ո՞ւմ պատժել: Հայրերի ոճի ընտրություն տարի անց չպիտի ծանրանա որդիների վրա, չնայած որդիները չպետք է այն անտեսեն»: Ահա Ա՛ս մի տեսակետ քննարկվող հարցերի առնչությամբ: Ուրեմն ի՞նչ իմաստ ունի 1981 թվականի Թուրքիայի եւ թուրքերի դեմ նման գործողություն ձեռնարկելը:

ԳՅՈՒԶԵԼՅԱՆ - Մեր գործողությունը թուրքերի դեմ ուղղված չէր, ազգային դատը վերարժարծելու նպատակ էր հետապնդում:

ՆԱԽԱԳԱՀ - Բռնության, միևնույն իսկ մահվան հասցնելու միջոցով: Ակնհայտ է, որ ինչ էլ լինի, պարոն Էոզենին բացարձակապես չի կարելի մեղադրել այն իրադարձությունների համար, որ վաթսուև տարի առաջ տեղի են ունեցել Թուրքիայում: Ուրեմն ձեր գործունեությունը չի բացառում, որ բոլորովին անմեղ մարդիկ, ինչպես արդեն տեղի ունեցավ, իրենց մահը գտնեն: Այս հարցը ձեզ չի՞ մտահոգել:

ԳՅՈՒԶԵԼՅԱՆ - Մեր ընդհանուր հայտարարությամբ կարծում եմ որոշակիորեն բացատրել եմ, թե ի՞նչ պատճառով ենք բռնարարքի դիմել: Ինքս էլ լավ գիտեմ, որ դարասկզբի դեպքերի ժամանակ պարոն Էոզենը դեռ չէր ծնվել, բայց՝ ես նույնպես: Խնդիրն այն է, որ թուրքական կառավարությունը դեռևս գրավված է պահում մեր տարածքները և այդ առնչությամբ քաղաքական որևէ քայլ կատարել հնարավոր չէ: Բոլոր այն դրերը, որոնք կարող էին երկխոսության միջոցով արդյունքի հասցնել, փակ են: Ուրեմն, մեր երկիրը վերադառնալու համար մենք ստիպված ենք զենք վերցնել: Ահա՛ այն ամենը, ինչ կարող եմ ասել:

ՆԱԽԱԳԱՀ - Նույնիսկ անմեղների կյանքի՞ գնով:

ԳՅՈՒԶԵԼՅԱՆ - Նույնիսկ մե՛ր կյանքի գնով:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք կարող եք այդպես արտահայտվել, որովհետև պայքարը ձերն է, որը, միևնույն ժամանակ, հավանաբար, շարունակելու եք: Բայց իմ հարցը բոլորովին այլ անձնավորության մասին է: Պարոն Էոզեն Ջեմալն ի՞նչ կապ ունի այդ ամենի հետ:

ԳՅՈՒԶԵԼՅԱՆ - Ես արդեն ասել եմ, որ նրա հետ մենք կռվել ենք, երկուսս էլ զինված ենք եղել, խառնաշփոթություն է

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

տիրել: Չգիտեմ, էլ ի՞նչ ավելացնեմ:

ՄԻՍԼՅԱՆ - Մեր պայքարը ոչ թե վրիժառության, այլ մեր իրավունքների համար է:

ՆԱԽԱԳԱՀ - Ինչպե՞ս, բացատրեք խնդրեմ:

ՄԻՍԼՅԱՆ - Հարցը միայն թուրք լինելը չէ, այլ մեր տարածքները բռնազավթած պահելը: Բոլոր թուրքական կառավարություններն էլ պատասխանատու են, որովհետև մինչև այժմ տիրում են մեր հողերին:

ՆԱԽԱԳԱՀ - Համաձայն եմ:

ՄԻՍԼՅԱՆ - Ուստի, մեղսակից են նախկին կառավարությանը:

ՆԱԽԱԳԱՀ - Ձեր դիրքորոշումը թուրքական իշխանությունների նկատմամբ ես ընդունում եմ, բայց ձեր պայքարը կարող է հանգեցնել այնպիսի մարդկանց զոհվելուն, որոնք այդ ժամանակ ծնված էլ չեն եղել, ոչ մի առնչություն չեն ունեցել 1915-17 թվականների դեպքերին: Ես կուզեի, որ դուք ֆրանսերեն պատասխանեիք:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸԶԵՐ - Փորձեցե՛ք ֆրանսերեն խոսել:

ՆԱԽԱԳԱՀ - Ի՞նչ կարող եք ասել այս կապակցությամբ:

ՄԻՍԼՅԱՆ - Մենք նույնպես զոհեր ենք... Չեմ կարող ֆրանսերեն արտահայտվել:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Ֆրանսերեն ճիշտ ձևակերպումը չի կարողանում գտնել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Մենք ընդվզած զոհեր ենք, մինչև այժմ ամենայն պարկեշտությամբ պահանջել ենք մեր պատմական իրավունքները, ոչ ոք մեզ չի լսել: Ու քանի որ բոլոր խաղաղ միջոցները ձախողվել են, որոշել ենք կյանքի գնով զինված պայքար մղել: Ահա՛ իսկությունը:

ՆԱԽԱԳԱՀ - Լա՛վ: Երրորդ հարցը: Ես հասկանում եմ, իհարկե, որ Թուրքիայի հյուպատոսարանը դիվանագիտական վայր է, Թուրքիայի տարածքի մի մասնիկը, սակայն, ավելի մեծ հաշվով, ինչո՞ւ են նման գործողություններ հենց Ֆրանսիայում կատարվում: Ես դարձյալ ուզում եմ մեջբերել գաղափարներով ձեզ շատ մոտ մի լրագրողի բառերը, որը արդեն հիշատակված հանրահավաքի վերլուծականում եզրակացնում է. «Հայկական հարցի լուծումը Թուրքիայի բռնազավթած տարածքներում է և ոչ այլուր»: Կարծում եմ ճիշտ ձևակերպեցի նրա միտքը:

Իմ հարցը հետևյալն է, որն ի վերջո կարող է տալ ամեն ոք՝

-- էջ 102 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Եթե նրանք իրենց դատն են հետապնդում, պայքարում այդ դատի համար, թող գնան Թուրքիա: Ինչո՞ւ են ուրիշ երկրներում, մասնավորապես Ֆրանսիայում նման գործողություններ կատարում:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Կարծում եմ՝ դուք ծանոթ եք հայտարարությանը, որ մենք տարածել ենք պատանդ վերցնելուց շատ առաջ:

ՆԱԽԱԳԱՀ - Այն, որը 1983 թվականի հոկտեմբերի՞ն է թվագրված:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Մեր՝ հյուպատոսարանում պատանդ վերցնելը փաստորեն առաջին նման քայլն է Սփյուռքում: Դրանից առաջ և հետո Թուրքիայի տարածքում բազում բռնարարքներ են կատարվել, բայց թուրքական կառավարությունը չի ուզել այդ մասին խոսել: Ահա՛ թե ինչու մենք ստիպված ենք եղել գործողություններ ի կատար ածել Ֆրանսիայում, Եվրոպայում, Միացյալ Նահանգներում ու ամ բողջ աշխարհում:

ՆԱԽԱԳԱՀ - Հաջորդ հարցը, որ ուզում եմ տալ և որի պատասխանը ակնկալում եմ, հետևյալն է՝ որքանո՞վ եք դուք ճիշտ համարում բռնության օրինականացումը: Ես ուզում եմ անդրադառնալ նույն պատմաբանին՝ պարոն Տերնոնին, որն իր գրքերից մեկն ավարտում է այսպես. «Լռության մի անհաղթահարելի (ես կավելացնեի՝ բռնության) պատ բաժանում է հայ և թուրք ժողովուրդներին: Այդ պատը պետք է քանդել և պատմական վիճարկման ասպարեզ բացել»:

Ի՞նչ կարծիք ունեք այս մասին: Կարծո՞ւմ եք, որ բռնարարքներից բացի այլ լուծում չկա:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Հարցը չհասկացա:

ՆԱԽԱԳԱՀ - Խոսքը բացահայտ զինված պայքարով (ես ձեր հայտարարությունից եմ ելնում) նպատակներին հասնելու մասին է: Դուք համոզվա՞ծ եք, որ Հայկական հարցը լուծելու ուրիշ ոչ մի ուղի գոյություն չունի: Մնացած բոլոր միջոցները փորձարկվա՞ծ են:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Եթե գոնե մի այլ արդյունավետ միջոց լիներ, զենք չէինք վերցնի: Մենք փակուղու առջև ենք, ստիպվա՞ծ ենք բռնարարքների դիմում և ոչ թե այն բանի համար, որ զենք ենք սիրում:

ՆԱԽԱԳԱՀ - Չխոսենք ձեր արարքի արդյունավետության

-- էջ 103 --

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ

մասին, որովհետև բոլորն էլ գիտեն, որ ձեր պահանջներից և ոչ մեկին ուղղակի գոհացում չի տրվել: Ավելի ընդհանուր՝ ինչպե՞ս եք գնահատում ձեր գործողության հետևանքները, ձեր պաշտպանած դատի համար նպաստավոր համարո՞ւմ եք: Գտնո՞ւմ եք, որ այն իրոք օգտակար է եղել Հայկական հարցն ավելի լավ ծանոթացնելուն:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Կարծում եմ, որ այդ հարցը հայ ժողովրդին պետք է ուղղել: Համենայն դեպս, մենք չէ, որ պիտի պատասխանենք:

ՆԱԽԱԳԱՀ - Ուզում եմ իմանալ, թե դուք ինքներդ ի՞նչ զգացողություն ունեք: Խնդրում եմ, սրահի խորքում լռություն պահպանեք, մի՛ միջամտեք:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Նորից եմ կրկնում՝ ես չեմ կարող այդ հարցին պատասխանել: Ինչ ուղղակիորեն վերաբերում է մեր գործողությանը՝ լրատվամիջոցներն ավելի են սկսել հետաքրքրվել Հայոց դատով, քան տասը տարի առաջ:

ՆԱԽԱԳԱՀ - Լա՛վ, եթե համաձայնեք, սրանով այսօրվա դատաքննությունն ավարտենք: Վաղը կլսենք փորձագետներին, հասարակական նախարարության, քաղաքացիական հայցվորների հրավիրած վկաներին...

Ծափահարություններ սրահի խորքում:

Հսկիչներ, դո՛ւրս հանեք ժողովրդին: Նախագգուշացնում եմ, եթե նման արարքներ կրկնվեն, կպահանջեմ, որ ամենայն խստությամբ զտեն նիստերին մասնակցել ցանկացողներին: Դատաքննության արդյունավետության համար անհրաժեշտ է, որ ամեն ոք ինքնատիրապետումը չկորցնի:

Դատաքննությունն ավարտվում է:

-- էջ 104 --

-- էջ 105 --

-- էջ 106 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

Հինգշաբթի, 26-ը հունվարի, 1984 թ.

“Վան” գործողության

փոխհրամանատար Գևորգ Գյուլգեյանը

Գևորգ Գյուլգեյանի գլխավորած “Մեծն Մուրադ” ջոկատը

Արցախի ազատամարտում

-- էջ 107 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

-- էջ 108 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

-- էջ 109 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ

Դատաքննությունը վերսկսվում է:

ՆԱԽԱԳԱՀ - Փորձագետների ունկնդրությունն սկսելուց առաջ ուզում եմ տեղեկացնել ատյանին, քաղաքացիական հայցվորներին, հասարակական

Նախարարությանը, պաշտպանությանը, որ հենց նոր նամակ եմ ստացել, որը, ելնելով իմ իրավագործությունից, ուզում եմ հրապարակել:

Թվագրված է՝ 23-ը հունվարի, 1984 թ.:

«Պարոն նախագահ,

Որպես Փարիզից ընտրված միակ խորհրդական հայուհին՝ իմ պարտքն եմ համարում միջամտել և Ձեր ըմբռնումը, բարեհոգությունը հայցել չորս երիտասարդ հայրենակիցներիս՝ ազնվագույն դատի պաշտպանների հանդեպ, որոնց այժմ դատում եք...»:

Ստորագրված է՝ Մ. Յամուրյան, «Համախմբում հանուն հանրապետության» խմբակցության Փարիզի երկրորդ թաղամասի խորհրդական:

Անցնենք փորձագետների ունկնդրությանը: Լսում ենք բժիշկ Բելիին: Դուք դիտարկե՞լ եք Էոզեն Ջեմալի մարմինը: Ի՞նչ ունեք ասելու:

ԲԵԼԻ - 1981 թվականի սեպտեմբերի 25-ին մենք դիտարկե՞լ ենք մի մարմին, որը մեզ ներկայացվել է որպես պարոն Էոզենինը: Դիագնոստիկ պարզել է, որ մահը վրա է հասել քունքից տասը սանտիմետր հեռավորության վրա գտնվող հրազենի կրակոցից, ընդ որում՝ գնդակը դեպի աջ՝ հետևից առաջ անցնելով

-- էջ 110 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

դուրս է եկել ճակատի մեջտեղից, պատճառելով ուղեղի և գանգի ծանր վնասվածքներ:

Դիտարկումը ուրիշ ոչ մի ներքին խեղում կամ խանգարում չի բացահայտել:

Մենք նկատել ենք, որ փամփուշտի խոցած տեղում վառողի և այրուքի սև հետքեր կան, որոնք առանձնացրել ենք հատուկ քննության համար:

Դատաբժշկական այլ մասնավոր դիտարկումներ չեն կատարվել:

ՆԱԽԱԳԱՀ - Որոշ վկաներ պնդում են, որ հսկիչ-պահապանը նախքան մահանալը մի քանի ժամ հոգեվարք է ապրել: Նման վերքի դեպքում դա հնարավոր է:

ԲԵԼԻ - Հոգեվարքի ժամկետը դժվար է որոշակիացնելը: Վնասված օրգանները՝ նախաուղեղն ու փոքր ուղեղը, ամենայն հավանականությամբ, հասցրել են մահաքունի, որին էլ հաջորդել է բուն վախճանը: Համենայն դեպս՝ մի քանի ժամը չի բացառվում:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն, նա կարող է բազմաթիվ ժամեր ողջ եղած լինել:

Տիկնայք և պարոնայք երդվյալներ, բժիշկ Բելիին հարցեր ունե՞ք: Իսկ դո՞ւք, ընդհանուր պաշտպան:

Հարցեր չկան:

Ատյանը շնորհակալ է ձեզնից, բժի՛շկ, կարող եք գնալ:

Դոկտոր Մարտենի դատախոսումը:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք կատարել եք պարոն Բալթասոլուի և երկու մեղադրյալների՝ Հակոբ Ջուլֆայանի և Վազգեն Սիսյանի դատաբժշկական քննությունները:

ԲԺԻՇԿ ՄԱՐՏԵՆ - Պարոն Բալթասոլուն 1981 թվականի սեպտեմբերի 24-ին վիրավորվել է աջ ոտքի բթամատից: Քննիչներին մասնավորապես հետաքրքրում էր կրակոցի ուղղությունը:

Մեր դատաբժշկական եզրահանգումները հիվանդանոցի հետ լիովին չեն համընկնում: Այնպես է, որ նա հրագենի հարվածն ստացել է բթամատի ուղղությամբ, ընդհանուր առմամբ հետևից առաջ: Այսինքն դա այնքան էլ կարևոր չէ, որովհետև երբ նրան քննեցինք, ոչ մի հետևանք չէր մնացել: Ընդհանուր անաշխատունակությունը կազմում էր քսան օր, որը և մենք

-- էջ 111 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

տրամադրեցինք:

Շատ ավելի ծանր էր պարոն Ինալ Կայայի վիճակը, որին հիվանդանոց են հասցրել սեպտեմբերի 24-ին՝ ձախ կրծքավանդակի շրջանը մտած և նույն կողմի գոտկատեղից դուրս եկած փամփուշտի վերքով:

Սկզբում նրան տեղավորել են Պիտիե հիվանդանոցում, բացահայտել կրծքավանդակի ներթորանք: Պարոն Կայան մնացել է հսկողության տակ: Հանկարծ նրա վիճակը վատթարացել է, նորից են վիրահատել, պարզել, որ փայծաղի պատռվածք ունի, որ փամփուշտը խորը բացվածք է առաջացրել ստոծանիի ձախ կողմում: Վիրահատական գործողությունների հետևանքով հիվանդը խոցի նոպա է ունեցել:

Այնուհետև վրա է հասել ապաքինումը, և պարոն Կայան 1982-ի հունվարի 4-ին, այսինքն երեք ամսվա ընդհատումից հետո վերադարձել է իր սովորական առօրյային:

Երբ մենք նրան քննեցինք, հիմնական անհանգստությունը շնչարգելությունն էր: Նա, չնայած ժամանակին կոփված է եղել, չէր կարողանում արագ քայլել, աստիճաններով բարձրանալ, դժվարությամբ էր շնչում:

Մյուս երկու վիրավորների դեպքում բազմաթիվ դժվարություններ ունեցանք, որովհետև Ֆրեզնեյի հիվանդանոցում դատական բժիշկներին այնքան էլ սիրալիր չեն ընդունում: Հիվանդության պատմություններին ծանոթանալու համար մենք հնարավոր ու անհնարին անթիվ խոչընդոտներ հաղթահարեցինք: Բացի դրանից, այդ ժամանակ երկու ենթականերն էլ ամենևին չէին խոսում ֆրանսերեն, նրանց հետ դժվարությամբ էինք հաղորդակցվում՝ այն աստիճանի, որ ես չեմ էլ կարող ներկայացնել տվյալներն ու հաղորդումները, որոնք այս կամ այն կերպ ձեռք ենք բերել:

Ջուլիայանը Օթել-դիոյի հիվանդանոցում սեպտեմբերի 25-ից մինչև հոկտեմբերի 5-ը բուժել է հրազենի հարուցած կրծքաորովայնային վերքերը: Ավելի հանգամանալի քննությունը որովայնային խախտումներ չի բացահայտել: Բոլոր դեպքերում վիրաբույժները վիրահատել են որովայնը, հավաստել ներքին օրգանների անվնասությունը: Մենք նայել ենք շողանկարը, զարմացել՝ տեսնելով բազում, շատ մանր մետաղական պատռվածքներ, որոնք բոլորն էլ մարմնի մակերեսին են եղել, համենայն

-- էջ 112 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

դեպս վիրաբույժները ավելի խորքերում ոչինչ չեն հայտնաբերել: Մենք այդ պատռվածքների պատճառը չենք կարող բացատրել, մանավանդ որ Ջուլիայանի մարմնի վրա կան սպիներ, որոնք վաղուցվա հրազենային կրակոցների հետևանք կարող են լինել:

Ելնելով մեր ունեցած տվյալներից՝ քառասունհինգ օրվա անգործունեության ժամկետ ենք սահմանել:

Այնուհետև քննել ենք մի ուրիշ վիրավորի՝ Չավեն Հակոբյանին...

ՆԱԽԱԳԱՀ - Խոսքը Վազգեն Սիսյանի մասին է:

ԲԺԻՇԿ ՄԱՐՏԵՆ - Հակոբյանի մասին ոչինչ չեմ կարող հաղորդել: Մեզ հայտնի է միայն, որ հրազենով կրծքաորովայնային վերք է ստացել, փամփուշտը մտել է աջ անրակի տակից: Ելնելով այդ վերքից և այն վիճակից, որին ականատես եղանք, մենք նրան հինգ-վեց շաբաթվա անկարողության ժամկետ հատկացրինք:

ՆԱԽԱԳԱՀ - Տեր և տիկին երդվալներ՝, հարցեր ունե՞ք: Իսկ քաղաքացիական հայցվորներ՞ը:

Հարցերչկան:

Ատյանը շնորհակալություն է հայտնում ձեզ, բժիշկ:

Փորձագետ Սեկալդիի դատախոսումը:

ՓՈՐՁԱԳԵՏ ՍԵԿԱԼԴԻ - Մենք քննության ենք ենթարկել որոշակի քանակությամբ զենքեր, բայց միշտ չէ, որ կարողացել ենք պարզել համապատասխանությունը փամփուշտներին՝ ոչ թե տեսակի, այլ կիրառման վայրի առումով: Ահա՛, դուք այստեղ տեսնում եք.

7.62 միլիմետրանոց Կալաշնիկով արագաձիգ,

9.9 միլիմետրանոց Հերստալ ատրճանակ,

9.9 միլիմետրանոց Բրաունինգ ատրճանակ,

9.9 միլիմետրանոց մի ուրիշ Բրաունինգ, մի այլ՝ Պարաբելլում ատրճանակ, մարտական գնդացիր, որոշակի քանակությամբ պահունակներով փամփուշտներ, որոնք, հասկանալի է, կարելի էր կրակել թվարկված զենքերից յուրաքանչյուրով:

Մենք քննության ենք ենթարկել արյան բծերով մի պարկուճ, որը գտնվել է հյուպատոսի գրասենյակի զուգարանի հատակից: Դժբախտաբար արյան քանակը անբավարար էր, խումբը պար -

-- էջ 113 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

զել հնարավոր չեղավ:

Մեր տրամադրության տակ է նաև մետաղական շրջանակով արևի ակնոց, որը 1-ին խմբի արյան հետքեր ուներ վրան, բայց մենք չպարզեցինք, թե որոշակի ո՞ւմ արյունն էր, որովհետև դա նշանակություն չուներ:

Ահա՛, ընդհանուր առմամբ, մեր փորձաքննությունների արդյունքը:

ՆԱԽԱԳԱՀ - Մի այլ հարց: Հայտնի է, որ թուրք հսկիչ-պահապանը սպանվել է գլուխը ծակած-անցած գնդակով: Առկա է նաև մի ուրիշ վիրավոր, որի աջ ոտքի բթամատն է վիրավոր վել: Հնարավոր է արդյոք, որ երկու հոգին էլ այդ՝ միևնույն գնդակով խոցված լինեն:

ՓՈՐՁԱԳԵՏ ՍԵԿԱԼԴԻ - Չի բացառվում, բայց պնդել նույնպես հնարավոր չէ:

ՆԱԽԱԳԱՀ - Վերջին հարցը՝ եթե ես ճիշտ հասկացա, պարոն Գյուզեյանը մոտավորապես ասում էր հետևյալը. «Հսկիչ-պահապանի ուղղությամբ կրակելու ժամանակ իմ մի ձեռքին ատրճանակ կար, մյուսում՝ նռնակ, որի ձգանակը քաշել

էի»: Այդպիսի բան հնարավոր է: Ի՞նչ վտանգ է ներկայացնում ձգանակը քաշած
նռնակը: Վերջապես, կարելի՞ է նռնակի ձգանակը հետ ամրացնել, անվնաս
դարձնել:

ՓՈՐՁԱԳԵՏ ՍԵԿՎԼԴԻ - Դա շատ վտանգավոր է, հազիվ թե հնարավոր լինի:

ՆԱԽԱԳԱՀ – Ուրեմն պետք է ենթադրել, որ տվյալ անձը այժմ ձեռքով բռնել է
ատրճանակը, ձախով՝ ամուր սեղմել նռնակը, միաժամանակ երկու ձեռքերից որև
է մեկով էլ ձգանակը պահել:

ՓՈՐՁԱԳԵՏ ՍԵԿՎԼԴԻ - Հավանական է, որ զենքը բռնած ձեռքն է քաշել նռնակի
ձգանակը, որովհետև նռնակը կարելի է պահել միայն ազատ ձեռքով ու
ատրճանակը սեղմած ձեռքի երկու մատներով մի կերպ քաշել ձգանակը: Տեղը
ղնելն անհամեմատ դժվար է, քանի որ մի ձեռքը լիովին զբաղված է: Ես չգիտեմ, թե
խոսքն ինչ հրազենի մասին է, բայց բոլոր դեպքերում ափը պետք է սեղմված լինի:

ՆԱԽԱԳԱՀ - 9 միլիմետրանոց Բրաունիևգ է եղել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Հարց եմ տալիս՝ նռնակի ձգանակը հնարավոր է ատամներով
քաշել:

ՓՈՐՁԱԳԵՏ ՍԵԿՎԼԴԻ - Այո՛, եթե ատամների չես ավստ -

-- էջ 114 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

սում, բայց նույն ձևով ամրացնելն ինձ գրեթե անհնար է թվում:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Կան երկու լուսանկարներ, որոնք վկայում են, որ ես նռնակ եմ
ուներեցել, որի ձգանակը քաշված է եղել, բայց հետո, երբ ուսապայուսակով հանձնել
եմ, ձգանակը տեղն է եղել: Դա ապացույցն է այն բանի, որ նռնակի ձգանակը շատ
հեշտ կարելի է հանել ու հետ՝ տեղը դնել:

ՆԱԽԱԳԱՀ - Ուզում եք ասել, որ երբ պատանդի հետ մոտեցել էիք պատուհանին,
ձեր ձեռքի նռնակի ձգանակը քաշված էր:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրիշ հարցեր չկա՞ն:

Հարցեր չկան:

Շնորհակալություն: Ինչպիսիք ինդրում եմ մոտենալ ամբիոնին: Ասացե՛ք ձեր
անունը, ազգանունը, տարիքը, մասնագիտությունը, բնակավայրը:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Ես կոչվում եմ Ինալ Կայա, ծնվել եմ 1937-ին, Ստամբուլում: Այժմ
Փարիզի փոխիյուպատոսն եմ, ապրում եմ 16-րդ թաղամասում:

ՆԱԽԱԳԱՀ - Մենք ձեզ լսում ենք քաղաքացիական հայցվորի հանգամանքով, նկատի ունենալով իմ իրավագործությունը, առանց երդման, որպես պարզ տեղեկատու:

Խնդրում եմ որքան հնարավոր է հանգամանորեն պատմել այն ամենը, ինչ տեղի է ունեցել սեպտեմբերի 24-ին, անդրադառնալով նաև ձեր վիրավորվելու մանրամասներին:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - 1981-ի սեպտեմբերի 24-ին ես հյուպատոսարանում, իմ գրասենյակում էի: Մոտավորապես ժամը 11-ը կլիներ, 10:30-ից անց, 11-ից առաջ: Հանկարծ հյուպատոսարանի մուտքից, այսինքն թիվ մեկ միջանցքից կրակոց լսեցի: Միայն թե նախ ես ուզում եմ ճշգրտում կատարել իմ ձեռքին եղած գծագրում: Փոխհյուպատոսի գրասենյակից միջանցք բացվող դուռ է պատկերված, որը ճիշտ է, բայց այդտեղ պահարան էր դրված, այսինքն դուռը չէր գործում: Ուրեմն, փոխհյուպատոսի աշխատասենյակը երկու գործող դուռ է ունեցել, որոնցից մեկը տարել է վարչական նիստերի դահլիճը, մյուսը՝ գլխավոր հյուպատոսի գրասենյակը:

Կրակոցից հետո ես թուրքերեն հոգեվարքի տևքոց լսեցի ու վեր կացա: Ինձ հետ գտնվողները դեպի վարչական նիստերի սրահը տանող դուռը նետվեցին, ես շտապեցի գլխավոր հյուպատոսի աշխատասենյակը, պահարանից վերցրի Հերստալ-Բ-

-- էջ 115 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

րաունինգ ատրճանակը, ուղղվեցի դեպի այն անկյունը, որտեղ, գծագրում, հենց զուգարանների առջև, «արյուն» է գրված: Այնտեղ ևս երկու դուռ կա, որոնցից մեկը տանում է մշակութային կցորդի, մյուսը՝ գլխավոր հյուպատոսի գրասենյակները: Ես նետվեցի դեպի մշակութային կցորդի աշխատասենյակը, բայց դուռը կողպեքով փակված էր, հետ դարձա: Հենց այդ պահին էլ նկատեցի գնդացրով զինված մեկին, որը փոխհյուպատոսի գրասենյակի պատուհանի կողքի դռնով գլխավոր հյուպատոսի սենյակը մտավ, նայեց գրասեղանին ու լիցքավորեց զենքը: Մի պահ քարացա, բայց նա, ըստ երևույթին, նկատեց, որ դուռը շարժվեց, առաջացավ իմ ուղղությամբ: Ու հենց զգուշությամբ դուռը կիսով չափ բացեց, ես մի ձեռքով հրեցի նրա գնդացրի փողը, որ պեսզի ինձնից հեռացնեմ, մյուսով կրակեցի զենքի վրա: Ուզում էի այն անգործածելի դարձնել: Հետո իմացա, որ իմ դիմաց պարոն Ջուլֆայանն է կանգնած եղել: Նա ճչաց՝ չգիտեմ ցավի՞ց, թե՞ զարմանքից, բայց համենայն դեպս ճիշ էր, հետո սկսեց նահանջել, միաժամանակ կրակել: Ու քանի որ Ջուլֆայանը մինչև փամփուշտների սպառվելը կրակում էր, ես ոչինչ անել չէի կարողանում: Իմ աչքերի դիմաց ամեն ինչ սև էր, ես միայն փողից հորդացող կրակն էի տեսնում: Ի վերջո, հարմար պահը որսալով, կքվեցի, մտա դռան հետևը, այնտեղ, որտեղ արյան հետքերի նշաններ են արված: Գծագրում

դուք տեսնում եք նաև երեք այրուք, որ պատի վրայի երեք փամփուշտների տեղերն են: Կրկնում եմ՝ այս ամենը տեղի է ունենում զուգարանի առջև: Եվ քանի որ երկու պարկուճ է գտնվել, այժմ արդեն ընդունում եմ, որ երկրորդ անգամ եմ կրակել նրա ուղղությամբ: Չգիտեմ քանի՞ անգամ եմ սեղմել ձգանը, բայց, ըստ երևույթին, երկու անգամ կրակել եմ: Դրանից հետո հրաձգությունն ընդհատվեց, պարոն Գյուլգեյանը դարձյալ փոխհյուպատոսի գրասենյակի պատուհանի մոտի դռնից մտավ գլխավոր հյուպատոսի առանձնասենյակը, իսկ պարոն Ջուլֆայանը գենքը ձեռքին շրջվեց, ընկավ կրծքի վրա: Գյուլգեյանը թևերով գրկեց նրան, հարցրեց, թե ի՞նչ է պատահել, մարտընկերն ամենայն հավանականությամբ ասաց, որ «այս կողմից կրակում են»: Երկուսով դուրս եկան: Ես դեռևս չէի ընկել:

Նայեցի գենքիս, նկատեցի, որ չի լիցքավորվում, մտածեցի հավանաբար ժանգոտվել է, որովհետև հասկանալի չէր, թե ինչ -

-- էջ 116 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

չու ինքնաձիգ ատրճանակի շնիկը չպիտի գործի: Իրոք, բացեցի պահուսակը, տեսա, որ մի փամփուշտ թեքվել է: Ուղղեցի, լիցքավորեցի գենքս, սպասեցի:

Պարոն Գյուլգեյանը մի անգամ էլ եկավ, թերևս ինձ նկատեց անկյունում ու իսկույն և՛եթ դուռը փակելով, հեռացավ: Վայրկյանները, թուպներն անցնում էին, իմ արյունը շարունակում էր հոսել, գլուխս պտտվում էր, այնպես որ ինքս ինձ ասացի. «Այսպես չի կարելի, պետք է վերջ տալ» ու դուրս եկա թաքստոցից: Բայց նախ բացեցի զուգարանի դուռը, փորձեցի որքան հևարավոր է հեռու նետել գենքս: Ես նախաքննությանը ներկայացրել եմ մի երկրորդ գծագիր, որտեղ նշել եմ, թե որտեղ եմ թողել գենքս, կարծեմ թիվ 11 խցիկում:

ՆԱԽԱԳԱՀ – Նշված են 10-ն ու 11-ը:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Հետո պառկեցի գլխավոր հյուպատոսի գրասենյակի ու զուգարանի անկյան միջև: Գյուլգեյանը երրորդ անգամ էլ հայտնվեց, տեսավ, որ ձեռքերս տարածած, մեջքի վրա պառկած եմ, ասաց. «Սա ստացել է իր պատիժը, բոլոր նրանք, ովքեր կոհիմադրեն, իրենց պատիժը կստանան»: Նա այս ամենը ասել է վարչական նիստերի դահլիճում, դուռը բաց թողել, հեռացել: Ես փորձեցի տեղափոխվել, ուզում էի հեռանալ այնտեղից, որտեղ իմ գենքն էր գտնվում ու այդպես հայտնվեցի գլխավոր հյուպատոսի սենյակում:

Այնուհետև պարոն Գյուլգեյանը չորրորդ անգամ եկավ, նկատեց, որ տեղաշարժվել եմ, ինքնաձիգը վրաս ուղղեց, թուրքերեն հարցրեց՝ «Ձեռքդ ո՞ւր է»: Հայտնեցի, որ ինձ լավ չեմ զգում: Հարցրեց, թե ո՞վ կրակեց: Ես ցույց տվի ուղղությունը՝ «Այն կողմից կրակում են, այն կողմ մի՛ գնա ցեք»: Նայեց ինձ, հեռացավ:

Երբ նա գնաց, նորից տեղափոխվեցի, մտա իմ գրասենյակը, բազկաթոռի վրայից վերցրի ծածկոցը, կուրծքս փաթաթեցի, քայլեցի մինչև վարչական նիստերի սրահի դուռը և տեսա Ջեմալ Էոզենի մարմինը: Այնտեղ, որտեղ գլուխն էր, գծագրի վրա «արյուն» է գրված, ոտքերը դռան կողմն էին:

Հետո պարոն Գյուզեյանը նորից հայտնվեց, ստիպեց, որ պառկեմ մյուս պատանդների կողքին, ես հրաժարվեցի, ասացի, որ ուզում եմ իմ գրասենյակում մնալ: Նա համաձայնվեց, և ես մեկնվեցի բուխարիկի կողքին, այնտեղ, որտեղ, ըստ գծագրի,

-- էջ 117 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

արյան հետքեր են եղել: Դրանից քիչ անց դարձյալ հրազենի ձայն լսեցի, բայց չեմ կարող ասել, թե ով էր կրակում:

Երեք անց կեսին մի պահ կարծես խաղաղություն իջավ: Գրոհայինները խոսում էին պատանդների, ինչպես նաև իրար հետ... Երբ իմ վիճակն ավելի վատացավ, ժամը մոտ 5-ին, կանչել տվի պարոն Գյուզեյանին, ասացի, որ ինձ այլևս չի կարելի պատանդ համարել, որովհետև մեկ ժամից կամ ժամ ու կեսից մահաքունը վրա կհասնի: Հենց մի անգամ էլ հայտնվեց, առաջարկեցի. «Ես մեռնելու եմ, արի փոխանակում անենք: Դուք էլ ինձ նման վիրավոր ունեք, եթե նա ինձ հետ հյուպատոսարանից դուրս գա, ֆրանսիական ոստիկանությունը ոչինչ չի անի»: Գյուզեյանը չհակառակվեց. «Համաձայն եմ, բայց դու պիտի համապատասխան արձանագրություն ստորագրես»:

ՆԱԽԱԳԱՀ - Եթե ցանկանում եք, մենք կարող ենք ներկայացնել ձեր քարտուղարուհու օգնությամբ կազմված գրությունը.

«Ես ներքոստորագրյալ ինչպես...» (ընթերցում է):

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Ես նման բաներ չեմ թելադրել, դրանք իմ բառերը չեն, ուղղակի ասել եմ՝ «գրեցեք, ինչ ուզում եք»: Ես չեի կարող տեղիցս վեր կենալ, ինչ-որ բան թելադրել, դժվարությամբ էի խոսում:

Մինչ այդ՝ ո՛չ Սիսյանին, ո՛չ էլ Բասմաջյանին չէի տեսել, հանդիպել էի միայն Ջուլֆայանին ու Գյուզեյանին: Առաջինը Սիսյանը շենքից դուրս եկավ, որից հետո, մի ժամ անց, իմ քարտուղարներից երկուսը ու մոտերքում գտնվող մի պատանդ ինձ մինչև շեմը հասցրին, այդ պես կարողացա ելնել հյուպատոսարանից:

ՆԱԽԱԳԱՀ - Ձեր ստացած վերքերը մինչև հիմա ձեզ անհանգստացնո՞ւմ են:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Իհարկե, կրծքավանդակի ցավեր, շնչարգելություն ունեմ, շատ շուտ հոգնում եմ, արյանս բաղադրությունը չի կանոնավորվում: Հենց այս պահին էլ եմ բուժում ընդունում, որովհետև երակաբորբի և թոքանոթների խցանման վտանգ

կա: Վերջերս սկսել եմ ավելի հաճախ հարբուխով հիվանդանալ, որի բուժումը նախկինից անհամեմատ երկար է տևում:

ՆԱԽԱԳԱՀ - Լա՛վ, ես ուզում եմ մյուսներին կանխել, առաջինը արժարծել մեզ հետաքրքրող հարցը, չնայած ձեր խորհր -

-- էջ 118 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

դականներից մեկը որոշ բացատրություն տվել է:

Երբ ծանոթանում ենք նախաքննության ժամանակ ձեր արած հայտարարություններին ու տված ցուցմունքներին, բացահայտում ենք մի հակասություն, որն անհնար է շրջանցել կամ անտեսել: Այսպես, հոկտեմբերի 14-ին դուք հայտարարել եք. «Հետո նա մոտեցավ այն սենյակին, որտեղ գտնվում էի ես, ինձ թվաց, թե սպանելու է, և, կամքիս հակառակ, կրակեցի նրա վրա»:

Մի ուրիշ անգամ՝ դեկտեմբերի 9-ին, քննիչի մոտ խոստովանել եք. «Նա զինված էր գնդացի-ատրճանակով, ներս մտնելու պահին մեզ բաժանող դուռը կիսաբաց էր, այսինքն ինքն ինձ չէր կարող նկատել, ես հնարավորություն ունե ի կրակելու, բայց չկրակեցի»:

Ավելի ուշ նշել եք. «Ձեռքով ես մի կողմ հրեցի նրա զենքի փողը, մենք հայտնվեցինք դեմ առ դեմ, կարող էի նրան խանգարել, զինաթափել...» և այլն, և այլն...

ՊԱՇՏՊԱՆ ՍԱՐԴԱ - Ո՛չ, պարոն նախագահ, նա շարունակում է. «Հրեցի ու նույն պահին, աջ ձեռքով կրակեցի նրա զենքի փակադակին»:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Առաջին իսկ հայտարարությունից ես ընդունել եմ, որ կրակել եմ նրա զենքի վրա, այսինքն՝ ատրճանակի ձգանը սեղմելով հրազենային կրակ եմ բաց թողել:

ՆԱԽԱԳԱՀ - Մի հանգամանք երեկ լուրջ վիճաբանության տեղիք տվեց, ասացե՛ք խնդրեմ՝ հյուպատոսարանի անվտանգությունն ապահովող երկո՞ւ հսկիչ-պահապան կա: Ի՞նչ պարտականություն ունի նրանցից յուրաքանչյուրը և արդյո՞ք միայն որոշակի տարածք պիտի վերահսկի:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Այն հսկիչ-պահապանը, որը Հերստալ ատրճանակով էր զինված, այսինքն Ֆահրի Գալին, կանգնում էր ընդհանուր հյուպատոսարանի մուտքի մոտ, շեմին: Նա ճշտում էր այցելուների ինքնությունը, խուզարկում հագուստները:

Երկրորդ հսկիչ-պահապանը, որը պետք է MP-5-ով զինված լինի (ահա, դուք տեսնում եք ցուցափեղկում), սովորաբար գտնվում էր հյուպատոսարանի ներսում: Սակայն հանգուցյալը՝ Ջեմալ Էոզենը, սեպտեմբերի 22-ին իմացել էր, որ Թուրքիայում զավակ է ունեցել, ինձնից արձակուրդ էր խնդրել և այդ պահին

պատահաբար էր գտնվում հյուպատոսարանում, զինված չէր: Ավելի ճիշտ, եկել էր փաստաթղթերը ձևակերպելու, որ

-- էջ 119 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

տուն մեկնի:

Ահա՛ թե ինչու նրա զենքը պահարանում փակի տակ էր:

ՆԱԽԱԳԱՀ - Ձեր կարծիքով՝ ե՞րբ է նա մահացել, որքա՞ն է տևել հոգեվարքը:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Մեկ կամ թերևս երկու ժամ: Ճշգրիտ չեմ կարող ասել, որովհետև իմ վիճակն էլ լավ չէր:

ՆԱԽԱԳԱՀ - Հասկանում եմ, դուք դարձյա՞լ գլխավոր հյուպատոսի տեղակալն եք:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Ո՛չ, ես փոխարինում եմ հյուպատոսին, նա մեկնել է:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն հիմա դո՞ւք եք գլխավոր հյուպատոսը:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Այո՛, պարոն նախագահ:

ՆԱԽԱԳԱՀ - Փարիզում դեսպանատո՞րն էլ կա:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Ճիշտ այդպես, Լամբալ ճեմափողոցում:

ՊԱՇՏՊԱՆ ՍԱՐԴԱ - Ձայնասփյուռի շենքի մոտ:

ՆԱԽԱԳԱՀ - Կուզեի մեղադրյալներին հարցնել, թե ինչո՞ւ են գրոհել հյուպատոսարանի և ոչ թե դեսպանատան վրա, բայց նախօրոք գիտեմ, պատասխանելու են, որ կազմակերպությունն է այդպես որոշել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛, մենք հյուպատոսարան մտնելու հրաման էինք ստացել:

ՆԱԽԱԳԱՀ - Դեսպանատունն ավելի լավ չէ՞:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ես արդեն ասել եմ, որ հյուպատոսարանը թուրքական գաղտնի ծառայության ապաստան է, մենք դա էլ ենք նկատի ունեցել:

ՆԱԽԱԳԱՀ (Ինալ Կայային) - Հյուպատոսարանը պատսպարո՞ւմ է թուրքական գաղտնի ծառայության գործակալներին, ինչպես պարոն Գյուզեյանն է հայտարարում:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Իհարկե՛ ո՛չ:

Ծիծաղ դահլիճում:

ՆԱԽԱԳԱՀ - Քաղաքացիական հայցվորներ, հարցեր ունե՞ք:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Ուզում եմ երկու ճշգրտում անել, որոնք գործում հստակ են, բայց լավ կլինե՞ր պարոն հյուպատոսը տեղեկացնե՞ր ատյանին:

Առաջին՝ նա ընդունո՞ւմ է, որ նախ ինքն է կրակել:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Այո՛:

-- էջ 120 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Երկրորդը՝ ինչպես պետք է հետևցնել ձեր հայտարարություններից՝ Ջուլֆայանը վիրավորվելուց հետո, հանկարծակիի գալով է կրակել, ընդ որում՝ առանց նշանառության: Այս հանգամանքը դուք հաստատո՞ւմ եք:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Ես ասել եմ ոչ թե «առանց նշանառության», այլ՝ «իմ ուղղությամբ»: Այո՛, այո՛, այդպես եմ ասել:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Բայց՝ առանց նշանառության:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Երկու կամ երեք մետրից նշան չեն բռնում:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Բայց դուք ասել եք, չէ՞, «առանց նշանառության»:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Այո՛, ընդունում եմ:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Ես ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել հետևյալ էական հանգամանքի վրա: Մինչև ճշմարտության բացահայտվելը, նույնիսկ 1983 թվականի մարտի 23-ին քննիչի ներկայությամբ կայացած առերեսման ընթացքում, պարոն Կայան չի ընդունել իր արածը, չի ասել, որ «Այո՛, ես կրակեցի առաջինը»: Բացեք գործի 1256-րդ էջը: Վերևում մենք կարդում ենք. «Քանի որ իմ ատրճանակից արձակված փամփուշտի պարկուճ է գտնվել, ինձ ցույց տրվել, հնարավոր է, որ ես էլ եմ կրակել»: Այլ կերպ ասած, Ջուլֆայանի ներկայությամբ անգամ, նա հակադրվել է իրականությանը, չի ընդունել, որ կրակել է...

Պարոն Մարսել Լըբլերի՝ ընդհանուր վերահսկողության գորախմբի տեսչի ունկնդրությունը: Երդման արարողակարգ:

ՆԱԽԱԳԱՀ - Պարոն տեսու՛չ, սեպտեմբերի 24-ին՝ ամբողջ հետմիջօրեին ու երեկոյան դուք ղեկավարել եք գործողությունները, մանավանդ՝ բանակցությունները, կարո՞ղ եք ատյանին պատմել, թե ինչպես է այդ ամենն ընթացել:

ԼԸԶԼԵՐ - Այդ ժամանակ ես քրեական բրիգադի հրամանատար էի, դեպքի մասին իմ ծառայությունները հայտնեցին ժա մը 11-ն անց 30 րոպեին: Բազմաթիվ քննիչների հետ Հոսման պողոտա փուլացի մոտավորապես 12-ն անց 15 րոպե ին: Հենց տեղ հասա, տարբեր ծառայությունների գործընկերների հանդիպեցի, որոնք ինձ ներկայացրին ընդհանուր վիճակը: Ըստ նրանց նախնական տեղեկությունների, մոտավորապես 11-ն անց 15 րոպեին երկուսից վեց հոգուց կազմված գրոհային մի խումբ, որը

-- էջ 121 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

լավ գիևված է եղել, ներթափանցել է հյուպատոսարան, կրակ բացել: Մեծամասնության կարծիքով՝ ներսում երեսուկից քառասուն պատանդ պիտի լիներ:

Ինձ տեղեկացրին նաև, որ մի քանի րոպե անց դեպքի վայր են հասել ոստիկանները, նրանցից մեկը բակ նայող պատուհանից երկրորդ հարկ է բարձրացել, նրա վրա կրակ են բացել, ինքը փոխադարձել է, և ըստ մի այլ ոստիկանի վկայության, վիրավորել է գրոհայիններից մեկին:

Ես իսկույն հաշվի առա այն հանգամանքը, որ հյուպատոսարանում երկու մուտք կար՝ մեկը, գլխավորը՝ սանդուղք և վերելակ, երկրորդը՝ օժանդակը, միայն աստիճաններ ուներ, որոնք սկսվում էին շենքի բակից:

Ակնհայտորեն ներթափանցելու հնարավորությունները մեծ չէին, և հենց սկզբից մենք հասկացանք, որ մարտախումբը դուրս հանելու համար պիտի ջանանք բանակցությունների մեջ մտնել:

Ելնելով այն հանգամանքից, որ դռնապանի խուցը գտնվում էր առաջին հարկում, այնտեղ հեշտ էր հրամանատարական կենտրոն ստեղծելը, ես հրահանգեցի հյուպատոսարանի հեռախոսը միացնել այդ խուցին՝ այնպես, որ ցանկության դեպքում կարողանանք զանգահարել հյուպատոսարան, բայց ներսում գտնվողները դուրս զանգահարելու հնարավորություն չունենան:

Այդ ամենը կարգավորելու ընթացքում ես օգտվում էի բարձրախոսից, որով և փորձեցի իսկույն ևեթ երկխոսության մեջ մտնել պատանդ վերցնողների հետ:

Առաջին կոչն ուղղեցի մոտավորապես 12-ն անց 30-ին, և, որպես պատասխան, պատուհանից նետված հայտարարություն ստացա, որն ամփոփում էր մարտախմբի՝ գրոհի պատճառներն ու պահանջները:

Ինձ համար, որպես ոստիկանի, Էականն այն էր, որ նրանք իրենց պահանջների բավարարման համար տասներկու ժամ ժամանակ էին տրամադրում՝ պահանջներ, որոնք ուղղված էին թուրքական իշխանություններին: Եվ եթե

տասներկու ժամվա ընթացքում որոշ պայմաններ չբավարարվեին, գրոհայիններն սպառնում էին ոչնչացնել պատանդներին: Հենց փորձեինք հակազորի կազմակերպել, նրանք պայթեցնելու էին շենքը:

Ես շարունակեցի բարձրախոսով կապ հաստատելու ջանքեր

-- էջ 122 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

գործադրել, հայտարարեցի, որ մտադիր ենք հեռացնել վերին հարկերի բելոր բնակիչներին ու խնդրեցի որևէ ձևով հասկացնել, որ իմ ասածները տեղ են հասնում: Իրոք, գրոհայիններից մեկը, նռնակը ձեռքին, մոտեցավ պատուհանին: Ես դա համաձայնության նշան համարեցի ու հետևցրի, որ առանց դիմադրության հանդիպելու կկարողանանք շենքը դատարկել բնակիչներից:

Ավելի ուշ, ժամը 14-ն անց 45 րոպեին, պատուհանից ինքնաշարժի բանալի նետեցին, և ես առաջին անգամ կարողացա մարտախմբից մեկի հետ հեռախոսային կապի մեջ մտնել: Նա ասաց, որ պատանդներից մեկը սրտային հիվանդ է, նրա դեղերը գտնվում են այն ինքնաշարժում, որի բանալին ցած են նետել: Սա արդեն հետագա երկխոսության հետաքրքիր սկիզբ էր: Մենք ուղարկեցինք դեղերը: Քանի որ ինձ արդեն տեղեկացրել էին, որ պատանդներից մեկը՝ տիկին Ժերմենը շաքարախտ ունի, օգտագործեցի այդ հանգամանքը, նրան հեռախոսի մոտ կանչել տվի ու իմացա, որ վիճակը բավարար է:

Բանակցությունները շարունակվում էին, բայց ես զգում էի, որ իրադրությունն այնքան չի հասունացել, որպեսզի հանձնվելու պայմանների մասին խոսել սկսենք: Իմ անտեսանելի զրուցակիցն ակնհայտորեն ձգտում էր ձգձգման: Այդ ամենը տևեց մինչև 23-ն անց 15 րոպե:

Սակայն, մոտավորապես ժամը 16-ին, երբ ես նորից զանգահարեցի, նա ասաց, որ հյուպատոսարանում վիրավոր կա ու բժիշկ պահանջեց: Այս կապակցությամբ մեր բանակցությունները մեկ ժամ, ժամ ու կես տևեցին: Իսկույն ևեթ ասեմ, որ հյուպատոսարան բժիշկ ուղարկելը բացառվում էր, ավելի ճիշտ՝ կապված էր ռիսկի հետ: Կարող էին նրան էլ պատանդ վերցնել: Մյուս կողմից էլ, անկախ այն բանից՝ վիրավորը պատանդ էր, թե՞ գրոհային, հետաքրքիր էր դուրս հանելը, ներսում տիրող իրավիճակի մասին տեղեկություններ ստանալը: Հեռախոսային խոսակցության ընթացքում պարզեցի, որ հրազենային վերք է ստացել փոխիյուպատոսը և հեռախոսը բժիշկ Բոմանին հանձնեցի, որպեսզի գրոհայինին համոզի վիրավորին շեմք հասցնել: Խոսակիցն ի վերջո հայտնեց, որ փոխիյուպատոսի հետ դուրս է բերվելու նաև մի վիրավոր գրոհային ու ցանկացավ իմանալ, թե արդյո՞ք նրան քաղաքական ապաստան հայցողի կարգավիճակ կշնորհվի:

ՕՐ ԵՐՐՈՐԴ

Ես ստիպված էի ասել, որ ոստիկան եմ, այսինքն՝ նման որոշումներ կայացնելու իրավասություն չունեմ, սակայն ոստիկանապետն ու հանրապետության դատախազը, որոնք խուցում կողքիս էին, գտան, որ այդպիսի կտրուկ մերժումով չարժե բանակցությունները խզել: Ուստի ես խուսափողական ավելացրի, որ քաղաքական ապաստանյալի կարգավիճակ թերևս նրան շնորհվի:

Առաջինը մարտախմբի վիրավոր անդամը դուրս եկավ հյուպատոսարանից: Ինչքան հիշում եմ՝ գնդակը կուրծքն էր խոցել: Նա պայմանավորվել էր իր հրամանատարի հետ, որ հիվանդանոց հասնելուն պես կհեռաձայնի, որպեսզի վստահեցնի, որ ապահովության մեջ է, իրեն խնամում են, մեր բանակցությունները որևէ մեկի դեմ դավ նյութելու նպատակ չեն հետապնդել:

Եվ իրոք, հենց վիրավորը Օթել-դիոյի հիվանդանոցը հասավ, մենք նրան մարտախմբի ղեկավարի հետ հաղորդակցվելու հնարավորություն ստեղծեցինք, և պետք է ասեմ, որ դրանից բանակցություններում հոգեբանական շրջադարձ տեղի ունեցավ: Մեր գրուցակիցները սկսեցին վստահել մեզ, ես զգացի, որ լարվածությունը նկատելիորեն թուլացավ, անվտանգ հանգուցալուծումը մոտ էր թվում:

Այդպես ժամը հասավ մոտավորապես 18-ը, և իմ գրուցակիցն անսպասելիորեն տեղեկացրեց, որ հյուպատոսարանում մեռել կա: Պետք է ասեմ, որ մենք նման անակնկալի չէինք սպասում, բոլորս էլ ծայր աստիճան զարմացած մնացինք: Գրոհայինները հեշտությամբ համաձայնեցին դիակը մեզ հանձնել, հասցրին մինչև շեմս, ու մենք տեղափոխեցինք ուր հարկն էր:

Դրանից հետո... Ես դժվարանում եմ ժամանակագրությունը ճշգրիտ վերականգնել՝ բանակցությունները չափազանց երկար տևեցին: Հիշում եմ, որ գրոհայինների հրամանատարը ցանկանում էր հաղորդակցվել մի հայ լրագրողի հետ, որը գտնվում էր իրադրությունը լուսաբանող թղթակիցների խմբում:

Հրամանատարը հայրենակցին մի թուղթ նետեց, որով փոխհյուպատոսը հավաստում էր, որ իրեն գրոհայինները չեն վիրավորել ու բոլորի համար քաղաքական ապաստան էր հայցում: Պարզ է, նման փաստաթուղթը մեզ համար մեծ արժեք չէր կարող ներկայացնել...

Այնուհետև պատանդների և գրոհայինների սննդի խնդիրը

ծագեց: Դա նույնպես հետաքրքիր փուլ էր, որովհետև հրամանատարին հարցնելով, թե քանի՞ սենդվիչ, խմիչք է անհրաժեշտ, ես հետզհետե պարզեց, թե որքա՞ն մարդ կա հյուպատոսարանի ներսում, որոնց թիվը, գրուցակցիս հավաստմամբ, վաթսուներից չպիտի անցներ:

Բանակցությունները շարունակվում էին: Ժամը մոտավորապես 20-ին իրավիճակը բարդացավ, որովհետև Հոսման պողոտայում ցույցին հաջորդեց հակացույցը: Հայտնվեցին հայամետ և թուրքամետ ցուցարարներ, մեկին նույնիսկ վիրավորեցին դանակով: Մի խոսքով՝ քայլերթերն անկառավարելի էին դառնում: Այս ամենը դժվարացնում էր մեր խոսակցությունը, որովհետև ես զգում էի, որ գրոհայինները, փողոցի աղմուկից չափազանց լարվում են: Բանակցությունները կա թող էին փակուղի մտնել, պահը պետք չէր ձեռքից բաց թողնել:

Վերջապես՝ սնունդը տեղ հասցրինք, հարաբերությունները կարծես մեղմացան, և կես գիշերին մոտ խոսակիցս հարցրեց, թե կարո՞ղ է դուրս հանել տալ երկրորդ վիրավոր գրոհայինին: Նա պահանջեց նույն ապահովությունները, ես բացատրեցի, որ ինքը Ֆրանսիայում է, մեր քաղաքականությունը արտաքսում չի ընդունում, իրեն Ֆրանսիայում մնալու հնարավորություն կնձեռվի: Նա նորից ուզեց, որ վիրավոր մարտընկերը հիվանդանոց հասնելուն պես զանգահարի իրեն, մենք ստեղծեցինք նման հնարավորություն, ու գրոհայինները համոզվելով, որ կատարում ենք տրված խոստումները, մեր նկատմամբ որոշակի վստահությամբ համակվեցին:

Կեսգիշերին մոտ ինձ թվաց, թե հանձնման պայմանների մասին բանակցելու ժամանակը եկել է: Այդ պահից սկսած ես ու գրուցակիցս միայն այդ մասին ենք իրար հետ խոսել:

Հիշում եմ, ժամը 11-ն անց 15-ին, այսինքն մարտախմբի սահմանած ժամկետը լրանալուն պես կրակոց լսվեց, բայց մենք զգացինք, որ լուրջ հետևանքներ չունեցավ, դա կարող էր պատահականության կամ անուշադրության արդյունք լինել: Անձնատրման բանակցությունների ընթացքում մեզ շատ օգնեց ներսում գտնվող մի պատանդ՝ պարոն Հուբարը, որը համաձայնվեց վերցնել գրոհայինների պայուսակը, շենքից դուրս առաջնորդել նրանց: Ըստ վերջնական պայմանավորվածության, Հուբարը երկու գրոհայինին պիտի հանձներ մեզ, որից հետո սկսե -

-- էջ 125 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

ինք պատանդների տարհանումը:

Այդպես էլ արեցինք: Երբ գենքները մեզ հանձնեցին, տեսանք, որ գրոհայիններն ունեցել են մեկ Կալաշնիկով արագա ձիգ, 8 միլիմետրանոց երկու ինքնաձիգ ատրճանակ՝ Հերստալ, 9 միլիմետրանոց մի ուրիշ Հերստալ, երեք Սետեքս կակուղ պայթուցիկ, չորս էլեկտրական պայթուցիչ: Պայուսակում կար նաև դինամիտի ձող, մի այլ պայթուցիկ: Այսպիսով, համոզվեցինք, որ գրոհայինների սպառնալիքներն անհիմն չեն եղել, մենք մեծ վտանգ ենք շրջանցել և եթե որոշեինք հարձակում գործել, աղետ տեղի կունենար:

Դրանից հետո ես արագ հյուպատոսարան մտա, հիսուն չորս պատանդներն սպասում էին, նրանց քրեական բաժին տեղափոխեցինք, ամբողջ գիշեր գրի առանք ցուցմունքները: Մենք հարցաքննեցինք նաև մարտախմբի չորս ան դամներին, զգացինք, որ նրանց ինքնությունը դժվար է իսկույն և եթե ճշտելը: Ինչ վերաբերում է գրոհի նախապատրաստությանը, Փարիզում հանդիպելու պայմաններին, ակնհայտ էր, որ ոչ մեկի հայտարարությունն էլ ճշմարտացի չէ: Նույնը կրկնվեց փոխհրաձգության հանգամանքները ներկայացնելիս: Գրոհայինները ձգտում էին նվազեցնել իրենց պատասխանատվությունը, ասում էին, որ առաջինը թուրք ոստիկաններն են կրակ բացել, իրենք միմիայն դիմադարձել են: Նա, ով կրակել էր ֆրանսիացի ոստիկանի վրա, բացատրեց, որ ինքնաբերաբար է պատահել:

Ընդհանուր առմամբ, ահա՛ այն ամենը, ինչ տեղի է ունեցել առաջին երեք օրերի ընթացքում, քանի որ մեզ երեք օրվա նախնական կալանքի թույլտվություն էին ընձեռել: Այդ ժամանակ քննիչի հատուկ արտոնությամբ մենք կարող էինք ձերբակալվածներին պահել ընդհուպ երեք օր:

ՆԱԽԱԳԱՀ - Տարհանման պահին ի՞նչ վիճակում էին պատանդները:

ԼԸԶԼԵՐ - Մանավանդ կանայք բավական լարված էին: Այնուամենայնիվ, չնայած իրադրությանը, բոլորի վիճակն էլ, ընդհանուր առմամբ, տանելի էր:

ՆԱԽԱԳԱՀ - Տիկնայք և պարոնա՛յք, հարցեր ունե՞ք:

ՊԱՇՏՊԱՆ ՍԱՐԴԱ - Քաղաքացիական հայցվորները ձեզ շնորհակալություն են հայտնում այն ջանքերի համար, որ դուք ներդրել եք, որի շնորհիվ է ամենայն հավանականությամբ փրկ -

-- էջ 126 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

վել պարոն Ինալ Կայայի կյանքը:

Ոստիկան Շըվիի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՆԱԽԱԳԱՀ - Ձեզ հրահանգել են հյուպատոսարանի շրջակայքում հսկողություն սահմանել: Չե՞ք կարող ատյանին պատմել, թե ի՞նչ հանգամանքներում եք կատարել ձեր պարտականությունները:

ՇԸՎԻ - Այո օրը, քանի որ ներսում սկսել էին կրակել, հյուպատոսարանի առջև հերթապահող մեր գործընկերոջ տագնապի ազդանշանը լսեցինք: Մենք մոտակայքում էինք, շտապ տեղ հասանք ու նախ գնացինք Գուրսել փողոցի ծառայողական մուտքը: Իմ գործընկեր Բլոնդեն մնաց Գուրսել փողոցի աստիճանների մոտ, մենք նետվեցինք Հոսման պողոտայի գլխավոր մուտքը:

Ներս մտանք, իմացանք, որ գինված մարդիկ կրակ են բացել, հյուպատոսարանում գտնվողներին պատանդ վերցրել: Մենք նախ թաքցրինք մեր ինքնությունը, փորձեցինք գրոհայինների հետ բանակցություններ վարել, բայց հետո թևկապները ցուցադրեցինք, պահանջեցինք ձեռքները վեր, հասկանալի է, առանց զենքի շենքից դուրս գալ: Ու շարունակ բացասական պատասխան ստացանք: Նրանք շատ վատ էին արտահայտվում ֆրանսերեն: Մի պահ ես փորձեցի ոտքի հարվածներով բացել դուռը, որը փակված էր վերևից ու մեջտեղից, բայց հենց հետ շրջվեցի, իմ դիմացից հրազենային կրակահերթ անցավ: Հրաձգությունից պաշտպանվելու համար ես սեղմվեցի պատին, ու այդ պահին էլ տեղ հասավ դատական ոստիկանության ծառայության խումբը:

ՆԱԽԱԳԱՀ - Կրակոցները, որոնք դուռը ծակեցին ու ձեզ հասան, ի՞նչ բարձրությունից էին արձակվում:

ՇԸՎԻ - Ես շրջվել էի, գնդակներն իմ առջևից էին սուլում-անցնում, կարծում եմ՝ կրակում էին վերևից ներքև, պարկուճներն ուղղակի տեղում էին առաստաղից: Վերնաշապիկս փայտի տաշեղներով էր պատվել:

ՆԱԽԱԳԱՀ - Տիկնայք և պարոնայք երդվյալներ, վկային այլ հարցեր ունե՞ք տալու: Քաղաքացիական հայցվորնե՞րը, ընդհանուր պաշտպա՞նը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՇՏՊԱՆ - Դուք որտե՞ղ եք տեսել պարոն Բլոնդեին, բակի մյուս սանդուղքով չե՞ք բարձրացել:

ՇԸՎԻ - Գլխավոր մուտքից հյուպատոսարան տանող աս -

-- էջ 127 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

տիճանի վրա մի մեծ պատուհան կա, որը մենք բացեցինք ու նկատեցինք բազրիքի այն մասը, որտեղից պարոն Բլոնդեն փորձում էր սենյակ մտնել: Ես միայն այդ պահին եմ նրան տեսել:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՇՏՊԱՆ - Ես կարծում էի, թե դուք էլ եք հյուպատոսարան մտել:

ՇԸՎԻ - Ես մտել եմ ծառայողական մուտքով, վերադարձել գլխավոր դռնով:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն դուք հյուպատոսարանի սենյակներում չե՞ք եղել:

ՇԸՎԻ - Ո՛չ, ո՛չ...

ՆԱԽԱԳԱՀ - Ատյանը շնորհակալ է ձեզնից: Ազատ եք:

Ոստիկան Բլոնդեի դատախոսամբ: Երդման արարողակարգ:

ՆԱԽԱԳԱՀ - Կարո՞ղ եք մեզ ներկայացնել ձեր՝ հյուպատոսարան մտնելու մանրամասները:

ԲԼՈՆԴԵ - Մենք հսկողական ինքնաշարժով պտույտ էինք գործում, լսեցինք Հոսման պողոտայի թիվ 170 շենքի ժամապահի՝ տազնապի ազդանշանը, որի պատճառը Թուրքիայի հյուպատոսարանի կրակոցներն էին: Ես աստիճաններով օգնության փուլացի: Հյուպատոսարանի մի աշխատակից, որը պատուհանից դուրս էր եկել, ցույց տվեց, թե ինչպես կարելի է ներս մտնել: Շուտով հայտնվեցի մի սենյակում, որի հատակին երկու մարմիններ կային: Ներքին սենյակներից ձայներ հասան ականջիս: Ես ստիպված էի ներկայանալ, գոռացի՝ «Ոստիկանությունն է, ձեռքները վե՛ր, մոտեցե՛ք», որպեսզի իմանամ, թե ով կա ներսում...

ՆԱԽԱԳԱՀ - Ավելի բարձր խոսեք...

ԲԼՈՆԴԵ - ... Եվ ահա, այդ պահին, այստեղ ներկա տղաներից մեկը հայտնվեց դռների մեջ, կրակեց իմ վրա, ես փոխադարձեցի, նա ընկավ, ինքս դուրս եկա: Հետո ասացին, որ ներսում պատանդներ կան:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք քաղաքացիական հագուստներով էիք: Երբ իմացաք հյուպատոսարանի դեպքի մասին, այդ ժամանակ՞ն ոստիկանական թևկապը ամրացրիք:

ԲԼՈՆԴԵ - Այո՛, իհարկե, ինչպես միշտ:

ՆԱԽԱԳԱՀ - Պատուհանից դուք անձնագրային բաժանմունք մտաք:

-- էջ 128 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ԲԼՈՆԴԵ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Կարո՞ղ եք, գծագրին նայելով, ցույց տալ, թե որտե՞ղ է անձնագրային բաժանմունքը: Այստե՞ղ, աջ կողմո՞ւմ: Երբ մտաք, ներսում որևէ մեկը կա՞ր:

ԲԼՈՆԴԵ - Ես միայն երկու մարմին տեսա՝ սպանվածիկն ու փոխհյուպատոսինը:

ՆԱԽԱԳԱՀ - Այդ նույն սենյակում, ընդհանրապես անձնագրային բաժանմունքում ուրիշ ոչ ոք չկա՞ր:

ԲԼՈՆԴԵ - Ոչ ոք:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք ասում եք, որ հատակին երկու հոգի կային, դուք դեռևս չգիտեիք, նրանք վիրավորված են, թե՞ ոչ: Գծագրի վրա ցույց տվեք՝ որտե՞ղ էին պառկած այդ երկու հոգին: Անձնագրային բաժանմունքում, թե՞ այնտեղ, որտեղ նշված է «անցում»:

ԲԼՈՆԴԵ - Անձնագրային բաժանմունքի դռան մոտ:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն այնտեղ, որտեղ դուռը անձնագրային բաժանմունքը բաժանում է անցումից: Չանդրադարձա՞ք՝ այդ մարդիկ վիրավոր էին:

ԲԼՈՆԴԵ - Ո՛չ, չանդրադարձա:

ՆԱԽԱԳԱՀ - Կարո՞ղ եք որոշակի ասել՝ երբ առաջին անգամ դեմ առ դեմ հանդիպեցիք, որտե՞ղ էր կանգնած պարոն Սիսյանը, որտե՞ղ՝ դուք:

ԲԼՈՆԴԵ - Նա անձնագրային բաժանմունքի դռների մեջ էր:

ՆԱԽԱԳԱՀ - Ի՞նչ եք հասկանում «անձնագրային բաժանմունքի դուռ» ասելով:

ԲԼՈՆԴԵ - Այն, որը թիվ մեկ միջանցքն է տանում:

ՆԱԽԱԳԱՀ - Կարծես թե ձեր նշած տեղում դուռ չկա:

ԲԼՈՆԴԵ - Կա՛, կա՛...

ՓԱՍՏԱԲԱՆԱՊԵՏ ԲՈՂԸԼՈ - Ըստ գծագրի՝ ոչ թե դուռ է, այլ՝ բացվածք:

ՆԱԽԱԳԱՀ - Ճիշտ է, փակվող դուռ չկա: Թիվ մեկ միջանցքի ու անցումի միջև գծագրից որոշակի երևում է, որ բացվածք է, ոչ թե դուռ:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Ո՛չ, դուռ չկա:

ՆԱԽԱԳԱՀ - Այո՛, դռան կամար է և ոչ թե բացվող, փակվող դուռ:

ԲԼՈՆԴԵ - Ընդունում եմ:

ՆԱԽԱԳԱՀ - Նա ի՞նչ դիրքով էր:

-- էջ 129 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

ԲԼՈՆԴԵ - Գնդացրով կրակողի դիրքով: Առաջ հակվեց ու կրակ բացեց իմ վրա:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն Սիսյանն ատրճանակով էր զինված: Դուք ի՞նչ դիրքով էիք: Նա շա՞տ էր առաջ հակված:

ԲԼՈՆԴԵ - Այո՛, շատ: Ես կանգնած էի դիմադարձում: Մեզ դա հատուկ սովորեցրել են:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք բղավո՞ւմ էիք՝ «Ոստիկանությունն է, դո՛ւրս եկեք»:

ԲԼՈՆ ԴԵ - Ես մինչ այդ էի բղավել, ասել էի, որ ձեռքները վեր առաջանան:

ՆԱԽԱԳԱՀ - Ըստ ձեզ, ձեր թևկապը լավ երևո՞ւմ էր:

ԲԼՈՆԴԵ - Այո՛, ձախ բազկիս էի ամրացրել:

ՆԱԽԱԳԱՀ - Վստա՞հ եք, որ առաջինը Սիսյանն է կրակել:

ԲԼՈՆԴԵ - Իհարկե, հակառակ դեպքում ես չէի փոխադարձի:

ՆԱԽԱԳԱՀ - Եթե նա կրակած չլիներ, դուք կրակ չէի՞ք բացի:

ԲԼՈՆԴԵ - Ես այդ քայլին դիմեցի, որպեսզի նա հանձնվի, չգիտեի, որ ներսում, այն էլ մեծ քանակությամբ, պատանդներ կան:

ՆԱԽԱԳԱՀ - Ի վերջո ձեզ հայտնի դարձա՞վ զգալի թվով պատանդների առկայությունը:

ԲԼՈՆԴԵ - Ո՛չ, ես այդ սենյակից դուրս չեմ եկել, ոչ ոքի չեմ տեսել:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն պնդում եք, որ առաջինը Սիսյանն է կրակել: Քանի՞ անգամ:

ԲԼՈՆԴԵ - Կարծում եմ՝ հինգ:

ՆԱԽԱԳԱՀ - Բայց երեք էին ասում:

ԲԼՈՆԴԵ - Նա մի քանի անգամ կրակեց:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք հայտարարել եք, որ դիմադարձելու համար երկու անգամ եք կրակել:

ԲԼՈՆԴԵ - Ճիշտ է:

ՆԱԽԱԳԱՀ - Ըստ եռթյան՝ հաստատված է, որ ձեր գնդակներից մեկն է վիրավորել Սիսյանին: Պարոն Սիսյան, դուք իրո՞ք վարչական նիստերի սրահի դռան մոտ եք եղել:

ՍԻՍԼՅԱՆ - Ճիշտ այդպես:

ՆԱԽԱԳԱՀ - Ըստ ձեզ, որտե՞ղ էր պարոն Բլոնդեն, երբ դուք նրան տեսաք: Լսեցի՞ք, թե ինքն ինչ էր ասում, պնդում էր, որ դուրս չի եկել անձնագրային բաժանմունքից: Ի՞նչ եք կարծում,

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

կրակոցի ժամանակ որտե՞ղ է եղել:

ՍԻՍԼՅԱՆ - Ես նրան նկատել եմ վիրավորվելուց հետո միայն, այդ ժամանակ նա անձնագրային բաժանմունքում էր, բայց չեմ կարող ճշգրիտ հիշել՝ մեջտեղո՞ւմ էր, փոքր-ինչ ձա՞րխ, թե՞ աջ: Բոլոր դեպքերում՝ հաստատ է, որ կարող էր ինձ տեսնել:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք հայտարարում եք, որ վիրավորվելուց առաջ նրան չեք նկատել, մինչդեռ ինքն ասում է, որ առաջինը ինքներդ եք կրակել:

ՍԻՍԼՅԱՆ - Ո՛չ:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք պնդո՞ւմ եք ձեր վկայությունը, պարոն Բլոնդե՛:

ԲԼՈՆԴԵ - Անշուշտ: Եթե նա մուտքի դուռը հսկելիս լիներ, ես կրծքի աջ կողմին չէի կարող կրակել, ձախը վիրավորած կլինեի:

ՆԱԽԱԳԱՀ - Նման պահի՞ կողմը դժվար է որոշել...

ԲԼՈՆԴԵ - Ես նրա դիրքից ելնելով եմ ասում:

ՆԱԽԱԳԱՀ - Բոլոր դեպքերում՝ դուք հավաստում եք, որ Սիսյանը եղել է ոչ թե վարչական նիստերի սրահի դռան մոտ, այլ՝ անցումի դռների միջև, և անձնագրային բաժանմունքի մեջտեղում դուք նրա ուղղությամբ կրակ եք բացել միայն այն բանից հետո, երբ ինքն է ձեր վրա կրակել:

ԲԼՈՆԴԵ - Այո՛, պարոն նախագահ:

ՆԱԽԱԳԱՀ - Այստեղ պարոն Ֆլեորիի վկայությունը կա, որից կարելի է հետևցնել, որ անձնագրային բաժանմունքում գտնվողն է առաջինը կրակ բացել: Ակնհայտ է, որ վկան ենթադրաբար է նման հայտարարություն անում:

ՍԻՍԼՅԱՆ - Այդ դեպքում ես ի՞նչ կարող եմ ասել:

ՆԱԽԱԳԱՀ - Պարոն Սիսյան, ինձ խնդրում են, որ ձեզ հետևյալ հարցն ուղղեմ: Ըստ ձեզ, ոստիկան Բլոնդեն ինչի՞ց է գլխի ընկել, որ դուք հյուպատոսարանի գրոհայիններից եք և ոչ թե թուրք հսկիչ-պահապան: Ինչո՞ւ նա ձեզ մարտախմբի անդամի և ոչ թե անվտանգության պաշտպանի տեղ է դրել: Կարո՞ղ եք այս հարցին պատասխանել:

ՍԻՍԼՅԱՆ - Հավանաբար հագուստներիս պատճառով: Ես ջինսե շապիկով ու անդրավարտիքով էի, մինչդեռ հյուպատոսարանի հսկիչ-պահապանները, կարծում եմ, համազգեստով են:

ՆԱԽԱԳԱՀ - Պարոն Գալի Ֆահրի՞ն ինչ էր հագել:

ԻՆԱԼ ԿԱՅԱ - Քաղաքացիական հագուստներ:

ՕՐ ԵՐՐՈՐԴ

ՆԱԽԱԳԱՀ - Ձեզ թվում է, թե պարոն Բլոնդեն միմիայն հազուստի պատճառով է ձեզ գրոհայինի տեղ դրել:

ՍԻՍԼՅԱՆ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Պարոն Բլոնդե, երբ դուք պարոն Սիսյանին տեսաք, ինչի՞ց ենթադրեցիք, որ նա մարտախմբի անդամներից մեկն է և ոչ թե, ասենք, հյուպատոսարանի հսկիչ-պահապանը:

ԲԼՈՆԴԵ - Որովհետև նա կրակում էր իմ վրա, պարոն նախագահ:

ՆԱԽԱԳԱՀ - Այլ հարցե՞ր, տիկնայք և պարոնայք երդվալներ: Դո՞ւք՝ քաղաքացիական հայցվորներ:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Ձեր վրա կրակելիս ի՞նչ դիրքով էր պարոն Սիսյանը:

ԲԼՈՆԴԵ - Կրակողի, մարտական դիրքով:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Ձեռքին գնդացի՞ր էր:

ԲԼՈՆԴԵ - Իմ կարծիքով՝ այո՛: Որտեղի՞ց իմանամ մակնիշը: Կրակոցը 7/7,5-ի կրակոցի էր նման:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Կարո՞ղ է ոստիկանը մեզ դիրքը ցույց տալ:

ՆԱԽԱԳԱՀ - Ցույց տվեք, խնդրե՛մ:

ԲԼՈՆԴԵ (Ցույց է տալիս) - Երևի մի փոքր ավելի առաջ էր հակված:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Այդպիսի դիրք է գրավել գնդացրո՞վ: Բայց չե՞ որ գնդացիր չի եղել, եղել է միայն մի Կալաշնիկով, որի կրակված փամփուշտների պարկուճները բոլորովին այլ տեղում են հայտնաբերվել: Ուրեմն խոսք կարող է լինել միմիայն ատրճանակի մասին, ընդ որում, ուզում եմ նկատել տալ, որ ոստիկանի ցույց տված դիրքը ոչ մի կերպ չի համապատասխանում Սիսյանի ստացած վերքերին, որովհետև դրանք վկայում են, որ մարմինը շատ առաջ է հակված եղել, մի բան, որը հենց նոր հավաստեց փորձագետը: Չմոռանանք, որ գնդակը մտել է վերևից, հասել մինչև ազդրը: Այլ կերպ ասած, վիրավորվողը կքված է եղել: Տեսնո՞ւմ եք, պարոն նախագահ, հիշողություններն այնքան էլ ճշգրիտ չեն:

ՊԱՇՏՊԱՆ ԹԵԴԺԵՆ - Մի վերջին հարց, պարոն նախագահ, ավելի ճիշտ՝ հավաստիացում: «Ես հակված չեի առաջ,- հայտարարել եք դուք՝ պարոն ոստիկան, - կրակելու դիրք չեի գրավել: Իմ ձեռքին գենք կար, ես պահանջում էի, որ հանձնվեն, սպա -

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

սում էի դռնից մեկն ու մեկի ելնելուն»:

ԲԼՈՆԴԵ - Այդպես էլ եղել է:

ՆԱԽԱԳԱՀ - Ատյանը շնորհակալ է ձեզնից:

Հսկիչ-պահապան Գալի Ֆահրիի դատախոսմը՝ թարգմանի օգնությամբ: Երդման արարողակարգ:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք ի՞նչ պարտականություններ ունեք թուրքական հյուպատոսարանում:

ԳԱԼԻ - Անվտանգությունն եմ ապահովում: Կանգնում եմ մուտքի դռան մոտ, դրսի կողմում:

ՆԱԽԱԳԱՀ - Չինվա՞ծ եք լինում:

ԳԱԼԻ - Այո՛, ինձ Հերստալ ատրճանակ է տրված:

ՆԱԽԱԳԱՀ - Ձեզ հայտնի՞ է, երբ ձեր մահացած գործընկերը՝ պարոն Էոզենը իր սովորական պարտականություններն էր կատարում, դարձյա՞լ զենք էր կրում:

ԳԱԼԻ - Երբ աշխատում էր, զինված էր լինում, բայց այդ օրը նա ազատ էր, զենք չուներ:

ՆԱԽԱԳԱՀ - Սովորաբար ի՞նչ զենք էր կրում:

ԳԱԼԻ - MP-5:

ՆԱԽԱԳԱՀ - Խոսքն այստեղ ներկայացված հրազենի մասի՞ն է:

ԳԱԼԻ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Պա րոն Էոզենը եթե չէր աշխատում այդ օրը, տեղյա՞կ եք, թե ինչո՞ւ էր հյուպատոսարան եկել:

ԳԱԼԻ - Դեպքից երկու օր առաջ պարոն Էոզենը երեխա էր ունեցել: Պարոն հյուպատոսը թույլ էր տվել, որ նա այդ կապակցությամբ Թուրքիա գնա: Տվյալ օրը իր դրսի գործերը վերջացրել և մի քառորդ ժամ առաջ մտել էր հյուպատոսարան:

ՆԱԽԱԳԱՀ (Թարգմանի միջոցով) - Իր հայտարարություններից մեկում, խոսելով պարոն Էոզենի՝ զենք ունենալու հավանականության մասին, պարոն Գալին նախ պնդում է՝ «Այդ օրը նա զինված չէր», հետո կասկածում՝ «Ինձ թվում է, զինված չէր»: Սա թարգմանակա՞ն վրիպում է:

ԳԱԼԻ - Ես նրա զենքը հետո՝ ներսում եմ տեսել:

ՆԱԽԱԳԱՀ - Այդ առավոտ ինքը որտե՞ղ է կանգնած եղել:

ԳԱԼԻ - Աստիճանների առջև, մուտքի դռան դրսի կողմում:

ՆԱԽԱԳԱՀ - Ինչպե՞ս է բացատրում զենք լցրված ուսապա -

-- էջ 133 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

յուսակով չորս գրոհայինի ներս մտնելը, այն դեպքում, երբ իր անմիջական պարտականությունն է եղել այցելուների պայուսակներն ստուգելը:

ԳԱԼԻ (Թարգմանի միջոցով) - Սովորաբար, գործընկերս, երբ աշխատում էր, օգնում էր ինձ, իսկ ես քննում էի մարդկանց փաստաթղթերն ու խուզարկում:

ՆԱԽԱԳԱՀ - Հապա այդ օրը առանց խուզարկելու ինչո՞ւ էք թույլ տվել, որ ուսապայուսակը ներս տանեն: Դուք այն տեսե՞լ էք:

ԳԱԼԻ - Այդ պահին մի թուրք հայրենակից ինձ հարցնում էր, թե ձեռքի վկայականը վավերացնելու համար ո՞ւմ պետք է դիմի: Ես դուռը բացեցի, բաժանմունքը ցույց տվեցի ու նույն ակնթարթին հետևիցս հրեցին, ընկա ու հայտնվեցի սպասասրահում:

ՆԱԽԱԳԱՀ - Ձեզ խփե՞լ են այդ պահին:

ԳԱԼԻ - Ո՛չ, շատ կոպիտ հրեցին, փռվեցի գետնին:

ՆԱԽԱԳԱՀ - Հետո՞:

ԳԱԼԻ - Հետո ներսից հրացանաձգության ձայներ լսեցի:

ՆԱԽԱԳԱՀ - Արդեն թիվ մեկ միջանցքո՞ւմ էիք:

ԳԱԼԻ - Ես ներսում էի, պառկած էի գետնին: Նրանք ձեռքներին նռնակներ, ատրճանակներ ունեին, թուրքերեն գոռում էին, որ բոլորը պառկեն: Այս մեկը (ցույց է տալիս պարոն Բասմաջյանին) ուսապայուսակը բացեց, Կալաշնիկով հանեց: Հետո նրանք հյուպատոսի գրասենյակը մտան: Երրորդը՝ Սիսյանը, մնաց մուտքի մոտ, ընդհանուր սրահի ու սպասասրահի միջև:

ՆԱԽԱԳԱՀ - Ընդհանուր սրահ ասելով վարչական նիստերի սրահ՞ը նկատի ունեք:

ԳԱԼԻ - Այո՛: Նա բոլորին հրահանգում էր պառկել գետնին ու չշարժվել, սպառնում էր նռնակներ շարտել: Ես հրազենի ձայներ էլ լսեցի, բայց չտեսա, թե ով կրակեց: Այնուհետև հետևեցի դուրս փախչողներին, բայց հենց հասա դռան մոտ, նկատեցի իմ գործընկեր Էոզենին, որն ընկած էր հատակին:

ՆԱԽԱԳԱՀ - Նախաքննության ժամանակ նա ասել է, որ տեսել է, թե ինչպես է գործընկերը վարչական նիստերի սրահից դուրս եկել, թիվ մեկ միջանցքը մտել:

ԳԱԼԻ - Ես նրան պառկած եմ տեսել:

ՆԱԽԱԳԱՀ - Դատական գործի մեջ որոշակի է արձանագր -

-- էջ 134 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ված. «Ես տեսա նրա՝ վարչական նիստերի սրահից ելնելն ու թիվ մեկ միջանցքում, այնտեղ, որտեղ «արյուն և այլն» է նշված գծագրի վրա, ընկնելը»:

ԳԱԼԻ - Ես սեղանի տակն էի, շուրջս բոլորը վազվզում էին, ոմանք պառկում էին, ոմանք ընկնում վրաները:

ՆԱԽԱԳԱՀ - Այսինքն ինքը չի՞ տեսել, թե ինչպես են կրակել Էոզենի վրա:

ԳԱԼԻ - Ո՛չ:

ՆԱԽԱԳԱՀ - Մոտավորապես կարո՞ղ է ասել, թե վիրավորվելուց հետո, մինչև մահանալը, Էոզենը որքա՞ն է ողջ մնացել:

ԳԱԼԻ - Յոթը-ութը ժամ:

ՆԱԽԱԳԱՀ - Նրա մարմինը դուրս են հանել 18-ն անց 26-ին:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Մենք արդեն համոզվեցինք, որ մահը վաղուց է վրա հասած եղել:

ՊԱՇՏՊԱՆ ՄԻՆՅԱՐ - Վկան կարո՞ղ է ավելի հստակ խոսել թուրքերեն: Քննարկումը արդյունավետ դարձնելու համար:

ՆԱԽԱԳԱՀ - Անդրադառնանք մի ուրիշ պահի, ինքն անձամբ կրակե՞լ է: Ի՞նչ գենքով: Ինչպիսի՞ պայմաններում: Ո՞ր ուղղությամբ:

ԹԱՐԳ ՄԱՆ - Նա ասում է, որ ինքը վերցրել է արդեն մեռած գործընկերոջ Բրաունինգը և կարծում է, որ երեք անգամ կրակել է Չավենի ուղղությամբ (սկատի ունի Սիսյանին):

ՆԱԽԱԳԱՀ - Այդ ամենը առավել ևս չի համապատասխանում դատական գործի նյութերին: Նախաքննության ժամանակ նա հայտարարել է, որ վերցրել է կամ Բասմաջյանի գոտիից, կամ ձեռքի պայուսակից ընկած ատրճանակը:

ԳԱԼԻ - Ես ուզել եմ ասել, որ այդ գենքն իմը չի եղել, վերցրել եմ գետնից:

ՆԱԽԱԳԱՀ - Կարդում եմ նրա հայտարարությունը. «Ես տեսա, թե ինչպես մի Բրաունինգ ուղիղ ոտքերիս առաջ ընկավ»:

ԹԱՐԳՄԱՆ - Նա պնդում է, որ իրարանցման մեջ իր առջև ընկած զենք է նկատել, վերցրել, երկու-երեք անգամ կրակել է:

ՆԱԽԱԳԱՀ - Տեսե՞լ է այդ ատրճանակի ընկնելը:

ԳԱԼԻ - Կարծում եմ, որ ընկել էր, որովհետև ուղիղ առաջս էր: Այն ժամանակ ինձ թվաց նույնիսկ, թե գործընկերոջիս է:

ՆԱԽԱԳԱՀ - Երկուսից մեկը՝ կամ ինքը նկատել է արդեն ըն -

-- էջ 135 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

Կած մի ատրճանակ, որի ումը լինելը չի իմացել, կամ եթե ընկնելն է տեսել, ուրեմն տեսել է նաև, թե ումից, ասենք՝ ո՞ր գրոհայինի գոտիկից է ընկել:

ԹԱՐԳՄԱՆ - Կրկնում է, որ չի տեսել զենքի ընկնելը, բայց այն հայտնվել է ուղիղ իր առաջ, հենց այդ արտահայտությունն էլ գործածում է՝ «Հայտնվեց ուղիղ իմ առաջ, և ես կրակեցի»:

ՆԱԽԱԳԱՀ - Լա՛վ, հայտնվել է, բայց որ տեղի՞ց:

ԳԱԼԻ - Կարծեցի, թե իմ մեռած գործընկերոջ զենքն է: Ամեն ինչ այնքան արագ տեղի ունեցավ:

ՆԱԽԱԳԱՀ - Ինչպե՞ս կարող էր կարծել, որ իր գործընկերոջ զենքն է, երբ նա գնդացի էր ունեցել հյուպատոսարանը հսկելու պահերին:

ԳԱԼԻ - Նա մի ուրիշ զենք էլ ուներ, որը մոտն էր պահում:

ՆԱԽԱԳԱՀ - Բայց ոչ հյուպատոսարանում:

ԳԱԼԻ - Իր մոտ:

ՆԱԽԱԳԱՀ - Մի խոսքով, չգիտի՞, թե ումն է այն զենքը, որը վերցրել է գետնից:

ԳԱԼԻ - Ո՛չ, չգիտեմ:

ՆԱԽԱԳԱՀ - Լա՛վ, երբ վերցրել է զենքը, ի՞նչ է արել:

ԳԱԼԻ - Երկու-երեք անգամ կրակել եմ Չավենի ուղղությամբ:

ՆԱԽԱԳԱՀ - Այսինքն՝ Սիսյանի: Չի՞ շփոթում:

ԳԱԼԻ - Ո՛չ:

ՆԱԽԱԳԱՀ - Հնարավոր է նման հսկիչ-պահապան պատկերացնել: Նա զինված է, Հերստալ ատրճանակ ունի, որը պատյանով գոտիկի մեջ է, բայց չի հանում, չի գործածում:

ԹԱՐԳՄԱՆ - Նրա ձեռքին զենք չի եղել:

ԹԱՐԳՄԱՆ - Հապա որտե՞ղ է եղել իր ատրճանակը:

ԳԱԼԻ - Գոտիկի մեջ:

ՆԱԽԱԳԱՀ - Գրոհայիններին դիմադարձելու համար ինչո՞ւ չի գործածել իր զենքը:

ԳԱԼԻ - Դրա համար պետք էր, որ զենքս հանեի պատյանից, բայց այդ ընթացքում կարող էին կրակել իմ վրա:

ՆԱԽԱԳԱՀ - Նա ասել է, որ գետնից զենքը վերցրել, երկու թե երեք անգամ կրակել է տարբեր մարդկանց, որոնց թվում և Սիսյանի՝ այսինքն Չավենի վրա:

ԳԱԼԻ - Ես նրա վրա կրակեցի, նա ճիշտ մուտքի դռան մոտ էր:

-- էջ 136 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՆԱԽԱԳԱՀ - Բայց նախաքննության ժամանակ հայտարարել է, որ երկու թե երեք անձանց վրա է կրակել:

ԳԱԼԻ - Ես միշտ նույն ուղղությամբ եմ կրակել: Չավենը դռան մոտ էր, Ալեքս ու Հակոբը հյուպատոսի աշխատասենյակն էին մտել:

ՆԱԽԱԳԱՀ - Կարծո՞ւմ է, որ ինքն է վիրավորել Չավենին:

ԳԱԼԻ - Երբ ես պատրաստվում էի կրակել, հետևիցս էլ ինչ-որ համազարկը լսեցի:

ՆԱԽԱԳԱՀ - Դա անհավանական է, ինչպե՞ս է նա երկու-երեք անգամ կրակել Սիսյանի ուղղությամբ, իսկ գրոհայինները չեն դիմադարձել:

ԳԱԼԻ - Դիմադարձեցին, նրանք հյուպատոսի գրասենյակից դուրս եկան ու Կալաշնիկովով կրակեցին իմ վրա:

ՆԱԽԱԳԱՀ - Չի՛ կարող պատահել, Կալաշնիկովի բոլոր պարկուճները գտնվել են գլխավոր հյուպատոսի աշխատասենյակից: Եթե նման զենքով կրակեին իր վրա, ողջ չէր մնա:

ԹԱՐԳՄԱՆ - Խոհանոցի մոտ եղել է մի հայելի, որը հրագենի յոթը-ութը հարվածով փշրվել է: Նա ասում է, որ երկու անգամ կրակել են նաև մետաղե պահարանի վրա, ու ինքը հենց այդտեղ է եղել:

ՆԱԽԱԳԱՀ - Նա տեսե՞լ է հյուպատոսի և Ջուլֆայանի փոխիրաձգությունը:

ԳԱԼԻ - Ոչ, չեմ տեսել, նրանք ներսում են կրակել իրար վրա:

ՆԱԽԱԳԱՀ - Ականատես եղե՞լ է, թե ինչպես է Գյուլգեյանը միջանցք վերադարձել ու ինչ-որ բաներ ասել:

ԳԱԼԻ - Ալեքը (այսինքն՝ Գյուլգեյանը) ասաց. «Նա գտավ իր պատիժը»:

ՆԱԽԱԳԱՀ - Իսկ գե՞նքը, վերջիվերջո ձեռքից զենքը խլե՞լ են:

ԳԱԼԻ - Նրանք մեկ առ մեկ բոլորին կանգնեցնում, ձեռքները կապում, նորից նստեցնում էին: Երբ իմ հերթը հասավ, Չավենն ասաց՝ «Նա վիրավորեց ինձ», ու բոլորն իրենց զենքերն իմ վրա ուղղեցին:

ՆԱԽԱԳԱՀ - Հենց նոր ասում էր, որ երբ ինքը կրակել է Չավենի վրա կամ Չավենի ուղղությամբ, Կալաշնիկովից իր վրա կրակ են բացել, ուրեմն հարկ չկար ոտքի կանգնեցնել հսկիչ-պահապան լինելը պարզելու համար, դա հայտնի էր վաղուց:

-- էջ 137 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

ԳԱԼԻ - Սրահը շատ փոքր էր, յոթանասուն հոգի պառկած էին գետնին: Գրոհայինները բազմաթիվ անգամ կրկնեցին՝ «Եթե զինված մարդ կա, թող ոտքի կանգնի», բայց ես չկանգնեցի, որովհետև մտածեցի, որ իսկույն կսպանեն: Ելել եմ այն ժամանակ, երբ ձեռքերս կապելու ժամանակը հասել է:

ՆԱԽԱԳԱՀ - Այդ պահի՞ն են գտել ատրճանակը:

ԳԱԼԻ - Չավենը նստած էր դռան անկյունում, արդեն վիրավոր էր: Իմ ոտքի կանգնելու հերթը հասավ: Հակոբը բռնել էր լարերն այն բոլոր պայթուցիչների, որոնք տեղադրել էր դռների հետևում: Ես բարձրացրի ձեռքերս: Չավենն ասաց. «Նա ինձ վիրավորեց», և չորսն էլ զենքերն իմ վրա ուղղեցին: Ես բաճկոնս վեր հանեցի, Ալեքը գոտիկիցս քաշեց ատրճանակը: Հարցրեց, թե ի՞նչ եմ աշխատում, ասացի հսկիչ-պահապան եմ: Այդ պահին ինչ-որ մեկը ճչաց, և Ալեքը երկու անգամ կրակեց հյուպատոսարանի դռան վրա: Հետո նրանք կապեցին ձեռքերս ու հրամայեցին պառկել: Ես պառկեցի: Ասացին, որ շարժվել չի կարելի, մենք իրավունք չունեինք թեքել մեր գլուխները:

ՆԱԽԱԳԱՀ - Տիկնայք և պարոնայք երդվյալներ, վկային տալու հարցեր ունե՞ք:

Քաղաքացիական հայցվորնե՞րը: Պա թոն ընդհանուր պաշտպա՞նը:

Պաշտպանությունը նույնպե՞ս: Լավ, պարոն Գալի, ատյանը շնորհակալություն է հայտնում ձեզ:

Հայտարարվում է ընդմիջում:

Նիստը վերսկսվում է:

Վկա Բալթասողլուկի դատալսումը՝ թարգմանի օգնությամբ: Երդման արարողակարգ:

ՆԱԽԱԳԱՀ - Թող պատմի, թե ինչու էր այդ առավոտ հյուպատոսարան եկել:

ԲԱԼԹԱՕՂԼՈՒ - Իմ երեխան ծնվել է 1981 թվականի օգոստոսին: Հյուպատոսարան էի գնացել ծնունդն արձանագրելու համար:

ՆԱԽԱԳԱՀ - Մուտքի մոտ հսկիչ-պահապան տեսե՞լ է: Իսկ ներսո՞ւմ:

ԲԱԼԹԱՕՂԼՈՒ - Մուտքի մոտ ես տեսա հսկիչ-պահապանի, որը հարցրեց, թե ինչո՞ւ եմ ուզում հյուպատոսարան մտնել: Բայց ներսում հսկիչ-պահապան չտեսա:

-- էջ 138 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն նա այն պահին է ներս մտել, երբ երկրորդ հսկիչ-պահապանն ամենայն հավանականությամբ վիրավորված է եղել:

ԲԱԼԹԱՕՂԼՈՒ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Թող պատմի, թե ինչպես է եղել:

ԲԱԼԹԱՕՂԼՈՒ - Արդեն քսանութ ամիս է անցել, չեմ կարող մանրամասներ հիշել: Ոստիկանությունում ամեն ինչ պատմել եմ, որոնք և հիմա հաստատում եմ:

ՆԱԽԱԳԱՀ - Ես գիտեմ, թե նա ինչ է հայտնել այնտեղ, բայց տիկնայք և պարոնայք երդվյալները չգիտեն: Ուրեմն պետք է, որ երկրորդ անգամ էլ կրկնի:

ԲԱԼԹԱՕՂԼՈՒ - Ընդունված կարգի համաձայն ես հերթահամար վերցրի, տեղավորվեցի և սկսեցի սպասել: Հանկարծ դուռը բացվեց, ինչ-որ մարդիկ ներս մտան, սկսեցին հայերեն բղավել, որ ոչ ոք տեղից չչարժվի: Այդ պահին գրասեղանի մոտ մի պարոն կար, որը փորձեց դիմադարձել: Եվ քանի որ ուզում էր խանգարել նրանց, առաջին ներս մտնողը, որը մորուք ուներ, կրակեց գլխին: Գնդա կը այստեղից մտավ, այնտեղից դուրս եկավ, և վիրավորը տապալվեց գետնին:

ՆԱԽԱԳԱՀ - Հսկիչ-պահապանը ձեռքին զենք ունե՞ր:

ԲԱԼԹԱՕՂԼՈՒ - Չտեսա:

ՆԱԽԱԳԱՀ - Բայց վկան ինքն էլ է վիրավորվել: Ի՞նչ պայմաններում: Այդ պահի՞ն, թե՞ հետո:

ԲԱԼԹԱՕՂԼՈՒ - Երբ հսկիչ-պահապանն ընկավ, մորուքավորը մի անգամ էլ կրակեց, որը մտավ անդրավարտիքիս մեջ ու դուրս եկավ, ոտքս չվիրավորեց: Ես ուզում եմ իմ դատը հանձնել քաղաքացիական հայցվորներին, հայտարարել, որ վիրավորվելու կապակցությամբ ոչ մի բողոք չունեմ...

Ծիծաղ դահլիճում:

ՆԱԽԱԳԱՀ - Դրան մենք կանդրադառնանք: Ես կուզեի, որ նա որոշակի ասեր՝ հսկիչ-պահապանի գլուխը ճեղքած գնդա՞կն է վիրավորել ոտքը, թե՞ պարոն Գյուլգեյանը նորից է կրակել:

ԲԱԼԹԱՕՂԼՈՒ - Հսկիչ-պահապանի ընկնելուց հետո նորից կրակեցին, և այդ փամփուշտը վիրավորեց ոտքս:

ՆԱԽԱԳԱՀ - Նա գիտի՞, թե չորս մեղադրյալներից ո՞րն է կրակել:

ԲԱԼԹԱՕՂԼՈՒ (Ցույց է տալիս Գյուլգեյանին) - Նա՛ էր:

-- էջ 139 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

ՆԱԽԱԳԱՀ - Նա՞, ով վիրավորել էր հսկիչ-պահապանին:

ԲԱԼԹԱՕՂԼՈՒ - Այո՛, նույն անձնավորությունը երկու անգամ կրակեց, բայց չեմ կարծում, թե ինձ վիրավորելու հատուկ դիտավորություն ուներ:

ՆԱԽԱԳԱՀ - Ինչո՞ւ է այդպես կարծում:

ԲԱԼԹԱՕՂԼՈՒ - Ես հսկիչ-պահապանի մոտ չեի, ամենևին ներս մտնողներին չեմ խանգարել, ուստի կարծում եմ, որ հատուկ իմ վրա չեն կրակել:

ՆԱԽԱԳԱՀ - Կարո՞ղ է վկան մեզ բացատրել, թե ինչո՞ւ է վախենում: Նա վախեցած է եղել նաև նախաքննության ժամանակ, որովհետև քննիչին բառացիորեն ասել է. «Ես չեմ ուզում վկայություն տալ, որովհետև երբ պատանդ վերցվելու պահին վիրավորվեցի, թուրքական հյուպատոսարանը չզբաղվեց ինձնով, մյուս կողմից էլ այստեղ գնալ-գալով պիտի ժամանակ ու աշխատավարձ կորցնեմ: Ամենակարևորը՝ վախենում եմ, որ վրիժառության թի րախ կդառնամ: Ես Ֆրանսիա եմ հասել, որ աշխատեմ, երեք երեխա ունեմ, չեմ ուզում գլխիսփորձանք բերել»:

ԲԱԼԹԱՕՂԼՈՒ - Ճիշտ է, ասել եմ այդ ամենը:

ՆԱԽԱԳԱՀ - Նա ինչի՞ց է վախենում:

ԲԱԼԹԱՕՂԼՈՒ - Հայերի վրեժխնդրությունից:

Աղմուկ դահլիճում:

ՆԱԽԱԳԱՀ - Լռություն պահպանեք, ինդրո՞ւմ եմ: Քիչ առաջ նա ասաց, որ իր դատը հանձնում է քաղաքացիական հայցվորներին: Պաշտպան չունի՞:

ԲԱԼԹԱՕՂԼՈՒ - Ես բանվոր եմ, պաշտպանի չեմ կարող վճարել:

ՆԱԽԱԳԱՀ - Բացատրեք նրան, որ եթե իր դատը վստահի քաղաքացիական հայցվորներին, ստիպված պիտի լինի հաջորդ երեքշաբթի էլ ներկայանալ ատյան:

ՊԱՇՏՊԱՆ ՍԱՐԴԱ - Ավելի լավ է փաստաբանների միություն ուղարկենք, թող ծառայողական փաստաբան հատկացնեն: Դա նրան անհրաժեշտ է վնասների հատուցում ստանալու համար:

ՆԱԽԱԳԱՀ - Դրա ժամանակը չունի, հասկանո՞ւմ եք, մանավանդ որ ֆրանսերեն չի խոսում:

ՊԱՇՏՊԱՆ ՍԱՐԴԱ - Կարելի է ուղեկցել փաստաբանների

-- էջ 140 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

միություն:

ՆԱԽԱԳԱՀ - Սրահում գտնվող որևէ պաշտպան կարո՞ղ է այդ պարտականությունը ստանձնել, թե՞ ծառայողին վստահենք:

ՊԱՇՏՊԱՆ ՍԱՐԴԱ - Եթե դուք հարմար եք գտնում...

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Այդպես ավելի ճիշտ կլինի:

ՆԱԽԱԳԱՀ - Պարոն ծառայո՞ղ, անհրաժեշտ է վկային ուղեկցել փաստաբանների միություն, բացատրել, որ նա իր դատը հանձնում է քաղաքացիական հայցվորներին, և այն, որ դատավարությանը մասնակցող պաշտպանները պատրաստ են տրամադրել իրենց թղթածրարները:

Պաշտպանությունը, քաղաքացիական մյուս հայցվորները, հասարակական նախարարությունն այլ նկատառում չունեն՞ն:

Նկատառումներ չկան:

Ատյանը ընդառաջում է ձեր դատը քաղաքացիական հայցվորներին հանձնելու ցանկությանը: Բայց, պարոն թարգման, բացատրե՛ք, որ նա առաջիկա երեքշաբթի օրն անպայման պիտի ներկայանա:

ՓԱՍՏԱԲԱՆԱՊԵՏ ԲՈՂԸԼՈ - Նույնիսկ թերևս երկուշաբթի երեկո, ընդհանուր պաշտպանի մեղադրական ելույթից առաջ:

Վկա Բալթասողլուհին առաջնորդում են փաստաբանների միություն:

Վկա Ալիջի Գյուլգել Բեշիրի դատախոսումը: Երդման արարողակարգ:

ՆԱԽԱԳԱՀ - Կարո՞ղ եք մեզ պատմել այն ամենը, ինչին ականատես եք եղել, նկարագրել, թե ի՞նչ է տեղի ունեցել ձեր՝ հյուպատոսարանում գտնված պահին:

ԱԼԻՋԻ ԳՅՈՒԴԵԼ - Դեպքերի ժամանակ ես համապատասխան պատուհանի մոտ էի, սպասում էի, որ թղթերս հետ տան: Հյուպատոսարան էի գնացել, որ մի փաստաթուղթ թարգմանել տամ: Հինգ, թե վեց թուղթ էլ չկար, որ ներս էի մտել, դռան մոտ ինչ-որ մարդիկ հայտնվեցին, սկսեցին գոռգոռալ, որ բոլորը պառկեն, մեկնվեն գետնին: Ես փոքր-ինչ զարմացած, նույնիսկ շշմած էի, մնացել էի կանգնած ու չէի հասկանում, թե ինչ է կատարվում, ավելի ճիշտ՝ չէի հավատում: Այդ պահին տեսա, թե ինչպես մի պարոն, որը մեզ ներս մտնելու կտրոններ էր տվել, մոտեցավ այն պարոնին, որը ատրճանակ ուներ, կրակում և

-- էջ 141 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

հրամայում էր գետնին պառկել: Մենք հետո իմացանք, որ անունը Ալեք է եղել: Հսկիչ-պահապանը նետվեց նրա վրա, փորձեց վնասազերծել: Ես սթափվեցի, իսկույն պառկեցի: Ահա՛ այն ամենն, ինչ տեսել եմ:

ՆԱԽԱԳԱՀ - Հսկիչ-պահապանը ձեռքին զենք ունե՞ր:

ԱԼԻՋԻ ԳՅՈՒԴԵԼ - Ո՛չ, ես զենք չեմ նկատել:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք լավ տեսե՞լ եք նրան, ով կրակ է բացել, որովհետև ձեր հայտարարություններն այնքան էլ պարզ չեն: Մի պահ ասում եք, որ հսկիչ-պահապանն է փորձել կապկպել մորուքավորին, ձեռքերը ուզել է ոլորել, և այդ պահին մորուքավորը կրակել է նրա վրա: «Ես երեք կրակոց հաշվեցի»՝ պնդել եք դուք ու քիչ անց շարունակել. «Տեսա, որ մորուքավորը կրակ բա ցեց, բայց չիմացա, թե ով վիրավորեց հսկիչ-պահապանի գլուխը»: Գուցե ձեզ վա՞րտ են հասկացել:

ԱԼԻՋԻ ԳՅՈՒԴԵԼ - Գուցե, բայց իմ վիճակն այնքան էլ... Երբ դեռ ոտքի էի, չէի հասկանում, թե ինչ է կատարվում, մի պահ ինձ շատ վատ զգացի: Միակ բանը, որ հասկացա, դա այն էր, որ հսկիչ-պահապանն ուզում էր զինաթափել անձանոթին, որից հետո գետնին ընկավ: Ես էլ հետևեցի նրա օրինակին, իսկույն պառկեցի:

ՆԱԽԱԳԱՀ - Երբ դուք քննիչին ցուցմունք եք տվել, ֆրանսերե՞ն եք խոսել, ինչպես հիմա:

Լա՛վ, տիկնայք և պարոնայք երդվյալներ, վկային հարցեր ունե՞ք:

Քաղաքացիական հայցվորնե՞րը: Հասարակական նախարարությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՇՏՊԱՆ - Վկան ասել է, չգիտեմ, հիշո՞ւմ է, թե՞ ոչ, տեսել է, թե ինչպես են ատրճանակով նշան բռնել հսկիչ-պահապանի գլխին: «Նշան բռնել»՝ դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ է նշանակում:

ԱԼԻՋԻ ԳՅՈՒՉԵԼ - Այո՛, մորուքավորը զենք ուներ, երկուսով փաթաթվել էին իրար, ես կրակոց լսեցի, բայց չիմացա՝ նշան բռնե՞լ էր, թե՞ ոչ:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն նրանք իրար շա՛տ մոտ էին: Պաշտպանություն՝ հարցե՞ր:

Հարցեր չկան:

Ատյանը ձեզ շնորհակալություն է հայտնում:

-- էջ 142 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Վկա Սելիմ Յազիջիի դատալսումը՝ թարգմանի միջոցով: Երդման արարողակարգ:

ՆԱԽԱԳԱՀ - Կարծում եմ, եթե, իհարկե, բոլորդ եք համաձայն, որ կարելի է սահմանափակվել: Արդեն շատ հոգու լսեցինք:

Նա հիշո՞ւմ է թուրք հսկիչ-պահապանի մահը:

ՅԱԶԻՋԻ (Թարգմանի միջոցով)- Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Հիշո՞ւմ է՝ թուրք հսկիչ-պահապանը, որի վրա կրակել էին, ձեռքին զենք ունե՞ր:

ՅԱԶԻՋԻ - Ո՛չ:

ՆԱԽԱԳԱՀ - Հնարավո՞ր է, որ նա հագուստի որևէ մասում պահած զենք ունենար:

ՅԱԶԻՋԻ - Չգիտեմ, չեմ կարող ասել:

ՆԱԽԱԳԱՀ - Որովհետև քննիչին նախ հայտնել եք, որ նրա ձեռքին զենք չի եղել՝ «նա զենք կրելու իրավունք ունեցել է, բայց ես ձեռքին չեմ տեսել», իսկ հետո ավելացրել եք՝ «հսկիչ-պահապանը գոտիկի մեջ զենք ուներ, բայց ես հանելը չեմ տեսել»:

Վերջիվերջո, դուք սպանված հսկիչ-պահապանի գոտիկի մեջ զենք նկատե՞լ եք:

ՅԱԶԻՋԻ - Ո՛չ, չգիտեմ...

ՆԱԽԱԳԱՀ - Այդ դեպքում ինչո՞ւ էք նման բան ասել:

ՅԱԶԻԶԻ - Ես քննիչին ասել եմ, որ նա թերևս զենք ունեցել է, բայց ինքս չեմ տեսել:

ՆԱԽԱԳԱՀ - Հսկիչ-պահապանն իսկո՞ւյն է մահացել, թե՞ որոշ ժամանակ անց:

ՅԱԶԻԶԻ - Անմիջապես չմահացավ:

ՆԱԽԱԳԱՀ - Ե՞րբ՝ մոտավորապես:

ՅԱԶԻԶԻ - Թերևս տասնհինգ-քսան րոպե անց:

ՆԱԽԱԳԱՀ - Առաջ ավելի երկար ժամանակ էք նշել՝ «վեց ժամ շարունակում էր շնչել», ասել էք:

ՅԱԶԻԶԻ - Չեմ հիշում:

ՆԱԽԱԳԱՀ - Այլ հարցե՞ր վկային՝ տիկնայք և պարոնայք երդվյալներ, քաղաքացիական հայցվորներ, պաշտպանություն:

Հարցեր չկան:

Ատյանը շնորհակալ է ձեզնից:

Վկա Լուսինե Հուբարի դատախոսմը: Երդման արարողա -

-- էջ 143 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

Կարգ:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն դուք փոխադրամիջոցների ընկերակցությունում վարո՞րդ էք:

ՀՈՒԲԱՐ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Եվ այդ պատճառով հաճախ լինում էք թուրքական հյուպատոսարանո՞ւմ:

ՀՈՒԲԱՐ - Ես հյուպատոսարաններն ու առևտրական պալատները՝ ներկրվող, արտահանվող ապրանքների փաստաթղթեր եմ հաստատման տանում:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն, աշխատանքի բերումով 1981 թվականի սեպտեմբերի 24-ին եղել էք թուրքական հյուպատոսարանում: Կարո՞ղ էք ատյանին պատմել այն ամենը, ինչին ականատես էք եղել կամ մասնակցություն ունեցել:

ՀՈՒԲԱՐ - Սկզբի մասին ոչինչ չեմ կարող ասել, որովհետև հաշվապահությունում փաստաթղթեր էի ստորագրել տալիս, այդ ամենն իմ թիկունքում է տեղի ունեցել: Ես չեմ տեսել, թե ինչպե՞ս են նրանք ներս մտել: Այն պահին, երբ ճիչեր լսեցի, ինձնով զբաղվող պաշտոնյան ասաց՝ «Պառկե՛ք»: Հետո ականջիս կրակոցներ հասան, բայց չտեսա, չեմ կարող ասել, թե ո՛վ էր կրակ բացել:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն ոչինչ չգիտե՞ք թուրք հսկիչ-պահապանի զոհվելու, Ինալ Կայայի, ինչպես նաև երկու հայերի վիրավորվելու մասին:

ՀՈՒԲԱՐ - Ո՛չ, որովհետև ես գտնվում էի պողոտայի կողմում: Ավելի ուշ, ինձ հետ վարվեցին այնպես, ինչպես մյուսների հետ՝ ձեռքերս կապեցին, ուրիշ սենյակ տարան, երկար մնացինք: Ի վերջո գրոհայիներից մեկին բացատրեցի, որ սրտային հիվանդ եմ, որոշակի ժամի դեղ պիտի ընդունեմ: Գրոհայինը կանչեց Ալեքին, որը թևերս արձակել տվեց և ավելի օդավետ սենյակ տարավ, որպեսզի շնչել կարողանամ: Դեղեր ստանալու համար դրսի հետ կանայք էլ էին ուզում կապ հաստատել: Ես տվեցի ինքնաշարժիս բանալիները, ներքևում գտնվող ոստիկանը գտել էր դեղերը, պատուհանից ներս նետել, այնպես որ ընդունեցի ժամանակին: Հետո բոլորի նման սպասեցի: Որոշ ժամանակ անց, սակայն, ինձ թվաց, թե պետք է ինչ-որ բան ասել, ինչ-որ բան անել: Ես հարցրի Ալեքին, ուզո՞ւմ է, որ մոտենամ պատուհանին, տեղեկություններ հաղորդեմ հյուպատոսարանում գտնվող կա -

-- էջ 144 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Նանց մասին, հետո հեռախոսով ոստիկանության հետ կապվեմ: Նա իմ կողքին էր, ինչ ուզե՞ր՝ կարող էր իմ միջոցով հայտնել:

ՆԱԽԱԳԱՀ - Ոստիկանության և Գյուլգեյյանի բանակցությունների ժամանակ դո՞ւք եք միջնորդ հանդիսացել:

ՀՈՒԲԱՐ - Այո՛:

ՆԱԽԱԳԱՀ - Երբ մոտենում էիք պատուհանին, ի՞նչ ձևով էին ձեզ ուղեկցում:

ՀՈՒԲԱՐ - Ալեքը միշտ կողքիս էր լինում, ինձ հսկում էր իհարկե, և ես ասում էի այն, ինչ ինքն ասել էր տալիս:

ՆԱԽԱԳԱՀ - Նրա ձեռքին գենք կա՞ր:

ՀՈՒԲԱՐ - Իհարկե, նա զինված էր:

ՆԱԽԱԳԱՀ - Ժամանակի ընթացքում հյուպատոսարանի մթնոլորտը փոխվե՞ց:

ՀՈՒԲԱՐ - Բնական է, որքան ժամերն անցան, այնքան մեղմացավ:

ՆԱԽԱԳԱՀ - Լարվածությունը շա՞տ շուտ թուլացավ:

ՀՈՒԲԱՐ - Գիտեք, ես կորցրել էի ժամանակի զգացողությունը: Չեմ կարող այդ կապակցությամբ որոշակի բան ասել:

ՆԱԽԱԳԱՀ - Հյուպատոսարանում գտնվող այլ անձինք, մասնավորապես կանայք, որքան ժամանակն առաջանում էր, ձեզ այնքան հոգնած, հուսաբեկված, հոգեցնցված չէի՞ն թվում:

ՀՈՒԲԱՐ - Միայն ոչ հոգեցնցված, բոլորն էլ իրենց շատ լավ էին զգում ու հանգիստ էին, ամենակարևորը՝ պահպանել էին սառնասրտությունը:

ՆԱԽԱԳԱՀ - Տազնապ, իրարանցում չէ՞ր նկատվում:

ՀՈՒԲԱՐ - Ո՛չ, կանայք նույնիսկ խուճապի չէին մատնվել:

ՆԱԽԱԳԱՀ - Չիմացա՞ք, թե հսկիչ-պահապանը երբ մահացավ:

ՀՈՒԲԱՐ - Լուրը լսեցի, բայց չեմ կարող ասել, թե երբ էր:

ՆԱԽԱԳԱՀ - Իրավացի եք, նման իրավիճակում ժամանակի զգացողությունը կորցնում են:

ՀՈՒԲԱՐ - Այդպես է լինում:

ՆԱԽԱԳԱՀ - Լավ, ուրիշ ասելիք ունե՞ք:

ՀՈՒԲԱՐ - Այո՛, վերջում, հանձնվելուց քիչ առաջ դժվարություններ ծագեցին, որովհետև ոստիկանությունն ուզում էր, որ գրոհայիններն իջնեն, իսկ նրանք ձգտում էին պատանդների հետ շենքից ելնել: Ի վերջո, ես հեռախոսի մյուս ծայրին գտնվող

-- էջ 145 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

ոստիկանին՝ չգիտեմ պարոն Բրուսարի՞ն, թե՞ պարոն Լըքլերին, ինչպես նաև Ալեքին առաջարկեցի, որ, եթե իհարկե համաձայնեն, զենքերը լցնեն ուսապայուսակի մեջ, ես վերցնեմ, առաջինը դուրս գամ, մյուսները հետևեն ինձ: Այդպես պետք է գոհ լինեին թե՛ ոստիկանները, որովհետև գրոհայինները պատանդների հետ դուրս չէին գա հյուպատոսարանից և թե գրոհայինները, քանի որ առանձին չէին հայտնվի փողոցում: Ալեքը համաձայնվեց, զենքերը, եղած-չեղածը լցրեց պայուսակը, ես վերցրի, իջա, նրանք հետևեցին ինձ:

ՆԱԽԱԳԱՀ - Ատյանը շնորհավորում է ձեզ՝ ձեր ստանձնած գործուն և խաղաղարար դերի համար:

ՀՈՒԲԱՐ - Ես դա բնական եմ համարում:

ՊԱՇՏՊԱՆ ՍԱՐԴԱ - Մենք էլ ենք միանում պարոն նախագահին:

ՆԱԽԱԳԱՀ - Տիկնայք և պարոնայք երդվյալներ, հասարակական
նախարարություն, հարցեր ունե՞ք

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՇՏՊԱՆ - Միայն մի պարզաբանում: Պարոն Հուբա՛ր, դուք դրան
չանդրադարձաք, բայց նախաքննության ժամանակ հայտնել եք, որ
պայթուցիկներ, լարեր եք տեսել: Ի՞նչ կարող եք ասել այդ մասին:

ՀՈՒԲԱՐ - Քանի որ դրանք լցրեցինք պայուսակի մեջ, բնականաբար՝ տեսա:
Ինչպես նաև վանդակավոր նռնակ, կակուղ պայթուցիկ, էլեկտրալար,
գրոհայինների ատրճանակները, նրանցից մեկի արագածիգը...

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՇՏՊԱՆ - Ես նկատի ունեմ նախքան հանձնվելը:

ՀՈՒԲԱՐ - Առաջ ես տեսել եմ այն զենքերը, որ իրենք կրել են:

ԸՆԴ ՀԱՆՈՒՐ ՊԱՇՏՊԱՆ - Ես խոսում եմ պայթուցիկների, լարերի մասին:

ՀՈՒԲԱՐ - Հանձնվելուց առա՞ջ՝ ոչ: Ես գրոհայիններից մեկի ձեռքին էլեկտրալար
տեսել եմ, բայց պայթուցիչներ և ականներ միայն այն ժամանակ, երբ նրանք
բերեցին, որ տեղավորենք պայուսակի մեջ:

ՆԱԽԱԳԱՀ - Պաշտպանությունը հարցեր ունի՞:

Հարցեր չկան:

-- էջ 146 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Ատյանը շնորհակալություն է հայտնում ձեզ:

Քաղաքացիական հայցման վկաների դատալսումը:

Պրոֆեսոր Աթայովի դատալսումը:

Հիսունմեկ տարեկան է, Անկարայի քաղաքական գիտությունների ինստիտուտի
միջազգային հարաբերությունների պրոֆեսոր, բնակվում է Անկարայում,
արտահայտվում է թարգմանի օգնությամբ:

ՆԱԽԱԳԱՀ - Պարոն փաստաբանապետ, ի՞նչ հարցեր ունեք:

ՓԱՍՏԱԲԱՆԱՊԵՏ ԲՈՂԸԼՈ - Պարո՛ն, ես ենթադրում եմ, որ քաղաքական
գիտությունների ինստիտուտի միջազգային հարաբերությունների պրոֆեսոր
լինելը համապատասխանում է Ֆրանսիայի քաղաքագիտության պրոֆեսորին: Եվ

քանի որ այս ունկնդրման ընթացքում պատմական բնույթի բազում հարցեր ծագեցին, ես կուզեի դուք մեզ հաղորդեիք, որքան որ հնարավորություն ունեք, իհարկե, թե ինչպիսի՞ն են եղել թուրքերի և հայերի փոխհարաբերությունները մեր դարասկզբից սկսած մինչև վերջին տարիները:

ԱԹԱՅՈՎ - Թուրքերի՝ Անատոլիա մուտք գործելուց ի վեր հարաբերությունները հայերի հետ եղբայրական ու շատ մտերիմ են եղել: Երբ թուրքերը Անատոլիա են հասել, հայերի ձեռքից իշխանությունը չեն խլել, որովհետև այդ վայրում հայկական ֆեոդալություն գոյություն չի ունեցել: Անատոլիայում հաստատվելուց հետո թուրքերը հարաբերության մեջ են մտել Բյուզանդիայի և վրացիների հետ:

Պատմական բազմաթիվ գրքերում նշվում է, որ թուրքերի և հայերի հարաբերությունը սերտ է եղել, տարակարծություններ չեն ծագել: Մի շարք, այդ թվում և հայկական աղբյուրներ, վկայում են, որ թուրքերը լավ դեկավարներ ու կազմակերպիչներ են դարձել:

Թուրքերի և հայերի հարաբերությունները անհրաժեշտ է դիտարկել նաև մեր կրոնի տեսանկյունով, որի առանձնահատկությունը տարբեր ժողովուրդներին միավորելը, իրենց իսկ ծոցից ելած առաջնորդների շուրջը համախմբելն է եղել: Թուրքե -

-- էջ 147 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

րը, ինչ խոսք, նույն կերպ վարվել են նաև հայերի նկատմամբ: Այս մոտեցումը, եթե համեմատելու լինենք այն վերաբերմունքի հետ, որը գործադրվել է Հունգարիայում՝ կալվինիստների, Իսպանիայում՝ հրեաների հանդեպ, բավական ժողովրդավարական ու առաջադիմական է:

Ինչպես արդեն նշեցի, հայերի և թուրքերի փոխհարաբերությունները չափազանց լավ են եղել, բայց մինչև 19-րդ դարի վերջը: Այս հանգամանքը խոստովանել է նաև հայերի Ներսես պատրիարքը Մեծ Բրիտանիայի դեսպանի հետ ունեցած զրույցում: Հանդիպման արձանագրությունը պատմական շատ կարևոր վավերաթուղթ է, կրում է 638-րդ թվահամարը: Այն վկայում է, որ Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև հերթական պատերազմը ծագելուն պես, ռուսական ծավալապաշտության սերմանած գաղափարները գայթակղում են հայերին, և նրանք սկսում են փայփայել ազատ Հայաստանի հեռանկարը: Երբ դեսպանը պատրիարքին հարցնում է, թե ի՞նչ պետք է հասկանալ «ազատ Հայաստան» ասելով, վերջինս թվարկում է Արևելյան Անատոլիայի մի շարք բնակավայրեր: Մեծ Բրիտանիայի դիվանագետի այն առարկությանը, որ այդ տարածքներում հայերը մեծամասնություն չեն կազմում, Ներսես սրբազանը բառացիորեն պատասխանում է. «Գիտեմ, բայց այսօր իրավիճակը փոխվել է, օսմանցիները սկսել են նահանջել ռուսական գործերի առջև»:

Վերևում ես ճիշտ բառը գործածեցի՝ Հայկական հարցը ծագեց ծավալապաշտական դարաշրջանում, որը ժամանակի բոլոր իրադարձությունների վրա իր ներգործությունն ունեցավ: Բանը այնտեղ հասավ, որ աշխարհի բազմաթիվ երկրներ փորձեցին Օսմանյան կայսրությունից որոշակի տարածքներ նվաճել: Քանի որ Ռուսաստանի և Անգլիայի շահերը բախվում էին տարածաշրջանում, Օսմանյան կայսրությունը կորցրեց Թունիսն ու Եգիպտոսը: Այդ պահից սկսած Արևելյան Անատոլիան խաղալիք դարձավ շահագրգիռ երկրների համար: Միաժամանակ հայերն իրենց կուսակցությունները կազմավորեցին, որոնք կոչվում էին «Դաշնակ», «Հնչակ» և «Ռամկավար»: Նույնիսկ հայկական աղբյուրները չեն թաքցնում, որ այս խմբավորումները զինված են եղել, ընդ որում՝ զենքն ուղղել են պետության դեմ:

-- էջ 148 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Այսպես օրինակ՝ Լուիզ Նալբանդյանը Կալիֆոռնիա յի համալսարանում գիտական թեզ է պաշտպանել, որով փաստում է, որ կուսակցություններն ուզում էին իրենց նպատակին հասնել զենքի միջոցով:

1890 թվականից սկսած՝ հայկական ջոկատները զինված գործողություններ են ձեռնարկել կայսրության ներսում, մահմեդական գյուղեր են բռնազավթել, մարդկանց սպանել, անգամ պետության ղեկավարների դեմ ահաբեկչություններ են գործադրել:

Իհարկե, նման արարքների պատասխանատուները կանգնել են դատարանի առջև, բայց հաճախ կառավարությունը նախնտրել է զիջման ուղին, ինչպես 1891-ին, 1893-ին և 1905-ին իր դեմ կատարված մահափորձերից հետո Աբդուլ Համիդ 2-րդը վարվեց:

Ամեն դեպքում՝ ինդիրն առկա էր, և այն Եվրոպայում դիտվում էր որպես հայերի նախճիր: Հայկական կուսակցությունների արտասահմանում գտնվող ներկայացուցիչները և մանավանդ տարբեր դեսպանատներում աշխատող թարգմաններն անընդհատ վերարժարծում էին ինդիրը, ջարդերի քողի տակ ներկայացնում: Օրինակ, այն հակամարտության ժամանակ, որը հայտնի է որպես «Սասունի առաջին դեպքեր», հայերը թուրքական բանակի մահմեդական տասնապետին սպանեցին, և երբ զինվոր-ոստիկանները փորձեցին միջամտել, աշխարհով մեկ տարածեցին, թե իրենց կոտորում են: Մի հայ հեղինակ, որը Փաստորմաջյան է կոչվում, այս կապակցությամբ գրում է, որ հայերը 3.500 զոհ են տվել, սակայն դեպքի վայրում գտնվող ամերիկյան մի միսիոներ՝ Էդվին Բրայսը այդ թիվը հասցնում է 6.000-ի, այնինչ հետաքննություն կատարած եվրոպական դիվանագետները գտնում են, որ ընդամենը 125 հոգի է մահացել:

Եվրոպայում, մի կողմից՝ նման դեպքերի ժամանակ թվերն ուռճացվում են, մյուս կողմից՝ նահատակված մահմեդականները ոչ մի ուշադրության չեն

արժանանում: Պատճառը, պարզ է, եվրոպացիները, Օսմանյան կայսրությունում բնակվող ազգային փոքրամասնությունների շահերը պաշտպանելու պատրվակով, ցանկանում էին միջամտել երկրի ներքին գործերին, մահմեդականները նրանց չէին հետաքրքրում, արտաքին աշխարհում պաշտպանություն չէին գտնում:

-- էջ 149 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

Աստիճանաբար, սակայն, ներքին հակամարտությունը, պայքարը քաղաքացիական պատերազմի բնույթ ստացավ: 1909-ին, օրինակ, Կիլիկիայի Ադանա քաղաքում հայերը և թուրքերը զինված փողոց ելան, իրար դեմ ճակատամարտեցին:

1915 թվականի դեպքերն իրենց որոշակի առանձնահատկությունն ունեն, որոնց ես ուզում եմ թռուցիկ անդրադառնալ:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին Օսմանյան կայսրության ղեկավարները հայ համայնքի ներկայացուցիչներին խնդրեցին առաջիկա հակամարտության ընթացքում գորակցել իրենց: Դա չափազանց բնական էր, քանի որ հայերը օսմանյան հպատակներ էին, պիտի պաշտպանեին իրենց հայրենիքը: Սակայն, երբ պատերազմն սկսվեց, հայերն իրենց բոլորովին այլ կերպ պահեցին: Նրանք զինված ջոկատներ կազմավորեցին և հենակետեր ստեղծելով օսմանյան բանակի թիկունքում, սկսեցին հարձակվել զինվորների վրա ու սպանել, գրավել, ավերել մահմեդական գյուղերը, կտրել հեռագրալարերը, թալանել պահեստները, ասես այդ երկրի բնակիչները չլինեին:

1915 թվականի մայիսի 9-ին հայկական ջոկատները գրավեցին օսմանյան Վան քաղաքը, կոտորեցին մահմեդական ազգաբնակչությանը և հայկական անկախ պետություն ստեղծելու գործունեություն ծավալեցին:

Այս ամենը օսմանյան պետության համար լուրջ վտանգ էր, քանի որ ռուսական բանակը վճռական գործողությունների էր անցել, արևելյան նահանգները, փաստորեն, կորստի փորձության էին ենթարկվել: Մյուս կողմից էլ անգլիացիները ուժեր էին կուտակում Դարդանեղում, որը Ստամբուլի գլխավոր դարպասն է:

Նման իրավիճակում օսմանյան կառավարությունը, իր կամքին հակառակ, տեղահանության որոշում կայացրեց, ըստ որի՝ ճակատին մոտ բնակվող, հավանական վտանգ ներկայացնող հայերը պիտի տեղափոխվեին Միջագետքի հյուսիսային շրջանները: Ես ունեմ արտաքին գործերի նախարարության համապատասխան փաստաթուղթը, որը կարող եմ ցույց տալ ձեզ (ներկայացնում է նախագահին): Տեղահանության վճիռը չէր վերաբերում կաթոլիկ, բողոքական, ինչպես նաև արիեստավոր հայերին ու նրանց ընտանիքներին: Մինչև իսկ տեղահանվողների կյանքը և ունեցվածքը պահպանելու հատուկ հրաման է եղել:

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

Եվ չնայած Օսմանյան կայսրությունը պատերազմի մեջ էր, տնտեսական չափազանց ծանր վիճակ ուներ, այդ նպատակի համար նշանակալի գումար էր հատկացրել: Տեղահանվողների անվտանգությունը հսկում էր զինվոր-նոսրիկանությունը: Նոր բնակավայր հասնելուն պես բոլորը պիտի տեղավորվեին, հողագործները սերմ, գյուղատնտեսական գործիքներ ստանային:

Ես պատահականորեն չասացի, որ օսմանյան կառավարությունն իր կամքին հակառակ նման քայլի դիմեց: Տեղահանմամբ երկիրն էլ էր զգալի կորուստներ կրում, տարագրվող հայերի մեջ առաջնակարգ այնպիսի անձինք կային, որոնք եթե պատասխանատու պաշտոններ զբաղեցնեին, Օսմանյան կայսրությանը լուրջ աջակցություն ցույց կտային: Օրինակ՝ հայ սպաները, որոնց ռազմաճակատից հետ կանչեցին, ծառայության նշանակեցին ներքին գործերում:

Տեղահանությունն ավարտվելուն պես ի հայտ եկան բազում հրապարակումներ:

Դրանցից ամենանշանակալի հեղինակը մինչ այդ անձանոթ Արամ Անտոնյանն է: Նրա գիրքը լույս է տեսել հայերեն, ֆրանսիայում՝ ֆրանսերեն, անգլերեն՝ Անգլիայում, մինչև անգամ Միացյալ Նահանգներում և հիմնված է, այսպես կոչված, Թալեաթ փաշայի հեռագրերի վրա: Դրանից հետո ասպարեզ ելած բազում հրապարակումների համար այն սկզբնաղբյուր է դարձել:

1981 թվականին, Անկարայում Թուրքիայի պատմության ինստիտուտը լույս ընծայեց մի աշխատություն, որը քննադատեց Անտոնյանի ներկայացրած փաստաթղթերը: Դա չափազանց կարևոր հետազոտություն է, այնպես որ՝ այն բոլոր հեղինակները, ովքեր ցանկանում են ուսումնասիրել վերոհիշյալ թեման, պիտի անպայման ծանոթանան այդ հիմնավոր փաստարկներին: Ես այստեղ չեմ կարող վերապատմել 344 էջանոց գիրքը, նշեմ միայն, որ, հեղինակների կարծիքով, քանի որ Անտոնյանը ծանոթ չէր հուլյան և գրիգորյան օրացույցների տարբերություններին, շփոթել է փաստաթղթերի տարեթվերը, որոնց տարբերությունը կազմում է 584 տա րի և 13 օր: Բացի դրանից, Անտոնյանի հրապարակած ոչ մի վավերաթղթի վրա ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի ձեռագիրը կամ ստորագրությունը չկա: Այդ ժամանակ հրամաններ արձակելիս օսմանյան

կառավարությունը ծածկագրեր էր օգտագործում, որոնք, պատերազմի պատճառով, հաճախակի փոփոխում էր: Ըստ իմ հիշատակած հետազոտության հեղինակների, քանի որ Անտոնյանը չի իմացել այդ ծածկագրերը, հեռագրերը վերծանել է յուրովի և իր ներկայացրած փաստաթղթերը կոչել «վավերական»: Մինչդեռ վավերականները չեն պահպանվել:

Բացի այս ամենից, Անտոնյանի հրապարակած հեռագրերից մեկի տակ կա Հալեպի քաղաքապետ Մուստաֆա Աբդուլլահադ-Նուրիի ստորագրությունը, մինչդեռ պաշտոնական տեղեկագրերից հայտնի է, որ տեղահանության ժամանակ նա այնտեղ չի պաշտոնավարել, ուրեմն և չէր կարող հեռագրեր ստորագրել:

Ես կուզեի ձեզ ավելի հանգամանորեն շարադրել աշխատության փաստերը, բայց քանի որ դրա հնարավորությունը չկա՝ օտար լեզվով, անձնական նախաձեռնությամբ կատարված համառոտագրությունը ներկայացնում եմ ատյանին (հանձնում է նախագահին):

Չափազանցված են նա և 1915 թվականի իրադարձություններին առնչվող թվերը: Մեր ժամանակակից ըմբռնմամբ՝ անհատի կորուստը, անկախ ամեն ինչից, ցավալի է, սակայն հայկական սկզբնաղբյուրների մեջ այնպիսի հակասություն կա, որ ստիպված ենք անդրադառնալ այդ թեմային: Իմ տրամադրության տակ է հայկական պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշայի՝ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարությանն ուղղված պաշտոնական նամակը, հասկանալի է, պատճենը, որտեղ նշված է, որ տարագրվել են 600.000-ից 700.000 հայեր, որոնցից 390.000-ը հասել են վերջնական հանգրվան: Հանգամանորեն նշված է նաև, թե տարագրվածների որ մասն է գաղթել Կովկաս, Պարսկաստան, Սիրիա, Բաղդադ, Ստամբուլ և Պաղեստին:

Հայտնի է՝ 1878 թվականի պատերազմից հետո, 1880-ին և 1881-ին հնչակյան կուսակցությունը մեծացնում է Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության թվաքանակը, որին, դատելով պաշտոնական հաղորդագրություններից և նամակներից, նույնիսկ Մեծ Բրիտանիայի դեսպանությունն ու կառավարությունն են թերահավատությամբ վերաբերվում:

Դրան հակառակ, օսմանյան հաշվարկները ճշգրիտ են ու որոշակի հեղինակներ ունեն, և չնայած դրանով զբաղվել են դեռևս

-- էջ 152 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

1830-ից, հավաստի են թվում 1896-ից հետո արվածները: Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այդ թվականից մարդահամարի վարչությունը նախ ղեկավարել է հրեա և ապա՝ 1897-ից 1903-ը՝ Շնորհյան ազգանունով հայ: Ըստ այդ վարչության տվյալների՝ 1896-ին Օսմանյան կայսրությունում բնակվել է 1.150.000 հայ, 1914-ին՝ 1.260.000: Իմ տրա մադրության տակ են արտաքին գործերի նախարարի՝ Ֆրանսիայի վարչապետ պարոն Կլեմանսոյին գրած պաշտոնական նամակի, ինչպես նաև 1896 թվականի հոկտեմբերի 4-ի պետական հաշվետվության զեկուցագրի պատճենները, որոնք վկայում են, որ հայերը մեր երկրում ամենուր փոքրամասնություն են կազմել (հանձնում է նախագահին):

Մենք գիտենք, որ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, նախքան բոլշևիկների Կովկաս թափանցելը, հայերն անկախ պետություն ստեղծեցին, որի վարչապետը Քաջազնունին էր: Նա «Դաշնակցությունն այլևս անելիք չունի» խորագրով գիրք է հրատարակել, որն, ըստ էության, կուսակցության՝ 1923 թվականին Բուխարեստում կայացած համագումարի ելույթն է: Այնտեղ նախկին վարչապետը նշում է, որ թուրքերը ցանկանում էին հայերի հետ խաղաղության պայմանագիր կնքել, բայց դաշնակցությունը, որն իրեն չափազանց հզոր էր կարծում, մերժեց, որոշ հակամարտությունից հետո միայն ստիպված եղավ համաձայնվել...

ՆԱԽԱԳԱՀ - Պարոն թարգման, խնդրում եմ հաղորդեք վկային, որ ես չեմ ուզում սահմանափակել քաղաքացիական հայցվորներին հատկացված ժամանակը, բայց լավ կլինի, եթե նա ավելի սեղմ արտահայտվելու ջանք թափի: Ոչ թե կրճատի իր ելույթը, այլ՝ ամփոփի...

ԱԹԱՅՈՎ (Թարգմանի միջոցով) - Ինչպես Քաջազնունին, այնպես էլ մի այլ հեղինակ՝ Փափազյանը իրենց աշխատություններում վկայակոչում են, որ հայերն ու թուրքերը նախ Ալեքսանդրապոլի, ապա Մոսկվայի և 1921 թվականի Կարսի պայմանագրով վերջ են տվել պատերազմին, սահման են գծել, համաձայնվել, որ մեկը մյուսին ոչինչ պարտք չէ: Իրավական վիճակը այդպիսին է այսօր, այժմ...

ՆԱԽԱԳԱՀ - Վերջացրի՞ք:

ԱԹԱ ՅՈՎ - Այո՛:

-- էջ 153 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

ՆԱԽԱԳԱՀ - Տեր և տիկնայք երդվյալներ, հարցեր կա՞ն:

ԱՌԱՋԻՆ ԵՐԴՎՅԱԼ - Ես ինձ թույլ եմ տալիս՝ իհարկե ձեր արտոնությամբ, պարոն նախագահ, պրոֆեսորին պարզապես հարցնել, թե արդյո՞ք մենք պետք է հայ ժողովրդի, մասնավորապես ձերբակալվածների ներկա պահանջները բոլորովին անհիմն համարենք: Ի՞ր կարծիքով:

ԱԹԱՅՈՎ - Ես չեմ կարող ասել, որ այս չորս երիտասարդի և հայ ժողովրդի պահանջները նույնն են: Չորս անձեր չեն կարող ներկայացնել աշխարհով մեկ սփռված հայությանը: Միջազգային իրավագիտությունում նման իրավագործություն գոյություն չունի: Հավանաբար ավելի ճիշտ կլինի հարցնելը, թե ո՞վ է իրենց այդպիսի լիազորություն ներհաղորդել:

Օրինակ, Թուրքիայի հայերը այս չորսին իրենց ներկայացուցիչները չեն համարում: Իմ ձեռքին է Թուրքիայի հայոց պատրիարքի երեկվա հայտարարությունը, որի վերջին սախադասությունն ուզում եմ կարդալ. «Մենք մի անգամ ևս դատապարտում ենք թուրքական պետության դեմ ոճրագործություն կատարած հայ ահաբեկիչներին, որոնք միջազգային ահաբեկչության մասնիկն են»: Հարկավոր է հենց իրենց՝ Կիպրոսի, Եթովպիայի, այլ երկրների հայերին հարցնել այդ մասին, ես կարծում եմ, որ նրանցից շատերը քննարկվող խնդրի վերաբերյալ բավարար տեղեկություն էլ չունեն:

Իմ կարծիքով՝ կարևորը, նախ և առաջ, նախապաշարումները հաղթահարելն է: Ես հանրապետական Թուրքիայի զավակն եմ, հայերի դեմ ոչինչ չունեմ: Առաջին գիրքը, որ ընթերցել եմ, եղել է Վիյամ Սարոյանի «Իմ անունը Արամ է» պատմվածքների ժողովածուն: Ես բացել եմ մի քանի տարի առաջ մահացած Ժակ Փիլմանյանի՝ իմ մոտ բարեկամի գեղանկարչական աշխատանքների ցուցահանդեսը, որը նույնպես հայ է...

Այս ամենն ասելուց հետո ուզում եմ հարցնել, թե արդյոք կա՞ն հայեր, որոնք թուրք գրողների երկեր են իրենց մայրենի լեզվով թարգմանել կամ որևէ տեղ ներկայացրել են թուրք արվեստագետների ստեղծագործությունները...

ՆԱԽԱԳԱՀ - Պարոն թարգման, քաղաքացիական հայցի փաստաբանների համաձայնությամբ իհարկե, հարցրեք վկային, թե մտադիր չէ՞ ավարտել իր հետաքրքիր, չափազանց հետաքր -

-- էջ 154 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

քիր ելույթը: Այլ վկաներ էլ են սպասում, հարկ չկա չարաշահել տիկնայք և պարոնայք երդվյալների ուշադրությունը...

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Բայց ասվածները չի կարելի անպատասխան թողնել, պարոն նախագահ:

ՆԱԽԱԳԱՀ - Համբերե՛ք, ես պարզապես ուզում էի ասել, որ երեկ մեղադրյալները հնարավորություն ունեցան հանգամանորեն ներկայացնելու իրենց պատճառաբանություններն ու դրդապատճառները, վաղը քսանվեց-քսանյոթը վկաներ պիտի արտահայտեն տեսակետները: Քաղաքացիական հայցվորները ընդամենը երկու ներկայացուցիչ ունեն, բնական է, մենք նրանց ծավալվելու

հնարավորությունն պիտի տանք: Բոլոր դեպքերում՝ ես կուզեի, որ որքան կարելի է սահմանափակ լինեիք, որովհետև եթե սկսեիք պատմական վիճաբանություններով, զանազան մանրամասնություններով տարվել...

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Պարոն Նախագահ, ես չեմ ուզում հարգելի պրոֆեսորի հետ հակասություններ հարթել: Մեր դատաքննությունը բոլորովին այլ նպատակ է հետապնդում:

ՆԱԽԱԳԱՀ - Բայց յուրաքանչյուրը պիտի հարգի հակառակ կողմին:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Միայն մի բան, եթե նա մեզ պատմում էր իր մտերիմների մասին, ես էլ ուզում եմ մեծ մորս հիշատակել, նկատել տալ, որ այսօր, այստեղ, Թուրքիայի պաշտոնական տեսակետը հնչեց, որը, եթե կարելի է այդպես արտահայտվել, երեք արդարացում ունի, առաջին՝ հայերը դավաճան են, համենայն դեպս 1915-ին եղել են:

ՆԱԽԱԳԱՀ - Նա այդպիսի բան չասաց...

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Գաղափարը այն էր, սակայն ես չեմ ուզում նրան պատասխանել, որովհետև վեճը մեզ շատ հեռուները կտաներ: Երկրորդ՝ ցեղասպանությանն առնչվող վավերաթղթերը հայերի կողմից հորինված կեղծիք են, քարոզչական նպատակ ունեն: Երրորդ՝ զոհերի թիվը չափազանց մեծ է: Կրկնում եմ՝ սա Թուրքիայի պաշտոնական տեսակետն է, որն ամենևին խաղաղության ու հաշտության չի տանում:

ՆԱԽԱԳԱՀ - Հիմա պարոն Աթայովն էլ կուզենա ձեզ պատասխանել: Դուք հնարավորություն կունենաք ձեր վկաների տեսակետները ներկայացնելու, և մենք կկարողանանք դրանից

-- էջ 155 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

հետո ընդհանուր եզրակացության հանգել:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Մենք դա ակնկալում ենք, պարոն Նախագահ, այդ պատճառով էլ ես քաղաքացիական հայցվորների վկային միայն մի հարց եմ ուզում տալ: Մի պահ ընդունենք, որ այո՛, ամբողջ աշխարհը խաբված է, ամբողջ աշխարհը թյուր պատկերացում ունի այն ամենի վերաբերյալ, ինչը վկան նման հնարամտությամբ և ամենայն հավանականությամբ պատմական ճշմարտությունը քողարկելու ճիգով՝ «1915 թվականի դեպքեր» կոչեց: Այո՛, ընդունենք, որ հայ մամիկներն ու բոլոր նրանք, ովքեր կարծում էին, որ տեսել կամ ապրել են այդ ամենը, համընդհանուր զգայապատրանքներ են ունեցել, որ գերմանացի պատվելի, դոկտոր Լեփսիուսի գաղտնի տեղեկագրերը ջարդերի մասին, ԱՄՆ-ի դեսպան Մորգենթաուի հուշերը և ընդհանրապես՝ գերմանական,

անգլիական, ամերիկյան բոլոր վավերագրերը, որոնց թվում և Թալեաթի հեռագրերը, որոնք պաշտոնական էինք կարծում, կեղծ են:

Ընդունենք այս ամենը: Այդ դեպքում՝ վկան ինչպե՞ս է բացատրում այն հանգամանքը, որ 1919-ի հունվարին, այսինքն՝ մի քանի ամիս առաջ իթթիհատականների դատավարությունից, որը մահվան պիտի դատապարտեր Թալեաթին ու իր գործակալներին, Մուստաֆա Քեմալը, հանդես գալով Կոստանդնուպոլսի զինվորական դատարանում, հայտարարեց. «Մեր հայրենակիցները, բռնատիրության բոլոր հնարավոր միջոցները գործի դնելով, անլուր ոճրագործություններ կատարեցին՝ կազմակերպեցին բռնագաղթ ու կոտորած, քարյուղ լցրին վրաներն ու ողջ-ողջ նորածիններ այրեցին, ծնողների աչքի առաջ՝ ոտքերն ու ձեռքերը կապելով կանայք, աղջիկներ բռնաբարեցին... Նրանք հայերին այնպիսի անտանելի դրության հասցրին, որ ոչ մի ժողովուրդ, իր ամբողջ պատմության ընթացքում, չէր հասել»:

Ի՞նչ կարծիքի է վկան արդի Թուրքիայի հիմնադրի այս հայտարարության մասին, որը խոսելով «անլուր ոճրագործությունների», «բռնատիրության և կոտորածի» մասին, ամենայն հավանականությամբ գիտեր, թե ինչ նկատի ունի: Նա իշխանության գլուխ անցնելուց քիչ անց պիտի խոսեր «ուժով ու բռնությամբ իշխանություն նվաճելու» մասին և վկայեր կապվածությունը թուրքական ազգային ինքնությանը՝ իր հերթին կոտորելով Կի -

-- էջ 156 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

լիկիայի հայերին:

Կուզեի քաղաքացիական հայցվորների վկայի վերաբերմունքն իմանալ Մուստաֆա Քեմալի արտահայտությունների վերաբերյալ: Մնացածին մենք մեր պաշտպանականներում կանդորադառնանք

ՆԱԽԱԳԱՀ - Պարոն պրոֆեսոր, ես ձեզ պատասխանելու հնարավորություն եմ տալիս:

ԱԹԱՅՈՎ - Ինձ հայտնի է պարոնի ընթերցած փաստաթուղթը... Վաղուց ի վեր Միացյալ Նահանգներում հրատարակվող «Արմինյըն ռիվյու» հանդեսում հետաքրքիր հոդված կար այն մասին, որ այդ ամենը գրողը բոլորովին այլ մարդ է եղել, բայց նույն՝ Մուստաֆա Քեմալ անուն-ազգանունն է ունեցել: Երկրորդ՝ ճիշտ է, որ 1915-ին, հետևաբար և հաջորդ տարիներին որոշ անպատասխանատու անձինք հայերի սպանել են, բայց ճիշտ է նաև այն, որ թուրքեր էլ են զոհվել: Հայերի հետ պատահածների վերաբերյալ բազմաթիվ գրություններ կան, ես էլ եմ դրանք կարդացել: Մնկալի այն բանից՝ Մուստաֆա Քեմալը արե՞լ է նման հայտարարություն, թե՞ ոչ, հայտնի է, որ հայերը կորուստներ ունեցել են: Օսմանյան կառավարությունը ընդունում էր այդ իրողությունը, քանի որ դատել է

1397 իր գու, որոնց մի մասը մահվան է դատապարտվել, մյուսներն այլ ծանր պատիժներ են ստացել: Նորից անդրադառնալով «Արմինյըն ռիվյու» հանդեսին, որը երկու հաջորդական համարներում հոդվածներ էր տպագրել քննարկվող իրադարձությունների մասին, ուզում եմ հիշեցնել, որ ընդամենը 538 թուրք պատասխանատուի անուն էր հրապարակված: Թերևս այդ թիվը փոքր-ինչ ավելի մեծ է եղել, քանի որ օսմանյան կառավարությունը 1397

հոգու է դատել, բայց ոչ ավելի:

Հայկական հարցը չի կարող հիշողությամբ լուծվել: Եթե խնդիրը վերաբերեր սոսկ որոշ հայ ընտանիքների ճակատագրին, կարելի էր հուշերով առաջնորդվել, սակայն դարասկզբի իրադարձություններն ավելի գիտական, ճշգրիտ մոտեցում են պահանջում: Այս դեպքում արդեն միայն այս կամ այն կողմի վկայություններով չի կարելի գոհանալ: Ես էլ եմ ծանոթ այստեղ վկայակոչված հուշերին, նույնիսկ մատենագրություն եմ կազմել ու համոզվել, որ հայկական աղբյուրները չորս անգամ ավել -

-- էջ 157 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

լի են, քան թուրքականները: Դա չի նշանակում, որ թուրքերեն գրված գրքերը իրենցից կարևորություն չեն ներկայացնում, ուղղակի որոշ հայկական շրջանակներ այդ թեմաներով չափազանց շատ աշխատություններ են հրատարակում: Ես չեի ուզենա, որ այս հանգամանքն աննկատ մնար:

ՆԱԽԱԳԱՀ - Պաշտպանությունը հարցեր ունի՞ վկային տալու:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Միայն մի հարց, պարոն նախագահ: Վկան պրոֆեսոր է, հենց նոր արտահայտվեց հուշերի գիտական սկզբնաղբյուրների մասին: Կուզեի, որ ասեր՝ ճանաչո՞ւմ է Ֆորիսոն անունով ֆրանսիացի գիտնականի:

ԱԹԱՅՈՎ - Չեմ կարողանում հիշել:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Ֆորիսոնը ժխտում է հրեական ցեղասպանությունը, քանի որ այն հիմնված է ոչ թե գիտական աղբյուրների, այլ՝ հիշողությունների վրա...

ԱԹԱՅՈՎ - Հրեաների կոտորածների փաստաթղթերը առկա են Նյուրնբերգի ատյանի թղթածրարներում, քառասունյոթը հատոր են կազմում:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Ինչո՞ւ Թուրքիան չցանկացավ հայկական ջարդերի կապակցությամբ նյուրնբերգյան դատավարություն կազմակերպել:

ԱԹԱՅՈՎ - Հենց նոր ես խոսեցի Թուրքիայի պատմության ինստիտուտի հրապարակած այն գրքի մասին, որը Անտոնյանի դրույթների պատասխանն է:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Ե՞րբ է Թուրքիան մտադիր իր թղթածրարները ամբողջ աշխարհի գիտնականների տրամադրության տակ դնել:

ԱԹԱՅՈՎ - Երբ Թուրքիան պարտվեց Առաջին համաշխարհային պատերազմում, ֆրանսիական ու անգլիական զավթողական ուժերը թղթածրարներում ոչինչ չգտան:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Ուրեմն ոչինչ չի՞ պահպանվել:

ԱԹԱՅՈՎ - Օսմանյան կայսրության բոլոր թղթածրարները եղել են հաղթանակած երկրների տրամադրության տակ, ընդ որում՝ բավական երկար ժամանակ: Մասնավորապես անգլիացիները մանրագնին ուսումնասիրել են...

ՆԱԽԱԳԱՀ - Ես ձեզ խնդրում եմ սահմանափակվել, մենք ուրիշ վկա էլ ունենք...

-- էջ 158 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ԱԹԱՅՈՎ - Եթե պարոն նախագահը թույլ տար, կուզեի պատասխանել այդ հարցին, մանավանդ որ շատ կարևոր լրացումներ ունեմ:

Այն ուժերը, որոնք Առաջին համաշխարհային պատերազմի վերջում գրավեցին Թուրքիան, քրքրել են բոլոր փաստաթղթերը, որոնց մասին խոսում է պարոնը: Վարչապետը, պաշտպանության նախարարը, քաղաքապետները, գեներալները, կառավարիչները, որոշ գրողներ՝ ընդհանուր թվով 144 հոգի, աքսորված էին: Նրանք մեղադրվում էին երեք տարբեր հանցանքների համար, որոնցից առաջինը վերաբերում էր հայերին: Երբ օսմանյան բանակը ավելի ու ավելի նահանջեց, բռնագրավող ուժերը Դամասկոսում, Բաղդադում, վերջիվերջո՝ նաև Ստամբուլում նորանոր թղթածրարներ են որոնել, բայց քանի որ չեն գտել, պաշտոնապես գրել են ամերիկյան կառավարությանը, և ահա՝ այսպիսի պատասխան ստացել. «Մեր տրամադրության տակ եղած փաստաթղթերով անհնար է հաստատել այդ ամենը»:

Թուրքական վավերագրերը, իրոք, կարևոր են, մենք սկսել ենք հրատարակել, այնպես որ, եթե Անտոնյանի փաստաթղթերը հավաստի լինեին, մի՞թե բռնագրավող ուժերը ժամանակին հաշվի չէին առնի: Անգլիական ուժերը տեղեկություն չեն ունեցել Անտոնյանի հեռագրերի մասին, որոնք հրապարակվել են 1920-ին, այսինքն հենց այն շրջանում, երբ իրենք կատարում էին այդ որոնումները: Նույնիսկ նացիստները, Եվրոպայում, չկարողացան ազատվել իրենց թղթածրարներից, դուք հնարավոր համարո՞ւմ եք, որ կառավարությունը, որը պարտվել էր պատերազմում, կարողություն չունեի նույնիսկ իր գիտնականներին հազցնելու, նման վավերագրեր անհետացնել ոչ միայն մայրաքաղաքում, այլև այն հսկա տարածքներում, որոնք ստիպված էր լքել:

Դարասկզբի դեպքերին չի կարելի վերջնական գնահատական տալ առանց հանգամանորեն ուսումնասիրելու այն փաստաթղթերը, որոնք մենք ջանում ենք ի մի բերել:

ՆԱԽԱԳԱՀ - Պաշտպանությունն այլ հարցեր ունի^օ:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Ո՛չ, պարոն նախագահ:

ՆԱԽԱԳԱՀ - Ատյանը շնորհակալ է ձեզնից, պարոն պրոֆեսոր:

-- էջ 159 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

Դատաքննությունը շարունակվում է:

Վաճառական Տիգրան Գևորգյանի (Ստամբուլ) դատալսումը: Երդման արարողակարգ:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք Ստամբուլի հայոց պատրիարքարանի հոգևոր խորհրդի փոխնախագահն եք... Պարոն փաստա բան, ինչ-որ բա՞ն եք ուզում ասել:

ՓԱՍՏԱԲԱՆԱՊԵՏ ԲՈՂԸԼՈ - Պարոն նախագահ, ինչպես արդեն նշեցիք, պարոն Գևորգյանը կարևոր դեր է խաղում Ստամբուլի հայկական համայնքում: Ես կուզեի, որ նա ատյանին պատմեր իրենց առօրյայի մասին:

ԳԵՎՈՐԳՅԱՆ - Պարոն նախագահ, ես համայնքի եկեղեցիներից մեկի թաղական խորհրդի նախագահն եմ, Ստամբուլի հայկական մի վարժարանի հոգաբարձուն, պատրիարքարանի վարչական խորհրդականը... Նախ և առաջ ուզում եմ ասել, որ այժմ Ստամբուլում մոտավորապես 80.000 հայ է ապրում, մենք ունենք 35 դպրոց, 35 եկեղեցի, երկու օրաթերթ, պարբերաթերթեր, մշակութային կյանք: Դպրոցներում ամեն շաբաթ անցկացվող 30 դասաժամից 19-ը հայերեն են: Եկեղեցիներում, առավել ևս, ոչ մի խնդիր չունենք, ազգային կյանքը շարունակվում է: Կրոնի, մշակութային միջոցառումների վրա, առօրյա կյանքում ոչ մի ճնշում չենք զգում, հայերի մեծ մասը առևտրով է զբաղվում, բարվոք վիճակում է: Հենց որ մենք Ստամբուլում իմացանք այս դեպքի մասին, խիստ վրդովվեցինք: Նախ և առաջ այն ամենը, որ այստեղ ասացին եկեղեցիների մասին, ճշմարիտ չէ: Ինչ վերաբերում է երկու՝ լուսավորչական, ավետարանչական կղերականներին, քանի որ մենք օրենքների պետությունում ենք ապրում, նրանք ստացան իրենց արժանի պատիժը՝ Գյուզելյանը դատապարտվեց տասնչորս ամսվա, մյուսը՝ կարծեմ երկու տարվա բանտարգելության:

Ստամբուլի հայերը քրիստոնյա են, Թուրքիայի՝ ծագումով հայ քաղաքացիներ: Մենք չենք հասկանում, Թուրքիայում ոչ ոք չի հասկանում, թե ինչո՞ւ են անմեղ

պաշտոնյաներ զոհվում, ընտանիքներ կործանվում, մայրերը՝ սգավոր, զավակները՝ որբեր դառնում: Մենք, որպես երկրի քաղաքացիներ, խիստ վրդովվում ենք, երբ իմանում ենք, որ իբր այս ամենը հայերի համար

-- էջ 160 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Է արվում: Չենք հասկանում, թե ո՞վ է նրանց հայի անունից գործելու իրավունք տվել: Դա բացարձակապես անընդունելի է Թուրքիայի հայերի համար:

Ձեզ եմ հարցնում, պարոն Նախագահ, եթե Ֆրանսիայի որևէ պաշտոնական ներկայացուցչի դրսում հայերը սպանեին, տեղի համայնքն ի՞նչ կմտածեր: Մենք այս ոճրագործությունները համարում ենք անմարդկային, ոչ քրիստոնեական, միջազգային իրավունքներին հակասող: Ոչ մարդկային, որովհետև որևէ մեկն իրավունք չունի վերջ տալու մի ուրիշի կյանքին: Ոչ քրիստոնեական, որովհետև մեր կրոնը, - հայերի 99%-ը քրիստոնյաներ են, - նման արարքներ չի ընդունում: Բացի դրանից, Թուրքիայի հայերը շատ լավ գիտեն, թե ինչ է տեղի ունեցել պատմության ընթացքում և չեն ուզում միջազգային ուժերի խաղալիքը դառնալ: Մենք համոզված ենք, որ 1920-ին և 1921-ին Կարսի, Մոսկվայի, Ալեքսանդրապոլի պայմանագրերով տարակարծություններն ավարտված են, այժմ վճռել ենք խաղաղ կյանք վարել, պահպանել մեր դպրոցները, մշակույթը, եկեղեցիները...

Ահա՛ այն ամենն, ինչ ուզում էի ասել:

ՓԱՍՏԱԲԱՆԱՊԵՏ ԲՈՂԸԼՈ - Մի հարց, որին խնդրում եմ պատասխանել՝ այո՞ կամ ո՛չ: Դուք լիիրավ քաղաքացի լինելու զգացողություն ունե՞ք:

ԳԵՎՈՐԳՅԱՆ - Իհարկե:

ՆԱԽԱԳԱՀ - Որքա՞ն հայ է այժմ ապրում Թուրքիայում:

ԳԵՎՈՐԳՅԱՆ - Ասացի՛ մոտավորապես 80.000:

ՆԱԽԱԳԱՀ - Թուրքիայի ընդհանուր ազգաբնակչությունը որքան է:

ԳԵՎՈՐԳՅԱՆ - 35 միլիոն: Մենք մնատուլիայում նույնպես մշտական գործող եկեղեցիներ ունենք:

ՆԱԽԱԳԱՀ - Այլ հարցե՞ր, պարոն Բողըլո:

ԲՈՂԸԼՈ - Չունեմ, պարոն Նախագահ:

ՆԱԽԱԳԱՀ - Դո՞ւք՝ տիկնայք և պարոնայք երդվյալներ, իսկ ընդհանուր պաշտպա՞նը, պաշտպանությունը:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Ես ուզում եմ վկային ցույց տալ այս լուսանկարը: Նախ թող
ատյանը տեսնի: Այնուհետև վկան ասի, թե գիտի՞ ինչ է այն իրենից ներկայացնում:

ԳԵՎՈՐԳՅԱՆ - Այո՛, Թալեաթ փաշայի գերեզմանն է:

-- էջ 161 --

ՕՐ ԵՐՐՈՐԴ

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Նո՞ւյն քաղաքում, որտեղ դուք եք ապրում:

ԳԵՎՈՐԳՅԱՆ - Կողքին է:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Եվ դուք ձեզ վատ չե՞ք զգում: Ձեզ վատ չե՞ք զգում, որ այն
քաղաքում եք ապրում, որտեղ, հատուկ դամբարանում, հանգչում է հայերի
բնաջնջման հրամանագիրն ստորագրողը:

Ուրիշ ոչինչ չունեմ ավելացնելու:

ՆԱԽԱԳԱՀ - Ո՞ւմ դամբարանի մասին է խոսքը:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Թալեաթ փաշայի, որը ներքին գործերի նախարարն էր,
հայերի բնաջնջման հրամանագիրն էր վավերացրել և այժմ թաղված է
Ստամբուլում, պարոնի բնակված քաղաքում, ընդ որում՝ Ազատության
բարձունքում: Հիմա նրան Թուրքիայում չափազանց մեծարում, ազգային հերոս են
համարում. բացի դամբարանից, Անկարայում նրա անունը կրող պողոտա, ինչպես
ևսև բազմաթիվ դպրոցներ կան:

ՆԱԽԱԳԱՀ - Այլ հարցեր չկա՞ն:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Չցանկանալով հանդերձ հոգնեցնել վկային, ուզում եմ մի
քանի հարց, համենայն դեպս, տալ:

Նախ և առաջ, քանի որ նա իրեն ներկայացնում է Ստամբուլի հայ համայնքի
գործիչներից մեկը, կարո՞ղ է մեզ բացատրել, թե ի՞նչն է պատճառը, որ
Թուրքիայում 1950 թվականից ի վեր, այսինքն ավելի քան երեսուն տարի,
«Հայաստան» բառը ջնջված է բոլոր քարտեզներից: Ես ուզում եմ ատյանի
ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ վերջին սեպտեմբերին,
ուսումնական տարին սկսվելուն պես, պատճառաբանելով, թե մի թուրք
պահեստային սպա ուսումնական քարտեզագրքում «Հայաստան» տեղանունը
տեսնելով բողոք է բարձրացրել, Թուրքիայի կրթության նախարարը
շրջաբերական է հղել, ուսուցիչներին հանձնարարելով այդ բառը ջնջել բոլոր
քարտեզներից, որտեղ էլ որ պատահի: Ավելին, նրա խոսնակը շտապել է
հանգստացնել հասարակական կարծիքը, հայտարարելով, թե խնդրո՞ւ առարկա
քարտեզագիրքը տպագրվել է 1950-ից առաջ, այն էլ՝ արտասահմանում:

Վկան, որը Ստամբուլի հայոց պատրիարքարանի հոգևոր խորհրդի փոխնախագահն է և ինչպես ինքը հայտնեց, հայկական վարժարանի հոգաբարձուն, իրեն վատ չի՞ զգում այն հան -

-- էջ 162 --

գամանքից, որ ջանքեր են թափվում հայերի գոյությունը ժխտելու և նույնիսկ մարդկային հիշողություններից «Հայաստան» բառը ջնջելու ուղղությամբ:

ԳԵՎՈՐԳՅԱՆ - Ինձ նման բան հայտնի չէ...

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Հայտնի չէ՞:

ԳԵՎՈՐԳՅԱՆ - Ո՛չ, որովհետև այդպիսի միտում չկա, ես տեղյակ չեմ:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Ուրեմն դուք տեղյակ չեք, ավելին՝ նման երևույթի առկայությունը չեք ընդունում: Մինչդեռ երիտասարդ կղերական հայր Մանուել Երկաթյանին, որին դուք հիշատակեցիք առանց անունը տալու, ոչ թե երկու տարի, ինչպես հայտարարեցիք, այլ՝ տասնչորս տարվա բանտարգելության են դատապարտել, որովհետև գրպանում գտել են պատմական Հայաստանի քարտեզը և դա պետական անվտանգության դեմ ուղղված նկրտում են համարել:

Երկրորդը, քանի որ ձեզ այդքան տեղյակ ներկայացրիք Թուրքիայի հայ համայնքի մշակութային կյանքին, կարո՞ղ եք գոնե այս հարցին պատասխանել:

Ձեզ հայտնի է, անշուշտ, որ վերջերս, Ստամբուլում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանավորությամբ բազմաթիվ ցուցահանդեսներ բացվեցին, որոնք նվիրված էին Անատոլիայի քաղաքակրթությանը: Այս թատերա-քաղաքական-մշակութային ներկայացումը, որին միջազգային լայն քարոզչությունը նախորդեց, պետք է, ըստ պաշտոնական հավաստիացումների, արտացոլեր անատոլիական քաղաքակրթության բոլոր կողմերը: Սակայն, եթե ցուցադրանքներում հիթիթների, հույների, բյուզանդացիների վերաբերյալ ինչ-որ վկայություններ կարելի էր գտնել, հայերի մասին հիշատակություն անգամ չկար: Ահա թե այդ կապակցությամբ «Լը Մոնդի» 1983 թվականի հունիսի 2-ի համարում ինչ է գրում Պերոնսել-Հյուգոզը. «Հազար ավսոս, ցուցադրված 12.000 նմուշներում չկար գեթ մեկը, որը հայկական մակագրություն ունենար: Միակ անձը, ով բացահայտ ընդվզեց դրա դեմ և ում շնորհիվ մենք այս կամ այն չափով թուրքական անկողմնակալությունը դրվատելու հաճույքն ունենք, թուրք մեծ գրող էր, որի անունը չենք նշում՝ կառավարության հետ հարաբերությունները չսրելու մտահոգությամբ: Նա ասաց. «Այո՛, դա իրոք պակասություն է», իսկ խոսակցությանը ներկա մի ֆրանսիացի

-- էջ 163 --

լրագրող ավելացրեց. «Համենայն դեպս, օդանավակայանում, ասես չուզելով, մի անհասցե պաստառ փակցված էր, որը, որպես անատոլիական արվեստի չնչին արտահայտություն, վկայում էր, որ Վանա լճում հայկական եկեղեցի կա...»

Որովհետև Վանը, պարո՞ն, որը ձեր երկրի պատմաբանը հանդգնել է թուրքական քաղաք կոչել, եղել է,- ես ձեզ ուզում եմ հիշեցնել, եթե իհարկե մոռացել եք,- Հայաստանի պատմական խոշոր կենտրոններից մեկը: Եվ խնդրո՞ւ առարկա եկեղեցին հայկական քաղաքակրթության բացառիկ հրաշալիք է:

Ինչպե՞ս եք դուք բացատրում այն իրողությունը, որ հայկական մշակույթը, քաղաքակրթությունը թուրքիայում ամենուր, հետևողականորեն թաքցվում է: Եվ ինչպե՞ս եք հաշտվում դրա հետ:

ԳԵՎՈՐԳՅԱՆ - Թուրքիայում գտնվող հայկական բոլոր եկեղեցիները հայկական եկեղեցիներ և այդպիսին են համարվում:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Լավ եք ասում, բայց գուցե այն պատճառով, որ դուք նախ և առաջ վաճառական եք և բացի ձեր առևտրից ոչնչով չեք մտահոգվում: Հենց այդ՝ Ստամբուլում բնակվող ծագումով հայ առևտրականի հանգամանքը նկատի ունենալով էլ ուզում եմ վերջին հարցն ուղղել: Ինչպե՞ս եք դուք հավակնում լիովին թուրք քաղաքացի լինելու զգացողությունն ունենալ 1956 թվականի սեպտեմբերի 6-ից՝ այն բանից հետո, երբ «Խաչերի գիշեր» հորջորջմամբ հակաքրիստոնեական, անուղղակիորեն հակահայկական ցույց տեղի ունեցավ, որի ընթացքում, մոլեռանդ ցասումով համակված ամբոխը Ստամբուլի շուկայում թալանեց ու հրդեհեց հայերի բոլոր խանութները, որոնց վրա նախքան իրենց՝ վաճառականների հետ հաշվեհարդար տեսնելը, խաչերով նշան էին արել:

ԳԵՎՈՐԳՅԱՆ - Սեպտեմբերի 5-ի և 6-ի դեպքերը հայերի դեմ ուղղված չէին, բախումներ էին հարուստների ու աղքատների միջև:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրիշ հարցեր չկա՞ն: Ատյանը շնորհակալություն է հայտնում ձեզ, պարոն:

Դատաքննությունն ավարտվում է:

-- էջ 164 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

«Վան» գործողության

արդարամարտիկ Արամ Բասմաջյանը

Արամ Բասմաջյանի
շիրմաթուղթը Փարիզի
Պեր-Լաշեզ գերեզմանոցում

-- էջ 165 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

-- էջ 166 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

Ուրբաթ, 27-ը հունվարի, 1984 թ.

-- էջ 167 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

-- էջ 168 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆԻՍՏ

Դատաքննությունը վերսկսվում է:

ՆԱԽԱԳԱՀ - Նախքան պաշտպանության կողմի վկաներին ունկնդրելը, ուզում եմ տեղեկացնել, որ երեկ երեկոյան ու այս առավոտ ստացել եմ չորս նամակ, որոնք, ելնելով իմ իրավագործությունից, ուզում եմ ընթերցել տալ ու կցել գործին:

Առաջին նամակը ուղարկել է Մարդու իրավունքների միության նախագահ Հենրի Նոգերը, երկրորդը՝ Մարսելում գործող Հայ կանանց միությունը, այն երեք հոգի են ստորագրել, երրորդը՝ ֆրանսիական բանակում ծառայած, Դիմադրության շարժմանը մասնակցած Նախկին հայ կամավորականների ազգային միությունը, վերջինը՝ Առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների ժամանակ ֆրանսիական բանակում կռված Հայ մարտիկների ընկերակցությունը:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸԹԼԵՐ - Այսօր, ճաշից հետո մենք լսելու ենք պաշտպանության կողմի բազմաթիվ վկաների: Ես ուզում եմ շատ արագ ձեզ տեղեկացնել, թե ինչ^օ ենք մենք նրանց հրավիրել և ի՞նչ հերթականությամբ են հանդես գալու:

Երկու վկայի՝ տիկին Մանուշյանին ու պարոն Ռոստոկերին ունկնդրելուց հետո, որոնք յուրովի են խորհրդանշում դատապարտվող երիտասարդների պահանջատիրությունը, մենք հնարավորություն կունենանք լսելու ցեղասպանության մի շարք զոհերի ու ականատեսների, ինչպես նա և այնպիսի անձանց, որոնք միաժամանակ տառապել են և՛ ցեղասպանության, և՛ ֆրանսիական Դիմադրության շարժման տարիներին:

Հետո, եթե իհարկե ցանկանաք, կունկնդրենք որոշ պատմաբանների, ինչպես նաև այնպիսի ֆրանսիացիների, որոնք հան -

-- էջ 169 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

գամանորեն ուսումնասիրել են խնդիրը: Վերջում սրահ կհրավիրենք ֆրանսիայում և նույնիսկ Թուրքիայում ապրող հայերի, նրանք մեզ հաղորդակից կդարձնեն իրենց զգացումներին:

Բացի դրանից՝ փաստաթղթերի, լուսանկարների խիստ կարևոր թղթածրարներ ենք պատրաստել պարոն Նախագահի, դատարանի անդամների, տիկնայք և պարոնայք երդվյալների, հասկանալի է՝ քաղաքացիական հայցվորների, ինչպես նաև ընդհանուր պաշտպանի համար: Մենք ուզում ենք դրանք ձեզ ներկայացնել նախքան ընդմիջումը:

ՆԱԽԱԳԱՀ - Քաղաքացիական հայցվորներն այս թղթածրարների առնչությամբ ասելիք ունենան:

ՊԱՇՏՊԱՆ ՍԱՐԴԱ - Ո՛չ:

Վկա Մելինե Մանուշյանի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՆԱԽԱԳԱՀ - Պաշտպան Լըքլեր, ի՞նչ հարց եք ուզում տալ վկային:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Պատասխանը միանշանակ է, պարոն նախագահ: Նախ ես ուզում եմ ձեզ ներկայացնել տիկին Մանուշյանին, նրա ներկայությունը մեզ համար խիստ կարևոր է: Դուք հավանաբար հիշում եք կարմիր որմազը, որը Դիմադրության շարժման տարիներին հայտնվել էր Փարիզի փողոցներում ու բառացիորեն ազդարարում էր. «Ահա՛ վկայությունը այն բանի, որ եթե ֆրանսիացիները թալանում, պայթեցնում, վնասում, սպանում են, ապա օտարազգիները՝ գործազուրկներն ու ոճրագործներն են նրանց ղեկավարում...»:

Այդ ազդի տակ նշված է մարտախմբի հրամանատարի՝ Միսաք Մանուշյանի անունը, որը հիսունվեց գրոհ է կազմակերպել, 150 ֆաշիստական բռնազավթիչ շարքից հանել:

Մի քանի օր առաջ հանրապետության նախագահը պաշտոնապես հայտարարեց. ինքն ակնկալում է, որ կառավարությունը համապատասխան հանձնարարականներ տա, որպեսզի փետրվարին առանձնակի շուքով նշվի Միսաք Մանուշյանի՝ Դիմադրության շարժման նշանավոր հերոսներից մեկի զոհվելու 40-ամյակը:

Ուրեմն, տիկին Մանուշյանը հայուհի է: Ես կուզեի, որ նա մեզ տեղեկացներ, թե ինչո՞ւ է դատարան եկել և ի՞նչ է ուզում

-- էջ 170 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ասել:

ՄԱՆՈՒԾՅԱՆ - Ես եկել եմ հայտնելու, որ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ որբացել, Երկրորդի ժամանակ այրիացել եմ: Ահա՛, մի նախադասությամբ, իմ կենսագրությունը: Մենք՝ երեք, չորս, հինգ տարեկան հայ որբերս դեպքերից առաջ խաղում էինք թուրք, հույն, հրեա, այլ ազգության երեխաների հետ, դրսում՝ թուրքերեն, տանը՝ մեր մայրենի լեզվով էինք խոսում:

Մենք իհարկե չիմացանք, թե ինչո՞ւ, ինչպե՞ս սկսվեց պատերազմը, բայց զգացինք, որ մի շատ կարևոր բան փոխվեց՝ թուրք մանուկները սկսեցին մեր հետևից

քարեր շարտել: Մենք զարմացանք և երբ հայտնեցինք մեր ծնողներին, նրանք ասացին. «Դուք էլ նույնն արեք»:

Ուրեմն համաշխարհային մեծ պատերազմում մենք ունեինք մեր փոքրիկ պատերազմը, որը զինադադարով չավարտվեց: Մեզ՝ հայ որբերիս հավաքեցին Ադաբազարի ամերիկյան որբանոցում, որի դաստիարակները հայեր էին: Ավելի ուշ, երբ թուրքական կառավարությունը հրահրեց Չմյուռնիայի հրդեհը, մեր տնօրինությունն զգաց, որ ապահով չենք, մեզ Հունաստան՝ մի ուրիշ ամերիկյան որբանոց տեղափոխեց, որտեղից էլ 1926-ին եկանք Ֆրանսիա ու հայկական մանկատան սաներ դարձանք:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Ես ուզում եմ ձեզ հարցնել, թե ամուսնանալուց հետո ինչո՞ւ եք դուք և ձեր ամուսինը՝ Մանուշյանը Դիմադրական շարժմանը նվիրվել:

ՄԱՆՈՒՇՅԱՆ - Իմ ամուսինը նույնպես Առաջին համաշխարհային պատերազմի որբերից էր, նրան երկրորդ համաշխարհային պատերազմում, ինչպես գիտեք, զնդակահարեցին Նացիստները: Մենք զինվորագրվեցինք Դիմադրական շարժմանը, որովհետև Նախ երախտապարտ էինք այն երկրին, որտեղ հանգրվանել էինք, բացի այդ՝ տեսնում էինք, որ կրկնվում էր այն ամենը, ինչ տեղի էր ունեցել Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Մեզ՝ հայերիս համար, Թալեաթը Նացիստ էր: Ավելի մանրամասնեմ՝ չէինք կարող չպաշտպանել Ֆրանսիան, որը մեզ համար արտասովոր երկիր էր, երկիր, որտեղ մեզ չէին ձերբակալում, չէին տանջում, որտեղ ժողովրդավարությունն էր գերիշխում: Իսկ Նացիզմը, Նացիզմը գաղափարախոսություն չէ, անասնական բնագոյ է, մենք փաստորեն ակա -

-- էջ 171 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

Նատես էինք լինում 20-րդ դարի երկրորդ ցեղասպանությանը: Ահա՛ թե ինչու ես ու Մանուշյանը իրար հետ խորհրդակցելուց հետո հենց առաջին օրվանից Դիմադրության շարքերն անցանք ու կռվեցինք մինչև 1943-ի նոյեմբերի 15-ը, երբ ամուսինս ձերբակալվեց ու զնդակահարվեց...

Նրանց դատավարության ժամանակ դատարանի դահլիճում կային Ֆրանսիական լրտեսներ, ինչպես նաև Գեստապոյի գործակալներ, որոնք Մանուշյանի մարտիկներին «ոճրագործներ» էին կոչում: Ամուսինս, որ երկար ժամանակ չէր կորցնում պաղարյունությունը, ի վերջո դահլիճ շրջվեց ու ասաց. «Գեստապոյի գործակալների դեմ ես ոչինչ չունեմ, մենք պայքարել ենք և այժմ ձերբակալվել, բայց դուք՝ Ֆրանսիացի լրտեսներ՝, ձեր խիղճն ու հոգին ծախել եք թշնամուն: Դուք սոսկ ժառանգել եք Ֆրանսիական քաղաքացիությունը, այսօր մենք դրան արժանանում ենք»:

Այո՛, նա կովում էր Ֆրանսիայի համար, չունենալով ֆրանսիական հպատակություն:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸԹԼԵՐ - Դուք ձեր հուշերի գրքում նկարագրել եք՝ երբ Մանուշյանը ընդհատակ անցավ, ինչի՞ մասին էր մտածում...

ՄԱՆՈՒՇՅԱՆ - 1936, թե 37 թվականին էր, մենք մեկտեղ դիտեցինք «Ես դատապարտում եմ» շարժանկարը, որտեղ Վիկտոր Ֆրանսենը մի անծայրաձիր գերեզմանոցում հիշում էր Առաջին համաշխարհային պատերազմի զոհերին, մրմնջում. «Ես դատապարտում եմ, ես դատապարտում եմ...»: Մանուշյանն ասաց. «Հիշեցի հորս, որը զենքը ձեռքին գնաց, որպեսզի կռվի Թալեաթի կառավարության դեմ, պաշտպանի հայ ժողովրդին»: Իրոք, ցեղասպանությունն արդեն սկսվել էր, նրա հայրը ընկնում է ինքնապաշտպանության մարտերում, մայրը խողխողվում է իր երեխաների ոտքերի առջև: Մանուշյանը պատմում էր. «Ես հիշեցի այս ամենն ու նռնակը նետեցի ֆաշիստների վրա, տեսա մորս ընկնելը, հորս ընկնելը և նետեցի նռնակը: Այդ պահին մտապատրանք ունեցա՝ ինչ-որ մեկը դրդում էր ինձ. «Կրակի՛ր, դու իրավունք ունե՛ս, կրակի՛ր, դու սպանում ես մա՛հը, դու սպանում ես թշնամո՛ւն, նացիստների՛ն...»: Այդպե՛ս ես գրոհեցի և ասես ուսերիցս մի մեծ բեռ ընկավ, զգացի, որ հերոսություն եմ անում, հետևում եմ հորս, ես միշտ կհետևեմ նրան,

-- էջ 172 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Ֆրանսիացի ժողովրդին, ազատության բոլոր մարտիկներին»:

Այդպե՛ս է իմ ամուսինն սկսել իր պայքարը, նա 125 բռնարարք է կատարել, բայց ոչ մի ֆրանսիացու չի վնասել, եթե նկատի չունենանք ժան Հերոլդի նման մի քանի դավաճաններին, որոնք իրենց հայրենակիցներին Գեստապոյին էին հանձնում: Մանուշյանը մարտնչել է միայն Գեստապոյի՝ այն գերմանացիների դեմ, որոնք եկել էին Ֆրանսիան ծնկի բերելու համար:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸԹԼԵՐ - Ի՞նչ էր ձեզ գրել Մանուշյանն իր վերջին նամակում:

ՄԱՆՈՒՇՅԱՆ - Նա գրել էր՝ «Թանկագի՛ն Մելինե, շատ սիրելի որբուկս», ցանկանալով նշել, որ ես երկրորդ անգամ որբանում եմ: Ապա ավելացրել էր. «Ես գերմանացի ժողովրդի դեմ ոչինչ չունեմ, համոզված եմ, որ բոլոր ժողովուրդներն էլ խաղաղ կգոյակցեն գերմանացիների հետ, պատերազմը երկար չի տևի, երջանկությունն ամենուր կիշխի»:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸԹԼԵՐ - Ի՞նչ կուզեիք ասել մեղադրվող երիտասարդներին:

ՄԱՆՈՒՇՅԱՆ - Իհարկե, ես ոչ մի իրավասություն չունեմ պնդելու՝ նրանք ճի՞շտ են, թե՞ սխալ, բայց վստահ եմ, որ ահաբեկիչներ չեն, արդարամարտիկներ են, ինչպես

մենք: Ես նրանց կուզեի ասել. «Նայե՛ք աչքերիս, զուսպ եղեք, մի՛ պարզեք ձեր բռունցքները, որովհետև այս ամենը դեռ հաղթանակ չէ, ուղղակի հայ ժողովուրդը չի՛ կորցրել արժանապատվությունը, նա դեռ կանգո՛ւն է, պայքարո՛ւմ է: Եվ քանի որ Ֆրանսիայի Հանրապետության նախագահը պաշտոնապես հայտարարեց, որ ցեղասպանություն տեղի է ունեցել, ուրեմն դուք կարող եք ձեզ բավարարված զգալ: Առաջին քայլը կատարված է, ճիշտ է, այն փոքր է, բայց ես վստահ եմ, որ ուրիշները կհաջորդեն, և հայ ժողովուրդը հատուցում կստանա, արդարությունը կվերականգնվի: Պահպանե՛ք ձեր ոգին, մի՛ կորցրեք կորովն ու հույսը»:

Ինձ թվում է հարկ չկա Ֆրանսիայում բռնարարքները շարունակել, որովհետև եթե հանրապետության նախագահն ընդունել է ցեղասպանությունը, շատերը կհետևեն նրա օրինակին: Դրա համար ես ձեզ խնդրեցի՝ «Մի՛ կորցրեք հույսն ու կորովը»: Ուզում եմ ավելացնել նաև, որ ճիշտ է, մենք բոլորս ձեր մայրերն ու տատիկներն ենք, բայց դուք ունեք մի այլ մայր՝ Հայրենիքը

-- էջ 173 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

Լ և հայ ժողովուրդը, որոնք ձեր հետ են:

Փորձեմ պատասխանել նաև բոլոր նրանց, ովքեր հայտարարում են, որ ցեղասպանություն չի եղել: Այն, ինչ ասելու եմ, ուսումնասիրել եմ անձամբ: Հենց ցեղասպանությունը Թուրքիայում սկսվեց, Ֆրանսիացի մեծ գրող Անատոլ Ֆրանսը,- նա կարո՞ղ էր ստել,- ազդարարեց. «Մեր հայ եղբայրներին սպանում են, ցեղասպանություն է սկսվել, ինչո՞ւ ենք լռում, ինչո՞ւ նրանց չենք պաշտպանում»: Երբ ես աշխատում էի նման վկայություններ ընդգրկող գրքի վրա, մտածում էի. «Եթե ամբողջ աշխարհն այսպես վարվեր, ո՞վ գիտե, թերևս երկրորդ ցեղասպանությունը տեղի չունենար»:

Ճիշտ է, ես ինքս մարմար շատ եմ սիրում, բայց ստիպված եմ խոստովանել, որ մարդկության մեծամասնությունը մարմարի պես սառն ու անտարբեր մնաց: Չգիտեմ էլ ինչ ասեմ, ես շատ հուզված ու հիվանդ եմ, բայց ելել եմ անկողնուց, որ սեփական աչքերով տեսնեմ այս չորս հայ տղաներին:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Շնորհակալություն:

ՆԱԽԱԳԱՀ - Ո՞վ է ցանկանում հարց ուղղել տիկին Մանուշյանին: Դո՞ւք, պարոն ընդհանուր պաշտպան: Ո՞չ:

ՄԱՆՈՒՇՅԱՆ - Իրավունք ունե՞մ, կարո՞ղ եմ սեղմել չորսի ձեռքերը:

ՆԱԽԱԳԱՀ - Որպես բացառություն՝ այո՛, բայց կուզեի, որ նման միջադեպեր չկրկնվեին:

Տիկին Մանուշյանը սեղմում է մեղադրյալների ձեռքերը, հեռանում:

Վկա Քրիստիան Ռոստոկերի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Այժմ ներկա, ամենավերջին իրողությունների մասին: Չորս երիտասարդներն իրենց հայտարարությամբ պահանջել են նաև թուրք, քուրդ և հայ բանտարկյալների ազատությունը: Նրանք թուրքական կառավարությանը մեղադրել են մարդկության դեմ գործվող ոճիրների համար: Պարոն Ռոստոկերը հաճախ է գործուղվում Թուրքիա և իրավիճակին քաջատեղյակ է: Կուզեի, որ նա իր տեսակետն արտահայտեր:

-- էջ 174 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՌՈՍՏՈՎԵՐ - Այո՛, պարոն նախագահ, ես, որպես Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային ընկերակցության ընդհանուր քարտուղարի տեղակալ, երեք անգամ ընդգրկվել եմ այն խմբի կազմում, որը Թուրքիայում քննել է մարդու իրավունքների պահպանումը: Հիշեցման կարգով ասեմ, որ մեր կազմակերպությունը կառավարական չէ, կից է ՄԱԿ-ին, Եվրախորհրդին և ՅՈՒՆԵՍԿՕ-ին:

Ես Թուրքիայում եղել եմ 1980, 1982 և 1983 թվականներին, այսինքն մեկ անգամ՝ գլխավորական հեղաշրջումից առաջ, երկու անգամ՝ հետո:

Այդ երկրում նախ և առաջ ինձ ցնցել է ազգային փոքրամասնությունների իրավունքների անտեսումը: Երբ խոսքի ես բռնվում թուրք գրուցակիցների հետ ու անդրադառնում ազգային փոքրամասնություններին, իսկույն ևեթ ասում եմ, որ «նման բնակչություն գոյություն չունի», մինչդեռ նրանց ներկայությունը զգալի է: Թուրքիայում կան հայեր՝ համենայն դեպս նրանք, ովքեր դեռևս մնում են, հույներ, սլավոններ, որոնց թիվը մոտ երկու միլիոն է, ութը հարյուր հազար չերքեզ, մեկ միլիոն արաբ: Իսկ քրդերի թվաքանակը տասից տասներկու միլիոնի է հասնում, այսինքն կազմում է երկրի ազգաբնակչության 30%-ը:

Անմիջական տպավորությունը, որ ստացա իմ թուրք գրուցակիցներից, փոքրամասնությունների մասին խոսել չցանկանալն էր: 1980-ին ես հանդիպել եմ երկու գլխավոր՝ պարոն Դեմիրելի և պարոն Էշեհտի կուսակցությունների ընդհանուր քարտուղարներին: Առաջինը, երբ ես խոսք բացեցի քրդերի մասին, ասաց. «Ձեր հարցը չեմ հասկանում, Թուրքիայում քրդեր չկան»: Ճարահատ պարզաբանեցի. «Եթե հարցս այլ կերպ ձևակերպեմ՝ հարցնեմ լեռնաբնակ թուրքերի, արևելյան թուրքերի մասին, կպատասխանե՞ք»: Նա գլխով արեց. «Այդպես ասեիք, ուրեմն»:

Ինչ վերաբերում է պարոն Էջևհտի կուսակցության ներկայացուցչին, պատասխանն ավելի հստակ էր: Նա ոտքի կանգնեց, որը նշանակում էր, որ խոսակցությունն ավարտված է:

Այս ամենը վկայում է, որ Թուրքիայում արգելված են «քուրդ» բառը, լեզուն, երաժշտությունը, ազգագրական հանդեսները և նույնիսկ նոր տարին, որը քրդերը, ինչպես հայտնի

-- էջ 175 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

Է, տոնում են մարտի 20-ին: Ծնողներն իրավունք չունեն իրենց զավակներին ազգային անուններով կոչել, Քուրդիստանի բոլոր բնակավայրերը վերանվանվում են: Իրենց նման մոտեցումը թուրքերը հիմնավորում են ազգային սահմանադրության հոդվածներով, որոնք փոխ են առնված Մուսուլինիի քրեական օրենսգրքից, այն տարբերությամբ, որ անհամեմատ խստացված են: Մի օրինակ բերեմ. 1971-ին Թուրքիայի բանվորական կուսակցությունը, քանի որ ընդունեց քուրդ ժողովրդի գոյությունը, արգելվեց, ղեկավարները՝ «անջատողական ու հակաազգային տրամադրությունների» քարոզչության համար մինչև տասներկու տարվա բանտարգելության դատապարտվեցին: Ուզում եմ հիշեցնել նաև այն դասախոսի մասին, որը քրդական այբուբեն ստեղծելու ցանկության համար յոթը տարով բանտ նետվեց, իսկ զավակը այսպես կոչված՝ արկածի զոհ դարձավ:

Մի վերլուծաբան՝ Իսմայիլ Բեշիկը, որը քուրդ չէ, քրդական հարցը ուսումնասիրելու համար քսանհինգ տարվա կալանքի ենթարկվեց, բանտից Շվեյցարիա, «Պեն» ակումբի նախագահին գրեց. «Թուրքիայում, ինչպես անցյալում, քրդական հարցն անտեսվում է» :

1980-ին, մի նախկին նախարար, ժողովի ժամանակ ասում է՝ «Իհարկե, ես քուրդ եմ, Թուրքիայում քուրդ ժողովուրդ կա» և երեք տարով բանտ է նետվում:

Ես հետո շվեդական մի օրաթերթի հրատարակած գիրքն եմ բերել, որտեղ սահմնկեցուցիչ լուսանկարներ կան: Դրանք պատկերում են թուրքական բանակի զինվորներին, որոնք միջազգային բոլոր օրենքները խախտելով, ներխուժում են Իրաքի գյուղերը, կոտորում քուրդ տղամարդկանց ու կանանց:

Նույնը տեղի է ունենում Քուրդիստանի գյուղերում: Բանակը հայտնվում է, բնակիչներին հանկարծակիի բերում, սկսում գանակոծել, երբեմն էլ՝ կոտորել: Ահաբեկչության այդ քաղաքականությունը չափազանց զգալի է թուրքական Քուրդիստանի մայրաքաղաքում՝ Դիարբեքիում: Այս տարի ես երեք անգամ եղա այնտեղ և երբ փորձեցի հանդիպել 1982-ից ինձ ծանոթ անձանց, որպեսզի մարդու իրավունքների ոտնահարման վերաբերյալ նոր վկայություններ հավաքեմ, ինչ-որ մեկն ասաց. «Ոչ մեկը չի ուզում ձեզ հետ տեսնվել, որովհետև բոլոր նրանք, ովքեր գրուցել են նախորդ անգամ, հալածանքի, նույնիսկ կտ -

ՀԱՅԵՐԻ ԴԱՏՈՒ

տանքների են ենթարկվել»:

Ես երկար վիճել եմ թուրք պաշտոնյաների հետ, նրանց տարօրինակ պատասխաններից անակնկալի եկել: Ամեն անգամ, երբ մենք Փարիզի դատական ատյանի փորձագետների միության նախագահ, պրոֆեսոր Ժորժ Դյուվոնի հետ բանտերը այցելելու, կալանավորների վիճակը քննելու թույլտվություն էինք խնդրում, թուրք պաշտոնյաները մեզ պատասխանում էին. «Դա անհնար է, աշխարհի ոչ մի երկրում նման բան չի արվում»: Նույն պատասխանն ստացանք, երբ փորձեցինք հանդիպել Մեդիսանին՝ Դիարբեքիի քաղաքապետին, որը Քուրդիստանի ինքնավարության խորհրդանիշն է դարձել: 1980 թվականին նրան բանտարկել են սոսկ այն բանի համար, որ պահանջել է քրդերին քրդերեն խոսելու, քրդական կենցաղով ապրելու հնարավորություն տալ: «Նա ո՞վ է, որ ձեր նման հարգելի անձինք ցանկանան հետը տեսնվել,- ուղղակի ասում էին մեզ: - Ի՞նչն է ձեզ դրդել դրա համար գալ այստեղ հասնել»:

Ի վերջո, մեզ հետաքրքրող հարցերի պատասխանը մենք մասամբ ստացանք, երբ արտոնեցին բանտի զրուցարանը մտնել: Նախ ասեմ, որ այն այնպիսի ճնշող տպավորություն է թողնում, որ ամբողջ կյանքում չես մոռանում: Այս սրահի չափ տարածքում խմբվում են հաճախ չափազանց երիտասարդ, տանջահար դեմքերով տղամարդիկ, որոնք խիստ հյուժված են, հազիվ են կարողանում ոտքի կանգնել: Բանտարկյալները, բոլորն էլ, սև, կոշտ քաթանե բաճկոնակներով են, պարտավոր են պահպանել սահմանված կեցվածքը՝ իրանն ուղիղ պահել, ձևկները սեղմել իրար, ձեռքները ձևկներին դնել: Տրված հարցերին պատասխանելիս՝ ամեն ոք պետք է կրունկները խփի իրար, գլուխը խոնարհի ու սպասի: Սննդի անբավարարության, կտտանքների պատճառով կենդանի դիակների վերածված կալանավորներից նրանք, ովքեր չեն կարողանում այս կարգը պահպանել, տեղնուտեղը պատժվում են: Հսկող զինվորականները, որոնք հաճախ մեկ մետր ութսուն սանտիմետր հասակ ունեցող աժդահաներ են, բոլորի ներկայությամբ սկսում են ծեծել նրանց:

Ձերբակալվածների մեջ ես փնտրում էի Մեդիսանին, որին 1978-ին Ֆրանսիայում էի հանդիպել: Նա եկել էր գոնե մի հին փոխադրամիջոց ձեռք բերելու համար, որովհետև, ինչպես պարզվեց, ութը հարյուր հազար բնակիչ ունեցող Դիարբեքի -

րում ավտոբուս գոյություն չունի: Ի վերջո, ես նկատեցի քաղաքապետին, բայց դժվարությամբ ճանաչեցի, որովհետև չէր կարողանում ուղիղ կանգնել: Նրան այնքան էին տանջել, որ կոտրել էին կողերը, ողնաշարը: Եվ այս ամենից հետո ինձ ասում էին. «Ուշադրություն մի՛ դարձրեք, նա ձևացնում է»:

Ահա՛ քրդերի վիճակն այսօր Թուրքիայում, որը, ցավոք, շարունակվում է: Մեզ հայտնի դարձավ, որ դեկտեմբերի 30-ի լույս 31-ի գիշերը, երբ այցելուները Դիարբեքիի բանտն են մտել, որ իրենց հարազատ կալանավորներին տեսնեն, վերջիններս բացեիբաց հայտարարել են. «Մենք անժամկետ հացադուլ ենք սկսում, որովհետև չենք ուզում հերթով կտտանքներից մահանալ: Թող մեզ գնդակահարեն, կախեն, ինչ ուզում են անեն, միայն տառապանքներից ազատեն»: Այս առավոտ հավանաբար թերթերում կարդացիք, որ նրանցից հինգը թե վեցը ծխախեղդ են եղել, որովհետև հրդեհել են իրենց բանտախցերը: Դա թերևս ճիշտ է, սակայն ճիշտ է նաև այն, որ ոչ մեկին թույլ չեն տվել խուցից դուրս գալ, դռները պինդ փակել են, որ ողջակիզվեն: Երեկ երեկոյան իմ ստացած տեղեկատվությունն ավելի ահավոր էր՝ պարզվեց, հսկիչներն են հրդեհել խուցերը:

ՆԱԽԱԳԱՀ - Պաշտպան Լըքլեր, հարցեր ունե՞ք:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸԹԼԵՐ - Ի՞նչ ասեմ, ահա՛ այն երկիրը, որն ուրանում է հայերի ցեղասպանությունը:

ՆԱԽԱԳԱՀ - Դո՞ւք՝ տիկնայք և պարոնայք երդվյալներ: Իսկ հայցվորնե՞րը: Ընդհանուր պաշտպա՞նը... Ատյանը շնորհակալություն է հայտնում ձեզ, պարո՞ն:

Վկա Արամ Կյուրեղյանի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸԹԼԵՐ - Ցեղասպանությունը տեղի է ունեցել 1915-ին, հասկանալի է, վկաները հետզհետե նվազում են:

ՆԱԽԱԳԱՀ - Ծանո՞թ եք մեղադրյալներից որևէ մեկին:

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ - Առաջին անգամ եմ տեսնում:

Երդվում է:

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ - Ծնվել եմ 1904 թվականի մարտի 23-ին, Սեբաստիայում՝ Փոքր Հայքում: 1915-ին մեր ընտանիքը բաղկացած էր ութը հոգուց, բայց եթե քաղաքում, հարևան գյուղերում ապրող հարազատներին էլ հաշվեմ, երկու հարյուրն անց -

-- էջ 178 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Նում էր: Միակ վերապրողը ես եմ... Կաշխատեմ կարճ խոսել, կներեք, հուզվում եմ...

Լալիս է:

Փորձեմ նկարագրել բռնագաղթի մի քանի փուլերը միայն... Պատերազմը հայտարարվելուն պես Սեբաստիայի բոլոր հայ երիտասարդներին, որպես օսմանյան հպատակների, զորակոչեցին, բայց զենք չտվին: Նրանց ճանապարհաշինական աշխատանքների բռնադատեցին ու աստիճանաբար կոտորեցին: Այնուհետև կառավարությունը քաղաքում մնացած, տարիքն առած հայերին, իբր սահմանների ապահովության համար, որոշեց տեղահանել, մինչդեռ հայտնի է, որ Սեբաստիան ամենամոտ սահմանից վեց հարյուր կիլոմետր հեռու է: Քաղաքից մեզ հեռացրին փոքր խմբերով, նույնիսկ եզան սայլերով ճամփա ընկնելու թույլտվություն ընձեռեցին: Թուրքերը, փողոցներում խմբված, նայում էին մեզ, ասում. «Տեսե՛ք, տեսե՛ք, հայերը օդափոխության են գնում»:

Մենք վեցերորդ, թե յոթերորդ քարավանում էինք: Առաջին օրերը գրեթե անվտանգ անցանք ճանապարհը: Սակայն, երկու թե երեք օր անց, կառավարական պաշտոնյաներ եկան, բռնագրավեցին մեր ունեցած-չունեցածը, խոստացան՝ երբ վերջնական հանգրվան հասնենք, կվերադարձնեն: Հասկանալի է, նրանցից ոչ մեկին այլևս չտեսանք:

Հաջորդ կայանում հավաքեցին տասնվեցից բարձր տղամարդկանց, որոնց թվում և հորս: Բոլորին տարել էին մի քարափ, կացիններով ջախջախել գլուխներն ու նետել կիրճը: Դիակների տակ մնացած, հրաշքով փրկված վերապրողները պատմեցին այս ամենը, պատվովս եմ երդվում:

Էլի մի քանի օր անցավ, ու մենք հայտնվեցինք անապատի նման ամալի տարածքում: Քանի որ այդ նույն տեղով մեզնից առաջ հայերի քարավաններ էին անցել, ամենուր դիակներ էին, որոնք նեխում էին 50 աստիճան արևի տակ: Գիշերները գայլերը, վայրի գազանները հարձակվում, քրքրում էին:

Ես տեսել եմ նորածինների, որոնք ծծել են իրենց մոր կուրծքը, չիմանալով, որ արդեն մեռած է: Կողք-կողքի մեռնող մայրերի ու երեխաների, ամբողջովին մերկ, ուռած տարագիրների չափազանց շատ եմ տեսել: Իսկ հոտը՝ անապատի դիակների հոտը մինչև հիմա ռունգերիս մեջ է...

-- էջ 179 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

Եվ այս ամենից հետո մեզ ստիպեցին թողնել մեր մեռելներին ու քայլել, որովհետև, ասացին, մոտակայքում ջուր կա: Իսկապես, շատ չանցած Եփրատի վտակներից մեկի ափը հասանք, ու ծարավից, տոթից տանջահար աքսորականները ալիքների

մեջ նետվեցին, շատերը խելագարվեցին, շատերին գետը տարավ: Թուրք զինվոր-
նուստիկանները չէին միջամտում, նրանք ուզում էին, որ մենք վերանանք: Եղան
նույնիսկ այնպիսի հայեր, ովքեր, երեխաներին գրկած, ջուրը նետվեցին ու
խեղդվեցին... Բայց մեր Գողգոթան շարունակվում էր՝ մեզ ստիպում էին մազլցել
անանցանելի կաճաններով: Մեր ընտանիքը, ինչպես արդեն ասացի, բազմամարդ
էր, հորս կացնահարվելուց հետո մնացել էինք մայրս, չորս քույրերս, եղբայրս և ես՝
իհարկե...

Լալիս Է:

Չեմ ուզում մանրամասների մեջ մտնել: Այդպես մենք հասանք Եփրատի ափը:
Նավակներով գետն անցկացնելու համար մեզնից դրամ ուզեցին, բայց դրանով
չգոհացան, հենց ափից հեռացանք, սկսեցին խուզարկել մեր հագուստները, և
քանի որ մայրս դիմադրեց, նավավարը գավազանն իջեցրեց իմ յոթը ամսական
քրոջ գլխին: Խեղճ մորս թևերի մեջ նա հոգին ավանդեց: Լաց լինելով՝ գետի մյուս
ափը հասանք, ձեռքերով հողը փորեցինք, թաղեցինք...

Երկու օր հետո մի ջրհորի մոտեցանք: Ուրախացանք, բայց այնպես էր լցված
դիակներով, որ անտանելի գարշահոտություն էր տարածում: Ստիպված եղանք
այդ տեղ հանգրվանել ու գիշերվա կեսին զարթնեցինք աղմուկ-աղաղակից:
Պարզվեց՝ զինվոր-նուստիկանները լքել են մեզ: Ջարդարարները հարձակվել էին
մեր մի քանի հազար հոգուց, հիմնականում կանանցից ու երեխաներից կազմված
քարավանի վրա, բոլորի հագուստները խլում, ամբողջովին մերկ էին թողնում:
Նրանց, ովքեր դիմադրում էին, սպանում էին տեղնուտեղը: Հղի կանանց փորերը
պատռում, երեխային հանում, հռհռում էին. «Տես՛ք, տղա է, ապագա ֆիդայի,
ջնջխենք գլուխը»:

Ես կորցրեցի, հետո գտա մերոնց՝ մորս, եղբորս: Նրանց էլ էին մերկացրել:
Քույրերիցս մեկը չկար: Այս ու այն կողմ նայեցինք, տեսանք, ոտնատակ է ընկել՝
աչքերը դուրս էին թռել բիբերից, բերանը բաց էր: Հեկեկալով թաղեցինք:
Ջարդարարները

-- էջ 180 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

դարձյալ չգոհացան, հենց լույսը բացվեց, նորից եկան, կանանց մարմնի
անկյուններում ոսկի էին որոնում, բոլորին՝ հատկապես կույս աղջիկներին
բռնաբարում էին: Մենք երեխա էինք, տեսնում էինք, թե ինչպես է նրանց
ազդրերից արյունը հոսում, բայց ոչինչ չէինք հասկանում: Դահիճները դանակով
եղբորս վրա էլ հարձակվեցին, փող էին ուզում, սպանում էին մորթել, բայց մայրս
այնքան խնդրեց-աղաչեց, որ բաց թողեցին:

Մի քանի օր քայլելուց հետո հազիվ քսան հոգի մնացինք: Այլևս ոչ ոք չէր
հետաքրքրվում մեր ճակատագրով, խոտ ուտելով էինք պահպանում մեր

գոյությունը: Քանի որ բոլորս էլ մորե մերկ էինք, ցերեկվա արևից այրվում, գիշերվա ցրտից սրթսրթում, փաթաթվում էինք իրար, որ տաքանանք:

Շաբաթներ շարունակ այդպես տանջվելուց հետո անապատում մի վրան տեսանք, մոտեցանք: Մի մարդ դույլով ջրհորից ջուր էր հանում, անասունների համար գուռը լցնում: Խմել ուզեցինք, սկսեց մեզ ծեծել, հետո իր լեզվով հասկացրեց, որ եթե մայրս ինձ իրեն տա, կթույլատրի խմել: Ի՞նչ կարող էր անել խեղճ մայրս: Համբուրեց ինձ, ասաց. «Տղա՛ս, գոնե քո կյանքը թող փրկվի, ողջ մնա, որ լուծես մեր վրեժը»:

Գուցե Աստված այդ ձևով խնայեց ինձ, որ յոթանասուն տարի անց, պարոն նախագահ, ձեր, բոլորի առջև հանդես գամ այս վկայությամբ...

Սակայն իմ տերը ինձ երկար չպահեց, մի ուրիշ գյուղ տարավ, վաճառեց:

Այդտեղից ես Ուրֆա քաղաքը փախա, հանձնվեցի ֆրանսիացի միսիոներներին: Բայց թուրքերն ինձ գտան, համակենտրոնացման ճամբարի նման մի տեղ տարան: Նրանք արքայից հետ մնացած հայ երեխաներին հավաքում էին, որ նորից անապատ քշեն: Բարեբախտաբար, մի հայ կին հավանեց ինձ, հետը Ուրֆա տարավ: Այստեղ-այնտեղ շատ փնտրեցի հարազատներիս, չգտա: Այդ ժամանակ Ուրֆա քաղաքի հայերին էլ էին ուզում տեղահանել, բայց նրանք նախընտրեցին դիմադրել ու տեղում մեռնել: Ուրֆայում հայկական թաղը մեկուսացած է, տղամարդիկ մեկ ամիս, մինչև վերջին մարդը դիմադրեցին: Մեկ ամիս հետո կանայք ու երեխաներն էին մնացել: Թուրքերը թնդանոթներով ռմբակոծել, հողին էին հավասարեցրել հայկական թաղը:

-- էջ 181 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

Միայն եկեղեցին էր կանգուն մնացել, որտեղ 1895 թվականի կոտորածին, սուլթան Աբդուլ Համիդի հրամանով, երեք հազար հայ էին լցրել, ողջ-ողջ այրել:

Վերջին օրը, այսօրվա պես հիշում եմ, թուրք խուժանը հայկական թաղ ներխուժեց, ու կոտորածն սկսվեց: Մենք՝ մի քանի տասնյակ հոգի, հավաքվել էինք մի բակում, մեր մահվանն էինք սպասում: Հետո ինչ-որ մեկն ասաց. «Ավելի լավ է ջրհորը նետվենք, խեղդվենք»: Իրոք, այդպես էլ արեցին: Ես վերջինն էի, երբ իմ հերթը հասավ, պարոն նախագահ, պարոնայք երդվալսե՛ր, չգիտեմ հետս ինչ տեղի ունեցավ, դուռը բացեցի, սկսեցի վազել: Թուրքերը գոռում էին հետևիցս. «Տեսե՛ք, տեսե՛ք, գյավուրն ուզում է փրկվել»: Փախա, մի ուրիշ բակ մտա, որտեղ մոտ յոթանասուն հայ էր հավաքվել: Կես ժամ էլ չանցավ, թուրքերը դուռը կոտրեցին, ներս մտան ու ծերունիներին մեր աչքի առջև կողք-կողքի կանգնեցրին, գնդակահարեցին: Մեզ էլ դուրս հանեցին ու ասացին, որ արքայի քշելու:

Հայկական թաղից անցնելիս ինչե՞ր չտեսանք, Աստված իմ մահակներով, երկաթե ձողերով զինված թուրքերը ծեծում, սպանում, ում ինչ ուզում, անում էին: Մեզ՝ երեխաներիս, նորից մի տեղ հավաքեցին, մոտ տասնհինգ օր սոված թողեցին: Ես այնքան էի նիհարել, որ կմախք էի դարձել: Տասնհինգ օր հետո մի պաշտոնյա եկավ, հարցրեց. «Ո՞վ է ուզում թուրքական որբանոց ընդունվել, պետության հոգեզավակը դառնալ»: Ես այնքան հյուժված, քաղցած էի, որ ձեռք բարձրացրի: Աստիճանաբար, ինձ նման մոտ երկու հազար հինգ հարյուր երեխա հավաքեցին, բայց շուտով համաճարակ սկսվեց: Թանջքից, ժանտատենդից, օդատապից ամեն օր մեռնում էին իմ տարիքի երեխաները, որոնց տանում, ոչ հեռվում հենց այդ նպատակի համար փորված փոսն էին նետում:

Երդվում եմ, երկու հազար հինգ հարյուր որբերից հազիվ ութսուն հոգի ողջ մնացին: Բայց կառավարությունն ըստ երևույթին որոշել էր մեզնից էլ ազատվել, նորից անապատ քշեց: Միայն թե ճանապարհին, չգիտեմ ինչո՞ւ, մեր հսկիչները փոխեցին իրենց միտքը՝ կոտորելու փոխարեն գյուղից գյուղ տարան, ամեն տեղ հինգ հոգու թողեցին: Մենք Կիլիկիայի կողմերն ընկանք ու 1918-ի վերջին, երբ պատերազմն ավարտվեց, ինձ

-- էջ 182 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

թվում էր, բացի մեր հինգից, աշխարհում հայ չի մնացել: Շատ ուրիշ մանրամասնություններ կան, որ մոռացել եմ...

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Դուք ամեն ինչ հանգամանորեն պատմեցիք: Այժմ ասացեք, թե ինչպե՞ս հեռացաք Թուրքիայից:

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ - 1918 թվականին ֆրանսիական բանակը, որ Արևելյան բանակ էր կոչվում, Կիլիկիա մտավ: Չինվորներն իմացան իմ հայ լինելը, ազատեցին, Ադանա տարան...

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Այն, ինչ պատմում եք, պարոն Կյուրեղյան, չափազանց հուզիչ է, ցնցող, բայց ստիպված եմ ընդհատել ձեզ, ուրիշ վկաներ էլ կան:

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ - Ես դեռ ասելիք ունեմ:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Այդ դեպքում՝ շատ կարճ:

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ - 1922 թվականին Կոստանդնուպոլսում ֆրանսիական «Լամարտին» նավը նստեցի, որը լեցուն էր հայ գաղթականներով: Երբ Չմյուռնիա հասանք, բոլորս սկսեցինք դողդողալ, որովհետև քաղաքում սկսվել էր հայերի ջարդը՝ ասում էին զոհերի թիվը տասնյակ հազարների է հասել: Նավապետը, զգալով մեր տազնապը, ասաց. «Մի՛ վախեցեք, դուք ֆրանսիական տարածքում եք, միայն նավահանգիստ չիջնեք»: Այդպես ես փրկվեցի ու Ֆրանսիա հասա...

ՆԱԽԱԳԱՀ - Պարոնայք և տիկնայք երդվալներ, հարցեր ունե՞ք: Ո՞չ: Ատյա նը շնորհակալ է ձեզնից:

Վկա Գրիգոր Ադամյանի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Նախօրոք պիտի խնդրեմ, որ չերկարացնեք: Ավելի լավ կլինի միայն մի, որոշակի դեպք պատմեք, որովհետև վկաները շատ են:

ԱԴԱՄՅԱՆ - Ո՛չ իմ տարիքը, ո՛չ էլ խառնվածքը թույլ չեն տալիս շատախոս լինել: Ես ուզում եմ միայն ասել, որ նույնիսկ իմ գոյությունը հրաշք է: Չորս տարեկանս չէր լրացել, երբ տեղի ունեցավ Ադանայի կոտորածը, որին, ինչպես հայտնի է, երեսուն հազար հայ զոհ գնաց: 1915-ին մեր ընտանիքը երեսունհինգ հոգուց էր բաղկացած, եղեռնից հետո հինգ թե վեց հոգի մնացին: Եթե մի արաբ գյուղացի չլիներ, ես էլ չէի փրկվի: Դրա համար եմ ասում, որ իմ գոյությունը հրաշք է: Արաբը խղճաց ինձ, իր վրանը տարավ, և երեք տարի ես անասունները

-- էջ 183 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

պահեցի, որի համար նրան երախտապարտ եմ իհարկե:

Այն, ինչ պատմելու եմ, աներևակայելի է, անհավատալի: Թուրքերը հայերին սպանում էին հաճույքով, այնպես, ինչպես որսորդները որս են անում...

1922-ին ես Չմյուռնիայի ամերիկյան քոլեջի ուսանող էի, երկրորդ ջարդին ականատես եղա, այս անգամ թուրքերը կոտորում էին հայերին ու հույներին: Դեպքի օրը մենք երրորդ հարկ բարձրացանք ու պատուհանից տեսանք, թե ինչպես են հայերն ու հույները դեպի ծով փախչում: Ես քրիստոնյա եմ, Աստծով եմ երդվում, կեսօրից հետո, ժամը 2-ը կլիներ, թուրքերը բոլոր կողմերից հարձակվեցին նրանց վրա: Ջարդարարները զինված էին բահով, քուլնգով, եղանով, զենքով, ինչով ասես, միայն թե կոտորեին, սպանեին: Հազարավոր փախստականներ, սարսափահար, մինչև իսկ մեր քոլեջի բակը խուժեցին:

Ջարդի երրորդ օրը մի թուրք սպա եկավ, տարավ մեզ՝ քոլեջի քսանվեց հայ ուսանողներին: Տասնմեկ օր մենք քայլել ենք դիակների միջով, միմիայն խոտով ենք սնվել:

Արդեն վաթսուներեկ տարի է, որ ես Ֆրանսիայում եմ, երկրորդ աշխարհամարտի ժամանակ հազարավոր հայրենակիցներիս հետ կատարել եմ իմ քաղաքացիական պարտքը, անձնագրոհության համար սպաների դրվատանքին արժանացել, որոնք մեզ՝ հայերիս ասում էին. «Դուք կրկնակի ֆրանսիացիներ եք»:

Պարոնայք ունկնդիրներ՝, իմ եղբայրներ՝, դուք երբևէ հայերից վատություն տեսե՞լ եք կամ որևէ մեկից լսե՞լ եք...

Ինչ վերաբերում է այս երեխաներին, ինքներդ ասացեք՝ հանցագործի տեսք ունե՞ն: Ես ինքս էլ, որ կյանքում ճանճ չեմ սպանել, ցանկացել եմ պայթեցնել թուրքական դեսպանատունը, նույնիսկ հատուկ ռումբ եմ պատրաստել:

Ես երեք տղա ունեմ՝ առաջինը բժիշկ է, երկրորդը շարունակում է իմ գործը, երրորդը՝ հանրապետության նախագահի՝ Միտերանի ճարտարապետն է: Ահա՛ հենց այս տղաս իմացավ իմ մտադրության մասին, լաց եղավ ու ասաց. «Հայրիկ, մի՛ արա այդ բանը, դու մեզ շատ ես պետք», և ես հրաժարվեցի իմ գաղափարից, չնայած մինչև հիմա համոզված եմ, որ այդքան անարդարություն մի ժողովրդի նկատմամբ անհնար է հանդուր -

-- էջ 184 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

Ժել:

Փաստեր ունեմ՝ թուրքերը կեղծիքի, երեսպաշտության ասպարեզում անմրցելի են: Երբ նրանք ինչ-որ մեկին ուզում էին սպանել՝ հաճոյանում, ասում էին. «Սիրում եմ հորդ, ճանաչում էի մեծ հորդ...» և այլն, և այլն ու դանակը դնում էին բկին:

Ինձ թվում է ամեն ինչ ասացի, ավելացնելու ոչինչ չունեմ, կատարեցի իմ պարտքը: Եթե մի օր լսեք, որ ես էլ եմ նման քայլ կատարել, իմացե՛ք՝ այն բանի համար միայն, որ կույրերը, խուլերը իմանան, թե մարդկության համար նման արժեքներ կայացնող մի ժողովուրդ ինչպես է ոտնահարվել, ջախջախվել: Մնացածը ձեր խղճին եմ թողնում...

Վկա Ծերուն Ասատրյանի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Պարոն Ասատրյան՝, մենք ձեզ հրավիրել ենք որպես ցեղասպանության վկայի: Կարո՞ղ եք տասը թոպեի ընթացքում պատմել ամենակարևորի մասին:

ԱՍԱՏՐՅԱՆ - Ցավում եմ, բայց տասը թոպեի ընթացքում ի վիճակի չեմ նկարագրել այն ամենը, ինչ ապրել եմ վաթսուևութ տարիների ընթացքում:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Պատմեցե՛ք այն, ինչը Էական է:

ԱՍԱՏՐՅԱՆ - Այն, ինչը Էական է... Ես ծնվել եմ վաթսուևութ տարի առաջ, Չենգիլերում, Ստամբուլից երկու ժամվա հեռավորության վրա գտնվող քաղաքում: Մեր քաղաքում վեց հազար հինգ հարյուր հայ կար, պատերազմը սկսվելուն պես

հազարին զորակոչեցին թուրքական բանակ, հետո պատերին որմազդեր փակցրեցին, որոնք տեղեկացնում էին, թե մեզ «երեք օր է տրվում քաղաքից հեռանալու համար»: Բայց թուրքերն իրենց խոստումը չհարգեցին, նույն օրը մոտ երեսուն մտավորականների, գործարանատերերի ու արհեստավորների, որոնց թվում էին հայրս և մեծ հայրս, ձերբակալեցին, սպանեցին ու դիակները նավահանգիստ շարտեցին:

Հաջորդ օրը, զինված զինվոր-նստիկանները շրջապատեցին քաղաքը, տնից տուն մտան և տասը թուրք ժամանակ սովին Չենգիլերը թողնելու համար: Միաժամանակ ստիպեցին, որ մեր թանկարժեք իրերը, ունեցվածքը եկեղեցի տանենք: Իմ քեռայրը

-- էջ 185 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

գործարանատեր էր, քանի որ հակառակվեց, ընտանիքի ներկայությամբ թոցրին գլուխը: Հետո բոլոր հայերին հավաքեցին քաղաքից դուրս, մի տափարակում ու սկսեցին թալանել: Իմ հարևանը վրայի ծածկոցը չէր տալիս, ատրճանակի փողը բերանը մտցրին, կրակեցին: Այսօրվա պես եմ հիշում այդ ամենը... Հետո մեզ արքայի քաղաքը: Ամբողջ ճանապարհին ընդառաջ էին ելնում թուրքեր, որոնք շտապում էին թալանել հայերի դատարկված բնակավայրերը: Բաղդադի երկաթուղու երկարությամբ մոտ հինգ հարյուր հազար հայ էր կուտակվել, որոնց բերել էին Թուրքիայի տարբեր անկյուններից: Այդտեղ քառասուն օր մնալուց հետո մորս ստիպեցին, որ երեք երեխաներին վերցնի, քայլի Ադանայի ուղղությամբ: Ի վերջո գաղթակայանում հայտնվեցինք, որտեղ քառասուն օր մնացինք անձրևի տակ: Ամեն օր այնքան շատ մարդ էր մեռնում, դիակներն այնպիսի գարշահոտություն էին տարածում որ...

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Այն, ինչ պատմում եք, չափազանց հուզիչ է, բայց խնդրում եմ ամփոփե՛ք...

ԱՍԱՏՐՅԱՆ - Թույլ տվեք շարունակել, մի թույլ միայն... Այդտեղ առնվազն երկու հարյուր հազար հայ մահացավ... Մեզ տարան դեպի Հալեպ: Տեղ հասանք, բայց ոչ ուտելու հաց կար, ոչ խմելու ջուր: Մի օր տեղի կառավարիչները մեզ ասացին. «Այսօր զորահրամանատար Ջեմալ փաշան է գալու, գնացեք, նրանից ուզեք ինչ որ պետք է»: Մայրս, էլի մոտ հարյուր հայ կին, ոտքով երեսուն կիլոմետր ընդառաջ գնացին Ջեմալ փաշային, ոտքերն ընկան, ուտելիք խնդրեցին: Նա խոստացավ, բայց...

ՆԱԽԱԳԱՀ - Ցավում եմ, ստիպված եմ ընդհատել ձեզ, պարո՞ն...

ԱՍԱՏՐՅԱՆ - Վերջացնում եմ... Ես մի արաբական քաղաք ընկա, որտեղ ձերբակալված հայերին առանց դատ ու դատաստանի կախում էին մզկիթի առաջ:

Չնայած դեռ շատ փոքր էի, աշխատանք էի որոնում ու որպեսզի սովից չմեռնեմ, աղբանոցներում հաց էի որոնում: Երբեմն էլ գողանում էի...

ՆԱԽԱԳԱՀ - Ուրիշ ելք չունեմ, ավարտում եմ ունկնդրությունը...

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Ժամանակն է, պարոն նախագահ...

-- էջ 186 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Հայտարարվում է ընդմիջում:

Նիստը շարունակվում է:

Պատմաբան Իվ Տերնոնի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Պարոն Իվ Տերնոնի մասին, իմ կարծիքով, կարելի է ասել, որ ցեղասպանագետ է: Նա հրեական Ողջակիզմանը մի շարք աշխատություններ նվիրելուց հետո ուսումնասիրել է հայերի ցեղասպանությունը և հրատարակել «Հայերը՝ մի ցեղասպանության պատմություն», «Հայաստան 1900», «Հայերի դատը», իսկ ժերար Շալիանի հետ, որին նույնպես ունկնդրելու հնարավորություն կունենանք, «1915-1917՝ հայերի ցեղասպանությունը» գրքերը: Բացի այս ամենից, պարոն Տերնոնը մոտ քսան ֆրանսիական և արտասահմանյան համալսարանականների հետ մասնակցել է հայ ժողովրդի պատմության՝ մի շատ կարևոր ձեռնարկի ստեղծմանը: Նա մեզ կներկայացնի ոչ միայն հայոց ցեղասպանությունը, այլև 1915-ից ի վեր շարունակվող ուրացման քաղաքականությունը:

ՏԵՐՆՈՆ - Պարոն նախագահ, պարոնայք երդվյալներ, 1915 թվականի ցեղասպանությունը հայ ժողովրդի համայնական հիշողության կիզակետում է: 1915 թվականին Օսմանյան կայսրությունում բնակվող հայերի երկու երրորդը բնաջնջվեց, նրանց քսանվեց դարերի գոյությունը բռնությամբ վերացվեց: Սփյուռքի հայկական համայնքները մեծ մասամբ կազմավորված են այդ ցեղասպանության վերապրողներով: Անշիրի մի ամբողջ ժողովուրդ, փաստորեն, զրկված է հիշողությունից, որովհետև նախնիները, ինչպիսի ցնցող վկայություններով էլ հաստատվեն այստեղ, մի այլ տեղում ժխտվում են: Նման երկդիմի իրավիճակը՝ պատմական անհերքելի իրողության հավաստումն ու ուրացումը լուրջ խնդիր է դարձել ժամանակակից հայության համար, որովհետև ցեղասպանության մերժումը, որին այժմ էլ հետամուտ է թուրքական կառավարությունը, հայ ժողովրդին զրկում է ինքնության իրավունքից, պատճառ է դառնում, որ Հայկական հարցը կրկին ասպարեզ գա:

Ես չեմ չարաշահի ձեր ժամանակը, ուղղակի կփորձեմ ներկայացնել ցեղասպանությունը և բացատրել, թե հետագայում

-- էջ 187 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

ինչո՞ւ չընդունվեց: Պատմական իրողություններին շատ թռուցիկ անդրադառնալով հանդերձ, կաշխատեմ ճշգրիտ լինել:

Երբ 19-րդ դարի վերջին Եվրոպայի հզոր տերություններն սկսեցին հետաքրքրվել Հայկական հարցով, որի պատճառները մարդասիրական, միաժամանակ քաղաքական էին, հայերը Օսմանյան կայսրության գավառներում ծանր իրավիճակում էին՝ ենթարկվում էին թե՛ թուրքական կառավարության և թե տեղական իշխանությունների ճնշմանը: Ի վերջո, Եվրոպական տերությունները բարենորոգումներ պահանջեցին, և սուլթանը խոստացավ... Հաջորդեց այն առիթը, որը նա ակնկալում էր՝ ծնունդ առավ հայկական հեղափոխական շարժումը, որին հաջորդեցին լայնածավալ բռնաճշումները: 1894-1896 թվականների կոտորածները, որոնց մոտ երեք հարյուր հազար հայ զոհ գնաց, արյունով ողողեցին Օսմանյան կայսրության տարածքը:

Այնուհետև հայկական հեղափոխական շարժումը համագործակցեց և օժանդակեց «Միություն և առաջադիմություն» կոչվող թուրքական հեղափոխական շարժմանը, որը 1908-ին տապալեց սուլթանի ինքնակալությունը, սահմանադրական իշխանություն հաստատեց: Բնականաբար, հույս ծագեց, որ Օսմանյան կայսրությունը առաջ կընթանա ժամանակի քաղաքական միակ տրամաբանական ուղիով, այսինքն զարկ կտա ապակենտրոնացմանն ու բազմակարծությանը, որոնք երկրի ժողովուրդներին քաղաքացիական հավասար իրավունքներով կօժտեն:

Ցավոք, հետագա իրադարձություններն ի դերև հանեցին այդ հույսը, շատ շուտով ի հայտ եկավ թուրքական բիրտ ազգայնականությունը: Այն մոլեռանդ գաղափարախոսության ձև ստացավ և նպատակ դրեց միավորել ոչ միայն Թուրքիայի թուրքերին, այսինքն Թուրքիան բացառապես թուրքական դարձնել, այլև Ասիայի թուրքերին, այլ կերպ ասած՝ իրագործել «պանթուրանական» կոչվող ծրագիրը, որը միտում ուներ համախմբել Ռուսաստանի և Կենտրոնական Ասիայի թուրքերին:

Երբ մենք նայում ենք քարտեզին, տեսնում ենք, որ Անատոլիայի և Ադրբեջանի թուրքերի,- որոնց օսմանյան իշխանություններն առաջինն էին ձգտում միաձուլել,- միջև մի ժողովուրդ է ապրում՝ հայերը: Սա 1915 թվականի իրադարձությունների առաջին գաղափարական պատճառն է: Գոյություն ուներ նաև աշխարհագրական պատճառ՝ վերացնել մեծ մասամբ հայե -

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

րով բնակեցված այն տարածքը, որը գտնվում էր Ռուսաստանի և Օսմանյան կայսրության սահմանի երկու կողմերում, և, վերջապես, երրորդ՝ տնտեսական պատճառը, որի նպատակը այն դերի սահմանափակումն էր, որ երկրի առևտրում, մյուս բնագավառներում խաղում էին հայերն ու հույները: Ուրեմն, միաժամանակ թե՛ առիթ և թե հարմար պահ էր պետք: Հարմար պահ հանդիսացավ Առաջին աշխարհամարտը, որին թուրքերը փոքր-ինչ ուշ մասնակցեցին ու միացան գերիզոր տերություններին:

Էնվեր փաշան իր առաջնային խնդիրը համարեց ռուսական ճակատ շտապելը: Նա կտրեց անցավ Օսմանյան կայսրության՝ հայերով բնակեցված շրջանները, հասավ Սարիղամիշ, որտեղ 1915-ի սկզբին երրորդ թուրքական բանակը ջախջախիչ պարտություն կրեց: Քավության նոխազ էր պետք, որը և դարձավ հայությունը:

Դեռևս 1915 թվականի հունվարից, ես ուզում եմ դա հատկապես շեշտել, ի հայտ եկավ ցեղասպանության կանխամտածվածությունը՝ օսմանյան բանակի հայերը զինաթափվեցին: Նրանցից, այսպես կոչված, աշխատանքային գումարտակներ կազմավորեցին և փոքր խմբերի վերածելով, ոչնչացրին: Հետո բռնագաղթն սկսվեց լեռնային Կիլիկիայում, որն ավանդաբար հայկական դիմադրության օջախ էր: Մի ուրիշ առիթ էլ ներկայացավ: Ապրիլի սկզբին, Վանում՝ Թուրքիայի արևելյան մասում գտնվող հայաբնակ քաղաքում, կանխազգալով, որ կառավարիչը փորձում է ջարդեր հրահրել, հայերն ինքնապաշտպանական խմբեր կազմեցին: Դա Վանի ապստամբություն կոչվեց, որին և 1915-ի ապրիլի 24-ին հաջորդեց հայ մտավորականության ձերբակալությունը: Այդ օրն էլ հենց ընդունված է ցեղասպանության սկիզբ կոչել, որն ընթացավ երկու փուլով: Հիմնականում հայերով բնակեցված արևելյան յոթը նահանգներում տղամարդկանց կալանավորում ու բնակավայրերի մոտ էլ ոչնչացնում էին, իսկ կանանց, ծերունիներին, երեխաներին աքսորում էին փոքր խմբերով: Գյուղերում հաճախ բռնագաղթը կոտորածի էր վերածվում, այդ պատճառով էլ տարագրվողների քարավանները կազմված էին մերթ մի քանի հազար, մերթ էլ սոսկ մի քանի հարյուր հոգուց: Աքսորյալներին չէին տանում իսկական ճանապարհներով, նրանց ստիպում էին մագլցել լեռնային կածանները, աստիճանաբար բնաջնջում էին: Հենց այս՝ բռնագաղթի, բնաջնջման ձևերն ու միջոցներ -

րը ոչ մի կասկած չեն թողնում ցեղասպանության կանխամտածվածության մասին: Իրոք, աքսորի ճանապարհին, մի կողմից «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ստեղծած Հատուկ կազմակերպության անդամները և բանտերից ազատ արձակված հանցագործներն էին կոտորում հայերին, մյուս կողմից՝ քրդերը: Թուրք ազգաբնակչությունն էլ էր ջարդերին մասնակցում, բայց հազվադեպ: Նույնիսկ զինվոր-ոստիկանները, որոնք տեսականորեն պիտի պաշտպանեին տարագիրներին, թալանելու, լլկելու, սպանելու առիթը բաց չէին թողնում: Այսպիսով, երեք ամսում, 1915 թվականի մայիսից հուլիսը, Օսմանյան կայսրության արևելյան նահանգների հայ ազգաբնակչությունը ամբողջովին տեղահանվեց և մեծ մասամբ կոտորվեց: Սա առաջին փուլն էր:

Երկրորդ փուլն առնչվում է կայսրության կենտրոնական, Միջերկրականի ափամերձ շրջաններին, ինչպես նաև Կիլիկիային, որտեղ նույնպես հայեր էին ապրում, բայց համեմատաբար ոչ մեծ քանակությամբ: Հարկ է նշել, որ թուրքական իրար հաջորդող կառավարությունների այն պնդումները, որ հայերին ռազմաճակատային գոտուց հեռացրել են, որովհետև կասկածել են դավաճանության մեջ, առաջին փուլի առնչությամբ հիմնավոր չեն հնչում, քանի որ նրանց ոչ միայն գաղթեցնում, այլև կոտորում ու բնաջնջում էին:

Պատճառաբանությունը թերևս արդարացի թվար երկրորդ փուլի կապակցությամբ, եթե այդ բնակավայրերը չափազանց հեռու չլինեին մարտադաշտից: Ամեն դեպքում, վերջինը բավական «ժամանակակից» բռնագաղթ էր, քանի որ հայերին տեղափոխում էին անասնավազոններով, ընդ որում՝ ճանապարհաձախսը իրենք՝ աքսորականներն էին վճարում: Բռնագաղթի զլխավոր հենակայանը Հալեպ քաղաքն էր, որտեղից տարագիրներին երկու ուղղությամբ էին քշում. մեկը՝ դեպի հարավ, որտեղ արդեն հատուկ հանգրվաններ էին ստեղծված, ուր հարյուր հիսուն հազարից երկու հարյուր հիսուն հազար հայ վերապրեց, մյուսը՝ դեպի արևելք. քարավանները ձգվեցին Եփրատի ափերով ու անհետացան Միջագետքի անապատում:

Դեպքերի մանրամասները, հենց ծավալվելու ընթացքում էլ, այս կամ այն չափով հայտնի դարձան: Նախ նրանց բողոքների շնորհիվ, ովքեր թուրք չէին, բայց գտնվում էին Օսմանյան կայսրությունում: Խոսքը գերմանացիների, հատկապես հյուս -

-- էջ 190 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

պատոսների ու դեսպանների մասին է, որոնք համապատասխան՝ այժմ արդեն հայտնի, շրջանառության մեջ դրված փաստաթղթեր էին ուղարկում արտաքին գործերի նախարարություն: Դրանց մեծ մասը որևէ պատմաբան կարող էր ներկայացնել հարգարժան ատյանին: Քիչ դեր չխաղացին նաև չեզոք վկաները՝

ամերիկացիները, միսիոներները, պատահական գործարարներ, որոնք ճանապարհորդում էին Թուրքիայում: Շատ շուտով իրադարձությունների լուրերն այն աստիճանի տարածվեցին, որ Եռյակ համաձայնության երկրների՝ այսինքն Ֆրանսիայի, Անգլիայի, Ռուսաստանի արտաքին գործերի նախարարները թուրքական կառավարությանը բռնագաղթը դադարեցնելու վերջնագիր ներկայացրին, հակառակ դեպքում սպառնացին ռազմական դատարանով դատել (մի բան, որը, ինչպես հայտնի է, վերջիվերջո տեղի ունեցավ):

Բոլոր դեպքերում վերջնագիրը ողջամտության մղեց թուրքական կառավարությանը, ստիպեց բռնագաղթի հրովարտակ հրապարակել: Ես դիտավորյալ եմ «տեղափոխման» փոխարեն «բռնագաղթ» բառը գործածում, որովհետև, դրան դեռ կանդրադառնամ, մտացածին էին թուրքերի՝ հայերի տեղահանությունը թշնամու հետ համագործակցության, դավաճանության պատրվակներով բացատրելը:

Ուրեմն, 1919-ին, երբ երիտթուրքերի կառավարությունը տապալվեց, պատերազմն ավարտվեց ու Եռյակ համաձայնության երկրները հաղթեցին, հավաքվեցին Խաղաղության խորհրդաժողովի: Հայաստանն իր արժանի տեղը գրավեց այն փոքր երկրների շարքում, որոնք տարածքներ էին ակնկալում: Արժանի տեղը, մանավանդ որ 1917 թվականի հեղափոխության ընթացքում Ռուսական կայսրությունը փլուզվել էր և փոքրիկ հայկական հանրապետություն էր գոյացել՝ հանրապետություն, որը պատմական տարածքների մեկ տասներորդն էր զբաղեցնում:

Եռյակ համաձայնության երկրները հրավիրում են Թուրքիայի այդ ժամանակվա վարչապետին՝ Անգլիայի կողմից նշանակված Ֆերիդ փաշային, որը Վերսալում, խորհրդաժողովի դահլիճում, հրապարակայնորեն խոստովանում է կոտորածների ահավոր իրողությունը, ընդունում է, որ նման անցյալը պատվազրկում է իր երկիրն ու դեռևս Մուստաֆա Քեմալի իշխանության անցնելուց առաջ հատուկ հանձնաժողովին հանձնարա -

-- էջ 191 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

րում է համապատասխան հետաքննություն կատարել: Այդ մանրամասները այն աստիճան են վրդովեցնում Խաղաղության խորհրդաժողովի մասնակիցներին, որ Կլեմանտոն դուրս է հրավիրում վարչապետին... Վերջինս Կոստանդնուպոլսում, «Իթթիհատականների դատավարություն» հորջորջմամբ հայտնի ռազմական ատյան է հրավիրում, որտեղ հեռակա կարգով մահվան են դատապարտվում ցեղասպանության գլխավոր պատասխանատուները՝ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը...

Սակայն պատմության ընթացքը փոխվում է, որովհետև Անատոլիայում հարություն է առնում թուրքական ազգայնականությունը: Այն վերածնվում է այլ

ձևով, դառնում ավելի նպատակամետ, հետևողական: Խոսքն արդեն ոչ թե պանթուրանականության, այլ՝ փլուզվող կայսրության տարածքները միավորելու մասին է, որոնք հզորացնելու էին Մուստաֆա Զեմալի գերիշխանությամբ հառնող ապագա Թուրքիան: Ուրեմն, թուրքական ազգայնականությունը ձեռնամուխ է լինում կորցրած տարածքների վերագրավմանը: Երկիրն այդ հնարավորությունն ուներ, Մուդրոսի զինադադարը Անատոլիայում էր թողել թուրքական բանակը: Նախ հետ է նվաճվում Կիլիկիան՝ ի հաշիվ Ֆրանսիայի, որը Խաղաղության խորհրդաժողովում ստացել էր երկրամասի հանձնառությունը: Այնուհետև թուրքերը հույներին քշում են Անատոլիայից, շատ են ուզում գրավել նաև հայկական փոքրիկ հանրապետությունը, սակայն բոլշևիկները առաջ են անցնում, այն դարձնում են խորհրդային: Սևրի 1920-ի դաշնագիրը, որը պիտի անկախություն շնորհեր հայկական հանրապետությանը, ստորագրողները չեն վավերացնում և կորցնում է իր ուժը: Լոզանում, 1923 թվականին, Թուրքիան հարկադրվում է պայմանագիր ստորագրել Եռյակ համաձայնության երկրների հետ ու մեկընդմիջտ թաղում է Հայկական հարցը: Այլ կերպ ասած, թուրքերը հաղթող են դուրս գալիս՝ ցեղասպանության միջոցով,- այն ժամանակ, այդ բառը չէր գործածվում,- ազատվում են հայերից և նվաճում են տարածքներ, որոնք վերջնականապես թուրքական են դառնում:

1920-ից մինչև 1930 թվականը թուրքական պատմագրությունը վերաշարադրում է անցյալը, ինչպես սովորաբար դա արվում է բռնատիրական երկրներում, այսինքն ծառայեցնում է տերության շահերին: Ամեն կերպ պետք էր մոռացության մատ -

-- էջ 192 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Նել 1915 թվականի դեպքերը, և դա այս կամ այն չափով հաջողվում է: Սակայն հիմնական գլխացավանքը Երկրորդ աշխարհամարտից հետո է սկսվում, երբ պրոֆեսոր Ռաֆայել Լեմկինը ստեղծում է «ցեղասպանություն» բառը, և ՄԱԿ-ը 1948 թվականի հռչակագրով իրավաբանական իմաստ է հաղորդում դրան՝ տեղի տալով բուռն քննարկումների:

Հայտնի է, աշխարհը գիտե, որ տեղի է ունեցել հրեական ցեղասպանությունը, աշխարհը վախենում է, հասկանում, թե իշխանատենչությունը, մոլեռանդությունն ո՞ւր կարող են հասցնել մարդուն: Հայերն էլ են ջանում ներկայացնել իրենց դատը, որովհետև դեպքերը, փաստաթղթերը, ամեն, ամեն ինչ վկայում են, որ իրենք նույնպես, 1915-ին, ցեղասպանության զոհ են դարձել: Ցեղասպանության նկատմամբ միայն երկու դիրքորոշում կարելի է ունենալ՝ կա՛մ հետևանքները վերացվում են, ինչպես 1945 թվականից հետո գերմանական կառավարությունը վարվեց՝ իրողությունն ընդունելով, փորձելով մասամբ գոնե ամոքել հրեա ժողովրդի ողբերգությունը, կամ էլ թաղվում են կեղծիքի մեջ: Այդ ճանապարհով է գնում թուրքական պատմագրությունը: Ժամանակակից իրադարձությունների լույսի ներքո կարելի է վստահորեն ասել, որ երկրի համալսարանները,

հատկապես Անկարայինը, ապատեղեկատվության դարբնոցներ են դարձել, կենտրոնացել ցեղասպանությունը ժխտելու տարբերակի վրա:

Ես կարող եմ ատյանին,- եթե անդամները ցանկանում են,- ներկայացնել Անկարայի համալսարանի վերջին հրապարակումը՝ «Ինը հարց, ինը պատասխան» խորագրով, որը նախ բացատրում է, որ հայեր գոյություն չեն ունեցել, իսկ նրանք, ովքեր գոյություն են ունեցել, հայեր չեն եղել, այլ կերպ ասած՝ հետևողականորեն անտեսվում է մի ամբողջ ժողովրդի անցյալը: Մյուս կողմից էլ ճի՞գ է գործադրվում ապացուցելու, որ հայերը, մինչև եվրոպական պետությունների միջամտությունը, հաշտ են ապրել թուրքերի հետ, իսկ 1915-ին, ճիշտ է, ցավալի իրադարձություններ տեղի են ունեցել, բայց երկու կողմից էլ զոհեր եղել են:

Եթե մենք փոքր-ինչ ավելի խորանանք, կհամոզվենք, որ ուրացման այս եղանակը երեք մտայնության վրա է հիմնված: Առաջինը վերաբերում է վիճակագրության շուրջ ծագած տա -

-- էջ 193 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

րաձայնությանը: Նախ՝ հարկավոր է ճշտել, թե որքա՞ն է եղել Օսմանյան կայսրության հայերի թիվը: 19-րդ դարավերջի հնարավորություններն այնպիսին չէին, որպեսզի մեզ ճշգրիտ տվյալներ հաղորդեին: Հայերը պիտի ձգտեին ուռճացրած, թուրքերը՝ նվազեցրած թվեր ներկայացնել: Նույնը վերաբերում է զոհերի թվաքանակին: Երեսնական թվերին թուրքերը հայտարարում էին, որ յոթը հարյուր հազար զոհ է եղել, այժմ իջեցնում են երկու հարյուր հազարի: Նույն կերպ վարվում են ազգաբնակչության ընդհանուր տվյալների հետ: Հայերը գտնում են, որ բնակչության 2/3-ն է զոհվել, թուրքերը՝ 1/3-ը: Աստվա՛ծ իմ, եթե մի ժողովրդի նույնիսկ 1/3-ն է խողխողվել, ուրեմն ցեղասպանություն է տեղի ունեցել, որն ըստ ՄԱԿ-ի հռչակագրի՝ միմիայն կանխամտածված է լինում: Հենց այս հանգամանքն է, որ հախուռն կերպով ժխտում են թուրքական իշխանությունները՝ սկսած 1923-ի Լոզանի պայմանագրից, Իսմեթ Ինենյուկից:

Ցեղասպանության փաստեր չկան՝ հայտարարում են թուրք պատմաբանները, կառավարությունը: Ճիշտ է, որ Թալեաթ փաշան ոչ մի խոստովանություն չի ստորագրել, բայց ցեղասպանության ժամանակակից պատմաբանները, հատկապես անշահախնդիր անձանց՝ գերմանացիների, ավստրիացիների վկայությունների շնորհիվ, այնպիսի փաստեր են կուտակել, որոնք լիովին բավական են հաստատելու համար՝ այն ահավոր դեպքը, որ 1915 թվականին տեղի է ունեցել Թուրքիայում, ցեղասպանություն է:

Երկրորդ միջոցը, որին այժմ դիմում են թուրք պատմաբանները, Ֆրանսիայում կիրառել է Ֆորիսոնը գազախցիկների ժխտման կապակցությամբ: Նրանք

վավերաթղթերի տրցակից վերցնում են ամենակասկածելին, ամեն միջոցի դիմում են, որպեսզի ապացուցեն կեղծ լինելը:

Ճշտեմ՝ խոսքը Արամ Անտոնյանի հրապարակած Նայիմ բեյի հեռագրերի մասին է, որոնք պետք է որ Թալեաթ փաշան հաստատած լիներ: Պարոն Նախագահ, ես հնարավորություն չունեմ ցուցադրելու այդ հեռագրերը, դրանք ժամանակին հայտնաբերել է Արամ Անտոնյանը, քանի որ ռազմական գրաքննիչ է եղել բանակում: Խնդրո առարկա հեռագրերը վերծանվել, Թալեաթ փաշային պատուհասողի՝ Սողոմոն Թեհլերյանի դատավարության ժամանակ ներկայացվել են Բեռլինի դատական ատյանին:

-- էջ 194 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

Հինգը վավերական են ճանաչվել, բայց հետո անհայտ կորել են: Ես կարող եմ ատյանին հանձնել Արամ Անտոնյանի գիրքը, որն ինձ բավական հիմնավոր է թվում: Ցեղասպանության փաստը ապացուցելու համար՝ նույնիսկ այդ հեռագրերի կարիքը չի զգացվում, քանի որ անաչառ պատմաբանը որևէ դատարանում կարող է ներկայացնել համոզիչ փաստերի մի ամբողջ հավաքածու:

Թուրքերի երրորդ միջոցը այն մտայնությունից կառչելն է, որ իբր հայերն են իրենց կոտորել, որ անընդհատ ապստամբել են, որ... Ցանկության դեպքում ամեն ինչ յուրովի կարելի է պատճառաբանել:

Մինչդեռ այդ ամենը կեղծիք է: Թվերը հակոտնյա են: 1918 թվականին, երբ վերապրող հայերը հնարավորություն են ստացել իրենց բնօրրանները վերադառնալ, այո՛, բախումներ, վրեժխնդրություններ, ցավալի հակամարտություններ տեղի ունեցել են, սակայն զոհերի թիվը տասից մի քանի հարյուրի է հասել: Դա էլ է շատ, դա էլ է սահմուկեցուցիչ, բայց ոչինչ է,- հանգամանալից հաշվարկներից հետո կարող եմ վստահությամբ հայտարարել,- մեկ միլիոնից ավելի զոհերի համեմատությամբ: Ավելի ճշգրիտ՝ հայերը մեկ միլիոն երկու հարյուր հազար կորուստ են ունեցել, վեց հարյուր հազարը՝ բռնագաղթի ընթացքում:

Պարոն Նախագահ, պարոնայք երդվալնե՛ր, սրանով ուզում եմ ավարտել իմ վկայությունները: Ժամանակին ես գրել եմ՝ «Հայրերի ոճիրը չպետք է ծանրանա որդիների վրա», բայց ավելացրել եմ՝ «Որդիները չպետք է այն անտեսեն, եթե թաքցնում են՝ ուրեմն շարունակում են հայրերի հանցագործությունը»: Նրանք ստեղծում են մի իրավիճակ, որն այլևս չի կարելի հանդուրժել, անվերջ խեղաթյուրում են Հայկական հարցը, որը վերջնական լուծում կարող է ստանալ միմիայն խորհրդակցական սեղանի շուրջը, փոխըմբռնման, երկ խոսության միջոցով:

ՆԱԽԱԳԱՀ - Ձեր աշխատություններից մեկում դուք բառացի հետևյալն եք գրում.
«Աչքի փոխարեն աչք, արյան փոխարեն արյուն պահանջելը կարող է
ողբերգական հետևանքներ ունենալ: Հասկացնելը շատ ավելի կարևոր է, քան
վաթսուն տարի անց պատժելը...»: Շարունակում եք նույն տեսակետին մնալ:

-- էջ 195 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

ՏԵՐՆՈՆ - Պարոն նախագահ, ես հայ չեմ, պատմաբան եմ, միաժամանակ՝
վիրաբույժ: Մարդկային կյանքն ինձ համար չափազանց թանկ է, ուստի չեմ կարող
պաշտպանել հայերի զինված պայքարը: Այդ ամենը պետք է կարողանալ
հասկանալ, արդարացնել: Ես կարծում եմ, որ հասկացել եմ, բայց արդարացնելն
իմ խնդիրը չէ:

ՆԱԽԱԳԱՀ - Հարցեր կա՞ն: Ոչ ոք չի՞ ուզում հարց տալ: Ատյանը շնորհակալ է
ձեզնից:

Գրող, քաղաքագետ ժերար Շալիանի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Պարոն ժերար Շալիանը Հարվարդի, Լոս Անջելեսի,
Բերկլիի համալսարանների հրավիրված դասախոս է, ազատագրական
շարժումների և զինված պայքարի մասնագետ: Նա բազմաթիվ գրքերի հեղինակ է,
Իվ Տերնոնի հետ հրատարակել է «1915-1917՝ հայերի ցեղասպանությունը»
ուսումնասիրությունը: Կրկնություններից խուսափելու համար մենք պիտի
խնդրենք պարոն Շալիանին իր տեսակետները ներկայացնել 1923-ից մինչև 1975
թվականն ընկած ժամանակաշրջանի և լռության մասին, որն այդ ընթացքում
մոռացության է մատնել Հայկական հարցը:

ՇԱԼԻԱՆ - Նախ ուզում եմ հայտարարել, որ ինքս անձամբ թուրք ժողովրդի
նկատմամբ թշնամանք չեմ զգում, չափազանց բարձր եմ գնահատում մշակույթն
ու քաղաքակրթությունը: Ես ֆրանսերեն թարգմանել եմ երեք թուրք դասական
բանաստեղծների, այնպես որ իմ ելույթում ցեղային ատելության մասին խոսք չի
կարող լինել: Նշեմ նաև, որ համաձայն չեմ դատապարտյալների պատկանած
կազմակերպության ռազմավարության որոշ սկզբունքներին, կույր
բռնարարքները համարում եմ անիմաստ, անարդյունավետ, գտնում եմ, որ
հայերը, որոնց չափազանց անհրաժեշտ է հասարակական կարծիքի
համակրանքը, նման քայլերից պետք է խուսափեն:

Դրան հակառակ, բռնարարքը, որ դուք դատում եք այսօր, բոլորովին այլ բնույթի է,
քանի որ առանձնահատուկ տարածքի՝ թուրքական հյուպատոսարանին է
առնչվում, ուղղված է

տվյալ երկրի դեմ:

-- էջ 196 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

Այժմ պատասխանեմ ինձ ուղղված հարցին՝ ինչո՞ւ քսանական թվականներից մինչև յոթանասունի սկիզբները Հայկական հարցը լուրջաբար էր մատնված: Հիմնականում այն պատճառով, որ հայերը ցեղասպանությունից հետո հոգեպես ու ֆիզիկապես ջախջախված էին, ճգնում էին կրկին կյանք մտնել:

Այնուհետև, երկրորդ աշխարհամարտում, ինչպես հիշում եք, տեղի ունեցան հրեա և գնչու ժողովուրդների նախճիրները, ստեղծվեց «ցեղասպանություն» արտահայտությունը, շրջանառության մեջ մտան «պատերազմի հանցագործություն», «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» ձևակերպումները, հայ ժողովուրդը զգաց, որ այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ ավելի ու ավելի հաճախ է խոսվում մարդու իրավունքների մասին, իր համազգային ողբերգությունը չի վերարժարծվում:

ՄԱԿ-ի, ավելի վաղ՝ Ազգերի լիգայի թղթածրարները լեցուն են հայերի հղած խնդրագրերով, որոնք արդարություն էին հայցում: Են թաղրում եմ, որ դրանք, թերևս, մի ապահով գգրոցում պահվում են, չնայած, ցավոք, երբեք չեն ընթերցվել: Ի՛նչ կարող ես անել, ժամանակակից աշխարհում, հատկապես եթե նկատի ունենանք տեղեկատվության նախասիրությունը, նախընտրում են հիմնականում բռնարարքների անդրադառնալ: Անառարկելի ճշմարտություն է՝ միայն բռնության միջոցով հայերը (պայմանով, իհարկե, որ ուղղված լինի թուրքական պետության և ներկայացուցչությունների դեմ) լսելի դարձրին իրենց դատը: Դա այդպես է, ակնհայտ իրողություն է:

Ինչ վերաբերում է ցեղասպանության շուրջն այստեղ առաջացած տարակարծություններին, ես ավելացնելու քիչ բան ունեմ: Հայերը հավատացնում են, որ իրենց ուղիղ կեսը բռնագաղթի ընթացքում կոտորվել է: Մի թուրք պրոֆեսոր այստեղ հայտարարեց, որ, ըստ իրեն, Օսմանյան կայսրությունում մեկ միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար հայ է ապրել, երկու հարյուր վաթսուն հազարը զոհվել է: Ես չեմ ուզում մանրամասնությունների մեջ մտնել, մենք հաշվապահության համար չենք հավաքվել: Փորձեմ բացատրել այն ձևակերպման ներքին իմաստը, որ պրոֆեսորը նման հանգստությամբ մեզ ներկայացնում է: Եթե նա ասում է, որ «տեղահանության ընթացքում», այսինքն 1915-ից մինչև 1917-ը հայ ազգաբնակչության 20%-ը ան -

-- էջ 197 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

հետ կորել է, Ֆրանսիայի համեմատությամբ նշանակում է, որ երկու տարում, գաղթի հետևանքով, տասը միլիոն ֆրանսիացի է վերացել: Այս հանգամանքը, կարծում եմ, մեկնաբանման կարիք չի զգում: Կուզեի միայն մի հարց տալ՝ ի՞նչ հավատ, վստահություն կարելի է ունենալ այն երկրի նկատմամբ, որն այս ամենից հետո շարունակում է պնդել, որ իր տարածքներում արտառոց ոչինչ տեղի չի ունեցել: Կարծում եմ՝ նման մոտեցումը պատմության մեջ նախադեպը չունի:

Ես Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խմբավորման ֆրանսիական մասնաճյուղի նախագահն եմ և փաստերով գիտեմ, որ Թուրքիան միակ երկիրն է, որ ժխտում է փոքրամասնությունների գոյությունը, այն դեպքում, երբ երկրում միլիոնավոր քրդեր են ապրում:

Վերջում, այս սրահում, ուզում եմ իմ հարգանքի հավաստիքը մատուցել Ֆրանսիային, որն իր նախագահի շուրթերով ընդունեց ցեղասպանությունը, չնայած գիտեր, որ դիվանագիտական դժվարություններից բացի ոչինչ չի շահելու: Այս երևույթը, կարծում եմ, պիտի ողջունեն ո՛չ միայն հայերը, այլև բոլոր նրանք, որոնց համար մարդու իրավունքների պաշտպանությունը նվիրական նպատակ է:

ՆԱԽԱԳԱՀ - Հարցեր չկա՞ն: Ատյանը շնորհակալություն է հայտնում ձեզ:

Պատմաբան Անահիտ Տեր-Մինասյանի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Անահիտ Տեր-Մինասյանը հայկական ազատագրական շարժման պատմության մասնագետ է: Լավ կլիներ, որ նա հատկապես շարժման ներկա փուլին անդրադառնար:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ - Նախ ուզում եմ նշել, որ գործողությունը, որ դուք դատում եք այսօր, հնարավոր չէ անջատել հայ ժողովրդի վերջին հարյուրամյակի պատմությունից, որը ոչ միայն նախնիների ու կոտորածների, այլ նաև օսմանյան բռնապետությունից ազատագրվելու պայքարի պատմություն է: Այլ կերպ ասած, մենք ձեզ հետ մեկտեղ ականատես ենք դառնում ազգային ազատագրական շարժման վերջին, թերևս ամենավերջին դրվագին՝ շարժում, որը մոտ մեկ դար առաջ սկզբնավորվել է Օսմանյան կայսրությունում, շարունակվել Անդրկովկասում,

-- էջ 198 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

վերջ է գտել Լոզանի հաշտության պայմանագրով, որը մարեց հայերի բոլոր հույսերը, Արևելյան Անատոլիայի պատմական տարածքներում միացյալ ազգային պետություն ստեղծելու երազը, թեև պայմանագրի դրույթները հայ հասարակայնությունը երբեք չի ընդունել:

1923 թվականից ի վեր հայերին ամբողջ աշխարհում կոչում են վտարանդիներ, ընդ որում՝ վտարանդիներ են կոչվում նաև սպիտակ ռուսները: Տարբերությունն այն է, որ հայերը, չնայած արդեն քանի տարի հեռու են, երբեք չեն հրաժարվել Արևմտահայաստան վերադառնալու, անկախ ազգային պետություն կերտելու երազանքից:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Հայերը միշտ են ցանկացել տուն դառնալ, բայց միջազգային տարբեր պայմանագրերը խանգարել են:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ - Խնդիրն այն է, որ հայերին առնչվող հարցերն առանց իրենց մասնակցության են քննարկվել: Խոսքը վերաբերում է հատկապես Լոզանի պայմանագրին:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Բայց հայ ժողովուրդը երբեք չի հրաժարվել իր պահանջատիրությունից:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ - Այո՛, չի հրաժարվել: Բավական է ուսումնասիրել աշխարհի հիսունից ավելի երկրներում սփռված հայ համայնքների պատմությունը, համոզվելու համար, որ դեռևս 1914 թվականից առաջ ձևավորված ազգային հեղափոխական կուսակցությունները շարունակում են իրենց գոյությունը, հանդես են գալիս տարածքային պահանջատիրությամբ և ներշնչում են ցեղասպանությունից հետո՝ արտերկրում ծնված սերունդներին, որ հայ ժողովուրդը,- որովհետև, այո՛, գոյություն ունի հայ ժողովուրդ և ոչ թե թուրքահայություն, ռուսահայություն, ամերիկահայություն,- կարիք ունի հայրենիքի: Հայկական հայրենասիրությունը վերջին վաթսուն տարիների ունեցել է երկու ուղղություն՝ մեկը պահպանել է ազգային մշակույթն ու կրոնը, մյուսը՝ բորբոքել է պատմական հայրենիքը վերադառնալու ճգնաժամը: Հայ հեղափոխական դաշնակցությունը, որի մասին անշուշտ լսել եք, պաշտպանում է ազատ, անկախ, միացյալ Հայաստանի գաղափարը, որը, եթե անգամ անիրական թվա, նման փոքր ժողովրդի համար էլ է հնարավոր: Համեմատության համար ես ուզում եմ բերել Ֆրանսիայի օրինակը: Եթե Հիտլերը, ինչպես նախատեսված էր նացիստական ծրագրերում,

-- էջ 199 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

Գերմանիային բռնակցելու Ալգասն ու Լոթարինգիան, մի՞թե գեներալ դը Գուլը մի ակնթարթ անգամ կհրաժարվեր այդ տարածքներն ազատագրելու գաղափարից:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸԹԼԵՐ - Դուք համալսարանի դասախոս եք, պատմության մասնագետ:
Ասացե՛ք՝ հայերի և ֆրանսիացիների միջև եղե՞լ են դարավոր կապեր:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ - Հայերի կապը Ֆրանսիայի հետ հասնում է ընդհուպ վաղ
Միջնադար: Հայոց վերջին թագավորի՝ Լուսինյանի շիրիմը գտնվում է Փարիզի
արվարձանային Սեն-Դընի եկեղեցում:

Գալով 19-րդ դարին, Ֆրանսիան, բնագրից կատարված թարգմանությունների
միջոցով, հայ քաղաքական մտքին հաղորդեց ազատության, մարդու
իրավունքների, ազգային անկախության գաղափարները, որոնք շատ արագ
տարածվեցին ու արմատավորվեցին: Չպետք է մոռանալ նաև, որ մինչև 1914
թվականը Ֆրանսիան Օսմանյան կայսրությունում ամենամեծ ներդրումներ
կատարող, ամենաշատ միսիոներներ առաքող երկիրն էր և հանդես էր գալիս
քրիստոնյա փոքրամասնությունների պաշտպանությամբ: Հայ համայնքը բոլոր
հույսերը կապել էր Ֆրանսիայի հետ, հայերի և ֆրանսիացիների
հարաբերություններն այն աստիճանի էին սերտացել, որ Առաջին
աշխարհամարտի վերջում, հարմար պահը որսալով, Ֆրանսիան Կիլիկիայում, իր
բանակի հովանավորությամբ, ցանկանում էր հայկական բևորան ստեղծել: 1921-
ին, քեմալական շարժման պարտադրմամբ, ֆրանսիական զորամիավորումները
Նահանջեցին դեպի Սիրիա, Լիբանան, և հարյուր հիսունից երկու հարյուր հազար
հայեր հետևեցին նրանց ու Մերձավոր Արևելքի երկրներում կազմավորեցին այն
ազդեցիկ գաղութները, որոնցից հավանաբար սերում են այժմ դատապարտվող
չորս երիտասարդները: Ահա այդ պահից հայ ժողովուրդը երկակի
զգացողությամբ համակվեց ֆրանսիացիների նկատմամբ՝ նախ, իհարկե,
երախտագիտությամբ՝ Արևելքում տարածված առաջավոր գաղափարների
համար, բայց նաև որոշակի դառնությամբ, որովհետև մինչև հիմա հայերին չի
լքում ճակատագրական պահին Ֆրանսիայի բանակի հեռանալու, իրենց
արաբական երկրներում տեղավորելով գոհանալու տխուր հուշը: Ուզում եմ
հիշեցնել նաև, որ 1939 թվականի օգոստոսին, Երկրորդ աշխարհա -

-- էջ 200 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

մարտն սկսվելուց քիչ առաջ Ֆրանսիան Թուրքիային հանձնեց Ալեքսանդրեթի
սանջակը և բազմաթիվ հայեր ստիպված եղան, ֆրանսիական
հովանավորությունից չզրկվելու համար, լքել իրենց տներն ու Մերձավոր Արևելքի
երկրներում հաստատվել:

Ի վերջո չպետք է անտեսել նաև Ֆրանսիայի հայ համայնքը: 1923 թվականից ի վեր,
Ֆրանսիան, ճիշտ է, բանվորական ուժի կարիք ունենալու պատճառով,
հատկապես Մարսելի շրջանում բազմաթիվ հայերի ընդունեց, դրանով ցույց տվեց
նաև իր մեծահոգությունը:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸԹԼԵՐ - Այժմ ոչ միայն Ֆրանսիայում, այլև աշխարհի շատ երկրներում հայկական հոծ համայնքներ են ստեղծվել: Ի՞նչ զգացողություն, վերաբերմունք ունեն նրանք ցեղասպանության նկատմամբ:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ - Ցեղասպանության նկատմամբ վերաբերմունքն ամենուր միանշանակ է: Նախքան Երկրորդ աշխարհամարտի ավարտը այդ բառը չէր էլ ստեղծվել, մենք հայոց եղեռնը «Մեծ աղետ» էինք կոչում: Ինձ մեծացրել են այդ հուշերով, և այնքա արել եմ իմ զավակների նկատմամբ: Ցեղասպանությունը ոչ թե ցավատանջ ժառանգություն է, այլ վերք, որը կարելի է բուժել միմիայն քաղաքական գործունեությամբ, չհաշտվելով պարտված ժողովուրդ լինելու, մեռնելու գաղափարի հետ, մշտապես արտահայտելով մի օր հայրենիք վերադառնալու հաստատուն կամքը:

ՆԱԽԱԳԱՀ - Պարոնայք և տիկնայք երդվյալներ, հարցեր կա՞ն: Ո՞չ: Ատյանը շնորհակալ է ձեզնից, տիկի՛ն:

Ավագ դիվանապետ Գի Կուտան դը Սեսվալի դատախոսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Երուսաղեմի Սուրբ Ղազար միաբանության ավագ դիվանապետ պարոն Գի Կուտան դը Սեսվալը տարված է Միջնադարի՝ հատկապես քրիստոնեական պետությունների պատմությամբ: Նա բազմաթիվ ուղևորություններ է կատարել Միջին Արևելքում, եղել է Կիլիկիայում, որը մինչև 14-րդ դարը քրիստոնեության վերջին միջնաբերդը եղավ, Փոքր Ասիայում և Անիում՝ «Քառասուն մուտք, հազար ու մեկ եկեղեցի» ունեցող այն մայրաքաղաքում, որը Բագրատունիների հայկական թագավորության շքեղ ոստանն էր:

-- էջ 201 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

Այս ուղևորություններից հետո պարոն Կուտան դը Սեսվալը հանդես է եկել դասախոսություններով, տարբեր պարբերականներում հոդվածներ տպագրել: Ես կուզեի, որ նա պատմեր Կիլիկիայի ու Անիի ներկա վիճակի և այն պատճառների մասին, որոնք նրան դրդել են տազնապալի, ես կասեի՝ հուսահատական նամակ հղել Թուրքիայի մշակույթի նախարարին:

ԿՈՒՏԱՆ ԴԸ ՍԵՍՎԱԼ - Պարոն նախագահ՛ի, տիկնայք և պարոնայք երդվյալներ՛ր, երբ ես առաջին անգամ հայկական հինավուրց պետության մայրաքաղաքը՝ Անի այցելեցի, որն այժմ գտնվում է Թուրքիայի հյուսիսում, հմայվեցի պարիսպներով, եկեղեցիներով ու տաճարներով, որոնք մշակութային բացառիկ արժեք են ներկայացնում: Պետք է նշել, որ դեռևս 11-րդ դարում, երբ սելջուկ թուրքերը գրավել

Են քաղաք քը՝ ավերել են, իսկ բնակչությանը՝ կոտորել, մի մասն է միայն ապաստան գտել Կիլիկիայում:

Վերջերս ես նորից եղա Անիում: Այժմ այն մասամբ 4-րդ, 5-րդ դարերում կերտված եկեղեցիների ու տաճարների ավերակույտ է: Քաղաքում այժմ կյանք չկա, լռություն է ու թշվառություն: Ինձ ուղեկցող թուրք զինվորը, ցույց տալով հայկական բոլորածև եկեղեցիներից մեկը, ասաց, որ թուրքական բաղնիք է եղել: Թուրքերը ձգտում են վերացնել այն ամենը, ինչը հիշեցնում է քրիստոնեական պետության գոյության մասին:

Ես եղել եմ նաև Կիլիկիայում, որը Փոքր Ասիայի առաջին քրիստոնեական պետությունն էր, համագործակցում էր ֆրանկների հետ: Այժմ ամբողջ Կիլիկիայում հայկականության ոչ մի հետք չկա, թուրքերը փոխել են մինչև անգամ տեղանունները, օրինակ, Սիսը, հայերի կրոնական կենտրոնը՝ Ղոզան է կոչվում:

Ինքս հայ չեմ, իմ երակներում ոչ մի կաթիլ հայկական արյուն չկա, բայց գտնում եմ, որ մենք բոլորս, ֆրանսիական ջերմեռանդությամբ, պիտի արտահայտենք մեր համակրանքը այս քրիստոնյա ժողովրդի նկատմամբ, որը նահատակվեց նաև հանուն հավատի:

Գիտությունների ակադեմիայի անդամ պարոն Ժակ Ուդինի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Պարոն Ժակ Ուդինը գիտությունների ակադեմիայի անդամ է, միաժամանակ, Միացյալ Նահանգ -

-- էջ 202 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Ների գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ, Բոստոնի գիտությունների ակադեմիայի արտասահմանյան պատվավոր անդամ, Ստոկհոլմի թագավորական ակադեմիայի անդամ: Պարոն Ուդինը ապավարակման՝ համաշխարհային համբավի հասած մասնագետ է, չցանկանալով հանդերձ վիրավորել նրա համեստությունը, ավելացնեմ՝ մեր ժամանակի խոշորագույն գիտնականներից մեկը:

Ուզում եմ նրան միայն մի հարց ուղղել՝ ի՞նչն է ստիպել այդպիսի գիտնականին հանգամանալի, վրդովված նամակ հղել Ստամբուլի համալսարանի գիտխորհրդի նախագահին:

ՈՒԴԻՆ - Ես, ինչպես գիտությունների ակադեմիայի իմ գործընկերների մեծ մասը, մի էջանոց գրություն ստացա, որը ժխտում էր թուրքերի սանձազերծած ցեղասպանությունը և կոտորածների համար հայերին էր մեղադրում:

Պաշտպան Ասլանյանը գրույթյան կրկնօրինակը հանձնում է աստյանին:

Այդ ժամանակ ես հայերի ցեղասպանության մասին բավականաչափ տեղեկություն չունեի, բայց նույնիսկ այն քիչը, որ գիտեի, բավական էր, որպեսզի վրդովվեմ ու որոշեմ պատասխան գրել:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Կարո՞ղ եք հակիրճ ասել, թե պատասխանի համար նյութեր որտեղից հայթայթեցիք:

ՈՒԴԻՆ - Ես մի քանի գրադարանների, հատկապես Ազգային գրադարանի մշտական ընթերցողն եմ: Շաբաթներ շարունակ զանազան վավերագրեր եմ գտել, որոնք պատճենահանելի և այժմ ուզում եմ հանձնել աստյանին:

ՆԱԽԱԳԱՀ - Ի՞նչ կուզեիք ավելացնել:

ՈՒԴԻՆ - Կուզեի իմ պատասխանն ընթերցելու հնարավորություն տրվեր ինձ:

ՆԱԽԱԳԱՀ - Խնդրե՛մ:

Պարոն Ուդինն ընթերցում է Ստամբուլի համալսարանի գիտխորհրդի նախագահին հղած նամակը:

Վկա Ոսկերիչյանի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Պարոն Ոսկերիչյանը Մանուշյանի մարտախմբի եզակի վերապրողներից է, նույնպես հերոս է: Գիտեմ, որ վաղ մանկության տարիներին նա ցեղասպանությանն

-- էջ 203 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

Էլ է ականատես եղել, բայց կնախընտրեի, որ մեզ պատմեր, թե ինչպե՞ս է զինվորագրվել Դիմադրական շարժմանը և որոշակի ի՞նչ գործունեություն է ծավալել:

ՈՍԿԵՐԻՉՅԱՆ - Համենայն դեպս ես ցեղասպանությանը չեմ կարող չանդրադառնալ, որովհետև մեր քաղաքը՝ Դիարբեքիորը մարդկային սպանդանոց էր դարձել: Մեզ մոտ ոչնչացնում էին ոչ մի այն տեղի բնակիչներին, այլև ուրիշ տեղերից էլ էին բերում, կոտորում: Երեխաներին քշում էին Տիգրիսի ափերը ու բանտերից՝ հատուկ հայերին սպանելու համար ազատ արձակված հանցագործները յուրաքանչյուրի երկու ոտքերից բռնում էին, քաշում, կես անում: Ես տեսել եմ հոգեվարք կանանց, որոնք միայն մի բան էին խնդրում՝ շուտ վերջ տալ իրենց կյանքին: Բայց թուրքերը չէին շտապում ոչնչացնել, հայ երեխաներին լցնում էին նավակները, տանում- թափում ծովի խորքերը: Ճիշտ է, թուրքերը

դիակիզարաններ, գազախցիկներ չունեին, դեռ հնարված չէին, բայց հավատացնում եմ ձեզ, պարոն Նախագահ, տիարք և տիկնայք երգվյալներ, եթե ունենային էլ, թերևս չօգտագործեին, որովհետև նրանք սիրում էին կտտանքների ենթարկել՝ կտտանքների ենթարկել անմեղ մարդկանց սոսկ այն բանի համար, որ հայ են:

Ես ինքս, անձամբ, թուրքերի նկատմամբ ատելություն չեմ ունեցել, հիշում եմ Նույնիսկ, որ մեր քաղաքական ղեկավարները անընդհատ հակամարտությանը վերջ տալու ուղիներ են որոնել: Եվ եթե այժմ պատմում եմ այն ամենը, ինչ նրանք արել են, ապա լոկ այն բանի համար, որ հանցագործությունը մեկընդմիջտ դատապարտվի, աշխարհում ուրիշ ցեղասպանություններ չլինեն, թալեաթներ, հիտլերներ չծնվեն:

Ինչ վերաբերում է այսօրվա երիտասարդներին, մենք, իհարկե, բռնության կողմնակից չենք, բայց փորձենք պատկերացնել նրանց վիճակը: Մի՞թե այն բոլոր անարդարություններն իմանալուց հետո, որոնց զոհ է դարձել հայ ժողովուրդը, հնարավոր է անտարբեր մնալ: Հայ երիտասարդները գիտեն ճշմարտությունը, ժամանակն է, որ թուրքերն էլ իմանան, համապատասխան հետևություններ անեն: Մենք միայն մեր դատը չենք պաշտպանում: Հայերից հետո թուրքերը տասնյակ հազարավոր ասորիների, ուրիշ քրիստոնյաների կոտորեցին ու նորից անպատիժ մնացին: Ավելին, Ստամբուլի այն թաղամասում, որտեղ

-- էջ 204 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

հայեր ու հույներ են ապրում, թուրքերը կանգնեցրել են ցեղասպանության գլխավոր հանցագործի՝ Թալեաթի արձանը...

Անդրադառնամ նաև Դիմադրական շարժմանը: Հասկանալի է՝ Ֆրանսիան մեր երկրորդ հայրենիքն է, մենք միշտ Ֆրանսիայի հետ ենք եղել, երկու համաշխարհային պատերազմի ընթացքում հազարավոր հայեր կռվել են Ֆրանսիական բանակում, ընդ որում՝ շատ-շատերը զոհվել են: Չնայած դրան, եթե հարկ լինի, դարձյալ մեր արյունը կհեղենք Ֆրանսիայի համար, որովհետև համոզված ենք, որ այն արդարության հայրենիքն է, Վիկտոր Հյուգոյի, Անատոլ Ֆրանսի հայրենիքը, ովքեր պաշտպանեցին հայերի արդար դատը, մեղադրեցին թուրք ոճրագործներին:

ՆԱԽԱԳԱՀ - Տիկնայք և պարոնայք երգվյալներ, հարցեր չունե՞ք: Ոչ ո՞ք: Ատյանը շնորհակալ է ձեզնից:

Հայտարարվում է ընդմիջում:

Նիստը շարունակվում է:

Վկա Ռընե Գյուլաշյանի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Պարոն նախագահ, քիչ առաջ դուք ընթերցել տվեցիք Հայ կանանց հանձնաժողովի ուղերձը: Տիկին Գյուլաշյանը այդ կազմակերպության գործուն անդամներից է, մենք նրան հրավիրել ենք, որպեսզի հաղորդի, թե ի՞նչն է դրդել նման միություն ստեղծել, ո՞րն է գործունեության ոլորտն ու նպատակը:

ԳՅՈՒԼԱՇՅԱՆ - Երբ մենք հեռուստացույցով տեսանք թուրքական հյուպատոսարանի գրավման առաջին պատկերները, իսկույն ևեթ զգացինք, որ այդ տղաների համար որևէ քայլ պետք է նախաձեռնել, քանի որ նրանք իրենց կյանքը զոհաբերել են ազգային դատին: Ավելացնեմ, որ ես մեղադրյալի աթոռին նստած չորս հոգուն չեմ ճանաչում, բայց նրանք կարող էին լինել իմ որդիները, եղբայրները, մանավանդ որ մենք տարբեր միջոցներով պայքարում ենք միևնույն նպատակի՝ ցեղասպանության ընդունման համար: Մեր հանձնաժողովը ի նպաստ Հայ դատի արդեն մոտ հարյուր հազար ստորագրություն է հավաքել, նկատի ունեցե՛ք՝ հիմնականում ոչ հայերից, գլխավորապես խնդրին քաջատեղյակ ֆրանսիացի պատգամավորներից ու ծե -

-- էջ 205 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

րակուտականներից, ինչպես նաև կարդինալ Էջեգարայից՝ Բարենորոգչական եկեղեցու պատվելիից, Մարսելի մեծ թաբբիից, բոլորին հնարավոր չէ թվել:

Ուզում եմ խոստովանել նաև, որ հանձին այս տղաների, ինքներս մեզ ենք տեսնում, լիովին հասկանում ենք, որ նրանք այդ քայլին դիմել են հուսահատությունից, որպեսզի նորից ուշադրություն հրավիրեն լուրջան ու մոռացության մատնված Հայկական հարցի վրա:

ՆԱԽԱԳԱՀ - Ի՞նչ եք ուզում ավելացնել:

ԳՅՈՒԼԱՇՅԱՆ - Պարոն նախագահ, թույլ տվե՛ք չորս տղաներին ասել, որ ես նրանց հարազատ զավակներիս պես եմ սիրում:

ՆԱԽԱԳԱՀ - Տիկնայք և պարոնայք երդվյալներ, հարցեր ունե՞ք: Դո՞ւք՝ ընդհանուր պաշտպան: Իսկ քաղաքացիական հայցվորներ՞ը:

Հարցեր չկան:

Ատյանը շնորհակալ է ձեզնից, տիկի՛ն:

Վերապատվելի Հելվաջյանի դատախոսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Երկու պարզ հարցադրում՝ նախ կուզեի, որ վերապատվելին ատյանին պատմեր Մարսելի հայկական հուշարձանի կառուցման մասին, որը տարիներ շարունակ կրքեր հարուցեց, ապա և հաղորդեր իր ստացած տպավորությունը մեղադրյալի աթոռին նստած երիտասարդներից, որոնց բազմիցս այցելել է Ֆլետրի-Մերոժիսի բանտում:

ՀԵԼՎԱԶՅԱՆ - Դիմադրական շարժման Մարսելի հայ մասնակիցները նախ ցանկացան հուշակոթող կառուցել իրենց զոհված մարտընկերների հիշատակին: Աստիճանաբար, սակայն, այդ նպատակի համար ստեղծված հանձնաժողովի գործունեության շրջանակն ընդլայնվեց, և քաղաքի հայ համայնքն առաջարկեց, որ հուշարձանը նվիրված լինի նաև ցեղասպանության զոհերին, այսպիսի արձանագրություն կրի. «Ի հիշատակ 1915 թվականի ցեղասպանության զոհ դարձած մեկ ու կես միլիոն հայերի», որից հետո ավելացվի՝ «Ի փառս հայ մարտիկների և Դիմադրական շարժման մասնակիցների, որոնք ընկան հանուն

-- էջ 206 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Ֆրանսիայի»: Բուռն վեճեր հարուցեց այն հանգամանքը, որ մենք ցեղասպանության արձանագրությանն ուզում էինք ավելացնել՝ «որը նախաձեռնեցին ժամանակի թուրք կառավարող շրջանակները» բառերը: Ոստիկանապետը մեզ ուղղակի արգելեց, իսկ արտաքին գործոց նախարար պարոն Շումանը, ում մեր անունից դիմել էին այն ժամանակվա Մարսելի քաղաքապետ Գաստոն Դըֆերը և երիտասարդության ու մարմնակրթության նախարար պարոն Կոմիտին, ուղղակի ասել էր. «Հայերի պատճառով ես չեմ ուզում դժվարություններ ունենալ Թուրքիայի հետ»: Ճարահատ, դարձյալ պարոն Կոմիտի միջոցով դիմեցինք հանրապետության նախագահին՝ Ժորժ Պոմպիդուին, որը խնդրել էր մեզ հաղորդել հետևյալը. «Հասկանալի է՝ մենք չենք կարող կեղծել պատմությունը, ոչ ոք մեզ իրավունք չի տվել ժխտել հայերի՝ 1915 թվականի ցեղասպանությունը»: Մի խոսքով, երկու տարի անց, մեր կազմած արձանագրությամբ կատարեցինք հուշարձանի բացումը, որին ներկա էին բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ: Ավելի ուշ, պարոն Միտերանը, որն այն ժամանակ նախագահության թեկնածու էր, այցելեց, գլուխ խոնարհեց հուշարձանի առաջ: Անշուշտ ես, մենք բոլորս, մեզ շատ երջանիկ ու պատվված կզգայինք, եթե նա դրանից հետո էլ, որպես հանրապետության նախագահ, նույնն աներ: Հուշարձանի բացումով, սակայն, մեր հոգսերը չավարտվեցին: Որոշ ժամանակ անց, Մարսելի փոխքաղաքապետն ինձ քաղաքապետարան հրավիրեց ու ասաց. «Պարոն վերապատվելի, այսպես շարունակել չի կարելի, պետք է հուշարձանի շուրջը ծառեր տնկել, որովհետև ով անցնում, կարդում է «Ի

հիշատակ ցեղասպանության զոհ դարձած մեկ ու կես միլիոն հայերի, որը
Նախաձեռնեցին ժամանակի թուրք կառավարող շրջանակները» տողերը:
Փոխքաղաքապետը այնքան միամիտ գտնվեց, որ ավելացրեց. «Թուրքիայի
հյուպատոսն է դա պահանջում»: Ասացի. «Լավ, համաձայն եմ, բայց միայն մի
պայմանով: Ֆրանսիայում երեք հարյուրից չորս հարյուր հուշարձաններ կան,
որոնց վրա գրված է. «Ի հիշատակ գերմանական բարբարոսության՝ Նացիզմի
զոհերի»: Եթե դուք այդ բոլոր հուշարձանները ծառերով շրջապատեք, մենք էլ
Նույնը կանենք»: «Դա անհնար է», - բացականչեց փոխքաղաքապետը: «Ուրեմն մեզ
համար էլ է անհնար», - հանգիստ ավելացրի ես: Հուշարձանը Նույն տեղում,
Նույնությամբ

-- էջ 207 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

մտում է, կմնա ընդմիշտ:

Դրանից հետո Թուրքիայի դեսպանը վիրավորվեց, իր երկիրը վերադարձավ: Նա
հայտարարել էր. «Քանի դեռ հուշարձանը կանգուն է, ես ոտք չեմ դնի Ֆրանսիա»:
Սակայն, չանցավ տասնութ ամիս, Փարիզ ուղարկեց իր ներկայացուցչին: Ահա
այն ամենը, ինչ կարող եմ ասել առաջին հարցման մասին:

Անդրադառնալով դատապարտվող չորս երիտասարդներին, խոստովանեմ, որ ես
Նրանց կանոնավոր այցելում եմ բանտում, ուստի լավ եմ ճանաչում: Բոլորն էլ
չափազանց, չափազանց բարեկիրթ են, ինձ զարմացրեց հատկապես
վճռականությունը, քաղաքական, ռազմական մակարդակը, Նրանք գիտեն, թե
ինչի են ձգտում: Ես չեմ ուզում չորսին տարբերակել, միմյանցից տարանջատել:
Հաճախ ես բանտ եմ գնում, որ Նրանց քաջալերեմ, բայց իրենք են ինձ քաջալերում,
ապահովեցնում են. «Մի՛ մտահոգվեք, վերապատվելի՛, մենք որպես Հայ դատի
զոհեր ենք հայտնվել այստեղ, այստեղ էլ անելու ենք այն ամենը, ինչ անհրաժեշտ
է»:

Դատավարությունն սկսվելուց առաջ մի երկուշաբթի առավոտ ես Ֆլետրի-
Մերոժիսի բանտը գնացի (վկան լալիս է), և մենք՝ Գևորգը, Վազգենը, Արամը,
Հակոբը, բոլորս միասին աղոթեցինք, որ Նրանց միջոցով հայ ժողովուրդը հասնի
արդարության: Հավատացե՛ք, պարոն Նախագահ, մենք աղոթել ենք Նաև Ձեր,
ատյանի, տիկնայք և պարոնայք երդվյալների՝ այն բանի համար, որ
ճշմարտությունը հաղթի, քանի որ ես հավատում եմ իմ երկրի
ճշմարտասիրությանը:

ՆԱԽԱԳԱՀ - Իսկ սպանված թուրք հսկիչ-պահապանի հոգու հանգստության
համա՞ր...

ՀԵԼՎԱԶՅԱՆ - Պարոն Նախագահ, ես ավետարանչական եմ, մենք աղոթում ենք
բոլորի հոգու հանգստության համար, բայց հայերս չափազանց շատ ենք

բռնությունից տառապել, անցյալը մոռանալ չենք կարող: Հայերս աղոթում ենք, որպեսզի միխթարվեն լաց եղողները, բայց մենք այսօրվա լաց եղողներից շատ ավելի վաղ ենք լաց եղել:

ՆԱԽԱԳԱՀ - Տիկնայք և պարոնայք երգվյալներ, հարցեր ունե՞ք: Դո՞ւք՝ ընդհանուր պաշտպան...

Հարցեր չկան:

-- էջ 208 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Ատյանը շնորհակալ է ձեզնից:

Վկա Ռընե Ջագոյանի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Ես կուզեի, որ ատյանը հարցներ վկային, որը Ֆրանսիայում ծնված հայերի ներկայացուցիչ է, հիանալի մերվել է մեր իրականությանը, ինչպե՞ս է վերաբերվում ցեղասպանության ժխտմանը:

ՋԱԳՈՅԱՆ - Նախ ասեմ, որ ես պատկանում եմ երկրորդ՝ այն սերնդի հայերի թվին, որոնց ծնողները ծնվել են կա՛մ պատմական հայրենիքում, կա՛մ քստորի ճանապարհին: Չեմ ուզում անդրադառնալ Մարսելի հայության «ճամբարային» կյանքին, հպարտությունը մեզ թույլ չի տալիս այդ կացարաններն իրենց անուններով՝ հյուղավաններ կոչել: Հարկ եմ համարում ավելացնել նաև, որ մեզ ծայր աստիճան ջղագրգռել են, այդ նյարդայնությունն է մեզ հասցնում բռնության: Նկատի ունեցեք, բազմաթիվ հայեր, մասնավորապես ես, մեր ինքնությունը զգում ենք այս երիտասարդների միջոցով, նրանց շնորհիվ:

Այժմ մի համեմատություն: Բոլորովին վերջերս, հունվարի 6-ին Ֆրանսիայի Նախագահը, առաջին անգամ, արգելված՝ «հայեր» և «ցեղասպանություն» բառերն արտաբերեց, ընդ որում՝ արտաբերեց կողք-կողքի: Այդ արդյունքի, այսինքն երկու բառը կողք-կողքի լսելու համար, մենք համբերել ենք վաթսուներե տարի: Ձեզ համար թերևս Հայաստանը հեռու է, դրա համար ես դիմում եմ իմ ակնարկած համեմատությանը: Պատկերացրե՛ք, թե ի՞նչ տեղի կունենար, եթե «Ողջակիզում» բառը լսելու համար հրեա ժողովուրդն սպասեր մինչև 2014 թվականը: Ո՛չ թե հատուցում ստանալու, այլ այդ մի հատիկ բառին արժանանալու համար: Եթե հայերին չեք կարողանում, հրեաներին պատկերացրեք այդ վիճակում: Այնուհետև պատկերացրեք, թե ինչ տեղի կունենար, եթե հատուցում պահանջող հրեաներին ասեին. «Վեց միլիոն զո՞հ, այդպիսի բան չի եղել, մենք մեր տրամադրության տակ չունենք ձեր երկրի թղթածրարները»: Ապա ավելացնեին՝

«Հիտլերը ոճրագործ՝ չի՛ կարող պատահել: Դրա վկայությունն այն է, որ մենք իր հիշատակին Ազատության

-- էջ 209 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

բարձունքում դամբարան ենք կառուցել»:

Իսկ հիմա պատկերացրեք այն ժողովրդի վիճակը, որի Գյորինգները, Գեբելսները, Բարբիները, ճիշտ է՝ դատապարտվում են Նյուրնբերգի դատարանով, բայց հաղթանակած երկրի ներկայացուցչի նման ապրում են պատվով ու փառքով, հանգիստ մեռնում իրենց մահճակալներում: Եթե կարող եք՝ պատկերացրե՛ք այս ամենը: Բայց ես շարունակում եմ: Պատկերացրե՛ք այն ժողովրդի դրությունը, որը թակում է ՄԱԿ-ի դուռը, պարզապես խնդրում. «Ի՞նչ կլինի՝ «հրեա» և «ողջակիզում» բառերը կողքկողքի գրեք թղթի վրա», և նրան պատասխանում են՝ «Արդեն գրել էինք, բայց հետո, ներեցեք, որոշեցինք ջնջել»: Սա էլ քիչ համարելով, ավելացնում են՝ «Մենք ձեզ հետ համաձայն ենք, այդ ամենը տեղի է ունեցել, բայց հաշվի առեք ՆԱՏՕ-ի, ձեր երկրի աշխարհագրական դիրքը»...

Չորս երիտասարդները՝ մեր ժողովրդի զավակները, հյուպատոսարանը գրավել են միայն այն բանի համար, որպեսզի աշխարհին հայտնի դարձնեն այս ճշմարտությունը: Ի՞նչ եք կարծում, եթե հրեաները փորձեին տեղեկացնել իրենց վեց միլիոն զոհերի մասին՝ մեղադրյալի աթոռին կհայտնվեի՞ն:

Հրեաները Ֆրանսիայում բռնարարքների չդիմեցին, որովհետև ունեցան իրենց Նյուրնբերգը, հայրենիքը, իսկ մենք՝ արևմտահայերս, թափառական մնացինք... Այժմ ուզում եմ խոսել բռնության մասին, բայց ոչ թե Կամյուլի, ուրիշ մտածողների պես տեսություններ զարգացնել, այլ նկարագրել այն, ինչին ինքս եմ ականատես եղել, զգացել: Ապրիլի 24-ի հերթական տարեդարձին մենք Սարսելում երկար նախապատրաստվեցինք՝ պաստառներ գրեցինք, ուղերձներ խմբագրեցինք և սգահանդեսի օրը, վաղ առավոտյան, խաղաղ ցույցի հավաքվեցինք Օպերայի հրապարակում: Քիչ անց ոստիկաններ հայտնվեցին, մեզ առաջարկեցին ցրվել: Բայց մենք չէինք ուզում տուն գնալ, ուզում էինք, որ մեզ ոստիկանատուն տանեն, որպեսզի հաջորդ օրը որևէ թերթում երկու տողանոց, պատկերացնո՞ւմ եք՝ երկո՞ւ տողանոց հաղորդագրություն հրապարակվի, թե հայերը ապրիլի 24-ին իրենց նահատակների հիշատակը հարգելու համար խաղաղ ցույցի էին ելել: Սակայն, քանի որ ոստիկանությունը մեզ ցրեց, գնացինք ֆրանսիական մի գործակալություն, ներկայացրինք այն ուղերձը, որը խմբագրել էինք մի ամբողջ ամիս: Լրագրողը

-- էջ 210 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

մեզ շատ բարեհաճ ընդունեց ու երեք հարց տվեց.

- Որևէ մեկին սպանե՞լ եք:
- Ո՛չ իհարկե,- պատասխանեցինք խմբով:
- Չեք էլ վիրավորե՞լ:
- Ամենևին:
- Գոնե որևէ խանութի ցուցափեղկ կոտրե՞լ եք:
- Ի՞նչ իրավունքով...

Լրագրողը մեզ նայեց ներողամիտ հայացքով, ժպտաց.

- Ի՞նչ եք ուզում, ուրեմն, որ գրեմ ձեր մասին:

Բարեբախտաբար մենք՝ հայերս, սովորեցինք բռնության դիմել: Երբ մեր համբերությունն սպառվեց, երբ միջազգային ատյանները, որոնց թվում և ՄԱԿ-ը, մեզ համառորեն չլսեցին, ճարահատ ուժ գործադրեցինք, որը և տվեց իր արդյունքը: Ինչ խոսք, չափազանց հեշտ կլիներ ցեղասպանության հետևանքների համար միայն Թուրքիային մեղադրելը: Ակնհայտ է, որ մեղքի իրենց որոշակի բաժինն ունեն նաև տեղեկատվական միջոցները, որոնք ցեղասպանությանն անդրադառնալու համար անպայման բռնարարքների կարիք են զգում, ինչպես նաև վերապրող ծերունիները, որոնցից մի քանիսին դուք այս ամբիոնից լսելու առիթն ունեցաք: Երբ մենք Մարսելում՝ իմ հիշատակած հյուղավաններում էինք ապրում, ամեն երեկո, ընտանիքներով՝ մեծով-փոքրով, հավաքվում էինք մեկն ու մեկի հարկի տակ, ու ծայր էին առնում հիշողությունները, պատմում էին մեկի կորած եղբոր, մյուսի առևանգված քրոջ մասին... Հետո հուզմունքը խեղդում էր բոլորին, տղամարդիկ սկսում էին թուղթ խաղալ, կանայք՝ հյուսք անել: Այդպիսի պահերի միշտ լինում էր մի ծերունի, որ շշնջում էր մեր ականջին. «Երեխանե՛ր, այն, ինչ լսեցիք, չմոռանաք, որովհետև կգա օրը, նրանք մեր առջև ծունկի կջոքեն, ներողություն կխնդրեն իրենց արածի համար»: Ես իմ պապերից ստացել եմ այս ժառանգությունը, բոլոր սերնդակիցներս են ստացել: Ես մեղադրում եմ նաև մեր մայրերին, որոնք մանկական անմեղ երգերի փոխարեն մեզ սովորեցնում էին.

Հա՛յ եմ ես, հա՛յ եմ ես,

Հայաստանը ազատող

Քաջ Վարդանի թո՛ռն եմ ես...

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

Ի վերջո, ամբողջ հայ համայնքն իր զրույցներով, ելույթներով, գրքերով, այլ հրապարակումներով ամեն ինչ արեց, որ անցյալը չմոռացվի, և այն, ինչ փոխանցեց մեզ, բռնության հրահրում էր: Ուստի, պետք է դատապարտել ոչ թե նրանց, ովքեր բռնության են դիմում, այլ նրանց, ովքեր հրահրում են, այսինքն՝ մեզ բոլորիս: Խոստովանում եմ, այսօր էլ երբ ես փողոցում հայ երեխա եմ տեսնում, շշնջում եմ ականջին՝ «Այն ամենը, ինչ մեզ հետ տեղի է ունեցել, չմոռանա՛ս» ու երգում եմ հինավուրց երգը.

Հա՛յ եմ ես, հա՛յ եմ ես,

Քաջ Վար դա նի թո՛ռն եմ ես...

Ի՞նչ կարող ենք անել, այդպիսին ենք մենք՝ հայերս: Անձամբ ես ինձ թույլ եմ տալիս այդ ամենը, որովհետև հավատում եմ, որ երբևէ կգա մեր 2014 թվականը, և այս աշխարհում մեր արդարությունն էլ կհաղթանա կի...

Վկա Արթին Վարուժանի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ԴԵՎԵՉՅԱՆ - Ես նրան ուզում եմ նույն հարցն ուղղել՝ երիտասարդ սերնդի հայր ինչպե՞ս է համակերպվում ցեղասպանության ուրացման հետ:

ՎԱՐՈՒԺԱՆ – Չափազանց ծանր, գիշերները չեմ կարողանում քնել, անընդհատ աչքիս առջևից անցնում են նախճիհների, ցեղասպանության տեսարանները՝ այն ամենը, ինչ մեր պապիկներն ու տատիկները, ականա, քանի որ անցյալի նկատմամբ խիստ զգայուն էին, մեզ պատմել են: Հաճախ մենք ստիպում էինք, որ նրանք նկարագրեն, թե ինչեր են կրել, ինչպես են Ֆրանսիա հասել: Լսելն անգամ ահավոր էր:

Ահավոր է, որ այդ ողբերգության մասին ոչ մի տեղ, անգամ պատմության դասագրքերում չի հիշատակվում: Երբ ես 5-րդ, 6-րդ դասարանի աշակերտ էի, ստիպված էի իմ ֆրանսիացի դասընկերներին բացատրել, թե ո՞վ է հայը, ի՞նչ է ցեղասպանությունը, ինչո՞ւ մենք դպրոցում ֆրանսիական, տանը՝ հայկական անուն ենք կրում....

ՆԱԽԱԳԱՀ - Տիկնայք և պարոնայք երդվյալներ, հարցեր ունե՞ք: Ո՞չ: պաշտպան...

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Հարցեր չկան:

Ատյանը շնորհակալ է ձեզնից:

Վկա Գևորգ Խայիկյանի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ՓԵՇՏԻՄԱԼՁՅԱՆ - Դոկտոր Խայիկյանը Հայկական հետազոտությունների կենտրոնի նախագահն է, հետևաբար, ես կուզեի, որ նա ատյանին պատմեր, թե ինչո՞ւ է զինվորագրվել Հայ դատին, ի՞նչ գործունեություն է ծավալում այդ կենտրոնը և խաղաղ ճանապարհով ինչի՞ է հասել:

ԽԱՅԻԿՅԱՆ - Իմ ազգային զարթոնքին նախ և առաջ նպաստել է ֆրանսիացի մեծ հնագետ Ժակ դը Մորգանը, որը մեն-մենակ հայտնագործել է Ելամի քաղաքակրթությունը, ինչպես նաև հայտնի Համմուրաբիի նշանագիրը: Պարոն նախագահ, թույլ կտա՞ք ընթերցել Ժակ դը Մորգանի վկայությունը:

ՆԱԽԱԳԱՀ - Եթե երկար չէ:

ԽԱՅԻԿՅԱՆ - Ոչ այնքան (ընթերցում է). «Հայաստանի բոլոր նահանգներում ջարդերը սոսկալի էին, բայց այն արհավիրքները, որ տեղի ունեցան Մուշում, իրենց բարբարոսությամբ գերազանցեցին մյուս քաղաքներում գործադրված վայրագությունները: - Այդ օրը,- պատմում է ահավոր ողբերգության ականատեսներից մեկը,- 1915 թվականի հուլիսի 2-ը դժբախտ հայերի համար դարձավ վշտի, հուսահատության, սարսափի օր: Վաղ առավոտյան քրդերը, ինչպես նաև զինվորները աղմուկ-աղաղակով անցան քաղաքով ու հայկական թաղերը ներխուժեցին: Նրանք սկսեցին կոտորել բոլոր նրանց, ովքեր նախորդ օրը ճամփա ընկած քարավանից հետ էին մնացել: Ի միջի այլոց, տեղահանված հազար երեք հարյուր հոգին էլ խողխողվել էր: Քաղաքում մնացած հայերի մեծ մասը, փրկության ոչ մի հույս չունենալով, հավաքվել էր կենտրոնի տներում, որոնք ավելի ապահով էին թվում: Այնտեղ, ամբողջ ընտանիքներով՝ քառասուն, հիսուն, մինչև հարյուր հոգի կծկվել էին նեղ սենյակներում, որոնց դռները, լուսամուտները, բոլոր ելքերը ամուր փակված էին:

Շուտով ձայները մոտեցան, մուլագար ավազակախմբերը լցվեցին փողոցները, սկսեցին կրակել, կացիններով կոտրեցին

-- էջ 213 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

տների դռները, որոնք մեկը մյուսի ետևից խորտակվեցին: Իսկույն և եթ աներևակայելի ջարդ սկսվեց, սարսափի և տագնապի ճիչերը միախառնվեցին կացինների շաչոցներին և ելուզակների աղաղակներին: Փողոցները ողողվեցին արյամբ, տների առջև դիակներ դիզվեցին, թուրքերը անընդհատ կրկնում էին՝ «Չա՛րկ, զա՛րկ»: Նրանք ոռնում էին, մահվան ահ տարածում, վայրի գազանների նման տնից տուն անցնում, թափահարում արյունոտ յաթաղանները:

Դժբախտ հայերը, սարսափահար, իրար էին սեղմվում, ճզմվում, շնչահեղձ լինում, լսվում էին կանանց տնքոցներն ու հուսահատության ճիչերը, մանուկներին ոտնակոխ էին անում հենց նրանք, ովքեր փորձում էին փրկել: Մի երիտասարդ մայր դահճին մեկնեց գրկի երեխային ու աղաչեց. «Վերցրո՛ւ, քեզ եմ տալիս, միայն մի՛ սպանիր»: Չինվորը խլեց փոքրիկին, գետին շպրտեց ու յաթաղանի մի հարվածով թռցրեց գլուխը, հետո շրջվելով դժբախտ մորը, յաթաղանի երկրորդ հարվածով գանգը ճեղքեց:

Մի քանի րոպե անց սահմուկեցուցիչ լռությունը հաջորդեց բողոքներին, ճիչերին, տնքոցներին: Երևում էին միայն պատռված որովայններով դիակների դեզեր, անձև ու արյունոտ մսակույտեր:

Էլի ժամանակ անցավ, ու բոլոր կողմերից երկինք բարձրացան ծխի գալարները: Այրվում էին հայերով լցված տները, մարդիկ ողջակիզվում էին: Մեկը փորձեց փախչել, վազեց գետի կողմը, բայց զինվորները նրան բռնեցին, վրան քարյուղ լցրին ու մոլեգին բերկրանքով նայեցին, թե ինչպես է այրվում:

Քիչ հեռվում բարձր, հաճույքով ծիծաղում էին ցից հանված վեց տարեկան մի տղեկի վրա, որը գալարվում էր հոգեվարքի ցավերով:

Ահա՛, այստեղ, թուրքերը պատռում են հղի կանանց որովայնները, որպեսզի հանեն չճնված երեխաներին, այնտեղ զինվորները կռվում են մի դեռատի աղջկա համար, որին ի վերջո տիրանում է ամենաուժեղը և մի կողմ է տանում, որպեսզի բռնաբարի ու խեղդի: Երբ մուլթը վրա է հասնում, ողջ մնացողները փորձում են փախչել դեպի գետը, հույս ունենալով, որ լողալով մյուս ափը կանցնեն, հետո լեռ կբարձրանան, կփրկվեն: Բայց չորս կողմից թուրքերը կրակում են, և նրանք, ովքեր նենտ -

-- էջ 214 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

վում են գետը, մեծամասամբ խեղդվում են:

Քաղաքը բոցերի մեջ էր, բայց հրանոթները շարունակում էին ոռնալ, արկեր տեղալ հայկական թաղերի վրա:

Աշխարհում այնպիսի հարուստ, բառաշատ լեզու չկա, որը կարողանա նկարագրել նման արհավիրքները, այն անմեղ նահատակների հոգեկան ու մարմնական տառապանքները, որոնց ենթարկվեցին նախքան երկնային հավերժական քնին արժանանալը՝ այն աստիճանի տարտղնվել էին, հուսահատվել նախճիրից:

Երանք, ովքեր իրենց հարազատների, սիրելի էակների մահվան վկան դարձան ու ողջ մնացին, քվեցին հեռավոր քաղաքայրերը և այնտեղ մահից ավելի վատթար կտտանքների, նսեմացման ենթարկվեցին»:

Ահա՛, պարոն նախագահ, երբ տասնվեց ու կես տարեկանում կարդացի այս տողերը, նույնպես ցանկություն ունեցա զենք վերցնել ու մի օր թերևս հայտնվել մեղադրյալի աթոռին:

Իմ մայրական պապին ոտքից կախել են Քերվանի եկեղեցում, թրով կտոր-կտոր արել մարմինը: Հայրական մեծ հորեղբորը, որը խնամակալել է հորս, սվիններով անընդհատ խոցոտել ու ամեն անգամ նույն հարցն են տվել. «Պատրա՞ստ ես քո նախնիների հավատից հրաժարվել»:

Ես ձեզ հավատացնում եմ՝ ոճրագործների որդիները, թոռները հայրերից ու պապերից վատն են: Չե՞ք հավատում: Մենք որոշ առումով փորձեցինք դարձի բերել Թուրքիային, հեռագիր հղեցինք, խնդրելով վերացնել Թալեաթի արձանը, իսկ աճյունը ավելի համեստ, աննկատ տեղում ամփոփել: Ապարդյուն:

ՆԱԽԱԳԱՀ - Հարցեր կա՞ն:

Հարցեր չկան:

Ատյանը շնորհակալ է ձեզնից:

Վկա Քյուչուքգյուլգեյանի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՊԱՇՏՊԱՆ ՓԵՇՏԻՄԱԼՋՅԱՆ - Պարոն Քյուչուքգյուլգեյանը մեկն է 1981-ի սեպտեմբերին Թուրքիայում ձերբակալված այն քաղբանտարկյալներից, որի ազատությունը, այլոց թվում,

-- էջ 215 --

ՕՐ ՉՈՐՐՈՐԴ

պահանջում էին մեղադրվող տղաները: Ես կուզեի, որ մեզ բացատրեր, թե ինչո՞ւ են նրան կալանավորել Թուրքիայում:

ՔՅՈՒՉՈՒՔԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այն հանգամանքը, որ մեղադրյալներից մեկն իմ ազգանունն է կրում, կասկած հարուցեց, որ մենք ազգականներ ենք: Թույլ տվեք մի քանի բառով ներկայացնել իմ ընտանիքի պատմությունը, որպեսզի պարզ դառնա, որ բարեկամական կապ չունենք:

Մենք ծագումով Սեբաստիայի Տիվրիկ քաղաքից ենք, 1912-ին հայրս մեկնել է Միացյալ Նահանգներ, որպեսզի աշխատանք գտնի ու ընտանիքին էլ տեղափոխի: Սակայն, սկսվում է Առաջին աշխարհամարտը, նա ո՛չ կարողանում է ընտանիքին կանչել, ոչ էլ վերադառնալ, միանալ: Չինադադարը հռչակվելուն պես միայն՝ 1919-ին հայրս վերադառնում է Ստամբուլ ու իմանում, որ հայերի մուտքը Տիվրիկ խստիվ արգելված է: Ամեն դեպքում նա գտնում է տիվրիկցիների, իմանում, որ ինչպես հայերի մեծ մասը, իր ընտանիքը անհետ կորած է՝ տասնհինգ տարեկան դստերը առևանգել է Մեհմեդ անունով մի մուլլա, երեք տարեկան որդուն խլել են կնոջ գրկից, նետել ջրհորը: Կինը փորձել է դիմադրել ու տեղնուտեղը դաշունահարվել է:

Պոլսում հայրս հանդիպում է մի որբևայրու, ում ամուսինը զոհվել էր Դարդանելում: Նրանք ամուսնանում, երեք զավակ են ունենում, որոնցից մեկը ես եմ: Մենք բոլորս կրում ենք հորս նահատակված երեխաների անունները: Ինքս հինգ տարեկան եմ եղել, որ հայրս մահացել է, այդ ամենն իմացել եմ ընտանեկան Աստվածաշնչի վերջում կատարած նրա գրառումներից: Հայրս նշել է նաև, որ իր գերդաստանից ընդհանուր առմամբ քսանյոթը հոգի է զոհվել:

Երբ ես քսան տարեկան դարձա, բանակ զորակոչեցին ու երկու տարվա ընթացքում առիթ ունեցա Թուրքիայի բազմաթիվ, այդ թվում նաև նախկին հայկական քաղաքներում՝ Սեբաստիայում, Էրզրումում լինելու: Որոշ քաղաքներում եկեղեցիները պահպանվել, բայց վերածվել էին պահեստների, միայն Սեբաստիայում որոշ հայեր դեռևս խոսում էին մայրենի լեզվով, մեծ մասին մահմեդականացրել էին:

ՊԱՇՏՊԱՆ ՓԵՇՏԻՄԱԼՉՅԱՆ - Կարո՞ղ եք ավելի որոշակի պատմել, թե ինչո՞ւ ձեզ ձերբակալեցին, բանտարգելության դատապարտեցին:

-- էջ 216 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ՔՅՈՒՉՈՒՔԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Ի հարկե: 1945-ին, ավետարանչական այն համայնքը, որի անդամս էի ես, ինձ հոգաբարձու ընտրեց: Քանի որ եկեղեցու կողքին դպրոցական շենք կար, մենք ապաստան տվեցինք որբ և անապահով երեխաների. նրանց սնում, հագցնում, միևնույն ժամանակ մայրենի լեզվով գրել-կարդալ էինք սովորեցնում: Սակայն, մոտավորապես 1966 թվականին, Թուրքիայի Պետական

ունեցվածքի վարչությունը սկսեց խանգարել մեզ, դժվարություններ հարուցել: Մեր եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու համար վեց դատավարություններ տեղի ունեցան: Բանը հասավ այնտեղ, որ մեզ թույլ չտվեցին նույնիսկ հոգևոր խորհուրդ վերընտրել, պատճառաբանելով, որ թեկնածուները նույն թաղից չեն:

1981 թվականի փետրվարի 25-ին, ճաշից հետո՝ ժամը 4-ին, ես մենակ նստած էի եկեղեցու քարտուղարությունում, մոտ քսան աշակերտ տնային առաջադրանքներն էին կատարում, գաղտնի ծառայության հինգ գործակալներ ներս մտան: Նրանք խուզարկեցին ամբողջ տարածքը, ձայներիզներ վերցրին ու ինձ էլ իրենց հետ Անվտանգության վարչություն տարան: Այնտեղ իմ աչքերը կապեցին, նկուղ՝ մի բանտախուց նետեցին, որը մի հոգու համար էր նախատեսված, բայց վեց կալանավորներ էին խցկել: Հաջորդ օրը, դարձյալ աչքերս փակ, հարցաքննության առաջնորդեցին: Նախ հարցրին, թե ինչո՞ւ իմ ծոցատետրում այդքան արտասահմանյան հասցեներ կան, ի՞նչ գիտեմ դաշնակցական, հնչակյան կուսակցությունների, ազգային տարբեր կազմակերպությունների մասին: Քանի որ որոշակի ոչինչ չէի ասում, իբր խոսեցնել տալու համար, որոշեցին ծեծել, գետին պառկեցրին, վրաս աթոռ դրին, ինչ-որ մեկը նստեց ուսերիս, երկրորդը բարձրացրեց ոտքերս, երրորդն սկսեց հարվածներ տեղալ: Այդ ժամանակ ես արդեն վաթսուն տարեկան էի, հարցրի, թե ո՞րն է ծերունուս մեղքը, պատասխանեցին, որ հայ և թուրք երեխաներին իրարից բաժանելը, թուրք երեխաներին հայացնելն է:

Առաջին օրը ինձ երեք անգամ ծեծեցին, խփում էին հիմնականում ոտքերով՝ դեմքիս, մարմնիս, ո՛ւր պատահեր: Կտտանքները դադարեցին միայն այն ժամանակ, երբ գործակալներից մեկն ասաց. «Վե՛րջ տվեք, մեկ է, նա ի վիճակի չէ խոսել»: Նախնական կալանատանը ես քսաներկու օր մնացի, ինձ վեց անգամ

-- էջ 217 --

հարցաքննեցին: Դպրոցից բռնագրավված ձայներիզը լսել էին ու ցանկանում էին իմանալ, թե ինչո՞ւ ենք երեխաներին հայերեն երգեր սովորեցնում՝ հավաստելու համար, որ դեռևս կա՞նք, գոյություն ունե՞նք: Այնուհետև, ինձ խոստացան ազատ արձակել, եթե իմ զբաղեցրած պաշտոնից հրաժարվեի, եկեղեցու սեփականության վկայականները հանձնեի Պետական ունեցվածքի վարչությանը: Շատ էի ուզում տուն վերադառնալ՝ խոստացա: Սակայն, քիչ ժամանակ անց, նորից կանչեցին, իբր ձևական թղթեր ստորագրելու համար, որոնցից մեկը, սակայն, երբ կարդացի, հրեցի մի կողմ: Այնտեղ գրված էր, որ հարցաքննության ժամանակ ես ասել եմ, թե «Անատոլիայի հողերը հայերին են պատկանում, մենք ենք իրավական տերերն ու ժառանգորդները»: Քանի որ հրաժարվեցի նման արձանագրություն ստորագրել, նորից բանտ ընկա: Յոթ ու կես ամիս պահելուց հետո որոշեցին դատել: Պաշտոնական մեղադրանքն այն էր, որ ես Անատոլիայի խորքերից թուրք երեխաներին հավաքում, Ստամբուլ եմ բերում, հայացնում: Մինչդեռ ճիշտ հակառակը՝ մեր սաները գավառներում թուրքացած հայ մանուկներ էին:

Ես հասկանում եմ, իհարկե, որ իմ պատմությունը շատ է երկարում, բայց ի՞նչ կարող եմ անել՝ թուրքական արդարադատության գործելակերպն է այդպիսին:

Իմ դատավարությունից մի քանի օր առաջ բանտի վերևի հարկում կալանավորների միջև վեճ ծագեց: Մոտ տասը հոգի իրար ծեծում, կոտրում էին ապակիները: Ո՞վ գիտե, այդ ամենը թերևս կազմակերպված էր: Վերջապես, մոտ հարյուր հիսուն զինվորականներ տեղ հասան, սպառնացին կրակ բացել, նրանց հանգստացրին, իջեցրին նկուղ: Երբ մեր հարկով էին անցնում, մեզ էլ ստիպեցին ոտքի կանգնել, ձեռքներս պարզել վեր ու անշարժանալ: Որոշ ժամանակ անց իմ այդ դիրքով լուսանկարը հայտնվեց թուրքական լրագրում: Մակագրությունն արտառոց էր՝ «Ահա՛ նա՛ հայը, թուրքի թշնամին»:

Ամեն դեպքում, ես հույս ունեի, որ դատարանը շուտով ինձ ազատ կարձակի, որովհետև ամերիկյան ու գերմանական ավետարանչական ընկերությունները, որոնց անդամներն ինձ լավ էին ճանաչում, միջնորդել էին՝ երաշխավորելով իմ անմեղությունը: Հենց դա էլ, ըստ երևույթին, կատաղեցրեց դահիճներիս: Նրանք նորից սկսեցին ինձ անխնա ծեծել, նոյեմբեր ամսին

-- էջ 218 --

մի ցուրտ մենախուց նետեցին, որը գարշահոտություն էր բուրում: Եղավ օր, որ հինգ անգամ զանազան կտտանքների ենթարկեցին: Շողանկարները, որ այժմ ներկայացնում եմ ձեր ուշադրությանը, կատարվել են իմ ազատվելուց տասնմեկ օր անց: Կարող եք պատկերացնել, թե ինչ վիճակում եմ դուրս եկել բանտից:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ – Այդ նկարները պետք է հանձնել ատյանին, ես տեսել եմ, ահավոր են...

ՆԱԽԱԳԱՀ - Տիկնայք և պարոնայք երդվյալներ, հարցեր ունե՞ք: Դո՞ւք՝ ընդհանուր պաշտպան: Իսկ քաղաքացիական հայցվորներ՞ը:

Ատյանը շնորհակալ է ձեզնից:

«Վան» գործողության արձակագեն

Հակոբ Ջուլֆայանը

Փարիզահայերի գիշերային ջահերթը՝ ի պաշտպանություն
«Վան» գործողության մարտիկների

-- էջ 219 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Վկա Ռաֆայել Անտոնյանի դատալսումը: Երդման արարողակարգ:

ՆԱԽԱԳԱՀ - Դուք հիշատակված չեք որպես վկա: Ես ձեզ լսում եմ՝ ելնելով իմ
իրավագործությունից, սոսկ տեղեկատվական առումով:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ – Պարոն նախագահ, հայր Անտոնյանը հայկական վարժարանի
տնօրեն է, ես կուզեի իմանալ, թե այսօր հայ աշակերտների համար ի՞նչ է
նշանակում ցեղասպանություն, ի՞նչ է նշանակում Հայաստան:

ՀԱՅՐ ԱՆՏՈՆՅԱՆ - Դրան շատ հեշտ է պատասխանելը: Մեր սաները չափազանց
զգայուն են ցեղասպանության ողբերգության նկատմամբ, կարծում են, որ
ինքնահաստատման համար Թուրքիայի՝ ցեղասպանության ընդունումը
չափազանց կարևոր է, քանի որ բոլորն էլ իրենց ազգային արժանապատվությունը
վիրավորված են համարում: Նորահաս սերունդն ուզում է լսել Արդարության
ձայնը:

Այսօր ես այս սրահում ներկա եմ սոսկ որպես տեղեկատու, իմ չորս
հայրենակիցները որպես մեղադրյալներ: Դա նշանակություն չունի՝ մեր իդեալը
նույնն է, նրանք մեղադրյալներ են դարձել, որովհետև ուժ են գործադրել: Մենք Մեծ
Եղեռնից հետո նույն նպատակի համար քաղաքակիրթ ձևերով ենք պայքարել,
ամեն ինչ արել ենք, որ ոճրագործությունը հայտնի դառնա: Այդպես ենք
արտահայտել հավատարմությունը մեր ժողովրդի նկատմամբ:

Ես, որպես քահանա, հոգևորականության ներկայացուցիչ, լսելով իմ սաներին,
հասկանում եմ նրանց հոգեկան խռովքը, ուզում եմ հանդարտեցնել, բայց բառեր
չեմ գտնում: Իրոք, ինչպե՞ս բացատրեմ, թե ինչո՞ւ պատմական ճշմարտությունը,
որը ընդունում է աշխարհը, հաստատում են պատմաբանները, Թուրքիան
ժխտում է:

Իմ սաները մի ուրիշ հարց էլ են միշտ տալիս՝ ե՞րբ ենք մենք վերստանալու մեր
հողերը, դեռ երկա՞ր ենք թափառելու տարբեր երկրներում, որտեղ, ինչ խոսք, մեզ
լավ են ընդունում, վերաբերվում, բայց ուզում ենք ապրել մեր բնօրրանում...

Ինձ համար մեղադրյալի աթոռին նստած այս չորս երիտասարդները հերոսներ են,
ես հիանում եմ նրանցով, որովհետև իրենց կյանքը հանուն ազգային իդեալի
զոհելու կամք են դրսևորել, համազգային նպատակներն իրագործելու այլ ուղի

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

չեն գտել: Այս դեպքում բռնության ծայնը արդարության ծայնն է, մեզ լսելի դարձնելու, աշխարհի ուշադրությունը մեր վրա հրավիրելու առայժմ միակ միջոցը: Չմոռանանք, որ մեր ժողովուրդը ոչ մի ժողովրդի չարիք չի գործել, նախահարձակ չի եղել: Ուրեմն՝ սպառվել է նրա համբերությունը:

Եթե, ես դարձյալ իմ սաների մտայնությունն եմ արտահայտում, աշխարհն ուզում է, որ բռնարարքները դադարեն, պետք է թուրքական կառավարությանը ստիպի ընդունել պատմական ճշմարտությունը՝ այն ոճրագործությունները, որ ի կատար են ածվել 1915-ին:

Ահա նոր սերնդի վերաբերմունքը, տրամաբանությունը, որը շատ պարզ է՝ եթե թուրքերը ընդունեն ցեղասպանությունը, վերադարձնեն մեր հողերը, մեր ժողովուրդների միջև խաղաղություն կհաստատվի, համաաշխարհային համագոյակցությունը կամրապնդվի:

Իսկ մինչ այդ նոր սերունդը հավատարիմ կմնա իր ժողովրդին, մեկ ու կես միլիոն նահատակների պատգամին, որոնք եղունգներով են փորագրել ծառերին. «Արդարություն գոռացեք այնքան, մինչև աշխարհը արդարություն շնորհի մեր ժողովրդին»:

ՆԱԽԱԳԱՀ - Տիկնայք և պարոնայք երդվյալներ, հարցեր ունե՞ք: Դո՞ւք՝ ընդհանուր պաշտպան: Իսկ քաղաքացիական հայցվորներ՞ը:

Ատյանը շնորհակալ է ձեզնից:

Բոլոր վկաներին լսեցի՞նք:

ՊԱՇՏՊԱՆ ԼԸՔԼԵՐ - Այո՛, պարոն նախագահ:

ՆԱԽԱԳԱՀ - Ուրեմն, երկուշաբթի կանցնենք պաշտպանականների դատալսմանը:

Դատաքննությունն ավարտվում է:

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Երկուշաբթի, 30-ը հունվարի, 1984 թ.

-- էջ 222 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

-- էջ 223 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՎԵՑԵՐՈՐԴ ՆԻՍՏ

Դատաքննությունը վերսկսվում է:

ՆԱԽԱԳԱՀ - Անցնում ենք պաշտպանականների դատալսմանը: Ձայնը տրվում է Ֆրանսո ա Սարդային:

ՊԱՇՏՊԱՆ ՍԱՐԴԱ - Պարոն նախագահ, պարոնայք դատավորներ, թույլ տվեք նախ խոսքս ուղղել տիկնայք և պարոնայք երգվյալներին՝ կրկին հիշեցնելու համար տեղը, որ նրանք զբաղեցնում են ժամանակակից ատյանում: Այն կանխորոշել է քաղաքակրթության զարգացումը: Նախնադարյան հասարակարգում զոհերը, ավելի ճիշտ՝ նրանց ընտանիքները, տոհմերը վրեժխնդրությամբ է, որ հասնում էին արդարության՝ անհատական արդարության: Ժամանակի ընթացքում՝ ֆեոդալները, թագավորները, կայսրերը, ավելի ուշ՝ անկախության հասած ժողովուրդները իրենց ձեռքն առան արդարության իշխանությունը: Ահա՛ թե ինչու դուք ֆրանսիական ժողովրդի անունից եք կայացնելու ձեր վճիռը, ինչպես ընդհանուր պաշտպանը մեղադրականը սահմանելու է հասարակության անունից:

Որպես քաղաքացիական հայցվոր, փաստաբանապետ Բողըլոյի հետ ես պաշտպանելու եմ հսկիչ-պահապան Էոզենի ընտանիքի և հյուպատոս Ինալի շահերը, իսկ պաշտպան Վալերի Մենթրիոն՝ պարոն Բալթասոլուկինը:

Դատաքննության ժամանակ մի պահ նման հարց ծագեց՝ ինչո՞ւ ֆրանսիական արդարադատությունը, Ֆրանսիան խառնվում են Թուրքիայի

հյուպատոսարանում պատահած դեպքին՝ դեպք, որն առնչվում է հայերին ու թուրքերին:

Այս առումով, հարգելի գործընկերներ՝, ելնելով ձեր ոչ թե իրավաբանական, այլ բարոյական իրավագործությունից, ուզում

-- էջ 224 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

Եմ միայն մի ճշգրտում անել. Ֆրանսիան պարտականություն ունի ապահովելու անվտանգությունը բոլոր նրանց, ում իր տարածքում ընդունում է՝ անկախ այն բանից, թե ով որ երկիրն ու ինչ վարչակարգ է ներկայացնում: Իենա պողոտայում գտնվող Իրանի դեսպանատունը այժմ՝ իմամ Խոմեյնիի իշխանության օրոք վերահսկվում է այնպես, ինչպես շահի տիրապետության տարիներին: Ու չեմ կարծում, որ եթե մարտախմբերը փոխադարձաբար Իսրայելի ու Լիբիայի դեսպանատների վրա գրոհներ ձեռնարկեին, Ֆրանսիան չմիջամտեր: Ճիշտ նույն ձևով էլ ինձ չի թվում, թե մեղադրյալները կուզեին իրենց գործողության համար դատվել թուրքական ատյանում: Իհարկե, կատարվածի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար հարկ կլիներ, որ այստեղ վկայություն տային հյուպատոսարանի տվյալ օրվա բոլոր այցելուները՝ թուրքեր, թուրքահայեր, ֆրանսահայեր, պարզապես ֆրանսիացիներ:

Նրանք բոլորն էլ ժամեր շարունակ պատանդ են եղել, տանջվել, տառապել են, ի վերջո կյանքներն են վտանգել: Այստեղ թերևս պետք է տալ այն հարցը, թե մինչև ո՞ր պահն է բռնարարքը ընդունելի համարվում և ե՞րբ է հանցանք դառնում: Մենք գտնում ենք, որ կատարված բռնարարքում կա հանցանքի պահ, ուստի մեղադրական դատավճիռ ենք պահանջում: Այո՛, մարտախումբը սպանելու չէր ելել, դա անվիճելի է: Չորս տղաները հայտարարում են, որ իրենք ուզեցել են միայն պատանդներ վերցնել, բայց դա արդեն հանցագործություն է: Իրենք քիչ առաջ խոստովանեցին, որ պատրաստ էին նույնիսկ սպանվել: Ես կավելացնեի՝ նաև սպանել: Այդպես էլ եղել է՝ մեկը մահացել, մի քանիսը վիրավորվել են, այսինքն՝ պատանդ վերցնելու հանցագործությանը նոր հանցանքներ են ավելացել:

Մեղադրյալները ներկայացան որպես զորակոչված զինվորներ, բայց գրեթե ոչինչ չասացին զորակոչողների մասին: Այդքան միամիտ լինենք, հավատա՞նք, որ Ձմեռ պապին է մարդկանց հավաքում, զինում և ճիշտ ժամանակին բռնարարքների ուղարկում: Այսօրվա չորս մեղադրյալներն իրենց ետևում ունեն կազմավորման, նախապատրաստության փուլեր, ինչպես նաև նախաձեռնող, ղեկավարող անձինք:

Ես չեմ ուզում անդրադառնալ բռնարարքի մանրամասն -

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

րին, շնորհիվ պարոն նախագահի հետևողականությանը, ամեն ինչ պարզ դարձավ: Ուզում եմ որոշակիացնել միայն, որ չորս երիտասարդները սոսկ պատանդ վերցնելու, իրենց պահանջները լսելի դարձնելու համար չէ, որ գրավել էին հյուպատոսարանը, այլապես այդպիսի մեծ քանակությամբ հրազեն, ատրճանակներ, պայթուցիկներ չէին բերի, որոնցով կարող էին, ինչպես խոստացել էին իրենց վերջնագրում, պայթեցնել ամբողջ շենքը:

Ուզում եմ նկատել տալ նաև, որ հայ համայնքի ներկայացուցիչները, որոնց մենք լսեցինք այստեղ, անկեղծորեն նկարագրելով հանդերձ իրենց հոգեկան տառապանքները, միաժամանակ խոստովանեցին, որ դեմ են ամեն տեսակ բռնության: Ահա՛ այս պարագայում է բացահայտվում մարդկային նկարագրերի տարբերությունը: Ֆրանսիայում հայերն ապրում են երկար ժամանակ, նրանք միշտ դեմ են եղել բռնարարքներին և իրենց դիրքորոշումը չեն թաքցրել: Մինչդեռ մարտախմբի բոլոր անդամները արտասահմանից են Փարիզ եկել: Եվ որքան էլ պարոն նախագահը արտահայտությունների մեջ զգույշ ու վերապահ լինի, չենք կարող ուղղակի չասել, որ նրանց արածը ճշգրիտ բառով ահաբեկչություն է կոչվում:

Ահաբեկչության դրսևորումներից մեկն էլ համարվում է, ինչպես հայտնի է, պատանդներ վերցնելն ու զանազան պահանջներ ներկայացնելը: Երբ մենք ընթերցում ենք թուրքական հյուպատոսարանը ներխուժած մարտախմբի հայտարարագիրը, զարմանքով ենք նկատում, որ ոչ մի կետը չի առնչվում 1915 թվականին: Մեղադրյալները պահանջել են անմիջապես ազատ արձակել երկու բանտարկյալի, որոնցից մեկին դուք արդեն այստեղ տեսաք, Թուրքիայում արգելափակված մյուս հայերին, բռնագրավված տարածքներում, մեծ քաղաքներում բնակվողներին հնարավորություն ընձեռել առանց սահմանափակումների պահպանել ազգային ավանդույթները, մշակութային և կրոնական առանձնահատկությունները, իսկ միջազգային կազմակերպությունների համար պայմաններ ստեղծել, որպեսզի մշտապես վերահսկեն հայկական պատմական հուշարձանների վիճակը: Մարտախումբը պահանջել է նաև բանտերից ազատել քաղաքական դրդապատճառներով Թուրքիայում ձերբակալված հինգ թուրք և հինգ քուրդ հեղափոխական մարտիկների:

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Ահա՛ սրանք են չորս երիտասարդների պահանջները, որոնք հյուպատոսարանում անընդհատ կրկնել են. «Տեղներիցդ չչարժվե՛ք: Մենք ֆրանսիական իշխանություններին նախազգուշացրել ենք, որ զինված հարձակման դեպքում անմիջապես, առանց վարանման կայայթեցնենք շենքն ու ներսում գտնվող ոչ մի մարդ ողջ չի մնա»:

Այսպիսին է ամեն ահաբեկչություն՝ ուղեկցվում է վախով, ազատության սահմանափակումով: Դուք լսեցիք պատանդներին՝ այն մորը, որը պիտի գնար դպրոց՝ երեխային վերցնելու, հիվանդին, որը դեղ չուներ մոտը...

Ես կփորձեմ ավելի հակիրճ լինել, որովհետև կարծում եմ, որ Գյուլզեյանի՝ Էոզենին սպանելը և Ինալի սպանության փորձը ոչ մի կասկած չեն հարուցում: Աշխատենք պատկերացնել Էոզենին դեմ առ դեմ կանգնած Գյուլզեյանին: Նրա մի ձեռքին ատրճանակ, մյուսին նռնակ կա, որի ձգանակը քաշվա՞ծ է թե ոչ՝ ի վերջո կարևոր չէ: Հասկանալի է հսկիչ-պահապանի անմիջական վերաբերմունքը, որը, ինչպես վկանե ընկարագրեցին, փորձել է «զինաթափել» գրոհայինին և իսկույն ևեթ ատրճանակի կրակոց է ստացել քունքին: Նրա հոգեվարքը ոմանց վկայությամբ մեկ, ուրիշների կարծիքով վեց, համենայն դեպս՝ մի քանի ժամ տևել է: Հարց առաջացավ նաև, թե արդյո՞ք թուրք հսկիչ-պահապանը զինված է եղել: Այն վկան, որն իբր Էոզենի ձեռքին զենք է տեսել, միաժամանակ պնդում է, որ նա կրակել է, մինչդեռ Գյուլզեյանն ինքն է հավաստում, որ հսկիչ-պահապանն իր վրա չի կրակել: Ուրեմն նշված վկան Էոզենին շփոթում է Բլունդեի հետ:

Իմ գործընկեր Լըքլերը այն օրը մեծ կարևորություն էր տալիս վկա պարոն Ֆլեորիին, որն իրոք անկողմնակալ անձնավորություն է: Եվ նա միանշանակ հայտարարում է. «Ես շատ լավ եմ հիշում այդ պահը՝ հսկիչ-պահապան Էոզենը զինված չէր»: Վտանգ, տագնապ, այսպիսով, նռնակն է ստեղծել: Ինչո՞ւ է Գյուլզեյանը նռնակի ձգանակը քաշել՝ բարեհոգությունի՞ց դրդված: Նա այն աստիճանի զինված ու լարված է եղել, որ հենց դիմադարձեին, պատրաստ էր կրակել ու սպանել:

Ինչ վերաբերում է պարոն Ինալին, ես չեմ կարծում, որ Ջուլֆայանի ինքնապաշտպանության վարկածը կարելի է ընդունել -

-- էջ 227 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

լի համարել: Նա իր զենքն ուղղել է սրահի այն անկյունը, որտեղ պատասպարված է եղել պարոն Ինալը: Վերջինս նույնպես զինված է եղել և խոստովանում է, որ կրակել է, որպեսզի գրոհայինի զենքն անօգտագործելի դարձնի: Չէ՞ որ այն վտանգ էր սպառնում իր կյանքին: Պարոն Ինալն այստեղ բացատրեց, թե ինչ պայմաններում է մեկ կամ երկու անգամ կրակել: Հայտնի է նաև Ջուլֆայանի

հակադարձումը, քանի որ այդ նույն վայրում տասնչորս պարկուճ է գտնվել: Վերջապես, պարոն Ինալն է, որ ծանր վիրավորվել է:

Չեմ ուզում անդրադառնալ պարոն Բլոնդեի և պարոն Բալթասոլլուի վերքերին, կուզեի ճշտվեր միայն, թե արդյո՞ք դրանք պատահականության հետևանք են: Այո՛, ես ընդունում եմ, որ երբ մարդկային մի խումբ նախապատրաստվում է բռնարարքի և այն իրագործում է, կարող են սպանություններ, ողբերգություններ, ինչպես նաև պատահականություններ լինել:

Անհրաժեշտ է տարբերակել նաև նպատակամղված և կույր ահաբեկչությունները: Ինձ ասում են, որ հյուլպատոսարանի դեպքը չպետք է խառնել վերջերս Օռլիի օդանավակայանում տեղի ունեցած պայթյունի հետ: Համաձայն եմ, բայց այդ դեպքում 1948-ին ծնված Էոզենին, կամ 1937-ին ծնված Ինալին ինչո՞ւ են խառնում 1915-ի իրադարձություններին: Ի՞նչ կապ ունի մեկը մյուսի հետ:

Չոհերի մասին, համենայն դեպս, ուզում եմ խոսել: Էոզենը եղել է Անկարայի ոստիկանության շարքային ծառայող, աշխատել է Թուրքիայի՝ արտասահմանյան տարբեր հաստատություններում: Տեղափոխվելով Փարիզ, նա ամուսնացել է, ունեցել է մի երեխա և ահա՛, սեպտեմբերի 22-ին իմացել է, որ կինը Անկարայում տղա է ծննդաբերել: Տուն վերադառնալու թույլտվության համար նա մտել է հյուլպատոսարան ու իր ծառայողական պարտականությունները կատարելու՝ գրոհայիններին զինաթափելու պահին, սպանվել:

Ես ուզում եմ, որ դուք լավ պատկերացնեք կատարված ոճիրը: Այստեղ մի վկա հիշատակեց 2014 թվականը: Իսկ ես իմ հերթին մտածում եմ այն թուրք տղայի մասին, որը 2000 թվականին քսան տարեկան կլինի և հավանաբար կպատմի, որ իր ծնվելուց երկու օր անց մի հայ հորը սպանել է Փարիզի թուրքա -

-- էջ 228 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

կան հյուլպատոսարանում, մեղադրելով արդեն չափազանց հին՝ 1915 թվականի իրադարձությունների համար: Այլ կերպ ասած՝ պատմությունը փոխանցվում, կրկնվում է բռնության ողբերգությունը:

Նույնը վերաբերում է Ինալին: Նրա հայրը եղել է առևտրական խորհրդական, ինքն ուսանել է Ֆրանսիայում, հե տո՛ւ Լոզանում, աշխատանքային գործունեությունն սկսել արտաքին գործերի նախարարությունում: Ինքներդ ասացեք, եղա՞ն այնպիսի թուրքահայեր կամ ֆրանսահայեր, որոնք բողոքեցին հյուլպատոս Ինալի վերաբերմունքից: Ո՛չ, հյուլպատոսարանը բաց է եղել բոլորի առաջ, պաշտոնյան միշտ անկողմնակալ ու անբասիր է կատարել իր պարտականությունները, և ահա՛, աշխատանքի պահին, ծանր վիրավորվել, կորցրել է փայծաղը: Ի վերջո, նկատի ունեցեք, որ մենք ՄԱԿ-ում կամ պատմության դատարանում չենք: Դո՛ւք, պարոնայք դատավորներ, տալու եք պատանդների արգելափակման, Էոզենի

կյանքի գնի, Ինալին հասցված մարմնական ծանր վնասի գնահատականը: Փաստերն ակնհայտ են, պատասխանատվության պահանջն՝ անխուսափելի: Գիտեմ, ձեզ կիսնդրեն շրջանցել բոլոր ծանրացուցիչ հանգամանքները, կմեղադրեն թուրք ժողովրդի նկատմամբ համակրանք դրսևորելու համար: Սակայն, այս դեպքում, ժողովուրդը եղգեն է, Ինալը, Բալթասոլուն՝ հիմնականում արտագնա աշխատավորները՝ գումարած տարբեր ազգությունների պատանդները: Ձեզ թերևս մեղադրեն նաև թուրքական շահերը պաշտպանելու մեջ, բայց փաստն այն է, որ ոմբահարումները շարունակվում են, շարունակվում են Փարիզում: Թող նույն վկաները ամեն բռնարարքից հետո չկրկնեն, թե իրենց պայքարը նույնն է, միջոցներն են տարբեր: Այս դեպքում որոշակի է, որ մենք գործ ունենք քաղաքական բռնության հետ, որն այլ կերպ կոչվում է ահաբեկչություն: Ինչպիսի բացատրություններ էլ որ այստեղ հնչեն, ակնհայտ է, որ մեղադրյալները իրավիճակն ապակայունացնող ահաբեկիչներ են, որոնց գործողությունները տարածքների ազատագրության, պահանջատիրության, Դիմադրական շարժման՝ այն իմաստով, որ մեզ հայտնի է, ոչ մի առնչություն չունեն:

Ամեն ահաբեկչություն իրեն վեհանձնություն, նվիրում,

-- էջ 229 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

հայ ընտասիրություն է վերագրում, ներկայացնում է գաղափարներ, նպատակներ, բայց միշտ և ամենուր իր ետևում արյուն է թողնում՝ արյուն, որը հետզհետե ավելի ու ավելի է տարածվում, ավելի ու ավելի անհասցե է դառնում, վերածվում է պատժի միջոցի:

Այս բոլոր որակումները առնչվում են քննվող գործին: Մինչդեռ շատերը, շրջանցելով փաստացի իրողությունը, վկայակոչում են 1915-ի դեպքերը: Ես հիշում եմ իմ գործընկեր՝ պաշտպան Ասլանյանի ընթերցած գրությունը, պրոֆեսոր ՏերՄինասյանի ելույթը, բայց նաև թուրքահայ համայնքի կրոնական պատասխանատու, հայկական դպրոցի հոգաբարձույի (մի հանգամանք, որը վկայում է, որ Թուրքիայում ազգային դպրոցներ, համենայն դեպս, կան, գոյություն ունեն) խոսքերը: Անկախ մոտեցման տարբերությունից, երեքն էլ վկայակոչեցին ծանր անցյալի մանրամասները: Այո՛, ողբերգական իրադարձություններն իրենց հետքը թողնում են, դրանք հաղթահարելու համար ժամանակ է անհրաժեշտ: Եվ չնայած ամեն ոք յուրովի է վերապրում այդ անցյալը, ինձ զարմացնում են սերտ կապերն ու հարաբերությունները, որ առկա են աշխարհով մեկ տարածված հայկական համայնքների միջև: Ակնհայտ է, որ առնչություններ գոյություն ունեն նաև Սփյուռքի և Թուրքիայի հայերի միջև՝ մի կողմից, Թուրքիայի հայերի և Թուրքիայի թուրքերի՝ ընդհուպ պետության ու կառավարության միջև՝ մյուս կողմից: Թվում է, թե այս հետզհետե ամրապնդվող կապերը, մտերմությունը գրգռում, նյարդայնացնում են ոմանց և իրենց ազգային ինքնությունը հավաստելու համար դիմում են բռնությունների թե՛ Թուրքիայում և թե՛

Թուրքիայից դուրս: 1975-ին սկիզբ առած բռնարարքները իբր վերաբերում են Օսմանյան կայսրության իրադարձություններին, բայց ուղղված են ժամանակակից Թուրքիայի դեմ:

Ի վերջո, ձեր ուշադրությունն եմ հրավիրում հետևյալ հանգամանքի վրա: Այստեղ երկար ու մանրամասն նկարագրեցին Թուրքիայում տեղի ունեցող բռնաճնշումները, մարդու իրավունքների ոտնահարումը, վերջապես՝ տիրող գինվորական վարչակարգի սահմանափակումները: Այդ բոլորը եթե անգամ ճիշտ են, ապա հիշատակելն անտեղի է, ոչ մի առնչություն չունեն բռնարարքների հետ:

-- էջ 230 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Ֆրանսիայում թուրք դեսպանին սպանեցին 1979-ին, երբ Թուրքիայում իշխանությունն իրենց ձեռքն էին առել ընկերվարները: Ուրեմն՝ բռնության ալիքն ի սկզբանե ընկերվարների դեմ է ուղղված եղել: Ո՛չ, բուն պատճառը բոլորովին այլ է, հրահրողները, ամենայն հավանականությամբ, ուրիշ՝ մութնապատակներ են հետապնդում:

Ձեր խնդիրը, հարգելի դատավորներ, իհարկե, հեշտ չէ: Դուք ձեր վերաբերմունքն եք դրսևորելու հանցագործության այնպիսի դրսևորումների նկատմամբ, ինչպիսիք են պատանդ վերցնելը, սպանությունը, հրագենով հասցված վերքերը և այլն:

Կարծում եմ, ֆրանսիացի ժողովուրդը լիովին միանում է Թուրքիայում բնակվող ազգությամբ հայ Գևորգյանին, որը, ինչպես լսեցիք, այստեղ ասաց. “Ո՛չ, մենք դեմ ենք դրան”:

ՆԱԽԱԳԱՀ - Ձայնը տրվում է փաստաբանապետ Բողըլոյին:

ՓԱՍՏԱԲԱՆԱՊԵՏ ԲՈԴԸԼՈ - Պարոն նախագահ, պարոնայք պաշտոնակիցներ, տիկնայք և պարոնայք երդվյալներ, ես իմ գործընկեր Սարդայի հետ մասնակցում եմ երկու զոհերի շահերի պաշտպանությանը: Եվ որպեսզի նրան չկրկնեմ, ուզում եմ իմ խորհրդածություններն արտահայտել հետևյալ երեք հիմնահարցերի առնչությամբ: Առաջինը վերաբերում է պատմությանը, որի կապակցությամբ այս ամբիոնից բազմաթիվ ելույթներ հնչեցին, կհնչեն նաև վաղը, երկրորդը՝ բոլր իրադարձությանը, և, վերջապես, երրորդը՝ երևույթին, որն այժմ քայքայում է մեր հասարակությունը:

Խոսքը բռնության մասին է:

Սկսենք սկզբից: Պաշտպանությունն այնքան հաճախ և այնքան հանգամանորեն արժարժեց պատմական իրադարձությունները, որ շրջանցել չեմ կարող: Համենայն դեպս, անդրադառնալու եմ մեծագույն վերապահությամբ, որովհետև այդ անցյալը ատյանի բացարձակ մեծամասնությանը գոնե անձանոթ է: Բնական

Է՝ ճշտելու համար, թե մեղադրյալը կրակե՞լ է, վիրավորե՞լ է, պատանդ վերցրե՞լ է, մահվան սպառնալիքի դիմե՞լ է, պատմությանը դիմելու հարկ չկա:

Դրան հակառակ, պատմությունն անհրաժեշտ է յուրաքանչյուրի մեղսակցությունը ճշտելու, բացահայտելու համար այն

-- էջ 231 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

դրդապատճառները, որոնք զենքի են մղել մեղադրյալներին:

Իմ պաշտոնակիցը՝ պաշտպան Սարդան, իրավացի է՝ դատարանը ՄԱԿ կամ Հաագայի ատյան չէ, իրավաբանությունը չէ, որ ճշտում է պետությունների, համայնքների հարաբերությունները:

Ես, ի ամոթ ինձ, ստիպված եմ խոստովանել, որ նախքան այս դատավարությունը, Հայկական հարցի մասին գաղափար չունեի: Այն, ինչ ընթերցել եմ այս կարճ ժամանակում, ինձ հնարավորություն չի ընձեռում բացարձակ ճշմարտություններ կայացնել ձեզ, մանավանդ՝ փորձը ցույց է տալիս, որ դպրոցական դասագրքերի մեկնաբանությունները փոփոխվում են ըստ տիրող վարչակարգի: Ավելացնեմ նաև, որ մեզ հետաքրքրող հարցի մասին համեմատաբար քիչ է գրված, անհամեմատ շատ են սերնդից սերունդ փոխանցվող բանավոր ավանդությունները, որոնք, ելնելով տվյալ անհատի մոտեցումից, անխուսափելի փոփոխությունների են ենթարկվում:

Վերջապես, ես բնական չեմ համարում այն հանգամանքը, որ ներկա բռնարարը բացատրվում է յոթանասուն տարի առաջ պատահած դեպքերով: Ֆրանսիան և Գերմանիան մեր դարի ընթացքում երկու անգամ պատերազմել են, ընդ որում երկրորդը հատկապես՝ ահավոր էր, բայց այսօր երկու պետություններն էլ շրջել են պատմության այդ էջը: Հայերը և թուրքերը նույնպես այդ սկզբունքով պիտի առաջնորդվեն: Վարչակարգերը փոխվել են, Օսմանյան կայսրության բոլոր ղեկավարները մահացել են վաղուց:

Հայերի պատմությունը չափազանց երկար է, հարուստ տարբեր իրադարձություններով ու ողբերգություններով: Հայաստանը մինչև շատ կարճ ժամանակով անկախության տիրանալը, անընդհատ բռնակցվել է այս ու այն պետություններին: Վերջապես, 16-րդ դարից սկսած, հայերի մի մասը անցել է Իրանի, մյուսը՝ Թուրքիայի գերիշխանության ներքո: Դրանով պետք է բացատրել այն հանգամանքը, որ հայահոծ համայնքներ գոյություն ունեն Թուրքիայում և արևելյան բազմաթիվ երկրներում: Նշանակալի է, որ հատկապես արտասահմանում հայեր հանդիպում են հասարակության ամենատարբեր խավերում, նրանք հետաքրքրությունների չափազանց լայն ընդգրկում ու -

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Նեն, անդամակցում են գրեթե բոլոր քաղաքական կուսակցություններին: Կան հայեր, որոնք լիովին մերվում են նոր միջավայրին, կան նաև այնպիսիները, որոնք շարունակում են իրենց հեռավոր նախնիների հայրենիքը երազել: Ֆրանսիայում շատ հայեր են ապրում մասնավորապես Փարիզի, Լիոնի, Մարսելի շրջաններում: Նրանց մեծամասնությունը լիովին մերվել է: Դրա վկայությունն է թեկուզ այն, որ բռնարարքներ չեն հղանում: Որոշ հայեր, հատկապես մշակույթի բնագավառում, մեծ հռչակի են տիրացել. դատավարության սկզբում, պարոն Նախագահ, դուք ընթերցեցիք երկուսի՝ Շառլ Ազնավուրի և Անրի Վեռնոյի նամակները: Ֆրանսիայում անվանի հայեր կան բազմաթիվ այլ բնագավառներում: Համոզվելու համար՝ բավական է թեկուզ մի հայացք նետել դահլիճին: Հատկանշական է, որ ես հայ և թուրք բազմաթիվ գործընկերներ ունեմ, որոնց միջև, որքան ինձ հայտնի է, երբեք հակամարտություն չի եղել:

Քանի որ չորս մեղադրյալներն էլ Լիբանանից են, ուզում եմ թռուցիկ անդրադառնալ նաև այդ համայնքին, որը ամենամեծերից է: Այո՛, երկիրը ծանր վիճակում է, այո՛, բոլոր բնակիչներն էլ, անկախ ազգությունից, տառապում են, բայց հայերը, համենայն դեպս, ըստ երևույթին չեն անտեսվում, խորհրդարանի վեց պատգամավորներ, ինչպես նաև արդարադատության նախարարը իրենց հայրենակիցներն են: Ուզում եմ ասել, որ հայերը արտասահմանում վատ չեն զգում, վատ չեն դրսևորվում:

Իսկ Թուրքիայո՞ւմ... Այստեղ արդեն երկու վկաներ հանդես եկել են, ընդ որում մեկը պաշտպանող, մյուսը՝ մեղադրող կողմից: Քաղաքացիական հայցվորների ներկայացրած պարոն Գևորգյանը շատ լավ դիրք է գրավում, Ստամբուլի հայոց պատրիարքարանի հոգևոր խորհրդի փոխնախագահն է: Պաշտպանների հրավիրած պարոն Զյուլհուրթյուզեյանը վարժարանի տնօրեն է եղել, բայց դժվարություններ է ունեցել թուրքերի հետ, նրան բանտարկել, տանջել, ի վերջո բաց են թողել:

Ուզում եմ անմիջապես ավելացնել, որ Թուրքիայում միայն հայերը չէ, որ բանտարկվում են: Պարոն Զյուլհուրթյուզեյանը մեկն է այն հայերից, ում ազատությունը պահանջել է մարտախումբը: Դա ինձ զարմացնում է, որովհետև չեմ կարծում, որ Թուրքիայում միայն երկու հայ կալանավոր կա: Եթե դա, իրոք,

այդպես է, ուրեմն Թուրքիայի հայ համայնքը չի հալածվում: Նույնը վկայում էր պարոն Գևորգյանը: Նա ասաց, որ Թուրքիայի հայ համայնքի ընդհանուր թիվը հասնում է ութսուն հազարի, այսինքն նույնքան, որքան ֆրանսիական մի մեծ քաղաքի բնակչությունը: Նա ավելացրեց նաև, որ իրենց տրամադրության տակ երեք եկեղեցի, մի քանի դպրոց, երկու լրագիր կա: Ես, իհարկե, դժվարանում եմ անդրադառնալ «Մարմարա» և «Ժամանակ» օրաթերթերի բովանդակությանը, բայց ակնհայտ է, որ կազմակերպչական, մշակութային առումներով, Թուրքիայի հայությանը բոլոր հնարավորությունները տրված են: Այժմ ուզում եմ որոշակիացնել ազգությունների թվաքանակի փոխհարաբերությունը: Այստեղ հայտարարվեց, որ հայերը զբաղեցրել են Թուրքիայի ամբողջ արևելքը, ուստի անբնական է, որ այն իրենց չի վերադարձվում: Մինչդեռ իմ ներկայացրած վավերագրերը վկայում են, որ հայերը նույնիսկ երկրի արևելքում երբեք առանձին չեն եղել, լավագույն դեպքում՝ 33% են կազմել՝ չխոսելով արդեն արևմտյան նահանգների մասին, որտեղ համեմատաբար փոքր թիվ են կազմել: Այս ամենից պետք է հետևեցնել, որ հայերը միշտ էլ Թուրքիայում ազգային փոքրամասնություն են եղել:

Վերջապես, անդրադառնամ երրորդ՝ 1915-ի ողբերգության խնդրին: Քանի որ, ինչպես արդեն խոստովանեցի, տեղեկություն բացարձակ չունեի, ցանկացա չեզոք աղբյուր գտնել: Ու գտա: Խոսքը ֆրանսիացի սպա Լարշեի՝ 1926 թվականին հրատարակված հուշերի մասին է, որի նախաբանը գրել է Առաջին աշխարհամարտի ընթացքում Միջին Արևելքի ռազմական հակամարտությունների խոշոր գիտակ, մարշալ Ֆրանշե դ'Էպրեն: «Թուրքական պատերազմը համաշխարհային պատերազմում» խորագրված գրքում «Թուրքահայերի տեղահանումը» ենթավերնագրով մի ամբողջ գլուխ կա, որի լուսապատճենը նախօրոք ներկայացրել եմ ատյանին: Ահա՛ բովանդակությունը: 1915-ին իրար դեմ պատերազմել են տարածաշրջանի երկու գերպետությունները՝ ցարական Ռուսաստանն ու Օսմանյան կայսրությունը: Վերջինս ազգությունների խճանկար էր, իր հզորության գագաթնակետին հասել է մինչև Միջերկրականի ափերը՝ Լիբիա: Պատերազմն սկսվելու ժամանակ Օսմանյան կայսրությունը

-- էջ 234 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

կորցրել էր եվրոպական տարածքների մեծ մասը, բայց դեռևս իշխող դիրք էր գրավում Միջին Արևելքում, հատկապես՝ ներկա Թուրքիայում:

Ես կարդում եմ այն, ինչ 1926-ին գրել է ֆրանսիացի հրամանատար Լարշեն. «Մարտական գործողությունների շրջանում գտնվող հայ ազգաբնակչությունը (չմոռանանք, որ պատերազմը մղվում էր ցարական Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև) բացեիբաց համակրում էր ռուսներին: Երզրումի քրիստոնյա բնակչության մի մասը դեռևս 1914-ի դեկտեմբերին անցել էր Անդրկովկաս: Կամավորականները Թուրքիայից գաղտնի հեռանում, գնում, միանում էին

ռուսների կազմավորած հայկական ջոկատներին, ֆիդայիները մշտապես հարձակվում էին առանձին անհատների և թուրքական գումակների վրա: Պարտադիր զինվորական աշխատանքից ու բանակից փախչելը համընդհանուր բնույթ էր կրում...»:

Լարշեն վկայում է նաև, որ հայերի դիմադրությունը երբեմն թուրքական հրետանային մարտկոցներով էր հնարավոր լինում ճնշել, որից հետո հետևյալ եզրահանգումն է կատարում. «Անհրաժեշտ է անպայման վկայակոչել այն իրադարձությունները, որոնք որոշակի ազդեցություն ունեցան հետագա ռազմական գործողությունների վրա: Թուրքական կառավարությունը փորձեց արմատական միջոցների դիմել և 1915 թվականի դեկտեմբերի 2-ի հրամանագրով օրենքից դուրս հայտարարեց հայկական կամավորական ջոկատների մարտիկներին, իսկ հայ ազգաբնակչությանը որոշեց պատերազմական գոտիներից տեղափոխել ապահով՝ հատուկ այդ նպատակի համար նախատեսված վայրեր: Արտաքուստ գոնե թվում էր, որ թուրքական ռազմական իշխանությունները և ընդհանրապես ժողովուրդը զուսպ վերաբերմունք ունեն տարագրվողների նկատմամբ: Դժբախտաբար, նույնը չի կարելի ասել հեռավոր շրջանների մասին, որտեղ օժանդակ զինվոր-նստիկաններին քրդերի սանձազերծած ջարդերը, ինչպես նաև հոգևածությունը, համաճարակներն ու զրկանքները կես միլիոն մարդկային կյանք արժեցան»:

Ֆրանսիացի զինվորականի ու պատմաբանի,- ինչպես արդեն ասացի՝ չեզոք կողմի,- այս տեսակետը հաստատում է այն փաստաթուղթը, որը վկաներից մեկն արդեն ներկայացրել է ատյա -

-- էջ 235 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նին: Խոսքը Հայկական պատվիրակության նախագահի՝ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարին զինադադարից քիչ անց՝ 1918 թվականի նոյեմբերի 30-ին հղած նամակի մասին է, ուր մասնավորապես ասվում է. «Հայաստանի պատվիրակության անունից պատիվ ունեմ Ձեզ՝ նորին վսեմություն, հղել հետևյալ հուշագիրը, հիշեցնելով, որ հայերը, պատերազմի հենց սկզբից, փաստորեն, կռվող կողմ են եղել»:

Նկատի՝ ունեցեք, նման հայտարարություն հայկական պատվիրակության նախագահն է անում, որը Ֆրանսիան, հասկանալի է, չէր կարող չողջունել: Մինչդեռ Օսմանյան կայսրությունը գտնվում էր հակամարտության մյուս կողմում, բնականաբար, տարբեր վերաբերմունք պիտի ունենար: Այլ կերպ ասած, 1915-ի իրադարձությունները պատերազմի արդյունք են, առնչվում են պատերազմին: Համաձայն եմ, դրանից նրանց վայրագ բնույթը չի փոխվում, բայց բացատրվում է, որը և ցանկացա ձեր ուշադրությանը ներկայացնել:

Ինչ վերաբերում է հյուպատոսարանի գրավմանը, ավելացնելու շատ բան չունեմ, ինձ անհամեմատ կարևոր է թվում հետևյալը. պաշտպանությունը մի պահ հայտարարեց, որ մարտախմբի գործունեությունը հիմնականում ուղղված է եղել հասարակական կարծիքը Հայկական հարցի վրա հրավիրելուն: Մինչդեռ հայտնի է, որ չորս մեղադրյալներն էլ քիչ է ասել, թե զինված են եղել՝ նրանց զինամթերքի մի մասը դուրք տեսնում եք այստեղ: Ուրեմն, կասկած չի կարող լինել՝ նախօրոք որոշված էր, որ եթե իրենց պահանջը դիմադրության հանդիպի, զենքերը գործի պիտի դրվեին: Ասվածի վկայությունը կա արդեն: Գրոհայինները հյուպատոսարանում թողել են մեկ սպանված և երկու վիրավոր, ինչպես նաև մոտ քսան կրակված պարկուճ: Բացի դրանից, լուսանկարներից պարզ երևում է, որ մեղադրյալները բոլոր այն պատանդների քունքին, որոնց առերեսման համար պատուհանին են մոտեցրել, ատրճանակ են պահել: Տասնհինգ ժամ տևած բանակցությունների ընթացքում չէր բացառվում, որ գրոհայինները պայթեցնեին շենքը: Դրա հնարավորությունները նրանք ունեին՝ արդեն տեղադրել էին կակուղ պայթուցիկները, պայթուցիչները, միացրել էլեկտրալարերը: Մտում էր կոճակը սեղմել և Հայկական հարցի հետ ոչ մի առնչություն չու -

-- էջ 236 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

Նեցող զոհերի թիվն անհամեմատ մեծ կլիներ: Շենքը, ինչպես գիտեք, հինգ թե վեց հարկանի, բավական մեծ կառույց է, ուրեմն, ծանր հետևանքները կարելի է պատկերացնել:

Վերջին հարցը, որին ուզում եմ անդրադառնալ, բռնությունն է: Այն, ինչպես հայտնի է, միշտ էլ գոյություն է ունեցել, դարեր ի վեր մարդկային էությանը հատուկ եղել: Մեր օրերում բռնարարքների աճ է նկատվում, մինչդեռ, թվում էր, թե հակառակը պիտի լիներ, քանի որ Ֆրանսիայի նման ժողովրդավարական երկրում, աշխարհի շատ այլ երկրներում հիանալիորեն կազմակերպված մամուլ, տեսալսողական, տեղեկատվական այլ միջոցներ գոյություն ունեն, որոնց օգնությամբ բոլոր իրադարձություններն իսկույն և եթե աշխարհին հայտնի են դառնում: Ուզում եմ ասել՝ մեր օրերում «Դրեյֆուսի գործ» չի կարող լինել: Չնայած դրան, անընդհատ բռնարարքներ են տեղի ունենում, որոնք ոչ մի լավ բանի չեն հանգեցնում: Հաջողության հասնելու դեպքում անգամ այն ծնում է բռնատիրություն ու բռնաճնշում: Խոսքը վերաբերում է մինչև անգամ Ֆրանսիայի 1789 թվականի հեղափոխությանը, որը թեև վեհ նպատակների էր ձգտում, ահաբեկչություններով ուղեկցվեց ու ի վերջո ստեղծեց Նապոլեոնյան միապետությունը: Այլ կերպ ասած, բռնության հաղթանակը շատ թանկ է նստում, իսկ ձախողումը վրեժխնդրություն է հարուցում: Բացի այս ամենից, ինչի էլ հասնեն կողմերը, զոհեր անպայման լինում են: Այս դեպքի զոհերը ձեզ արդեն հայտնի են՝ համեստ հնարավորություններով ապրող մի թուրք ընտանիք առանց ինսամակալի մնաց՝ կինը մեծագույն դժվարություններով իրենց նպատակին պիտի հասցնի երկու զավակներին,

որոնցից կրտսերը ծնվել է հոր սպանվելուց երկու օր առաջ և նրան երբեք չի տեսնելու: Մյուսը՝ փոխհյուլաատոսը, որը միջին աստիճանի պաշտոնյա է և չի ղեկավարում Թուրքիայի ներկա քաղաքականությունը, զբաղվում է պարզապես այցելուներ ընդունելով և ուղեթղթեր ձևակերպելով, ընդմիջտ հաշմանդամ է մնալու: Դժվար չէ պատկերացնել հեռացված փայծաղով տղամարդու վիճակը:

Ավարտելուց առաջ ուզում եմ առանձնահատուկ նշել ձեր վճռի կարևորությունը: Հասկանալի է, երդվյալների ատյանը, ի տարբերություն այլ դատարանների, փաստերը չի վերլուծում,

-- էջ 237 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

բավարարվում է դրական կամ բացասական պատասխաններով, հաշվարկի ընդհանուր գումարով: Բոլոր դեպքերում, ոչ մի կասկած չի կարող լինել, որ վճիռը հանգամանորեն կներկայացվի ու կմեկնաբանվի ինչպես Ֆրանսիական, այնպես էլ արտասահմանյան բազմաթիվ լրագրերում: Ուստի, թույլ տվեք ինձ հիշեցնել, որ երկու տեսակի՝ խրախուսող և կանխարգելող դատավճիռ գոյություն ունի:

Նման գործում խրախուսող դատավճիռ կայացնել նշանակում է հայտարարել, որ Ֆրանսիայում արտասահմանյան հյուլաատոսարանները, ինչո՞ւ է, բոլոր արտասահմանյան կազմակերպությունները անպաշտպան են: Չմոռանանք, որ մեր երկրում հարյուրավոր հյուլաատոսարաններ ու հազարավոր արտասահմանյան գործակալություններ կան: Մյուս կողմից էլ՝ բավական մեծ թիվ են կազմում այն երկրները, որտեղ բնակվող ազգային փոքրամասնությունները կամ քաղաքական վտարանդիները գոհացում չտրվող պահանջներ ունեն:

Խրախուսական դատավճիռ կայացնել՝ նշանակում է նաև խիստ տարբեր զանազան փոքրամասնություններին հուշել, որ նրանք կարող են մարտախմբերով գրոհել հյուլաատոսարանների, ազգային այլ կազմակերպությունների վրա, պատանդ վերցնել, դիմադրողներին շարքից հանել: Մենք շատ ուրախ ենք, որ Ֆրանսիայում մահապատիժը վերացել է, սակայն չպատժել նրանց, ովքեր մարդ են սպանում, նշանակում է վերականգնել մահվան վճիռը:

Իմ՝ ձեզ ներկայացրած թղթապանակում մի փաստաթուղթ կգտնեք, որը քիչ առաջ ինձ հանձնեցին: Խոսքը մեր դատավարությանը շատ նման մի դատավարության մասին է, տեղի է ունեցել Լոս Անջելեսում: Թուրքիայի գլխավոր հյուլաատոսին սպանած հայ գրոհայինը ամենաձանր պատժի՝ ցմահ բանտարկության է դատապարտվել:

Ես քաղաքացիական հայցվոր եմ, ո՛չ ձեր, ոչ էլ արտասահմանյան դատավճիռները չեմ կարող գնահատել կամ որակավորել, պարզապես փորձում եմ սկզբունքներ ներկայացնել: Չէի ուզենա, որ ատյանը այս գործը հայ-թուրքական

դատավարություն համարեր, համարեր մի խնդիր, որը մեզ չի վերաբերում և ապագայում էլ չի վերաբերելու: Ճիշտ հակառակը: Ինքներդ էլ

-- էջ 238 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏՈՒ

համոզվեցիք, որ հյուպատոսարանում եղել են թուրքեր, բայց նաև ոչ թուրքեր, հատկապես՝ ֆրանսիացիներ: Էլ չեմ խոսում շենքի մասին, որը բնակեցված է մեր հայրենակիցներով: Պատկերացնո՞ւմ եք, թե ինչ տեղի կունենար, եթե լարվածությունը մինչև պայթյունի հասներ: Այս առումով՝ կոմիսար Լըքլերի համբերությունն ու հնարագիտությունը վեր են ամեն դրվատանքից:

Ուստի, տիկնայք և պարոնայք երդվյալներ՝, եթե չեք ուզում, որ նման դեպքերը կրկնվեն, դուք, ձեր հարազատները, բարեկամները, բոլոր նրանք, ովքեր ապրում, աշխատում, պարզապես զբոսնում են արտասահմանյան հյուպատոսարանների, գործակալությունների մերձակայքում, վտանգի ենթարկվեն, պիտի կանխարգելող դատավճիռ կայացնեք:

Խորհրդակցությունների սենյակում, դուք, հասկանալի է, նախ մտածելու եք մեղադրյալների ճակատագրի մասին: Դա բնական է, օրինական: Սակայն, ես ձեզ խնդրում եմ, որ չմոռանաք այս գործի իրական զոհերին և ձեր դատավճռով փրկեք նմանատիպ՝ ապագա հնարավոր բոլոր զոհերին:

ՆԱԽԱԳԱՀ - Ձայնը տրվում է պաշտպան Վալերի Մենտրիոյին:

ՊԱՇՏՊԱՆ ՄԵՆՏՐԻՈՒ - Պարոն նախագահ՝, պարոնայք պաշտոնակիցներ՝, տիկնայք և պարոնայք երդվյալներ՝, նախ այն զգացողությունն ունեի, որ մարտիկները որոշակի դատ են պաշտպանում, բայց հետո համոզվեցի, որ չորս մեղադրյալները զինվորներ չեն, քանի որ հարձակվել են անմեղ քաղաքացիների վրա: Ես ներկայացնում եմ Ալադին Բալթասոլուի շահերը, որը հինգշաբթի ներկայացել էր վկայություն տալու: Հյուպատոսարանի գրոհի ժամանակ նա վիրավորվել է, բայց մինչև այս դատավարությունը՝ հատուցման մասին չի էլ մտածել, պարզապես ցանկացել է իր ձայնը լսելի դարձնել, մյուս զոհերի հետ մեկտեղ հաղորդել տազնապներն ու տառապանքը:

Ո՞վ է, սակայն, Ալադին Բալթասոլուն: Թուրքիայի Սիվիրլի գյուղաքաղաքում ծնված հողագործ բանվոր, որը 1973-ին Ֆրանսիայի կենտրոնական գրասենյակից բանվորական պայմանագիր է ստացել, եկել է մեր երկիրը, գյուղատնտեսական տարբեր աշխատանքներ կատարել: Այժմ Բալթասոլուն քիմիական

-- էջ 239 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

արդյունաբերության բնագավառում է աշխատում: Նա արդեն բնակարան ունի, 1976-ին Թուրքիա է գնացել, ամուսնացել, կնոջը բերել է Ֆրանսիա: Այստեղ են ծնվել Նրա զավակները՝ երկու աղջիկներն ու մի տղան, որը չի էլ ենթադրում, որ իր ծննդյան վկայական ստանալը նման փորձությունների է ենթարկել հորը: Չէ՞ որ այդ օրը Բալթասոլուն պատահաբար, որդու ծնունդն արձանագրելու համար է մտել հյուպատոսարան: Նրանից քիչ հետո, սակայն, ներխուժում են գրոհայինները, Գյուզելյանը կրակում է հսկիչ-պահապան Էոզենի վրա, գնդակներից մեկը վիրավորում է Բալթասոլունի ոտքը: Դրանից հետո նա կիսում է բոլոր պատանդների ճակատագիրը՝ ամբողջ օրն ու գիշերվա մի մասը անց է կացնում թիվ մեկ միջանցքի անկյունում: Այդ ամենից հետո ի՞նչ է զգացել թուրք արտագնա բանվորը, իհարկե՝ սարսափ: Բիշայի հիվանդանոցում վիրակապվելուց հետո նա միայն մի միտք է ունեցել, հասնել տուն՝ կնոջը, երեխաներին: Սակայն հաղթահարել է վախի, ինքնամեկուսացման ապրումներն ու եկել է այստեղ վկայելու, նպաստելու ճշմարտության բացահայտմանը: Եվ հարցը, որ ծնվում է Նրա առնչությամբ, հետևյալն է՝ մի՞թե քաղաքական, հասարակական նպատակները արդարացնում են անմեղ մարդկանց նկատմամբ գործադրվող բռնությունը, այսինքն՝ ահաբեկչությունը: Մի՞թե մեղադրյալների ազգային դատը՝ հիմնավորված լինի, թե ոչ՝ արժե նման ծայրահեղ միջոցներով ներկայացնել: Ալադին Բալթասոլուն ո՛չ հերոս է, ո՛չ նահատակ, և չեմ կարծում, որ որևէ մեկը, եթե այսպիսի կամ նման գործի առնչվի, չորս մեղադրյալներին ինչ-ինչ պայքարի առաջամարտիկներ կհամարի: Եթե նման բան տեղի ունենա, ուրեմն բռնությունն իր ամենադաժան տարբերակներով կօրինականացվի: Բալթասոլուն չի հասկանա, թե ինչո՞ւ են արդարադատությունը խառնում պատմությանը: Նա կասկածի չի ենթարկում չորս մեղադրյալների նպատակի վեհությունը, բայց ուզում է Նրանց, Նրանց նմաններին ձերբազատված տեսնել այն համոզմունքից, որ իրենց ամեն ինչ կարելի է, որովհետև իրենցից բացի ամեն ոք մեղավոր է: Հասկանալի է, հայկական այս բռնարարքը, իր հետապնդած դատի համար որոշակի համակրանք կշահի: Սակայն, մենք պետք է նախազգուշացնենք այդ համակրանքի շահարկումից, որովհետև անհ -

-- էջ 240 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Նար է օրինականացնել մարմնական ու հոգեկան տառապանքները, բռնությունները, որոնք անխուսափելի են նման գործողությունների ընթացքում: Ալադին Բալթասոլուն եկել է հենց այդ տառապանքը ներկայացնելու, որովհետև բռնարարքն արդարացնել, նշանակում է հաշտվել անմեղների տանջանքների հետ:

Պարոն Նախագահ, թույլ տվեք վերջում հրապարակել մի հեռագիր, որն այս Նիստի ընթացքում է ստացվել Ստամբուլից: Ահա՛ այն. «Մամուլից տեղեկացանք, որ ձեր ատյանը սկսել է թուրքական հյուպատոսարանի գրոհի համար մեղադրվող չորս ահաբեկիչների դատավարությունը: Հույս ունենք, որ Նկատի կունենաք Նաև մեր երեսուն անմեղ դիվանագետների թափած արյունը, նրանց այրիների արցունքները, զավակների դժբախտությունը»: Ստորագրված է՝ «Թուրք կանանց համերաշխության միություն»:

Հայտարարվում է ընդմիջում:

Նիստը վերսկսվում է:

ՆԱԽԱԳԱՀ - Ձայնը տրվում է ընդհանուր պաշտպան պարոն Միշոյին:

ՄԻՇՈ - Պարոն Նախագահ, պարոնայք դատավորներ, տիկնայք և պարոնայք երդվյալներ, այսօր դուք վերջնական վճիռ եք կայացնելու, ավարտին եք հասցնելու մի սովետային պատերազմ, որը բազմաթիվ անգամներ բռնկվել է տարբեր երկրներում, ինչպես Նաև, ցավոք, ոչ առանց զոհերի, Փարիզի կենտրոնում: Այս գործը, այն դրդապատճառներով, որոնք այստեղ հրապարակեցին մեղադրյալները, բոլորովին տարբեր է սովորաբար ատյանի դատաքննությանը ներկայացվող գործերից: Սակայն, միաժամանակ, նրա քննությունը լիովին մտնում է ձեր իրավասության շրջանակների մեջ, որովհետև գործողության ընթացքում հանցագործություն, այսինքն հարձակում, ընդ որում՝ ծանր հարձակում է կատարվել մարդու իրավունքների վրա: Ահա՛ այս առումով է, որ երդվյալները պետք է հանդես գան ֆրանսիացի ժողովրդի անունից, կատա ռեն իրենց պարտքը, պաշտպանեն բոլոր նրանց ազատությունը, կյանքի անձեռնմը -

-- էջ 241 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Խելիությունը, ովքեր ապրում են այս հողի վրա: Երկու հրամայական, որոնք պիտի լրջորեն արժանանան ձեր ուշադրությանը, որովհետև, ինչպես գիտեք, տասնհինգ ժամ շարունակ հիսուն հոգուց ավելի պատանդ վերցնելով, մեղադրյալները տազնապ հարուցելու, լարվածության, փոխատելության պատճառ են դարձել:

Դուք քննում եք մի գործ, որը, ինչպես նման գործերը Նախկինում, խոշոր տառերով են արձագանք գտնում համաշխարհային մամուլում, բորբոքում են հասարակության զգացականությունը, բուռն հետաքրքրություն, կրքեր են հարուցում, այսինքն տեղի է ունենում այն, ինչին ձգտել են Նախաձեռնողներն ու

իրագործողները: Ես իրավունք ունեմ նման եզրակացության հանգելու, որովհետև նախաքննությունը, այստեղ կատարված խոստովանությունները վկայում են, որ գրոհողների միակ նպատակը ուշադրության, համընդհանուր ուշադրության արժանանալն է եղել: Նրանք մի ակնթարթ անգամ չէին կարող ակնկալել, որ իրենց պահանջատիրությանը հատուցում կտրվի՝ ելնելով թեկուզ այն ահռելի հեռավորությունից, որն իրարից բաժանում է բուն թիրախն ու գործողության վայրը:

Ճիշտ է, չորս երիտասարդները պայքարի են ելել «անձնասպանական մարտախումբ» անվամբ, նրանց ինքնագոհողության պատրաստակամությունը կասկած չի հարուցում, սակայն ակնհայտորեն համոզված են եղել, որ նման միջոցներով ոչնչի չեն հասնելու, հնարավոր չէ հասնել: Սա շատ կարևոր, կանխորոշված ճշմարտություն է, որը գիտեն բոլորը: Դրա համար, երբ պահը հասել է, ոչինչ չի խանգարել, որ ֆրանսիական ոստիկանությունը միջամտի, վերականգնի հասարակական կարգը, գրոհայիններից ազատի վեց հարկանի մի շենք, որը միայն թուրքական հյուպատոսարանը չի զբաղեցնում: Այս իրողությունն այնքան կարևոր է, որ, տիկնայք և պարոնայք երդվյալներ՝, պիտի ձեզ վերջնական եզրահանգումների խթան ծառայի: Հիրավի, անիմաստ, անհանդուրժելի, դատապարտելի է այնպիսի զինված գործողությունը, որն ի սկզբանե մատնված է անհաջողության: Այնուամենայնիվ, նկատի ունեցեք, չորսն էլ մի ակնթարթ անգամ չեն վարանել նետվել մեծ համարձակություն, հանդգնություն պահանջող գրոհի, ընդ որում՝ այն չափազանց վտանգա -

-- էջ 242 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

վոր է եղել թե՛ իրենց և թե՛, հատկապես, շրջապատի համար, քանի որ մեծ քանակությամբ պայթուցիկները գտնվել են այնպիսի անձանց ձեռքում, որոնք պատրաստ են եղել ծայրահեղ գոհողության դիմել՝ սպանվել և սպանել բոլոր նրանց, ովքեր կխոչընդոտեն իրենց:

Ինչպե՞ս կարելի է արդարացնել նման գործողության հայեցակարգը, որը բռնությամբ է պայմանավորված, մահվան վտանգ պարունակող ուժի գործադրում է թելադրում: Պատահական չէ, որ մասնակիցներն իրենք իրենց գաղտնի բանակի մարտիկներ են կոչում, որին անդամագրվել են, որպեսզի, իրենց իսկ արտահայտությամբ, զինված պայքար մղեն: Չի կարող, իհարկե, չգարմացնել այն հանգամանքը, որ այդ բանակը զինված պայքարը մղում է ոչ թե այնտեղ, որտեղ իր ժողովուրդն արմատներ է նետել, ոչ թե այն տարածքներում, որ պահանջում է, որը բռնազավթված է, ուր հայրության վերջին մնացորդները ճնշվում ու հալածվում են, այլ այնպիսի երկրներում, որոնք հիմնախնդրի հետ ոչ մի առնչություն չունեն, իսկ տարբեր թուրքական հաստատությունները վայելում են պետության պաշտպանությունն ու հովանավորությունը: Նրանք որոշել են բռնարարքի դիմել Ֆրանսիայում, շատ լավ իմանալով, որ նման անկարգությունն

ու ողբերգությունը հյուպատոսարանի շրջանակներում չեն մնա, կհորդեն փողոց, ֆրանսիական իշխանությունները ստիպված կլինեն միջամտել: Եվ, իրոք, ֆրանսիական իշխանությունները, որոնք, որքան ինձ հայտնի է, չափազանց բարեհաճ են հայ համայնքի նկատմամբ, կրել են այս գործողության ամբողջ ծանրությունը: Այսինքն, գրոհայինները Ֆրանսիային ստիպել են դառնալ իրենց ուղղակի հակառակորդը, մինչդեռ մեր երկիրը այդ պայքարի հետ, կրկնում եմ, ոչ մի ամենջություն չունի: Չպետք է անտեսել նաև այն հանգամանքը, որ չորս մարտիկները, հաջողության հասնելու դեպքում, միայն մի նպատակ են ունեցել՝ փոխանակման համար հիմնականում ոչ զինվորականներից կազմված պատանդներ ձեռք բերել: Այլ կերպ ասած, իրենց հույսը դրել են ոչ ռազմական միջոցի վրա, նախընտրել են պատահականությունը՝ տարբերություն չդնելով զոհերի սեռի, տարիքի, ազգության միջև: Չարմանալի չէ, որ սեպտեմբերի 24-ի ճակատագրական օրը, բոլոր նրանք, ովքեր եղել են

-- էջ 243 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

հյուպատոսարանում, նույն վիճակում են հայտնվել: Բոլորը, բացի երկուս ու կես տարեկան մի երեխայից, ում երեկոյան ժամը 8-ին են ազատ արձակել: Ես ծանոթացել եմ պատանդների ցուցակին, նրանց մեջ շատ են եղել ֆրանսիացիներ, բայց ենթարկվել են նույն բռնությանը, նույն սարսափելի սպասմանը: Չեմ կարող չնշել նաև այն, որ նույնիսկ թուրքերը, որոնք այդ օրը անձնական գործերով հյուպատոսարան են այցելել, ըստ էության ոչ մի մեղք չեն ունեցել:

Գրոհայինները բոլոր պատանդների հետ նույն կերպ են վարվել՝ դեմքերը ներքև պառկեցրել են հատակին, ձեռքները ետ տարել, կապել: Պատանդները լարված ջղերով լսել են փողոցի հետ ընթացող բանակցությունները, վախեցել են, որ իրենցից որևէ մեկի նյարդերը չեն դիմանա, որևէ մեկը կընդվզի և ողբերգությունը կսկսվի:

Ես ուզում եմ ձեզ հիշեցնել տիկին Դավթյանին, որը հյուպատոսարանում է եղել և երբ երկուս ու կես տարեկան երեխայի հետ ժամը 8-ին դուրս է եկել, հայտարարել է. «Նրանք շատ լավ էին վարվում մեզ հետ»: Այո՛, բայց չէ՞ որ ինքը հայ է, իրեն նույնիսկ թույլ են տվել, որ տուն զանգ տա, իր փոխարեն ուրիշին ուղարկի աղջկան դպրոցից վերցնելու: Եվ չնայած նրան անհամեմատ շուտ՝ երեկոյան 8-ին են արձակել, ժամանակը, իր իսկ խոստովանությամբ, չափազանց դանդաղ, լարված է անցել:

Պարոն Հուբարին դուր քիչ առաջ լսեցիք, նա պատմեց, թե ինչքան վատ է իրեն զգացել, դեղի կարիք է ունեցել, մինչդեռ ձեռքերը կաշուն ժապավենով կապված են եղել:

Պարոն Լապորտը,- նկատեցի՞ք, ես միայն ֆրանսիացիներին եմ հիշատակում,- խոստովանում է, որ ձեռքերը, մանավանդ աջը շատ ամուր է կապված եղել, բայց իր հետ վատ չեն վերաբերվել, միայն մարտախմբի հրամանատարն է մերթ ընդ մերթ ձեռքի գենքով սպառնացել:

Չորս մեղադրյալների վերաբերմունքից գոհ է նաև ու սանող Ֆլետորին, ընդունում է, որ նրանք խելամիտ են գործել, թեև նշում է, որ ժամեր շարունակ չի համարձակվել շարժվել, որովհետև գլխից երեսուն սանտիմետր հեռավորության վրա տեղադրված է եղել պայթուցիչի տուփը, մեջքի վրայով անցել է այդ նույն պայթուցիչի լարը, որի ծայրը հայտնի չէ, թե գրոհա -

-- էջ 244 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

յիններից ո՛ր մեկի ձեռքում է եղել:

Այս գործողության բոլոր զոհերն էլ անորոշության երկար ժամեր են ապրել, որոնք հիմա, ճիշտ է, հուշ են դարձել, բայց այն ժամանակ հոգեկան տառապանքներ են հարուցել: Վիճակը չի փոխվել, թերևս մասամբ է փոխվել այն պահերին, երբ ծխախոտ կամ սնունդ են բաժանել: Եթե անգամ բռնությամբ երկար ժամանակ իրար հետ մնալուց հետո համակեցության նման ինչ-որ բան՝ *modus vivendi* ստեղծվել է, ուղեկցվել է լարվածությամբ, նյարդայնությամբ ու անորոշությամբ:

Թող որքան ուզում է պատանդները պնդեն, որ գրոհայինները բարյացակամ վերաբերմունք են ունեցել: Դա շատ հարաբերական է: Ի վերջո, միտք ունե՞ր ավելի դաժան վարվել դժբախտ պատանդների հետ, որոնք իսկույն համակվել են վախով և եթե անգամ սկզբում փախչելու ցանկություն ունեցել են, հրաժարվել են չափազանց արագ: Չմոռանանք, որ մեղադրյալները հյուպատոսարան են ներխուժել սպառնալիքներով և այնքան վճռական, արագ են գործել, այնպիսի մեծ քանակությամբ գենք են ներկրել, որ ամեն ոք հավատացել է՝ եթե չենթարկվի, նրանք կիրագործեն իրենց սպառնալիքը: Այո՛, պարոն Սիսյանն ասում է, որ ինքը պատանդներին հրահանգել է հանգիստ մնալ, բայց պարոն Ֆլետորին պատմում է, որ Գյուլգեյանն անընդհատ սպառնում էր շենքը պայթեցնել: Մի տիկին հիշում է. «Երբ ուտելիք բերեցին, տղամարդկանց ձեռքերն արձակեցին, որ կարողանան սնվել, բայց մորուքավոր գրոհայինը գնում- գալիս, կրկնում էր, որ եթե մեկն ու մեկը ավելորդ շարժում անի, ինքն անմիջապես կկրակի»: Մի ուրիշ պատանդ վկայում է, որ թեև կանանց ձեռքերը չեն կապել, բայց նրանք միշտ հսկողության տակ են եղել: Սրանք դեռ սոսկ արտաքին, տեսանելի սպառնալիքներն են, ավելի որոշակի վտանգներ էլ են գոյություն ունեցել: Ես չեմ ուզում խոսել գենքի ու զինամթերքի մեծ քանակության մա սին, հիշեցնեմ միայն պարոն Հուբարի և ոստիկանապետ Լըքլերի ձայնագրված բանակցությունների հետևյալ հատվածը: Պարոն Հուբարը բառացիորեն ասում է. «Խնդրում եմ, շատ պահանջկոտ մի՛ եղեք, իրավիճակը

լարվում է»: Հապա խեղճ Էոզենի դիաֆօկը, որը մինչև երեկոյան ժամը 8-ը մնում է հատակին: Թեև հայտնի չէ, թե որքան

-- էջ 245 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Է տևել նրա հոգեվարքը, բայց բոլորն էլ շատ լավ տեսել են ինչպես է արյունը տարածվում:

Մի կողմ թողնենք այս ճնշող տեսարանները, պատկերացնենք, թե ի՞նչ տեղի կունենար, եթե ոստիկանները կրակ բացելու հրաման ստանային (կարծում եք այդ վարկածը չի՞ քննարկվել): Այսպես թե այնպես, վտանգը հետզհետե որոշակիանում, տազնապ էր հարուցում, որովհետև մոտենում էր 23-ն անց 15 րոպեն՝ գրոհայինների առաջադրած պայմանաժամը, ու չնայած բանակցությունները շարունակվում էին, Գյուզեյանի ձայնը ավելի խիստ էր հնչում. «Մենք ականներ, ռումբեր, հաղորդալար, ամեն ինչ ունենք, դու ուզում ես, որ նոր զոհե՞ր լինեն: Քո գործն է, ինձ համար մեկ է...»:

Իհարկե, արդեն ժամանակ է անցել, հիմա ոմանք թերևս գտնեն, որ դրանք սոսկ սպառնալիքներ են եղել, բայց պատանդները չեն զգացել, ավելին՝ իրենք իրենց ահաբեկության, նենգասպառնալիքի միջոց են համարել: Ամեն ինչ այդքանով էլ չի ավարտվել՝ գիշերվա ժամը 11 անց 37 րոպեին տարածվել է գրոհայինների վերջնագիրը, որը երկու սպառնալիք է պարունակել: Առաջինը՝ «Եթե մինչև ժամը 12-ը մեր բոլոր պահանջները չբավարարեք, պատանդներին կոչնչացնենք», և երկրորդը՝ «Եթե հյուպատոսարան ներխուժելու փորձ կատարեք, շենքը կայայթեցնենք՝ բնակիչներով հանդերձ»: Պարոն Հուբարը պատմեց արդեն, թե Ջուլֆայանը ինչպիսի եռանդով էր դռների մոտ տեղադրում պայթուցիչները, որոնց լարերի ծայրերն ամուր պահել է ձեռքին: Մնում էր միայն իրար մոտեցնել: Փորձաքննությունը հավաստել է, որ հյուպատոսարան տարված ամբողջ զինամթերքը գործադրման վիճակում է եղել, գրոհայիններն իրենց հետ ութը հարյուր գրամ միայն ուժանակ են ունեցել: Գործողության վերջում, երբ վիրավոր գրոհայիններին հանում են հյուպատոսարանից, ներսում Բասմաջյանն ու Գյուզեյանն են մնում, վերջինս ձեռքն է առնում պայթուցիչների լարերն ու, ըստ երևույթին չկարողանալով առանց Սիսյանի որոշում կայացնել, ավելի խիստ, վճռական է արտահայտվում: Ուրեմն, որքան էլ Սիսյանը նախաքննության ժամանակ հայտարարած լինի, որ իրենք, իր իսկ արտահայտությամբ, «խաղաղ գործողություն են ձեռնարկել», նրանց գրոհը, պատանդ վերցնելու ձևը

-- էջ 246 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Նման տպավորությունն չեն ստեղծում: Ահա՛ թե ինչու անհիմն պիտի համարել նաև պարոն Գյուզեյանի այն հայտարարությունը, որ իրենք չկրակելու հրաման են ունեցել, և այն բանից հետո միայն, երբ իրենց վրա կրակ են բացել, փորձել են պաշտպանվել: Եթե իրոք զենքի չդիմելու հրահանգ եղել է, ինչո՞ւ էին այդքան շատ զինամթերք տանում հետները, և եթե տարել էին, ինչո՞ւ էին ընդամենը երկու հոգու՝ Էոզենի և Ինալի վրա քսանհինգ անգամ կրակում: Դատարկ պարկուճները այլ բան են վկայում:

Չնայած պատանդների մեծ թվին, նախաքննության ժամանակ տրված ցուցմունքները այնքան հակասական ու թերի են, որ գործողության մանրամասները նույնությամբ վերարտադրելը դժվար է: Համենայն դեպս, որոշակի կարելի է ասել, որ հյուպատոսարանի մուտքի մոտ, մորուքավորը՝ Գյուզեյանը հրել է պաշտպան Գալիին, Ջուլֆայանի հետ առաջինը ներխուժել է սպասասրահ, պայթել են առաջին կրակոցները, որոնց նորերն են հետևել: Ուրեմն, գրոհայիններն են նախահարձակ եղել, կրակ բացել են նախքան տազնապի ազդանշանի հնչելն ու Բլունդեի, մյուս ոստիկանների հայտնվելը: Փոխհրաձգությունը, այսինքն՝ մեղադրյալների հայտարարած ինքնապաշտպանությունը, դրանից հետո է տեղի ունեցել:

Այսպիսով, վկաների բացարձակ մեծամասնության ցուցմունքները հաստատում են, որ առաջինը կրակ են բացել գրոհայիններն ու իսկույն ևեթ հրամայել. «Ո՛չ ոք տեղից չշարժվի»: Այս ամենը այնքան արագ է կատարվել, որ մինչև 1983 թվականի մարտը ականատեսները շփոթել են մեղադրյալներին և այնպես ահաբեկված են եղել, որ հրաժարվել են ցուցմունքներ տալուց: Քանի՜-քանի հոգի քննիչին ուղղակի ասել են. «Եթե իմանայինք, որ վկայություն տալու համար եք մեզ կանչում, չէինք գա»: Չարմանալիորեն, նույն խոստովանությունը տուժողը՝ պարոն Բալթասոյլուն է անում. «Ես չեմ ուզում վկայություն տալ ո՛չ մարտախմբի, ոչ էլ հյուպատոսարանի անձնակազմի դեմ»: Ուշագրավ է նաև, որ գրոհայիններին շատ լավ ծանոթ է հյուպատոսարանի ներքին տարածքը, նրանք այնպիսի մանրամասնություններ գիտեն, որ նույնիսկ այստեղ ներկայացված գծագրում պատկերված չեն: Հյուպատոսարան ոտք դնելուն պես

-- էջ 247 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Նրանք ուղիղ դեպի վարչական սրահն են գնացել, որովհետև իմացել են, որ ամենից շատ ծառայող սովորաբար այնտեղ է լինում:

Ահա՛ թե ինչու անհամոզեցուցիչ է թվում այստեղ հնչած այն վարկածը, որ Գյուզեյանը կամքից անկախ, առանց ուզելու է մարդ սպանել: Իմ կարծիքով նա,

անառարկելիորեն, կանխամտածված սպանություն է գործել, մանավանդ հենց ինքն է խոստովանել, որ ատրճանակը սեղմել է զոհի քունքին, ձգանք քաշել: Մեղադրյալի հանցանքը ամենևին չի մեղմում այն իրողությունը, որ, ինչպես ինքն է նկարագրում՝ «...Մենք քաշքշում էինք իրար... Նա նույնպես ձեռքին զենք ուներ...»:

Կարծում եմ՝ ներկայացված փաստերը բավական են համոզվելու համար, որ ինքնապաշտպանության մասին խոսք չի կարող լինել: Գյուլգեյանը, հենց որ առաջին առիթը ներկայացել է, կրակ է բացել, չնայած իր կյանքին անմիջական վտանգ չեն սպառնացել, հսկիչ-պահապանը զինված չի եղել:

Հարգելի տիկնայք և պարոնայք երդվյալներ, այդ սպանությունը հյուպատոսարանի գրոհի ամենածանր հանցանքն է, որը, կարծում եմ, ձեզ անտարբեր չի թողնի: Ինքնապաշտպանության վարկածը ներկայացրել է նաև Ջուլֆայանը, ընդ որում՝ անհամեմատ մեծ հույսով, քանի որ, ճիշտ է, նա մեղադրվում է սպանելու փորձ կատարելու մեջ, բայց հայտնի է, որ առաջինը կրակել է հյուպատոսը: Վերջինս, նախասենյակում հրացանաձգության ձայներ լսելով, չէր կարող չվախենալ: Եվ իրոք, վախեցել, շտապել է պահարանից վերցնել զենքը, բայց անմիջապես չի գործադրել, որովհետև դռները կողպված, աթոռներով պատնեշված են եղել: Հյուպատոսարանի ձախ մասում գտնվող պաշտոնյաները, պատուհանով են կարողացել Գուրսել փողոցն իջնել, փախչել: Պահն, իրոք, ճակատագրական է եղել: Հյուպատոսը մի ակնթարթում չէր կարող չհիշել նախորդ նման դեպքերը, բազմաթիվ թուրք դիվանագետների՝ հայ գրոհայինների թիրախ դառնալը: Նրան թվացել է, թե նույն ճակատագիրն իրեն է սպասում, այնպես որ, եթե մինչև անգամ առաջինն է կրակել, ինքնապաշտպանության բնագործ է առաջնորդվել: Կարծում եմ՝ հյուպատոսի հոգեվիճակը դժվար չէ պատկերացնել, մանավանդ որ, ինչպես պարոն Ջուլֆայանն էլ

-- էջ 248 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

վկայեց, նրա առանձնասենյակը լավ լուսավորված էր: Պատկերացրե՛ք, թուրք դիվանագետը մենակ է, ամեն կողմից կրակոցների, փախչողների ոտնաձայներ են լսվում, ինչ-որ մեկը մոտենում, քաշում է դռան բռնակը, և ինքը կրակում է, այո՛, թերևս կրակում է առաջինը: Անշուշտ, հյուպատոսը ներս խուժող գրոհայինի, տվյալ դեպքում՝ Ջուլֆայանի վրա ի վիճակի չէր երկար նշան բռնել, նա կրակում է մեկ, թե երկու անգամ և իր բախտից, նաև, իհարկե, Ջուլֆայանի բախտից, գնդակը դիպչում է գրոհայինի մարտական զենքին: Պարկուճի հետքը մինչև հիմա պահպանվել է, փորձաքննությունը փաստը հաստատել է: Նույնը կարելի է շողանկարման արդյունքների մասին ասել, որոնք վկայում են, որ Ջուլֆայանի մարմինը խոցել են արճճի մանր բեկորներ, վիրավորվել է նաև աջ ձեռքի բթամատը, հենց այն մասը, որով բռնել է իր զենքը: Նկատի ունեցե՛ք, հյուպատոսարանի այդ մասում գտնվել են թուրք դիվանագետի կրակած երկու պարկուճները՝ Կալաշնիկովի տասնհինգ պարկուճի դիմաց: Ուրեմն, ո՛չ մի

կասկած չի կարող լինել, որ Ջուլֆայանը կրակահերթ է բաց թողել, չիմանալով հանդերձ, թե ով կա սենյակի ներսում: Մասնագետները բացատրեցին ինձ, որ գրոհայինը կարող էր շնիկը սեղմել և ամբողջ պահունակը կրակել: Ահա՛ այդ գնդակներից մեկն է դիպել հյուպատոսի ձախ անրակին, նա կքել է, բայց կրակահերթը շարունակվել է: Դա են հաստատում այդ նույն սենյակի միջանցիկ պատի, գորգի վրայի հետքերը: Նշանակում է՝ գրոհայինը փոխհրածգուլթյունը երկարաձգելու ցանկություն է ունեցել:

Նույն ցանկությունը, ավելի ճիշտ կլիներ ասել՝ մղումը, ի հայտ է բերել երրորդ գրոհայինը՝ պարոն Սիսյանը, որը մեղադրվում է գենքը հանելու, ոստիկան Բլոնդեի վրա կրակելու մեջ: Սա, ընդունենք, գրոհի հակասական դրվագներից է, այն իմաստով, որ, ըստ Սիսյանի, ինքը վիրավորվելուց հետո է գենքի դիմել, և եթե իմանար, որ դիմացինը ֆրանսիացի ոստիկան է, չէր կրակի: «Նա քաղաքացիական հագուստներով էր,- բառացի ասել է Սիսյան նր,- թե կապն էլ չէր կապել, այլապես ինչո՞ւ պիտի կրակեի, ի՞նչ գործ ունեի ֆրանսիացիների հետ»: Ինձ չի թվում, իհարկե, որ նույնիսկ գաղտնի ոստիկանները, նման վտանգավոր գործողության մասնակցելիս, տարբերանշան -

-- էջ 249 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ները, թեկուզ անձնական անվտանգության առումով, ի ցույց չեն դնում, բայց շարունակենք:

Երրորդ մեղադրյալը քննիչներին տարբեր ժամանակ տարբեր՝ հաճախ հակասական ցուցմունքներ է տվել, իրեն ներկայացված գծագրերի վրա ճշգրիտ չի կարողացել նշել և, ի վերջո, 1983 թվականի մարտին, Բլոնդեի հետ վերջին ամերեսման ժամանակ պնդել է. «Ես զգացի, որ վիրավորված եմ և ինչպես հենց նոր ցույց տվեցի գծագրի վրա, մի կերպ թաքնվեցի այն դռան հետևում, որը թիվ մեկ միջանցքը բաժանում է վարչական նիստերի սրահից: Հենց այդ պահին էլ, նկատելով, թե ինչպես մի տղամարդ անձնագրային բաժանմունքում ծնկի է իջել, նշանառության դիրք գրավել, երեք անգամ կրակեցի»: Սիսյանը պնդում է նաև, որ ինքը նշան չի բռնել, օդ է կրակել, և դա կարծես թե այդպես է, քանի որ գնդակներից մեկը, ըստ հետքերի, դիպել է առաստաղին, երկրորդը 1 մետր 38 սանտիմետր բարձրության վրա՝ պահարանին, երրորդը՝ մոտավորապես 1 մետր 80 սանտիմետր բարձրություն ունեցող պատուհանի ապակիներին, որոնք փշրվել են: Սակայն հետաքրքիրը դա չէ, պարոնայք երդվյալնե՛ր, այլ այն, որ երեք գնդակները արձակվել են, ճիշտ է, միևնույն Բրաունինգ ատրճանակից, բայց բոլորովին տարբեր կողմերից: Այս հանգամանքը մեզ հիմք է տալիս կասկածելու նրա վկայությունների վրա, միակ փաստը, որ վիճահարույց չէ, այն է, որ վիրավորվել է անրակից, ճիշտ այնպես, ինչպես պարոն Ինալը, երբ կքել ու նշան է բռնել: Ուստի, միանշանակ պետք է հետևցնել, որ կրակելու է նախապատրաստվել նաև Սիսյանը, այլ կերպ ասած, պարոն Բլոնդեն իրավացի է, երբ պնդում է, որ

գրոհայինն իր վրա նշան է բռնած եղել, ուղղակի առաջինն ինքն է հասցրել կրակել: Այլ կերպ դժվար էլ է վարվել այն անձնավորության նկատմամբ, որը, հասկանալի է, եթե ներխուժել է հյուպատոսարան, ուրեմն պատրաստ է եղել նաև ծայրահեղ քայլերի դիմելու:

Ծայրահեղ քայլերի դիմելու պատրաստ է եղել նաև վերջին մեղադրյալը՝ պարոն Բասմաջյանը, որը ջանում է աննկատ մնալ այս դատավարության ընթացքում: Ճիշտ է, դատական գործում նա համեմատաբար փոքր տեղ է զբաղեցնում՝ այն իմաստով, որ արյուն չի հեղել, բայց դա չի նշանակում, որ գրոհի ընթացքում

-- էջ 250 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

Եական դեր չի խաղացել: Պատանդներից շատերը վկայում են, որ ամենից ավելի նրանից են վախեցել, որովհետև հյուպատոսարան մտնելուն պես հանել է նռնակը, բազմաթիվ զենքեր է կրել ու մի ուսանողի անգլերեն խոստովանել է, որ ինքն է կրակել առաստաղին: Ո՛վ գիտե, թերևս ոչ միայն առաստաղին: Ի վերջո Սիսյանի վիրավորվելուց հետո Բասմաջյանն է Կալաշնիկովը ձեռքին թիվ մեկ միջանցքով հետ-առաջ գնացել, հսկել մուտքն ու պատանդներին: Այլ կերպ ասած՝ նրա մասնակցությունը արհամարիտի չի կարելի համարել, մանավանդ այնպիսի մարտական գործողության ընթացքում, ուր ամեն ոք իր պարտականություններն ու առաջադրանքներն է ունեցել:

Կուզեի վերջում հիշեցնել, որ գրոհայինները այն բոլոր զենքերը, որոնք կարող էին գործածել, գործածել են, և եթե նկատի ունենանք Կալաշնիկովի կրակահերթը, պարկուճների հետքերը հյուպատոսարանի առաստաղին, պատերին ու դռներին, պիտի վերջնականապես ընդունենք, որ խաղաղ գործողության մասին խոսք անգամ չի կարող լինել: Ավելին, պատկերացնելով հյուպատոսարանում ստեղծված վիճակը, հաստատ կարելի է պնդել, որ չորսն էլ անհամեմատ դաժան են ձգտել երևալ, քան ըստ երևույթին եղել են իրականում:

Այս ամենը, տիկնայք և պարոնայք երդվյալներ, ձեզ, կարծում եմ, անխուսափելիորեն կհամոզի, որ թուրքական հյուպատոսարանում բռնություն է գործադրվել: Ես սա ասում եմ նկատի ունենալով հանդերձ գրոհայինների պաշտպանության հիմնական կռվանը՝ գործողության քաղաքական բնույթը, ինչպես կոչում են իրենք, իրենց ժողովրդի արյունոտ անցյալը, որը ոգեկոչեցին ուրբաթ օրվա ձեր վկաները: Իհարկե, ո՛չ ոք իրավասու է մոռանալ կամ խեղաթյուրել այն, ինչ արձանագրում է պատմությունը, սակայն որևէ նպատակի նվիրյալ, ինչքան էլ այդ նպատակը վսեմ լինի, իրավունք չունի չհարգել ուրիշների՝ եթե ոչ համոզմունքները, ապա գոնե՝ կյանքը: Ակնհայտ է, որ, ինչպես նշեցին ինձնից առաջ, չի կարելի անձնապես, ֆիզիկապես մեղադրել այն մարդկանց, ովքեր բոլորովին այլ սերնդի ներկայացուցիչներ են, խնդրո առարկա դեպքերի

ժամանակ ծնված էլ չեն եղել: Ուղղակի եմ խոստովանում՝ ինձ անտրամաբանական է թվում, որ 1915 թվականի իրադարձության մեղավորներին

-- էջ 251 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ուղղված գնդակները դիպչում են քսանհինգ, երեսուն տարի հետո ծնվածներին, որոնք իրենց երկրում այժմ կատարվող սման հանցանքների համար անգամ մեղավոր չեն: Այդպիսի մարդկանց քավության նոխազ դարձնելը ոչ միայն անընդունելի, այլև դատապարտելի է:

Արդարադատությունը առավել ևս չի կարող համակերպվել այն հետևության հետ, որով այստեղ հանդես եկավ վկաներից մեկը՝ հայտարարելով, թե բռնությունը վերջապես տվել է իր պտուղները:

Հյուպատոսարանի բռնազավթման «քաղաքական» պիտակը չորս մեղադրյալներին չի կարող ազատել պատժից ու պատասխանատվությունից, թերևս նրանց ընձեռի այն փոքր առավելությունը, որին հացադուլ հայտարարելով հասել են նրանք՝ ձեռք բերելով առանձին բանտախցի, օրական չորս ժամ տեսնվելու իրավունք, բանտի զրուցարանում ցանկացած այցելուի, այդ թվում նաև փաստաբանի հետ ազատ հանդիպելու հնարավորություն:

Այս ամենը նկատի ունենալով, տիկնայք և պարոնայք երդվյալներ՝, ես առաջինն եմ ուզում հայտարարել, որ դատապարտության պատժաչափը որոշելիս որպես հիմք պիտի ընդունել հինգ տարվա բանտարգելությունը: Սա այն նվազագույնն է, որ տրվում է բացեիբաց պատանդ վերցնելու, բռնության, ժամեր շարունակ բազմաթիվ անմեղ մարդկանց մեկուսացնելու, մահվան սպառնալիքի համար՝ հանցանքներ, որոնք վերջնականապես ապացուցված են, որոնց պատասխանատվությունը իրենք՝ մեղադրյալներն էլ են ընդունել:

Հինգ տարվա բանտարգելությունն ես պահանջում եմ Արամ Բասմաջյանի համար, Սիսյանը և Ջուլֆայանը հանցանքը ծանրացնող քայլեր շատ են կատարել՝ նրանց պատիժը կարող եք հասցնել յոթը տարվա: Ինչ վերաբերում է Գյուլգեյանին, նրա նկատմամբ պետք է բոլորովին այլ մոտեցում ցուցաբերել: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ամենայն սառնասրտությամբ կրակ է բացել անզեն մարդու վրա, անհրաժեշտ է ավելի ծանր պատիժ սահմանել՝ տասը տարվա կալանքի դատապարտել:

Դո՛ւք, տիկնայք և պարոնայք երդվյալներ, հասկանալի է, որ

-- էջ 252 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Խորհրդածելու հնարավորություն դեռ կունենաք, բայց չպետք է մոռանաք, որ ավելի թեթև պատիժ սահմանելը նշանակում է նման բռնությունների խթան հանդիսանալ: Որքան էլ փորձենք ըմբռնումով մոտենալ հայերի ազգային ողբերգությանը, նրանց համակած վշտին, չենք կարող ընդունել, որ իրենց մասին խոսել տալու, իրենց գոյությունը հաստատելու համար բռնությունից բացի այլ միջոցներ չկան, բռնություն, որն անհանդուրժելի է մեր երկրում:

Ձեր խոսքը վերջինն է լինելու, տիկնայք և պարոնայք երդվյալներ, ձեր խոսքին սպասելու են բոլորը: Կկարողանա՞ք դատավճռով հասկանալի դառնալ, հասկացնել, որ ձեր պարտականությունը վրեժխնդրությունն ու ատելությունը մերժելն է:

Ահա՛ միակ նպատակը, որին դուք պիտի ձգտեք:

Հայտարարվում է ընդմիջում:

Նիստը վերսկսվում է:

ՆԱԽԱԳԱՀ - Պաշտպան Ասլանյան, նախքան խոսքը ձեզ տալը, ուզում եմ հրապարակել երկու նոր հեռագիր: Առաջինի բովանդակությունը հետևյալն է. «Մենք՝ Արտասահմանի կանանց հետ համերաշխության ընկերակցության անդամներս, բռնարարքի զոհերի այրիների ու որբերի հետ մեծ հուզումով ենք հետևում չորս հայ ահաբեկիչների փարիզյան դատավարությանը: Չնայած այդ բառը ձեզ դուր չի գալիս, բայց այլ կերպ հնարավոր չէ կոչել նրանց, ովքեր գրոհով հյուպատոսարան են գրավում, անմեղ այցելուների պատանդ վերցնում, սառնասրտությամբ անգեն մարդու են սպանում:

Հուսով ենք՝ դատարանի որոշումը ոչ թե կխրախուսի, այլ կդիմագրավի ահաբեկչությունը, որի զոհերն են դառնում թե՛ թուրքերը և թե՛ ֆրանսիացիները: Նրանք, ովքեր պաշտպանում են ոճրագործներին, թող չմոռանան, որ իրենց խղճի վրա է ծանրանում կատարված, կատարվելիք հանցագործությունների պատասխանատվությունը:

Ձեմալ Էոզենի այրին և երկու որբերը ձեզնից միմիայն արդարություն են ակնկալում: Խնդրում ենք դատավարության ընթացքում հրապարակել այս հեռագիրը և կցել գործին»:

-- էջ 253 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ստացված հաշորդ հեռագիրն Անկարայից է.

«Խնդրում եմ դատավարության ժամանակ կարդալ այս հայտարարությունը.

1. Ինչպիսին էլ լինի ոճիրը, ինչ նպատակով և ում դեմ էլ կատարված լինի, արդարության, անաչառության և անկողմնակալության պայմաններում ընթացող դատավարությունը օգտակար կդառնա ոչ միայն այն երկրին, ուր տեղի է ունենում, այլև ամբողջ աշխարհի արդարադատությանը:

2. Դատավարությունից առաջ, դատավարության ընթացքում շատ-շատերի դիրքորոշումները հակասում են վերոհիշյալ մարդասիրական սկզբունքներին, վիրավորում են ամեն մի քաղաքակիրթ անձնավորության մարդասիրական զգացումները:

3. Ֆրանսիական օրենսդրությունը արգելում է ընթացող դատավարության վրա ներգործելու ամեն փորձ, գրավոր կամ բանավոր միջամտություն:

4. Մինչդեռ Ֆրանսիայի Հանրապետության Նախագահ պարոն Ֆրանսուա Միտերանը դատավարությունից առաջ ելույթ ունենալով Վիենում, կատարված ոճրագործությանը քաղաքական բնույթ տվեց և խախտեց օրենսդրության պայմանները:

5. Ֆրանսիական լրատվամիջոցների, հեռատեսիլի և ձայնասփյուռքի մեծ մասը, Նախագահ Միտերանի պես, քաղաքական երանգ է հաղորդում այն քրեական հանցագործություններին, որոնք հայկական որոշ մարտախմբեր գործադրում են թուրք քաղաքացիների նկատմամբ:

6. Նման մոտեցման նպատակը միտումնավոր կերպով ատյանի, դատավորի, երդվյալների, վկաների, փորձագետների, ինչպես նաև ֆրանսիական հասարակական կարծիքի վրա ներագդելն է:

7. Դատարանում նույնպես փորձ է արվում քաղաքական բովանդակություն հաղորդել քրեական հանցագործությանը: Թվում է, ատյանն անգամ ձգտում է ոչ թե կատարված ոճիրը դատել, այլ՝ Օսմանյան կայսրությանը վերագրվող իրադարձությունները:

Հաճեցեք ընդունել, պարոն Նախագահ, իմ անկեղծ զգացմունքների հավաստիքը»:

Հեռագի ըր մեզ է հղված Անկարայի համալսարանից: Ես հեղինակի խղճին եմ թողնում արտահայտած մտքերի պատասխա -

-- էջ 254 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

Նատվությունը:

Ձայնը տրվում է պաշտպան Էմիլ Ասլանյանին:

ՊԱՇՏՊԱՆ ԱՍԼԱՆՅԱՆ - Պարոն նախագահ, պարոնայք պաշտոնակիցներ, տիկնայք և պարոնայք երդվյալներ, շա՞տ կգարմացնեմ ձեզ, եթե ասեմ, որ քաղաքացիական հայցի իմ գործընկերների և պարոն ընդհանուր պաշտպանի ճառերն ինձ վշտացրին:

Այժմ, երբ դատավարությունն ավարտվում է, երբ ձեր գիտակցությունն ու խիղճը վճիռ պիտի կայացնեն այն ամենի նկատմամբ, ինչը ձեզ զբաղեցնում էր մի ամբողջ շաբաթ, ինչը

չափազանց ծանր բեռ էր, իմ հերթին դժվարությամբ եմ հանդես գալիս ձեր առջև: Միաժամանակ, փաստաբանի իմ պատասխանատվությունը ինձ ստիպում է հաղթահարել ներքին խռովքս:

Այն պահին, երբ հայերի ներկայությունը մի կերպ են հանդուրժում Թուրքիայում, որտեղ հարյուր հիսուն հազարից ավելի մարդ ապրում է վախով, զրկանքներով, այստեղ ձեզ ուզում են հավատացնել, որ նրանց վիճակը լավագույնս է աշխարհում: Քաղաքացիական հայցվորները նման պնդման համար հիմք են ընդունում պարոն Գևորգյանի ելույթը, որը հանդես եկավ որպես Ստամբուլի հայ համայնքի ներկայացուցիչ: Նա առանց քաշվելու, կարևոր առաքելություն կատարողի ակնհայտ գոհունակությամբ Ֆրանսիա է եկել՝ վկայելու համար, թե Թուրքիայում հայերն իբր լիիրավ քաղաքացիներ են, հանգիստ են, ապահով, ոչ մի ճնշման չեն ենթարկվում, մի խոսքով՝ իրենց տանն են զգում: Իր ասածները հաստատելու համար, քաղաքացիական հայցի այս վկան մասնավորապես շեշտեց. «Մենք երկու օրաթերթ ունենք, մշակութային կյանքը շարունակում ենք...»: Պարոն Բողդյուն, փաստաբանապետը, հենվելով այդ հայտարարության վրա, նույնիսկ այդ լրագրերից մեկը՝ «Ժամանակը» հիշատակեց: Թող այդպես լինի: Իմ ձեռքին է 1980 թվականին «Ժամանակ» օրաթերթի հրատարակած մի գրքուկը, որի քարոզչական բնույթն ակնհայտ է: Այն պարունակում է թուրքական կառավարության մոտ տասը սպասարկուների անգլերեն, ֆրանսերեն և թուրքերեն հայտարարությունները, որոնք թվում և, հասկանալի է, պարոն Գևորգյանին: Թույլ տվեք միայն մի հատված ընթերցել.

-- էջ 255 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

«Թող անիծվե՛ն այն ձեռքերը, որոնք դավադրորեն կրակում են: Անիծվե՛ն այն ձեռքերը, որոնք նենգամտաբար գետնում են արտասահմանի թուրք ներկայացուցիչներին: Անիծվե՛ն նրանք, ովքեր վշտացնում են Թուրքիայի հայերին՝ քաղաքացիական բոլոր իրավունքները վայելող մի ամբողջ համայնքի: Անիծվե՛ն խառնակության այն օջախները, որոնք չեն ընդունում Աթաթուրքի

սերնդի մարդասիրությունն ու քաղաքացիական սկզբունքները: Անիծվե՛ն նրանք, ովքեր համբերությունից հանում են թուրքերին, գրգռում թուրքական հասարակական կարծիքը»:

Ահա՛ «Ժամանակի» մի ուրիշ փայլատակում, մի իսկական գոհար, որի հեղինակը Ստամբուլի ոսկերիչների ընկերակցության նախագահ ոմն Տիրան Սենն է, նույնպես թուրքիայի հայ, ուզում էի ասել՝ թուրքացած հայ, որն այդ քայլին դիմել է հասկանալի դրդապատճառներով, հանուն թուրքերի դատի վերհիշել է իր հայ լինելն ու տարակուսանքը հայտնել ցեղասպանությունը վկայակոչող հայերի հանդեպ: Լսեցե՛ք, թե ինչպիսի ձևակերպումներով է նա արտահայտվում. «Կատարյալ հիմարություն է այն, որ թուրքիայից դուրս ապրող՝ հույների կողմից հրահրվող հայերը պատմության բորբոսնած էջերը շրջելով, անցյալը վկայակոչելու քայլեր են ձեռնարկում: Եթե թուրքիայում գտնվի գեթ մի հայ, որ ցանկանա նման կազմակերպություն ստեղծել, առաջինը ինքս նրան իմ սեփական ձեռքերով կխեղդեմ: Մենք այստեղ չափազանց երջանիկ ու ազատ ենք»:

Երբ որևէ ազգ նահատակվում է, հալածվում, միշտ էլ իրականությունը խեղաթյուրող, աղավաղող Գևորգյաններ է ծնում, բայց ծնում է նաև Վազգեններ, Գևորգներ, Արամներ և Հակոբներ, որոնք ընդվզում, պայքարի են ելնում: Քառասուն տարի հետ դառնանք, հիշենք գերմանական բռնազավթման ենթարկված Ֆրանսիան ու ֆրանսիացիներին:

Այս անդրադարձից հետո ես իմ զարմանքն ու որոշակի դառնությունը պիտի արտահայտեմ այն բանի համար, որ փաստաբանապետ Բողըլուն մինչև վերջերս, այսինքն քաղաքացիական հայցի շահերի պաշտպանությունն ստանձնելը, գաղափար չի ունեցել Հայաստանի փառավոր անցյալի, ողբերգական ճակատագրի և Հայկական հարցի մասին, որն արդեն քանի տասնյակ

-- էջ 256 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

տարի ընկած է մարդկության խղճին: Հարկ կա՞, որ անդրադառնամ հինգերորդ դարում իր ոսկեդարին հասած հայ գրականությանը, ցեղասպանության ողբերգությանը և գերիզոր տերությունների անտարբերությանը, որը բելգիացի մի հասարակագետի ստիպեց խոստովանել. «Այսուհետև ո՛չ մի արևմտյան քաղաքական գործիչ առանց ամաչելու չի համարձակվի նայել որևէ հայի դեմքի»:

Այո՛, ցավում եմ, որ փաստաբանապետ Բողըլոյի նման մտավորականը անտեղյակ է այս ամենին, կրկնակի ցավալի է, սակայն, որ այդ բացը լրացնելու համար նա միայն մեկ, ընդ որում՝ ոչ թե պատմաբանի, այլ զինվորական կցորդի գիրք է ընթերցել: Մինչդեռ ֆրանսիական գրականությունը հարուստ է բազում ուշագրավ, անկողմնակալ ուսումնասիրություններով: Վկայակոչեմ միայն մեկը՝ Ռընե Պինոնի, դեռևս 1916 թվականին լույս տեսած, «Հայերի բնաջնջումը» գիրքը,

որը շատ խորհրդանշական՝ «Գերմանական մեթոդ, թուրքական իրագործում» ենթավերնագիրն ունի: Եվ քանի որ դատապարտյալներն իրենց գործողությունը «Վան» են կոչել՝ ի հիշատակ 1915-ին Վան քաղաքի մեծամասնությունը կազմող հայերի հերոսական դիմադրության, թույլ տվեք միայն մի պարբերություն ընթերցել Պիևնոնի գրքի՝ այդ հերոսամարտին վերաբերող գլխից. «Հայաստանով մեկ սկսվեցին ջարդերը: Որոշ բնակավայրերում տարերային պաշտպանություն առաջացավ: Վանում, հայերը, իմանալով մոտեցող թուրքական զորամիավորումների մասին, որոնք ճանապարհին այրում էին գյուղերն ու կոտորում բնակիչներին, զինվեցին և մինչև ռուսների հասնելը հերոսաբար հետ մղեցին թուրքական հարձակումները: Մի քանի օր մնալուց հետո ռուսները նահանջեցին, և ամբողջ հայ ազգաբնակչությունը նրանց հետ տեղահանվեց: Մոտ երկու հարյուր հիսուն հազար հոգի ծվարեցին Էջմիածնի վանքի շուրջը, որտեղ Կովկասի հայերն ու ռուսները նրանց օգնության հասան»:

Միանշանակ կարելի է ասել, որ Վանի ապստամբությունը հաջողությամբ է պսակվել: «Վան» գործողությունը նույնպես, քանի որ, ըստ պարոն ընդհանուր պաշտպանի արտահայտության՝ «ամբողջ աշխարհում հետաքրքրություն է առաջացրել, կրքեր հարուցել»:

-- էջ 257 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հիրավի, ինչպե՞ս չընդունել, որ ի վերջո Հայկական հարցը հրատապ է դարձել ոչ թե ճշմարտությունը բացահայտելու, արդարությունը վերականգնելու, տասնյակ տարիների անտարբերությունից հետո մի ամբողջ ժողովրդի օգնություն հայցող ճիչը լսելու, այլ չորս երիտասարդ հայերի պատճառով, որոնք անձնասպանական խումբ կազմեցին և 1981 թվականի սեպտեմբերի 24-ի իրենց գործողությամբ վերարձարծեցին Հայկական հարցը, արդիականության լույսերը բւեռեցին վրան:

Ինչո՞ւ, ուրեմն, պարոն ընդհանուր պաշտպան, ընդունելով հանդերձ, իրավացիորեն անշուշտ, որ գործողությունը «ամբողջ աշխարհում հետաքրքրություն է առաջացրել, կրքեր հարուցել», հարկ համարեցիք ավելացնել, որ մեղադրյալների ձեռնարկը հաջողությամբ չի պսակվել: Ձեր ձևակերպումներում հակասություն չկա՞: Նման մի շարք այլ արտահայտություններ չէին կարող չխռովել ինձ: Այնտեղ, որտեղ պետք էր խոսել ընդվզման, արդարության հուսահատ ձգտման մասին՝ խոսեցիք ատելության և վրեժխնդրության մասին: Միաժամանակ, դուք տղաների գործողությանը վերագրում եք «խիստ մարդկային դրդապատճառներ»: Որո՞նք են այդ «դրդապատճառները», եթե ոչ ցեղասպանության ենթարկված հայ ժողովուրդը, որի անտեսանելի ստվերը դատավարության ամբողջ ընթացքում ծանրացած էր այս սրահի վրա: Ցավոք, դուք «ցեղասպանություն» բառը չակերտներով գործածելու հնարամտությունն ունեցաք: Չե՞ք կարծում, որ հենց այդ նույն «ցեղասպանություն» բառը տասնյակ տարիներ չակերտներով գործածելու

պատճառով է, որ չորս երիտասարդ հայերը դիմել են այն քայլին, որի գնահատականը պիտի տանք մենք:

Խոստովանում եմ, պարոն ընդհանուր պաշտպան, ես չեի կարծում, որ դուք քննվող գործը չենթադրվող ուղղությամբ կտանեք, ճիշտ հակառակը, հակված էի հավատալու, որ կընկալեք նրա առանձնահատուկ, ողբերգական բնույթը, այդ տեսանկյունով կներկայացնեք: Մինչդեռ ձեր ճառը այն տպավորությունն ստեղծեց, որ քննարկվում է մի սովորական քրեական՝ փոխիրաձգությամբ սկսված ու վիրավորներով, զոհով ավարտված գործ:

Այո՛, տիկնայք և պարոնայք երդվյալներ, այս գործը մղում

-- էջ 258 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Է, պիտի մղի մտահոգիչ եզրահանգումների, քանի որ արտացոլում է մեր դարաշրջանի հավակնությունները, գործառույթությունները, թողտվությունները, փոխգիշտումները, ուստի իմ գործընկերներն ու ես այնպիսի մարդկանց պաշտպանելու գիտակցությունն ունենք, որոնց արարքը, որքան էլ քրեական համարվի, անձնասպանական է: Փաստ է, որ չորսից ոչ մեկը հույս չի ունեցել հյուպատոսարանից կենդանի ելնել: Նրանք նման ծայրահեղ քայլի են դիմել՝ իրենց հասու միջոցներով աշխարհին հիշեցնելու համար, որ, ինչպես մեծ մարդասեր ժան ժորեսն է հայկական կոտորածների կապակցությամբ ասել՝ « Մենք հասել ենք այնպիսի ժամանակների, երբ մարդկությունն այլևս չի կարող ապրել իր նկուղում գտնվող խողխողված ժողովրդի դիակով» *:

Նրանք այդ քայլին դիմել են հիշեցնելու համար նաև, որ Թուրքիան չի կարող այդքան երկար՝ անխիղճ ու անպատիժ պարել հայերի ոսկորների վրա՝ ոսկորներ, որոնք շիրմաթումբ չունեցան և թերևս նաև այդ պատճառով ընդմիշտ կառչած մնացին իրենց բևորանին: Այնքան ամուր, որ վերջերս, Էրզրումի շրջանում տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ ահաբեկված գյուղացիները վերհիշել են հայտնի ասույթը. «Փախե՛ք, հայերի ոսկորներն են զարթնում»: Իսկ սա նշանակում է, անառարկելիորեն նշանակում է, որ չնայած 1915-ից ի վեր Թուրքիայի կառավարությունների գործադրած ջանքերին, ոչ ոք չի կարողացել մարդկային հիշողությունից ջնջել այն ժամանակները, երբ Հայաստանի հողը ողողված էր իր իսկ զավակների արյամբ, և թուրք ժողովուրդը մինչև հիմա ահով ու սարսափով սպասում է վերահաս արդարությանը, արարչական պատժին:

Այո՛, տիկնայք և պարոնայք երդվյալներ, դրանով է բացատրվում լսվող գործի առանձնահատկությունը, ողբերգական բնույթը: Չորս տղաների գործողությունը այլ կերպ մեկնաբանել, նշանակում է շեղվել ճշմարտությունից:

Դրանում համոզվելու համար մի անգամ ևս թռուցիկ վերհիշենք, թե ինչ տեղի ունեցավ Հոսման պողոտայում 1981 թվականի սեպտեմբերի 24-ին:

... ժամը ուղիղ 15-ն է, երեք ու կես ժամ է արդեն, որ շարունակվում է հյուպատոսարանի գրավումը: Իրավապահ ուժերը շրջափակել են թաղամասը, մարտախմբի հետ ուղիղ հեռախոս –

* Տե՛ս ժան ժորես - «Պետք է փրկել հայերին», «Նահապետ» իրատ., Երևան, 2009 թ., ֆրանս. թարգմ.՝ Գր. Ջանիկյանի:

-- էջ 259 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

սային կապ հաստատել: Ուղեփակոցների հետևում խմբված ամբոխը հետզհետե ավելի ու ավելի է ստվարանում: Մեծ թիվ են կազմում լրագրողները: Երկու անգամ հյուպատոսարանի պատուհանից գրոհայինները ցած են նետում իրենց հայտարարագիրը, և ամենքն իմանում են, որ նրանց պահանջներն ուղղված են թուրքական կառավարությանը: Ընդ որում՝ դա տեղեկատվության արդի միջոցների շնորհիվ իսկույն ևեթ հայտնի է դառնում միջազգային հանրությանը, հենց իրենց՝ պատանդներին, որոնք գործողությունն սկսվելուն պես անվտանգության երաշխիքներ են ստանում: Մարտախմբի անդամները պատանդներից մինչև իսկ ներողություն են խնդրում, որ պահանջների հատուցում ստանալու համար ստիպված են եղել նման միջոցի դիմել: Եվ հյուպատոսարանում գտնվողները շատ շուտ զգում են, որ չդիմակալորված հայ երիտասարդներն իրականում մարդկային դեմք ունեն:

Դրանում համոզվելու համար բավական է հիշել պատանդների հայտարարությունները, որոնք կատարվել են ոստիկանատանը՝ ազատ արձակվելուն պես: Տիկին ժոսելին ժերմեն՝ հյուպատոսարանի, ազգությամբ ֆրանսիացի, քարտուղարուհի. «Ժամը 12-ը, 12-ն անց 30 րոպեն կլիներ: Նրանք մեզ սկսեցին բացատրել իրենց գործողության պատճառները, ներողություն խնդրեցին, որ նման միջոցի են դիմել: Ասում էին, որ պահանջում են Թուրքիայում ձերբակալված երկու քահանայի և հինգ քուրդ իրավապաշտպանի ազատ արձակու մը: Միաժամանակ, թուրքական կառավարությանն ուզում էին ստիպել, որ հարգի Թուրքիայում բնակվող հայերի մշակութային ու կրոնական ինքնուրույնությունը: Այս պահանջները մեքենագրված էին երկու թղթի վրա, որոնցից մեկը ես կարդա ցի բարձրաձայն, մյուսը՝ պատուհանից նետեցին փողոց»:

Պարոն Մեհմեդ Աթաշայ՝ հյուպատոսարանի կցորդ. «Հենց սկզբից գրոհայինները չթաքցրին իրենց ներխուժման պատճառներն ու հետապնդած նպատակը: Այնուհետև, մինչև մեր ազատ

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

արձակվելը, նրանք գնում ու գալիս, բանակցություններ էին վարում, մեզ չէին նեղացնում»:

Տիկին Դավթյան. «Նրանք ներկայացան որպես հայկական մարտախմբի անդամներ և հասկացրին, որ մեզ ոչ մի վտանգ չի սպառնում: Ո՛չ կանանց, ոչ էլ տղամարդկանց չէին կոպտում, բարյացակամ էին բոլորի նկատմամբ»:

Պարոն ընդհանուր պաշտպանը, անդրադառնալով այս հայտարարությանը, հարկ համարեց շեշտել տիկին Դավթյանի հայ լինելը: Ես դիտմամբ այդքան մեջբերում կատարեցի, պարզաբանելու համար, որ նրա տպավորությունը ոչնչով չի տարբերվում մյուս ազգերի վկաների տպավորություններից:

Պարոն Կոնարը, որը, հասկանալի է, հայ չէ, ավելին է ասում. «Երիտասարդ մարտիկները առաջին իսկ հայացքից ջղագրգիռ, նյարդային չթվացին: Հեռանալուց առաջ նրանք հրաժեշտ տվեցին մեզ, ներողություն խնդրեցին»: Իսկ տիկին Ալինգը, որը թրքուհի է, հարկ է համարում այսպես ավարտել իր խոսքը. «Չնայած թուրքական կառավարությունը ազատ չարձակեց քաղաքական բանտարկյալներին, մարտախումբը իր սպառնալիքը չիրագործեց»: Նրա ուշադրությունը գրավել է նաև այն, որ «...հայ գրոհայինները հավատ ունեին ֆրանսիացի ոստիկանների նկատմամբ և ամենևին կասկած չարտահայտեցին, երբ ներքևից նրանց քաղաքական ապաստան խոստացան»:

Այստեղ մի պահ ընդհատելով հայտարարությունների ընթերցումը, ես ուզում եմ հետևյալ բացատրությունը ձեզ ներկայացնել: Չորս հայ մարտիկները, իհարկե, սխալվել են, բայց համոզված են եղել, որ ներխուժելով Փարիզի կամ որևէ այլ քաղաքի թուրքական հյուպատոսարանը, նրանք թուրքական տարածք են մտնում, որտեղ ֆրանսիական ոստիկանությունը իրավասու չէ միջամտելու: Սա արդյունք է այն թյուր կարծիքի, որը գոյություն ունի «արտերկրային տարածք» հասկացության շուրջ: Կարելի է հաստատ ասել միայն, որ մարտախմբի գործողությունը ուղղված չի եղել Ֆրանսիայի դեմ: Այս սրահում մի քանի անգամ հնչեց այն միտքը, որ Ֆրանսիան հայ գրոհայիններին ոչ մի վատ բան չի արել: Այո՛, դա, իհարկե, այդպես է, բայց նրանք նույնպես չեն մտածել կամ փորձել Ֆրանսիային վնասող քայլ կատարել: Երբե՛ք: Մարտախմբի գործողությունը

բացառապես ուղղված է եղել Թուրքիայի դեմ...

Վերադառնանք, ուրեմն, բուն գրոհին: Իմ հիշատակած, ինչպես նաև չհիշատակած բազում հայտարարություններից պարզ է դառնում, որ պատանդները շատ շուտ համոզվել են, որ իրենք գործ ունեն ոչ թե վտանգավոր ծայրահեղականների, այլ՝ բարոյական որոշակի սկզբունքներով գործող երիտասարդների հետ, որոնք նման քայլի դիմելու ծանրակշիռ պատճառ են ունեցել: Ծանրակշիռ պատճառ, որը հենց այդ օրը՝ 1981-ի սեպտեմբերի 24-ին, ուղիղ ժամը 15-ին Ֆրանսիայի Հանրապետության Նախագահը, իր առաջին իսկ մամուլի ասուլիսից առաջ արած հայտարարության ժամանակ, ավելի լավ բացատրեց, քան որևէ մեկը. «Ժողովրդի օրինական զգացումներն ի վերջո միշտ պոռթկում են և որքան երկար ժամանակ են զսպվում, այնքան բուռն են արտահայտվում»:

Տիկնայք և պարոնայք երդվյալներ՝, թույլ տվեք խոստովանել, որ հանրապետության Նախագահի այս ձևակերպումը ես ուղղակի «Վան» գործողությանն եմ վերագրում, համոզված պնդում եմ, որ կան հավերժա կան ճշմարտություններ, որոնք չեն հնանում, արտահայտման ձևերն են փոխվում: Նույնը, գրեթե նույնը, խելագարված աշխարհին հարկ չի՞ համարել հիշեցնել Բենեդիկտոս 15-րդ պապը 1915 թվականի հուլիսի 12-ի իր հուսահատական կոնդակում. «Թող լավ իմանան, որ ազգությունները չեն մեռնում, նվաստացումով ու բռնաճշումներով կրում են իրենց դժվարին լուծը: Միաժամանակ, նրանք հատուցման են պատրաստվում, սերնդից սերունդ են փոխանցում իրենց ողբերգության տխուր ժառանգությունը»:

Հիրավի, աշխարհում կա՞ ուրիշ մի այլ ազգ, որը դարեր շարունակ ստիպված տարել է անտանելին: Ո՞վ է հույսը հոգում անթեղած, արդարության հավանական վերականգնման, այն ահավոր ոճրագործության փոխհատուցման համար, որն անհաշիվ արյուն, արցունք է խլել, այսքան երկար սպասել: Եվ արդյո՞ք չորս երիտասարդի այս քայլը կարող է մեղմել հայ ժողովրդի տառապանքները, մոռացնել կորուստները: Իհարկե ո՛չ, տիկնայք և պարոնայք երդվյալներ, ձեր թույլտվությամբ ես դրան դեռ կանդորադառնամ: Առայժմ շարունակե՛նք հետևել մեղադրյալներին, որովհետև, ինչպես հայտնի է՝ մարդկանց դատում են իրենց արարք -

-- էջ 262 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Ներով ու միտումներով: Ես ուզում եմ առանձնահատուկ նշել, որ նրանցից որևէ մեկը սպանելու, վիրավորելու, բռնանալու, անգամ վատ վերաբերվելու ցանկություն չի ունեցել: Սա շատ կարևոր հանգամանք է, որը, կարծում եմ, դուք նույնպես անվերապահորեն ընդունում եք, տիկնայք և պարոնայք երդվյալներ:

Եվ, այնուամենայնիվ, մեկը սպանվել է: Ես այդ մասին մտածում եմ պաշտպանությունը ստանձնելուց ի վեր: Նույնիսկ նրանք, ում ես պաշտպանում եմ, դրա համար տանջվում են: Դարձյալ հիշենք հյուպատոսարանի թուրք քարտուղարուհի օրիորդ Չեթինելի հայտարարությունը. «Երբ ես իմացա, որ թուրք հսկիչ-պահապանը մահացել է, լաց եղա: Գրոհայինները փորձում էին ինձ սփոփել, բայց զգացվում էր, որ իրենք էլ են վշտացած»:

Արդեն հայտնի է, որ հայ մարտիկները ոչ միայն չեն ուզել, այլև ամեն ինչ արել են մահվան դեպքերից խուսափելու համար: Նրանք, ինչ խոսք, զինված են եղել, բայց ինչպես ընդունված է ասել այժմ, զենքերը բանակցային նշանակություն են ունեցել: Լուրդի ֆրանսիացի կրոնականները ճիշտ են գնահատել իրավիճակը. «Բանակցությունները պիտի սկսվեին այն պահին, երբ առկա սպառնալիքը անտրամաբանական դարձներ երրորդ կողմի զինված միջամտությունը»: Սակայն բացարձակապես ոչինչ, նույնիսկ բոլոր պատանդների կյանքը վտանգի ենթարկելու հեռանկարը հետ չի պահել Ջեմալ Էոզենին: Նետվելով մի ձեռքին ատրճանակ, մյուսին նռնակ բռնած հայ մարտիկի վրա, արդյո՞ք նա վայրկյանի ազդեցությամբ անխոհեմ չի վարվել, ինչպես փոխհյուպատոսը, որը, բարեբախտաբար, միայն վիրավորվել է:

Բոլոր դեպքերում՝ մահը մահ է, կորուստը՝ կորուստ, և այս ձևակերպումն օգտագործելիս հիշում եմ նաև նրանց, որոնց համար մարդկային կյանքն ամենևին նշանակություն չուներ, ովքեր մուլագար սովորություն էին դարձրել ամեն օր կտտանքների ենթարկելով տասնյակ հայերի սպանել, հարյուրավորների մահավճիռը հրապարակել: Սպանդի գլխավոր գաղափարախոսը, ավելի ճիշտ իրագործողը՝ Թալեաթը, իմ ժողովրդին՝ մեկ միլիոն հայ ոչնչացնելուց հետո լալիշությունն ունեցավ հայտարարելու. «Մնացածն արդեն վիճակագրություն է»: Եթե այդ ժամանակ ամեն ինչ այլ կերպ ընթանար, մենք այսօր այս սրա -

-- էջ 263 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

հում կլինեի՞նք:

Չեմ չափազանցում, ըստ երևույթին, թուրքական իշխանությունները կուզեին, որ հայ մարտիկները պայթեցնեին հյուպատոսարանը, թեկուզ հիսուն պատանդի ոչնչացնելու գնով իրենք էլ ոչնչանային, ու ցեղասպանությանը անդրադառնալու այս առիթը չլիներ:

Տիկնայք և պարոնայք երդվյալներ՝, ուրբաթ օրը այս ամբիոնից ելույթ էին ունենում ցեղասպանության վերապրողները, և ես հիշում էի տատիս, ում հետ ապրել եմ մինչև երեսուն տարեկան դառնալս, ընդհուպ այն պահը, երբ մահանալուն պես, նախօրոք տված խոստմանս համաձայն, կրծքին, սրտին շատ մոտ ամրացրի երեք

որդիների դեղնած լուսանկարը, որոնք նահատակվել էին 1915-ին: Այդ ժամանակ
Նրա մեծ տղան ուղիղ քսան տարեկան է եղել:

Ես գիտեմ, որ միջազգային աստյանում չեմ գտնվում, հասկանում եմ, որ մեր
դատարանն ի զորու չէ թուրքական պետության ու հայ ժողովրդի իրավունքները
ճշտել, բայց ուզում եմ, որ դուք էլ ձեր հերթին հասկանաք մեղադրյալներին, որոնք
բոլոր խաղաղ միջոցներից վերջնականապես հիասթափված, Թուրքիայի՝ այն
պետության դեմ են գրոհ ձեռնարկել, որը բռնազավթել է հայկական տարածքների
ինը տասներորդը:

Կրկնում եմ, մենք պատմության դատարանում չենք, սակայն չորս երիտասարդ
հայի հոգեվիճակը հասկանալի դարձնելու համար ուզում եմ հիշեցնել օտարների՝
այն ոճրագործության բնորոշումները, որոնք թուրքական իրար հաջորդող
կառավարությունները ձգտում են պոկել պատմության էջերից, ամենանենգ, հոռի
միջոցներով նոր պատմություն են փորձում ստեղծել:

1919 թվականի հունիսի 17-ին, Փարիզի խաղաղության խորհրդաժողովում,
թուրքական կառավարության ղեկավարը՝ մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշան, որը
երիտթուրքերից զավթել էր իշխանությունը, հայտարարում է. «Քաղաքակիրթ
աշխարհը ցնցված է թուրքերի գործադրած ոճիրների նկարագրությունից: Ես
հեռու եմ այդ չարագործությունները քողարկելու մտքից, որոնք ընդմիշտ
սարսափով են համակելու մարդկության խիղճը»:

Պատասխան խոսքում, հանդես գալով Գերագույն խորհրդի

-- էջ 264 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

անունից, Կլեմանսոն հաստատում է այդ միտքը. «Ձարդերն իրենց դաժանությամբ
հավասարվում, նույնիսկ գերազանցում են այն ամենին, ինչ երբևէ գրի է առել
պատմությունը»: Հիշենք, որ մշուշն ու անորոշությունը հայ ժողովրդին պատել էին
ցեղասպանությունից դեռևս երեսուն տարի առաջ՝ «Կարմիր սուլթանի»՝ Աբդուլ
Համիդի տիրապետության օրոք: Դպրոցական դասագրքերից անգամ հայտնի է
այդ ժամանակաշրջանին վերաբերող՝ «Հայերը նահատակվեցին խաղաղության
զոհասեղանին» արտահայտությունը, որը նշանակում է, որ երեք հարյուր հազար
հայ է կոտորվել՝ աշխարհի իմացությամբ, աշխարհի աչքի առջև: Սակայն զոհերի
Նման քանակությունն անգամ ոչինչ էր այն ամենի համեմատությամբ, ինչ տեղի
պիտի ունենար 1915 թվականին, որի սանձազերծողները մարդկության
պատմության սպանդի չգերազանցված ոճրագործները պիտի դառնային:

Լսեցե՛ք, թե բոթն ստանալուն պես ժորժ Կլեմանսոն ինչպես է ընդվզել ու
բացականչել. «Ճիշտ է, որ մեր դարասկզբին, Փարիզից հինգ օր հեռու,
անպատժելիորեն այնպիսի բռնություններ են գործադրվել, որոնք մի ամբողջ

երկիր սարսափով են համակել, բռնություններ, որոնցից վատթարը ամենադաժան բարբարոսության ժամանակներում անգամ չի գործադրվել:

Ճի՞շտ է, որ եվրոպական կառավարություններն անտարբերությամբ են դիտել այդ սահմուկեցուցիչ նախճիրը և թալանի, զանգվածային ջարդերի, բռնության, հրկիզման, կտտանքների պահին ոչինչ չեն գտել անելու, բացի ոճրագործ պետության ղեկավարների հետ Ոսկեղջյուրում կառանվելիք ռազմականավերի թվի շուրջ բանակցելուց»:

Այս տազնապի ահագանգը, ցավոք, անհետևանք մնաց և նոր ողբերգությունների մարգարեական կանխատեսումը հանդիսացավ:

Որովհետև 1915-ին, այսինքն 1895-ից ուղիղ քսան տարի անց, երբ զոհերի արյունը դեռևս չէր չորացել, հրդեհված եկեղեցիների մոխիրը չէր պաղել, գորշ ամպերը կախվեցին Հայաստանի՝ այն երկրի վրա, որտեղ Արարիչը գետեղել էր երկրային դրախտը: Լորդ Բրայսը՝ բրիտանացի նշանավոր պետական գործիչն ու իրավաբանը, Լորդերի պալատում հայտարարեց. «Թի -

-- էջ 265 --

ՕՐ ՀԻՆԳԵՐՈՐԴ

մուր խանի ժամանակներից ի վեր աշխարհը նման արհավիրք չէր տեսել»:

Ի՞նչ կա զարմանալու, քանի որ Թուրքիան, հպարտորեն, Աթիլային, Չինգիզ և Թիմուր խաներին համարում է իր մեծահամբավ նախորդները, և այս արյունարբունները, որոնք ամենուր դաժանության, բարբարոսության, սարսափի խորհրդանիշներ են համարվում, թուրք երեխաներին ուսուցանվող պատմության մեջ նմանվելու արժանի օրինակներ են ներկայացվում:

Այո՛, 1915 թվականին Հայաստանում տեղի ունեցավ մարդկային հիշողության պահպանած ամենաահավոր կոտորածը: Երիտթուրքերը, քողարկվելով Առաջին աշխարհամարտի թիկնոցի ներքո, օգտվելով պատերազմող երկրների հակասություններից, ինչպես նաև իրենց դաշնակցի՝ Գերմանիայի մեղսակցությունից, գրեթե ավարտին հասցրին այդ սև գործը: Եվ եղկելի Թալեաթը՝ Թուրքիայի տվյալ ժամանակվա ներքին գործերի նախարարն ու մեծ վեզիրը, ցեղասպանության կազմակերպողը, պարծեցավ, որ երեք ամսում Հայկական հարցը լուծելու համար ավելին է արել, քան Աբդուլ Համիդը՝ երեսուն տարվա ընթացքում...

Իսկ հետո՞: Հետո, տիկնայք և պարոնայք երդվյալներ, ցեղասպանության վերապրողները արտաքսվեցին բնօրրաններից, նրանց որոշ մասը կազմավորեց Ֆրանսիական բանակի հայ կամավորականների լեգեոնը, Ֆրանսիական դրոշի ներքո մարտնչեց առաջին գծում, ընդհանուր հաղթանակի մեջ բաժինն ունեցավ:

Իսկ ցիրուցան եղած երեխաները, որոնց ծնողները կոտորվել էին, լցվեցին որբանոցները:

Անատոլ Ֆրանսը ողբաց հոգեվարող Հայաստանի վիճակը, նրան հղեց սիրո և հույսի հետևյալ արտահայտությունները. «Հայաստան, իմ քո՛ւյր, վե՛ր կաց: Մի՛ տանջվիր: Այն քիչ արյունը, որ մնացել է քեզ, թանկարժեք է, հերոս սերունդներ կծնի: Այն ժողովուրդը, որը չի ուզում մեռնել, չի՛ մեռնի»: Նա մենակ չէր: Ժամանակի քաղաքական հեղինակությունները, մտավորականները, Բենեդիկտոս 15-րդ պապը, Միացյալ Նահանգների Նախագահ Վուդրո Վիլսոնը, ինչպես նաև Լլոյդ Ջորջը, Արթուր Բալֆուրը և իհարկե՝ Ժորժ Կլեմանսոն, շատ ուրիշներ, որոնք տվյալ պահին համընդհանուր կարեկցության

-- էջ 266 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

արտահայտիչները դարձան, միացրին իրենց ձայնը, որպեսզի դատապարտեն թուրքական բարբարոսությունը, վշտակցեն Նահատակ հայ ժողովրդին և հան դիսավոր խոստում տան, որ երբ իրավական հատուցման ժամը հասնի, մարդասիրական և արդարության օրենքներով ապահովեն Հայաստանի անկախությունն ու անվտանգությունը: Ֆրանսիացի կարդինալ, Օռլեանի եպիսկոպոս մոնսիևյոր Տուլեն, 1917-ին, Փարիզի Մադլեն եկեղեցում բացեիբաց հայտարարեց. «Եթե այս պատերազմից հետո դաշնակից երկրները Հայաստանին անկախություն չտան, և հայերը պայթեցնեն Կոստանդնուպոլիսը, ես՝ եկեղեցու սպասավորս, նրանց՝ մեղքերի թողություն կշնորհեմ»:

Մինչդեռ մեծ տերությունների՝ Հայաստանին տրված խոստումները ընդհանուր ճևակերպումներից, հանդիսավոր հայտարարություններից այն կողմ չանցան: Ուրիշստոն Չերչիլը մերկացնող բառերով ներկայացրեց այդ ցավալի իրողությունը. «Թվում էր, թե եկել է հայերի՝ արդարության հասնելու, իրենց բնօրրանում խաղաղ ապրելու իրավունք ձեռք բերելու ժամանակը: Նրանց հալածողներին, դահիճներին պատերազմը կամ հեղափոխությունը ջախջախեց: Հաղթանակած հզոր տերությունները հայերի դաշնակիցն էին և պետք է ձգտեին, որ արդարությունը վերականգնվի: Իրոք, անհավանական է թվում, որ դաշնակից հինգ մեծ պետություններ ի վիճակի չլինեն իրագործել իրենց ցանկությունը: Մինչդեռ, այդպես էլ եղավ, երբ հաղթողները Փարիզի խորհրդածողովում հասան Հայկական հարցին, նրանց միասնականությունը պառակտվեց, բանակները զորացրվեցին և վերջնական վճիռը որևէ կշիռ չունեցավ»:

Ճիշտ է, 1920-ի Սևրի դաշնագրով, որն ստորագրեցին դաշնակիցներն ու Թուրքիան, Հայաստանը ճանաչվեց ազատ ու անկախ պետություն, բայց, ինչպես պարոն Իվ Տերնոն ասաց ուրբաթ օրը, ստորագրողներն իսկ այն չվավերացրին: Եվ 1923 թվականի Լոզանի դաշնագիրը վերջնականապես հուսախաբության մատնեց հայերին: Դարձյալ դիմենք Չերչիլին. «Լոզանի դաշնագրում

Պատմությունը զուր պիտի փնտրի Հայաստան բառը»: Իրավացի էին բոլոր նրանք, ովքեր պնդում էին, որ այդ ժամանակ Մոսկվի նավթը ավելի ծանր կշիռ ունեցավ, քան հայերի արյունը:

Մինչ այդ, սակայն, 1921-ի հունիսին Բեռլինում տեղի էր ու -

-- էջ 267 --

Նեցել Թեիլերյանի՝ այն հայ ուսանողի դատավարությունը, որը մի քանի ամիս առաջ Գերմանիայի մայրաքաղաքում գնդակահարել էր ուրիշի անուն- ազգանունով ծպտված Թալեաթին: Վերջինս վախենում էր ոչ թե իր երկրի արդարադատությունից, որը ձևականորեն նրան մահվան դատապարտելուց հետո արտասահման փախչելու հնարավորություն էր տվել, այլ՝ հայերի վրիժառությունից: Դատարանը, որտեղ, ըստ էության, դատապարտվում էին ցեղասպանության պատասխանատուները, ի վերջո Թեիլերյանին անպարտ ճանաչեց ու ազատ արձակեց:

Այս ամենին, սակայն, լռությունը հաջորդեց: Մեկ միլիոն ու կես հայերի աճյունները, պատմության քամու բերանն ընկած, փոշի դարձան: Աշխարհը համակերպվեց մի ամբողջ ժողովրդի բնաջնջման իրողության հետ: Բանը հասավ այնտեղ, որ այդ նույն՝ միջազգային հանրության հանդուրժողականությունից սանձարձակ դարձած Թուրքիան շարունակեց իր սադրանքները: Երկրի ղեկավարները, ազգային արժանապատվության պահպանման միամիտ, սին մտայնությամբ տարված, չնչին չափով իսկ չեն ընդունում իրենց նախնիների ոճիրները, պատմության անհեթեթ կեղծարարությամբ են զբաղվում՝ ժխտելով ցեղասպանությունն ու փոխելով դահճի, զոհի տեղերը: Թերևս ձեզ հայտնի է, որ 1974 թվականին, ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանության հանձնաժողովում, Թուրքիայի ներկայացուցիչը պահանջեց, որ ջնջվի 30-րդ պարբերությունը, որը ամենագուսապ արտահայտություններով 1915-ի դեպքերը 20-րդ դարի առաջին ցեղասպանություն էր որակում: Դա ինձ ամենևին տարօրինակ չի թվում, քանի որ միջազգային հեղինակավոր կազմակերպությունները թուրքերի ցեղասպանության մասին Թուրքիայի՝ այն երկրի կարծիքն են հարցնում, որի համար հայերի նախճիրները հայերի հնարանքն է, Հայաստանը՝ գոյություն չունեցող, երբեք գոյություն չունեցած երկիր: Եվ քանի որ ամեն ժողովուրդ իրեն արժանի, իր ձգտումները լավագույն կերպով արտահայտող զավակներ է ծնում, ես չեմ զարմանում, որ հայության դահիճը, մարդկային պատմության մեծագույն ոճրագործներից մեկը՝ Թալեաթը ժամանակակից Թուրքիայում ազգային հերոս է համարվում, Անկարայի մայրուղիներից մեկը նրա անունն է կրում, իսկ Ստամբուլում, Ազատության բար -

-- էջ 268 --

ծունքում, որի լուսանկարը ցույց տվեց իմ գործընկերը՝ պաշտպան Դևեջյանը, հառնում է դամբարանը: Դամբարան, որի շուրջը ամեն տարվա մարտ ամսին թուրք ժողովուրդը մեծարանքի հանդիսություններ է կազմակերպում: Եվ մինչ արհամարհելով պարկեշտության ու պատշաճության բոլոր սահմանները, Թուրքիան ձգտում է

Թուրքական հյուպատոսարանի
պաշտոնական ներկայացուցիչը
«Վան» գործողության
գրոհայինների վերջնագիրը
փոխանցում է Ֆրանսիայի
իշխանություններին

«Վան» գործողության մասնակիցների տարհանումը
թուրքական հյուպատոսարանից

-- էջ 269 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

ավարտին հասցնել նախնիների ոճիրը, անպատժելիորեն պարում հայ ժողովրդի դիակների վրա, այստեղ-այնտեղ ձայներ են լսվում, որ ներկա ղեկավարները չեն կարող պատասխանատու համարվել, նրանք ոչինչ չեն արել:

Այո՛, չեն արել, չափազանց հեռու են անելու այն, ինչ Վիլի Բրանդը արեց, որը ծունկ չոքելով Օսվենցիմի հուշահամալիրում, հրեա ժողովրդից ներողություն խնդրեց նացիստական Գերմանիայի եղեռնագործությունների համար:

Տիկնայք և պարոնայք երդվյալներ, դուք, անկախ ձեր ցանկությունից, առնչվում եք ժամանակակից աշխարհի ամենացավալի ողբերգություններից մեկին: Դուք պետք է խորապես զգաք այն պատասխանատվությունը, որ օրենքը վստահում է ձեզ:

Համոզված եմ, որ վեր կկանգնեք նախապաշարումներից, ասեկոսներից և հավատարիմ մնալով ձեր երդմանն ու դատավարության ազատության սկզբունքին, կլսեք միայն ձեր խղճի ձայնը: Ջանալով ինձ տրված հնարավորության սահմաններում հստակեցնել այն վճիռը, որ կայացնելու եք վաղը, որն, ամենայն հավանականությամբ, արդեն որոշակիանում է ձեր ուղեղներում, ես պաշտպանության իմ գործընկերների հետ ջանացի ներկայացնել իրավիճակը, որը մեղադրյալներին նման քայլի է դրդել: Չգիտեմ որքանով կարողացա ձեզ հաղորդակից դարձնել իմ ապրումներին, բայց, հավատացե՛ք, երբեք այսքան չեմ ցավել այն բանի համար, որ մեր արդարադատության համակարգը երդվյալներին ու պաշտպաններին ուղղակի երկխոսության հնարավորություն չի տալիս: Երկխոսություն, որը ձեզ իրավունք կընձեռեր ինձ ընդհատել որևէ պարզաբանման կամ ինչ-ինչ փաստարկի նկատմամբ տարակուսանք արտահայտելու համար: Հավատացե՛ք, ձեր հարցերին կամ դիտողություններին պատասխանելով, ես կհարթեի ամեն թյուրըմբռնում:

Ես չեմ ձգտում, ոչ ոք չի ձգտում ձեզ ներքաշել պատմության չլուծված հարցերի ոլորտը: Այս դատավարությունը պատճառ դարձավ, որ արժարժվեն մեր ժամանակի բարոյական հիմնախնդիրները, մտահոգիչ հակասությունները:

Հասկանալի է, դուք մարդկանց դատելու եք իրենց կատարած արարքների համար, բայց նկատի ունեցեք նաև անձնականությունը և պայմանները, որ նման արարքների են մղել:

-- էջ 270 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Նրանք երիտասարդ են, իրենց անհատականությունն ունեն: Հիշենք բժիշկ-փորձագետների ձևակերպումը՝ «Չորսն էլ բոլոր երիտասարդների նման, սիրում են կյանքն ու վայելքները»: Միաժամանակ, նրանք այն ժողովրդի զավակներն են, որը ենթարկվել է մարդկային պատմության մեծագույն ողբերգություններից մեկին: Եվ մինչև այժմ կրում է հետևանքները: Որի դատը մարդկությունը, քաղաքակիրթ աշխարհը իրենը պիտի համարեր և ոչ թե անտեսեր, մոռացության մատներ...

Այս չորս հայ երիտասարդները չեն կարողացել հանդուրժել իրենց ժողովրդի խողխողմանը հաջորդած լուրջությունը, որը, երկարաձգվելով, թերևս մինչև իսկ հույսը մեռցնի: Ընդհանուր պաշտպանի համար մեռած էլ է, քանի որ իր ճառում զարմացած հարցնում էր. «Բայց ինչո՞ւ այսքան տարի անց»: Մինչդեռ Վազգենը, Գևորգը, Հակոբը, Արամը համոզված են եղել, որ ամեն ճշմարտություն

արտահայտվելու իր ժամանակն ունի, իրենք հենց այդ ժամանակում են ապրում ու Հայ դատին զինվորագրվելով ուզել են խզել լուրթունքը: Որպեսզի սխալ չհասկացվեն, իրենց նպատակների մասին թյուր պատկերացումներ չստեղծվեն, յուրաքանչյուրը, Բեյրութը թողնելուց առաջ, հայ ժողովրդի, ընտանիքի, բարեկամների համար մամուլով հետևյալ հայտարարությունն է արել. «Ես գիտեմ, որ ինձ վստահված պարտականությունը դժվարին է, կարող է վտանգվել կյանքս: Հայաստան տանող ուղին, եթե պայքարը արդարացի, անձնագոհաբար մղվի, այնքան էլ երկար չէ: Ուղին դժվարին է, բայց վերջնական հաղթանակը մերն է»:

Ահա՛ ամբողջ իրողությունը՝ պարզ ու համոզիչ:

Տիկնայք և պարոնայք երդվյալներ՝, եթե, ինչպես ես եմ կարծում, հավատում, ձեր հոգու մի անկյունում պահպանել եք Միշըլեի չքնաղ բառերը՝ «Մենք, ֆրանսիացիներս, չպետք է մոռանանք, որ մեր հայրենիքը ծնվել է կնոջ սրտից, քնքշանքից, արցունքներից և արյունից, որ նա հեղել է մեզ համար», եթե, կրկնում եմ, հավատում եք հայրենիքի գաղափարին, այդ մշտական արժեքին, ինչպե՞ս կարող եք չհասկանալ երիտասարդ հայերին, որոնք, լիբանանյան պատերազմի թոհուբոհում, հավատարիմ մնալով ցեղասպանության վերապրողի զավակի ու թոռան իրենց պարտականություններին, չեն համակերպվել խաչվածի, նահատակի, արհամարիվածի, իրավագրկվածի կարգավի -

-- էջ 271 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

ճակին:

Այս չորս երիտասարդները ձեզնից ոչինչ չեն պահանջում, խնդրում են հասկանալ: Հասկանալ, որ միայն մի՝ ազնվագույն և առաքինի նպատակ է իրենց առաջնորդել: Ձեր դատավճիռը, որ կայացնելու եք չորս հայ երիտասարդի նկատմամբ, արդարադատության առումով իր նախադեպը չի ունենալու և, ըստ եության, կանխորոշիչ է լինելու:

Տիկնայք և պարոնայք երդվյալներ՝, դուք վճռի բացարձակ ազատություն եք վայելում, կարող եք դատապարտել, բայց նաև արդարացնել: Ես ձեզ ազատության, անկախության կոչ եմ անում: Վաղը, երբ առանձնանաք խորհրդակցությունների սենյակում, խնդրում եմ չմոռանաք, որ այսպես կոչված մեղադրյալները ճարահատ են գրավել թուրքական հյուպատոսարանը, որպեսզի ներկայացնեն իրենց ժողովրդի օրինական պահանջները, որոնք նույնքան արժանի են հատուցման, որքան հրեաներինն ու պաղեստինցիներինը:

Ես վերջացնում եմ՝ կարծում եմ կարողացա համոզել, եթե, իհարկե, արդեն համոզված չէիք, որ Վազգենը, Գևորգը, Արամը և Հակոբը ունեն հանցանքը մեղմացնող այն բոլոր պատճառները, որ կարելի է երևակայել: Եվ եթե այդ ամենը նկատի ունենալով, դուք նրանց համար երկու տարվա բանտարգելությունը

բավարար համարեք, այսինքն գոհանաք նախնական կալանքի ժամկետով, իմ խորին համոզմամբ, թե՛ մտքով և թե՛ խղճով արդարացի վարված կլինեք:

Չորս երիտասարդ հայերը, որոնք այն իրավիճակում, որ ներկայացրի, չափազանց երկար ներկայացրի, ստանձնել են իրենց ժողովրդի անժամկետանց պահանջատիրությունը, արժանի են միայն մի՝ պարզ ու հստակ դատավճռի, որը սոսկ մեղավոր հոգիները կարող են չընդունել. նրանք արժանի են արդարացման:

Դատաքննությունն ավարտվում է:

-- էջ 272 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

Երեքշաբթի, 31-ը հունվարի, 1984 թ.

-- էջ 273 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

-- էջ 274 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

ՅՈԹԵՐՈՐԴ ՆԻՍՏ

Դատաքննությունը վերսկսվում է ժամը 13-ն անց 40-ին:

ՆԱԽԱԳԱՀ - Խոսքը պաշտպանությանը տալուց առաջ ուզում եմ տեղեկացնել, որ ստացել եմ հետևյալ առաքումները: Մեկը Ստամբուլից է, պարունակում է

«Հայկական ահաբեկչություն» խորագրված գրքից երկու օրինակ, մյուսը՝ «Հայկական Կապույտ խաչի» հեռագիրն է, որը և ներկայացնում եմ ձեր ուշադրությանը. «Ֆրանսիայի հայերի Կապույտ խաչ բարեգործական ընկերակցության անունից, որն ստեղծվել է 1915 թվականի ցեղասպանության վերապրող այրիներին ու որբերին օգնելու համար, մենք ձեզնից խնդրում ենք ներողամիտ վերաբերմունք ցուցաբերել չորս հայ երիտասարդների նկատմամբ»:

Մի հեռագիր էլ Միացյալ Նահանգներից է եկել, անգլերեն է: Ես այն թարգմանել եմ տվել: Ահա՛ բովանդակությունը.

«Հայ քաղաքական բանտարկյալների պաշտպանության կոմիտեն մեծագույն հարգանքով խնդրում է ձեր ատյանին բարեհոգությամբ քննել Գյուզելյանի, Բասմաջյանի, Սիսյանի և Ջուլֆայանի գործը, որոնք արդեն երկրորդ տարին է կալանավորված են:

Մենք ուշադրությամբ հետևում ենք դատավարության ընթացքին և ակնկալում ենք, որ ձեր ատյանը ըմբռնումով կմոտենա Հայկական հարցին, որը սերտորեն առնչվում է հիշատակված չորս մեղադրյալների բանտարկության հետ: Ցանկալի է, որ դատապարտյալները պատմական իրադարձություններով պայմանավորված քաղաքական կարգավիճակ ստանան... Շնորհակալություն»:

-- էջ 275 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

Նման մի հեռագիր էլ Ալֆորվիլի հայերի մշակութային տնից եմ ստացել, որը նույնպես ուզում եմ ընթերցել.

«Ոչ ոք չի հասկանա, եթե Ֆրանսիան՝ ազատության և արդարության երկիրը մեղադրական վճիռ կայացնի այժմ Փարիզում դատապարտվող չորս հայերի նկատմամբ, որոնց արարքի դրդապատճառները դուք կարող եք բացահայտել: Հարգանքներով՝ Ալֆորվիլի հայերի մշակութային տուն»:

Վերջապես ես չեմ կարող զանց առնել հայցվորների կողմի վկա պրոֆեսոր Աթայովի նամակը.

«Փարիզ, 28-ը հունվարի 1984 թ.,

Պարոն նախագահ,

Հունվարի 26-ին, չորս հայերի դատավարության կապակցությամբ իմ ելույթից հետո, պաշտպանության փաստաբաններից մեկը՝ պարոն Ասլանյանը վկայակոչեց մի կեղծ փաստաթուղթ, որով որոշ իրողություններ վերագրվում են Մուստաֆա Զեմալին՝ իբր նա խոստովանել է, որ Օսմանյան կայսրությունը ցեղասպանության է ենթարկել հայերին: Ես, եթե հիշում եմ, պատասխանեցի, որ

Քեմալ Աթաթուրքը երբեք նման արտահայտությամբ հանդես չի եկել և անգամ վկայակոչեցի հայկական «Արմինյըն ռիվյու» ամսագիրը:

Այժմ, ինչպես խոստացել էի, պատիվ ունեմ Ձեզ տեղեկացնելու, որ հիշատակածս հոդվածը տպագրվել է ամսագրի 1982 թվականի աշնանային՝ թիվ 3 համարում: Հոդվածագիրը՝ պարոն Թաշճյանը, որ հայ է, ճշգրտում է, որ առաջին անգամ այդ սխալը 1951-ին թույլ է տվել արքեպիսկոպոս Ժան Մասյանը*, որից հետո բազմիցս, գրավոր ու բանավոր, կրկնվել է:

Պարոն Թաշճյանը հարկ է համարել հանդես գալ հատուկ հոդվածով, որպեսզի մեկընդմիշտ վերջ դնի թյուրիմացությանը:

Միաժամանակ, առիթից օգտվելով, Ձեզ եմ ուղարկում Թալեաթ փաշայի հեռագրերին առնչվող իմ հոդվածի ֆրանսերեն թարգմանությունը, քանի որ ասոյանում անգլերեն մեջբերումներ էի կատարում:

Հաճեցեք ընդունել...»:

Օգտվելով իմ իրավագործությունից, բոլոր թղթակցությունները կցում եմ գործին:

Պարոն Փեշտիմալջյան, ձայնը ձեզ է տրվում:

* Ճիշտը՝ հայ կաթոլիկ վարդապետ Հովհաննես Մարյա նը:

-- էջ 276 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Պաշտպան Փեշտիմալջյանի ճառը.

Պարոն Նախագահ, պարոնայք պաշտոնակիցներ, տիկնայք և պարոնայք երդվյալներ, ես երեսուներեք տարեկան եմ, ծնվել եմ Ֆրանսիայում, և ինչպես այս չորս տղաները, Ֆրանսիայի հայկական համայնքի մոտ 250.000 անդամները, վաղ մանկությունից տասնյակ անգամներ լսել եմ ջարդերի պատմությունները, որոնք պատմել են իրենք՝ այդ դժոխքի վերապրողները: Իմ հարազատներն ինձ նկարագրել են, թե ինչպես են թուրքերը հորական պապիս կախել գյուղի եկեղեցում՝ այդ ժամանակ հայրիկովս հղի տատիս սարսափահար հայացքի առաջ:

Մինչև իր մահը՝ 1970 թվականը, հայրս որոնում էր իր յոթը եղբայրներին և քույրերին, հուսալով, որ գոնե մեկը կամ երկուսը փրկված, Աստված գիտե աշխարհի ո՛ր անկյունում՝ Ամերիկայում, Եվրոպայում, Ավստրալիայում ապաստանած կլինեն: Եթե նրանք ողջ չեն, նահատակվել են, նշանակում է՝

Նույնիսկ հողաթումբ չունեն, որի առջև ես կարողանայի խաչակնքել: Այլ կերպ սասած, ինքս էլ, մինչև այժմ, կրում եմ ցեղասպանության հետևանքները:

Ինչո՞ւ միայն ես՝ կրում եմք բոլո՛րս, այս չորս տղաները, ծնողները, որոնց լսեցինք, ցեղասպանությունից փրկված ականատեսները, աշխարհով մեկ սփռված վեց միլիոն հայերը, որոնք հայտնի են որպես Անրի Վեռնոյ ու Շառլ Ազնավուր կամ անհայտ են բոլորովին:

Համաձայն եմ, պատմությունը միայն ընտանեկան հուշերով չի կարելի գրել, սակայն, երբ նման բազմաթիվ իրողություններ հիշատակվում են ամեն հայի հարկի տակ, մյուս կողմից էլ՝ քողարկելու փորձեր են արվում, դառնում են ժողովրդի հիշողությունը: Մոռացումն անհնար է դառնում: «Այն ժողովուրդը, որը մոռանում է, մեռնում է»,- վերջերս հայտարարեց Ֆրանսիայի Հանրապետության Նախագահը:

Տիկնայք և պարոնայք երդվյալնե՛ր, հիշո՞ւմ եք այն լուսանկարը, որտեղ տասնութը հազար հայ որբեր էին հավաքված: Ձեզ եմ հարցնում՝ ի՞նչ եղան նրանց ծնողները: Թուրքերը, ձեզ քաջ հայտնի միջոցներով, Հայաստանն իր երեք հազար տարվա բնակիչներից դատարկելով չգոհացան: Նրանք բռնազավթեցին այդ տարածքները, քաղաքակիրթ ժողովուրդների թողտվությամբ ազգայնամոլության սերմեր տարածեցին, որոնք ծանր

-- էջ 277 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

հետևանքներ ունեցան լեհերի, ֆրանսիացիների, հատկապես հրեաների ճակատագրում:

Սակայն նացիզմի գլխավոր հանցագործները պատժվեցին, Գերմանիան դատապարտեց հիտլերյան ոճրագործությունները, այսինքն խզեց անպատվաբեր անցյալի հետ ունեցած բոլոր կապերը, խորհրդանշորեն փոխհատուցեց համակենտրոնացման ճամբարների վերապրողների տառապանքները: Մինչդեռ Թուրքիայի աջ, ձախ կառավարությունները ոչ միայն ցեղասպանության վերապրողների զավակներին ցավակցություն չեն հայտնում 1915 թվականի դեպքերի համար, այլև ժխտում են անցյալը:

Տիկնայք և պարոնայք երդվյալնե՛ր, զոհերի ներողամտությունը կախված է դահիճների մեղանչումից: Ճիշտ է, որ ոճրագործները վաղուց մահացել են, պարոն Ինալը՝ Թուրքիայի ներկա գլխավոր հյուպատոսն այդ ժամանակ ծնված չէր, սակայն ոչինչ նրան չէր խանգարում այս վեց օրերի ընթացքում գոնե անհատապես հայտարարել, որ ինքը ցավում է կատարվածի համար ու հենց դրանով իր վերաբերմունքն արտահայտեր անպատվաբեր անցյալի նկատմամբ: Այո՛, դահիճների զավակները նույնպես մեղավոր են, որովհետև ոչ միայն ուրանում են նախնիների պատասխանատվությունը, այլև համախոհ, մեղսակից

են դառնում, քանի որ մեծարում են Թալեաթին՝ թուրք Հիտլերին: Նրանք ուրանում են իրողությունը, կեղծում պատմությունը, նվազեցնում թվերը, հետևողականորեն ոչնչացնում Արևելյան Անատոլիայի, ինչպես իրենք են կոչում Հայաստանը, քրիստոնեական քաղաքակրթության հետքերը:

Հույն պատմաբան Ստրաբոնը մոտ երկու հազար տարի առաջ գտնում էր, որ հայկական հողերը ամենաբերքառատը, բերրին են աշխարհում: Մինչ հրեաները անապատները մրգաստանի վերածեցին,- ես Իսրայելը նկատի ունեմ,- թուրքերը ամայացրին հայկական բեղուն հովիտները:

Այսքանով էլ չգոհանալով, իրենց դիվանագետների միջոցով ձգտում են ամենուր լռության մատնել Հայկական հարցը, ներագդում են միջազգային ծայնասփյուռի ու հեռատեսիլի, մամուլի վրա: Երբ Ֆրանսիայի կառավարությունը հայերին թույլատրեց Մարսելում ցեղասպանության զոհերին նվիրված հուշարձան կառուցել, Թուրքիան որոշում կայացրեց կոթող կերտել այն թուրքերի հիշատակին, որոնց իրբ 1917-ին կոտորել են

-- էջ 278 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Ֆրանսիական գորամիավորումները: Հենց Ֆրանսիայի կառավարությունը հանդես է գալիս հայերի ողբերգության հիշատակությամբ, Թուրքիան սպառնում է խզել առևտրական կապերը, ռազմական ինքնաթիռներ չգնել, Անկարայի մետրոյի շինարարությունը դադարեցնել:

Պարոն նախագահ, երեքշաբթի օրը դուք մեղադրյալներին հարցնում էիք, թե արդյո՞ք զինված պայքարը Հայ դատի հետապնդման լավագույն միջոցն է: Պատասխանն այլևս հայերից չի կախված, պարոն նախագահ, նրանք տարիներ շարունակ դիմել են խաղաղ, օրինական միջոցների ու անընդհատ լռության պատին են բախվել: Այդ պատճառով են զենք վերցրել: Եվ եթե հայկական պահանջատիրությունը այսուհետ էլ անտեսվի, շատ հնարավոր է, որ Ֆրանսիայի ամբողջ հայ համայնքը դիմի ուժի, մեղադրյալի աթոռին հայտնվի: Իրենց գործողության ընթացքում այս չորս տղաները նույնպիսի հաջողությամբ զենքերը կարող էին ուղղել հյուպատոսարանի պաշտոնյաների դեմ: Կարող էին, բայց չեն արել, որովհետև իրենց նպատակը միջազգային հանրության ուշադրությունը հայ ժողովրդի ողբերգության վրա հրավիրելն է եղել:

Ի՞նչ դեր է խաղացել Արամ Բասմաջյանը թուրքական հյուպատոսարանը գրավելու ընթացքում: Նույնիսկ ընդհանուր պաշտպանը ընդունեց, որ նա համեստ մասնակցություն է ունեցել, վերջինն է մտել հյուպատոսարան, խուզարկել է պատանդներին, համոզվել է, որ նրանք զինված չեն, ստուգել է ինքնություններն ու հսկել մուտքի դուռը:

Գործից պարզ է դառնում, որ Արամը պատանդներին անգլերեն հորդորել է ոչնչից չվախենալ, բացատրել է, որ իրենց պայքարը թուրքական պետության դեմ է: Երբ Հակոբ Ջուլֆայանը վիրավորվում է, Բասմաջյանն է վերցնում նրա գենքը, որից հետո էլ որևէ պատանդի չի անհանգստացնում:

Պարոն Նախագահ, երեքշաբթի օրը դուք հայտարարեցիք, որ, վերջիվերջո, մարտախմբի ոչ մի պահանջին էլ գոհացում չի տրվել: Դա այնքան էլ ճիշտ չէ: Տղաները պահանջել են Թուրքիայում արգելափակված թուրք, քուրդ և հայ քաղբանտարկյալների ազատ արձակումը: Նրանց թվում էր պարոն Քյուլքուբայուզեյանը, որին դուք լսեցիք ուրբաթ օրը: Թուրքական կառավարությունը նրան մեղադրել է այն բանի համար, որ հայ երեխաներին հավաքել, կրոնական, ազգագրական երգեր է սո -

-- էջ 279 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

վորեցրել: Պարոն Քյուլքուբայուզեյանը ձերբակալվել էր 1981 թվականի փետրվարի 25-ին: 1981-ի սեպտեմբերին, երբ չորս տղաները պահանջեցին նրա ազատ արձակումը, արդեն յոթը ամիս, առանց դատվելու, կտտանքների էր ենթարկվել: Հարգելի տիկնայք և պարոնայք երդվյալներ, այդ ամիսների ընթացքում ի՞նչ է արել մեզնից յուրաքանչյուրը, որ նա շուտափույթ ազատվի, ի՞նչ են արել մարդասիրական կազմակերպությունները: Դուք տեսաք նրա տանջահար մարմնի լուսանկարները, զգացիք տառապանքները: Մեր ընդհանուր անտարբերությանը չորս մեղադրյալները այլ միջոց են հակադրել: Թուրքական հյուպատոսարանի գրավման շնորհիվ միջազգային մարդասիրական կազմակերպությունները իմացել են իրողությունը և տարբեր ճնշումների միջոցով հասել են այն բանին, որ հյուպատոսարանի գրավումից երկու ամիս անց, 1981-ի նոյեմբերի 11-ին, Քյուլքուբայուզեյանն ազատ արձակվի: Նա քաղաքական ապաստան է գտել Ֆրանսիայում, Թուրքիայից հեռանալիս նույնիսկ վկայագիր է ստացել, որ դատական պատասխանատվության չի ենթարկվել: Իրողություններ, որոնք տեղի են ունեցել նախ և առաջ այս չորս տղաների շնորհիվ:

Ուրբաթ օրը, պարոն Նախագահ, մեղադրյալներին այցելող վերապատվելի Հելվաջյանին դուք հարցնում էիք, թե արդյո՞ք նրանք աղոթում են թուրք հսկիչ-պահապանի հոգու հանգստության համար: Մեզնից ո՞վ է աղոթել, որ թուրքական բանտում վերջ տան պարոն Քյուլքուբայուզեյանի տառապանքներին: Ու մինչև նա հայ մարտիկների ջանքերով ազատվել է բանտից, իրենք՝ հայ մարտիկներն են կալանավորվել: Շուտով երեք տարի կլինի, որ Արամ Բասմաջյանը չի տեսել ծնողներին, այդ թվում՝ յոթանասունն անց հորը, որը բռնազաղթի ճանապարհին կորցրել է բոլոր հարազատներին, այնքան է տանջվել, որ տարիներ շարունակ չի կարողացել քայլել, գամված է մնացել անկողնուն: Այնպես արեք, տիկնայք և պարոնայք երդվյալներ, որ այս, ինչպես փորձագետները հավաստեցին, կիրթ,

զգայուն, գաղափարապաշտ երիտասարդը հենց վաղը հորը հասցնի որդիական քնքշանքը, որն իր հայրը չի կարողացել հաղորդել պապին:

Ցեղասպանության վերապրողները պատմում են, որ Դեյր Էզ-Չորի անապատում տասը տարեկան մի հայ երեխա է եղել: Թուրքերը կտրել են նրա լեզուն, բայց նա թաքնվել է ավազների մեջ ու ամեն անգամ, մոտեցող քարավաններ նկատելիս, ըն

-- էջ 280 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

դառաջ է նետվել, հասկացրել, որ ճանապարհը չշարունակեն, որ այն դեպի մահ է տանում: Ինչու էմ հիշեցնում այս դիպվածը: Իմ գործընկերը՝ պարոն Ասլանյանը երեկ խոսեց մեծ մարդասերների՝ Կլեմանտոյի, Անատոլ Ֆրանսի, Ռոմեն Ռոլանի, այլոց մասին, ովքեր դարասկզբին իրենց ձայնը բարձրացրին ի պաշտպանություն հայ ժողովրդի: Ցավով ուզում եմ նշել, որ առևտրական, դրամական, ռազմավարական առումներով հզոր երկրները այժմ խլացրել են Ֆրանսիայի ձայնը, ավելին՝ կտրել են հայ ժողովրդի լեզուն: Ու միայն 1981-ի սեպտեմբերի 24-ին, Արամի, Հակոբի, Գևորգի, Վազգենի շնորհիվ է, որ աշխարհով մեկ սփռված վեց միլիոն հայերը անսպասելիորեն վերագտան իրենց խոսելու կարողությունը:

Տիկնայք և պարոնայք երդվյալներ, ձեր փակ դատավեճի ընթացքում հավանաբար կլինեն այնպիսիները, ովքեր հենվելով իրավաբանական վերացական դատողությունների վրա, կփորձեն հայ ժողովրդի աճյունները համադրել թուրք հսկիչ-պահապանի դիակին: Ուրեմն, ձգտեցեք հոգով ու սրտով վճիռ կայացնել, մի՛ խեղդեք ձեր խղճի ձայնը: Վեց միլիոն հայ ակնկալում է, որ դուք կվերցնեք մեծ մարդասերների՝ դարասկզբին վառած արդարության ջահը, և Ֆրանսիայի վեհանձն ձայնը տասնյակ տարիների լռությունից հետո դարձյալ խղճի մտոք, արդարացի կհնչի:

Արամ Բասմաջյանին, Հակոբ Ջուլֆայանին, Գևորգ Գյուլգեյանին, Վազգեն Սիսյանին վերադարձրե՛ք իրենց ծնողներին ու հայ ժողովրդին:

Պաշտպան Թեդժենի ճառը.

Պարոն նախագահ, պարոնայք պաշտոնակիցներ, տիկնայք և պարոնայք երդվյալներ, ես ներկայացնում եմ Վազգեն Սիսյանի շահերը: Քիչ անց դուք վճռելու եք նրա ճակատագիրը: Հասկանալի է, բոլորդ էլ հաշվետու եք միմիայն ձեր առջև: Դատավճիռ կայացնելու ձեր իրավունքը դուք գործադրում եք բացարձակ ազատությամբ ու անկախությամբ, սակայն, համենայն դեպս, կա մի հանգամանք, որը ձեր իրավասությունները սահմանափակում է: Խոսքը օրենքի մասին է, որին

պետք է ակնածանքով մոտենալ, ինչպես գտնում էր Մոնտեսքյուն: Ուրեմն դուք պետք է հարգեք օրենքը, մասնավորապես՝ քրեական օրենսգիրքը:

-- էջ 281 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

Վազգեն Սիսյանը մեղադրվում է որոշ հանցանքների, հատկապես՝ Բեռնար Բլոնդեի նկատմամբ կանխամտածված մահափորձ կատարելու համար: Դուք կքննեք փաստերը, որոնք անհրաժեշտ է, որ կետ առ կետ համընկնեն քրեական օրենսգրքի սահմանումներին, և եթե հակասություն առաջանա, կարծում եմ, պարոն նախագահը ձեզ կհիշեցնի, չպետք է ընդունեք մեղադրականը:

Երկրորդ սահմանումը, որին դուք քաջ ծանոթ եք, հարուցում է կասկածը, որն անհրաժեշտ է, որ անպատճառ ի նպաստ մեղադրյալի գործի: Սա մեր քրեական իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկն է:

Ինչ վերաբերում է Վազգեն Սիսյանին վերագրվող կանխամտածված մահափորձի մեղադրականին, ես ամենայն որոշակիությամբ ու վճռականությամբ գտնում եմ, որ պետք է մերժել: Նախ, իհարկե, հարկավոր է քննել փաստերը: Պարոն ընդհանուր պաշտպանն իր երեկվա մեղադրականում նշեց, որ գործի այս հատվածում կասկածներ են առաջանում հյուպատոսարանում Վազգեն Սիսյանի գտնված տեղի, գրաված դիրքի նկատմամբ: Սրանից բազմաթիվ այլ հակասություններ են առաջանում, որոնց ես ուզում եմ համառոտ անդրադառնալ: Նախ՝ որոշակի չէ հենց իր՝ Բլոնդեի դիրքը: 1981 թվականի սեպտեմբերի 24-ին (էջ 173), նախնական հարցաքննության ժամանակ, նա հայտարարում է. «Ես գտնվում էի սենյակի մեջտեղում», ապա ավելացնում՝ «Երբ իմ ուղղությամբ կրակեցին, պատուհանից տաշեղներ, ծեփ թափվե ցին վրաս», որը վկայում է, որ ինքն, ամենայն հավանականությամբ, լուսամուտի մոտ է եղել:

1981-ի հոկտեմբերի 26-ին նույն Բեռնար Բլոնդեն (էջ 480) պնդում է, որ ինքը եղել է անձնագրային բաժանմունքի կենտրոնում, մինչդեռ իր գործընկերոջ՝ ոստիկանական սպա Շըվիի վկայությամբ (էջ 89) սանդղավանդակում է գտնվել: Հարկ չկա հիշեցնելու Վազգեն Սիսյանի ցուցմունքը. նա միշտ պնդել է, որ ոստիկանը դռան շեմին կքած է եղել:

Եթե ես միայն այս հայտարարություններից ելնեմ, մի քանի հավանական եզրակացություններ կարող եմ կատարել՝ ոստիկան Բլոնդեն եղել է անձնագրային բաժանմունքում՝ կամ սենյակի կենտրոնում, կամ պատուհանի մոտ, նույն հաջողությամբ նա կարող էր գտնվել սանդղավանդակում ու մետաղական կամրջակի վրա, վերջապես՝ այն դռան մոտ, որը անձնագրային բաժան -

-- էջ 282 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

մուկը բաժանում է միջանցքից: Ընդունեք, որ հինգ վարկած միայն մեկ հոգու համար՝ հարկ եղածից շատ է:

Դատական գործը ներկայացնում է կամ փորձում է ներկայացնել յուրաքանչյուրի դիրքը: Տիկնայք և պարոնայք երդվալնե՛ր, իմ խնդիրը սրա կամ նրա սուտը բացահայտելը չէ, պատկերացնել, հասկանալն է այն խառնաշփոթ տեսարանը, որը չափազանց կարճ է տևել:

Հենց դեպքի օրը՝ սեպտեմբերի 24-ին, Բեռնար Բլոնդեն վկայում է. «Քանի որ ծառայողական գեները մոտս էր, ես կրակելու դիրք գրավեցի, մի անգամ սեղմեցի ձգանը»: Հոկտեմբերի 26-ին, դեպքից երկու ամիս անց, քննիչին ցուցմունք է տալիս. «Ես կրակելու դիրք չէի գրավել»: Հակասությունն ակնհայտ է, որը կարելի է շարունակել: Ըստ Վազգեն Սիսյանի՝ Բլոնդեն կքած է եղել, պարոն Ֆլետորին՝ կանգնած: Նույնը վերաբերում է գլխավոր իրադարձությանը՝ փոխհրաձգություններին: Նույնիսկ ընդհանուր պաշտպանը երեկ նկատել տվեց՝ վարկածները խիստ տարբեր են: Վազգեն Սիսյանը հավաստում է, որ առաջինը ոստիկանն է կրակել, ինքը փոխադարձել է, ոստիկանը պնդում է հակառակը: Նա այսպես է ներկայացնում տեսարանը. «Հենց ես գոռացի՝ «Ոստիկանությունն է, ձեռքներդ վեր դո՛ւրս եկեք», հարևան սենյակից դռների մեջ ինչ-որ մեկը հայտնվեց, գեներն ուղղեց իմ վրա, երեք անգամ կրակեց: Այդ ժամանակ պատուհանից տաշեղներ, ծեփ թափվեցին վրաս: Քանի որ ծառայողական գեները մոտս էր, ես համապատասխան դիրք գրավեցի, մի անգամ կրակեցի: Անծանոթը ճչաց, շրջվեց, անհետացավ իմ տեսադաշտից: Հնարավոր է, որ վիրավորել եմ իրեն, քանի որ ցավի ճիչ արձակեց»:

Վազգեն Սիսյան նր 1981 թվականի հոկտեմբերի 12-ին հետևյալն է ասում. «Ոստիկանը կքել էր շեմին, ես նրան՝ իմ վրա կրակելիս չտեսա, բայց երբ կրակեց, փոխադարձեցի»: Այնուհետև Վազգենը գծագրի վրա ցույց է տալիս այն տեղը, ուր, ըստ իրեն, գտնվել է ինքը՝ Բեռնար Բլոնդեն, ապա ավելացնում մի նախադասություն, որը երեկ ընդհանուր պաշտպանի ժպիտը հարուցեց, բայց ինձ հուզեց. «Ես չգիտեի, որ նա ֆրանսիացի ոստիկան է, հակառակ դեպքում կասեի, որ հետը ոչ մի խնդիր չունեմ»:

Քննիչի մոտ կատարված առերեսման ժամանակ յուրաքանչյուրը պնդել է իր ցուցմունքը: Իրականում, սակայն, Բեռնար

-- էջ 283 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

Բլոնդեն փոքր-ինչ փոփոխել է վկայությունը, հետևյալ ճշգրտումն է կատարել. «Հենց իմ ուղղությամբ մի անգամ կրակեցին, ես երկու անգամ փոխադարձեցի, անձանոթը ճչաց»: Մինչդեռ նախկին հայտարարություններից այն տպավորությունն էր ստացվում, որ Վազգեն Սիսյանի երեք կրակոցից հետո է ոստիկանը զենքի դիմել:

Այս ամենը չի կարող կասկած չհարուցել: Իմ նպատակը, սակայն, ինչպես ասացի, տարակուսանքներ հարուցելը չէ, ձեզ հետ մեկտեղ ամենահավանական վարկածը փնտրելն է: Իսկ ամենահավանական վարկածն այն է, որ Բեռնար Բլոնդեն առաջինն է կրակել: Ես դրա համար չեմ հանդիմանում նրան: Մենք գիտենք, որ ոստիկանը ձեռքին զենք ունի, նա աչալուրջ է, սպասում է, որ դռների մեջ մեկնումեկը հայտնվի, հյուպատոսարանից փախչողները նրան զգուշացրել են, որ ներսում զինված մարդիկ կան: Մյուս կողմից էլ մեզ հայտնի է, որ Վազգեն Սիսյանը, ըստ փորձագետների, լարվածության պատճառով չափազանց առաջ թեքված, այնպիսի դիրքում է եղել, որ չէր կարող ոստիկանին նկատել կամ նրա ուղղությամբ կրակել: Ահա՛ այս իրավիճակում ոստիկան Բլոնդեն,- կրկնում եմ, դրա համար ես նրան չեմ մեղադրում, դա նրա պարտականությունն է,- կրակում է, գրոհայինը վիրավորվում, ճչում է: Եվ միայն գետին տապալվելուց հետո երեք կրակահերթ է բաց թողնում, որոնք, սա շատ կարևոր է,- նախահարձակին ամենևին չեն վնասում:

Ի՞նչ է բացահայտում իրավիճակի այս համառոտ շարադրանքը՝ խառնաշփոթությունը, վկաների ակնհայտ տարածայնությունն ու վկայությունների հակասականությունը: Կասկածն առկա է, հետևաբար Վազգեն Սիսյանին կանխամտածված մահափորձի մեղադրական չի կարելի ներկայացնել: Նույնպիսի եզրահանգման, շատ ավելի որոշակի, մեզ մղում են քրեական օրենսգրքի 2-րդ և 295-րդ հոդվածները, ըստ որոնց՝ կանխամտածված մահափորձի մեջ մեղադրվողը պետք է անպայման սպանելու միտում ունենա:

Ուստի հարցը, որ ես ուզում եմ տալ, չափազանց պարզ է՝ երեկ ընդհանուր պաշտպանը կարողացա՞վ ապացուցել, որ Վազգեն Սիսյանը սպանելու միտում կամ նպատակ է ունեցել: Պատասխանը «ո՛չ» է, ուստի գրոհայինի արդարացումը անխուսափելի է դառնում: Այո՛, նա վիրավորվելուց հետո կրակել է ոստիկանի ուղղությամբ, բայց կրակել է վերև, միմիայն վախեց -

-- էջ 284 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Նելու համար: Վազգեն Սիսյանի նման նշանառուն, եթե ուզեր, հինգ-տասը մետր հեռավորությունից չէր վրիպի:

Մնում է անդրադառնալ իմ պաշտպանյալի երկու իրավախախտումներին՝ մարդկանց մեկուսացնելուն և զենք կրելուն: Ավելի ճիշտ՝ շարժառիթներին:

Իրականում, ինչպես պարոն ընդհանուր պաշտպանն ընդունեց, որը, կարծում եմ՝ ոչ մի կասկած չի հարուցում, չորս գրոհայինները մեղադրվում են քաղաքական բռնություն գործադրելու համար: Ֆրանսիական օրենսդրությունը միշտ էլ քաղաքական բռնությունը տարբերակել է ընդհանուր բնույթի հանցագործություններից: Քննվող գործում առկա է նաև իրավունքի և բարոյականության զուգորդությունը, որին չի կարելի չանդրադառնալ: Ես կուզեի, որ այդ կապակցությամբ ասոյանը երկու հարց նկատի ունենար: Առաջինը՝ բռնությունը ծայրահեղ միջոց է եղել, այսինքն հայերը բռնության դիմել են բոլոր խաղաղ միջոցները սպառելուց հետո, և երկրորդ՝ բռնության միջոցով ներկայացված պահանջատիրությունը օրինական է:

Այս երկու հարցերի պատասխանն, իմ կարծիքով, պիտի պայմանավորի ձեր դատավճիռը: Ես միտումնավոր օգտագործեցի «օրինական» բառը, որովհետև ընդհանուր պաշտպանը երեկ խոսում էր պատրանքայնության մասին: Իրավաբանության խնդիրը ոչ թե պատրանքայնությունը, այլ օրինականությունն է: Չորս մեղադրյալները ներկայացնում են հայ ժողովրդի պահանջատիրությունը, իսկ ըստ միջազգային օրենսդրության, ժողովուրդը ընդհանուր լեզու և մշակույթ ունեցող այն հանրությունն է, որը ձգտում է պատմական տարածքում միասնական գոյատևման: Անառարկելի է, որ հայ ժողովրդի վերամիավորումը, ցեղասպանության ընդունումը, բնօրրա նի ազատագրումը, որքան էլ ոմանց պատրանքային թվան, օրինական պահանջներ են:

Ինչ վերաբերում է երկրորդ հարցին՝ այս ամբիոնից բազմիցս նշվեց, որ անցած տասնամյակների ընթացքում հայերն իրենց նպատակներին խաղաղ, ժողովրդավարական միջոցներով հասնելու համար ամեն ջանք գործադրել են, բայց անընդհատ հուսախաբ են եղել: Հարկ կա՞ կրկին անդրադառնալու՝ Նախագահ Վիլսոնի 1918 թվականի հունվարի 8-ի՝ տասնչորս կետից բաղկացած ուղերձին, հատկապես հայերին վերաբերող պարբերությանը, Սևրի, ապա և Լոզանի դաշնագրերին: Հայերի հույսերը

-- էջ 285 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

մասամբ վերարծարծվեցին 1948 թվականին, երբ ՄԱԿ-ը ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դատապարտելու հռչակագիր ընդունեց, որի տակ ստորագրեց նաև Թուրքիան, սակայն քսանհինգ տարի անց էլ չվավերացրեց 30-րդ՝ այն չարաբաստիկ պարբերությունը, որտեղ առաջին անգամ «հայ ժողովուրդ» և «ցեղասպանություն» բառերը հիշատակվում, ընդամենը հիշատակվում էին կողք-կողքի: Եվ մինչ Ռեյմոն Արոնը, Ռոբեր Բադինտերը, Ռուան Բարթը, Ժան Մալորին, Ալֆրեդ Կաստլերը, Էդգար Մորենը, Հարուն Թերզիև ը, Անրի Թրուայան, շատ ուրիշներ իրենց բողոքի հանրագիրն էին հղում ՄԱԿ, Թուրքիան շարունակում էր ոտնահարել այն իրավունքները, որոնց պաշտպանության համաձայնագրի տակ ստորագրել էր:

Տեսնում եք՝ հայ ժողովուրդը հնարավոր բոլոր միջոցներին դիմել է: Ճիշտ է, ցեղասպանությունը 1915-ին է տեղի ունեցել, բայց ճիշտ է նաև այն, որ մարդկության դեմ գործված հանցագործությունները անժամկետանց են: Ահա՛ այս անգորությունն է Վազգեն Սիսյանին մղել գեներալ: Նա դրա իրավունքն ունե՞ր: Պատասխանը դուք եք տալու ձեր դատավճռով: Մինչ այդ, սակայն, հիշեցեք Կամյուրի հետևյալ դարձվածքը. «Ես միշտ մտածել եմ, որ նա, ով հույսը մարդկայնության հետ է կապում, խելագար է, ով հուսահատվում է՝ վախկոտ է: Այս սկզբունքային վեճը արժանապատվորեն կլուծի միայն այն անհատը, ով վերջապես կվճռի՝ բառե՞րն են գորեղ, թե՞ փամփուլշտները»:

Տիկնայք և պարոնայք երդվյալներ՝, ձեր դատավճռի մեծահոգությամբ դուք ձեր օգտին լուծած կլինեք այդ վեճը:

Ժամը 14-ն անց 45-ին հայտարարվում է ընդմիջում:

Դատաքննությունը վերսկսվում է 15-ն անց 10-ին:

Պաշտպան Մինյարի ճառը.

Պարոն նախագահ՝, պարոնայք պաշտոնակիցներ՝, տիկնայք և պարոնայք երդվյալներ՝, դուք բոլորդ միասին հավաքական ներկայացուցիչն եք ֆրանսիացի ժողովրդի, որի անունից բացահայտելու եք արդարությունը: Ես օգտագործեցի այս դժվարին, տարօրինակ, ծանրակշիռ բառը, չնայած հայտնի չէ՝ երբևէ գոյություն ունեցե՞լ է, գոյություն ունի՞:

Ձեզ անկեղծորեն ասում եմ այն, ինչ մտածում եմ՝ արդարու -

-- էջ 286 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

թյուն գոյություն չունի, գոյություն չունի որպես բացարձակ ճշմարտություն, որի շուրջը համախմբվի, որն ընդունի մարդկային հանրությունը: Գոյություն չունի, որովհետև դուք ինքներդ, ինչպես ամեն ոք, կախված եք մեր կյանքը կազմող բազում պայմանականություններից, տխրություններից և ուրախություններից:

Դատավճիռ՝ բայց ինչի՞: Արդարության՝ պահանջում է օրենքը: Եվ ահա՛ դուք հապճեպ, փաստերի, պատմության մշուշի մեջ, հենվելով այն ամենի վրա, ինչը մենք թերևս անհաջող ձեզ ներկայացրինք, կայացնելու եք մի դատավճիռ, որը ես

Նախ և առաջ կուզեի, որ ազատ կանանց, ազատ տղամարդկանց դատավճիռ լիներ:

Դուք դժվարին պարտականություն եք ստանձնել՝ դժվարին, որովհետև առաջին իսկ օրվանից մենք բոլորս համոզվեցինք, զգացինք, որ այս դատավարությունը մյուսների նման չէ և նույնիսկ այժմ՝ ավարտման պահին, հստակ չէ՝ ո՞վ է մեղադրում, ո՞վ՝ մեղադրվում: Միակ բանը, որ անդառնալի է, զգացականորեն անգամ ճշմարտացի է՝ կյանքն է: Մեղադրողներինը, մեղադրվողներինը, ո՞չ, չեմ մոռացել, նաև նրանը, ով այն կորցրել է:

Ավելի որոշակի ես պաշտպանում եմ Գևորգ Գյուզեյանի դատը, ում մեղադրում են պարոն Էոզենի կանխամտածված սպանության համար:

Ինչպես մեզ հայտնի է իրավաբանությունից, որպեսզի մարդասպանություն տեղի ունենա, անհրաժեշտ է սպանության գործողություն, զոհ, ինչպես նաև համապատասխան մտադրություն: Ահա՛, խիստ համառոտ, այն պայմանները, որոնց շրջանակում դուք տեղադրելու եք փաստերը, վերլուծելու եք ու եզրակացնելու՝ միտումնավոր սպանություն տեղի ունեցե՞լ է, թե՞ ոչ:

Գործում այդ կապակցությամբ բազմաթիվ հայտարարություններ կան, որոնցից առաջինը պատկանում է պարոն Գյուզեյանին: Թույլ տվեք համառոտ հիշեցնել. «Հսկիչ-պահապանը ձեռքին ատրճանակ ուներ: Խառը իրավիճակ էր: Նա իմ կողմն ուղղվեց: Մեր միջև ինչ-որ մեկը կար: Սրահում շատերը կային: Ես խաբուսիկ շարժում արեցի, հայտնվեցի հսկիչ-պահապանի դիմաց, ատրճանակս քունքին սեղմեցի ու պահանջեցի նետել զենքը: Նա չնետեց: Տեսա, որ ուզում է կրակել՝ ե՛ս կրակեցի: Կրկնում եմ՝ խառնաշփոթ իրավիճակ էր, հսկիչ-պահապանը

-- էջ 287 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

դուրս պրծնել ուզեց ու ատրճանակս կրակեց»: Այժմ վերհիշենք, թե ինչ են հաստատում կամ ժխտում այստեղ հանդես եկած վկաները, նկատի ունենալով հանդերձ, հարգելի տիկնայք ու պարոնայք երդվյալներ, խառնաշփոթը, որ տիրել է հյուպատոսարանում: Իրադրության արագ փոփոխությունները չէին կարող չազդել, ոմանք դա չեն էլ ժխտում, հայտարարությունների ճշմարտացիության վրա, հակասականություն չառաջացնել:

Ես անկողմնակալ կլինեմ, ոչ մի ցուցմունք չեմ անտեսի, կվկայակոչեմ անգամ այնպիսիները, որոնք թերևս չեն նպաստում իմ հիմնավորումներին: Այսպես, օրինակ, Ալիջի Գյուզեյը, որի վկայությունն ամենևին իմ օգտին չէ, հայտարարել է. «Գնդակները տեղում էին հսկիչ-պահապանի կրծքի ուղղությամբ, բայց ես չտեսա, թե ո՞վ կրակեց գլխին: Նա փորձում էր զինաթափել մորուքավորին, կարողացավ

ձեռքը իջեցնել»։ Ուրեմն որոշակի է՝ այս վկան,- դատարանի դահլիճում էլ նա նույնը պնդեց,- չի տեսել, թե ո՞վ է կրակել պարոն Էոզենի գլխին։

Վկա Ֆահրի Գալին հայտարարում է. «Ես կրակոցներ լսեցի և տեսա, թե ինչպես անվտանգության իմ գործընկերը ընկավ այն միջանցքի հատակին, որտեղ ես էի գտնվում (իրականում՝ ինքը սրահում է եղել)։ Ես չտեսա, թե ո՞վ կրակեց, քանի որ ծնկի էի չոքել, նկատեցի միայն իմ առջև հայտնված ատրճանակը, որը, չնայած չեմ կարող պնդել, ենթադրում եմ՝ պատկանում էր կա՛մ իմ գործընկերոջը, կա՛մ այն գրոհայինին, որը պայուսակից արագաձիգ էր հանում»։

Ցանկանում եմ ձեր ուշադրությունը հրավիրել նաև դատական գործի՝ 236-րդ, 638-րդ էջերի, մասնավորապես՝ մեղադրյալին Բալթասոլլուի առերեսման վրա։

«Մեղադրյալ - Հսկիչ-պահապանն ու ես քաշքշում էինք իրար։ Նրա ձեռքին զենք կար։ Իմ ձեռքին էլ։ Իրարանցման պահին ատրճանակս կրակեց։

Հարց մեղադրյալին - Վկան իրավացի՞ է, որ դուք ոտքը վիրավորելուց հետո շարունակել եք կրակել։

Պատասխան - Դա հնարավոր չէ, ես միայն մի անգամ եմ կրակել, երբ ատրճանակս սեղմել եմ հսկիչ-պահապանի քունքին։

Հարց Բալթասոլլուին - Հսկիչ-պահապանը զենք ունե՞ր։

Պատասխան - Չեմ տեսել»։

-- էջ 288 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

Մի ուրիշ վկա՝ Յազիջի Սելիմը թե՛ ոստիկանությանը, թե՛ նախաքննության և թե՛ առերեսման պահին տված ցուցմունքներում, նույնիսկ այն բանից հետո, երբ հատուկ գործերի քննիչը պատասխանելու համար ժամանակ է տվել, վստահ պնդել է. «Հսկիչ-պահապանի գոտիկին զենք կար»։

Եվ չնայած բոլոր վկաները չէ, որ հաստատում են այս հանգամանքը, ոչինչ չի բացառում, որ պարոն Էոզենը զինված է եղել։

Ի վերջո՝ նա հյուպատոսարանի անվտանգության պաշտոնյա է, որքան էլ այդ օրը ուղեթղթերի համար եկած լիներ և ընդունենք, թե զենք էլ չունենար, չէ՞ր կարող ատրճանակ գտնել, դիմադարձել, այսինքն անցնել իր անմիջական պարտականությունների կատարմանը։ Ո՞վ կարող է ժխտել այդ հանգամանքը, մանավանդ այն հայտարարություններից հետո, որոնք ես հենց նոր ընթերցեցի։ Ո՛չ ոք։ Հաջորդը, որն ինձ կարևոր է թվում և ամենևին չի վիճարկվում՝ առաջացած քաշքշոցը, պայքարը, ուժի գործադրումն է։ Մի վկա մինչև իսկ մանրամասնություններ է հիշում, նկարագրում է, թե ինչպես թուրք հսկիչ-

պահապանը կռացել, գլխով հարվածներ է տեղացրել Գյուզեյանի որովայնին: Պատկերացրեք տեսարանը՝ հակամարտող մի կողմը զինված է նռնակով, այստեղից բխող բոլոր հետևանքներով, և ատրճանակով, մյուս կողմը, չնայած հայտնի չէ՝ զինված է, թե ոչ, բայց դիմադրում է, ոմանք ասում են, թե գրոհայինի վրա էր ցատկել, մյուսները՝ գլխով փորն էր սեղմել... Ինձ լավ հասկացեք, ես չեմ ուզում պարոն Էոզենին անպայման դաժան ներկայացնել, ուզում եմ պատկերացնել իրավիճակը, այն հանգամանքը, որ Գյուզեյանի կյանքին վտանգ էր սպառնում, և ահա՛, անկանխատեսելի մի պահի, ատրճանակի փողից գնդակը դուրս է թռչում: Մի՞թե դա մեզ հիմք տալիս է ենթադրելու, որ սպանությունը կանխամտածված է եղել: Հարցին սպառնիչ պատասխանելու համար անհրաժեշտ է վերհիշել գրոհն ամբողջությամբ՝ նկատի ունենալ,- այդ առումով մենք և մեղադրող կողմը համակարծիք ենք,- որ երբ տղաները հյուպատոսարան են մտել, սպանելու մտադրություն չեն ունեցել: Այո՛, չորսն էլ զինված են եղել, որովհետև ջահերթի կամ մկրտության չեն պատրաստվել, բայց մարտախումբը մարդասպանական չի եղել, հնարավորին չափ շատ մարդ վերացնելով ծրագրերն իրագործելու նախնական միտում չի ունեցել: Սա շատ կարևոր է Գյուզեյա -

-- էջ 289 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

Նի վարքագիծը պատկերացնելու առումով:

Կա նաև մի այլ հանգամանք: Պարոն ընդհանուր հյուպատոսը՝ նման պատասխանատու պաշտոնյան, նույնպես վիրավոր, գետնին է եղել: Եթե Գյուզեյանը պատժելու, վրեժխնդիր լինելու մտադրություն ունենար, նախ Թուրքիայի բարձրաստիճան դիվանագետին չէր խնայի: Մինչդեռ վերջինս ամենայն անկեղծությամբ ի՞նչ է խոստովանում. «Ճիշտ է նաև այն, որ բազմաթիվ պատանդներ, հատկապես հյուպատոսարանի թուրք աշխատակցուհիները, ինձ օգնության հասան, ինամք տարան: Նրանք Գյուզեյանին հարցրել էին, թե կարո՞ղ են ինձ վիրակապել: Հայ գրոհայինը ոչ միայն թույլ էր տվել, այլև ավելի ուշ, անձամբ զբաղվեց իմ հետագա ճակատագրով...»: Ինչո՞ւ մտածել, որ այն անձը, որը հյուպատոսարանի մի պաշտոնյայի նկատմամբ այդքան ուշադիր է, անգամ օգնում է, մյուսին սպանելու կանխակալ մտադրություն կարող էր ունենալ: Ի վերջո, շնորհիվ պարոն Լըքլերի, հայտնի է դարձել նաև, որ մարտախումբը ամեն ինչ պայթեցնելու, վերացնելու ծրագիր չի ունեցել:

Ահա՛, պարոն նախագահ՛հ, տիկնայք և պարոնայք երդվյալներ՛ր, հենց նման դժվարին իրավիճակներից ելք գտնելու համար է մեր քրեական օրենսգիրքը դեռևս 1863 թվականին ձևակերպել կանխամտածված մարդասպանության և առանց կանխակալ մտադրության մահ հարուցող զենքի հարված հասցնելու հոդվածները: Լսվող գործում այդ հանգամանքը խնդրում եմ անպայման հաշվի առնել՝ կա՛ հրազենի մահացու կրակոց, բայց կանխամտածված սպանություն չկա:

Ես արդեն ասացի, որ ձեր ատյանը, չնայած պարոն փաստաբանապետը հատուկ նշեց, որ իրենից ՄԱԿ-ի գերագույն ասամբլեան, նույնիսկ անվտանգության խորհուրդը չի ներկայացնում, այդ առումով պետությունների վրա ներգործելու իրավասությամբ օժտված միջազգային հանձնաժողով չէ, ֆրանսիական ժողովրդի անունից շատ մեծ պատասխանատվություն է ստանձնում:

«Հուրրիեթ» լրագիրը ամեն օր ծավալուն տեղ է հատկացնում այս դատավարությանը՝ հիշեցնելու համար, որ ձեր վճիռը կարևոր է ո՛չ միայն չորս մեղադրյալների, Ֆրանսիայի հայ համայնքի, այլև թուրքական մամուլի քարոզչության կազմակերպիչների, ամբողջ Թուրքիայի համար:

-- էջ 290 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

Կրկնում եմ՝ դուք պատասխանատու եք ոչ միայն չորս երիտասարդների, այլև, ուզեք թե չուզեք, տասնյակ տարիների պատմության առջև: Ձեր կայացրած դատավճիռը կարևոր նշանակություն է ունենալու Ֆրանսիայում, այն բոլոր երկրներում, որտեղ հայկական համայնքներ կան, ամբողջ Եվրոպայում: Այդ դատավճիռը մեկնաբանվելու, դատապարտվելու կամ դրվատվելու է: Դուք չպետք է ձգտեք, - ես ինձ թույլ եմ տալիս անկեղծ լինել մինչև վերջ, - համակրելի դառնալ ոմանց, հարուցելու համար այլոց հակակրանքը: Ես կուզեի, որ խնդրի նկատմամբ սկզբունքային մոտեցում ցուցաբերվեր, քննարկվեր խորությամբ՝ այնպիսին, ինչպիսին ներկայանում է:

Երբ սկսում էի իմ պաշտպանականը, փորձում էի վերհիշել, թե մի քանի օրվա ընթացքում, հասկանալի է՝ խիստ անբավարար չափով, ի՞նչ ենք փորձել ձեզ ներկայացնել: Նախ, իհարկե, հիշողություններն ու վկայությունները այն ծերունիների, որոնք չէին ուզում ամբիոնից հեռանալ: Չէին ուզում, որովհետև առաջին անգամ արդարադատությունը խորհրդանշող ատյանում հնարավորություն էին ստացել պատմել այն ամենը, ինչ իրենց հետ պատահել է, այն ամենը, ինչը իրենց պես շատերի մահվան պատճառն է եղել: Բայց մի՞թե Հայկական հարցը միմիայն անցյալին, հուշերին է առնչվում, որն ամեն անգամ արժարձելիս՝ ժամանակի միջով հետ պիտի գնանք: Թե՞ այն այժմեական է, հրատապ, որը կարող է լուծում, ընդ որում՝ իրավական լուծում ստանալ:

Իրո՞ք, շատ դժվար է: Ահա՛ չորս երիտասարդներ, որոնք ուզում են վերադառնալ իրենց հայրենիքը: Ես կարծում եմ, որ նրանք դիմել են նման քայլի, որպեսզի Թուրքիային ստիպեն իրենց հետ երկխոսության նստել և ընդունել այն, ինչը համառորեն չի ընդունում: Հիմնական խնդիրն էլ հենց դա՝ հայ ժողովրդի, նրա գոյության ընդունումն է: Հայերը գիտեն, որ իրենք կան իրենց պատմությամբ, տոներով, աղոթքներով, երգերով ու բանաստեղծություններով, բայց ուզում են, որ իրենց ընդունի միջազգային հանրությունը, միջազգային իրավունքը: Հայերը փորձում են հասնել այն բանին, որ իրենց ընդունի մյուս՝ ուրացող կողմը: Նրանք

ցանկանում են ասել՝ մենք գոյություն ունենք, մի օր դուք ստիպված կլինեք հաշվի
նստել մեզ հետ: Դա աշխարհագրության խնդիր չէ՛, պարոն փաստաբանապե՛տ,

-- էջ 291 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

հայերը հրեաների նման սահման խախտելու, բախման մեջ մտնելու, տարածքներ
նվաճելու հնարավորություն չունեն:

Ահա՛ թե ինչու նրանք գրոհում են դեսպանատների, հյուպատոսարանների վրա:
Ուզում են խոստովանել՝ դա ինձ չի ոգևորում, բայց սա իրականությունն է, որի
հետ պետք է հաշվի նստել:

Ինչպե՞ս՝ ո՞վ գիտե: Հնարավոր է վերադարձ դեպի պատմական հայրենիք:
Ձեզնից ոմանք կարող են ասել՝ մենք այստեղ չենք հավաքվել հայերի
տարածքային խնդիրները լուծելու համար: Ես գիտեմ, դուք այդ իրավունքը չունեք,
բայց ունեք բարոյական իրավունք, որը չափազանց կարևոր է, որը ձեզ
հնարավորություն է տալիս «ո՛չ» ասել թուրքերին ու բոլոր նրանց, ովքեր խիստ
պատժամիջոցներ են պահանջում, այսինքն պահանջում են արդարությունը
գանակոծել, շնչահեղձ անել: Ֆրանսիան օրինապահ երկիր է, մենք ընդունում ենք
բոլոր իրավագրվածների իրավունքները, ձգտում ենք իրավական խնդիրներին
իրավական լուծում տալ:

Հնարավոր է, որ մի օր Թուրքիան մասնատվի: Չգիտե՛մ: Ուզում եմ հիշեցնել
միայն, որ աշխարհում եղել են պետությունների համադաշնություններ.
Հյուսիսային Ամերիկայի սահանգների համադաշնությունը (1781-1787),
Շվեյցարական համադաշնությունը (1815-1846), Գերմանական համադաշնությունը
(1815-1866), Հյուսիսային Գերմանիայի համադաշնությունը (1867-1871):

Կարելի է այս ցանկին ավելացնել նաև Նախկին Ինդոնեզական միությունը (1949-
1954), մի շարք դաշնային պետություններ՝ Բրազիլիան, Շվեյցարիան,
Հարավսլավիան, Հնդկաստանը: Այսպիսով՝ կան երկրներ, որոնք որոշակի թվով
ազգություններից են կազմավորված՝ բազմազգ են: Ուրեմն, խելագարություն չէ
այդ ուղղությամբ մտածելը:

Այստեղ հայերը շատ խոսեցին նաև ցեղասպանության մասին, ոմանք պնդում էին,
որ եթե ժամանակին ընդունվեր, հրեականը տեղի չէր ունենա: Ես վստահ չեմ, որ
այդ ընդունումով հետագա փորձություններից կարելի էր խույս տալ, ամեն ինչ
չկապենք հայ ժողովրդի դժբախտությանը: Նշենք միայն, որ երբ հիշողությունը
ոտնահարում են, գաղափարները, ազգային և միջազգային բարոյական
չափանիշները չեն առաջադիմում: Եվ այնտեղ, որտեղ հիշողությունը արգելվում է,
պատմությունը՝

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ծաղրուծանակի ենթարկվում, գրքերը կեղծվում են, արձանագրությունները՝ ջնջվում, չի՛ կարող որևէ ժողովուրդ լիովին ազատ լինել, որպեսզի տնօրինի սեփական ճակատագիրը:

Ինչո՞ւ են թուրքերը մինչև հիմա ժխտում ցեղասպանությունը: Որովհետև նրանք բավական իրազեկ են միջազգային իրավունքին, ազգերի բարոյական պարտավորություններին, գիտեն, որ այսօր, ցեղասպանության հրապարակային, բարոյական ընդունումը հետևանքներ կունենա՝ համաշխարհային հանրությունը կստիպի հատուցել պատճառած ողբերգությունը՝ նաև տարածքային առումով:

Ահա թե ինչու են թուրքերը ուրանում, ուրանում են ո՛չ թե այն բանի համար, որ վատ պատմաբաններ են,- մեկին մենք այստեղ լսելու առիթ ունեցանք,- այլ որովհետև չեն ցանկանում տարածքային պատասխանատվության ենթարկվել, որն ուղղակի բխում է ՄԱԿ-ի ընդունած՝ ցեղասպանության հայտնի հռչակագրից:

Թուրքական կառավարությունն ի վիճակի՞ է սահմանադրորեն պատասխանել նման ծանրակշիռ հարցադրումների, երբ չի հարգում անգամ իր ժողովրդին և 40.000-50.000 քաղբանտարկյալների թվով տխուր ռեկորդ է սահմանում Եվրոպայում:

Ես, իհարկե, ոչինչ չունեմ թուրք ժողովրդի դեմ: Նրանք Նազիմ Հիքմեթ անուն-ազգանունով մեծ բանաստեղծ ունեն, որը ճաշակել է իր երկրի բանտերը: Իր երկրում ձերբակալվել, հալածվել է նաև մի ուրիշ թուրք մեծ արվեստագետ, կինոբեմադրիչ Իսմայիլ Գյունեյը: Երբ «Պատը» նկարահանելիս նրան հարցրել են, թե իրավիրված թուրք և հայ դերասանները ազգային- քաղաքական խնդիրների անդրադառնո՞ւմ են, պատասխանել է. «Ոչ ոք հատուկ խոսակցության նյութ չի դարձրել, խորությամբ չի արծարծել: Ես հարկ եմ համարում ասել, որ Հայկական ցեղասպանությունը իրողություն է, և դա ոչ միայն հայ ժողովրդի, այլ նաև մե՛ր խնդիրն է: Ինքս շատ լավ հասկանում եմ հայկական համայնքի զգացումները, բայց ուզում եմ ավելացնել, որ ժողովուրդների եղբայրության կարելի է հասնել ոչ թե կրքեր բորբոքելով, այլ՝ մեր երկրի սահմանների ներսում բնակվող ազգերի ու ազգությունների՝ արդի քաղաքակրթության մակարդակով համատեղ ներդրված ջանքերով»:

Այո՛, տիկնայք և պարոնայք երդվյալներ, դուք դատելու եք մի ողբերգություն, որն աշխարհ է եկել 1915-ին, բայց մինչև հի-

մա շարունակվում և նույնիսկ խորանում է: Այդ դժբախտությունը նաև մե՛րն է, ուստի ձեր դատավճռում դուք նախ պիտի ընդունեք ցեղասպանությունը, որովհետև արդարությունը ոգեկոչելու համար պետք է ճշմարտությունը ոգեկոչել: Դուք պետք է ամեն ինչ անեք, որ չապրեք այն ամոթը, որ Սարտրն է ապրել Ռասելի դատարանում, երբ առաջին նիստի ժամանակ, վիետնամականին նախորդող ցեղասպանությունները հիշատակելիս, մի թուրք հայտարարել է, որ իրենց հայերին չեն կոտորել, նույնիսկ զգացնել է տվել, որ հայերն են իրենց ցեղասպանության ենթարկել: Մեր ժամանակի խոշորագույն գրողն ու իմաստասերը լսել է այդ ամենն ու ճշմարտությունը չի ասել, ուստի ավելի ուշ հետևյալ կերպ է արտահայտվել. «Ես խորապես ամաչում եմ դրա համար, այս երեկո ուզում եմ խոստովանել ձեզ»:

Թերևս դուք էլ նման պարզ ձևակերպումներով ուղղակի ասեք, որ աշխարհում չկա այնպիսի ժողովուրդ, որն իր տարածքները, հայրենիքն ունենալու իրավունքից զուրկ լինի: Ահա՛ ամբողջը, ահա՛ կարևորը, ինձ թվում է, դուք հենց դրանով կզբաղվեք, և ես ոչ թե կամաչեմ, այլ, ընդհակառակը, ինձ չափազանց հպարտ կզգամ, որ ձեզ համագործակցել եմ:

Պաշտպան Դևեջյանի ճառը.

Պարոն նախագահ, պարոնայք պաշտոնակիցներ, տիկնայք և պարոնայք երդվյալներ, այս օրերին, Փարիզում, բոլորը խոսում են մի գրքի ու շարժանկարի մասին, որոնք նույն՝ «Բոլոր մերոնց անունից» խորագիրն են կրում: Նույն կերպ կարելի էր կոչել նաև այս դատավարությունը: Արդեն բազմիցս ասվեց՝ այս ատյանը պատմության դատարան չէ, բայց Ֆրանսիան այն երկիրն է, որն աշխարհին, հատկապես ճնշված ժողովուրդներին ազատության դասեր է տվել: Հայերը ֆրանսիացիներից են սովորել պայքարել բռնաճնշումների դեմ, հետևաբար, անհամբերությամբ են սպասում ձեր դատավճռին:

Բայց դուք չեք կարող քննվող գործի կապակցությամբ վճիռ կայացնել, առանց նկատի ունենալու այն արտառոց հանգամանքը, որ զոհերին ոճրագործներից առաջ են դատում: Դարասկզբի նախճիրները այնքան երկար չդատապարտեցին, ուրացան, թաքցրին, որ ի վերջո զոհերն ընդվզեցին անարդարության դեմ, առաջինը հայտնվեցին մեղադրյալի աթոռին: Հայերն այլ

-- էջ 294 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

միջոց չունեին, նրանք ցանկանում էին ձերբագատվել այն մղձավանջից, որը տարիներ շարունակ տանջում էր իրենց հոգիները:

Իմ գործընկերները, երկու կողմի վկաները, թվում է, արդեն ամեն ինչ ասացին, ես ամբիոն եմ բարձրացել, որպեսզի հանգամանորեն պատասխանեմ այն չորս հարցերին, որոնք պարոն նախագահը ֆրանսիացի ժողովրդի անունից տվեց մեղադրյալներին:

Առաջին հարցը մոտավորապես այսպես էր ձևակերպված՝ ինչո՞ւ են հայերը նման քայլերի դիմում վաթսուևութը տարի անց:

Պատասխանը հստակ է՝ վաթսուևութ տարին այնքան էլ երկար ժամանակամիջոց չէ, ընդամենը երեք սերունդ է իրարից բաժանում, բնական է համարվում թոռների կապվածությունը պապիկներին ու տատիկներին: Հայ երեխաները աշխարհի բոլոր անկյուններում լսում են դարասկզբի արհավիրքների պատմությունները, որոնք տեղի են ունեցել իրենց ընտանիքներում: Մեզ բոլորիս մեր տատերը մեկ անգամ չէ, որ պատմել են այդ ամենը: Համեմատության համար ինքներդ հիշեցեք ձեր մեծհայրերին, որոնք մասնակցել են 1914-1918 թվականների պատերազմին և ինքնագոհողությամբ, անանձնական ինքնագոհողությամբ հասել այն բանին, որ Ֆրանսիան մաա այնպիսին, ինչպիսին եղել է՝ իր ազգային ինքնությամբ ու մշակույթով: Այժմ ամբողջ Ֆրանսիայում այնպիսի բնակավայր, նույնիսկ գյուղ չկա, որտեղ գոհերի պատվին հուշակոթող չլինի, որտեղ չմեծարեն մեկ ու կես միլիոն ֆրանսիացի գոհերի հիշատակը: Ինչո՞ւ ուրեմն դուք չեք ուզում, որ հայերը, որոնք անհամեմատ փոքրաթիվ են և Առաջին աշխարհամարտի ընթացքում, անբացատրելի զուգադիպությամբ, նույնքան գոհ են տվել, չհիշեն իրենց նահատակներին: Ինչո՞ւ պիտի հայերը տարբերվեն ֆրանսիացիներից, տատիկ-պապիկ չսիրեն, հենց թեկուզ այն տառապանքների համար, որ նրանք կրել են, որոնցից, ինչպես ինքներդ տեսաք, ոչ մի կերպ, ոչ մի կերպ չեն կարողանում ձերբագատվել:

«Վան» գործողությունը, ճիշտ է, տեղի է ունեցել վաթսուևութը տարի անց, բայց սոսկ այն բանի համար, որ մինչ այդ չէր կարող տեղի ունենալ: Պատճառը հասկանալի է: Առաջին սերունդը, որի՝ բռնարարքների դիմելը թերևս ավելի ընդունելի համարեիք, չնչին բացառությամբ, ընդվզելու հնարավորություն չունեն: Նա վերապարողների սերունդն էր, որը ֆրանսիական

-- էջ 295 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

ռազմանավերով հասել էր Մարսել, ո՛չ արհեստ ուներ, ո՛չ ապրելու տարրական միջոցներ, ո՛չ տեղի լեզուն գիտեր: Այդ հայերը մի կերպ տեղավորվեցին հյուղավաններում, գործարաններում սևագործ բանվորներ դարձան: Նրանք, հատկապես այն ամենից հետո, ինչ տեսել, կրել էին, պայքարի մասին չէին կարող

մտածել՝ միայն մեկ, ընդ որում բավականին դժվար՝ սեփական գոյությունը պահպանելու հոգսն ունենին:

Երկրորդ սերունդը, որը վերապրող գաղթական լինելու համար անորոշ ամոթ էր զգում,- հասկանալի է՝ հաճելի չէ նախճիրի ենթարկված ժողովրդի պատկանելը,- ձգտում էր մերվել այն երկրին, որտեղ, այո՛, իրեն ապաստան տվել էին, բայց, ինչպես քիչ առաջ ոստիկանը ատյանի շենքի շուրջը հավաքված ցուցարարներին՝ «սև քամակ» էին կոչում: Նրանք՝ այդ հայերը չափազանց շատ էին ուզում տարրական իրավունքներ ունենալ, Ֆրանսիայի քաղաքացի, հասարակության լիարժեք անդամ դառնալ, որն իրականում չափազանց դժվար էր, նախ՝ օտար ծագման, ապա՝ այն բանի պատճառով, որ չնայած աստիճանաբար մեղմանալուն,- ես գոնե բողոքելու պատճառ չունեմ,- ազգային խտրականությունը, համենայն դեպս, իրեն զգացնել էր տալիս:

Ահա՛ թե ինչու բնական է, որ ընդվզումը բաժին ընկավ երրորդ սերնդին: Այդ սերունդը չէր կարող խուսափել իր ճակատագրից, արդեն մերվել էր ասպնջական երկրին, դրա համար էլ կարոտը, ողբերգության հիշողություններն ավելի ու ավելի էին ծանրանում հոգուն: Ազգային ինքնության գիտակցումը այսօր համընդհանուր երևույթ է՝ կորսիկացիները, բոետոնները, բասկերը, Ֆրանսիայի ամենաաննկատ ծայրամասի բնակիչը, որը, ընդունե՛նք, ավելի քիչ տարբերություններ ունի ֆրանսիացիներից, քան հայերը, իր արմատներն է որոնում: Ինչպե՞ս կարող է նման անցյալ ունեցող երիտասարդ հայը նույնը չանել: Երիտասարդ հայը կարիք ուներ զինված պայքարի հենց թեկուզ ողնաշարն ուղղելու համար, որը վաթսուևուկը տարի շարունակ գոհ, հալածված, մերժված լինելու պատճառով այնքան էր կքվել, որ անհնար էր դարձել ապրելը: Դուք հավանաբար լսեցիք այն հայ երիտասարդներին, որոնք մեղադրյալների միջոցով բացահայտում էին իրենց, որոնք երգում էին. «Բավական է ապրող մեռելներ լինելը, զինված պայքարը մեզ արժանապատվություն

-- էջ 296 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Տվեց՝: Ինչպես Իսրայելի պետության հիմնադիրները հպարտություն հաղորդեցին հրեա ժողովրդին, այնպես էլ իրենց ազգային տարրական իրավունքներն ընդունել պահանջող այս երիտասարդները հայկականությամբ են համակում ամբողջ Սփյուռքի հայերին՝ անկախ այն բանից, նրանք մերվե՞լ են իրենց նոր միջավայրին, թե՞ ոչ:

Հայերը վաթսուևուկը տարի համբերեցին, որովհետև կարծում էին, որ աշխարհում ինչ-որ բան կփոխվի, անարդարությունը կբացահայտվի: Սակայն ՄԱԿ-ի մերժումից, իրար հաջորդող ուրացումներից, հուսախաբություններից հետո նրանց այլ բան չէր մնում անել:

Երկրորդ հարցը մոտավորապես այսպես էր ձևակերպված՝ ինչո՞ւ պիտի որդիները պատասխան տան հայրերի համար: Ի՞նչ Տերևները բացատրեց՝ որովհետև որդիները համամիտ են իրենց հայրերին: Ինքներդ դատեցեք, մեկ շաբաթ տևող դատավարության ընթացքում քաղաքացիական հայցվորները, թուրք վկաները, որոնց լսելու հնարավորություն ունեցանք, մի չնչին արտահայտությամբ, մի բառով անգամ չցավեցին այն ամենի համար, ինչ տեղի է ունեցել վաթսուևութը տարի առաջ: Մինչև իսկ ա՛յս սրահում ոչ մի թուրք չի ցանկանում ընդունել Հա յոց ցեղասպանությունը: Նրանք ուրանում, ուրանում են համառ հետևողականությամբ, ամեն անգամ հայկական պահանջատիրությունը բախվում է պատմության աներևակայելի կեղծումների: Դրանց դեմ պետք է պայքարել հենց թեկուզ հայերի ազգային արժանապատվության համար, որը ավելի ու ավելի հաճախ է վիրավորվում, քանի որ մեղադրանքներ են հնչում Առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան կայսրությանը դավաճանելու, ռուսների կողմն անցնելու շինծու պատրվակներով:

Այդ կապակցությամբ հիշեցնեմ միայն այն ժամանակվա Թուրքիայի պատերազմական նախարար Էնվեր փաշայի հայտարարությունը. «Ես հայ ժողովրդին, որի անմնացորդ նվիրվածությունը կայսերական իշխանությանը հայտնի է, ուզում եմ մատուցել իմ գոհունակությունն ու երախտագիտությունը»:

Այս խոսքերը Կոստանդնուպոլսի գերմանական լրագրում տպագրվել են 1915 թվականի հունվարի 26-ին՝ ցեղասպանությունը սանձազերծվելուց ուղիղ երեք ամիս առաջ:

Ինչպիսի՞ անպատկառություն: Ես այլ արտահայտություն դժվարանում եմ գտնել, որովհետև, արդեն նշվեց, երեք ամիս

-- էջ 297 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

անց Հալեպի նահանգապետը այսպիսի հեռագիր պիտի ստանար. «Հայերի՝ Թուրքիայում ապրելու, աշխատելու իրավունքը մեկընդմիջտ վերացված է: Կառավարությունը, ստանձնելով ամբողջ պատասխանատվությունը, հրամայում է չխնայել անգամ օրորոցի երեխաներին»:

Նման հեռագրերը չափազանց շատ են:

Պարոն նախագահ՝, թույլ տվեք ձեր՝ վաթսուևութը տարի անց զենքի դիմելու հարցը քաղաքացիական հայցվորներին ուղղել՝ ինչո՞ւ եք դուք վաթսուևութը տարի անց էլ ուրանում այս ամենը: Խոսքը մի ոճրագործության մասին է, որը թվում է թե թուրքերի ներկա սերնդի հետ կապ չպետք է ունենար: Բայց նրանք ուրանում են, որովհետև նույնը շարունակվում է այսօր: Մարդու իրավունքների պաշտպանության, Միջազգային ներման հանձնաժողովները վկայում են, որ

հայերին այսօր էլ են ճնշում Թուրքիայում, քրդական գյուղեր են հրդեհում, բնաջնջում, վերացնում:

Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը ավետարանչական կազմակերպություն է, հայերի հետ ուղղակի առնչություն չունի: 1981 թվականի հունիսին խորհուրդը Բոյուսելում հետևյալ զեկուցագիրն է հրապարակել. «Քրիստոնյա փոքրամասնությունները Թուրքիայում հալածանքի են ենթարկվում: Հալածանքի որոշակի ձևերն են իրավաբանական ու վարչական խտրականությունը ցանկացած ոլորտում, տարրական իրավունքների ոտնահարումը, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական համաձայնագրի» խախտումը: Խախտվում են հատկապես քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ Թուրքիայի ստանձնած միջազգային պարտավորությունները, մանավանդ՝ Լոզանի պայմանագիրը: Հարկավոր է շեշտել (նկատի ունեցե՛ք՝ Եկեղեցիների համաշխարհային խորհու՛րդն է դա հայտարարում), որ ցեղասպանությունը 1915 թվականին չի ավարտվել, մարդկային տարբեր խմբերի կոտորածները, որոնք ցեղասպանության բնույթ են կրում, տեղի են ունենում Ստամբուլում (զարմանալի է, որ ձեր վկան դա չի նկատել), հանրապետական Թուրքիայում (լավ լսե՛ք տարեթվերը)՝ 1920, 1923, 1956, 1974 թվականներին»:

Շարունակենք սակայն. «Լեզվի և մշակույթի, ազգային, կրոնական պատկանելության հողի վրա խտրականությունը, հալածանքը շարունակվում են նաև մեր օրերում, ֆիզիկական բնաջնջ -

-- էջ 298 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

մանը հաջորդում է մշակութային ցեղասպանությունը»:

Եթե Եկեղեցիների համաշխարհային խորհուրդն է հավաստում, որ այդ ամենը շարունակվում է, ինչո՞ւ եք ուզում, որ հայերը լռեն, համակերպվեն, ինչպես նախկինում են համակերպվել:

Թուրքիայում սկսել են նաև հալածանքի նոր, անհանդուրժելի ձևեր կիրառել: Թուրքական անձնագրերը, որոնք «նուֆուս» են կոչվում, քաղաքացու դավանանքն են ներկայացնում: Իմ ձեռքին եղած օրինակում «Դինի»՝ («Կրոնի») դիմաց գրված է՝ քրիստոնյա, «Մեսիեբի» («Դավանանքի») դիմաց՝ կաթոլիկ: Սա շատ հարմար ձև է այն երկրի վարչարարների համար, ովքեր ազգաբնակչությունը տարանջատում են լավ ու վատ թուրքերի:

Թուրքիայում հատուկ օրենք կա, որն անտեսում է մշակութային տարբերությունները: Այդ օրենքի 38-րդ հոդվածը նշում է, որ արգելված է հավաստել, որ երկրում գոյություն ունեն ազգային, քաղաքական, լեզվական

փոքրամասնություններ, և բոլոր նրանք, ովքեր թուրքերենից բացի այլ լեզու կխոսեն, կհետապնդվեն:

Այս ամենը շարունակվում է, որովհետև հայ ժողովրդի դահիճը, քիչ առաջ իմ ընթերցած բնաշնչման հեռագիրը ստորագրողը, Թուրքիայում մեծարվում է որպես ազգային հերոս, նրա անունով մայրուղիներ, դպրոցներ են անվանակոչվում:

Ահա՛ Թուրքիայի և Գերմանիայի տարբերությունը, պարոն փաստաբանապե՛տ: Ինքներդ ասացե՛ք՝ որևէ երիտասարդ հրեա կհամակերպվե՞ր, չէ՞ր ընդվզի, եթե Բոննում կամ Բեռլինում Ադոլֆ Հիտլերի անունով պողոտա, ամբողջ Գերմանիայում թեկուզ մի դպրոց լիներ: Հիշեցե՛ք, թե ընդամենը մի քանի օր առաջ կանցլեր Կոհլին ինչպես դիմավորեցին Երուսաղեմում՝ այն դեպքում, երբ Գերմանիան արդեն ներողություն խնդրել էր, Վիլլի Բրանդը ծունկի էր եկել Օսվենցիմում: Իսկ այստեղ, քաղաքացիական հայցվորները ուղղակի կամ անուղղակի կերպով շարունակում են ուրանալ...

Թուրքիան, ինչպես վկայում է «Լը Մոնդ» լրագրի 1977 թվականի հուլիսի 13-ի համարը, արգելում է երկիր մուտք գործել այն օտար քաղաքացիներին, որոնց ազգանունը «յան»-ով է վերջանում: Թուրքերը հայերին հալածում են ո՛չ միայն իրենց երկրում, այլև ամբողջ աշխարհում և հատկապես՝ Ֆրանսիայում: Դարձյալ հիշենք ցեղասպանության զոհերին նվիրված

-- էջ 299--

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

Մարսելի հուշարձանի պատմությունը: Այն երկիրը, որը դահճի պատվին հուշարձաններ է կանգնեցնում, չէր ցանկանում, որ հայերն իրենց նահատակների հիշատակին հուշակոթող կառուցեն: Կարելի՞ է քսան տարեկան լինել ու չընդվզել: Պարոն նախագահ, սա հենց ձեր «Ինչո՞ւ են բռնարարքները Ֆրանսիայում տեղի ունենում» հարցի պատասխանն է: Ավելացնեմ նաև, որ ցեղասպանությունը յուրաքանչյուր հայի ինքնության անբաժանելի մասն է, որն արտահայտելու անխուսափելի կարիք, պահանջ է զգում: Եվ ամեն անգամ, հենց որ Ֆրանսահայերը դիմում են այդ քայլին, թուրքական իշխանությունները միջամտում, խանգարում են: Երբ Ժան-Մարի Գառզուն «Հաշետ» հրատարակչությունում ցանկանում էր լույս ընծայել «Օրինակելի ցեղասպանություն» գիրքը, որը մեր օրերում առաջին անգամ ցեղասպանության պատմությունը ներկայացնելու փորձ էր, թուրքական կառավարությունը ճնշում գործադրեց հրատարակչատան վրա, և քանի որ վերջինս Թուրքիայում իր շահերն ուներ, արդեն տպագրված աշխատությունը այդպես էլ լույս չընծայեց: Հեղինակը ստիպված եղավ դիմել մի ուրիշ՝ «Ֆլամարիոն» հրատարակչատանը, որն ավելի համարձակ էր, կամ թերևս Թուրքիայի հետ սերտ հարաբերություններ չուներ, և «Օրինակելի ցեղասպանությունը» ասպարեզ ելավ:

Թուրքական հալածանքները, սակայն, դրանով չավարտվեցին: Գիրքը հրատարակվելուց հետո ռադիոլրագրող Ժակ Շանսելը հարցազրույցի հրավիրեց Ժան-Մարի Գառզուկին, և քանի որ խոսակցություն եղավ նաև ցեղասպանության մասին, Ֆրանսիայում Թուրքիայի դեսպանը պաշտոնապես բողոքեց, պահանջեց կարգի հրավիրել լրագրողին: Նույն դեսպանն է պարբերաբար խանգարում, որպեսզի դեռևս տարիներ առաջ նախատեսված՝ Հայոց ցեղասպանության վերաբերյալ հեռուստատեսային բանավեճը տեղի չունենա: Ահա՛ թե ինչու Գևորգ Գյուզեյանը հայտարարում էր, որ ամբողջ հայկական համայնքը թուրքական հյուպատոսարանը քարոզչության, բռնաճնշման կայան է համարում, իրենք գրոհում են թուրքական դիվանագիտական հաստատությունների վրա, որովհետև գտնում են, որ Թուրքիայի անբաժան մասն են: Եվ իրոք, հարձակումը Փարիզի թուրքական հյուպատոսարանի վրա, ըստ էության, պատերազմ է՝ պատերազմ Թուրքիայի և հայերի միջև, որի հետ Ֆրանսիան ոչ մի առնչություն չպետք է ունենար: Եթե հանրագումարի բե -

-- էջ 300 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

րենք պատերազմական գործողության արդյունքը, կտեսնենք, որ թուրքերից մեկը սպանվել է, մյուսը՝ վիրավորվել: Վիրավորվել է նաև երկու հայ: Այլ կերպ ասած՝ Ֆրանսիան թիրախ չի հանդիսացել:

Դուք իրավացի եք, պարոն նախագահ, «ահաբեկչություն» բառը ո՛չ մի կերպ չի կարելի ընդունել, հենց այն պատճառով թեկուզ, որ գերմանական քարոզչությունն է հորինել, Գեբելսն այդպես է կոչել Ֆրանսիական Դիմադրության շարժումը: Մյուս կողմից էլ, եթե որևէ երկրում կան ահաբեկիչներ, նշանակում է՝ կա նաև բռնատիրություն: Քիչ առաջ դուք լսեցիք «ահաբեկիչների գլխավորի»՝ Միսաք Մանուշյանի կնոջը՝ տիկին Մելինեին, որը եկել էր, որպեսզի, ի՛ր իսկ խոստովանությամբ՝ «նայի չորս երիտասարդների աչքերին», «սեղմի նրանց ձեռքերը»: Դա նշանակում է, որ Վազգենին, Գևորգին, Արամին, Հակոբին նա

համարում է իր ամուսնու, նրա գործի շարունակողները:

«Մեղադրյալների պայքարի միջոցները օրինակա՞ն են եղել» հարցին միանշանակ կարելի է պատասխանել, որ նրանք սպանելու մտադրություն չեն ունեցել: Նույնիսկ քաղաքացիական հայցվորները դա խոստովանելու բարեխղճությունն ունեցան:

Ասվածը առավել ևս վերաբերում է Հակոբ Ջուլֆայանին, որը զենքի է դիմել այն բանից հետո միայն, երբ Թուրքիայի գլխավոր հյուպատոսը (դա, ի պատիվ իրեն, ինքն էլ ընդունում է) իրավիճակից ելնելով կրակել է, փամփուշտի արճիճները խոցել են հայ գրոհայինի մարմինը: Այսքանից հետո անգամ Ջուլֆայանը, թեև հյուպատոսի ուղղությամբ կրակահերթ է բաց թողել, բայց նշան չի բռնել:

Ուրեմն, կանխամտածված մահափորձի մասին ընդհանրապես խոսք չի կարող լինել: Այո՛, հսկիչ-պահապանը սպանվել է, դա փաստ է, բայց փաստ է նաև այն, որ ինքն է իր վախճանին ընդառաջ գնացել:

Այստեղ արժարժվեց նաև՝ «Նման գործողությունը ի՞նչ օգուտ կարող է տալ» հարցը: Պատասխանում եմ՝ արդեն տվել է, որովհետև պարոն փաստաբանապետը, որը գաղափար չուներ Հայկական հարցի մասին, այս դատավարության շնորհիվ շատ բան կիմանա ու, ամենայն հավանականությամբ, չի մոռանա: Չորս հայ երիտասարդների գործողությունը օգտակար կլինի նաև Նրանց, ովքեր կարծել են, թե կարելի է անպատիժ ոճիր գործել, պատմության դատաստանին չենթարկվել: Այնպես որ, պարոն

-- էջ 301

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

հյուպատո՛ս, դուք իրավունք ունեք ձեր կառավարությանը զեկուցելու, որ ձախողված ցեղասպանությունից վատ ոչինչ չի կարող լինել: Մի քանի հոգի հրաշքով փրկվել են այդ սպանոցից, և ահա՛, ձեզնից հաշիվ են պահանջում: Հայկական շարժումը, որը սկիզբ է առել տասը տարի առաջ, այլևս կանգ չի առնի: Վաղ թե ուշ՝ դուք ստիպված կլինեք բանակցությունների սեղան նստել, որովհետև հարություն է առել հայ ժողովրդի հույսը: Մեղադրյալի աթոռին հայտնված այս չորս երիտասարդները առանձին չեն, ամբողջ աշխարհի հայությունը արդարության անկասելի ձգտումով է համակված, այնպես որ, ինչ պատիժ էլ նրանք ստանան, հետևորդներ անպայման կունենան: Չորսը տվեցին առաջին օրինակը, նրանց ընդվզումը չի դադարի, հայ ժողովուրդը զարթնել է: Հայերն արդեն համոզվել են, որ վաթսուներկու տարվա համբերությունը ոչնչի չի հանգեցրել:

Դատավճիռը կայացնելիս չմոռանաք,- կարծում եմ դուք դա զգացիք այստեղ ինչպես հեռագրերից, վկայություններից՝ չնայած բազմաշերտությանը, հասարակական, քաղաքական, կրոնական տարբերություններին, ամբողջ Ֆրանսիայի հայ համայնքը միակամ է չորս հայ երիտասարդներին, նրանց հետ նստած է մեղադրյալի աթոռին: Հիշեցե՛ք, որ դուք նրանց էլ եք դատում, դատում եք արքայազանների այն երկար քարավանները, որոնց դեգերումները այսօր, այս սրահում հանգրվանեցին: Այսօր, այս սրահում ներկա են բոլոր այն տղամարդիկ, որոնց գանգերը ցիրուցան եղան թուրքական խզակոթի հարվածներից, կանայք, որոնց որովայնները ճեղքվել, աչքերն արցունքներից խամրել էին, ինչպես նաև երեխաները, որոնց փորերը քաղցից փքվել ու մահացել էին մայրերի չորացած ստինքները շուրթերի արանքում:

Դուք նրանց բոլորին մի անգամից եք դատելու: Նրանց բոլորի ստվերները ուղեկցում են չորս հայ երիտասարդներին, որովհետև առանց այդ ստվերների՝ չորսից ոչ մեկն այստեղ չէր լինի: Մի՛ շփոթեք զոհերին: Երեք հազարամյա մի հին

ժողովուրդ, շունչը պահած, արդարության է սպասում: Մի՛ գլացեք, հո՛ւյս տվեք նրանց, որն այս դեպքում մեղադրյալներին ազատ արձակել է նշանակում:

ՆԱԽԱԳԱՀ - Վերջին անգամ ընդհատենք ունկնդրումը: Նիստը կվերսկսենք 17-ն անց 15-ին:

-- էջ 302 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

Ժամը 16-ն անց 50-ին հայտարարվում է ընդմիջում:

Դատաքննությունը վերսկսվում է 17-ն անց 20-ին:

Պաշտպան Լըքլերի ճառը.

Պարոն նախագահ, պարոնայք պաշտոնակիցներ, տիկնայք և պարոնայք երդվյալներ, միտք ունի՞ արդյոք մի անգամ ևս վեր կենալ և ասել այն, ինչ ձեզ հայտնի է դատավարության առաջին օրից: Ես պաշտպանում եմ հպարտ կանգնած չորս երիտասարդներին և գիտեմ, որ նրանց միջոցով պաշտպանում եմ բզկտված ու խոշտանգված մի ժողովրդի, որն այժմ մեղադրյալներին է նայում և իր լավագույն զավակները համարում:

Ես պաշտպանում եմ նրանց, ովքեր հուշերով հանդես եկան այս ամբիոնից, նրանց, ովքեր այդքան տառապել, ընչազուրկ՝ մեր երկիրն են եկել և զավակներին կարողացել են փոխանցել միայն իրենց վիշտը, ողբերգությունը, անցյալը: Նրանք այսօր հպարտությամբ են համոզվում, որ իրենց ժողովուրդը՝ հայ ժողովուրդը դեռևս կանգուն է: Ի վերջո, մարդկության հավերժական օրենքն է ի հեճուկս պատերազմների ու թշվառության, մահվան վտանգի, աներեր մնալը:

Վկայակոչելով Էյուլարին, ուզում եմ ասել, որ ես հան դես չեմ գալիս թուրք ժողովրդի դեմ, որովհետև «մարդկության հիասքանչ օրենքն է ջուրը՝ լույսի, երազն՝ իրականության, թշնամիներին՝ եղբայրների վերածելը»: Ես ուզում եմ, որ իմ պաշտպանականը նույնքան եղբայրական լինի, թուրք և հայ ժողովուրդները վաղը, հանձին միմյանց, համակեցության հույս ունենան:

Գիտեմ, որ Թուրքիայի պարոն հյուպատոսը պաշտոնի բերումով հրազենով վիրավորվել, տառապել է, բոլոր նրանք, ովքեր տառապել են, արժանի են հարգանքի: Հավատացե՛ք, ես երբեք չեմ մոռանում տիկին Էոզենին և իր որբերին: Պարոն Էոզենի մահը, ինչպես բոլոր նահատակներինը, ծանրացած է մեզ վրա: Ես մտածում եմ նրա այրու, բայց նաև Իրանում գնդակահարված Եղիա Քեչիշյանի, Թուրքիայում կախաղան հանված Լևոն Էքմեքճյանի մայրերի, այն բոլոր մայրերի մասին, ովքեր ողբում են պայքարում գոհված զավակների կորուստը: Որքա՞ն

ողբերգություն և թշվառություն կա այս աշխարհում, ինչո՞ւ են մարդիկ իրենց արժանապատվությունը վերականգնելու համար ստիպված լինում բռնության դիմել:

-- էջ 303 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

Ինչո՞ւ: Հենց այդ հարցին, ըստ երևույթին, պիտի պատասխանեք դո՛ւք: Ես ոտքի եմ ելել ամենավերջում և շատ բնական եմ համարում, որ պաշտպանականով հանդես են գալիս ինչպես հայ, այնպես էլ ֆրանսիացի փաստաբաններ: Նախ նկատի ունեմ Էմիլ Ասլանյանին, որը ներկայացնում է ինքնահաստատումը գտած հայերի սերունդը և խոստովանում է, թե մինչև ո՞ր աստիճանի այս երիտասարդների պայքարը իրենն է, նկատի ունեմ Րաֆֆի Փեշտիմալջյանին, ում խոսքը, ինչպես բոլոր հայերինը, հուզիչ էր, քանի որ պատմում էր մոր, նրա՝ արյան հիշողության մասին, որը մինչև հիմա առկա է իրենց ընտանիքում: Նույնը կարելի է ասել Պատրիկ Դևեջյանի մասին, ում, չնայած մեր բազում տարածայնություններին, այսօր եղբայրաբար միացնում է տառապած ժողովրդի համար մղվող դժվարին պայքարը: Կուզեի անպայման նշել նաև Ֆրանսիս Թեդժենին՝ մարդկային հիմնարար իրավունքի, և Ժան-Պիեռ Մինյարին՝ արժանապատվության մասին խոսելու համար:

Ինձ մտում է, ուրեմն, սրտի՛ լեզվով խոսել: Թերևս, բայց ես խնդրում եմ չորսին էլ ազատել ոչ միայն զգացական, այլ նաև բարոյահոգեբանական, քաղաքական նկատառումներով:

Մենք լսեցինք քաղաքացիական հայցվորներին, որոնց ետևում նկատեցինք թուրքական կառավարության ուրվագծվող ստվերը, և չնայած մեր մտավախությանը, ֆրանսիացի փաստաբաններից ատելության խոսքեր չլսեցինք: Պարոն ընդհանուր պաշտպանն իր հերթին ընդունեց գործողության քաղաքական դրդապատճառները, բայց պահանջեց ամենայն խստությամբ գործադրել օրենքը: Անողորմ օրենքը, որի հետ հայ ժողովուրդն առնչվել է իր պատմության ընթացքում: Երբ Թեիլերյանը հայության դահճին՝ Թալեաթ փաշային գնդակահարեց կամ մահապատժի ենթարկեց, ինչպես ուզում եք, և դատավարության վերջում (որը զարմանալիորեն նման էր մեր այս դատավարությանը, միայն վկաներն էին անհամեմատ երիտասարդ, որովհետև դեռևս 1922 թվականն էր) փաստաբանները արդարացում պահանջեցին, ընդհանուր պաշտպանը նորից խոսք վերցրեց ու ասաց. «Պարոնայք երդվյալներ, պարոնայք պաշտպանները մոռացան մի բան ասել կամ թերևս հստակ չասացին. Դատավորը պարտավոր է ըստ օրենքի դատել: Դատավորը պարտավոր է դիմել տրամաբանությանը, ճշտել ներկայացված փաստերը, տար -

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

բերակել, վճիռ կայացնել: Պարզել, թե արդյո՞ք օրենքը դատապարտում է այդ փաստերը: Եթե դատապարտում է, իրավունք չունի ասելու՝ «Այո՛, օրենքը դատապարտում է, բայց ես հավանություն չեմ տալիս դատապարտությանը»:

Թեհլերյանին արդարացրին:

1922-ին Բեռլինում վեհանձն դատավորներ կային, ինչպես այժմ Ֆրանսիայում կան: Դուք դատելու եք մարդկանց: Մարդկանց՝ իրենց արածի համար, բայց մարդու արածը միայն փաստական կողմ չունի: Յուրաքանչյուր արարք ինքը՝ մարդն է: Չորս մեղադրյալին դուք դատելու եք այս մտայնությամբ, շատ լավ իմանալով, որ հայ ժողովուրդն այստեղ ներկա է, սպասում է ձեր վճռին:

Ես գիտեմ, դուք դատավորի պատասխանատվություն եք կրում, որը առանձնահատուկ եմ ուզում կարևորել: Քիչ անց քննության է ենթարկվելու հենց դա՝ ձեր պատասխանատվությունը:

Ինչո՞ւ են չորս երիտասարդները հայտնվել այստեղ: Ինչո՞ւ են նրանք ապրում հին հուշերով և վաթսուևութը տարի անց թուրքական կառավարությանը մեղադրում այն ամենի համար, ինչ արել է Օսմանյան կայսրությունը: Ինչո՞ւ են նրանք մարդ սպանել: Ինչո՞ւ պետք է նրանց ազատ արձակել:

Այս երիտասարդները Ֆրանսիա են եկել, որպեսզի գտնեն իրենց հիշողությունը: Նրանք ապրել են Լիբանանում, չորսից մեկի՝ կարծեմ Բասմաջյանի մայրը քննիչին բացատրել է. «Հասկանո՞ւմ եք, Լիբանանում շատ դժվար է, արաբները մեզ ասում են՝ ինչո՞ւ եք մեր երկիրը եկել, նույնիսկ քրիստոնյաներն են հարցնում՝ ի՞նչ գործ ունեք այստեղ, վերադարձե՛ք ձեր տները»:

Ո՞ր՞ իրենց տները: Մերձավոր Արևելքի ահավոր պատերազմում, որտեղ մարդիկ բախվում են մի փոքրիկ թաղամասի համար, որտեղ ժողովուրդներն ու համաշխարհային պատմությունը գոյատևում են ռմբահարումների ներքո՝ դաժան պայմաններում, որտեղ երեխաները տասնհինգ տարեկանից գենքերը ձեռքին կռվում են սոսկ իրենց գյուղը պահպանելու համար, հայերին հասկացնում են, որ Լիբանանն իրենցը չէ, և նրանք հասկանում են, որ աշխարհում գոյություն ունի մի ազգ, որին պատկանում են միայն իրենք:

Ո՞րն է հայերի գոյության նախապայմանը, իհարկե՝ նախ երեք հազարամյա պատմությունը: Այս ժողովրդին անընդհատ

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

ասպատակել են ամեն կողմից, վաչկատուն ցեղերը սրի քաշել, հայը ենթարկվել է մերթ այս, մերթ այն տերությանը, սակայն երեք հազար տարի անընդմեջ գոյատևել է բնօրրանում, այն լեռների ներքո, որոնց իշխում է Արարատը՝ Հայաստանի խորհրդանշանը: Հայերն ապրել են իրենց կրոնով, եկեղեցիներով, ծեսերով, մշակույթով, երգով ու պարով, արհեստներով, հոգու խորությամբ, բարի համբավով, բացառիկ այբուբենով, բնանկարի ինքնատիպությամբ, անկրկնելի այգաբացներով: Ի՞նչ է եղել այդ ամենը: Համաշխարհային հանրագիտարանը վկայում է. «Արևելյան Անատոլիան հիմնականում բնակեցված է կիսաքրջվոր քրդերով, գյուղատնտեսության արդիականացման համընդհանուր ձգձգումը այն դարձրել է ամբողջ Թուրքիայի ամենաթերզարգացած երկրամասը»: Մինչդեռ ամենահարուստն է եղել:

Ուրեմն, ի՞նչ տեղի ունեցավ: Ինքներդ եք հասկանում՝ ես չեմ ուզում վիճել թուրք պատմաբանի հետ, հիշատակել պարոն Մորգենթաուի՝ Թուրքիայում Միացյալ Նահանգների դեսպանի հուշերը, որը, երբ ջանացել է փրկել հայերին, Թալեաթ փաշան կանխել, ասել է. «Դուք ամերիկացի հրեա եք, ինչո՞ւ եք հետաքրքրվում այդ մարդկանցով»: Հարկ չկա թերևս անդրադառնալ նաև Եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահ Լեփսիուսի գեկուցագրերին, այդ տարիներին Թուրքիայում եղած լրագրողների անթիվ վկայություններին և հատկապես համայնական հիշողությանը, որի փաստերը համընկնում են, պատասխանում՝ «Ցեղասպանություն եղե՞լ է» հարցին: Եթե չի եղել, ո՞ր գնացին այն երկրամասի բնակիչները, որն այսօր Արևելյան Անատոլիա է կոչվում, այս սրահի ունկնդիրները որտեղի՞ց են եկել: Նրանք եկել են դարի ամենամեծ ողբերգությունից, դուք լսեցիք մեկի, երկուսի, երեքի, չորսի պատմությունները: Որքան վատ եմ զգում ինձ, որ ստիպված եղա ամբիոնից իջեցնել այն ծերունուն, որն իր տառապանքները հրապարակայնորեն պատմելու համար վաթսուևութը տարի սպասել էր: Իջեցրի, որովհետև, տիկնայք և պարոնայք երդվյալնե՛ր, ձեզ թվում էր, որ դուք այդ ամենն արդեն լսել եք: Մտածե՛ք ուրեմն հայ համայնքի՝ բռնագաղթի գրկանքները սկզբից մինչև վերջ կրած մարդկանց մասին, բռնագաղթ, որը գիտականորեն էր կազմակերպվել ու իրագործվել՝ ամենևին էլ ո՛չ այն բանի համար, որ հայերը թիկունքում վտանգ էին ներկայացնում, Դաշ -

-- էջ 306 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Նակիցներին էին պաշտպանում: Ինձ համար կարևորը զոհերն են՝ տղամարդիկ, կանայք ու երեխաները: Վերապրողների պատմություններից պարզ է դառնում, որ տղամարդիկ ավելի բախտավոր են եղել, որովհետև առաջինն են սպանվել, մնացածները աքսորվել են: Ճանապարհին կանայք բռնաբարվել են, երեխաները

խաչվել կամ գետը շարտվել՝ ահա՛ մի ամբողջ ժողովուրդ բնաջնջելու գիտական ծրագիրը: Իրենց գյուղերից, տներից հանված անպաշտպան արտոբանկներին ո՞ր են քշել: Դեպի անապատ:

Բռնագաղթի պատմություններն անվերջանալի են, եղել են դեպքեր, որ մարդկանց գնացքներով են տեղափոխել, ինչպես Երկրորդ աշխարհամարտի ժամանակ՝ հրեաներին: Ահա՛ թե ինչ է պատմում մի այլագգի ականատես. «Ընկճված սրտով մենք հեռացանք քաղաքից, և հազիվ էր գնացքը ճամփա ընկել, հանդիպեցինք լեփ-լեցուն վագոններով թշվառների, որոնց այնպիսի տեղեր էին տանում, որտեղ սնունդ հայթայթելու ոչ մի միջոց չէր կարող լինել: Ամեն կայարանում, հենց կանգ էինք առնում, կողք-կողքի տեսնում էինք նման գնացքներ: Բոլորն էլ կազմված էին անասնավագոններով, պատուհանների ճաղաշարերի հետևից երևում էին փոքրիկ երեխաներ, բաց դռներից՝ ծերունիներ, պառավներ, նորածիններին գրկած երիտասարդ մայրեր: Նրանց լցրել էին իրար վրա, ոչխարների, խոզերի պես խցկել, մարդկանց անասուններից վատ էին վերաբերվել:

Երեկոյան ժամը 8-ին մենք մի կայան հասանք, որտեղ շարվել էր այդ գնացքների մեծ մասը: Հայերը մեզ պատմում էին, որ արդեն երեք օր, առանց սննդի, նույն տեղում են, թուրքերն արգելում են ուտելիք գնել: Վերջին վագոնը լեցուն էր զինվորներով, որոնք այդ խեղճերին հասցնելու էին անապատ, նախատեսված մյուս վայրերը: Ծեր կանայք ողբում էին, նորածինների լացը գութ էր շարժում: Ահավոր էր նման բռնություն տեսնելն ու տառապանքներին ունկնդիր լինելը»:

Ի՞նչ միտք ունի այդ ամենն այսօր ժխտելը, երբ առկա է հիշողությունը: Բացի թուրքական կառավարությունից՝ դա բոլորին հայտնի է, այսինքն՝ ավելի շուտ, թուրքական կառավարությանն էլ է հայտնի, բայց չի ուզում ընդունել: Ցավոք, այն ժամանակ շատերը անտեսում էին հայերին: Դա վերաբերում է հատկապես հզոր տերություններին, որոնք, մի պահ թվաց, թե հետաքրքրվեցին ցեղասպանության զոհերի ճա -

-- էջ 307 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

կատագրով, նույնիսկ Սևրի դաշնագիրը ասպարեզ հանեցին, որի 230-րդ հոդվածը նախանշեց գալիքը, այն ամենը, ինչը դառնալու էր դարի պատմությունը. «Օսմանյան կառավարությունը պարտավորվում է դաշնակից երկրներին հանձնել անձանց, որոնց Դաշնակիցները պատասխանատու են համարում օսմանյան տարածքներում պատերազմի ընթացքում տեղի ունեցած նախճիրների համար: Դաշնակից պետությունները իրենց են վերապահում այն ատյանը կազմավորելը, որը կդատի վերոհիշյալ պատասխանատուներին, իսկ օսմանյան կառավարությունը պարտավորվում է ընդունել այդ դատարանի վճիռը»:

Ինչո՞ւ չստեղծվեց այդ ատյանը, ինչո՞ւ դատավարությունը տեղի չունեցավ: Պատճառը հստակ է՝ ծնվում էր նոր Թուրքիան, Մուստաֆա Զեմալը դառնում էր ազգի հայրը, և քանի որ զենքի կարիք ուներ, բանակցություններ էր վարում հզոր տերությունների հետ: Ի վերջո հասավ պահը՝ հզոր տերությունները նախընտրեցին լքել հայ ժողովրդին: Անշուշտ, դեր խաղաց հատկապես այն հանգամանքը, որ Մուստաֆա Զեմալը խոշոր քաղաքական գործիչ էր, նա փայլատակեց իր գործունեության սկզբում, բայց վերջում խամրեց, որովհետև փորձեց վերականգնել, հզորացնել երբեմնի Օսմանյան կայսրությունը և, ինչպես իր նախորդները, շարունակեց կոտորել հայերին:

Ասացի՛ք՝ աշխարհը շատ շուտ մոռացավ հայերին, և Հիտլերը, ընդամենը քսանհինգ տարի անց, նախքան Լեհաստան ներխուժելը, կարողացավ արտաբերել՝ «Ո՞վ է հիշում հայերի կոտորածը» հայտնի դարձվածքը:

Այո՛, քանի որ չհիշեցին, դժբախտությունները հաջորդեցին իրար: Մենք խոսեցինք, խոսում ենք այդ մասին և այլևս չենք մոռանա: Հայերի ողբերգությունը դաջված է մեր բոլորի՝ իմ, ձեր, այստեղ ներկաների, եթե իհարկե անկաշառ են՝ մինչև իսկ թուրք լրագրողների հոգիներում, որոնց ես ուզում եմ դիմել ու խնդրել, որ ճշմարտությունը խոստովանեն, առնվազն խոստովանեն, որ ցեղասպանությունը տեղի է ունեցել: Իհարկե, դուք կարող եք մեզ բուրբոսիկն այլ բան, մոտավորապես հետևյալն ասել. «Ցեղասպանությունը տեղի ունեցել է, բայց շատ վաղուց, ի՞նչ միտք ունի այժմ ահաբեկչության դիմելը»: Ցավոք, թուրքական կառավարությունը նույնիսկ դա՛ չի ասում, Ձեր ընթերցած հեռագրերը, պարոն նախագահ, սպառնալի, Ֆրանսիայի, Ֆրանսիական արդարադատության համար վիրավորական հեռագրերը միայն

-- էջ 308 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

մեկ նպատակ ունեն՝ պնդել, որ տղաների գործողությունները քաղաքական միտումից զուրկ են, քրեական հանցագործություններ են, ուրեմն՝ ցեղասպանությունը հերյուրանք է: Թուրքական կողմի վկաներն էլ, որոնք այս ամբիոնն էին բարձրանում, ոչ թե խոսում էին կանանց, տղամարդկանց դժբախտության, այլ միայն այն մասին, որ ցեղասպանություն չի եղել: Ճիշտ այդպես, մի քանի օր առաջ, մեր հռչակավոր պատմաբաններից մեկը, ում հետ առիթ ունեցա զրուցելու, վիճարկում էր հրեական Ողջակիզումը, այն պարզ պատճառաբանությամբ, որ միայն հրեաներն են պահպանել հուշերը:

Ոմանք, իհարկե, ընդունում են հրեական Ողջակիզման իրողությունը, որովհետև Նյուրնբերգ է տեղի ունեցել, բայց հայերի դեպքում նման բան չկատարվեց: Չկա դատավարություն, չկան փաստեր, ամեն ինչ ոչնչացված է: Ջանք գործադրվեց

նույնիսկ Հայաստանի մասին հիշողությունը խամրեցնել, քարտեզից ջնջել, երեք հազար տարվա պատմությունը մոռացության մատնել:

Ի՞նչ է, սակայն, տեղի ունեցել Օսմանյան կայսրությունում: Ըստ թուրքերի՝ գյուղերում, որպես ազգային փոքրամասնություն ապրող հայերը սկսել են կոտորել իրենց և ստացել են արժանի պատիժը: Ի՞նչ եք կարծում, տիկնայք և պարոնայք երգվյալներ, սրահում ներկա հայերը, որոնք մեզ նման Ֆրանսիայի քաղաքացիներ են, կընդունե՞ն նման հերյուրանքը: Ի վերջո, նրանց ընդդիմախոսը ոչ թե գլխավոր հյուպատոսն է, տիկին Էոզենը, այլ՝ թուրքական կառավարությունը, որի համար էականը ահաբեկչությունը չէ, այլ՝ ցեղասպանությունը ժխտելը, ուրանալը:

Ոմանք հարցնում են, թե ժամանակակից թուրքերը ինչո՞վ են պատասխանատու վաթսուներորդ տարի առաջ պատահած դեպքերի համար: Նրանք իրենք են իրենց պատասխանատու դարձնում հենց նրանով, որ չեն ընդունում ցեղասպանությունը, իր հինավուրց բնօրրանում ապրած մի ամբողջ ժողովրդի գոյությունը:

Ինչո՞ւ են թուրքերը ուրանում ցեղասպանությունը: Շատ պարզ պատճառով: Չուրանալ՝ նշանակում է ընդունել, որ 300.000 կմ² հաշվվող ընդարձակ տարածքում հայեր են ապրել: Եվ եթե նրանց արտաքսել են, կոտորել, ուրեմն՝ վերադառնալու, իրենց հայրենիքում վերահաստատվելու իրավունք ունեն:

-- էջ 309 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

Տիկնայք և պարոնայք երգվյալներ՝, դուք կարող եք ասել, որ դա ձեր խնդիրը չէ, դուք քրեական գործ եք լսում, սակայն ես ուզում եմ, որ բոլորին պարզ դառնա, թե ինչո՞ւ են այս երիտասարդները զենք վերցրել, բռնության դիմել: Հասկանալի է, մենք բոլորս էլ ցանկանում ենք, որ ժողովուրդները ոչ թե անվերջ իրար դեմ պայքարեն, այլ՝ հաշտ, համերաշխ ապրեն, սակայն երբ մարդուց խլում են խոսելու իրավունքը, ժխտում են գոյությունը, անգամ երբեմնի գոյությունը, արժանապատվությունը պահպանելու համար նա ստիպված է լինում դիմել թերևս ծայրահեղ, բայց նաև արդյունավետ միջոցի՝ բռնության:

Այս ամբիոնից դուք լսեցիք բրդե կիսավերարկուով ծեր կնոջը՝ տիկին Մելինե Մանուշյանին, որը շատ հետաքրքիր նորություններ հաղորդեց ամուսնու՝ «ոճրախմբի» ղեկավար, «ահաբեկիչ» Միսաք Մանուշյանի մասին, այն նույն Մանուշյանի, ում Ֆրանսիայի Հանրապետության նախագահը այժմ ազգային Դիմադրական շարժման հիասքանչ հերոսներից մեկն է համարում: Նա վերջին նամակում գրել է կնոջը. «Մելինե՛, որբուկս, ես մեռնում եմ՝ չունենալով ոչ մի ատելություն գերմանացի ժողովրդի նկատմամբ»:

Ինձ կարող են հակաճառել, որ այս տղաները զինվորներ չեն, Հայաստանը և Թուրքիան չեն պատերազմում, միայն զինվորները զենք կրելու, ամեն պահի սպանելու իրավունք ունեն: Նրանք կարող են փլատակների վերածել Դրեզդեն քաղաքը, Հիրոսիմայի վրա ռումբ նետելով միլիոնավոր մարդկանց, այդ թվում և կանանց, երեխաների, սպանել: Իսկ Հայաստանը, քանի որ այլևս գոյություն չունի, «կանոնավոր» բանակ չի կարող ստեղծել:

Հիրավի՝ տարօրինակ տրամաբանություն է: Չէ՞ որ Թուրքիան առանց պատերազմ հայտարարելու գնդակահարեց հայ տղամարդկանց, կոտորեց ծերունիներին, կանանց ու երեխաներին, հատուկենտ վերապրող որբերին նավերը լցրեց, օտար երկրներ արտաքսեց: Դուք՝ թուրքերդ կարծում եք, որ այդքանը բավական է, պատերազմն ավարտված է: Բայց արդյո՞ք այն ավարտված է հայերի համար, որոնցից խլել են բնօրրանը, որոնք ուզում են հարատևել:

Ո՛չ, այս տղաները ահաբեկիչներ չեն, հայ ժողովրդի զինվորներն են, այն ժողովրդի, որը դիվանագիտական ներկայացուցիչներ, պետությունների վրա ճնշում գործադրելու միջոցներ

-- էջ 310 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

չունի, բայց ապրում է, գոյատևում է, մշակույթի, լեզվի, գավակների, ինչպես նաև հերոսների ու նահատակների շնորհիվ: Հատկապես՝ զինվորների՝, որոնց այսօր դուք դատում եք: Եթե անգամ դատապարտեք, հիշեցե՛ք, որ զինվորների եք դատապարտում: Նրանք՝ չորս հանդուգն զինվորները ելել են Ֆրանսիա ո՛չ միայն իրենց ժողովրդի իրավունքները ներկայացնելու, այլև պահանջելու համար, որ ազատ արձակեն քուրդ և թուրք քաղբանտարկյալների: Ճիշտ է, նրանք վտանգավոր իրավիճակ են ստեղծել, ճիշտ է, մի հոգի մահացել, մեկ ուրիշը վիրավորվել է, բայց չի կարելի չընդունել, պարոն ընդհանուր պաշտպան, որ հյուպատոսարան մտնելիս սպանության մտադրություն չեն ունեցել: Ուստի, չեք կարող պահանջել, որ Գյուզեյանին մյուսներից կրկնակի ծանր պատժի դատապարտեն: Տիկնայք և պարոնայք երդվյալե՛ր, քիչ առաջ ես առաջարկում էի նրանց ազատ արձակել, այժմ էլ խնդրում եմ չորսի միջև տարբերություն չդնել: Նրանք կապված են եղել նույն գործողությամբ, այստեղ էլ կանգնած են կողք-կողքի: Եթե ուզում եք, նրանց զինվորներ համարեք, դատապարտեք մարտական գործողությունների համար, բայց տարբեր պատիժներ մի՛ տվեք:

Ճիշտ է, որ այս տղաները ռազմական գրոհ են ձեռնարկել, բայց մի՞թե Հայաստանը պատերազմելու իրավունք չունի: Դուք հիշո՞ւմ եք «Ես դատապարտում եմ» շարժանկարը, որտեղ հերոսը տեսնում է, թե ինչպես են մահացածները դուրս գալիս դագաղներից, ձայն տալիս իրեն: Այս չորս երիտասարդին էլ դիմել են անապատի դիակները, իսկ նահատակ երեխաները ոտքի են ելել, նրանց ասել. «Ինչ-որ բան արեք, մենք չենք ուզում վերջնականապես

մեռնել, մենք մահացած ենք, բայց ուզում ենք, որ դա որևէ նպատակի, գոնե Հայաստանի ապագային ծառայի»:

Այո՛, չորս գրոհայինները մարտական գործողության են դիմել, որպեսզի այդ մասին խոսեն, աշխարհն իմանա, որպեսզի դուք՝ Ֆրանսիայի երդվյալներդ լսեք այն, ինչն արդեն լսեցիք:

... Իրենց հոգու խորքում հայերն արդյոք հույս ունե՞ն, երբևէ կվերադառնա՞ն իրենց երկիրը: Ուզում եմ ձեզ մի հայի պատմություններ կայացնել, որն այցելում է իր պատմական հայրենիքի նահատակ քաղաքներից մեկը՝ Կարս:

«Ես փողոցում խաղացող մի փոքրիկ տղայի նկատեցի: Շատ կեղտոտ, ամբողջովին ցնցոտիների մեջ էր: Մի աղջնակ մոտ վա -

-- էջ 311 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

զեց նրան, ձայնեց.

- Արշա՛կ, մաման կանչում է:

Արշակը հայկական անուն է: Մոտեցա, աղջնակին հայերեն հարցրի՝ հա՞յ ես: Նա թուրքերեն պատասխանեց, որ ասածս չի հասկանում, ու, ահաբեկված, փախավ: Կլիներ ութը տարեկան: Նոր նկատեցի, որ մայրը հեռվից հետևում է մեզ: Անմիջապես ուղղվեցի նրանց տան կողմը և նույն հարցը մորը տվեցի: Նա էլ պատասխանեց, որ ասածս չհասկացավ, որ ինքը հայ չէ: Ես նրան մայրենի լեզվով դիմեցի.

- Բայց քիչ առաջ աղջիկդ հայերեն էր խոսում:

Նա ինձ թուրքերեն պատասխանեց.

- Աղջիկս հայերեն չգիտի:

Հենց դրանով էլ հաստատեց, որ ասածս հասկացավ, որ ինքը հայ է:

- Ինչո՞ւ եք թաքցնում ձեր ազգությունը,- հարցրի ես,- մի՛ վախեցեք, ինքս էլ եմ հայ:

Անակնկալի եկած, հայացքը ուղղեց ինձ: Հետո զգուշությամբ նայեց շուրջը և համոզվելով, որ ոչ ոք իմ հայտնվելը չի նկատել, ներս առաջնորդեց: Տունը ծայրահեղ թշվառության տպավորություն էր թողնում, հատակը տափանած հող էր: Մենք մոտ կես ժամ զրուցեցինք, մինչև եկավ ընտանիքի հայրը՝ քառասուններկու տարեկան մի գյուղացի: Երբ կինն ասաց, որ հայ եմ, ամուսինն սկզբում վախեցավ: Մի քանի բառ փոխանակելուց հետո զգացի, որ արդեն ինձ վստահում է, ու հարցրի, թե ինչո՞ւ է նման դժվարություններ կրում, մնում այստեղ,

որևէ քաղաք չի տեղափոխվում: Նա ցույց տվեց պատուհանից երևացող, առանց խաչի գերեզմանոցն ու ասաց.

- Գիտե՞ս դա ինչ է: Գերեզմանոց, ուր թաղված են իմ ծնողներն ու պապերը: Նայի՛ր երկնքին, լեռներին, քեզ ոչինչ չե՞ն ասում:

Ես շատ հուզված էի, չկարողացա պատասխանել: Գյուղացին շարունակեց.

- Այս լեռները մե՛ր լեռներն են, այս երկինքը մե՛ր երկինքն է, ո՛չ մի հարստություն չի կարող դրանց փոխարինել:

- Բայց մինչև ե՞րբ ես մնալու այստեղ,- հարցրի:

- Ինքս, ինքս գուցե չտեսնեմ, բայց իմ զավակը կտեսնի ազատության օրը:

- Ախր, ինչպե՞ս,- հարցրի նորից:

-- էջ 312 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Նայի՛ր ավելի հեռու, այս լեռան մյուս կողմը հայ ժողովուրդը կա, ապրում է»*:

Այո՛, վստահ եղե՛ք, լեռների հետևում, հենց ձեր առջև, ամենուր ինչ-որ տեղ հայ ժողովուրդը ապրում է: Իհարկե, թերևս հավատացնեք, որ հասկանում եք մեղադրյալների տրամաբանությունը, ընկալում եք, թե ինչն է դրդել նրանց, բայց սկզբունքորեն չեք կարող թույլ տալ, որ մեր երկրում էլ նման քայլեր ձեռնարկվեն: Դա հնարավոր չէ, Ֆրանսիան դիվանագիտական հարաբերությունների երկիր է:

Ես պահանջում եմ նրանց ազատ արձակել, ինչպես փաստաբան Ասլանյանն ասաց երեկ՝ նախ և առաջ բարոյականության առումով: Բարոյականությունը այս գործում, համենայն դեպս, մեր կողմն է: Բացի դրանից, նման վճիռը խելամիտ կլինի:

Դուք երդվյալներ, դատավորներ եք, դուք տղամարդկանց ու կանանց դատապարտում եք քրեական հանցանքների համար: Բայց այս չորս հոգուն ինչո՞ւ եք դատում: Որպեսզի այսուհետ նման գործողություններ չձեռնարկվե՞ն, որպեսզի ուրիշները նման դիտավորությամբ մեր երկիրը չգա՞ն: Բայց ե՞րբ է այդպիսի պատիժը որևէ նպատակի ծառայել: Երբևեկի՞ց այս կամ այն երկրում ոմանց բանտարկվելը նպաստել է, որ մյուսները դադարեցնեն պայքարը:

Եղիա Քեչիշյանին Պարսկաստանում երկու օր առաջ գնդակահարեցին, Լևոն Էքմեքճյանին 1983 թվականի հունվարի 30-ին կախեցին Անկարայում (կարելի՞ է ասել, որ այդ երիտասարդները խիզախ չեն), բայց դուք հավատո՞ւմ եք, որ հետագա գործողությունները կանխեցին: Ես կարող եմ Ստեփան Չատիկյանի,

ուրիշ գրոհայինների մահապատիժները հիշատակել ու նորից համոզված պնդել, որ ոչ մի արդյունքի չեն հանգեցրել:

Նման պատիժները ի գորո՞ւ են կաշկանդել մի ժողովրդի, որը ոտքի է ելել, որովհետև անհատական և ազգային պարտականության պարտադրանքները զուգորդվել են, և հենց այդ պատճառով ամեն ոք պատրաստ է զոհել կյանքը: Չհավատաք, որ եթե որևէ մեկը բանտ ընկնի, ինչ-որ բան կփոխվի: Ձեր պատիժը ո՛չ մի դեր չի խաղա, սուսկ քաղաքական նշանակություն

* Առնո Համելեն, Ժան-Միշել Բրոն - «Վերականգնված հիշողություն», «Ոսկան Երևանցի» հրատ., Երևան, 1995 թ., ֆրանս. թարգմ.՝ Գր. Ջանիկյանի:

-- էջ 313 --

ՕՐ ՎԵՑԵՐՈՐԴ

Կունենա: Սովորական դատապարտությունը անհարիր է այս գործին, այլ է քաղաքական դատավարությունն իր մեկնաբանություններով, նշանակությամբ, բացահայտած ճշմարտությամբ:

Ինձ կարող են հիշեցնել նաև, որ Թուրքիան ծանրակշիռ ուժ է: Իհարկե, դա այդպես է, բայց եթե միջազգային հարաբերությունները դրան պիտի հանգեցնեն, նման հիմնավորումով ցեղասպանության ժխտումը կառավարություններին ինքնավստահություն կներշնչի, որ իրենց ամեն ինչ կարելի է: Եվ ամենևին պատահական չէ, որ Միջազգային ներման հանձնաժողովի՝ Եվրախորհրդին հղած զեկուցագրում Թուրքիան երեքից հինգ էջ է զբաղեցնում, որոնք ես ունեմ իմ տրամադրության տակ: Ինչպես պատահականություն չէ այն հանգամանքը, որ Ֆրանսիան, Նորվեգիան, Շվեդիան, Դանիան, Ելսելով Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական համաձայնագրից, Թուրքիայի հետևյալ խախտումների համար բողոք են հղել եվրոպական

հանձնաժողովին:

«Հոդված 3 - Անմարդկային կամ նվաստացուցիչ կտտանքների, պատիժների արգելում:

Հոդված 5 - Մարդ-անհատի ազատության ապահովություն:

Հոդված 6 - Անկախ և անկանխակալ դատարանում արդարացի դատվելու իրավունք:

Հոդված 9 - Մտածելակերպի, կարծիքի և կրոնի ազատություն:

Հողված 10 - Արտահայտվելու ազատություն:

Հողված 11 - Ժողովների և ընկերակցությունների ազատություն»:

Նրանք, ովքեր անպատիժ են մնում, կամ փորձում են մոռացության մատնել այն, ինչ արել են, ու ամբողջ աշխարհը մոռանում է, կարծում են, թե իրենց ամեն ինչ կարելի է: Անկասկած, բազում պատճառներից մեկը, որը Թուրքիային դարձրել է այնպիսին, ինչպիսին կա, աշխարհի՝ ցեղասպանությունը մոռանալն է: Այժմ Թուրքիան մինչև իսկ իր քաղաքացիներին է կոտորում, տանջում:

Դուք լսեցիք պարոն Զյուլուքոյուզեյանին, ում ազատությունը, այլոց թվում, պահանջել էին մեղադրյալները: Լուսանկարներից անգամ ակնհայտ էր դառնում, թե ինչպես են նրան

-- էջ 314 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏՈՒ

Ծեծել, կտտանքների ենթարկել սոսկ այն բանի համար, որ իր աշակերտներին հայ է մեծացրել:

Այս ամբիոնից ելույթ ունեցավ նաև Մարդու իրավունքների միջազգային ընկերակցության ընդհանուր քարտուղարի տեղակալը և հայտարարեց, որ պատմությունը կրկնվում է, այժմ Թուրքիայում հալածում, ջարդում են քրդերին, նրանց գոյությունը ժխտում են այնպես, ինչպես ժամանակին հայերինն էին ժխտում: Իմ տրամադրության տակ է նաև ՄԱԿ-ին կից ոչ կառավարական կազմակերպության՝ Մարդու իրավունքների միջազգային ընկերակցության ուրբաթ օրվա հայտարարագիրը, որը թուրքական կառավարությանը ուղղակիորեն դատապարտում է մարդկության դեմ գործած հանցանքների համար: Նոր, բայց և ծանոթ հանցանքների:

Թուրքիան, դարձյալ կրկնենք, այս ատյանին հղած հեռագրերով ոչ թե պահանջում է դատապարտել հայ գրոհայիններին, իր դիվանագետներին պաշտպանել, ահաբեկչությունը մերժել, այլ հավաստել, որ ցեղասպանություն տեղի չի ունեցել:

Մենք, ճիշտ հակառակը, ակնկալում ենք, որ դուք ընդունեք՝ ցեղասպանություն եղել է, հայ ժողովուրդը նահատակվել է, հայ ժողովուրդը իրավասու է գինվորներ ունենալու, իր հողերը պահանջելու: Ներկա բոլոր հայերը դրան են սպասում: Իհարկե, մենք ուրախ ենք, որ շատերն այստեղ են, փոխադարձաբար իրար ճանաչում են: Համենայն դեպս, ես չեմ կարող նրանց չհանդիմանել՝ ինչո՞ւ էիք այսքան երկար լռում, իմ հայ բա րեկամներ, ինչո՞ւ էիք այդ մասին միայն իրար հետ խոսում: Ինչո՞ւ ձեր երեխաները, որոնց նույնպես շատ լավ ծանոթ ենք, ամաչում էին արտահայտվել, ասես դարասկզբի նախճիրը ձեր արատը լիներ, մինչդեռ դժբախտությունն է, միաժամանակ՝ հպարտությունը:

Դուք հարստանալու համար չեք լքել ձեր երկիրը, այլ՝ կոտորվել, ստիպված եք եղել գալ այստեղ: Ֆրանսիան ձեզ ընդունել է, և դա մեր պատիվն է: Ամեն դեպքում, դուք դժվարությամբ նվաճեցիք ձեր զբաղեցրած դիրքերը, և միայն ձեր զավակները տեսան ձեր արցունքները, տառապանքը:

Ինչո՞ւ էիք սպասում այս դատավարությանը, որպեսզի Անրի Վեռնոյն ասի. «Չորս տղաների գործողություններում առկա է բոլոր նրանց ցասումը, ովքեր մղձավանջային մի երեկո Ուրֆայի եկեղեցուց հայերի մահերգը լսեցին և տեսան, թե ինչպես բոլորը ողջակիզվեցին»:

-- էջ 315 --

Չեմ կարող չանդրադառնալ նաև Շառլ Ազնավուրի խռովահույզ նամակին , որը դարձյալ այս դատավարության կապակցությամբ, հարկ է համարել իր խոսքը ձեզ հղել. «Մեր երիտասարդները ինքնության որոնման,

Հայաստանի ազատագրության

հայ գաղտնի բանակի զոհված

մարտիկների հուշահամալիրը

Եռաբլուրում

Պահանջատերերը...

-- էջ 316 --

անհեռանկարայնության, արմատախիլության, խուլ ականջների հանդիպելու պատճառով ներողամտության իրավունքն ունեն: Ֆրանսահպատակ լինելով հանդերձ՝ նրանց չեմ կարող մեղադրել: Ինքս ո՛չ դատավոր եմ, ո՛չ քաղաքագետ, այս տողերը գրում եմ, ինչպես սիրոս է թելադրում, և երջանիկ հանգուցալուծման հույս եմ փայփայում: Ես ազգությամբ հայ եմ, մի անգամ գոնե, մտածում եմ, որ մենք արժանի ենք դրան»:

Մեր դատասարահը լեփ-լեցուն է հայերով, շատերը ամբիոնից ելույթ ունեցան: Եվ որքան էլ նրանք քաղաքականապես տարանջատված լինեն, հետևյալ առումներով միասնական են՝ մենք ցեղասպանության՝ դարի առաջին դժնդակ ցեղասպանության զոհերն ենք, մեր հողերը խլել են մեզնից, մենք ուզում ենք ետ ստանալ: Ինչ վճիռ էլ որ դուք կայացնեք, չորս երիտասարդները մեր հերոսներն են:

Այստեղ ներկա, Ֆրանսիայի համայնքի երկու հարյուր հիսուն հազար, աշխարհի վեց միլիոն հայերը այժմ լսում են ֆրանսիական արդարադատության ձայնը:

Այդքան տառապանք տեսած ժողովուրդը որոշակի ակնկալիքով է հայացքն ուղղել Ֆրանսիային՝ ազատության ավետյաց երկրին: Հայերը, որ այդքան հին պատմություն ունեն, մեզ չափազանց մոտ են: Նրանք դեռևս հինգերորդ դարում իրենց այբուբենն են ստեղծել ու ժողովրդական բանաստեղծներն ունեցել: Լսե՛ք նրանց: Նրանց հղացումներն այնքան խորունկ են, ճշմարտացի, համահունչ են չորս տղաների ապրումներին.

ՏԱՂ ՎԱՍՆ ՂԱՐԻԲՈՒԹԵԱՆ

Վայրի հաւուկ մի եմ, բռնած ու բերած դրած զիս ի նեղ զընդան,

Չուրախանայր սիրտ բաժանելոյս յընկերացս, որ չեմ յիմ երամ:

Սրտաբեկեալ եմ, միջակոտոր, ճար չունիմ, զի՞նչ լինիմ գերիս:

Եթէ զբլբուլ ու դումրին բերեն ինձ երգասաց գուսան,

Չուրախանա՛մ.

Եթէ հազար գոյնըզգոյն փետուրներ ինձ բերեն խալաթ տան,

Չուրախանա՛մ.

Եթէ զշաքարն ի Մագածու բերեն կերակուր ինձ տան,

Չուրախանա՛մ.

Եթէ հազար թախթի հուլմն ինձ տան, ու հարիւր հազարի տեր առնեն,

-- էջ 317 --

Չուրախանա՛մ.

Եթէ բիւր բիւրոց ինձ ծառայ բերեն, անհամար հեծել ձիաւոր,

Չուրախանա՛մ.

Եթէ դարպաս ինձ շինեն ոսկով, զարդարած անգին մարգարտով,

Չուրախանա՞մ.

Եթէ հընար ու ճարակ լինէր ինձ՝ ելնել ի նեղ զնդանես,

Եթէ լինէր որ թռչի՛ր, բարձրանայի, տեսնի՛ր զիմ երամս,

Խաղալով, ճախրելով ու կարկաչելով խառնիլ յիմ երամս, -

Յայնժա՞մ ուրախանայր սիրտ բաժանելոյս,

Յայնժա՞մ խառնէի յընկերացոս երամ*:

Հայ եղբայրներ՛ր, դուք այլև միայնակ չեք, ձեր ժողովուրդը կվերագտնի իր բույնը: Չորս երիտասարդները այստեղ կանգնած են և գիտեն, որ ֆրանսիացի ժողովուրդը իրենց անմեղ է հռչակելու:

* * *

ՆԱԽԱԳԱՀ - Մեղադրյալներ, ոտքի՛: Գյուզեյա՛ն, ձեր պաշտպանության համար ուզո՞ւմ եք որևէ բան ավելացնել:

ԳՅՈՒՉԵԼՅԱՆ - Այո՛: Այն ամենին, ինչ արդեն ասել ենք, ասել են մեր փաստաբաններն ու ներկա հայերը, մնում է պարզապես հետևյալն ավելացնել:

Դուք հնարավորություն ունեցաք լսելու հայերի, ովքեր ապրել են ցեղասպանությունը, ովքեր, ինչպես մենք բոլորս, զոհեր ունեն, որոնց տանջել, տեղահանել, բնաջնջել են օսմանյան իշխանություններն ու զինվոր-ոստիկանները: Վերջապես՝ հայերի, որոնց թուրքական ներկա կառավարությունը մերժել և մերժում է իրենց կրոնը, լեզուն, մարդկային արժանապատվությունը, խաղաղ համակեցությունը, այն բնօրրանը, որն ընդմիշտ իրենց է պատկանում, դեպի ուր, ազգային հիշողությամբ, ուղղված են հայերի հայացքները:

Մենք ձեր առջև ենք, բայց վախ չունենք, որովհետև զոհեր ենք, զոհերը ինչո՞ւ պիտի վախենան արդարադատությունից:

Մենք թուրքիային հարվածել ենք ի՛ր իսկ տարածքում, որպեսզի ստիպենք արտահայտվել ձեր առջև, որպեսզի ֆրանսիա -

*Պաշտպան Լըքլերը կարդացել է հանրահայտ տաղի՝ 1973-ին Փարիզում, հայկական պոեզիայի անթոլոգիայում հրապարակված Ժակ Գոշերոնի թարգմանությունը:

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

կան հասարակական կարծիքն իմանա կատարված նախճիրի, մեր արդարացի իրավունքների մասին, որպեսզի առաջին անգամ բացեիբաց հնչի հայ ժողովրդի ճշմարտությունը, որը հազար անգամ կրկնվել, բայց երբեք լսելի չի դարձել, ինչպես նաև ի հայտ գան թուրքական պետության ստախոսությունն ու ուրացումը, որոնք այստեղ արտահայտեց այդ երկրի կառավարամետ պատմաբանը:

Ինչ դատավճիռ էլ, որ դուք կայացնեք, մեր գործողությունն ինքնին հաղթանակ է հայ ժողովրդի համար: Առաջին անգամ գաղափարական տարբեր հակումներ ունեցող հայերը միավորվել են, որպեսզի իրենց դատը պաշտպանեն: Հենց այդ պատճառով մենք նախընտրեցինք ավարտել մեր գործողության մարտական փուլը և գիտակցելով հանդերձ, թե ինչ փորձության ենք ենթարկվում, որոշեցինք հանձնվել ֆրանսիական իշխանություններին, պայքարը շարունակել քաղաքական միջոցներով, որը մեզ համար ավելի կարևոր է:

Այս դատավարությամբ մենք երկրորդ անգամ պայքարի ելանք այնպիսի մի ատյանում, որտեղ զենքերը ոչ մի ուժ չունեն և ստիպեցինք թուրքիային արտահայտվել ցեղասպանության մասին, իր պատմաբանի միջոցով ձեր առջև ստել:

Հայտարարում ենք ձեզ, որ մեր կյանքը ոչ մի կարևորություն չունի, մեր պայքարը չի՝ ավարտվել: Մեր բանտարգելությունը կամ ազատ արձակումը հայերի օրինական պայքարը իրենց իրավունքների համար չի կասեցնի: Մենք նախ և առաջ ուզում ենք, որ մեր ժողովրդին վերադարձվի արդարությունը: Ձեր դատավճռով դուք կարող եք նպաստել դրան:

Ես այս ելույթն ունեցա նաև իմ ընկերների անունից:

ՆԱԽԱԳԱՀ - Նստեցե՛ք: Դատաքննությունն հայտարարում եմ ավարտված և թույլ եմ տալիս, որ դատական գործը հանձնվի տիկին քարտուղարուհուն:

Մենք պատասխանելու ենք երեսուն չորս հարցի: Պաշտպանությունը ցանկանո՞ւմ է լսել հարցերի ընթերցումը:

Չեն ցանկանում:

Տիկնայք և պարոնայք երդվյալնե՛ր, նախքան դատավճռի համար առանձնաձևալը, պարտավոր եմ ձեր ուշադրությանը ներկայացնել քրեական օրենսգրքի 353-րդ հոդվածը:

Ընթերցում է հոդվածը:

Հասարակական կարգի պահպանման պատասխանատուին հանձնարարում եմ հսկել խորհրդակցության սենյակի դուռը, որտեղ ոչ ոք, ինչ պատճառով էլ լինի, առանց իմ թույլտվության չի կարող մուտք գործել:

Տիկնայք և պարոնայք երդվալներ, հրավիրում եմ ձեզ խորհրդակցությունների սենյակ, որտեղից կարող եք դուրս գալ միմիայն դատավճիռը կայացնելուց հետո:

Ժամը 18-ն անց 20-ին հայտարարվում է ընդմիջում:

Դատաքննությունը վերսկսվում է 21-ն անց 15-ին:

ԴԱՏԱՎՃԻՌ

ՆԱԽԱԳԱՀ - Մեղադրյալներ, ոտքի՛: Ահա՛ տրված հարցերի պատասխանը և համատեղ կայացված վճիռը:

Մարտախմբի՝ արգելափակելուն, մահվան սպառնալիք հասցնելուն վերաբերող հարցերին, չորս մեղադրյալներից յուրաքանչյուրի առնչությամբ, մեծամասնությունը՝ ութը ձայնի առավելությամբ պատասխանել է «Այո՛»:

Ջեմալ Էոզենի նկատմամբ Գյուլգեյանի գործադրած կանխամտածված սպանությանը մեծամասնությունը՝ ութը ձայնի առավելությամբ պատասխանել է «Այո՛»:

Պարոն Բալթասողլուի վիրավորվելուն վերաբերող հարցերին, որոնք ուղղակիորեն առնչվում են պարոն Գյուլգեյանին, մեծամասնությունը՝ ութը ձայնի առավելությամբ պատասխանել է «Այո՛»:

Կանխամտածված սպանության փորձին վերաբերող հարցե -

-- էջ 320 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

րին, որոնք առնչվում են պարոն Ջուլֆայանին, մեծամասնությունը՝ ութը ձայնի առավելությամբ պատասխանել է «Այո՛»:

Բեռնար Բլոնդեի նկատմամբ կանխամտածված մահափորձ կատարելու հարցերին, որոնք առնչվում են պարոն Սիսյանին, մեծամասնությունը՝ ութը ձայնի առավելությամբ պատասխանել է «Այո՛»:

Չենքի, ինչպես նաև պայթուցիկների ու նռնակների տեղափոխմանը, գործադրմանը վերաբերող բոլոր հարցերին մեծամասնությունը՝ ութը ձայնի առավելությամբ պատասխանել է «Այո՛»:

Մեղմացուցիչ հանգամանքներին վերաբերող հարցին նույնպես պատասխանվել է «Այո՛»:

Ելնելով այս հարցերի պատասխաններից, 295-րդ, 315-րդ, 309-րդ, 341-րդ հոդվածներից, 344-րդ հոդվածի 1-ին, 10-րդ կետերից, 1971 թվականի հունիսի 19-ի օրենքի 1973 թվականի մարտի 12-ի թիվ 3 հրամանագրից, քրեական օրենսգրքի 463-րդ, ինչպես նաև 366-րդ և 749-րդ հոդվածներից, քրեական օրենսդրության դատավարական ընթացակարգի համաձայն, երդվյալների ատյանը, հանգամանորեն քննարկելով օրենքը, Գյուլգեյանին, Բասմաջյանին, Սիսյանին և Ջուլֆայանին դատապարտում է քրեական պատժի, յուրաքանչյուրին ենթարկելով յոթը տարվա բանտարգելության:

Դատարանը վճռում է նաև բռնագրավել գեներն ու զինամթերքը, հասցված վնասի փոխհատուցումը պարտադրել յուրաքանչյուրին:

Ձեզ հինգ լրիվ օր է տրվում համապատասխան ատյաններին դիմելու համար:

Քրեական դատաքննությունն ավարտված է, քաղաքացիականը կսկսի մի քանի րոպեից:

Դատաքննությունն ավարտվում է 21-ն անց 20-ին:

-- էջ 321 --

-- էջ 322 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԱ

-- էջ 323 --

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՎԱՏԸ

«Վան» գործողության դատավարությունը դատաքննությամբ չավարտվեց: Երբ նախագահը վճիռը հրապարակելու համար չորս մեղադրյալներին խնդրեց ոտքի կանգնել, ոտքի ելան դահլիճի բոլոր հայերը:

- Դուք նստեցեք,- նրանց դիմեց նախագահը:

- Եթե այս երիտասարդները մեղավոր են, ուրեմն մենք էլ մեղավոր,- միաձայն պատասխանեցին հայերը:

Քրեականին հաջորդած քաղաքացիական դատաքննությունը մարտախմբի անդամներից յուրաքանչյուրի համար որպես թուրքական կառավարության վնասների հատուցում 720.000 ֆրանկի պատժատուգանք սահմանեց:

Դատարանում ներկա հայերը գրպաններից մանրադրամներ հանեցին, որպես բողոք, ընդվզում՝ դատակազմի կողմը շարտեցին:

Ամենատպավորիչը թերևս հրաժեշտի պահն էր: Ոստիկանները արձակագեներին ձեռնաշղթաներ անցկացրած բանտ էին տանում, իսկ սրահը լցրած հայերը որպես հաղթանակի նշան վեր էին պարզում իրենց զույգ մատները: Այդ պահին հռչակավոր երգչուհի Լիզ Սարյանը սկսեց երգել «Չարթնիր, լաո» ազգային մարտերգը, ամբողջ դահլիճը հուզումնահեղձ ձայնակցեց:

-- էջ 324 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

Չորս երիտասարդները իրենց պայքարը շարունակեցին նաև բանտում: Հացադուլներով, բողոքի այլ ձևերով, որոնց ցույցերով, քայլերթերով հաճախ սատարում էր ամբողջ ֆրանսահայությունը, նրանք հասան այն բանին, որ իրենց քաղաքական կալանավորի կարգավիճակ շնորհիվ: Այսինքն՝

1. Օրական հինգ ժամ իրար հետ լինելու, ժողովներ գումարելու իրավունք ունենան,
2. Օրական երկու ժամ այցելուներ ընդունեն, առանց ապակեպատնեշի հետները գրուցեն,
3. Ստանան իրենց ուզած թերթերն ու ամսագրերը, ունկնդրեն ձայնասփյուռի հաղորդումները,
4. Նամակները գրաքննության չենթարկվեն:

Նրանք ցանկություն հայտնեցին նաև ուսանել Սորբոնի համալսարանում և բանտ այցելող դասախոսների օգնությամբ, չորս տարում ավարտեցին դասընթացը, վկայականներ ստացան:

Չնայած նման՝ արտաքուստ առանձնահատուկ պայմաններին, ֆրանսիական գաղտնի ծառայությունները շարունակում էին հոգեբանական ճնշումներն ու տարբեր նվաստացումները: Դրա արդյունքը եղավ այն, որ 1985 թվականի ապրիլի 12-ին, բանտախցում, իր իսկ գիշերանոցից պարան հյուսելով, մենախուցի պատուհանի երկաթյա ձողից իրեն կախեց Արամ Բասմաջյանը (մինչ այդ մարտընկերները կանխել էին նրա նման փորձը): Այժմ նա հանգչում է Փարիզի Պեր-Լաշեզ գերեզմանոցում, Անդրանիկի մահարձանից ոչ հեռու:

Իրենց օրինակելի վարքի, ինչպես նաև բանտում բարձրագույն կրթություն ստանալու համար երեք արդարամարտիկները յոթի փոխարեն հինգ տարի մնացին Ֆլորի Մերոժիսի բանտում, 1986 թվականին Լիբանան վերադարձան, որտեղ նրանց հերոսների պես ընդունեցին:

Ի՞նչ կերպ դասավորվեց «Վան» գործողության մասնակիցների հետագա կյանքը:

-- էջ 325 --

Հակոբ Ջուլֆայանը գաղտնի ոստիկանության մշտական հսկողությունից ձերբազատվելու համար հասավ Կանադա, ապաստանեց այդ հեռավոր երկրում, բայց տասներկու տարի անց կառավարությունը բացահայտեց նրա «ահաբեկչական» անցյալը, արտաքսեց:

Այժմ նա մշտական բնակություն է հաստատել Հայաստանում: Ընտանիքով հանդերձ:

Գևորգ Գյուզեյանը նույնպես Հայաստան եկավ, կազմավորեց «Մեծ Մուրադ» ջոկատը, մասնակցեց Արցախի ազգային-ազատագրական պատերազմին: Հաղթանակից հետո ապրում է ԱՄՆ-ում:

Հայրենիքում է նաև մարտախմբի հրամանատարը՝ Վազգեն Սիսյանը, որն աննկատ ու անաղմուկ շարունակում է իր պայքարը, հավատում նպատակների վերջնական իրագործմանը:

Իրավացի է ֆրանսահայ հոգեվերլուծաբան Ժիլ Լուսակը, որն իր գրքում հավաստում է՝ ցեղասպանությունից չեն բուժվում, յուրաքանչյուրը յուրովի է արտահայտում կորստի, վշտի, վրեժի զգացումը:

Մի ավելացում միայն՝ ցեղասպանությունից, ամենայն հավանականությամբ, բուժվում է այն ժողովուրդը, որը հատուցման է հասնում:

ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿՅԱՆ

-- էջ 326 --

ՀԱՅԵՐԻ ԴԱՏԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաքելոց վանքի ուխտավորները (խմբագրի խոսքը).....	3
Օր առաջին	19
Օր երկրորդ.....	45
Օր երրորդ.....	105
Օր չորրորդ	163
Օր հինգերորդ.....	217
Դատավճիռ.....	313
Հատուցման հավատը (վերջաբանի փոխարեն)	316

-- էջ 327 --

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ`

ԳՐԻԳՈՐ ՋԱՆԻԿՅԱՆԻ

Le procès des Arméniens

Paris, Palais de Justice

24-31 janvier 1984

traduit du français par Grigor Djanikian

editions VMV-Print

Erevan, 2010

Հրատարակչության տնօրեն

ՎԱՀՐԱՄ ՄԱՑԱԿԱՆՅԱՆ

Խմբագիր

ԿԱՐՈ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Համակարգչային շարվածքը՝

ՔՆԱՐԻԿ ՇՄԱԿՈՆՅԱՆԻ

Գեղարվեստական խմբագիր՝

ԴԻԱՆԱ ԱՎԱԳՅԱՆ

Չափսը՝ 60x84, 1/16: Ծավալը՝ 20 տպ. մամուլ:

Թուղթը՝ օֆսեթ-80 գր.: Տպաքանակը՝ 500 օրինակ:

Տպագրվել է «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչության տպարանում

Հասցեն՝ Ազատության 24, հեռ. 28 54 28

E-mail: vmv_print@yahoo.com

www.vmv-print.am